

281.69

9-47v



484
Հա հ ր ա ծ ե պ. Աս ն հ ու շ

Գ ե Վ ո ղ Գ Դ

Ե ի ղ Ժ ա ճ ա ն հ ա չ Ե

Խ ա ղ ա ղ Ա

Փ ա ղ ի չ

Գ ե չ. Կ ղ ա ղ ա ղ ի ղ. Ա ղ ղ ղ ղ ա ղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

281-69 - W

9-475

ԳԷՈՐԳ Գ. ԵՒ ԻԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

(1812-1882)

Ե Ր Կ Ո Ւ Խ Ն Օ Ս Ք

Գէորգ Գ. կաթողիկոսը ժԹ դարի ամենաականաւոր հայ դէմքերէն մէկն է, որի կեանքն ու գործը սակայն, դեռ ըստ արժանւոյն լուսաբանած եւ գնահատած չեն: Ներկայ աշխատութիւնը կուգայ չափով մը լրացնելու այդ քերին:

Աշխատութեան հեղինակն է Վահրամ եպ. Մանկունի՝ Գէորգ Գ.ի մտերիմ գործակիցը, կարելի է ըսել, անոր աջ բազուկը, ինքն եւս հետաքրքրական դէմք մը, որ իր ժամանակին կարեւոր դեր կատարած է Պոլսոյ եւ Էջմիածնի ազգային-եկեղեցական գործերու մէջ:

Ինչպէս հեղինակի յառաջարանէն ալ կը տեսնուի, Մանկունին ինքն ալ մեծ կարեւորութիւն տւած է այս գրածքին եւ դեռ իր կենդանութեանը ուզած է հրատարակութեան տալ. անկաստ պայմանները, սակայն, արգելք եղած են այդ բաղձանքի իրականացման: Այնուհետեւ, Մանկունիի մահուանէն յետոյ, իր անձնական դիւանի բոլոր բողոքներու հետ միասին, այս աշխատութիւնն ալ մատուած է պատահական դէպքերու ֆահիստային եւ փրկւած է միայն հրաշքով՝ շնորհիւ Նուպարեան Մատենադարանի վերատեսչութեան քափած ջանքերուն: Այս վերջինի բարեացակամութեանը կը պարտինք նաեւ, որ ձեռագիրը լոյս կը տեսնէ «Վէմ»ին մէջ, որու առիթով կը յայտնենք մեր շնորհակալութիւնը Նուպարեան Մատենադարանի վերատեսչութեան:

Մանկունիի աշխատութիւնը գրւած է գրաբար լեզուով, որ, սակայն, այնքան պարզ եւ դիւրահասկանալի է ամենին, որ աւելորդ համարեցիմք քարգմանել աշխարհարտի: Մենք համոզուած ենք, որ այս պարագան արգելք չի լինիր, որ անկէ օգուտին ոչ միայն մասնագէտներ, այլ եւ ընթերցող հասարակութեան լայն զանգւածները:

Մանկունիի այս գործը պիտի հրատարակուի պրակ-պրակ, որպէս «Վէմ»ի յաւելած, հետագային առանձին հատորի վերածելու յարմարութեամբ:

ԽՄԲ.



ՅԱՌԱՅԱԲԱՆ

Զինի 1893 թուականի փրկչական ձեռնարկեցաք գրել զսոյն դայս կենսագրութիւն երջանկայիչատակ Տ. Գէորգ Կ. Հայրապետի Ազգիս՝ Հոգեւոր ծնողի մերոյ՝ ընդհատարար, ստիպեալ յանձնական տկարութեանց, երբեմն յարտաքին դառն անցից զգուշացեալ յառնարս վեհ. սուլթան Համիտի վերջնոյ, եւ յանախ գրադեալ յԱզգ. վնասութեան աստ ի Կ. Պօլիս եւ պատուիրակութեան ի Ս. Երուսաղէմ, եւ այսպէս՝ տակաւ առ տակաւ շարունակեցաք մինչեւ ցնեբկայ ամ Տեառն (1916)։ Եւ ի վերջ կոյս 1914ի եւ յանցելում ամի գրեալ յաւելաք եւ զՅաւելուամն յաշխարհարար՝ առ երկիւղի եւ զգուշութեան յապաղեալ։ Ապացուցանեն զայստիկ նաեւ ակնարկութիւնք ինչ ըստ ժամանակակից անցից ի կարգի կենսագրութեան եւ ի ծանօթարանութիւնս։

Ի գրեւն զսոյն դայս կենսագրութիւն եղեւ նպատակ մեր թողուլ ապագայից ի գիտութիւն, ի խրատ եւ յօրինակ միանգամայն՝ զկարեւորագոյն եւ զգլխաւորագոյն խնդիրս կրօնականս, ազգայինս, հայրապետականս, վարչականս, կրթականս, իրաւաւականս հանդերձ սարօքն։

Կամէաք դասաւորել զինդիրս ըստ կարգի ամացն եւ տոանձին զուղեւորութիւնս ի միում շարի, մանաւանդ թէ եւ առաւելապէս՝ մի զկնի միոյ կարգել զիրաւասական խնդիրս եւ գնուիրականս, այլ ընտրեցաք առաւել միջոցն տալ թանձրացեալ եւ ընդարձակապատում խնդրոց, միջանկեալ գրելով զթեթեւազոյնս եւ զպատմականս, զի մի ձանձրացին որք ընթեռնուն կամ գրադին ի սմին։

Թեթեւ պակասութիւնք են ի սմա՝ կորուսեալ գոլով զպատճէնս ինչ եւ զարձանագրութիւնս, թէ եւ հետեւեցաք ի ձեռս բերել ի Ս. Էջմիածնէ, մասնացոյց լեալ որոց հարկ էր եւ ուր՝ պարտ էր որոնել եւ դտանել։ Այլ ոչ բոլորովին յաջողեցաք բերել ի ձեռս ի հեռուս աստուս գրելով եւ ստիպելով։ Գուցէ անհարապատ եւ անհաւատարիմ անձինք զողացեալ էին, որպէս յաճախագոյնս պատահի ի Մայր Աթոռում եւ այլուր։

Նաեւ տուաք զանցատուութեանց զմանրամասնութիւնս կարեւորս ոմանց անդից եւ խնդրոց, մանաւանդ զի անձնական տկարութիւնք մեւ գլխաւոր իմն սրդէլս զնէին եւ ոչ բաւէաք։ Միանգամայն ոչ բաւեալ տալ գրել այլոց՝ մձարեալ զվարձս, թէ եւ զարձեալ եւնն ծախք ոչ սակաւք։

Պատուի՞ք յայտարարել զյայտնական ընտանցատուութիւնք իմ ի սմին կենսագրութեանս զայսմիկ վերաբերին ցարական եւ



23325-59

կաթ-բով-Տօլստոյեան, իսկ նպաստաւոր ակնարկութիւնք իմ ո՛չ վերաբերին համխտական եւ իբք-իհասական կառավարութեանց :

Ոնգիր եւ առարկութիւնս ոմանց եղև ընդդէմ գրարար լեզուի, այլ սակայն առաւել զիւրին էր մեզ գրել ի գրարար, թէ եւ ոմանց ոչ ախորժելի: Բացատուրթեան տուաք զՅարեյուածն իբր նմոյշ: Մանաւանդ զի գաւառական աշխարհաբար լեզուք խառնի-ճազանճք են ի մեզ, եւ յամենայն կողմանս աշխարհի գտանին գրարարադէտք:

Եթէ գրէաք զտոյն զայս կենսագրութիւնս յերկտասարդական հասակի եւ ի Մայր Աթոռուջ, առաւել ճոխագոյնս եւ կրկնապատիկ լինէր, միանգամայն հարուստ այլեւայլ լուսանկարօք: Մանրածանր գրադմունք մեր հանդերձ հիւանդութեամբք արդելին յաւէտ եւ հանապազ:

Արգ ոչ ունիմք պէտս գովեստից: Բաւական լիցի մեզ եթէ Մ. Հայրապետք եւ բարձրաստիճան անձինք քաղեսցեն զկարեւոք փորձառութիւնս եւ զօգուտս:

Ճեմարանական սան Արգոյ Մ. Աբեղեան հրատարակեալ զհամառօտագոյնս եւ զհակիրճ կենսագրութիւնս ընդ անուամբս «Գէորգ Դ. Մեծագործ Կաթուղիկոս ամենայն Հայոց» ի տպարանէ Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի ի 1899 ամի, առթիւ քսանեւհինգամեայ տարեդարձի Գէորգեան ճեմարանի Մայր Աթոռոյ, ամփոփեալ ի 20 (Ի.) գլուխս:

Ոչ սակաւ քննադատելի տեղեկութիւնք են ի նմին, սկսեալ ի ծննդենէ եւ յուսումնաութենէ Գրիգորի-Գէորգայ եւ յանձօքարողութեանն Սասգեղջ, հանդերձ այլովք, զորոց զմանք համառօտիւ իմն պարզեաց կենսագիրս այս ի «Սուրհանդակ» օրաթերթի, յամի Տեառն 1899 (սկսեալ ի 24է Յունվարի ց2 Փետրբ. վարի):

Պ. Աբեղեան սակա տեղեկութեանցն որ ի ծննդենէ Գրիգորի-Գէորգայ մինչև յընտրութիւնն կաթուղիկոսական հետեւեյ է ձեռագիր կենսագրութեանն պատրաստելոյ ի կաղ Սարգիս վարժապետէ Գնունոյ վանեցւոյ: Պ. Գնունի հաստատեալ գրնակութիւն իւր ընդ ընտանիսն ի Վաղարշապատի՝ վայելէր զպաշտպանութիւնս եւ զկարեկցութիւն Տ. Գէորգ Դ. Հայրապետի Ազգիս, վանեցիական իմն կեղծաւորութեամբ գրաւեալ զմանաւոր համարումն Նորին Սրբութեան: Եւ ջանայր հնարել զառիթս առ ի ներկայանալ Հոգեւոր Տեառն՝ գրեալ զուղերձս, զնախանձախնդրական յօդուածս եւ զգրական երկս ինչ: Եւ յամսն 1876—80 խնդրեաց գրել զկենսագրութիւն Նորին Սրբութեան, եւ զիմեալ առ կենսագիրս, խնդրէր զտեղեկութիւնս: Եւ կենսագիրս, ըստ հրամանի Ս. Հայրապետի, ետ Գնունոյն Սարգսի զհակիրճ ցանկածէւ տեղեկութիւնս ինչ, գիտացեալ քաջ զկենսագրական տկարութիւն նորա եւ զվանեցիական տրամադրութիւնսն, մանաւանդ ոչ էր կենսագրիս ժամ պարապոյ առ ի գրաղել ընդ նմա:

Գրէր Սարգիս վարժապետ զկենսագրութիւնն եւ տեարակ առ

տետրակ տանէր ցուցանել Հոգեւոր Տեառն առ ի տալ սրբադրել: Բերէր եւ առ կենսագիրս առ ի ուղղել, եւ վրիպէր յաճախ յակնկալութեանց իւրոց: Երիցս տայ Հոգեւոր Տեառն զկենսագրական տետրակս առ ի ուղղել՝ տառարկեալ միշտ զի կորուսեալ է զառաջին սրբագրեալն: Եւ այսպէս ունէր զերիս օրինակս կենսագրութեան լի աւելորդարանութեամբք եւ սխալանօք: Եւ զի հայր Սարգսի լեալ է խոհարարացեալ յապարան Մաքսուտեանց ի Միջագեղջ Կ. Պօլսոյ, ի թարգմանչաց վարժարանի տեղւոյն առեալ է Սարգիս զուսումն իւր եւ զկրելութիւն ի հայագիտութեան եւ ի կրօնագիտութեան (1855—61թ. վրկ.), լուեալ է անդ զժամանակահից զանցս ինչ, միանգամայն աշխատակցեալ «Վարդ» անուն հանդէսի: Որով ինքնին յաւելեալ է նաեւ զտեղեկութիւնս ինչ անուղիղս սակս ազգային շարժմանց եւ ճեմարանական (Իւսկիւտարու) անցից եւ այլոց եւ այլոց: Յորպիսիսն մոլորեալ է ակամայ եւ Պ. Արեգեան:

Յետ վախճանի կենաց Հոգեւոր Տեառն, ի 1883 թուականի, բազմիցս թախանձեաց եւ խնդրեաց Պ. Գնունի ի կենսագրէս զնոյ անունը զկենսագրութիւնը, զմի օրինակն եւեթ, առ ի տալ տպել: Կենսագիրս առաջարկեաց զհամայն օրինակս, յորս ի տեղիս տեղիս ձեռնագրեալ էր Հոգեւոր Տէր, զնոյ անունը, վճարեալ զմի հարիւր ուրբի եւեթ (10—12 ոսկի օսմանեան), ըստ որում կենսագրութիւնն այն պակասաւոր էր բազմօք եւ տկար ըստ ամենայնի, եւ նպատակ կենսագրիս էր ազատել զձեռագիր Հոգեւոր Ծնողիս ի շահագործութեանց եւ ի խաչադողութեանց Գնունոյ: Ոչ կամեցաւ նա տալ զհամայն օրինակս, եւ այսպէս մնաց սակարկութիւնն:

Յետ ամաց ինչ զիմեցին Սարգիս եւ Ժառանգք իւր քանիցս ի Ս. Էջմիածնէ առ կենսագիրս աստ ի Կ. Պօլիս առ ի տալ տպագրել կամ նպատակ տպագրութեան կենսագրութեանն յիշխոյ, եւ ընկալան դրացասական պատասխանիս: Ջան կալեալ են նոքա զբաժանորդագրութիւնս սնայարծ եւ բառակոյտ ծանուցմամբք կամ յայտարարութեամբք: Ոչ յուսալի էր յաջողութիւնն:

Գնահատելի է կենսագրական ձեռնհասութիւն Պ. Արեգեանի, այլ պակասեալ են նմա ճոխ եւ հաւատարիմ աղբիւրք, որպէս եւ Ժամանակ ընդարձակ, ի զրեւն իւրում զմատենիկն «Գէորդ Գ. Մեծագործ Կաթուղիկոս ամենայն Հայոց» առթիւ քսանեւհինգամեակի, թէպէտ խնդրեցին ճեմարանականք ոմանք ի կենսագրէս զրել զպատմութիւն հիմնարկութեան Գէորդեան ձեմարանի նովին առթիւ: Տառապէր կենսագիրս ի յօդացաւս յորժամ զրեաց զպատմութիւն շինութեան եւ բացման յիշեալ ձեմարանի ամփոփեալ ի Ժ. զլուխ, եւ առաքեաց առ ճեմարանականս ի պէտս հրատարակութեան, ըստ խնդրանաց նոցա, պատուիրեալ եւ պայման եղեալ տպագրել նոյնութեամբ, որում ոչ յաջողեցան նոքա: Էին ի պատմութիւնն յայնմիկ թեթեւ պակասութիւնք ոմանց յիշա-

տակարանաց եւ գրութեանց, զորս յանձնարարեալ էր կենսագիրս լնուլ զիւրութեամբ ի Ս. էջմիածին, մատնացոյց լեալ յորոց պարտ էին օրինակել:

ՎԱՀՐԱՄ ԵՊԻՍԿ. ՄԱՆԿՈՒՆԻ

ի Սեպտեմբերի 1916
ի Միջագեղջ Կ. Պոլսոյ.

ԳԼՈՒԽ Ա.

ՅԱՂԱԳՍ ԾՆՆԴԵԱՆ, ԾՆՈՂԱՅ, ՔԵՐՑ ԵՒ ԵՂՔԱՐՅ ԳՐԻԳՈՐԻ

Յամի Տեանն 1812 (ըստ Մ՛ճմտ. 1228) յառաջին քառօրդի ներկայ ԺԹ. րդ դարու, ի հինգերորդ աւուր ամսեանն Յուլիսի ծնանի Տ. Գէորգ Դ. կաթողիկոս ի Սամաթիա արուարձանի Կ. Պոլսոյ, եւ առնու զմկրտութիւն Ս. աւագանի յՏն Յուլիսի ի հրու- չակաւոր Ս. Գէորգ եկեղեցւոջ Հայոց, որ երբեմն լեալ է աթոռ- նանիստ Պատրիարք-Առաջնորդաց Կ. Պոլսոյ, եւ այրեցաւ ի 186... թուականի: Կնքեն դանուն նմա Գրիգոր*):

Անուանք չօր Գրիգորի եւ Պետրոս Քէրէսթէճեան Հազարնի- միմքաննի յԵօնճա թաղէ Պալատու, եւ մօրն՝ Սրբուհի, իլէպէ-

*) ԾԱՆՈԹ. Վ. եպ. Մ.— Իսկական թուական ծննդեան Գրիգորի (Տ. Գէորգ Դ. կաթողիկոսի մնայ ըննադատելի: Ի մեծի եւ յաղէապի հրկիզու- թեան Սամաթիոյ, յամի Տեանն ... [թուականը կը պահուի րնադրին մէջ] այրացաւ լեալ Ս. Գէորգ եկեղեցւոյ եւ յատուկ պահարան-դանձատանն ան- ճեա կորչեն «Արձանագրական Մատենան Մկրտութեան» եւ զրեանք կարելորք եւ յլուատակաշունք: Ուստի անհար լեալ է ստուղի եւ ճշտել զթուականն: Իսկ երկուց ամաց լեալ է Գրիգոր յորժամ ծնողն տարեալ են զնա յալստ եւ յերկրպագութիւն ի Ս. Երուսաղէմ, ուր եւ տուեալ են զրել յաջ րազիլ զՄճմ- տեանական թուական 1230—31, որպէս կենսագիրս քանիցս ետես եւ ընթերցաւ ուղադրութեամբ: Հաշուեալ եւ զյայտելումն մի մի տարւոյ ըստ յունականի եւ ըստ Մատենականացն թուականի իբր յիւրաքանչիւր երեսուն ամա, զտա- նեմք եւ զնեմք զծնունդ Գրիգորի ի 1812—13 ամի ժրկչական: Կենսագիրս այս քանիցս հարցուսիրձ եղեւ, թէպէտ ետես զհակասութիւն ինչ թեթեւաւոյն: Տունն յորում ծնեալ է Գրիգոր, լեալ է ի թաղն Մուսթաֆա վաշայ, յիւ- դունճա Յոյս փողոցի ի Սամաթիա: Յետ մահուան անատեանն «Հազարնը» — «Մինհանճը Պետրոսի Քէրէսթէճեան, որդի նորա Գրիգոր-Գէորգ վարդապետ (ապա կաթողիկոս) նախ զնայ ամուր զհամայն ժառանգական բաժինս եղ- րաց եւ քերջ իւրոց, եւ ապա ի Մ՛ճմտ. 1266 թուականի ի 17ն սէֆէրի վա- ճառէ Գրիգորի Ռափայէլեան եւ կրպակի նորին Ռաթնայի (Պօրոսեան ըստ չօրն): Ծախեն եւ նորա Յովհաննէս քահանայի նիթթեան ի 1268 Մ՛ճմտ. թուականի: Ըստ ասելոյ Յովհաննէս ա. քահանայի Շահպաղեան, Միարանի Ս. Գէորգ եկեղեցւոյ, հրկիզեալ է տունն այլ ի միջի. հրկիզութեանն (Ճէն- Քիլէճիի կրակ» անուանեալ) ի 1852 Փրկչ. թուականի, եւ յետ վերայլնու- թեանն կրէ զարդիտ տուն այն զ14 թ.: Վերջին տեղեկութիւնքս այսօրեկ քաղ- եալ են յԱպրիլի 1898 թուականի փրկչական, միջոցաւ Աւագ քահանային վերոյիշելոյ:

պիճի-Քէօշէսի թաղէ Սամաթիոյ, որք յերկրորդ ամի ծննդեան Գրիգորի երթան յուխտ եւ յերկրպագութիւն ի Ս. Նրուսաղէմ՝ վասնդաւոր իմն ուղեւորութեամբ: Անդ տան արձանադրել ըստ դարաւոր սովորութեանց ուխտաւորաց զնկար ինչ փոքրիկ եւ զմահմետական թուական տարւոյն յաջ բաղկի Գրիգորի՝ 1230):

էին Պետրոսի յառաջին ամուսնութենէ զստերք Սրբուհի եւ Տիրուհի անուամբք, նոյնպէս Սրբուհոյ էին դստերք Նունէ եւ Անթատամ անուամբք: Իսկ յերկրորդ ամուսնութենէ ծնան նոքա զԳրիգոր, զՌհան, զԱւետիս, զՆուգինէ (էֆթաիկ) եւ զՓեփրոնէ:

Պապք Գրիգորի, իմա՝ հայր Սրբուհի մօր իւրոյ, լեալ է ի Սեբաստիոյ, եւ հայր Պետրոս հօր իւրոյ ի շրջակայից Կեսարիոյ գաղթեալ եւ հաստատեալ ի Կ. Պօլիս:

Արհեստիւ է՛ր Պետրոս զերձակ, անուամբ Մինք-աննի (բաճկոնակակար) եւ ջաղջերակար (ջաշխըր), միանգամայն պատրաստավաճառ, յԱլի փաշա խանն ի Կ. Պօլիս: Ունէր ընդ ձեռամբ իւրով զաշակերտս եւ զգործաւորս ոչ սակաւս, ի Պօլսեցոց եւ ի Ռոստոթոցոց: Սիրելի էր յաշս ոճանց Եէնիչէրեաց գլխաւորաց, մանաւանդ բնակելոցն յէյուսլ, որոց էր զերձակ:

Տիկին Սրբուհի ոչ գիտէր զարուեստ ինչ, այլ սակայն էր տանտիկին կատարեալ, տնտես, որդեսէր, ժրջան, արթուն, համեստ, հեղ եւ բարեհամբօյր:

Երկոքին լծակիցք էին բարեպաշտք, եկեղեցասէրք, քաղցուք ի բարս եւ ի վարս, նախանձախնդիրք յառաքինութիւնս եւ յանձնիւր պարտան: Գիտէին նոքա զհասարակ ընթերցանութիւն ըստ ժամանակին ուսեալ ի տնավարժոցս առ ոտս մարապետաց, որպէս անուանէին յայնժամ զվարպետ տուտուս:

Որպէս յաճախ տեսանեմք զբաղում օրինակս ի Կ. Պօլիս, ծնողք Գրիգորի առթիւ հրկիզութեանց տեղափոխեալ են զընտելութիւնս իւրեանց ի Սամաթիոյ ի Գումգարու, ապա ի Սասգիւղ ի քարոզչութեանն Գէորգայ, եւ հուսկ ուրեմն ի Միջագիւղ Կ. Պօլսոյ, ուր եւ կնքեն զկեանս իւրեանց եւ ննջեն ի Տէր, մայրն Սրբուհի ի 17 Օգոստոսի 1840 թուականի, հայրն Պետրոս ի 26ն Սեպտեմբերի 1842ի, եղբարքն Ռհան յ2ն Ապրիլի 1843, Աւետիս ի 5 Յունիսի 1846, կրտսեր քոյրն Փեփրոնիկ ի 11 Յունիսի 1844ի (յօղափոխութեան ի Սարը-եար, յորմէ փոխադրեն զգին ի Միջագիւղ):

Լսէ զմահ մօր իւրոյ մինչ գտանէր ի ս. եկեղեցւոջ յաւուր շարաթու ի նաւակատիսն Վերափոխման Ս. Աստուածածնի, եւ ի յաջորդ աւուր մատուցանէ (Տ. Գէորգ վրդ.) զտաղաւարական ս. պատարագ, յետ որոյ թաղէ հանդիսիւ զմայր իւր, արտայայտեալ զեկեղեցիկ օրինակ բարեպաշտութեան եւ ջերմեռանդ հաւատոյ, առանց թուլանալոյ ըստ մարդկային բնութեան:

Տարածամ վախճանք եղբարց եւ քեռ սորա պարզէն զսերնդական-ժառանգական ինչ տկարութիւն, յորմէ մագապուրծ գերծաւ Գրիգոր (Գէորգ վրդ.), որպէս ունիմք պատմել այլուր, մանաւանդ մահ ուսումնասէրն Փեփրոնիկի առաւել աղքեալ էր

ամա, ըստ որում առաւել սիրէր զնա, եւ վատնեաց զբազում զբամս առ ի ազատել զնա ի հիւանդութենէ եւ ի ճիրանաց մահուան: Գեղեցիկ յօյժ լեալ Փեփրոնեայ, ընթերցասէր եւ արթուն, բազումք խնդրեալ են զնա ի կենակցութիւն, եւ ծնողքն՝ մանաւանդ Տ. Գեորգ վրդ. դժուարանան խանգարել զկարգն ըստ սովորութեան ժամանակին, եւ նախ քան զԵւփիմէ պսակել զՓեփրոն: Արոյ վասն խղճահարէր յորժամ առիթ լինէր խօսակցութեան:

Ի կենդանութեան ծնողաց ամուսնացեալ էին քորքն խորթք եւ ընդարձակեալ զսերունդ իւրեանց եւ զառուալիզս: Իսկ Եւփիմէ ամուսնացաւ ի Սեպտեմբերի 1843 ամի*):

Գրիգոր հանեալ էր զժողով եւ կրէր ի կերպարանս զնշանս, որք սակաւուք խանգարէին զգեղեցկութիւն զիմացն: Անձնեայ եւ թիկնաւէտ, գեղեցկահասակ, լայնաճակատ, քաղցրատեսիլ եւ համեղարան էր Գրիգոր, եւ ի մանկութեանն յաւէտ սիրելի կացուցանէր զանձն ծնողաց եւ համայն պարագայից իւրոց եւ որոց հանդիպէր: Օր աւուր յաճախէր ի շնորհս, եւ զարգանայր իմաստութեամբ: Արում յարմարէին արդեօք բանք Լամբրոնացւոյն եթէ «Նղբե տղայ՝ եւ զտղայական ախտին մարտն վանեաց, տղայական կրիւքն ամաչեցուցեալ զթշնամին. մանուկ՝ եւ ի վարժումն հնազանդութեան ծնողացն ոչ կարաց յողողել զնա»:

Միւրէ զխազս եկեղեցականս, եւ կազմէ ի տան զսեղան, պատրաստէ զկեստս, զթագ, եւ ձեւացուցանէ զպատարագ, այսու կանխէ արտափայլել զներքին յօժարութիւն եւ զբախաք իւր:

Ատէ չրջել ի փողոցս եւ խաղալ ընդ մանկանց, որոց յորդոր կարէայ գալ ի տուն եւ կազմել զսեղան, ձեւացուցանել զպատարագ, զժամբերգութիւնս, զքարոզս, զթափօրս: Միւրէ զընկերակցութիւնս զայսպիսիս:

Ի մանկութեան անդ ապացուցանէ զիանդ եւ զընդունակութիւն յերգեցողութիւնս, որպէս եւ յաճախ երգէ ի տան: Չանայ ընթեռնուլ զգիրս, եւ զբօսնու մատինիւք: Արպիսի ընթացք սորա պարզէին զձգտումն եւ զընդունակութիւն իւր:

*) ՄԱՆՕԹ. վ. եպ. Մ.— Դնեմք աստ ի ծանօթութեան իրրեւ նմոյշ ինչ ժամանակակից սովորութեանց զգատճէն հարսանեկան հրաւիրաթղթոյ, զոր յանձնեաց կենսագրիս Վրթանէս քահանայ Պալեան Օրթաքէօյցի ի 1891 թուականի ի Միջնագեղջ, թէպէտ պակասէր հասցէ թղթոյն, պատանեալ հատեալ եւ կորուսեալ գոյով կէս մասն թղթոյն այնօրիկ:

«Գերայարդ աղա ազնուամեծար նազեւոյդ ողջոյն եւ օրհնութիւն «Յիսուսաւանդ»:

«Յայտձ շարաթու ունիմք Տէրամբ անել զհարսանիս քեռն մերոյ, «վանորոյ. խնդամիտ մատուցանեմք զայս երկող զեր ազնուամեծար յար- «զութեան ձերում, որով խնդրեմք հրաւիրանօք, զի շնորհ արարեալ հրա- «մայեսլիք յեկեացի յառաջիկայ շարթու աւուրն:

«Մնամ սպասեալ ըրկրատիթ զայտեան Ձերոյ
«(ինքնածեռագիր) Նու. ԳէՈՐԳ ՎՐԴՊ. ՄԻՋԱԿԻԻՎԻ:»

«1843 Սեպտ. 21, ի Միջագիւղ»:

Զգային ծնողք իւր, զի հարկ էր այլեւս տալ ուսման զԳրիգոր, եւ գտին գյարմար տնավարժոց: Մանաւանդ սոյն այս մանուկ ինքնին խնդրէր ուսանիլ զընթերցումն եւ զգիր, յաճախել ի Ս. եկեղեցի, որպէս տանէին յաճախ ծնողք իւր: Եւ տեսանէին բացայայտ, զի ախորժէր յոյժ յեկեղեցւոյ եւ երզնցողութեանց: Որով ուրախ լինէին հանապաղ եւ ինքեանք:

Յերկիրդէ Ենիչէրեաց, որպէս ծնողք ամենայն, նոյնպէս ծնողքն Գրիգորի ոչ երբեք թոյլատրէին նմա միայնակ ելանել արտաքս ի տանէ, երթալ յեկեղեցի, ի վարժոց, եւայլն: Յաճախ հայրն կարեալ զձեռանէ մանկան տանէր ուր եւ կամէր, որպէս եւ ի տնավարժոց, յառաւօտու եւ յերեկոյի, որպէս զի մի՛ վրտանդ ինչ հասցէ:

Այսպէս լրացուց Գրիգոր զվեցերորդ ամ հասակի իւրոյ:

ԳՂՈՒԽ Բ.

ՅԱՂԱԳՍ ԿՐԹՈՒԹԵԱՆ, ՈՒՍՄԱՆ ԵՒ ԱՐՀԵՍՏԻ ԳՐԻԳՈՐԻ

էր եօթն ամաց յորժամ ետուն ծնողքն զկայտառն Գրիգոր ի տնավարժոց Սրբուհի Մարապետի ի Սամաթիա, որ աջակցութեամբ եղբոր իւրոյ Յովսէփայ, պահէր զձաղկոց:

Եղբայր Մարապետ Սրբուհւոյ էր տիրացու-լուսարար Ս. Գէորգ եկեղեցւոյ Սամաթիոյ, եւ օգնէր լիապէս քեռ իւրում ի դասս կրօնականս եւ երաժշտականս: Յետ ամաց ինչ քահանայացեալ է Յովսէփ ի վերայ Ս. Գէորգ եկեղեցւոյ յիշելոյ, վարելով ի ժամանակի եւ զպաշտօնս Աւագ քահանայութեան եւ լուսարարապետութեան երից եկեղեցեաց Սամաթիոյ, նարլը Գարույի եւ Եէնի Մահալլէի, ըստ բացառիկ պայմանաց եւ դրութեան արուարձանին այնորիկ, նման երբեմն միացեալ եւ զարդիս բաժանեալ եկեղեցեաց Գում Գարույի, Եէնի Գարույի, Կէտիք փաշայի, եւ ցարդ շարունակեալ Բերա արուարձանին Ս. Երրորդութիւն, Ս. Յարութիւն եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցեաց:

Յայնմ ժամանակի կոչէին Մարապետ ո՛չ միայն զկանայս որք առանձնանային ի կուսանոցս ի Ս. Երուսաղէմ եւ յայլուր, զօրիորդս որ ուխտէին ի կուսութիւն եւ հրաժարէին յամուսնութենէ, այլ եւ զկանայս որ պահէին զտնավարժոցս, յորս երթեակէին մանկունք յերկուց սեռից, եւ յաւէտ իրականք ուսանէին զձեռարուեստս եւ զկարս, իսկ արակեանք զհասարակ ընթերցանութիւն եւեթ: Պահէին եւ քահանայք զտնավարժոցս ի բազում տեղիս, եւ երէցակիներ կատարէին զմեծ մասն զորս Մարապետք վարէին:

Համաձայն ուղղութեանց եւ պարագայից ժամանակին, դովելի եւ արդիւնաւոր էին տնավարժոցք այսպիսիք առաւել քան զդպրոցս ազգայինս, մանաւանդ առաւել քան զդասատուութիւնս ոմանց ի խանութս, սակաւուցն բացառութեամբ:

Զարդիս կարծեն եւ կարեն անուանել «խամբոց» դոնավարժոցսք, ցորչաի յառաջադիմէ մանկավարժութիւն ի կատարելագործութիւն եւ ի շիւրուսոյց եղանակս, յաւելուն օր աւուր զկրթական բարեփոխութիւնս եւ զպայմանս առողջապահականս, արծարծեն ի մանկունս զսէր ուսման եւ կրթութեան փոխանակ տաղտկութեան եւ զղուանաց, արգիլեալ եւ զգանահարութիւնս, միանդամայն արծարծեն դմիջոցս առ ի բանակ զսրածտութիւնս, առ ի զօրացուցանել զժիզս եւ առ ի կազդուրել զառողջութիւնս մանկանց: Անշուշտ նաեւ ապագայն ոչ զոհացուցիչ համարեսցէ եւ զներկայ կրթարանս եւ զկրթական ուղղութիւնս, ցորչաի յառաջադիմէ եւ զարգանայ կրթական եւ մանկավարժական խնդիր: Այլ սակայն, արգարութիւնն պահանջէ զնահատել ըստ ժամանակին եւ ըստ յարակից պարագայից եւ դոնավարժոցսք Մարապետականս եւ զարդիւնս նոցա յօգուտ երկուց սեռից:

Ուղղութիւն տնավարժոցացդ էր արդարեւ անձուկ յոյժ, եւ հազիւ յաջողէին յրնթացս երկուց եւ աւելի նմազ ուսուցանել մանկանց դհասարակ ընթերցանութիւն: Այլ սակայն, ըստ ձեռարուեստից բարերարէին օրիորդաց ըստ բուսականին:

Բազումք տնավարժոցաց ուսուցանէին մանկանց զայբ-բեն գրեալ ձեռագիր ի միում տախտակի, նախ դհասարակ տառս եւ ապա զգլխագիրս, որ եւ տեէին առաւել քան զվեց ամիսս, երբեմն անցեալ առաւել քան զմի ամ: Ապա տային մանկանց զհեգերէնս, եւ Սաղմոսն պսակէր զուսմունս եւ զկրթութիւն աշակերտաց: Ուսանէին մանկունք եւ գերզս ինչ ազգային եւ եկեղեցական:

Ըստ այսմ ապա ոչ կամէր Գրիգոր մնալ ընդ երկար ի Մարապետական տնավարժոցի, եւ սէր ուսման՝ ընդունակութիւն եւ սրամտութիւն Գրիգորի ստիպեաց զծնողսն փոխադրել զնա յազգեպրոց, թէեւ ուսաւ ի Յովսէփ զսրէ զկրօնական գիտելիս եւ գերաժտութիւն ըստ մասնեայ:

Յուցանէր Գրիգոր զընդունակութիւն մեծ եւ զյաջողակութիւն նաեւ յերաժշտութեան, որպէս եւ եղբայրն իւր Օհան, ունելով եւ զձայնս քաղցունս, որով դարձաւ սիրելի յաչս ոչ միայն ուսուցչաց իւրոց, այլ եւ քահանայից եւ ժողովրդեան, որ խոտն բազմութեամբ ընտելն զՍ. եկեղեցի յերգելն Գրիգորի, մինչ Սամաթիա յաջողակ եւ ճոխ էր, որպէս եւ ըստ մասնեայ է ցայսօր, քաղցրաձայն դպրօք եւ ներդաշնակ երաժշտութեամբ, ունելով եւ զհնադոյն Ընկերութիւն դպրաց, նման Ս. Հրեշտակապետ եկեղեցոյ Պալատու եւ Աւագ-եկեղեցոյ Գում-Գարուչի, հանդերձ յատուկ եկամտիւք եւ կտակեալ կայուածովք: Գրիգոր իւրովն ընդունակութեամբ եւ յաջողակութեամբ ցուցանէր զկարօտու-

թիւն եւ զպէտս յաճախելոյ աւելի բարձր դպրոցի եւ զանդուստ պէր եռանդուն յուսմունս :

Իսկ Հայրն Պետրոս^{*)}, ստիպեալ ի դրութենէ իւրմէ եւ ի կարօտութեանց, կամէր կանխել եւ քաղել զօգուտս յանդրանիկ որդւոյն ի Գրիգորէ, որպէս սովորութիւնք էին եւ են բազում ծնողաց, առեալ յօգնական եւ յաջակից յարուեստի իւրում եւ ի զործասենեկի որ յԱլի-Փաշայ խանն ի Պիթ-բազար, հակառակ թալանանց եւ խնդրանաց որդւոյ իւրոյ, եւ սրահել անլթար զարուեստ իւր եւ զզործասենեակ ընդ յաճախորդսն : Եւ Գրիգոր Հնազանդեալ հօր իւրում, ահամայ կատարէ զիտիար հօր իւրոյ եւ երթայ ի զործասենեակ, եւ զամս ինչ աջակցի հօր իւրում մինչեւ հասանէ ի կարեւոր չափ հասակի եղբայր իւր Օհան, որ յաւէս հակամէտ էր արուեստի հօր իւրոյ, որպէս եւ կրասեր եղբայր իւր Աւետիս, յետ ամաց ինչ աջակցին եւ հետեւին արուեստի եւ զործոյ ծնողաց իւրեանց, այնպէս զի երկուքին եղբարք յաջողակութեամբք իմն կառավարեն զարուեստ եւ զզործս հօր իւրեանց :

Այլեւս առիթ բարեպատեհ եւ ժամանակ յարմար համարէր Գրիգոր առ ի հասանել բուն բաղձանաց իւրոց, շարունակեալ զուսումնասիրութիւն իւր եւ մտեալ յեկեղեցական պաշտօնէութիւն :

Բարեյիշատակ Յարութիւն ամիրայ Գաղէզ, հաստատեալ զկարեւոր եկամուտս, բացեալ էր ի ձեռն Կարապետ Արքեպիսկոպոս-Պատրիարքի սիրելոյ իւրոյ զվարժարան Ուսումնարան անուամբ, ի պէտս պատրասելոյ զքահանայացուս, ընդ հովանեալ եւ ընդ պարսպաւ Ս. Աստուածածին աւագ-եկեղեցւոյ ի Գում-Գարու, հանդէպ եւ ընդ հսկողութեամբ Պատրիարքարանի, յորում դասախօսէր մեծահոջակ Գրիգոր հայկարան եւ աստուածարան պատուելի Փէշտիմալճեան զկրօնադիտութիւն ընդարձակ, զհայկարանութիւն, զճարտասանութիւն եւ զտրամարանութիւն հասակաւոր աշակերտաց եւ քահանայացուաց :

Կրթական ծրագիր Ուսումնարանին քահանայացուաց ոչ պարունակէր զբազմութիւ «ութիւն»ս եւ զօտար լեզուս, այլ սակայն յաջողութեամբ իմն եւ արդիւնաւորապէս մատակարարէր զուսմունս կրօնականս, հայկականս, երաժշտականս եւ եկեղեցականս, զոյգ ընդ քերականական, ճարտասանական եւ տրամարանական գիտութեանց : Պակաս էին միանգամայն պատմութիւն ընդհանուր, աշխարհագրութիւնք, համարողութիւնք, բնական պատմութիւն եւ գիտութիւնք, տիեզերագրութիւն եւ նմանահանդոյն գիտութիւնք ատողմագահական : Աստուածարանութիւնն սմբոսեհաւ էր ընտանծախատցնս ի Բրիտաննէական Վարդապետութեան եւ ի մեկնութիւնս դրոց ինչ :

*) ՄԱՆՕԹ. Վ. եպ. Մ.— Հայրն Գրիգորի Պետրոս ունէր զսկարութիւն աչաց մինչեւ զրկել ի սպաս ի տեսութենէ աչաց : Ոմն պարսիկ աշարոյժ («Բէհալ» ըստ պարսից ?) արգիլեալ զՊետրոս ի սեւապատ սենեակ մի ի տան զուսուրս քառասուն, անկեալ ընդ կրօնին ի մահճի, զարմանէ ըստ բաւականին :

Փութամք յաւելլուլ աստէն ի պարծանս Յարութիւն ամիրայի Պէղզեան, զի նա, թէպէտ տկար էր ինքն յուսմունս, այլ ուսումնասէր, մանաւանդ նախանձախնդիր էր ներդաշնակ եւ քաղցրանուաղ երգեցողութեանց եկեղեցւոյ, ուսմանց եւ կրթութեանց քահանայից եւ քահանայացուաց, աղլային յառաջադիմութեան, զարգացման եւ բարդաւաճման, ծաղկմանց եւ տարածմանց արուեստից եւ վաճառականութեան ի Հայս, որպէս վկայեն գործք եւ յիշատակք նորա: Սակս կարօտութեանց եւ պիտոյից Ազգի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց խնդրէր զխորհուրդս ի Կարապետ Արքեպօէ եթէ զիտ'որդ եւ զի'նչ պարտ իցէ առնել եւ յաւելլուլ, որպէս զի արդիւնաւորեսցէ ինքն: Որում արտասխանէ Կարապետ Արքեպօ.—Պատրիարք համաձայն զարգացման եւ անձուկ ընդունակութեան իւրում, եթէ «Ամիրայ, բարերարեցեր դու Ազգի եւ եկեղեցւոյ մերում առաւել քան զոր պարտէիր առնել»: Մինչ Գաղէզ ինքնին շարունակէր եւ յաւելլոյր զայսպիսի ձեռնարկս, յետ խրախուսելոյ զԼնիկերութիւնս զպրաց եւ զհամայն ձեռնարկս որ ի պէտս շինութեանց եկեղեցեաց, դպրոցաց, հիւանդանոցաց, խոհուն իմն հետառեսութեամբ հոգաց եւ զպատրաստութենէ քահանայացուաց արժանաւորաց: Այլ եւ կարեւոր միջոցօք սատարէր հոշակաւոր վանօրէից, Ս. Յակոբեանց Երուսաղէմի, Սսոյ, եւ այլոց եւ այլոց, եթէ ըստ դրամականին եւ եթէ ըստ զարդուց եւ անօթաց եւ ըստ այլոց պիտոյից*):

Արդ, պատանին Գրիգոր, առեալ զհրաման հօր իւրոյ, մեկնեցաւ յարուեստէ եւ ի գործասենեկէ՝ սկսաւ յաճախել ի յիշեալ Ուսումնարանն եւ ուսանել եռանդեամբ եւ զիշերաջան աշխատու-

*) ՆԱՆՕԹ. Վ. եպ. Մ.— Յաւուրս Տ. Չաքարեա Արքեպօ.—Պատրիարքի Կաղղուանցւոյ, հազիւ ուրեմն տեսանմք զջննս եւ զճգտումն նոր առ ի ուսանել զարտաքին զիտութիւնս՝ ընդ գործածական լեզուաց, թէպէտ սահմանափակ իմն ուղղութեամբ, եւ Կետրոնն-Պատրիարքարանն հազիւ հաստատէր զմասնաւոր կրթարան ի պէտս 10-12 ընծայացուաց-աշակերտաց Չաքարայի: Գովիլի էր յոյժ առաջին թելադրեալ մտածութիւն եւ ձեռնարկ արժանայիշատակ Յարութիւն ամիրայի Պէղզեան ի պէտս եւ յօգուտ հասարակաց եւ եկեղեցւոյ Հայաստանեայց, այլ Պատրիարքարանն ոչ էր զիտակից պատրաստութեանց իւրոց, եւ ընդարձակ կրթական եւ զիտական պիտոյից, եւ ոչ իսկ կարէր կամ զիտէր տալ զլուսամիտ խորհուրդս Պէղզեանի եւ խրախուսել զնա: Ժամանակակից անձք ոմանք եւ Միսիթարեանք Վենետիկ յանոյի յալէս զկրթական վէճս միայն եւ զօրտորութիւնս, եւ ոչ երբք զմրցումն Աղլային մտաւորական եւ բարոյական կրթութեանց եւ զարգացմանց, զոյդ ընդ լեզուաց եւ արտաքին զիտութեանց եւ ուսմանց: Ի վերայ այսր ամենայնի պարտ է յաւելլուլ զի կրթական վէճք եւ որտորութիւնք պապականաց չեւտեցին ի նորոյ ի Հայս զանհրաժեշտ կարեւորութիւն ընդարձակ կրթական եւ ուսումնարանական խնդրոց, միանդամայն ջանալ հաստատել եւ յաւելլուլ զպրոցս աղլայինս եւ վանականս, սկսեալ յաւուրց Տ. Չաքարայի Կաղղուանցւոյ, յաւուրս որոյ սկսան ծաղկիլ զպրախանքն Արմաշու, մինչ հնադարեանն եւ կարեւորագոյն վանք Ս. Յակոբեանց Երուսաղէմայ անփոյթ տակաւին դտանէր մինչեւ յամ Տեան 1850—65:

մեամբ դորս աւանդէր Փէշտիմալճեան, շարունակեալ ընդ նոսին եւ երաժշտութիւն եւ զուսումն Շարականաց ի հմտադոյն զպրաց Աւաղ-Եկեղեցւոյ :

Ընդունակութիւնք, եռանդ եւ բարեջանութիւն Գրիգորի զբաւեցին զուշադրութիւն եւ զհամարումն Գրիգորի Պատուելոյ, որ եւ աննախանձ ջամբէր նմա զուսմունս դորս աւանդէր: Ոնամ մեծ ունէր եւ խրախուսէր Փէշտիմալճեան զպատանիս զայս Գրիգոր, եւ յաւէտ ուրախանայր ընդ յառաջըլիմութիւն սորա եւ ընդ բարի վարս. զովէր որոց պատահէր, մատնանչէր ի նախանձելի օրինակ աշակերտակցացն, յաճախ յանձնարարեալ եւ Գրիգորի օժանդակել եւ թեյագրել ընկերաց իւրոց, որով կրկնակի արգիւնաւորէր ուսումն եւ փորձաութիւն իւր:

ԳԼՈՒԽ Գ.

ՅԱՂԱԳՍ ԳՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐԻԳՈՐԻ ԵՒ ՄՏԱՆԵԼՈՅ Ի ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

Յաւուր միում ի յեղակարծ ժամու այցելէ Տ. Կարապետ Արքեպիսկոպոս-Պատրիարք յՈսումնարան, եւ ի հարցաքննելն զաշակերտս՝ հաւանի, միանգամայն հիւնայ ընդ յաջող եւ համարձակ պատասխանիս եւ ընդ գեղեցիկ շարագրութիւնս Գրիգորի, լսէ եւ զգովեստս եւ զբարի վկայութիւնս Փէշտիմալճեան պատուելոյ եւ այլոց պաշտօնէից զԳրիգորէ, եւ այնպէս սեւեռէ Կարապետ Արքեպ. զբարեմիտ ուշադրութիւն իւր ի վերայ սորա:

Գոգցես կարդայ Կարապետ Արքեպ.-Պատրիարք զսիրտ եւ զանդուսպ փափաք հոգեւոր Գրիգորի, եւ օժանդակէ սմա հասանիլ եկեղեցական փափաքանացն:

Յանչափս ուրախանայ Գրիգոր ընդ համարումն եւ ընդ խրախոյս Կարապետ Արքեպ.ի, եւ խնդրէ առնուլ ուղղակի զհաւանութիւն ծնողաց իւրոց, որք ընդըլիմանային յաւէտ: Եւ Պատրիարք խորհի հնարս, եւ պատրուակեալ զգրագրութիւն ի պատրիարքական Փոխանորդարանի՝ համոզէ զծնողսն ըստ թախանձանաց պատանեկիս այսորիկ, եւ առնու զհաճութիւնս նոցա:

Եւ այսպէս Գրիգոր ի 25 Մայիսի 1830 ամի փրկչական մտանէ ի Պատրիարքարան եւ ստանձնէ զպաշտօն գրագրութեան առ փոխանորդութեամբ (Վէճիլ) Առաքել քահանայի՝ համաձայն հրովանի եւ տնօրէնութեան Պատրիարքի, զոյգ ընդ նմին շարունակէ եւ զգասաութիւնս իւր յՈսումնարանի, պարապելով յա-

ւէտ եւ ի վերժանութիւնս Ս. Գրոց եւ կրօնական մատենից : Չէր սմա փոյթ երբեք պարապելոյ իցրօսանս եւ ի զուարճութիւնս, զորպիսիս փոխանակէր երգեցողութեամբք եւ շարականագիտութեամբք :

Շարի է յաւելուլ աստէն, զի ոչ գիւրին ինչ էր պաշտօն դրագրութեան փոխանորդարանի (վեֆիլարանի), թէպէտ դրամական պարզեւք հրապուրէին զպաշտօնավարս : Բաց յայսմանէ, Առաքել քահանայ վեֆիլն Լանայր զնել զորդի իւր ի գրագիր Փոխանորդարանի. վասն որոյ ընդ ահամբ հայէր ի Գրիգոր, վարէր ընդ սմա յաւէտ հակակրութեամբ, բարդէր զայլ եւ այլ աշխատութիւնս ծանրացուցանէր զպաշտօն սորա, որպէս զի ձանձրացեալ եւ յուսածատեալ ի րաց մեկնեացի ի գրագրութեանէ : Այլ Գրիգոր խոհեմութեամբ եւ համբերութեամբ տարեալ ամենայնի, ոչ ումէք յայսնէր զորտունջ եւ ոչ առ Կարապետ Արքեպիսկոպոսն, որում յաւէտ սիրելի եւ հաճոյ ընծայէր զանձն :

Մերթ թեկնածութիւնք, երբեմն պապական խարդաւանութիւնք, յաճախ ետամուրական քահանայք ոմանց ազգեցիկ անձանց, եւ մերթ կրօնական վէճք եւ խնդիրք յաճախ արդիւնաւորէին զպատրիարքական փոփոխութիւնս : Տ. Կարապետ Արքեպ. ի շորհս պաշտպանութեան եւ ազգեցութեան Յարութիւն ամիրայի Պէղճեան, որոյ էր սիրելի սակս համեղարան եւ ճարտարախօս քարոզչութեանց իւրոց, համաձայն ըմբռնմանց ժամանակին, վարէր զիշխանութիւն պատրիարքութեան, առանց ունելոյ ինքնին զվարչադիտութիւն բարձր : Եւ յառաջադիմական ջանք ոմանց եւ յարարութիւնք արտաքինք ոչ ախորժելի լինէին նմա : Եւ ոչ իսկ փոյթ էր նմա աշխատ լինել ըստ արժանւոյն յօղուս եւ ի պէտս Ալզի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց, հետեւեալ յաւէտ անձնական զիրութեանց, մինչ «չըջանն Գաղէղեան» կարէր օժանդակել նմա ի յաջողութիւնս ոչ սակաւ աղբօգուտ ձեռնարկութեանց, չորհիւ զարմական առատութեանց եւ տնտեսական զիրութեանց : Տ. Կարապետ Արքեպ. թերացաւ եւ յեկեղեցական եւ կանոնական պարտաւորութիւնս իւր, միանգամայն առթիւ խնդարմանց յարարութեանց ընդ Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, սակս քաղաքական պատճառաց, հաստատեալ զգրութիւն նոր «իւրր առժամանակեայ», զի վարդապետք-առաջնորդք վիճակաց նստցեն յԱթոս, զործածեսցեն զթագ, զեմիփորոն եպիսկոպոսական, տեղափոխեալ յաճախ եւ զԱռաջնորդ : Ներելի է տեսլ զի Կարապետ ինդրէր յաւէտ զհանդիստ անձնական քան ծառայելի եկեղեցւոյ եւ ալզի, որոյ վասն եւ կամէր հրաժարել ի պատրիարքութենէ եւ մեկուսանալ յիւսկիւտար, ուր ետ կառուցանել զրնակարան յատուկ հանդէպ Ս. Խաչ եկեղեցւոյ ի Սէլամսրղ թաղի, ծախիւք Գաղէղ ամիրայի, զոր եւ յատկացոյց նախկին պատրիարքաց յետ մահուան իւրոյ*):

* ՍՅՆՈՒՄ. վ. եպ. Մ.— Տ. Յակոբոյ Արքեպ. երբեմն Պատրիարքն խանդարեաց զիտակ նորս եւ զկարգազրութիւն : Էր արգարեւ ի գաղտնի եւ կուսակցութիւն ինչ կողմեալ յաշակերտաց Տ. Յովհաննէս Արքեպ.—Պատրիարք

Ժամանակակից անցք ինչ աղգայինք ծանրացելալ ի վերայ պատրիարքի, Կարապետ Արքեպիսկ. առնու զհաւանութիւն Գաղէղ Յարութիւն ամիրայի եւ հրաժարի, որում յաջորդէ Տ. Ստեփաննոս Արքեպ. Պրուսացի, Աղաւնի անուանեալ, յամի Տեառն 1831, ըստ ընտրութեան երեւելեաց աղգայնոց, որ եւ ըստ յանձնարարութեան նախորդի իւրոյ հմիչ տակաւ եւ հետեւի ի պաշտպանութիւն պատանեկին Գրիգորի: Միանգամայն տեսեալ զբարի վարս, զգովելի ընթացս, զժրաջան գործունէութիւն, զհաւատարիմ պաշտօնավարութիւն, զբարեպաշտ հաւատս եւ զընթանալովութիւն, զքաղցրանուագ երգեցողութիւնս, զազօթասիրութիւնս եւ զուսումնասիրութիւնս Գրիգորի, որ աւուր յաւելու դիւրն վստահութիւնս եւ զհամակրութիւնս, զհամարումնս եւ զպաշտպանութիւնս, տեսանելով զառատութիւն շնորհաց Աստուծոյ ի վերայ Գրիգորի եւ զպպաղայ յուսալից եւ փառաւոր:

Յետ Առաքել քահանայի, յաւուրս պատրիարքութեան Ստեփաննոսի, աչակերտակից հոգեւոր եղբայր նորին եւ միաբանակիցն Արմաշու Պօղոս վրդ. Թաքթաքեան ի Պրուսայէ ստանձնեալ վարէր զպաշտօն պատրիարքական Փոխանորդութեան, որ եւ տեսեալ զգործնական հմտութիւնս եւ զփորձառութիւնս Գրիգորի, իբրեւ զօժանդակ եւ զօգնական իւր գործածէ զսա: Արեւ անձնուիրարար ծառայեալ նմա ոչ միայն իբրեւ զգրագիր, այլ եւ իբրեւ զփոքրաւոր, որ ըստ օրէ յաւելոյր գրաւել զկատարեալ վստահութիւնս եւ զհամարումն Պօղոսի:

Յարարերութիւնք Ստեփաննոսի ընդ Պօղոսի ոչ էին անկեղծք, սիրայիրք եւ մտերմականք ըստ արտաքին պատճառաց, սակայն Գրիգոր հաւատարապէս վայելէր զսէր եւ զվստահութիւնս նոցա:

Պօղոս վարդապետ Թաքթաքեան ունէր զյիշատակելի արդիւնս եւ զգործունէութիւն ի վանս Արմաշու, առաւել ըստ կրթական ինդրոց, եւ զնախանձախնդրութիւն յեկեղեցական եւ ի կրօնական ինդիրս, որոյ վասն եւ առաքեցաւ յաբար ի Գաղատիա, ջանիւք Յակորոս-Մատթէոսեան կուսակցութեան: Յետ արքորանացն հետեւի այլեւս ծայրայիղ իմն զգուշաւոր պահպանողականութեան, միանգամայն համբերատար լինել ի խօսս եւ ի զործս իւր: Եւ այնպէս իմն առնել, զի զոր կամէր առնել եւ խօսել, ի գաղտնի թելադրէր այլոց եւ տայր նոցա խօսել եւ զործել: Զսոյն զայս ընթաց եւ զուղղութիւն կայաւ եւ ի փոխանորդութեանն, եւ յառաջ վարէր զԳրիգոր եթէ յաշխարհականութեան եւ եթէ ի վարդապետութեան:

Նպատաւոր Հանգամանք այսպիսիք միացեալ ընդ արթնութեան, գործունէութեան, ժրաջանութեան, փորձառութեան եւ յաջողակ պաշտօնավարութեանց, ետուն Գրիգորի զազգեցիկ դիրս ի Պատրիարքարանի, եղև բազմաց ծանօթ եւ սիրելի, մինչեւ չարժել զնախանձ սակաւուց ոմանց եւ ամբաստանել զսմանէ թէ

քի, զոր կազմէին եւ վարէին Յակորոս երբմն պատրիարք եւ Մատթէոս երբմն պատրիարք եւ սպա կաթողիկոս, այլ սակայն տկարանայր առաջի ազգեցութեանց Գաղէղի, որ զօրացաւ յետ վախճանի նորա, յաւուրս պատրիարքութեան Ստեփաննոս Արքեպ. Պրուսացոյ, Աղաւնի մականուանելոյ:

ինքնագլուխ վարէր զպաշտօն Փոխանորդութեան, մինչ խորամանկ և ևտարագէտն Պօղոս գործածէր զսա ըստ արժանւոյն, և զոմանս պատասխանիս զժուարինս սարժավարէր և փոխանակէր րանիւ բերանոյ Գրիգորի, փոխանակ վճարելոյ ինքնին և ուղղակի և այսու առթէր զնախանձ և զըրգիւ, թէպէտ Գրիգոր առ ոչինչ համարէր զվերջինս: Վասն որոյ Գրիգոր-Գեորգ երեւէր յաճախ և էր առարկայ վրէժխնդրութեանց հակառակորդաց, մինչև հիւսել և յանուն նորա զոտանաւորս զուհակահանս, որպէս և յանուանս այլոց, շարագրեալ ի Մատթէոսեանց, յարմարեալ զրամրասանս եթէ ոչ զըրպարտութիւնս թշնամականս ընդդէմ Ստեփաննոսեանց, ի շարս որոց ունէր Գրիգոր զգործօն զեր գլխաւոր:

Փոխանորդն պատրիարքական յայնժամ վայելէր տակաւին զլիազօր արտօնութիւնս և զմիջամտութիւնս: Գողցես յաճախ զերպանցէր սուսել քան զպատրիարքական իշխանութիւն, մանաւանդ ի դատական գործս, ի յարաբերութիւնս ի Ռ. Դրան, ի վարչութեան Կ. Պօստոյ և ի գործս Կեղբ. Հիւանդանոցի Կ. Պօլսոյ, մինչև անգամ րանտարկել զյանցաւորս, զան հարկանել կամ աւնուլ ի գրանակ (ֆալսֆա) զոտս յանցապարտից արանց, շղթայել զձեռս և զոտս (ֆէլիքի): Իսկ զան հարկանէին զկանայս ի թիկանց կուսէ՝ տուեալ և պրկեալ ի թիկունս ժամկոչաց կամ բարապանաց (եասագեր) պատրիարքարանի: Երբեմն լրացուցանէր և Աղբ. Հիւանդանոցն զպէտս զգաստարանի և րանտի:

Վասն որոյ, որպէս ծանր էր պաշտօնը Պատրիարքական Փոխանորդի, նոյնպէս կարէր արդիւնաւորել զճառայութիւնս զնահատելիս, եթէ վարչագէտ և բարեմիտ էին փոխանորդք և զիտէին վարել արժանաւորապէս: Յայս սակս ջանայր Գրիգոր բարձրացուցանել զանուն Պատրիարքի և Փոխանորդի, արթուն գործունէութեամբ և արդու վարչութեամբ, և այսու զիւրազօյն լիցի իմանալ՝ զի ոչ պակաս էին զժուարութիւնք, նախանձք, ատելութիւնք և հակասութիւնք:

Դատական գործք Փոխանորդարանի յարուցանէին երբեմն զկնճիռս ըստ խոստովանութեանց և ըստ ամուսնական խնդրոց, յորպիսիս տկարանային կուսակրօն փոխանորդք: Վասն որոյ քանիցս փորձեցին յանձնել քահանայից զպաշտօնը: Սակայն փոխանակ երկուց՝ տասնապատկէին զժուարութիւնք և կնճիւրք: Յայս սակս և կուսակցական թեկնածութիւնք յարուցանէին զխոչընդոտս: Գրիգոր ջան կալաւ յարգարել զամենայն, և ի պատեհ ժամս և ի կարեւոր խնդիրս հրաւիրէր զգործակցութիւն քահանայից, որպէսզի մի՛ ստուեր ինչ գայցէ անուան և պատուոյ կուսակրօն Փոխանորդի:

Պօղոս վրդալ. Թաքթաքեան վարժեալ առաւել ի վանական կեանս, տկարանայր յաճախ ի վարչական և ի դատական գործս. որ և պատճառ առաւել լինէր արդու միջամտութեան և գործակցութեանց Գրիգորի, որում տուեալ էր Պօղոս զվստահութիւն կատարեալ:

ԳԼՈՒԽ Դ.

ՅԱՂԱԳՍ ՄՏԱՆԵԼՈՅ ԳՐԻԳՈՐԻ Ի ԿՈՒՍԱԿՐՕՆ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՂԱԳՍ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԽԼՐՏՄԱՆՑ

Տեսեալ եւ փորձեալ Տ. Ստեփաննոսի Արքեպ. — Պատրիարքի զայսպիսի անձնանուիրութիւնս եւ զջանս Գրիգորի ընդ բարի եւ պարկեշտ վարուցն, զորոց յաւելոյր Պօղոս վրդ. Փոխանորդ զնպատաւոր վկայութիւնս, լուեալ եւ զհոգեռանդ զիղձս եւ զուխոս Գրիգորի, ետ սմա եւ ձեռնասուն աշակերտի իւրոյ Գալորայ Պրուսացոյ ձիւնիւղեան եւ այլոց, — միաբանից ոմանց վանուցն Արմաշու, — զսարկաւազութիւն յաւուր տօնի Աւետեաց Ս. Աստուածածնի, ի շարթ աւուր յՄն Ապրիլի 1834 թուականի, յԱւագ-եկեղեցոջ ի Գում Գարու :

Խրախոյս մեծ եղեւ Գրիգորի եւ յաճախեաց ի դովելի վարս, ի վճարումն կրկնակի պարտուց եւ ի փոյթեռանդ ջանս : Ա՛յնչափ բուռն էր սէր եւ խանդակաթ իղձ սորա ի կուսակրօն հոգեւորականութիւն :

Ս. Պատրիարք յաճախ զնահատէր եւ խրախուսէր զԳրիգոր, մինչեւ խրատել զձեռնասուն աշակերտս իւր առնուլ օրինակ բարի ի Գրիգորէ :

Իսկ ի Կն Սեպտեմբեր ամսոյ 1835 թուականի ձեռնադրեաց Տ. Ստեփաննոս Արքեպ. զԳրիգոր, յետ միամեայ եւ վեցամսեայ (մի եւ կէս ամեայ) սարկաւազութեան, ի կուսակրօն քահանայ, ընդ աշակերտաց իւրոց յԱւագ-եկեղեցոջ պատրիարքարանի, համաձայն կանոնաց եւ արարողութեանց Ս. Եկեղեցոյ Հայաստանեայց, անուանեալ Գէորգ, եւ այլոց՝ Յովսէփ (ձիւնիւղեան) եւ Միքայէլ, որք կատարեն զՔառասունս յԱւագ-եկեղեցոջ, ի գիշերի մնալով ի խուց ժամարար եւ հերթակալ քահանայից : Պօղոս վարդապետ Թաքթաքեան եւ աւագ քահանայ Աւագ-եկեղեցոյն հակէին ի վերայ նորընծայից, ուսուցանէին զկարեւորս, մինչեւ լրացան Քառասունսն առաջին :

Ըստ որում աւրնթեր միմեանց են երեք եկեղեցիք հանդէպ Պատրիարքարանի ի Գումգարու, համաձայն պատուիրանի Տ. Ստեփաննոսի Արքեպ. ի, մատուցանէ Տ. Գէորգ զառաջին Ս. պատարագ յեկեղեցոջ Ս. Ուաչի ի վեցն Հոկտեմբերի, յաւուր տարեդարձի եւ յիշատակի օժման վերաչինեալ Ս. Աստուածածին Աւագ-եկեղեցոյ, որպէս Տ. Յովսէփ Պրուսացի (աշակերտ եւ փոքրաւոր Ստեփաննոսի) ի Ս. Աստուածածին յԱւագ-եկեղեցոջ, եւ Տ. Միքայէլ ի Ս. Յարութիւն եկեղեցոջ, տալով եւ զքարոզս (յորում տկարանայ Տ. Միքայէլ եւ խնդրէ վերադառնալ մնայ ի Չարխափան Ս. Աստուածածին վանս յԱրմաշ) : Ի յաջորդ հօթնեակս փոխ ի փոխ մատուցանեն Գէորգ, Յովսէփ եւ Միքայէլ

արեղայք զերկրորդ և զերրորդ պատարագսն ի Ս. Աստուածածին, ի Ս. Խաչ և ի Ս. Յարութիւն եկեղեցիս, սակս երիցս եկեղեցեաց, և քարոյք Գէորգայ հանեն զհոգակ մեծ, ընդ որս հաւանի յոյժ Ս. Պատրիարք: Վասն որոյ փութայ Տ. Ստեփաննոս Ս. Պատրիարք Արքեպիսկոպոսն տալ Տ. Գէորգայ և օժակցացն զգաւագան մասնաւոր իշխանութեան վարդապետութեան, որպէս զի արտօնութիւնք և խրախոյս բարձեալ քարոզեցեն համարձակ դրանն կենաց յօգուտ և ի փրկութիւն հաւատացելոց:

Համբաւ Տ. Գէորգայ վարդապետի հոգակ հարկանէր, միանգամայն կուսակցութիւնք ազգայինք և կիրք անձնականք, — որք դաւադրէին ընդդէմ Ս. Պատրիարքի և Փոխանորդի, — ոչ մոռանային և զԳէորգ վարդապետ, որ անձնուիրութեամբ և հաւատարմութեամբ շարունակէր զպաշտօն իւր և զպարտս, և յաւէտ ջանայր նանրացուցանել զջանս հակառակորդաց:

Տակաւ երեւէին խլրտմունք ազգային շարժմանց, և նորահաս անձինք խմորեալք նորովք զազափարովք հետեւէին արդիւնաւորել զգազափարս և զնպատակս իւրեանց, զրգոէին զխոսովութիւնս՝ պատրուակեալ զգաւառական խնդիրս, որովք հրապուրէին զդուստուացիս: Էին կուսակցութիւնք և ի մեծամեծս ազգայինս և յամիրայս, յորոց օգտէին նորահաս*):

Առ ի պաշտպանել զխաղաղութիւն ազգիս և զվարչութիւն իւրեանց, Պօղոս և Գէորգ վարդապետք, ախոյեան գլխաւոր հանդիսացեալ, ազդու գործունէութեամբ ջանային ջլատել զխաղաղանութիւնս, սիրաշահեալ զոմանս, յորդորեալ զայլս, և յանդիմանեալ զնորահասս: Սակայն նենգամտութիւնք ոմանց եկեղեցականաց ոչ տկարանային և ոչ դադարէին, սուանց երբեք նախամեծարելոյ և խորհելոյ զիրական շահ և զպէտս Ազգի և Եկեղեցւոյ: Անձնական կիրք և ակնկալութիւնք զեկալարէին և բորբոքէին զնոսս, ընդ գլխաւոր թելադրութեամբ Մատթէոս

*) ԾԱՕԹ. վ. եպ. Մ. — Հետեանք այսպիսեաց ջանից և շարժմանց հետզհետէ եղեն հաստատել զկանոնաւոր ժողովս, «Գերագոյն» և «Նորիւր» անուամբ, սպա զՍահմանադրութիւն ազգային և զնոր ժողովս վարչականս ի մայրաքաղաքի և ի վիճակս Թուրքիոյ, չեղբացուցանել զբահաճոյ և զանկանոն գործողութիւնս, նշանակել զսահման իրաւասութեանց անձնուր ժողովոց և իշխանութեան Արքեպ. — Պատրիարքի, թէպէտ տակաւին կարօտին ոչ սակաւ բարեփոխութեանց, յարմարելով իսկական դրից և պիտոյից Ազգի և Եկեղեցւոյ Հայաստանեաց: Զարգացեալ երիտասարդք՝ թէկէ անփորձք առ հասարակ՝ ձեւացուցեալ միանալ և ծառայել ազգայնութեանց զօրաւ անձանց և թեկնածուաց, յառաջ վարէին զիսկական նպատակս իւրեանց և զջանս, և արգիւնաւորէին, զորս անագան ուրեմն զզացին ամիրայք և թեկնածուք, և փորձեցին ի գուր խանգարել, և կնքեցան կուսակցութիւնք նորք, «Խաւարեալ» և «Լուսաւորեալ», չեւոեցին զհալածանս բանիս և գործով, ազգեցութեամբք և հրատարակութեամբք, մինչև յաղթական կուսակցութիւնն Լուսաւորեալ չեղբացոյց ի սպառ զԽաւարեալն կուսակցութիւն երբման ամենահօր և զերակչիս: Ահա վերջարանութիւնն ամենց հակառակորդաց Ստեփաննոսի, սիսեալ տարբեր իմն նպատակովք զարգացելուք ի Յակոբոս-Մատթէոսանց, ծայրայեղ ընթացիւք:



վարդապետի (ապա եպիսկոպոսի եւ Կաթողիկոսի), որ վայելէր զհամբաւ քաջաքարոզ եկեղեցականի :

Սառնեալ էին ի յուղմունսղ եւ զկրօնական խլրտմունս մերթ ի պապականութիւն եւ յաճախ ի լուծեցեալականութիւն, ընդ պատրուակաւ կրօնական ազատութեան եւ վերանորոգութեանց կամ բարեկարգութեանց :

Ապաքէն ս'րչափ յաջողէին Պօղոս եւ Գէորգ վարդապետք ի ջանս իւրեանց, եւ ի պաշտպանութիւնս, դժուարին էր նոցա յաղթել ի սպառ հակառակորդաց եւ դաւադրութեանց, մինչդեռ նենգամիտք զիմէին ի չափազանցութիւնս, ի զրպարտութիւնս եւ ի դրդութիւնս, ընդ պատրուակօք աղբային բարեկարգութեանց եւ սահմանադրական վարչութեանց, մինչեւ լինել պատճառ բանտարկութեանց ոմանց աղբայնոց զաւառացւոց, եւ այսու դարբնել զծայրայեղ ատելութիւնս եւ զթշնամութիւնս, յաւելեալ զձեռագիր հրատարակութիւնս լի զրպարտական ամբաստանութեամբք ընդդէմ Ստեփաննանց : Իսկ Տ. Ստեփաննոս Արքեպ. — Պատրիարք էր այր հեղահոգի եւ խաղաղասէր, կասաքինի եւ զթասիրտ, երկնչէր ի հակառակութեանց եւ ամէր հրաժարիլ ի պատրիարքութենէ, որում ոչ հաւանէին ամիրայք, մանաւանդ կամէին զսպել զխոտվարարս ի ձեռն քաղաքական իշխանութեան որում ոչ հաւանէր Աղաւնի : Ոչ հաւանէր նա հայածել եւ զեկեղեցականս խմորեալս, զորոց ամբաստանէին մոլորեալ լինել ի բողոքականութիւն : Էին ի նոսա եպիսկոպոսունք լեզուազէտք, որք տկարամտութեամբք առթէին զգայթակղութիւնս եւ խրախուսէին զաշխարհականս, յորոց ոմանք անկեալ էին ի թաւարդս եւրոպացի լուծեցեալաց, որք պատրուակեալ զարուեստ բժշկութեան՝ երթեկեկէին ի տունս եւ արղիւնաւորէին զբարոզչական պաշտօնս իւրեանց :

Մինչ այս մինչ այն, եւ ահա ամիրայք եւ ժողովուրդ Սաազեղջ խնդրեն ի Ստեփաննոս Արքեպ. — Պատրիարքէ կարդել զԳէորգ վարդապետ ի քարոզիչ Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ :

ԳԼՈՒԽ Ե .

ՅԱՂԱԳՍ ՔԱՐՈԶՁՈՒԹԵԱՆ ԳԷՈՐԳ ՎՐԴ. Ի Ի ԽԱՍԳԵՂՋ
ԵՒ ՎԱՍՆ ՀԱԼԱԾԱՆԱՅ ԵՒ ԱՅԼՈՅ ԱՆՅԻՅ ԻՆՉ

Յետ ձեռնադրութեանն կացեալ Տ. Գէորգայ վարդապետի զամ մի ողջոյն ի Պատրիարքարանի պաշտօնիւ զբազրութեան շարունակելոյ ի հնգից ամաց եւ յերից ամսից հետէ ի Փոխանորդարանի, եւ յաջակցութեան Տ. Պօղոս վրգ. Փոխանորդի՝ խոնարհեցաւ ի հրաման Ս. Պատրիարքի եւ ի թախանձանս ամիրայից եւ ժողովրդեան Սաազեղջ, թէպէտ եւ ինքն թախանձեաց քանիցս հրաժարիլ : Ի 10 Սեպտեմբերի 1836 ամի ել եւ զնաց Տ. Գէորգ ի Սաազիւղ եւ ստանձնեաց զբարոզչութիւն Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ, զորպիսի պաշտօնս տակաւ ընդարձակեաց եւ

հաստատեաց մեծահռչակ Չաքարիա Արքեպիսկ.—Պատրիարք Կաղզուանցի, միաբան Ս. Էջմիածնի:

Էին Տ. Չաքարիայի տասն եւ մի աշակերտք, յորոց եպիսկոպոս եօթն եւ վարդապետ չորս, այս են՝ եպիսկոպոսունքն Տ. Յակոբ ի Թիֆլիսէ, Տ. Բարթուղիմէոս Կապուտիկեան Առաջնորդ Նիկոմիդայ ի Կ. Պօլսոյ, Տ. Յովհաննէս Չամաչքրճեան փոխանորդ իւր ի Կ. Պօլսոյ, Տ. Անդրէաս Առաջնորդ Գաղատիոյ ի Կ. Պօլսոյ, Տ. Յակոբ Առաջնորդ Մշոյ ի Կ. Պօլսոյ, Տ. Պօղոս Գարաքօչեան Առաջնորդ Պրուսայու ի Կեսարիոյ, Տ. Պետրոս Բերդումեան—Ալթունեան գրագիր կամ քարտուղար իւր ի Կեսարիոյ, եւ վարդապետքն Տ. Թօմա Առաջնորդ Եւրոկիոյ ի Վանայ, Տ. Կարապետ ի սպասու իւրում ի Կ. Պօլսոյ, Տ. Աստուածատուր նոյնպէս ի Կ. Պօլսոյ եւ Տ. Թարգէ՝ արտաքսեալ եւ թափառեալ յօտարութեան սակս մոլորութեանցն:

Տ. Չաքարիա կաղմակերպէ ըստ մասնեայ զհաստատուն քարոզութիւնս եւ ի Կ. Պօլիս, եւ կարգէ երբեմն զմեծ մասն ձեռնասուն աշակերտաց իւրոց ի քարոզական պաշտօնս երթեկեկութեամբք: Յամ Տեառն 1820—30 էր վանքածեւ—վանածեւ տուն հաստատեալ ի բարձունս Իւսկիւտարու, եւ կից նմին այգի ընդարձակ («Վանքի պղղը»), եւ առ հասարակ սովորական միաբանք Ս. Էջմիածնի, Ս. Յակոբեանց վանուց Երուսաղէմի եւ այլոց վանօրէից մնային անդ յորժամ գային այսր ի Կ. Պօլիս: Վեղարուորք պահէին զայգիին եւ վայելէին զարդիւնսն: Վանքածեւ տունն այն եւ տեղին—գետինն ընդարձակ կտակեալ էր կէս առ կէս յանունս Մայր Աթոռոյ եւ Ս. Յակոբեանց վանուց, եւ ըստ այսմ արձանագրեալ ի ճակատու շինուածոյն: Ի սկզբան ԺԹ. դարու, իմա՛ ցամ Տեառն 1810—30, յորժամ առթիւ քաղաքական անցից եւ պատերազմաց դադարեցան երթեկեկութիւնք եւ յարարերութիւնք Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի ընդ Կ. Պօլսոյ՝ արդեւմամբք նուիրակական պաշտօնից՝ միաբանք Ս. Երուսաղէմի բարձին զհին կտակածեւ յիշատակարանն եւ եղին ի տեղի նորա զյիշատակարան նոր, յատկացուցեալ բացարձակարար ի կատարեալ տիրապետութիւն Երուսաղէմի: Այլ ոչ տեւեաց ընդ երկար, եւ ահա Հայք Իւսկիւտարու առին ի ձեռաց Ս. Յակոբեանց վանուց զվանքն եւ հաստատեցին անդ զպարզ «Ճեմարան» անուամբ, որ եւ այրեցաւ յամի Տեառն 1888: Իսկ այգիին մնաց ի տիրապետութեան Սաղիմայ, ուր եւ շինեցին այլ եւ այլ անձինք զտունս իրբեւ ի վերայ «վազՓ» գետնոյ, յորմէ շահին Ս. Յակոբեանք, եւ վասն այնորիկ Մատթէոս Կաթուղիկոս ետ զբաւել յանուն Մայր Աթոռոյ զԵրուսաղեմական կալուածս ինչ ի Գանձակ, եւայլն: Նուիրակք եւ բարձրատիճան եկեղեցականք ընաղէին ի Պատրիարքարանի, կամ ի նուիրական տունս առ եկեղեցեօք: Իսկ աշակերտք Չաքարիայի մնային ի Պատրիարքարանի, թէեւ բազումք տակաւ գնացեալ էին ի թեմակալութիւնս ի վիճակս: Քաջահմուտն եւ քաջագիրն Պետրոս եպիսկ. Բերդումեան—Ալթունեան խոյս տուեալ է յառաջնորդութեանց՝ սիրահար լեալ բագոսեան ընկերութեան, եւ պարապեալ է ի գրական վաստակս զոյգ ընդ քարտուղարութեան Տ. Չաքարիայի ի

կենդանութեան նորա: Ասէին զՊետրոսի, զի զժուարանայր գրել
ինչ՝ եթէ ոչ ընկերանայր Բագոսի*):

Տ. Գէորգ վարդապետ ձեռնարկեաց անմիջապէս եւ հետե-
ւեցաւ յառաւել բարեկարգութեան եկեղեցւոյ եւ դպրոցի: Ձան
կալաւ ուղղել զխանդարեալ կարգս ինչ, առջնորդեաց դպրաց
եւ խրախուսեաց ի ներդաշնակ երգեցողութիւնս եւ ի բարեկարգ
ժամերգութիւնս նախանձելիս, յորդորեաց զքահանայս շօր
հանապաղ կանխել յեկեղեցի յառաւօտու եւ յերեկոյի, արթնու-
թեամբ վճարել զանձնիւր պարտսն ի պայծառութիւն եկեղեցւոյ
եւ ի մխիթարութիւն ժողովրդեան. նախանձախնդիր եղեւ ի
պահպանութիւն եւ ի բարեգարգութիւն անօթոց, զգեստուց եւ
զարդուց եկեղեցւոյ, հրապուրեաց զժողովուրդ յաճախել ի սք-
եկեղեցի առ ի լսել զհոգեպարար քարոզս եւ զներդաշնակ երգե-
ցողութիւնս սրտաշարժս, ի վայելել զխառաւոր հանդէսս եւ

*) ԾԱՆՕԹ՝ Վ. Եպ. Մ. — Բագում վիպակի են գԶաբարիայէ եւ
գաշակերտէ նորա գՊետրոսէ, գորս հնար է առնուլ ի գիր եթէ պա-
րապոյ ժամի լիցին: Առիք բարեպատեհ համարիմք զնել աստ գոա-
պանագիր Տ. Ձաբարիայի ամփոփելով ի գերեզմանի ի հարաւակողմն
առաջի ձախակողմեան պահարանի Ս. Նշան-Խաչ եկեղեցւոյ Գուրու-
չէշմէի որ ի Կ. Պօլիս.

ՀԱՆԳԵԱԻ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1799 ԵՒ ՀԱՅՈՅ ՌՄԻԸ ԵՒ ՄԱՐՏԻ ԺԱ.

« Մեծ վարդապետս այս մեր զգօն գերահռչակ եւ զգաստ,
« ծնեալ յերկրին կաղզուանայ, ուրսնամեայ հանգեալ աստ,
« ի Փօժուգեանց համեստ գարմէն մաքրասնունդ բարեբաստ,
« ի դիս մանկութեան սուրբ հաւատով բնաւորեալ նոխիմաստ,
« Զսեբտ հաւատն ուղղադաւան ետես ի սա սք. Հոգին,
« կոչեաց ի սուրբ էջմիածին լուսակառոյց նօր յադին,
« Արար գնա անտ Միաբան վեհապետացն առ ոտին
« եւ փայլեցոյց գերափառօք գերդ արուեսակ առաւօտին.
« Սրբոյ գահոյս ժիր գործակալ միշտ ուր ուրեք յաջողակ,
« Գեղեցկադէմ, ահագնաձայն՝ Եպիսկոպոս շնորհունակ,
« Էր բնախօս Աստուածաբան՝ եկեալ Պօլսոյ Նուիրակ,
« Լուսաւորչիս դաւանութեան ուղիղ մտօք դաստիարակ,
« Ի գործ կրկնակ Նուիրակութեան բարուք ծանեան բարեկարգ.
« Ձաբարիա արհիպպանծ ետին Պօլսոյ Պատրիարք,
« Հոչակեցաւ յոյժ ազգասէր եւ բարերադ գերայարգ,
« Շինեալ գոմանս եկեղեցիս եւ հիւանդաց յերկուս յարկ,
« Յոյժ նոխացոյց շատ դպրատունս, յորս հաստատեաց վարժապետս,
« Յառոյց եօթնեակ Եպիսկոպոսս եւ չորեսին վարդապետս,
« Ձանայր գուսումն նոխել Ազգիս նախիմաց յարհանգէտ,
« Պահեաց հանգիստ զԱզգս մեր տարով քսան եւ վեց կացեալ դէտ,
« Զետ Սք. Մահակ գփայտ վշտաց հոգս Հայոց բարձեալ յուս,
« Յահէ պետիս բոլոր հերձուածք բերանափակ տային խոյս,
« Ազդմամբ Հոգւոյ գիտաց գիր մահ՝ խնդրեաց քաղիլ շիրմիս կոյս,
« Ակն ունելով սք. ազօրից. տամք զոգորմիս շնորհալոյս: »

զարարողութիւնս եկեղեցւոյ, յորպիսիս կարի նախանձախնդիր եւ փութաձան էր Տ. Գէորգ վարդապետ:

Սանձեաց եւ զոմն քահանայ Թաղէոս անուն որ քննադատելի էր վարուք եւ բարուք, եւ ունէր զյարարերութիւնս «մտերմահանս», վայելէր զբարեկամութիւնս նշանաւոր անձանց Օսմանցոց, զլիաւորաց Յէնիչէրեաց եւ նախարարաց անգամ, այլ ոչ ըստ բարի վարուց եւ ընդունակութեանն, եւ մերթ կատարէր զկարեւոր ծառայութիւնս միջնորդութեամբք առ օտարս, ի նրպատ Պատրիարքարանի, վասն որոյ եւ Պատրիարքարան յաճախ տայր զանցառութեան զյանցանս նորա եւ զպատժապարտութիւնս: Որով զուգեա սկիւմայ իւրախուսէր զսանձարձակ վարս եւ զաննախանձելի զործողութիւնս Թաղէոսի (միջնորդ ի կնամուլութեանց, կաշառակերութեանց, քուրթեանց, եւ այլն): Տ. Յակոբոս Արքեպ.—Պատրիարք փորձէ պատժել զնա սակս քստմնելի ինչ յանցանացն, յորպիսիս առաւել եւ յաւէտ հոչակեալ էր Թաղէոս, եւ գրէ Տ. Գէորգ վարդապետ քարոզչի ենթարկել զնա ընդ «քառասնօրեայ» աղաչարանօք, այլ ի նմին իսկ աւելոր ընդ երեկս փութացուցանէ Տ. Յակոբոս զերկրորդ հրամանադիր առ Տ. Գէորգ, առ ի ազատ թողուլ զԹաղէոս...: Ազդեցիկ անձինք, ի ներքնոց եւ մանաւանդ յարտաքնոց, ծանրացեալ էին ի վերայ Տ. Յակոբոսի:

Յանկուցեալ յինքն զսէր եւ զվստահութիւն Մկրտիչ ամիրայի ձէզայիրեան, որ սիրէր զուսումն եւ զկրթութիւն, միանգամայն հետեւէր նորարժարժ գաղափարաց՝ ունելով զյարարերութիւնս ընդ լուծերական քարոզչացն բժիշկ ձեւացելոց, (Գէորգ վրդպ.) յորդորեաց զնա, եւ աջակցութեամբ նորա ընդ առատանուէր դրամական օգնութեանցն, յորս ոչ անմասն եղեն եւ այլ ամիրայք եւ ձեռնհաս անձինք ի մերադնեայց, ընդարձակեաց զներսիսեան փոքրիկ դպրոց տեղւոյն եւ բարեկարգեան, մինչեւ նախանձելի լինել այլոց զպրոցաց մայրաքաղաքի, ըստ ներելոյ միջոցաց ժամանակին: Կարգեաց անդ յուսուցիչ զճուտ վարժապետս, յաւել եւ զՊապա Համբարձում Լիմօնձեան ի գասատու ձայնազրութեան եւ երաժշտութեան, թէպէտ ոչ հաչտ ախմբ նայէին զպիբք եւ շարականադէտ քահանայք ի նա, առարկեալ զի ոչ հաւատարմութեամբ յաջողէր ձայնազրել զճարականս եւ այնպէս տալ երգել աչակերտաց, եւ ունէին ընդ մասնեայ զիրաւունս:

Պապա Համբարձում Լիմօնձեան ծաղկեցաւ ի սկզբան ժԹ. դարու, ծնեալ ի վերջին կոյս ՅԼ. դարու (1768—1839թ.), այլ ըստ ձայնազրական արուեստի հարկ է մատնացոյց լինել ՅԹ. ըզդարու: Պապաղաւան Հայ լեալ, հետեւի ուսանել զյունական ձայնազրութիւն, եւ ոմն յոյն ձայնազրագէտ դաստոռ մերժէ նմա ուսուցանել զարուեստն: Յորմէ խոժոռի նա: Դժուարաւոր էր եւ անախորժ ձայն նորա, այլ գիտէր զարտաքին երաժշտութիւն թուրքական կամ ասիական եւ ջանայր ձայնազրութեամբ օժտել զուսուլն (իբր բաղխում): Իսկ հայկական ձայնախաղք կորուսեալ էին զիսկական նշանակութիւնս իւրեանց եւ ոչ որ էր

որ գիտէր զմանր ուսմունս հայկականս, յորմէ ուսանէր Պապա Համբարձում :

Որպէս տեսանի ի գրարար դասատետրի, զորոյ զպատճէն եղիտ եւ էառ կենսագիրս ի Մատենադարանի Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, պահասին չափք տեւողութեան եւ այլ կանոնք անհրաժեշտք ի գործածութիւն հայ ձայնագրութեան կամ խագագիրութեան*): Դասատետրն յիշատակեալ ունի զվերնագիրս զայս. «Համառօտութիւն երաժշտականի գիտութեան՝ հարց եւ պատասխանատութեանց, շարադրեցեալ յուսմնմէ բանասիրէ, ի փառս ամենակալին Աստուծոյ եւ յօգուտ Ազգի Արամեանս»: Յետ ինչ Ագդարարութեան իբր աստուածարանօրէն յառաջարան, պարունակէ զհետագայ գլուխս. — Գլ. Ա. Յաղագս երաժշտական գիտութիւնն թէ՛ զի՞նչ է: Բ. Գոյութիւն երաժշտութեան: Գ. Թէ ուստի՞ գտաւ երաժշտութիւնն: Դ. Թէ վասն է՞ր ուրիշ են ձայնքն: Ե. Հին ձայնիցն: Զ. Հաղորդականութեանց ձայնիցն: Է. Անուանց ուրթ ձայնիցն: Ը. Բաժանման ձայնիցն: Թ. Հեղման ձայնից: Ժ. Դարձման ձայնից: ԺԱ. Ուստի՞ եւ յումմէ՞ գտաւ գիրն Հայոց: ԺԲ. Չափարանութիւն տառից: ԺԳ. Վանկաչափութիւն: ԺԴ. Պարզ եւ բարդ ոտիցն: ԺԵ. Անուան եւ բաժանման ոտից: ԺԶ. Տաղի եւ չափաբերութեանն: ԺԷ. Բաժանման տեսակացն տաղից: ԺԸ. Յաղագս խաղիցն թէ՛ զի՞նչ է: ԺԹ. Յաղագս քայցալայտութեան խաղից: Ի. Յաղագս անուանց խաղիցն:

Իբր ուսումնասիրէ դասատետրն այն (ի Գլ. Թ.) զուրիշ ձայն Հայոց, աճ, ալ եւայլն, որպէս համառօտէ եւ զՅունացն յայլ գլուխս, հանդերձ պատմական տեսութեամբք քաղելովք ի հին ձեռագրաց, թէպէտ ոչ ըստ ճշտութեան արուեստի, իբր բացատրէ զարժէս ձայնաւոր տառից Հայոց եւ բաղաձայնից կամ կիսաձայնից, դասակարգի զձայնախաղս փուշ, էկորն եւ այլն, եւ յաւելու ընդ փերտէ (թուրք) անուամբս զնել զթուրքերէն կամ զպարսկերէն անուանս, եկեեաի, տիւկեաի, սէկեաի, չարկեաի, փեմնուկեաի, եւայլն:

Ո՞վ արդեօք հնարեաց զդասատետրն զայն խառնուրդ եւ յորո՞ւմ ժամանակի, ոչ է հնար ասել ինչ ստոյգ: Այլ եւ այլ հանգամանք գրչութեան օրինակին որ ի Մատենադարանի Ս. Էջմիածնի՝ կազմեալ ընդ տպագիր Տաղարանի միոյ 150-200 ամենւոյ (եթէ ոչ վրիպի յիշողութիւն կենսագրիս), ցուցանէին լինել պատրաստութիւն դասատետրի յառաջ քան զամս 150-200: Մանր Ուսմունքն կամ խագագիրութիւնմ Հայոց ծաղկեալ էին ի Կիլիկիա եւ ընդարձակեալ յաւուրս Ներսիսի Շնորհալուոյ, որ կանոնադրէ որոց իղձ են մտանել յեկեղեցականութիւն՝ ուսանել ընդ այլ եւ այլ անհրաժեշտ ուսմանց եւ գիտելեաց եւ զմանր ուսմունս: Այլ զարձեալ եւ միշտ ոչ է հնար գտանել եւ յայնօրիկ ժամանակսն զչափ կամ զնշանս տեւողութեանց յերգելն խագուրք

*) ԾԱՆՕԹ Վ. Եպ. Մ. — Լրացուցանէ զայստիկ կանոնս Պապա Համբարձում, եւ աշակերտք Արիստակէս (Արիս) աշակերտի նորա Գարրիէլ Երանեան, Նիկողոս Թաշեան եւ այլք ընդարձակեն օժանդակութեամբ յաւելտ Երոստական ձայնագրութեան:

զեղանակ ինչ ըստ ութն ձայնից եւ դարձուածոցն: Ի խորհուրդ կամ անյայտ մնան եւ մանր տառք ինչ եղեալք ցանցառապէս ընդ խաղիւք՝ որոշ ի բառից եւ ի բանից երզոց եւ շարականաց:

Անկումն Կիլիկիոյ արզիւնաւորեաց զայլ եւ այլ խանգարմունս, որպէս յեկեղեցական դասակարգութիւնս, յօրէնս, ի կանոնս, յազգային կենցաղս, ի սովորութիւնս, ի տարազս եւայլն, նոյնպէս ի խաղազխտութեան եւ ի մանր ուսմունս, եւ իսկական գիտութիւն եւ գործածութիւն խաղից Հայոց դողցես կորեաւ, թէպէտ ի տպագրութիւնս երզոց եւ շարականաց անզամ շարունակէին մերայինք զնել զխաղս, եւ երզիչք ոմանք գործածէին իբրեւ զարտաքին նշան ինչ երկարելոյ, սղելոյ, կրկնելոյ զեղանակս եւայլն:

Թուի, զի ի վիճակին Կեսարիոյ, իբրեւ սահմանակից Կիլիկիոյ, վանօրայք, եւ յականէ՝ վանքն Ս. Կարապետի, ջան կալեալ եւ պահպանել զնշխարս խաղից, միանգամայն յետ ժամանակաց ինչ պատուաստեալ են ընդ ասիական-թուրք-պարսկական եղանակաց եւ ձայնից՝ յաւելեալ եէկեան, տիւկեան, սէկեան, եւ ըստ եղանակաց սապահի (զկ), հիւսէյնի (բձ), եւայլն, առանց յաւելելոյ գէթ զկանոն չափի և տետղութեան, բաւականացեալ յաւէտ կանոնիւ ասիական կամ պարսկական ուսուլի, որ եւ պակասաւոր է միշտ*):

*) ՄԱՆՕԹ.Վ.Եպ.Մ.— Ենթադրութիւնք կենսագրիս գորանան փաստիւք դասատետրին առարկելոյ, եւ նամակաւ Կարապետ վարդապետի էվէրէկցոյ որ ի միաբանից Ս. Կարապետի վանուց որ ի վիճակին Կեսարիոյ, գորմէ պարտ է ուսումնասիրել առանձինն յորժամ ժամ պարապոյ լիցի եւ ներեսցէ անձնական վիճակ կենսագրիս: Տ. Կարապետ վրդ. Ծառուկեան էվէրէկցի ծաղկեալ է ի սկզբան ժ.թ.րդ դարու, եւ միաբանակցեալ է Ս. Կարապետի յամսն 1820 — 1830, որպէս գրէ Տ. Տրդատ եպս. Պալեան Առաջնորդ վիճակին Կեսարիոյ, ի պատասխանի կենսագրիս, ի 28 Յունիսի 1906 ամի, ընդ թուահոլ. 1950: Հարկ է յաւելոյ եւ աստ գպատնէն նամակին յիշելոյ.

« ... Ահաւասիկ մեր տեղեկութիւնները յիշեալի մասին:

« Կարապետ վարդապետ Ծառուկեան բնիկ էվէրէկցի է, եւ
« միաբան եղած է Կեսարիոյ Ս. Կարապետի վանքին: Ի միաբանու-
« քեան ժամանակը (գրեթէ 1820-1830ի միջոցները) Ս. Կարապետի
« վանուց մէջ ձեմարան անունով վարժարան մը կար, ուր կը դա-
« սալսօսէին Պօլսեցի Մեղրեան Գրիգոր վարժապետ անուն մէկը եւ
« քանի մը վարդապետներ, եւ ուր գտնուեր է նաեւ, երեք տարիներ-
« քու չափ, Ֆիզիքայ Պօղոս պատուելին:

« Ծառուկեանը իր ուսումն առած է այս վարժարանին մէջ,
« նոյն դասատուներէ, հմտացած էր հայերէն եւ թուրքերէն լեզու-
« ներու ֆաչպալս, եւ բաւականին ալ արաբերէն լեզուի. շատ ու
« շատ հմտացած էր Հայ. երաժշտութեան, Հայ. եւ քրքական ձայ-
« նից եւ եղանակաց, բամբ եւ անուշ ձայն մը ունէր ու «նէյ» կը
« գարնէր շատ նարտարօրէն. իր երաժշտական գործերէն որ եւ է
« երկ մը, գործ մը, անցած չէ մեր ձեռքը, քէն հետաքրքիր եղած
« ենք փնտռելու:

Պատա Համբարձում լսէ, զի ի կեդրոնական վանս վիճակին Կեսարիոյ զիտեն եւ զործածեն վանականը զհայկական ձայնագրութիւն ինչ, վասն որոյ ելեալ յուղի դիմէ ի Կեսարիայ եւ ուսանի զուսումնք անկատար, որպէս տեսաք մեք եւ ունիմք զձեռադիր օրինակ խանութիւն զասագրոյ ձայնագրութեանց յաճախ թուրքական անուամբք:

Շարունակէ Պատա Համբարձում զճանապարհորդութիւն իւր ի Բարձր Հայս, անցանէ յԱրարատեան աշխարհ մինչեւ հասանէ ի Շիրակ ի Պարսկաստան, ուր ուսանի զեղանակ ասիականս, քրքրականս, պարսկականս, եւլլն, եւ վերադառնայ այսր ի Կ. Պօլիս: Աստ կաղմակերպէ եւ ընդարձակէ, օժանդակութեամբ եւրոպական ձայնագրութեան եւ աջակցութեամբ ուրումն եւրոպացի ձայնագրագիրտի, — ոչ սակաւ օգտեալ եւ ի հոսմէադաւան Տիւղեանց, որք զիտէին զձայնագրութիւն եւրոպական, մանաւանդ թէ նախանձախնդիր լեալ են եւ խրախուսեալ զնա, — զարուեստ հայկ. ձայնագրութեան առաւել քան զոր ուսեալ էր ի Կեսարիա, եւ հաստատէ զներկայ ձայնագրութիւն հայկական ի վերայ հայ ձայնախաղից, յարմարեալ եւ զհին նշանն եւ զնոր չափս: Միանգամայն ուսուցանէ կանխաւ հնդկաց աշակերտաց ընտրելոց համաձայն յանձնարարութեանց երեւելեաց Աղգիս՝ առեալ զուխտ եւ զերդումն ստորագրութեամբ զի ի՛ երբեք ուսուցեն Յունաց զարուեստը, եւ ոչ Հայոց զասախօսեացն ի կենդանութեան իւրում: Մին եւ առաջինն հնդկաց աշակերտաց էր Արիստակէս երաժիշտ ձայնագրագէտն Յովհաննիսեան

« Կարապետ վարդապետ ժամանակակից է եղեր նաեւ Կեսարացի Գապասագալեանի, որ քաջ երաժիշտներէն մին ալ այս է եղեր:

« Ս. Կարապետի վանքին մէջ ձեռնարդուած է Կարապետ անունով, եւ իր կեանքը չանկէ՛ր սարքինքր միայն դուրսը անցուցած է, էնգարեհ՞ քէ Մարաշի Առաջնորդական պաշտօնով, եւ իր կենաց միւս մասերն անցուցած է անընդհատ Ս. Կարապետի վանքին մէջ: Ինքը բնաւորութեամբ աւելի հանոյքի, կերուխումի, «նէյ» զարնելու, եղանակելու, եւ իր անուշ ու գեղեցիկ ձայնով միշտ երգելու հակամտ, վարդապետական պարտաւորութիւնները շատ անգամ մոռացման կուտայ եղեր: Բնութիւնը օժտած է եղեր զինքը լաւ ձիրքերով, բայց պէտք եղածին պէս մշակելու հոգ չէ տարած:

« Նարեկի քուրքերէն քարգամաւորութիւնը քրած է, կ'ըսեն, « բայց ձեռագիրը այժմ չի կայ, եւ չի գիտցուիր քէ ո՞ր մնացած է: Վախճանած է 1875 քուականին, գրեթէ 70 տարեկան հասակին մէջ, եւ քաղուած է վանքին գերեզմանատան մէջ:

« ... Կեսարիոյ մէջ կը յիշուի Ադամ Գալփայ անունով վարձապետ մըն ալ, ժամանակակից նոյն վարդապետի, եւ անոր համար ալ կըսուի քէ երաժիշտ էր, եւ սակայն այս վերջնոյն վրայ տեղեկութիւնք բոլորովին կը պակսին մեզ առ այժմ...»:

որ ունէր զձայն ակործալուր: Երկրորդ էր տիրացու Աբխազոմ Իւթիւճեան ի Սասգեղջ, որ յետ ամաց ինչ մարտեցաւ ի լուծեալականութիւն: Երրորդ՝ տիրացու Յովհաննէս Միւհէնտիսեան, ապա տալարանատէրն: Չորրորդ՝ Թամպուրի Ալիբաան ի Կէտիկփաշայէ: Հինգերորդ՝ խեցեղէնավաճառ (չէօսլէքի) Պետրոս ի Իւսկիւտարէ:

Սակայն թերութիւնք ինչ արուեստին բացայայտ երեւէին ի գրեւն զՇարականս, եւ յայտ սակս արտնջէին շարականագէտք: Զուղընթաց էր եւ համբալութիւն Համբարձումայ յեկեղեցական երգեցողութիւնս*):

Առանց ճշգելոյ, հնար է կարծել՝ զի ուղեւորութիւն եւ վերադարձ Պապա Համբարձումի որ ի կողմանս Կեսարիոյ, Բարձր Հայոց եւ Իրանու եղև յամսն 1808—1816, մինչ ուսանէր Ծառուկեան ի վանական դպրոցի Ս. Կարապետի, համաձայն հետազոտիչ գրութեան Տ. Տրդատ Կպս.ի, լեալ ամաց իբր 15—25: Անդ ուսաւ Ծառուկեան զհայկական երաժշտութիւն եւ զձայնագրութիւն—նօքա, ոչ գիտեմք յորմէ՞ ուսուցչէ կամ երաժշտագէտէ, թէ եւ յիշատակին լինել ի վիճակին Կեսարիոյ քաջ երաժիշտքն Գրիգոր դպիր Գապասագաղեան Կեսարացի (ԺԼ. դար, ծնեալ 1740թ.), Աղամ Գալֆայ: Ոչ հաւանական երեւի եւ ոչ հնար է դատնել զտեղեկութիւն ինչ, զի Պապա Համբարձում դասախօսեալ էր ի վանական դպրոցի Ս. Կարապետի: Եւ առ ի՞նչ ելանէր Համբարձում ի ճանապարհորդութիւն եւ ի հետազոտութիւնս եթէ գիտէր զձայնագրութիւն այնչափ որչափ ուսոյց աստ ի Կ. Պօլիս պայմանեալ աշակերտաց սակաւուց, կամ 4—6 անձանց, ըստ սակարկութեան և վճարմանց ոմանց ամիրայից ժամանակակցաց, յետ իբր 1820 թուականի (Գրիգոր ճարտարապետ Պալեան, Մարտիրոս Սազայեան, Մկրտիչ ձէղայիրլեան, եւն):

Գարձցուք ի նորոյ ի կարգ պատմութեանս՝ բաւական համարեալ զոր համառօտեցաք սակս Պապա Համբարձումի և հայկական ձայնագրութեան, զորոց ունիմք ընդարձակել յա-

*) ԾԱՆՕԹ.Վ.Եպ.Մ.—Ունիմք առաջի աչաց զձայնագրեալս ի Պապա Համբարձումէ, Շարական, երգ, տաղ, և տեսանեմք զկանոնական քերութիւնս ոչ սակաւս, զնոյնս և ի ձայնանիշս կամ ի խագս: Աշակերտք եւ քոռնեայքն նորս տակաւ լրացուցին, օժանդակութեամբ Երոպական ձայնագրութեան եւ ընդարձակեցին զկանոնս: Ի պտուիւ ձայնագրագէտ—երաժիշտ Գաբրիէլի Երանեան, աշակերտի Արիստակէսի, պարտ է յաւելուլ աստէն զի նա օժանդակութեամբ Երոպական ձայնագրութեան յաւել զկարեւոր նշանս եւ զկանոնս ինչ ի հայկական ձայնագրութեան, որովք բազմօք պակասեցան դժուարութիւնք եւ քերութիւնք ի ձայնագրել եւ երգել նշուութեամբ զշարականս եւ զերգս Հայոց: Մանաւանդ զի եւ խանգարմունք եղանակաց շարականաց յայլեւայլ բերանս յաւելեալ էին եւ յաւելուն դժուարութիւնս, եւ ոչ է հնար որոշել հաւատարմութեամբ զհինն եւ զիսկականն, այնչափ զգալի էին եւ են խանգարմունք ի կեդրոնս անգամ, ի մայր Աքոռոք եւ յայլուր:

ուսնձին և և ի յատուկ ուսումնասիրութեան, որչափ ներեսցեն պարագայք և միջոցք մեր, զուրկ յընդարձակ մատենադարանէ և յեղանակաւոր ձեռագրաց:

Կարգեալ Պապա Համբարձում յուսուցիչ ի ներսիսեան դըպրոցի, զրեա՛ թէ համաձայն ջանից, հրահանգաց և ուղղութեան Տ. Գէորգ վարդապետի սկսաւ ուսուցանել աշակերտաց տակաւ առ տակաւ զձայնագրութիւն և զերգս ընդ կարեւոր շարականաց ձայնադերոց, որք յետ փոքու միջոցի սկսան երգել ներդաշնակ և կանոնաւոր ի Ս. Ստեփաննոս եկեղեցւոջ և զբաւել զյաճատութիւն և զբազմութիւն ժողովրդեան ի Սասգեղջ և ի շրջակայիցն:

Համբաւ ներդաշնակ և բարեկարգ երգեցողութեանդ տարածեալ յարուարձանս ի Կ. Պօլիս, և հաս և ի լսելիս անգղիական դեսպանի, որ խնդրէ ի Մկրտիչ ամիրայէ ձէզայիբլեան և յայլոց լսել զերգեցողութիւնս:

Վասն որոյ Գէորգ վարդ. տեսանէ զպատրաստութիւն կարեւոր, և տայ հրաւիրել զդեսպանն յեկեղեցի յուրթօրէս ի տօնի Անուանակոչութեան Տեանն, յորում աւուր, հանդոյն հանդիսի և փառաւորութեան առաջին աւուրն Ս. Թննդեան, կատարէ զհանդէս մեծ, երգեն զպիւրք և աշակերտք յատենէ և ի վերնատանէ յատուկ եղելոյ Ս. Ստեփաննոսի եկեղեցւոյ, փոխ ի փոխ զՕրհնութիւն, զՓառք ի Բարձունս*), արարեալ ի միասին ըստ կարգին

*) ԾԱՆՕԹ Վ. Նպ. Մ. — Հանդիսամուրփիւնիք Հայոց Կ. Պօլսոյ լեալ են առիքք ծանրացուցանելոյ, միանգամայն խանգարելոյ զեղանակս կարեւորագոյն շարականաց, քո՛ղ զերգս, գտաղս, մանաւանդ ի պէտս ննջեցելոց, հարսանեաց և տօնախմբութեանց, որպիսիք են շարականի «հորհուրդ Մեծ», «Այսօր Յարեալ», «Ուրախացիր Սրբուհի», «Զարհուրեալ», «Որ ի յերկնից իջեր», «Անսկիզբն Աստուած սկիզբն արարչութեան», «Նշանաւ ամենայաղք», «Մանկունիք ումանիք», «Ուրախ լեր Սբ. եկեղեցի», եւայլն, եւայլն: Առիք քարեպատեհ եղև մեզ յամսն 1896-98 լսել զշարականս ինչ ի Տ. Պետրոս Արքեպիսկոպոսի Թահմիզեան, ի քեմակալի Սեբաստիոյ, յորժամ գտանէր աստ ի Կ. Պօլիս ըստ ամբաստանութեանց Համիտեան կառավարութեան հրաւիրեալ այսր, և ոչտեր նա ըստ բաւականին գիին եղանակս շարականաց, որպէս և զերգն «Անբաժանելի», յորոց վերայ յօրինեալ է Համբարձում գեղանակ անհարգատ և զժանր, որպէս տեսցի ի ձայնագրեալ երգս ժամագրոց սպագրելոց ի Ս. Էջմիածին յամին 1877, յերեսն 20-24, և զհարագատն յերեսն 37-38 ըստ երգելոյ Թահմիզեանի, որպէս երգեն ի վանսն Ս. Ղազարու վեներտկոյ, և երբեմն միաբան Ս. Ղազարու վանուց հանգուցեալ Տ. Գարրիէլ Արքեպ. Այվագեան ի Ս. Էջմիածին, և ըստ այսմ ետ ձայնագրել Հոգելոյն Տ. Գէորգ Դ. Հայրապետ Ազգիս Հոգելոք ծնողն մեր և սպագրել: Լուսի գալս եղանակ որպէս և գայլ շարականս ելն ի Հոռովեաղաւան երաժիշտ Հայր Կոմիտասէ որ ի Միաբանութենէ վեներտկոյ: Ոչ գիտէին ի Մայր Աթոռս զգեղանակս «Անբաժանելոյ» շարականի միութօրինութեան և միոյ Սաղմոսի, քէն հինգ երգելին զշարականս վերոյիշեալսն ըստ հնաց: Մնաց մեզ սպասել գիտի բա-

և զերգեցողութիւնս Ս. պատարագի: Յորմէ մեծապէս դո՛ւ լեալ դեսպանի, եւ վայելեալ զպատիւս, վերադառնայ ի բնակարանն: Եւ այսու առթիւ խոնեալ էր բաղմութիւն ժողովրդեան յոյժ յոյժ ի շրջակայից եւ ի հեռաւորաց:

Ապաքէն բարերազդ էր Սասգիւղ ի քարոզչութեան Տ. Գէորգ վարդապետի, եւ այսպիսեօք բարեկարգութեամբք եւ յառաջադիմութեամբ պանծայր եւ միսիթարէր առաւել քան զԳէորգ վարդապետ: Վասն որոյ յանչափս սիրէին եւ պաշտէին անդամ զբարողիչ իւրեանց: Սակայն հազիւ դադարեալ էին իբր միազարեան տաղնապալից յուզմունքն եւ հալածանքն որ առթիւ պապականութեան եւ ընդդէմ պապականացեալ Հայոց, թէեւ ոչ ի սպառ, եւ ահա յարեան նոր խնդիրք կրօնականք եւ յուզմունք բողոքականութեան, որպիսիք ծանրացան յոյժ յոյժ, յաւելեալ նաեւ զչաղտնի դաւազրութիւնս պատրուակաւ կրօնական նախանձախնդրութեան եւ ազգային պաշտպանութեան, եւ անսիրո՞ծութիւնք պաշտօնական անձանց խոռն ընդ արտաքնոցն յուղեցին որպէս զհամայն Կ. Պօլիս, նոյնպէս զՍասգիւղ: Թող զգաւատս սակաւաթիւս:

Առ ի սանձել զչարժումն կրօնափոխական, զոր արծարծէին ի դաղտնի լուծերական-բողոքական քարողիչք յԱմերիկայէ, մանաւանդ յԱնգլիոյ, հաստատեալ եւ զնօսպէրք-Գօլէն վարժարան ի բարձունս Բումէլի-Հիւսարի, աղղեցիկ եկեղեցականք ոմանք եւ սակաւք ի գլխաւորաց Աղղիս կամէին յարուցանել զհալածանս ընդդէմ մոլորելոց, որում ոչ համաձայնէր Տ. Ստեփաննոս Արքեպիսկոպոս Պատրիարքն Աղանի: Հնարիւք իմն ետուն կարգել կանխաւ զՏ. Պօղոս վարդապետ Թաքթաբեան յԱռաջնորդ Զմիւռնիոյ, հանդերձ վկայականաւ եպիսկոպոսութեան, որում արժանացաւ Թաքթաբեան՝ երթեալ յիզմիրէ ի Ս. Էջմիածին յԱպրիլի 1839 թուականի, եւ ապա հրաւիրեալ զՅակոբոս եպիսկոպոս զԱռաջնորդ Մարգուանու-Ամասիոյ այսր ի Կ. Պօլիս՝ կարգեցին ի տեղապահ Տ. Պատրիարքին Ստեփաննոսի արքեպ. ի ի 5ն փետրրվարի 1839 ամի յաւուր Բարեկենդանի:

Յակոբոս եպիսկ. կրկնակի իմն ակնկալութեամբք ցուցեալ զանձն նախանձախնդիր եւ արթուն, միացեալ ընդ համախոհս իւր՝ սկսաւ հալածել բունն միջոցօք զմոլորեալս եւ զկարծեցեալ մոլորեցուցիչս, տգիտացեալ մինչեւ ի սպառ զի հալածումն բերէ զտարածումն անհրաժեշտ, եւ ոչ էր պարտ մոռանալ զմերձաւոր անցս պապականութեան:

Վառարան կրօնափոխութեան համարեալ զՍասգիւղ, յորում արդարեւ յաճախէին օտարազդի լուծերականք՝ կապեալ զմտերիմ յարարերութիւնս ընդ Մկրտիչ ամիրայի ձէզայիրեան, բեւեռեաց անդր Տ. Յակոբոս զգլխաւոր ջանս իւր եւ զհալածանս, եւ ըստ դատապարտ ամբաստանութեանց յաճախելոց յանբարեմիտ եւ ի

նպետց հին խազից մերոց, յորում ոչ սակաւ աշխատեցաք առանց յայոզիւոյ: Զայնագրագէտ քաջ Տ. Կոմիտաս վարդապետ որ ի Միաբանութեմէ Ս. Էջմիածնի, խոստանայ պարգել զբաւարիս հին խազից, եւ հաղորդեաց մեզ առանձինն գոհացուցիչ տեղեկութիւնս ինչ:

ուսնձին եւ ի յատուկ ուսումնասիրութեան, որչափ ներեսցեն պարագայք եւ միջոցք մեր, զուրկ յընդարձակ մատենադարանէ եւ յեղանակաւոր ձեռագրաց :

Կարգեալ Պապա Համբարձում յուսուցիչ ի Ներսիսեան դրօշրոցի, գրեալ թէ համաձայն ջանից, հրահանգաց եւ ուղղութեան Տ. Գեորգ վարդապետի սկսաւ ուսուցանել աշակերտաց տակաւառ տակաւ զձայնադրութիւն եւ զերգս ընդ կարեւոր շարականաց ձայնադրելոց, որք յետ փոքու միջոցի սկսան երգել ներդաշնակ եւ կանոնաւոր ի Ս. Ստեփաննոս եկեղեցւոջ եւ գրաւել զյաճախութիւն եւ զբազմութիւն ժողովրդեան ի Պասգեղջ եւ ի շրջակայիցն :

Համբաւ ներդաշնակ եւ բարեկարգ երգեցողութեանդ տարածեալ յարուարձանս ի Կ. Պօլիս, եհաս եւ ի լսելիս անգղիական դեսպանի, որ խնդրէ ի Մկրտիչ ամիրայէ ձէշայիրլեան եւ յայլոց լսել զերգեցողութիւնս :

Վասն որոյ Գեորգ վարդ. տեսանէ զպատրաստութիւն կարեւոր, եւ տայ հրաւիրել զդեսպանն յեկեղեցի յութօրէս ի տօնի Անուանակոչութեան Տեառն, յորում աւուր, հանդոյն հանդիսի եւ փառաւորութեան առաջին աւուրն Ս. Ծննդեան, կատարէ զհանդէս մեծ, երգեն զպիւրք եւ աշակերտք յատենէ եւ ի վերնատանէ յատուկ եղելոյ Ս. Ստեփաննոսի եկեղեցւոյ, փոխ ի փոխ զՕրհնութիւն, զՓառք ի Բարձունս*), արարեալ ի միասին ըստ կարգին

*) ԾԱՆՕԹ. Վ. Եպ. Մ. — Հանդիսամոլութիւնք Հայոց Կ. Պօլսոյ լեալ են առիքք ծանրացուցանելոյ, միանգամայն խանգարելոյ գեղանակս կարեւորագոյն շարականաց, քո՛ղ զերգս, գուաղս, մանաւանդ ի պէտս ննջեցելոց, հարսանեաց եւ տօնախմբութեանց, որպիսիք են շարականք «հորհուրդ Մեծ», «Այսօր Յարեալ», «Ուրախացիր Արքուհի», «Զարհուրեալ», «Որ ի յերկնից իջեր», «Անսկիզբն Աստուած սկիզբն արարչութեան», «Նշանաւ ամենայալք», «Մանկուիւնք ումանք», «Ուրախ լեր Աբ. եկեղեցի», եւ այլն, եւ այլն: Առիքք արեպատեի եղի մեզ յամսն 1896-98 լսել զշարականս ինչ ի Տ. Պետրոս Արքեպիսկոպոսի Թահմիզեան, ի քեմակալի Սեբաստիոյ, յորժամ գտանէր աստ ի Կ. Պօլիս ըստ ամբաստանութեանց Համիտեան կառավարութեան հրաիքեալ այսք, եւ նշտեր նա ըստ բաւականին գիին եղանակս շարականաց, որպէս եւ զերգն «Անբաժանելի», յորոց վերայ յօրինեալ է Համբարձում գեղանակ անհարգատ եւ զժանր, որպէս տեսցի ի ձայնագրեալ երգս ժամագրոց տպագրելոց ի Ս. Էջմիածին յամին 1877, յերեսն 20-24, եւ զհարգատն յերեսն 37-38 ըստ երգելոյ Թահմիզեանի, որպէս երգեն ի վանսն Ս. Ղազարու վեներակոյ, եւ երբեմն միաբան Ս. Ղազարու վանուց հանգուցեալ Տ. Գաբրիէլ Արքեպ. Այվագեան ի Ս. Էջմիածին, եւ ըստ այսմ ետ ձայնագրել չոգելոյս Տ. Գեորգ Գ. Հայրապետ Ազգիս չոգեւոր ծնողն մեր եւ տպագրել: Լուսաբ գալոս եգաւնակս որպէս եւ գալոյ շարականս ելն ի Հոռովեղապան երաժիշտ Հայր Կոմիտասէ որ ի Միաբանութենէ վեներակոյ: Ոչ գիտէին ի Մայր Աթոսոց գեղանակս «Անբաժանելոյ» շարականի միւռօթօրհանութեան եւ միոյ Սաղմոսի, քէն հինք երգէին զշարականս վերոյիշեալսն ըստ հնոց: Մնաց մեզ սպասել գիւտի բա-

եւ զերգեցողութիւնս Ս. պատարագի: Յորմէ մեծապէս զոհ լեալ դեսպանի, եւ վայելեալ զպատիւս, վերադառնայ ի բնակարանն: Եւ այսու առթիւ խննեալ էր բազմութիւն ժողովրդեան յոյժ յոյժ ի շրջակայից եւ ի հեռաւորաց:

Ապաքէն բարերարդ էր Սաազիւղ ի քարոզչութեան Տ. Գէորգ վարդապետի, եւ այսպիսեօք բարեկարգութեամբք եւ յառաջադիմութեամբ պանծայր եւ մխլթարէր առաւել քան զԳէորգ վարդապետ: Վասն որոյ յանչափ սիրէին եւ պաշտէին անգամ զքարոզիչ իւրեանց: Սակայն հաղիւ դադարեալ էին իրր միադարեան տաղնապալից յուզմունքն եւ հայածանքն որ առթիւ պապականութեան եւ ընդդէմ պապականացեալ Հայոց, թէեւ ոչ ի սպառ, եւ ահա յարեան նոր խնդիրք կրօնականք եւ յուզմունք բողոքականութեան, որպիսիք ծանրացան յոյժ յոյժ, յաւեւեալ նաեւ զգաղտնի դաւադրութիւնս պատրուակաւ կրօնական նախանձախնդրութեան եւ ազգային պաշտպանութեան, եւ անփորձութիւնք պաշտօնական անձանց խոռն ընդ արտաքնոցն յուղեցին որպէս զհամայն Կ. Պօլիս, նոյնպէս զՍասզիւղ: Թող զգաւառոս սակաւաթիւս:

Առ ի սանձել զչարժումն կրօնափոխական, զոր արծարծէին ի գաղտնի լութերական-բողոքական քարոզիչք յԱմբերիկայէ, մանաւանդ յԱնգղիոյ, հաստատեալ եւ զՌօպէրք-Գօլէն վարժարան ի քարձունս Բուձէլի-Հիսարի, ազգեցիկ եկեղեցականք ոմանք եւ սակաւք ի զլիսաւորաց Աղգիս կամէին յարուցանել զհալածանս ընդդէմ մոլորելոց, որում ոչ համաձայնէր Տ. Ստեփաննոս Արքեպիսկոպոս Պատրիարքն Աղանի: Հնարիւք իմն ետուն կարգել կանխաւ զՏ. Պօղոս վարդապետ Թաքթաբեան յԱռաջնորդ Չմիւռնիոյ, հանդերձ վկայականաւ եպիսկոպոսութեան, որում արժանացաւ Թաքթաբեան՝ երթեալ յիզմիրէ ի Ս. Էջմիածին յԱլարիլի 1839 թուականի, եւ ապա հրաւիրեալ զՅակոբոս եպիսկոպոս զԱռաջնորդ Մարգուանու-Ամասիոյ այսր ի Կ. Պօլիս՝ կարգեցին ի տեղապահ Տ. Պատրիարքին Ստեփաննոսի արքեպ. ի ՚5ն փետր-վարի 1839 ամի յաւուր Բարեկենդանի:

Յակոբոս եպիսկ. կրկնակի իմն ակնկալութեամբք ցուցեալ զանձն նախանձախնդիր եւ արթուն, միացեալ ընդ համախոհս իւր՝ սկսաւ հալածել բոռն միջոցօք զմոլորեալս եւ զկարծեցեալ մոլորեցուցիչս, տգիտացեալ մինչեւ ի սպառ զի հալածումն բերէ զտարածումն անհրաժեշտ, եւ ոչ էր պարտ մոռանալ զմերձաւոր անցս պապականութեան:

Վառարան կրօնափոխութեան համարեալ զՍասզիւղ, յորում արդարեւ յաճախէին օտարազգի լութերականք՝ կապեալ զմտերիմ յարաբերութիւնս ընդ Մկրտիչ ամիրայի ճէզգայիրեան, բեւեռեաց անդր Տ. Յակոբոս զզլիսաւոր ջանս իւր եւ զհալածանս, եւ ըստ դատապարտ ամբաստանութեանց յաճախելոց յանբարեմիտ եւ ի

նալեաց հին խազից մերոց, յորում ոչ սակաւ աշխատեցաք առանց յաջողելոյ: Զայնագրագէտ քաջ Տ. Կոմիտաս վարդապետ որ ի Միաբանութենէ Ս. Էջմիածնի, խոստանայ պարգել գրառախս հին խազից, եւ հազորդեաց մեզ առանձինն զգոհացուցիչ տեղեկութիւնս ինչ:

դաւադիր անձանց, սկսաւ ենթարկել ընդ հաւատապարպիտ քննութեանց զարս կասկածելիս, բանտարկել, աքսորել, մինչեւ ազդել սարսափս ամիրայից անդամ :

Ըստ այսմ ուրեմն կալաւ եւ բանտարկեաց զԳէորդ քահանայ Արծրունի՝ զպաշտօնեայն Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ Սասնեղջի ժամարարատան Աւագ-եկեղեցւոյ ի Գուսգարու ի 28ն փետրվարի 1839, որպէս եւ յետ պախարակելի իմն քննութեան առաքեաց զնա յաքսորս յՅն Ապրիլի, զինի հրաժարման Ստեփաննոս Արքեպ. ի պատրիարքութենէ*) :

Արդ, Աղաւնի ոչ հաւանեալ հալածանաց եւ այսպիսեաց զանից, ըստ որում գիրտէր զվտանգաւոր հետեւանս հալածանաց, զորոց զդառն փորձս տեսեալ էր անձամբ եւ բազմօք լուեալ ականջօք իւրովք, մանաւանդ տեսեալ եւ զխարդաւանութիւնս հակառակորդաց, հրաժարեցաւ ի պատրիարքութենէ, եւ հրաժարադիրն առաքեցաւ առ Բ. Գուսն յՅն Մարտի : Յետ որոյ ընտրուեցաւ Տ. Յակոբոս եպիսկոպոս ի պատրիարք ի 11ն այնր Մարտի ամսոյ (1839), եւ ի 13ն զնաց Տ. Յակոբոս եւ ընկալաւ զնշանն պատրիարքական ի Բ. Գրանէ, եւ սկսաւ շարունակել առաւել խստութեամբ եւ բուռն միջոցօք ի ձեռն քաղաքական իշխանութեան զհալածանս, աքսորել, բանտարկել եւ այլն զորոց ամբաստանէին : Իսկ Տ. Ստեփաննոս արքեպ. Աղաւնի փութացաւ վերադառնալ յւրն վիճակ յԱրմաշ-յիզմիտ ի 17ն Մարտի, թօթափեալ զիտի ոտից իւրոց, եւ զի մի՛ մասնակից՝ միանգամայն ականատես լիցի դառն եւ վտանգաւոր հետեւանացն :

Յաճախ կիրք անձնկանք առիթս ետուն ո՛չ միայն տարածման եւ ընդարձակման, այլ եւ իսկական կրօնափոխութեան բազմաց, որոց միացաւ տիրացու Արիստղոմ ձայնազրազէտ առ ի ազատել զանձն ի հալածանաց ընդ պաշտպանութեամբ զեսպականացն Անդրիոյ եւ Ամերիկայի : Եւ այսպէս, փոխանակ զաղարկեցունցանելոյ, առաւել արժարձեաց Տ. Յակոբոս զհակառակութիւնս եւ զկրօնափոխութիւնս, կասկածեալ անգամ զանձանց որ խրատէին զաղարել ի հալածանաց եւ բաւականանալ խրատուք եւ քարոզութեամբք, որպէս պատահեցաւ Տ. Գէորգայ վարդապետի, որ ոչ համակերպէր հրահանգաց Պատրիարքարանի, ոչ ախորժէր ի հալածանաց, մանաւանդ տածէր զսիրալիր յարարերութիւնս, — խրատականս եւ ազգօգուտս, — ընդ հալածեալս, որոց թիւ ոչ էր նուազ ի Սասնեղջ առաւել քան զայլ տեղիս :

Տ. Յակոբոս լուեալ զամբաստանութիւնս եւ զԹաղէոս քահանայէ Սասնեղջ, որոյ վարք եւ բարք էին յաւէտ արժանի դատապարտութեան, հրամանագրէ Տ. Գէորգ վարդապետի ի 19ն Նոյեմբերի զի Թաղէոս արգելեալ է քահանայութենէ, միանգամայն լուծեալ ի կարգէն, եւ մնայ սոսկ աշխարհական անուամբ Թաղէոս : Իսկ ի 21ն նոյն ամսոյ, ըստ միջնորդութեան ազդեցիկ անձանց ոմանց, ի նորոյ հրամանագրէ Յակոբոս թէ ներեցաւ Թա-

*) ԻՍՆՕԹ.Վ.Եպ.Մ. — վերադարձաւ Արծրունի փեյ. յսխարանաց յՅն Սեպտեմբերի :

դէոսի, ենթարկեալ զնա յապաշխարութիւն ի նոր քառասունս (չիլի), որպէս եւ եղեւ այնպէս :

Յետ ամսոց ինչ յառաջ վարեալ պատրիարքի զհալածանան, արտաքսէ զՅակոբ վարդապետ Պէրպէրեան ի պաշտօնէ պատրիարքական Փոխանորդութեան (Վէէֆիլ) եւ կարգէ ի տեղի նորա զՊետրոս վարդապետ Կեսարացի, որ չափազանցէ ի բանտարկութիւնս եւ ի գլանակս (ֆալախա, փալաֆա), ենթարկեալ ի գանահարութիւնս դօտար աղբիս անգամ (չքարողիչս), զպապականս եւ զբողոքականս անխտիր, որպիսիք յարուցին միջազգային միջամտութիւն եւ զբողոքն զեսպանաց ոմանց :

Ամբաստանեն եւ զԳէորգ վարդապետէ, եթէ խմորեալ է ի բողոքականութիւն, արձակէ եւ զնա ի քարոզչութենէ Խասգեղջ, ընդ որ վչտանան յոյժ բազումք ի Հայոց :

ԳԼՈՒԽ Զ.

ՅԱՂԱԳՍ ՔԱՐՈԶՉՈՒԹԵԱՆ ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ Ի ՄԻՋԱԳԵՂՋ

Տ. Յակոբոս Արքեպիսկոպոս պատրիարք արձակեալ զԳէորգ վարդապետ ի քարոզչութենէ Խասգեղջ, եւ տեսեալ զյուզմունս Հայոց եւ ամիրայից՝ առ ի առնուլ զառաջս միջնորդութեանցն, ժուլթայ կարգել զնա ի քարողիչ Ս. Երրորդութեան եկեղեցւոյ Բերայի (Պէյ Օղլու) նորոգ հիմնելոյ, զորոյ զհիմնարկութիւն կատարեաց Աղաւնի (Ստեփաննոս) յՆ Յունիսի 1836 ամի յաւուր բարեկենդանի պահոց որ յանուն Ս. Գրիգորի երկրորդ լուսաւորչի Հայաստանեայց, ընդ Աղաւնոյ գտեալ եւ Գէորգ վարդապետ ի նմին հանդիսի : Չայնու միջոցաւ աննշան էր Բերա, եւ առաքումն Գէորգայ անդր համարէր իբրեւ յաքորս : Տ. Յակոբոս յանձնեալ էր Տ. Գէորգայ եւ զՍ. Լուսաւորիչ եկեղեցի Ղալաթիոյ : Միաբան ամիրայիցն ընակելոց ի Խասգեղջ եւ ի Միջագիւղ՝ ջանան եւ յաջողին տալ կարգել զԳէորգ ի քարողիչ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Միջագեղջ, բացարձակապէս զգուշացեալ ի հակառակելոյ պատրիարքի : Թէպէտ ջանային ոմանք գրգռել զԺողովուրդ ընդդէմ պատրիարքի, այլ Գէորգ աղաչէր եւ հանդարտեցուցանէր զնոսա :

Վասնորոյ յ2ն Մարտի 1840 թուականի երթայ Տ. Գէորգ վարդապետ եւ հաստատէ զընակութիւն իւր ի Միջագիւղ, ստանձնեալ զնոր պաշտօն քարոզչութեանն, յետ մնալոյ ի Խասգեղջ զամս չորս եւ զամիսս եօթն :

Միջագիւղ էր յանժամ երկրորդ կեդրոն ամիրայից աղբիս յետ Խասգեղջ, որ տակաւ անկանէր եւ առաջինն բարձրանայր :

Գալուստ Երզնկացի էր քահանայ Ս. Աստուածածին եկեղեցւոյ տեղւոյն եւ վայելէր զհոգակ եւ զպատիւ ի շնորհս եւ ի պաշտպանութիւն Յարութիւն Ամիրայի Գազէզ, որոյ էր խոստովանահայր, որպէս եւ այլոց ոմանց ամիրայից եւ նշանաւոր անձանց, միանգամայն գրաւեալ էր զազգեցիկ դերս յեկեղեցւոջ եւ արտաքոյ եկեղեցւոյ, եւ ի Պատրիարքարանի անգամ :

Գէորդ վարդապետ մինչ ջանայր առաւել պայծառացուցանել զեկեղեցի, բարեկարգեալ զկարևոր կարգս ընդ զպրոցի, որպէս բազմային եւ խնդրէին ամիրայք եւ ժողովուրդք՝ յատուկ ժողովով յանձնարարեալ նմա եւ խոստացեալ օժանդակել ըստ ամենայնի, տեսանէ զհակառակութիւնս այնր քահանայիս, որ վարժեալ էր յաւէտ իշխել եւ քարոզչաց, եթէ եպիսկոպոս իցէ եւ եթէ վարդապետ : Վասնորոյ խոհեմութեամբ իմն կառավարեալ ընդ նմա, տակաւ ջանայ եւ յաջողէ անել սիրով ի խոնարհութիւն, եւ նոյնպէս արգիւնաւորէ զջանս իւր՝ որպէս արար ի Սասզեղջ : Որով ուրախ լինէին Միջագիւղացիք եւ մխիթարէին յոյժ :

Եւ այսու եղև սիրելի եւ հաճելի նաև յաչս Հայոց Միջագեղջ, եւ կալաւ զազգեցիկ դերս, թէպէտ Տ. Մատթէոս եպսկ. որ բնակէր անդ ի սեփական տան իւրում, ոչ մնայր ի հանդարտութեան եւ ջանայր թելադրել զյուզմունս ընդդէմ Գէորդայ, այլ ի նանիր : Ունէր եւ զհին կիրս :

Յաւուրս պատրիարքութեան Ստեփաննոսի եղեն առիթք եւ հակառակեցան միմեանց Մատթէոս եպսկ. եւ Գէորդ վրդ. (*) :

Էր երբեմն Մատթէոս եպսկ. Առաջնորդ վիճակին Պրուսայու, զայնպիսի պաշտօնս վարեաց նա յԱրմաշ - Նիկոմիդա եւ ի Զմիւռնիա, եւ ապիկար գտեալ ի վարչական ասպարէզի**) շարժէ եւ զդժգոհութիւնս Պրուսացւոց, որք ոչ կամին զնա եւ հանրագրութեամբք բողոք բառնան առ պատրիարքարանն, եւ այս ո՛չ մի անգամ : Ուր ուրեմն արձակեալ զնա Ստեփաննոսի Արքեպ. - պատ-

*) ԾԱՆՕԹ. Վ. ԵՊ. Մ. — Հոչակաւոր Յովհաննէս եպիսկ. ի երբեմն Պատրիարքի Կ. Պօլսոյ էին աշակերտք Տ. Տ. Յակոբոս եւ Մատթէոս եպիսկոպոսունք, իսկ Տ. Ստեփաննոս Աղաւնի եպիսկ. ի Պրուսայէ երբեմն պատրիարք Կ. Պօլսոյ եւ Տ. Պօղոս եպիսկ. Թաֆթահան ի Պրուսայէ էին աշակերտք Տ. Պօղոս եպիսկ. ի Գարագոջեան ի Կեսարիոյ՝ Առաջնորդի Պրուսայու եւ Նիկոմիդայ : Յովհաննէս եւ Պօղոս էին ի ԺԱ. աշակերտաց Տ. Զաֆարիա Արքեպ. ի Կաղզուանցւոյ երբեմն պատրիարքի Կ. Պօլսոյ, քէն Պօղոս տկար լեալ է յուսմունս եւ ի քարոզութիւնս :

**) ԾԱՆՕԹ. Վ. Եպ. Մ. — Առաւել վատքար լեալ ի Հայրապետական իշխանութեան ի Ս. Էջմիածին, եթէ ըստ վարչականի, եթէ ըստ վանականի եւ եթէ ըստ դիւանագիտութեան :

ընդհանուր ի վիճակէն Պրուսայու, ըստ թախանձազին խնդրանաց Պրուսացւոց ջանայ Գէորգ վրդ. համոզել զՊօղոս վրդ. Թաքթաքեան Պրուսացի առ ի երթալ յԱռաջնորդութիւն Պրուսայու, որում հազիւ հաւանի Թաքթաքեան: Յետ պատրաստելոյ Գէորգայ ղկարեւոր կոնդակս եւ զհրովարտակ արքունի, Թաքթաքեան գիտացեալ զքննադատելի բնութիւն եւ զուղղութիւնս Մատթէոս եպիսկ.ի՝ զառնայ ի յօժարութենէ իւրմէ, բացայայտ հրաժարի եւ ոչ կամի երթալ ի Պրուսա: Մանաւանդ զի եւ յարարելութիւնք Մատթէոսի ընդ Պօղոսի ոչ էին բարեկամականք, եւ կասկածամիտն Մատթէոս ըստ բազում իրաց կարծէր զի Պօղոս զաւադրէր ինքեան եթէ յԱրմաշ, եթէ ի Պրուսայ եւ եթէ ի Կ. Պոլիս: Եւ ըստ վերջին խնդրանաց Պրուսացւոց առաքէ պատրիարքարան զնախկին Առաջնորդ զՅարութիւն եպիսկ. Ուրֆացի ի Պրուսա:

Այսու առթիւ առաւել թշնամացաւ Մատթէոս եւ ընդ Գէորգայ, եւ ոչ էին բարեկամք կամ համակիրք միմեանց ցվերջին շունչս կենացն իւրեանց: Մանաւանդ եւ կարեւոր դէպք յաճախեալք մի զկնի միոյ նպաստէին արծարծման հակառակութեանց իրերաց, որպէս տեսցեն ի կարգի պատմութեան մերում: Յաւել ի վերայ նոցա եւ զջանս կուսակցականս:

Առթիւ հալածանաց՝ որոց ենթարկեցան թէ մեղապարտք եւ թէ մանաւանդ անմեղք ոչ սակաւք, բորբոքեալ երկպառակութեանց եւ արծարծեալ կրօնափոխութեան փոխանակ նուազելոյ, յարեան աղմուկ մեծ եւ զժգոհութիւնք ծանոնք յԱզգի մերում ընդդէմ Յակոբոս եպիսկ. պատրիարքի: Ուստի միացեալ ազգապետաց եւ իշխանապետաց ստիպեցին զնա ի հրաժարել ի պատրիարքութենէ, այնպէս եւ եղև իսկ ի 23ն Հոկտեմբերի 1840 թուականի, առաքեալ զհրաժարագիրն առ Բ. Դուռն ըստ սովորութեան եւ ըստ կարգին:

Իսկ յաւուր կիւրակէի Գիւտ Ուաչի ի 27ն Հոկտեմբերի (1840 թ.) Համազումար Ժողովն Ազգային վերընտրէ ի պատրիարքարանի վիճակաւ երկրորդ անգամ զՍտեփաննոս Արքեպ. զԱռաջնորդ Արմաշու, միանգամայն կարգէ ի Հրաւիրակ զԳէորգ վրդ. քարողիչ եւ զԳալուստ աւագ քհնյ. Ս. Աստուածածին եկեղեցւոյ Մեջագեղջ:

Ի յաջորդ աւուր մեկնեալ Հրաւիրակաց նաւակաւ ի Կ. Պոլսոյ փութան հասանին ի Նիկոմիդա (յիզմիտ) եւ անտի ելանեն ընդ ցամաք յԱրմաշ, եւ առեալ բերեն զՍտեփաննոս Արքեպ. ի պատրիարքարան ըստ սովորական կարգի՝ փառօք եւ հանդիսի՝ յ3ին Հոկտեմբեր (նոյեմբեր) ամսոյ: Եւ զի Բամագան էր Օսմանցւոց՝ ի գիշերի երթեալ պատրիարքի ի Բ. Դուռն ընկալաւ զսովորական նշան պատրիարքական:

Համաձայն կարգադրութեան ամիրայից եւ դլխաւորաց՝ խորհրդով Ս. Պատրիարքի՝ հրաւիրեալ էր եւ Պօղոս եպիսկ. Առաջնորդ Զմիւռնիոյ, որ եւ եկն եհաս յիզմիրէ ի Կ. Պոլիս ի 4ն Գեկտեմբերի (1840), իջեալ ուղղակի ի պատրիարքարան:

ԳՂՈՒԽ Է.

ՅԱՂԱԳՍ ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԳՈՒԹԵԱՆ
ԳԷՈՐԳ ՎԱՐԳԱՊԵՏԻ ԵՒ ՍԱԿՍ ՅԱՐԱԿԻՅ ԱՆՑԻՅ ԻՆՉ

Երկրորդ անգամ ստանձնեալ Տ. Ստեփաննոս Արքեպ.ի զպաշտօն պատրիարքութեան Կ. Պոլսոյ, անմիջապէս զաղարեցուցանէ զհալածանս, սիրաշահէ զյուզեալս եւ զգայթակղեալս, խրատէ զհակառակորդս, յորդորէ ի խաղաղութիւն զգրգռեալս, միանգամայն ջանայ ձուլել ի մի նպատակ բարի զիուսակցութիւնս:

Ի 12ն Գեկտեմբերի (1840) կազմեալ ամիրայից՝ իշխանաց եւ իշխանապետաց զժողով առ Ստեփաննոս Արքեպ.ի ի պատրիարքարանի, յետ խորհրդակցութեանց որոշեն եւ անմիջապէս կարգեն զՊօղոս եպիսկ.ի Տեղապահ, եւ զԳէորդ վրդպ.ի փոխանորդ (վեքիլ) պատրիարքարանի, թողեալ ի վերայ վերջնոյս եւ զպաշտօնն քարոզչութեանն Միջազեղջ, յոր երթայր յետ այնորիկ յերեկոյս շաբաթ աւուրց ի կիրակնամուտս, ի տօնական աւուրս եւ ի Տաղաւարս, եւ յետ միոյն կամ երկուց աւուրց վերադառնայր, եւ մնայր ի պատրիարքարանի զցայգ եւ զցերեկ:

Աղաւնի ճանաչէր քաջ՝ միանգամայն առաւել սիրէր զԳէորդ վարդապետ, որում յանձնեաց զկնիքն սովորական փոխանակ տալոյ Պօղոսի, ընդ որ խոժոռի Թաքթաքեան:

Սակայն զիտէր Գէորդ սիրաշահել զնոսա ըստ իւրաքանչիւր աստիճանի եւ արժանեաց, որպէս եւ զայլս ամենայն:

Սկսաւ վարել արթնութեամբ եւ ազդուապէս զպաշտօնս իւր որ ի պատրիարքարանի եւ ի Միջազեղջ:

Յայսմ նուազի Ս. Պատրիարք՝ Պօղոս եւ Գէորդ կեդրոնացուցուալ էին զջանս իւրեանց առաւել ի խաղաղել զԱզգ, ի մոռացուցանել զհալածանս, ի փարատել զկասկածանս եւ զերկիւղս բազմաց, ի դադարեցուցանել զկրօնափոխական տազնապս եւ զյուզմուռնս, ի մխիթարել եւ խրախուսել զվշտացեալ եւ զոտառապեալ պաշտօնեայս եկեղեցւոյ, միանգամայն իսկ ասել, ի խաղաղել եւ ազատել զվիճակս եւ զՀայս գաւառացիս ի ներքին եւ յարտաքին թելադրութեանց եւ յազգակործան վտանգից:

Յանչափս երկնչէր եւ զգուշանայր Պատրիարք Աղաւնի յազգային յուզմանց եւ ի խոռվութեանց, որպէս եւ կրօնափոխութեանց, մինչեւ զի հրաժարէր եւ յարտաքին յարաբերութիւնս ընդ օտարազգեաց, որպէս ընդ գեոպանաց, զի մի՛ պատրանք եւ գայթակղութիւնք ծագեացին: Ահա յաւելումք յապացոյց բանիցս այսոցիկ զօրինակ իմն անմեղ եւ միամիտ: Դեսպանն անզղիական ազգանն նմա, զուցէ համաձայն հրահանգաց կեդրոնական կառավարութեան, եթէ ունին Հայք գհրիտակ մեծազումար ի Հնդկաստան, որոյ վասն բացեալ են այլք զգատ եւ զպահանջ, փութացէ Պատրիարքն տիրանալ իրաւանց Հայոց որ ի Մուրատեան կտակի: Եւ արդարեւ Հ. Սարգիս Վ. Թէոդորեան եւ Մխիթարեան Միարանութիւն ձեռնարկեալ բացեալ էին զգատ առ ի ստանալ զկտակն Մուրատեան, եւ զեսպանն անզղիական զայս ազգարարէր եւ հրաւիրէր ի պաշտպանել զիրաւունս Հայոց: Այլ սակայն Ստեփաննոս Արքեպ. համարի զայս դաւ ինչ ի լութերականաց, եւ տայ զպատասխանի բացասական եւ մձուական: Որով եւ զիւրանայր գատն Մխիթարեանց, եւ Մայր Աթոռ ոչ ունէր զտեղեկութիւն ինչ, մանաւանդ զի եւ վիճակն էջմիածնի էր քննադատելի:

Ըստ այսմ ուրեմն երկնչէր եւ զգուշանայր Աղաւնի յամենայն գործս, եւ յաւէտ պակասէր նմա եթէ ոչ ընդհանուր հեռատեսութիւն եւ խոհեմութիւն, գէ՛թ աղբու գործունէութիւն եւ մերթ եռանդ մտանելոյ ի պայքար ընդդէմ դաւաճանից:

Այլ փոխանորդ Գէորգ վարդապետ հաւատարիմ կացեալ սկըզբանց եւ գաղափարաց իւրոց որպէս եւ պաշտօնի իւրում ընդ կրօնական պարտաւորութեանց, առնէր զոր արժան եւ հարկ տեսանէր եւ բարձրացուցանէր զվարկ Պատրիարքարանի, ընդ որ ուրախ եւ գոհ էին ամիրայք եւ ողջամիտք:

Այսպէս շարունակէր եւ յարատեւէր հաստատամտութեամբ Գէորգ ի պաշտօնի իւրում, յորժամ ի 22ն օգոստոսի 1841 թուականի գրեաց եւ առաքեաց Աղաւնի Ստեփաննոս զհրաժարական իւր ի պատրիարքութենէ առ Բ. Դուռն ուղղակի՝ առեալ կանխաւ գհամաձայնութիւն ամիրայից: Ըստ որում հակառակորդք ոչ խղճէին եւ ոչ դադարէին ի յուզելոյ զինդիրս եւ զզրպարտութիւնս ընդ պատրուակիօք ազգասիրութեան՝ կրօնասիրութեան եւ կրթասիրութեան, եւ Ստեփաննոս Արքեպ. ոչ սիրէր զըռնութիւնս եւ զհալածանս: Մատթէոս եպիսկ., այր անհանդարտ եւ վրէժխնդիր, կատարէր զգլխաւոր դեր հակառակորդի հանդերձ թելադրութեամբք:

Հարկ էր առնել զնոր ընտրութիւն պատրիարքական, եւ Մատթէոսեանք հետեւէին ընտրութեան պարագլխոյ իւրեանց՝ թեկնա-

ծու Մատթէոսի, որ յաջողեալ էր ի ժողովրդական դերս, վայելէր գհամարումն իբրեւ քաջարող ատենարան, միանգամայն վստահ ընտրութեան իւրում :

Ամիրայք եւ իշխանապետք միարանեալ խոհեմութեամբ իմն Զանացին թողուլ ապարդիւն զթեկնածութիւն Մատթէոս եպիսկոպոսի :

Առարկեալ ի Համաժողովի զիրաւախոհութիւն եւ զխաղաղութիւն ընդհանուր, համաձայնին առաջարկել ի հաստատութիւն Բ. Գրան դերկուս անձինս, զԱստուածատուր եպիսկոպոս եւ զՄատթէոս եպիսկոպոս, վստահեցուցեալ զՄատթէոսեանս, զի Աստուածատուր զոլով ձերունի եւ ամաց եօթանասուն եւ մի, կայսերական կառավարութեան հաստատեսցէ զերիտասարդ Մատթէոս ի պատրիարք : Եւ ի միւսէ կողմանէ ազդեն ամիրայք որոց հարկ էր, եւ տան հաստատել զԱստուածատուր եպիսկոպոսն ի պատրիարք :

Մատթէոս եպիսկոպոս վստահացեալ յանդնութեան կուսակցաց իւրոց եւ յաջողութեան ընտրութեան իւրում, կարեւոր պատրաստութեամբք եկեալ մնայր յԵրուսաղէմատան ի Գում Գարու, ուր գտանէր եւ գիշերէր նաեւ Աստուածատուր եպիսկոպոս յաւուրսն յայնոսիկ :

Գիտէր անշուշտ Մատթէոս զտրամադրութիւնս ազդեցիկ ամիրայից եւ իշխանապետաց, որոյ վասն ի գիշերի զբաղեալ ի խօսակցութիւնս՝ բերէ զառիթ յարմար եւ առաջարկէ Աստուածատուր եպիսկոպոսի, զի եթէ զու հաստատեսցես ի պատրիարք, զո՞րպիսի բարութիւնս շնորհես ինձ. մինչ եթէ յաջողեսցէ ինձ, խոստանամ կատարել զոր ինչ եւ խնդրեսցես յինէն : Աստուածատուր պատասխանէ յաւէտ նմա, եթէ ելանես ընդ իս ի կատակ, եւ ծիծաղիս ի վերայ իմ, ցորչափ անհնարին լիցի հաստատութիւն իմ, միանգամայն ապահովեալ է պատրիարքութիւն քո : Ուր ուրեմն պարզէ եւ խնդրէ Մատթէոս յԱստուածատրոյ, զի եթէ զու լիցիս պատրիարք, աքսորեսցես զՊօղոս եպիսկ. Թաքթաբեան. եւ եթէ յաջողեսցէ ինձ, խոստանամ կատարել զոր ինչ խնդրեսցես : Եւ այսպէս աւարտեալ զնորածեւ բանակցութիւն եւ զվիճարանութիւն մտանին ի քուն*) :

*) ՄԱՆՕԹ. Վ. ԵՊ. Մ. — Արդարեւ հաւատարիմ եղի Մատթէոս եպիսկ. խոստման իւրում, եւ յետ ամաց յօրժամ ինքն Մատթէոս եպիսկոպոսն եղի պատրիարք, ոչ եթող Աստուածատուր եպիսկոպոսի երբեմն պատրիարքի արձանագրել զանուն իւր ի ճակատս Ս. Կարապետ եկեղեցւոյ Նոր Թաղի (Եէնի Մահալլէ) Իսկիտարու, ի շինութիւն որոյ բազումս տառապեցաւ Աստուածատուր, ծախսեալ և զբաղում դրամս իւր անձնական :

Իսկ Աստուածատուր եպիսկոպոս հաստատեալ ի պատրիարք հակառակ յուսոյ եւ ակնկալութեան իւրում բացազանչէ. «Աստուր եղև պատրիարք, վա՛յ աշխարհի» եւ այլն, եւ նստի յաթոռ պատրիարքութեան ի 19ն սեպտեմբերի (1841) :

Ի յաջորդ աւուր (20 սեպտեմբեր) ել եւ վերադարձաւ Ստեփաննոս արքեպ. Աղանի ընդ Պօղոս եպիսկոպոսի Թաքթաքեան յԱրմաշ : Գնաց եւ Մատթէոս եպիսկ. յԱռաջնորդութիւն վիճակին Զմիրուհիոյ, յորում հետեւէր ի վերջին պահու :

Գէորգ վարդապետ շարունակեալ զփոխանորդութեան պաշտօն, համաձայն փափաքանաց ամիրայից, խոհեմութեամբ իմն ղեկավարէր զփոխանորդարան զոյգ ընդ զործոց վերաբերելոց պատրիարքեան, որպէս եւ զԱստուածատուր եպիսկ. որ էր այլ բարեպաշտ եւ պարզամիտ, միանգամայն անփորձ եւ բարկասիրտ յոյժ :

Օր աւուր, ընդ պատուակօք ազգային բարեկարգութեան եւ յառաջադիմութեան, սաստկանային խլրտմունք ազգայինք, որոց խրախոս կարգայր Մատթէոս եպիսկոպոս եւ ի բացակայութեան իւրում : Հրապուրեալ եւ ողևորեալ ի բողձանաց լուսաւորութեան եւ յառաջադիմութեան, ոմանք յերիտասարդաց Յովհաննէս Պէյ Տատեան ի միոյ կողմանէ՝ իբրև իշխանապետ եւ գիտնական, եւ Ղազարոսեանք (Սամաթիացի) եւ այլք ի միւսմէ կողմանէ՝ իբրև ժողովրդական, անփորձութեամբ իմն թելադրէին զնոր ուղղութիւնս եւ յուզէին ղերկպատակութիւնս, որք նպաստէին յաւէտ տարբեր ջանից եւ նպատակաց Մատթէոս եպիսկոպոսի : Մանաւանդ զի դամ քան զգամ զառնայր եւ ծանրանայր հակառակութիւնն նաև ընդդէմ ամիրայից եւ իշխանապետաց, միանգամայն ընդդէմ վարչական ուղղութեան և եղանակի պատրիարքարանի, համաձայն զլիաւոր թելադրութեանց Տատեանի, որ շրջեալ եւ զարգացեալ էր յԵւրոպա :

Տեսեալ զայս ամենայն Գէորգ վարդապետի, զոյգ ընդ զբոլորութեանցն նիւթելոց նաև ընդդէմ փոխանորդութեան իւրոյ, մանաւանդ զի վախճանք ծնողաց իւրոց, վտանգաւոր հիւանդութիւնք եղբարցն եւ քերցն ներգործեալ էին ինքեան, տառապէր եւ ինքն ի մաշողական ինչ հիւանդութեան թունջի, նիհար լեալ յոյժ անձամբ, յետ բազում ջանից եւ խնդրանաց յաջողեցաւ եւ հրաժարեցաւ ի փոխանորդական պաշտօնէ իւրմէ ի 22ն յունվարի 1842 ամի, եւ բաւականացաւ մնալ ի պաշտօնի քարոզչութեան Միջագեղջ եւ եթ, ուր եւ տեղափոխեցաւ բոլորովին :

Գէորգ վարդապետ հետեւեցաւ ի դարմանումն տկարութեանց անձին իւրոյ, եղբարցն եւ կրտսեր քեռն Փեկիրոնիկի, որք ոչ կարա-

ցին ճողոպրիլ զանձինս իւրեանց եւ յընթացս ամաց ինչ կնքեցին զկեանսն մի զկնի միոյ: Փութացաւ ամուսնացնել զբոյր իւր Եւփիմէ, եւ ինքն պատրաստէր ելանել յօղափոխութիւն ուղեւորութեամբ ըստ խորհրդոյ բժշկաց*):

ԳԼՈՒԽ Ը.

ՅԱՂԱԳՍ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԳԵՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՅԱՌԱՋՆՈՐԳ ԵՒ ՍԱԿՍ ԵՐԹԱԼՈՅՆ Ի ՊՐՈՒՍԱ

Յերկրորդ նուազի Առաջնորդութեան իւրոյ Ս. Յարութիւն եպ. Եղեասացի շինեաց անդ ի Պրուսա արդեամբք իւրովք զՍ. Հովփսիմեանց վարժարան օրիորդաց յարեւմտեան կողմն ի յետկոյս եկեղեցւոյ եւ իբր ի ծովեզեր՝ կից հնոյ Առաջնորդարանի, որպէս եւ յառաջին նուազի կառուցեալ էր ի սեփականութեանց իւրոց զեկեղեցկադիր Առաջնորդարան հոյակապ յերկրորդ եւ յընդարձակ բարձրաւանդակի ի վեր քան զհինն Առաջնորդարան անուանեալ վանք, եւ զյատուկ բաղանիս փոքրիկ ի պէտս Առաջնորդաց, որ կայ եւ մնայ ցարդ: Յետ որոյ, զողջես սրտնեղեալ յանձն ինչ, անկաւ Յարութիւն յուղեղային ինչ (եթէ ոչ մտաւորական) հիւանդութեան, եւ ինքնին հրաժարեցաւ եւ զնաց ի հայրենիս իւր յեղեսիս յօղափոխութիւն եւ ի տալ դարմանել զտկարութիւն իւր: Սիրէր Յարութիւն զճիւղարութիւնս եւ չըջել յաճախ երիվարօք՝ պահելով յատուկ զմատակ արարացի:

Վասն որոյ Հայք Պրուսայու լուեալ զբարի համբաւոյ Տ. Գէորդ վարդապետի, յատուկ հանրադրութեամբ խնդրեցին զնա յԱռաջնորդ վիճակին Պրուսայու: Ոչ կամէր սա ընդունիլ զԱռաջնորդութիւն Պրուսայու՝ տեսեալ զնիհարութիւն և զծանր վիճակ իւր: Իսկ ամիրայք ոմանք եւ բարեկամք իւր ըստ խորհրդոյ բժշկաց յորդոր եղեն, եւ ուր ուրեմն հաճեցաւ եւ յանձն էառ Գէորդ երթալ յԱռաջնորդութիւն ի Պրուսա, յոր ընտրեալ էր ի 20ն օգոստոսի 1844 թուականի, յորում ամսեան նստեալ էր եւ Տ. Մատթէոս եպ. ի Պատրիարք՝

*) ԵՄԱՆՕԹ. Վ. ԵՊ. Մ.— Միանգամայն կամէր ինքնին երթալ ի Պրուսա յօղափոխութիւն ի հանգաջերմուկս եւ մնալ եօթնակս ինչ: Այլ ոչ յաջողեցաւ, մահաւանդ քէ կանխեաց ընտրութիւն Պրուսայու՝ գուցէ ըստ թելադրութեան Միջագիւղաքնակ ամիրայից շանիկի եւ Մաքսուտի:

հրաւիրեալ եկեալ ի Ձմիւռնիոյ՝ զկնի հրաժարելոյ Աստուածատրոյ եպ.ի ի վերջին աւուրս ամսեանն Յուլիսի :

Յետ գալստեան հրաւիրակաց ի Պրուսայէ, եւ զնկնի տեսանելոյ զկարեւոր պատրաստութիւնս, մատոյց Տ. Գէորգ վարդապետ զս. պատարագ յատուկ ի ս. Աստուածածին եկեղեցւոյ Միջագեղջ ըստ փափագանաց եւ ինդրանաց Ամիրայից եւ ժողովրդեան, ետ զհրաժեշտական ողջոյն, շարժեալ ի յորդառատ արտասուս ինքն եւ ժողովուրդն, յ7ն հոկտեմբեր ամսոյ (1844) ել եւ մեկնեցաւ ի Կ. Պոլսոյ, եւ անցեալ ընդ ծովն միակայմ նաւաւ՝ եհաս եւ գիշերեաց ի Կէմլէյիկի, ուր եկեալ էին ի Պրուսայէ եւ սպասէին ոչ սակաւ անձինք ընդ երեւելեաց քաղաքին*) :

Ի յաջորդ աւուրս վաղ քան ընդ առաւօտս մեկնեալ ի Կէմլէյեկ նաւահանգիստ զիւղաքաղաքէ ընդ հրաւիրակաց եւ եկելոցն ի Պրուսայէ աշտանակեալ յերիվարս, շարունակեաց զուղին մինչեւ եհաս յԱթըճըլար, որ իբր մէկ եւ կէս կամ երկու ժամու հեռի գտանի ի Պրուսայէ, ուր եւ պատրաստեալ էին զվրանս, եւ ժողովուրդ բազում ընդառաջեալ էր, ոմանք հեծեալ եւ բազումք հետիոտս, սակաւ ինչ հանգիստ էառ՝ ողջունեալ զիշխանս եւ զժողովուրդ : Ել յուզի ի նորոյ, եւ եմուտ ի քաղաքն ընդ ուղեկիցսն, որք ստուարանային հետզհետէ :

Մերձեցեալ ս. Աստուածածին միակ եկեղեցւոյ հայոց, կազմեցաւ թափօր եկեղեցական, եւ ինքն Տ. Գէորգ վարդապետ շուրջառեալ էառ ի ձեռս իւր զխաչ եւ զգաւաղան, եւ մեծաւ հանդիսիւ՝ երգօք հոգեւորօք եմուտ ի ս. եկեղեցի, ուր յետ սովորական աղօթից ետ զքարոզ ողջունի եւ օրհնեաց զժողովուրդն սրտեռանդ մաղթանօք : Ել յԱռաջնորդարան, կրկնեալ ի նորոյ զօրհնութիւնս իւր՝ արձակեաց զամենեսին ի խաղաղութիւն :

Ի յաջորդ աւուր էջ յառաւօտեան ժամերգութեան ի ս. եկեղեցի եւ խօսեցաւ զքարոզ՝ շեշտեալ զպաշտօն իւր եւ զպարտս, եւ զփոխադարձ պարտաւորութիւնս ժողովրդեան : Յետ արձակման ս. պատարագի եւ եկեղեցւոյ՝ խօսեցաւ քահանայից, իշխանապետաց եւ իշխանաց առանձին առանձին զխրատս եւ զյորդորականս :

*) ԾԱՆՕԹ. վ. ԵՊ.Մ. — Յառաջ քան զքանել շոգեմասս ու իւրաքանչիւրսն Մուտանիա եւ Կէմլէյեկ՝ մեծ մաւակօք եւ ցոլանաւօք եւ մամնեօք երթեակէիկն ուղեւորք. իսկ որք երթային յուխտ եւ յերկրպագութիւն ի Ս. Երուսաղէմ մատէիկն ի միակայմ եւ յերկկայմ մասս, եւ հազիւ երբեմն յեռակամսն՝ հանդիպեալ ոչ սակաւ տեղեաց եւ կրկեաց :

Պատուիրեաց քահանայից զգաստ լինել յանձն իւր պաշտօն, կանխել յեկեղեցի յառաւօտու եւ յերեկոյի, պահպանել զկարգս, զօրէնս եւ զկանոնս, արթուն մնալ ի հովուութեան ժողովրդեան, հասանել նոցա ի ժամու եւ ի տարաժամու, մխիթարել զնոսա, հաղորդեալ ինքեան որք կարօտ եւ թշուառ իցեն, նոյնպէս զայնցանէ որք արժանի իցեն ուղղութեան: Ոսեսցաւ եւ երեւելեաց տեղւոյն եւ ազգ. վարչական անձանցն իշխանապետ եւ իշխան կոչեցելոց, համերաշխութեամբ եւ անկեղծութեամբ փութալ յանձնիւր պարտսն, պաշտպանել զիրաւունս եւ զհասն եկեղեցւոյ եւ Ազգի, հետեւիլ խնամարկութեան կարօտելոց եւ թշուառաց, բարեկարգութեան զպրոցաց երկուց սեւից եւ առանձին ծաղկոցի, բարւօք եւ բարեխնամ մատակարարութեան Հիւանդանոցի տեղւոյն, պայծառութեան եկեղեցւոյ, բարգաւաճման կալուածոյ եւ եկամտից, միանգամայն միութեան, սիրոյ եւ ընդհանուր սիրալիր յարաբերութեանց: Ապա հանդիստ առեալ սակաւ ինչ, ըստ սովորութեան ել եւ զնաց յառաջին այցելութեան կուսակալ փաշայի, որ ընկալաւ զնա սիրով եւ պատուով, խոստանալով օգնել ինքեան ի կարեւոր դէպս եւ ի պէտս յօգուտ ժողովրդեան իւրոյ եւ վիճակին:

Աւուրս ինչ տեւեցին փոխադարձ տեսութիւնք եւ այցելութիւնք ընդ կարեւոր անձանց քաղաքին, ընդ Օսմանցւոց, ընդ Յունաց, ընդ Հրէից եւ ընդ այլոց:

ԳԼՈՒԽ Թ.

ՅԱՂԱԳՍ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԵԱՆՅ ԵՒ ԶԱՆԻՅ Տ. ԳԷՈՐԳ
ՎԱՐԳԱՊԵՏԻ Ի ՊՐՈՒՍԱ

Ունէին յայնժամ Հայք Պրուսայու զվարժարան Ս. Պօղոսեան հիմնեալ ի Ս. Պօղոս Արքեպ. Գարաքօչեան Առաջնորդէ, եւ զճաղկոց առանձին ի պէտս արականաց, եւ զգպրոց օրիորդաց յանուն Ս. Հռիփսիմեանց, հիմնեալ ի Յարութիւն եպ. — է, որք պարունակէին զաշակերտս սուսեւի քան զ500, եւ զաշակերտուհիս 150 ի չափ:

Շէնք, դիրք եւ տեսարանք կրթարանաց էին յարմար ըստ ժամանակին, ի հիւսիսային եւ յարեւմտեան կողմունս ի շրջափակի եկեղեցւոյ առ ճորով եւ զետով կէօփտէրէի, ախորժեղի եւ օգասուն: Սակայն անհաւատար էին կրթարանք, եւ ոչ մի իթարական, որպէս քանիցս այցեալ Գէորդ վարդապետի ի զպրոցս, եւ քննեալ զաշակերտս եւ զաշակերտուհիս, յայտնապէս ասաց զաննպաստ կարծիս իւր:

Զոյգ ընդ բարեկարգութեան եկեղեցւոյ՝ կանոնաւոր ժամերգութեանց, ներդաշնակ եւ սրտաշարժ երգեցողութեանց, ջան կալաւ ի պայծառութիւն եւ ի յառաջադիմութիւն դպրոցաց: Հաստատեաց գյատուկ հոգաբարձութիւն ի պէտս դպրոցաց միացուցեալ ընդ Միւքէվէլլի անուանեալ հոգաբարձութիւն. յաւել զուսումնապետութիւն, եղեալ յուսումնապետ զկարապետ աղայ Ամիրայեան: Յաւել զեկամուտս՝ հաւաքեալ զնպաստս դրամականս, ի փոխարէն առնելով զպարտամուրհակս ստորագրեալս ի ձեռնհաս անձանց, պարելով վճարել ամի ամի զտոկոսինս (12%) ի նպաստ եւ ի պէ դպրոցաց: Յաւել զուսուցիչս թուրքերէն լեզուի եւ զաղղիրաբէնի ի Պօղոսեան վարժարանի: Արգել զուսումն յունարէն լեզուի: Կարգեաց զհմուտ եւ զձեռնհաս ուսուցիչս Հայկարանութեան եւ կրօնական գիտելեաց: Պարտաւորեաց խօսել ի դպրոցս հայերէն լեզուաւ փոխանակ թուրքերէնի, հաստատեալ եւ զվարժութիւնս խօսակցութեանց, տանել զմանկունս համայն յեկեղեցի յերեկոյս շարաթաւուրց եւ թաղ առ թաղ կարգել զհսկողս ընդ նոսա ի պահպանութիւն բարեկարգութեան եւ ապահովութեան, անխափան շարունակել զդասս եւ զուսմունս, խօսել զխրատականս մանկանց իրր ժամի յիւրաքանչիւր աւուր, շարունակել զհայախօսական կրթութիւնս եւ զվարժութիւնս, տալ մանկանց միջոցս զքօսանաց ի պարտիղի որ առաջի դպրոցաց առ ձորով Կեօփտէրէի:

Հաստատեաց ընդ Միւքէվէլլւոյ գյատուկ հոգաբարձութիւն ի պէտս Ազգ. Հիւանդանոցի որ ի Զօպան Պէկ թաղի եւ ի խնամակալութիւն աղքատաց եւ կարօտելոց, յանձնեալ զվերին հսկողութիւնս ժողովոյ իշխանապետաց ընդ նախադահուլթեամբ իւրով ի վերայ նորահաստատ հոգաբարձութեանց դպրոցաց եւ աղքատաց:

Կարգեաց զընկերութիւն դպրաց եւ դասախօսութիւն շարականաց ի պայծառութիւն եկեղեցւոյ:

Հաստատեաց զկանոնս վասն նշանադրութեանց եւ պսակաց առ ի կարճել զչոսայլութիւն ծախուց եւ զառիթս դժտութեանց ի նշանատուութիւնս եւ յօժիտս:

Սահմանեաց ի նորոյ զկանոնս ծխատիրութեան առ ի բառնալ զպատճառ անկարգութեանց քահանայից որ ընդդէմ իրերաց: Արար տէրաւնի զպանդուխտ ժողովրդական, յանձնեալ միում ի քահանայից, յանուն Առաջնորդական իրաւանց եւ այսու կարճեաց զգժտութիւնս եւ զտրտունջս պանդխտից եւ քահանայից միանգամայն:

Եւ զի նեղէր յանձնական տկարութենէ, մանաւանդ հարկ էր

փութալ եւ յայցելութիւն վիճակային գիւղօրէից, առժամս բաւական համարեալ յայսչափ ինչ, պատրաստեցաւ ուղւոյ լինել:

ԳԼՈՒԽ Ժ.

ՅԱՂԱԳՍ ԱՅՅԵԼԵԼՈՅ ԳԷՈՐԳ ՎԱՐԳԱՊԵՏԻ

ԵՐԿՈՒՅ ԳԻՒՂՕՐԷՅՑ

Վիճակն Պրուսայու պարունակէր ընդ քաղաքին զերկուս գիւղօրայս վիճակայինս, ձէրահն եւ Եէնիքէ քէոյ անուամբք, որք գրեթէ կից էին միմեանց, եւ իբր վեց ժամու հետի ի Պրուսա քաղաքէ՝ յարեւելեան ստորոտս Ողիմպեան (Գէչիչ-Թաղ) լերին հոչակաւորի:

Երկոքին գիւղք էին հայարնակք: Եէնիքէ պարունակէր զմի հազար տուն, եւ ձէրահ զ500 տուն:

Յաւուրս Պօղոս եպ.—ի Քարաքօչեան Կեսարացւոյ միացեալ էր վիճակն Պրուսայու ընդ Արմաշու եւ վիճակին Նիկոմիդայ ընդ միով Առաջնորդու: Յաւուրս թեմակալութեան Մատթէոս եպ.—ի հետանան եւ միանան ոմանք ի գիւղօրէից Պրուսայու ընդ վիճակին Արմաշու, եւ մնան երկոքին գիւղօրայք եւ եթ:

Արդ՝ Տ. Գէորգ վարդապետ ըստ սովորական կարգի աղղեալ կանխաւ գիւղօրէից, եւ եւ մեկնեցաւ ի Պրուսայէ ի Յ Նոյեմբերի (1844) ընդ հրաւիրակաց ժողովրդեան՝ ուղեկցութեամբ ոմանց երեւելեաց եւ քահանայից Պրուսայու, եւ նախ գիւղեալ ձէրահու, ապա չոքաւ յԵէնիքէ-քէոյ, յորս եկաց եօթնեակս ինչ:

Ոչ սակաւ էին արտունջք ժողովրդեան ընդգէմ ոմանց ներքին հարստահարչաց առթիւ բաշխման արքունական տրոց եւ սակս մատակարարութեան գրամոց եկեղեցւոյ: Թո՛ղ զապրիկարութիւնս քահանայից:

Ձան կալաւ Գէորգ վարդապետ հաշտեցուցանել զյուզեալս եւ հաստատել զներքին խաղաղութիւն, ի նորոյ տալ բաշխել զտուրս արքունականս արգարութեամբ՝ ի բաց թողեալ զաղքատս եւ զմանակրս, իբրեւ զմատաղակերս, կարգել զնոր իշխանս, պատուիրել տեսանել զպատրաստութիւն հաստատութեան գպրոցի, պատուիրել քահանայից եւ յառաջաւորաց գիւղօրէից զկարեւոր հրահանգս ի պէտս եւ ի պայծառութիւն եկեղեցեաց, յօգուտ ժողովրդեան, եւ ի պէտս վարչական եւ սիրալիր յարարերութեանց:

Որոշեաց զերկուս մանկունս ձայնեղս եւ ընդունակս, որպէսզի ընդ պաշտպանութեամբ եւ խնամակալութեամբ իւրով ուսցեն ի Պրուսա ի Պօդոսեան վարժարանի զկարեւոր ուսմունս եւ զերաժշտութիւն, վերադարձցեն ի հայրենիս իւրեանց եւ վարեսցեն զպաշտօն վարժապետութեան, պատրաստեալ միանգամայն եւ ի քահանայութիւն: Զորս եւ առաքեաց ի Պրուսա, խոստացեալ տալ ուսուցանել նոցա եւ զպատուաստ մարմնոյ, որպէս եւ ուսան իսկ: Մին յերկուց էր քաղցրաձայն երաժիշտ հանգուցեալ Գասպար քահանայ:

Յետ մխիթարելոյ զժողովուրդ հոգեւոր ուրախութեամբք եւ քարոզութեամբք յեկեղեցիս եւ արտաքոյ եկեղեցեաց, եւ զկնի կարգադրելոյ զխնդիրս ինչ՝ զորոց համառօտեցաք յոյժ, համակրութեամբք ժողովրդեան մխիթարեալ եւ ինքն Գէորգ վարդապետ վերադարձաւ ի Պրուսա ի 28ն Նոյեմբերի, օգտեալ եւ կազդուրեալ յօղափոխութեանց: Որով առաւելոյր ուրախութիւն իւր եւ մխիթարութիւն ընդ եռանդուն զործունէութեան եւ աշակրջութեան:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՅԱՂԱԳՍ ԳԱԼՍՏԵԱՆ ԿՈՍՏԱՆՏԻՆ ՄԵԾԻ

ԴՔՍԻ ՆԻԿՈԼԱՅԵՎԻՉԻ Ի ՊՐՈՒՍԱ

Որդի Օգոստ. Նիկոլայ Նիկոլայեվիչ կայսեր Ռուսաց բարձր. Կոստանտին մեծ դուքս Նիկոլայեվիչ ելանէ ի ճանապարհորդութիւն յարեւելս յամի Տեառն 1845: Յետ հանդիպելոյ նորա ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս յաւուրս թագաւորութեան օգոստ. Սուլթան Ապտիւլ Մէճիտ կայսեր Թուրքիոյ, յորմէ վայելեաց զհիւրասիրութիւն արժանավայել, փափաքի տեսանել եւ զհին մայրաքաղաք Օսմանեան զՊրուսա եւ զլեառն Ողիմպեան, առ ստորոտով որոյ գտանի Պրուսա ի հիւսիս-արեւմտեան կողմն:

Վասն որոյ համաձայն հրահանգացն եւ հրամանի կետրոնական Քաղ. վաչրութեան Կ. Պօլսոյ տեսանէ կուսակալ փաշայն զպատրաստութիւնս կարեւորս ի հիւրասիրել զԿոստանտին դուքս Մեծ: Միանգամայն խնդրէ ի Գէորգ վարդապետէ յԱռաջնորդ վիճակին յատկացուցանել աւուրս ինչ ի բնակութիւն դքսին զհոյակապ եւ զգեղեցկատեսիլ Առաջնորդարան Հայոց: Ընդ որ ուրախ լեալ Տ. Գէորգ վարդապետ սիրայօժար ընդունէ զառաջարկութիւն կուսակալի եւ փոխադրէ զբնակութիւն իւր ի մերձակայ տուն մի:

Արդ՝ ըստ կարգադրութեան կուսակալի ի 24ն Յունիսի փութան ընդ կուսակալի Գէորդ վարդապետ, աւագանի օսմանեան, կրօնապետ եւ Առաջնորդք Յունաց, Հրէից, Հայ-պապականաց, պաշտօնեայք գլխաւորք, նշանաւոր անձինք այլ եւ այլ ազգաց բնակչաց քաղաքին, հիւպատոսք եւ խոռոն բաղմութիւն ժողովրդեան ընդառաջել մեծի դքսի, որ գայր ի Կէմլէյեկէ, եւ պատուով մեծաւ բերին զնա, ի քաղաքն ուղղակի տարեալ եւ բնակեցուցեալ յԱռաջնորդարանի Հայոց, որ էր յայնժամ եպիսկոպոսական բնակարան ի Պրուսա: Վրանս կազմեալ յԱթրըրլար ճանապարհի՝ հիւրասիրեալ էին զԿոստանտին օշարակօք, թէյիւք եւ սրճիւք, տուեալ եւ զծխամորձս: Անդ կուսակալ փաշայն ներկայացուցեալ էր դքսին մեծի զկարեւոր անձինս ըստ եւրոպական սովորութեան:

Տեղական կառավարութիւն հողայր զկարեւոր սպասուց եւ զճախուց եթէ յԱռաջնորդարանի եւ եթէ յերթեւեկութեանս:

Յետ սովորական քաղաքավարական այցելութեանց եւ ներկայացմանց, ել մի առ մի եւ յաւուրս ինչ Կոստանտին յայցելութիւնս նշանաւոր վայրաց եւ տեղեաց, դամբարանի Օսմանայ Մեծի, դամբարանի Էմիր - Սուլթնի եւ աղօթատան մեծի (Մզկիթ) Ուլու-ձամի, Խիւտալէնտիկեար-ձամիսի, Եէշիլ-ձամիսի եւ Մէվլէ-Խանէ Թէքէի, հին եւ պատմական սղօթատեղեաց, յորս փայլեն արաբական եւ պարթեւական (դրթական) արուեստական ճարտարութիւնք եւ հմտութիւնք, հոշակաւոր հանքաջրմկաց ի Ձէֆիրկէլէր (յորում է Խիւտալէնտիկեար), Պոյու-Կիւզէլ, Հիւսնի-Կիւզէլ, Ձէֆերկէ, Սէլվիմուզ եւ այլն կոչեցելոց, եւ մերձաւոր եղելոցն Պրուսայու, Մեծ եւ Փոքր Քիւֆիւրքիւ, հոյակերտ Հին եւ Նոր Գապլընա, Գայնարնա, Գարա-Մուսքաֆա անուանելոց, ոմանց հնաչէն մէդրէսէից (կրօնական դպրոց Մահմետականաց), Ողիմպեան լերին, ականց ոմանց ջրոց, նորահաստատ զործարանաց մետաքսից, եւ այլոց եւ այլոց: Ըստ փափաքանաց իւրոց այցեալ եւ եկեղեցւոյ Հայոց ընդ դպրոցաց, Գէորդ վարդապետ դիմաւորեաց եւ պատուեաց զնա երգասացութեամբք դպրացն մանկանց եւ թափօրական հանդիսիւ, ի ներկայութեան բաղմախոռոն ժողովրդեան, մանաւանդ Հայոց, որք արտայայտէին զհամակրութիւն մեծ եւ զյարգանս ի պատիւ դքսին, իբրեւ Քրիստոնէի, մանաւանդ սակս եւ ի պատիւ Ս. Էջմիածնի եւ Կաթողիկոսի, որ կան ընդ տիրապետութեամբ ռուսաց:

Աւուրս երիս կացեալ եւ շրջեալ Կոստանտին, պատրաստեցաւ ի վերադառնալ:

Վասն որոյ ի 27ն Յունիսի մեկնեցաւ ի Պրուսայէ ի նորոյ մե-

ծաւհանդիսիւ եւ ուղեկցութեամբք ըստ արժանւոյն եւ ըստ առաջնւոյն: Հասեալ ի Կէմլէյիկ, անդի առաքեաց ի նուէր եւ ի նշան դոհունակութեան առ Գէորգ վարդապետ զմի մատանի ակննակուռ մեծադիր եւ ձուածեւ՝ հաստատեալ ի միջի յակինթ կապոյտ (որ մնաց ի Մայր Աթոռոջ յետ վախճանի Նորին Սրբութեան):

Այսու առթիւ շնորհեաց օգոստ. Կայսր Սուլթան Մէճիտ Տ. Գէորգայ զակննակուռ շքանշան նորահաստատ Իֆրիխար անուամբ, զոր ընկալաւ ի Պրուսա ի 11ն Յունիսի 1846 թուականի:

Կոստանտին դուքս տեսակցեալ առանձին ընդ Գէորգ վարդապետի՝ քաղէ զտեղեկութիւնս զՀայոց քաղաքին, զարուեստից, միանգամայն զընդհանուր վիճակէ, ուշադիր իմն հետաքրքրութեամբ:

ԳԼՈՒԽ ԺԲ.

ՅԱՂԱԳՍ ՅՈՒԶՄԱՆՅ ԸՆԳԴԵՄ ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Տէր Մատթէոս Եպիսկոպոս-Պատրիարք զկնի առաջին թեմակալութեան Յարութիւն Եպ.—ի Եղեռացւոյ կացեալ յԱռաջնորդ Պրուսայու՝ ունէր զսակաւաթիւ կուսակիցս, յորոց մի էր Թադէոս Տէր-Պետրոսեան միջնորդ ի շուկայի (տէլլալ), փոքր հօրեղբայր մօր իմոյ: Ոչ դադարէր Տ. Մատթէոս Եպ. ի յարաբերութեանց որ ընդ նոսա, սկսեալ յօրէ անդի զրկելոյ իւրոյ յԱռաջնորդութենէ Պրուսայու, եւ առնէր զթեւադրութիւնս, յորպիսիս յաջողեալ էր ընդդէմ Ուրֆացւոյ (Եղեռացւոյ):

Շարունակէր զթեւադրութիւնս իւր ընդդէմ Գէորգայ վարդապետի, եւ զրդուէր զկուսակից իւր առ ի լուծանել զվրէժ հանդերձ այլովքն:

Ոչ պակասէին առիթք զժգոհութեանց, թէ եւ չնչինք լինէին:

Ժողովուրդն մերազնեայ տրտնջէր եւ բողոքէր զոմանց քահանայից եւ զաշխարհական Մատթէոս Գապաքճեան ներկայացուցիչէ որ ի դիմաց Հայոց նահանգին ի վարչական-կառավարական ժողովի (իտարէ մէճլիսի):

Յետ քանիցս խրատելոյ եթէ առանձին եւ եթէ ի ժողովի իշխանապետաց պատժեաց զքահանայս արբեցողս եւ ծոյլս:

Քանիցս եւ խոհեմութեամբ իմն ազդարարեաց եւ աշխարհական ներկայացուցչի՝ Մատթէոս Աղայի Գապաքճեանց՝ դադարել ի կաշառակալութեանց եւ ի հարստահարելոյ զՀայս, զքաղաքացիս եւ զգիւղացիս:

Նոանդուն նախանձախնդրութիւն իւր եւ արթնութիւն յեկեղեցական իրս, ի կարգապահութեան, ի կանոնապահութեան, յերգեցողութիւնս, յարարողութիւնս, որպիսիք որչափ հաճոյ եւ ախորժելի էին յաչս ժողովրդեան, նո՛յնչափ երեւէին անախորժ եւ տաղտկալի յաչս ոմանց՝ թէեւ սակաւաթիւ անձանց :

Բաց յայսցանէ, արգել Գէորդ վարդապետ քահանայից թողուլ զփիլոն իւրեանց ի վերայ փայտեայ վանդակաց դասուց, նոյնպէս անդ առնուլ զփիլոնս ի դալն յեկեղեցի, ետ շինել զյատուկ դարակս ի յետ կոյս Ս. Աստուածածին (այժմ Ս. Ոսայ) եկեղեցոյ կից եղելոյ աւագ տաճարի եւ յատկացելոյ կանանց, որպէսզի անձնիւր քահանայ եղեալ ի դարակս զգլխարկս եւ զայլս, անդ առցէ եւ զփիլոնս եւ այնպէս մտցէ յեկեղեցի: Որ եւ սոյն այս առթիւ եւ խնդիր դողցես յաւել եւ խանդարեաց զհանգստութիւն եւ զխիղճ նոցա, եւ եղեւ առիթ զրգոութեան :

Խոժոռի եւ արգելու զծիճաղաչարժ ծանուցմունս Գրիգոր աւագ քահանայի զուարճախօսի, տեսեալ զի խնդայ ժողովուրդ յեկեղեցւոյ անպատկառութեամբ իմն զզրդեալ գտուն Աստոծոյ: Օրինակ իմն: Մանուկ ոմն կորուսանէ զմի յոտնամանից իւրոց, զորմէ ծանուցանէ քահանայն եւ ի կնքեն զբան յաւելու ասել. լէպլէպիմի քիւքեանընա հիմո՛ս (իբր գնաց ի խանութ սիսեռախորովի):

Եւ ահա ի 14ն Սեպտեմբերի (1845) ձեռնարկեն հակառակորդք ի պատրաստել զհանրագիր – բողոք (մահաէր) ընդդէմ Գէորդայ առ ի առաքել ի Կ. Պօլիս:

Ընդ որ յուզեալ ստուարաթիւ մեծամասնութիւն ժողովրդեան, զբզոնին ընդդէմ հակառակորդաց, եւ միջամտութեամբ բարեմիտ եւ խաղաղասէր իշխանապետաց եւ իշխանաց ի 29ն Սեպտեմբերի պարագլուխք հակառակորդաց ընդ ըմբոստ քահանայից զիմեն Վեղայիւ առ Գէորդ վարդապետ, որ եւ ներէ նոցա՝ յորդորեալ ի զգաստութիւն, ի սէր եւ ի խաղաղութիւն:

ՅՁն Հոկտեմբերի կրկնեն հակառակորդք զձեռնարկութիւն հանրագրութեան, եւ ի նորոյ միջնորդեալ բարեմիտ իշխանապետաց եւ վարդերես աղայի Միսաքեան Կոնստանտնուպօլսեցոյ (որդի Միսաք ամիրայի) եղեւ հաշտութիւն կատարեալ:

Վարդերես աղայ էր բարեկամ եւ ծանօթ Գէորդայ, եւ երթեւեկէր ի Պրուսա կապալառութեամբ տասնորդական տրոց նահանգին, որ եւ ըստ խնդրանաց Գէորդայ արդեամբք իւրովք յաւել եւ շինեաց գերկուս դատարանս երկայարկս կցեալ ի դաշտահայեաց – հիւսիսային կողմն Ս. Պողոսեան վարժարանի ըստ երկայնութեան եւ ի կեդրոնի:

Նախ քան զայս Տ. Գէորգ վարդապետ ետ շինել ի պէտս եւ ընդդէմ հրկիզութեանց զաւազան մեծ ընդ մէջ Նուիրակատան եւ փողոցային մեծ դրան Առաջնորդարան-վանուց ի շրջապատի եկեղեցւոյ, եղեալ և գլխատակարան օրինակ. «Աւագանս պիտանի նորոգ ի հիմանց կանգնեցաւ յԱռաջնորդութեան Տեանն Գէորգայ շնորհազարդ վարդապետի, ջանիւք եւ բարեհաճութեամբ յարգի իշխանաց, արդեամբ առհասարակ ժողովրդոց քաղաքիս յամի Տեանն 1845, Օգոստոսի 1» :

Իսկ անպատեհ և աւելորդ իմն էր կոնդակ-դրութիւն Տ. Մատթէոս Արքեպ.-Պատրիարքի ուղղեալ առ Առաջնորդ Գէորգ վարդապետ ի 28ն Հոկտեմբերի առ ի առնել զհաշտութիւն : Յարաբերական դժուարութիւնք ժամանակին եւ միջոցք յուզմանց մատնեն զնախապատրաստ ջանս եւ զթելադրութիւնս Մատթէոսի, եւ կարծէր քօղարկել զջանս իւր եւ զմտադրութիւնս, մինչ արդիւնաւորէր զհակառակն՝ ոչ ի պատիւ ինքեան : Միանգամայն գլխաւոր նպատակ էր Մատթէոսի խափանել զինդիր եւ զփափաք ստուարագոյն մեծամանութեան ժողովրդեան եւ արգելուլ զեպիսկոպոսութեան Գէորգայ :

ԳԼՈՒԽ ԺԳ.

ՅԱՂԱԳՍ ՈՒՂԵՒՈՐԵԼՈՅ ԳԷՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏԻ Ի ԹԻՖԼԻՁ
ԵՒ Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ ԱՐԺԱՆԱՆԱԼՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ
ԱՍՏԻՃԱՆԻ : ԵՒ ՎԱՍՆ ԱՆՅԻՅ ՈՄԱՆՅ ՈՐ Ի ԹԻՖԼԻՁ

Գէորգ վարդապետ ունէր զվկայական ի Ստեփաննոս Արքեպիսկոպոսէ երբեմն Պատրիարքէ, որպէս սովորութիւն էր եւ է տալ եպիսկոպոսացուաց ուղղեալ առ վեհ. Հայրապետս Ազգիս ընդ հանրագրութեանց ժողովրդեան սակս պիտոյից թեմից եւ վասն արժանաւորութեանց եպիսկոպոսացուաց : Եւ ըստ ինդրանաց համայն ժողովրդեան Պրուսայու եւ վիճակային գիւղօրէից, անշուշտ ոչ պակասէր եւ իրաւացի իղձ Տ. Գէորգայ, տեսանէր զպատրաստութիւն ուղւոյ :

Յետ վճարելոյ զտարեկան այցելութիւն իւր յերկուս գիւղօրայս, զնացեալ ի 18ն Սեպտեմբերի եւ վերադարձեալ ի 13ն Նոյեմբերի 1846 ամի, եւ զինի պարզելոյ օգոց եւ անցանելոյ ձմեռնային սաստկաշունչ եղանակաց՝ միսիթարեալ զժողովուրդ ցվերջ տօնի Ս. Յարութեան, մեկնեցաւ ի Պրուսայէ բեռնաւորեալ սիրով եւ համակրութեամբ ժողովրդեան յ7ն Մայիսի 1847ի, եւ եհաս ի Կ. Պօլիս, իջեւանեալ ի Միջագեղջ, ուր բազում էին բարեկամք եւ համակիրք իւր :

Առնու Տ. Գէորգ վարդապետ զանհրաժեշտ թուղթս ի Մատ-

Թէոս Արքեպ.—Պատրիարքէ եւ դյանձնարարազիրս յոմանց Ամիրայից ուղղեալս առ փաշայս, առ նշանաւոր պաշտօնեայս եւ առ երեւելիս հայոց ի Տրապիզօն, ի Կարին եւ յայլ տեղիս կարեւորս՝ առ ի դերացուցանել զճանապարհորդութիւն նորա: ՅՂն Յունիսի նստեալ ի շոգենաւ նորահաստատ աւստրիական Լոյդ ընկերութեան մեկնեցաւ ի Կ. Պօլսոյ ընդ Պետրոս վարդապետի Տէր—Ստեփաննոսեան Կ. Պօլսեցոյ փոխանորդի իւրոյ եւ Մաղքանֆասացի՝ ընդ միոյ քահանայի (Խորէն անուն) ի Պրուսայէ, ընդ քեռորդոյ իւրոյ հիւծախտաւոր Տիգրան—Կարապետ Թ. Մազլըմեան եւ ընդ միոյ ծառայի:

Անցեալ ընդ ծով Պոնտոսի խաղաղութեամբ՝ ի 10ն Յունիսի ժամանեցաւ ի Տրապիզօն, ուր մնաց աւուրս երկուս, մինչեւ պատրաստեցան երկվարք եթէ ի հեծանել եւ եթէ ի բեռնաւորել զկարեւորս, ընկալեալ եւ փոխանակեալ եւ զայցելութիւնս ինչ՝ որչափ ներէին միջոցք եւ ժամանակ իւր:

Ընդ երէկս ի մետասաներորդ ժամու ի 12ն Յունիսի ելեալ յուղի՝ յետ միոյ ժամու եհաս եւ զիշերեաց ի Ս. Փրկիչ վանս: Ի յաջորդ աւուր շարունակեալ զճանապարհն զիշերեաց ի Քալեան—չայրք, ի 14ն անցեալ ընդ Գազբէլը լեռոն վտանգաւոր իջեւանեցաւ ի ձորն ձէրախու, ի 15ն ի Քըրչի գեղջ, եւ ի 16ն հասանէ ի Վարգախան գիւղ, յորում լեալ են Հայոց աւերակ երեք եկեղեցիք հռչակաւորք, զորոց զպատմութիւն գրէ առանձին յընդարձակ օրագրութեան իւրում՝ կորուսեալ ի հրկիզութեան 1863 թուականի ի Պրուսա: Շարունակէ դուղին ի 17ն եւ անցեալ ընդ Էֆշէ Էլմա վայրն զիշերէ ի Զազալար, ի 18ն ի Խօշարուցար, եւ ի 19ն առաւօտուց ուղւոյ լինի եւ յետ երկից ժամուց հասանէ յԼընա գիւղ հանքաջերմկաց եւ ի նորոյ հատեալ զճանապարհ երկից ժամուց՝ մտանէ ի Կարին իբր յօթներորդ աւուր ճանապարհորդութեան, եւ Կարապետ աղայ Մրօյեան (հակառկորդ Գրիգորիս Եպ.—ի, որոյ վասն աքսորեցաւ այսր ի Կ. Պօլիս), հիւրասիրէ զսա ի տան իւրում մեծաւ պատուով:

Ի նորոյ տեսեալ զկարեւոր պատրաստութիւնս՝ իբր ի միջօրէի ի 22ն Յունիսի մեկնի յէրզրումէ, զիշերէ ի Մտրկու վանս Ս. Լուսաւորչի, որ իբր միով ժամաւ հեռի գտանի ի Կարնոյ, որպէս արձանագրեալ է ի համառօտ օրացուցական օրագրութիւն: Ի 23ն զիշերեաց ի Վաղարշաւան գիւղ Բասենոյ (Քէօփրիւ — քէօյ) ի 24ն ի Սանամար գեղջ, ի 25ն յերֆի — ֆէօյ այլագեաց, ի 26ն անցեալ ընդ լեռան Սօղաֆլու (Սունի) մեծաւ երկիւղիւ եւ զգուշութեամբ եւ ընդ դիւղն Զրպլախու՝ զիշերեաց ի Կերկէզ գեղջ Քրթաց, եւ ի յաջորդ աւուր յԱռաջնորդարանի Հայոց ի Կարս, եւ ի 28ն ի ձամուշլու գեղջ:

Այսուրեքան գետ բաժանէր ՂԱԼԵՔՍԱՆՆԵՐԱՎՈՅԻ Ի ՃԱՄՈՒՆՆՈՒՆ, յորմէ առաւօտուց մեկնեալ եւ անցեալ ընդ Արփաշայ եմուտ ի սահմանս ուսական եւ հասեալ յԱղեքսանդրապօլ՝ ենթարկեցան Գէորգ վարդապետ եւ ուղեկիցքն Մաքրանցի (Քարանթին) յեղերս քաղաքին ի 29ն Յունիսի յաղաքս մաղձալտի (Քօլէրա) տարծելոյ ի շրջակայսն, ի սահմանս Երեւանու, Տփիսեաց եւ այլոց :

ՅՅն Յուլիսի վերջացեալ մաքրանոցական պայմանաժամս՝ ել Գէորգ անդի — ի Մաքրանոց եւ եմուտ յԱղեքսանդրապօլ, ուր իջեւանեցաւ եւ հիւրասիրեցաւ յԱռաջնորդարանի : Արժանի է յիշատակութեան աջակցութիւն եւ հոգածութիւն Սիրական աղայի Գորոյեան Աղեքսանդրապօլցոյ՝ արքունական մաքսային պաշտօնէի՝ հանդերձ պատուովք եւ հիւրասիրութեամբք, եթէ ի գալն եւ եթէ ի վերադառնալն Ս. Գէորգայ :

Ի նմին առւեր փութաց նորին գերապատուութիւն գրել Վեհ. Հայրապետ Տ. Ներսիսի Աշտարակեցոյ ի Թիֆլիզ, եւ խնդրէ զիտել զհրամանն, եթէ երթա՞լ ի Ս. Էջմիածին եւ մնա՞լ անդ, թէ փութա՞լ ի Թիֆլիզ, յորում գտանէր ինքն Ս. Կաթողիկոս : Առաքէ զթուղթդ յատուկ թղթատարաւ վարձելով :

Ի 15ն առեալ զպատասխանի Վեհ. Ս. Ներսէս Կաթողիկոսի, որ յայտնեալ եթէ տարածեալ է մաղձալտ ի Թիֆլիզ եւ ի շրջակայսն, թողու կամաց Գէորգայ վարդապետիս՝ գալ ի Տփիսս, կամ մնալ յԱղեքսանդրապօլի, եւ կամ երթալ ի Ս. Էջմիածին, ի յաջորդ առւեր փութայ գրել ի նորոյ առ Վեհ. Հայրապետ ըստ այսմ, թէ ոչ իմ կամք, այլ Քոյդ լիցին : Ընդ որ ախորժի յոյժ : Վասն որոյ կոնդակաւ հայրապետականաւ հրաւիրէ զԳէորգ ի Թիֆլիզ, յաւելեալ՝ զի եւ մաղձախոն տակաւ դադարեալ է :

Յետ ընկալնոյ վարդապետիս այսորիկ զբացարձակ հրաման ի 27ն ամսոյն, ուրախանայ եւ փութայ մեկնել յԱղեքսանդրապօլոյ յ30ն Յուլիսի հասարակ կառօք (ֆուրկօն ըստ ուսաց) եւ յՅն Օգոստոսի հասանէ եւ մտանէ ի Թիֆլիզ, ներկայանայ Վեհ. Հայրապետի ըստ սովորական կարգի եւ պատուով ի վանս առ Կուռ գետով, ուր էր եւ վեհարանն յերկրորդում յարկի եւ ըստ հրամանի Նորին Սրբութեան Վեհ. Հայրապետի տեղաւորի ի պատուաւոր սենեակս գտանեցեալս ի շրջափակի վանուցդ ի հիւսիս յարեւելեան կողմն եկեղեցոյ յառաջին յարկի Առաջնորդարանի որպէս մնային անդ եւ այլ եպիսկոպոսունք, վարդապետք, թեմակալ Առաջնորդ Կարապետ Արքեպ.՝ անկեալ ընդ քննութիւնս :

Դուն ուրեք պատահէր, զի Տ. Ներսէս Ս. Կաթողիկոս նստէր միայնակ ի սեղան, եւ անխափան սեղանակից ինքեան ունէր զեպիս-

կոպոստնս, զպատուաւոր վարդապետս, զնշանաւոր հայս աստի եւ անդի, եւ զորս սիրէր: Ըստ այսմ ուրեմն հանապազօր սեղանակից էր Գէորդ վարդապետ, որ ընդ փոյթ եղեւ սիրելի եւ հաճոյ յայս Կաթողիկոսի, որպէս եւ Կարապետ Արքեպիսկոպոսի եւ այլոց վեղաբաւորաց եւ անձանց որոց հանդիպէր եւ խօսակցէր ընդ նոսա:

Մերթ խորհրդակցէր Ներսէս ընդ Գէորդայ զկարեւորագոյն ինդրոց ազգայնոց, եւ հաւանէր յոյժ ընդ պատասխանիսն, որպէս ոմանք տեսցին ի կարգի պատմութեանս:

Ըստ հրամանի Տ. Ներսէսի Գէորդ վարդապետ առթիւ տօնի անուան իւրոյ մատոյց զս. պատարագ յաւուր տօնի սրբոյն Գէորդայ ի Ս. Գէորդ եկեղեցւոջ Մողնւոյ ի 27 Սեպտեմբերի խօսելով եւ զքարոզ քնարանովս «խոտորեա՛ ի չարէ եւ արա՛ զբարի» (Սաղմոս): Ընդ որ հաւանեալ են ունկնդիրք, որպէս լուաք ի Տփխիս:

ՎԵՏ. Տ. Ներսէս Կաթողիկոս յաւել յամէր ի Տփխիս առթիւ խտտագոյն քննութեան բացելւոյ ընդդէմ եւ ի վերայ հռչակաւոր Կարապետ Արքեպ.— ի Հնուտցեան թեմակալի՛ երբեմն Առաջնորդի Կարնոյ, եւ պատրուակէր զյափշտակութիւնս եւ զկաշառակուլութիւնս նորա, այլ իսկապէս հետեւէր զրկել զնա ի պաշտօնէ թեմակալութեան եւ խայտառակեալ, հեռացուցանելով եւ ի Տփխեաց՝ հակառակ ջանից եւ պաշտպանութեան ուսս. կառավարութեան, որ խրախուսէր զԿաթողիկոս, միանգամայն զԿարապետ Արքեպ. ընդդէմ միմեանց, յորպիսի ջանս դիւանագիտականս եւ ի խորդաւանութիւնս ճարտար երեւէր Վորոնցով իշխան փոխարքայն Կովկասու: Տայր համահաւասար իրաւունս երկոցունց հակառակորդաց յորժամ զիմէին ինքեան եւ ինդրէին զաջակցութիւնս, այլ յաւելաւ զբողոք զիւրերահակառակ ատելութիւնս եւ զթշնամութիւնս նոցա, դիւանագիտական — աշխարհավարական նպատակաւ, զոր ծաննան, այլ անազան յոյժ:

ՎԵՏ. Տ. Ներսէս Կաթողիկոս կազմեալ էր յամաց հետէ զյատուկ Քննիչ Մասնաժողով ընդ նախագահութեամբ զիտնական Կարապետ վարդապետի Շահնազարեան Նախանդամոյ թեմական Ատենի Հայոց վիճակին Վրաստանի եւ Իմէրէթի (Թիֆլիզու), եւ յանձնեալ նմա հետապնդել զամենայն զգործս դիւանատանց Ատենի տեղոյն, եւ Հոգեւոր-Կառավարութեանց Գանձակու, Գորոյ եւ մանաւանդ Ախալցխոյ, հարցաքննել զգործակալս համայն զբաւոր արձանագրութեամբք, ի մի րան հետեւել եւ հաւաքել աստի եւ անտի զտեղեկութիւնս եւ զբողոքս զբաւորս ընդդէմ Կարապետ Եպ.— ի թեմակալ Առաջնորդի եւ ի վերջ ամենայնի ընդարձակ տեղեկագրութեամբ յանձնել ինքեան Կաթողիկոսին Ներսիսի զոյգ ընդ զբաւոր պատասխանեաց եւ բացատրութեանց Կարապետ Եպ.— ի:

Կաթուղիկոսական իշխանութիւն, մանաւանդ ազդեցիկ Տ. Ներսիսի վալեթը անշուշտ զապահովութիւն յաղթանակի ցորչափ ոչ էր տղէտ ի վարչականութեան եւ ոչ տկար ըստ ամենայնի ի զիւանագիտութեան, ի վերայ այսր ամենայնի դժուարանայր յաղթել ջանից բազմաթիւ կուսակցաց Կարապետ Եպ.—ի զոյգ ընդ կեղծ—պաշտպանութեան կառավարութեան:

Բաղումք ի գործակալաց եւ ի պաշտօնէից եւ առաւել կարեւոր անդամք քննիչ Մասնաժողովոյ էին ի կողմն Կարապետի՝ թէեւ ոչ բացայայտ, զորոց ոչ տգիտանայր իսպառ Տ. Ներսէս Կաթուղիկոս: Մանաւանդ զի յաճախ ստուարանայր քննութիւնն բժախնդրական խնդրովք, եւ հետի յարդարութենէ եւ ի ճշմարտութենէ: Գիտէին մանաւանդ եւ զանցս եւ զարդիւնս Առաջնորդութեան Ներսիսի Կաթուղիկոսի ի նմին իսկ վիճակի Թիֆլիզու զոյգ ընդ արդեանց Կաթուղիկոսութեան, զչարաչար զեղծմունս, զյափշտակութիւնս, ըզճարտարահնար կաշառակուլութիւնս, զվասնումն վիճակային եւ եկեղեցական եկամտից ընդ Էջմիածնականաց՝ եւ այն յաճախ յօգուս ի պէտս ազգականաց, սիրելեաց եւ հաճոյակատար բարեկամաց իւրոց, ոչ տալով եւ զտեղեկութիւնս անհրաժեշտս եւ զհաշիւս Մինօզի Էջմիածնի, թեմական Ատենի եւ ոչ այլ ումեք, եւ այսպէս կորչէին եւ կորեան մեծագումար դրամք եւ եկամուտք Ս. Էջմիածնի, վիճակին եւ եկեղեցեաց, ոմանց կտակաց եւ այլոց՝ ոչ ցուցեալ զհաշիւս եթէ յո՛ր կամ որպիսի՛ պէտս ուղղեցան կամ շոյայեցան: Թողցուք յիշել զփոխանցումն եկեղեցական կալուածոց եւ զիւրօրէից յանուանրս ազգականաց ընդ հնարովի պատրուակօք:

Գիտեր քաջ Կարապետ վարդապետ Շահնազարեան զայս ամենայն, եւ առանց ըմբռնելոյ զիսկական նպատակ եւ զհեռատեսութիւն պատրուակեալ (ընդդէմ ոռուսական կառավարական պաշտպանութեան, զորպիսիս վալեթը երբեմն եւ ինքն Ներսէս մինչեւ էանց Ս. Էջմիածին ընդ Նահանգին Արարատեան ընդ իշխանութեան ոռուսաց), առթիւ իւրք տայ կարծիս ինձ ըստ արդարութեան եւ ըստ համոզման իւրոյ ի պատասխանի Ներսիսի: Յորմէ խոժոռեալ Ներսիսի՝ տեսեալ զի ի պաշտպանութիւն Կարապետ Եպ.—ի զիմեն բանք վարդապետին Շահնազարեան, անմիջապէս յանդիմանէ զնա ասելով. «Կարապետ վարդապետ, բերնիցդ առիւ է հոտում» (հոտի առիւ ի բերանոյ քումմէ), եւ Շահնազարեան անդէն յանդիմանէ յաւելուլ զպատասխանի, թէ «վեհափառ Տէր, Ձեր բերնից էլ սխտոր է հոտում»: Եւ զիտացեալ զբարկութիւն եւ զվրէժխնդրական բարս Ներսիսի, ի նմին զիշերի ի պաշտին եւ ի փախեալ Կարապետ վարդապետ Շահնազարեան ի Տըվ—

խեաց անցեալ ընդ Բամբակաձոր եւ ընդ Աղեքսանդրապօլ (Գիւմրիւ) ի սահմանս Թուրքիոյ, թէպէտ եւ Տ. Ներսէս Կաթողիկոս փութացաւ դրել Պատրիարք-Եպիսկոպոսի Կ. Պօլսոյ եւ պահանջեաց վերագարձուցանել առ ինքն զՇահնազարեան, այլ ի նանիր: Խոյս եւ Շահնազարեան եւ էանց յԵգիպտոս եւ անդի յԵւրոպա ըստ խորհրդոց բարեկամաց իւրոց: Թողումք այլում պատեհ առթի զանցս Կարապետի որ ի Կ. Պօլիս:

Հարկ է յաւելուլ խոստովանել, զի ոչ սակաւ էին մեղապարտութիւնք Կարապետի, մանաւանդ ի գործս զաղթականութեան Հայոց ի Կարնոյ եւ ի չրջակայից, ի յափշտակութիւնս արծաթեղինաց, զգետտուց, դրամոց, ձեռագիր մատենից մանօրէից եւ եկեղեցեաց առթիւ զաղթականութեան, սակս կուրսմիտ եւ անհետատես ծառայութեանցն ի նպաստ ուսաց, յորպիսիս ոչ արդարանայր եւ Ներսէս մանաւանդ առաւել ծանրանային պատասխանատուութիւնք եւ դատապարտութիւնք, եթէ արեցուք ի քննութիւն, ի բազդատութիւն եւ ի վճիռ, սակայն ոչ էին ծանրակշիռ եւ նշանաւոր ամբաստանութիւն ըստ նորոգ քննութեանդ, եւ ոչ վայելէր Կաթողիկոսի հետեւել ամօթարեր վրէժխնդրութեանց եւ ապարդիւն ժամավաճառութեանց՝ բարձի թողի արարեալ զկենսական խնդիրս եւ զպէտս Եկեղեցւոյ: Ազգի: Ըստ այսմ ապա տարրե՞ր էին եւ օտարոտի առիթք վրէժխնդրութեան Ներսիսի, որպէս տեսցի ի ստորեւ:

Յաւուրս Կաթողիկոսութեան Տ. Եփրեմայ եւ Առաջնորդութեան Կարապետ Եպ.—ի ի Կարին, յորժամ էր Ներսէս Եպիսկոպոս ի թեմակալութեան Վրաստանի եւ Իմէրէթի (Թիֆլիզ), պատճառեալ Ներսիսի զնորոգութիւնս էջմիածնական կալուածոց որ ի Տիփլիս, խնդրէ Հասուցանել ինքեան զէջմիածնական զարդիւնս եւ զգրամս որ ի Կարնոյ եւ ի չրջակայից: Որում պատասխանէ Կարապետ Եպիսկոպոս եւ խնդրէ զհրաման—կոնդակ կամ զգիր Վեհ. Հայրապետի առ ի Հասուցանել ինքեան Ներսիսի զպահանջեալ զգրամս: Եւ այսպիս մնայ ապարդիւն թուղթ Ներսիսի:

Դարձեալ, Ներսէս ի կաթողիկոսանայ իւրում, յորժամ հաւարեալ էին Եպիսկոպոսունք, թեմակայր, ընդ որս եւ Կարապետ Եպիսկոպոս, առթիւ կաթողիկոսական օժման (*), Ներսէս յայտնէ զիղձ եւ զնպատակ իւր առ ի վերարանայ զաւերակ առուս Տալմայի ի պէտս ոռոգման մեծատարած հողոցն ամայի մնացելոց ի Վաղարշապատ զեղջ ի հարաւային կողմ եւ հանդէպ Ս. Հռիփսիմեանց մանուկ՝ չուրջ զարօտատեղեօք, մինչեւ ցտահմանս Խանգարած եկեղեցի անուանեալ վանուց Ս. Լուսաւորիչի աւերակ մնացելոց ի դարուց հետէ: Տարածու-

Թիւն ամառի հողոց հասանէ ց400 խալուարաչափ: Եթէ նորոգէր Տալմա առու առեալ զճուր ի Հրազդան գետոյ, ի սահմանս եւ մերձ Երեւանայ՝ ըստ հնոյն ոչ միայն ստորանէր գհողսզ եւ արգիւնաւորէր յոյժ, այլև նպաստէր այգեաց եւ այլոց պիտոյից Ս. Էջմիածնի: Միանգամայն դիւրագոյն էր յանժամ յաղթել կառավարական նենգամբառութեանց ե թելազրութեանց որոց ունկնդրէին մահմէտական-պարսիկ բնակիչք սակաւաթիւք եղեալքն ի Հէնս ճանապարհաւ Տալմայի եւ ի մերձաւորագոյն յեղերս Հրազդան գետոյ (Ձանդի):

Կարապետ Եպ. ինդրէ ի Ներսիսէ յանձնել ինքեան զնորոգութիւն Տալմայի եւ զվերահաստատութիւն առուի ի շինել սեփական արգեամբ իւրով առանց պահանջելոյ զգանկ մի անգամ ի Մայր Աթոռոյ: Իսկ Ներսէս Կաթուղիկոս պահանջէ յանձնել ինքեան զգրամս համաձայն զնահատութեան մասնագիտաց արուեստաւորաց եւ ինքն տացէ շինել: Եւ Կարապետ մերժէ քաղաքավարութեամբ իմն, գիտացեալ քաջ, զի Ներսէս ունէր վատնել յայլ պէտս, հնարեալ զայլ եւ այլ առիթս:

Յաւել ի վերայ այսպիսեաց անձից եւ զինդիրս կուսակցականս ըստ անցելոց եւ ըստ նորոց յընարութիւնս եւ ի գործս կաթուղիկոսաց, ընդ անձնական կրից, որք բաւական իցցին այլեւս մեկնել զառիթս եւ զոգի պատրուակեալ նախանձախնդրութեան եւ ուղղամբառութեան Ներսիսի:

Ասասցուք ի փակագծի: Ուր ուրեմն յաջողեցաւ Ներսիսի տապալել զԿարապետ՝ արդարեւ զո՛րժ մեծ՝ բարձիթողի արարեալ զկենսական շահս Ազգի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց, միանգամայն Մայր Աթոռոյ, զողցես համաձայն դիւանագիտական խարդաւանութեանց իշխան Վարոնցոյի եւ կնոջ նորա: Սակայն կամի՞ք համառօտել զբանքս մեր, թէպէտ բազում են այսպիսի անցք եւ գործք Ներսիսի արժանիք հետադատութեանց, քննութեանց եւ դատապարտութեան, եւ մեք ոչ կամի՞ք ընդհատել ընդ երկար զշար պատմութեանս:

Մինչ այս, մինչ այն ետես Վեհ. Տ. Ներսէս Կաթուղիկոս, զի երկարաձգի գործ քննութեանդ, եւ սպասեալ մնացին երկոքին եպիսկոպոսացուք, Գէորգ ի Պրուսայէ եւ Դաւիթ ի Ս. Երուսաղէմէ, որ յախուռն բանիւք պահանջէր զվճռական պատասխանի, խոտացաւ սոցա փութայ երթալ ի Ս. Էջմիածին, եւ յետ եպիսկոպոսական ձեռնադրութեան վերադառնալ ի նորոյ ի Թիֆլիզ, եւ շարունակել զքննութիւն եւ զդատ Կարապետ Եպիսկոպոսի:

Գէորգ հաւասարապէս էր սիրելի Ներսիսի եւ Կարապետի, ընդ որս տեսակցէր յաճախ: Իսկ Ներսէս յաւելեալ օր աւուր զհամարում

իւր եւ զվստահութիւն, յաւուր միում ասէ պարզապէս, եթէ «Հակա-
ռակ դայթակղեցուցիչ թղթոց Մատթէոս Պատրիարք-Եպիսկոպոսի
Կ. Պօլսոյ՝ հաւանեալ եմ յոյժ ընդ վարս, ընդ բարս, ընդ խոհեմու-
թիւն եւ ընդ փորձառութիւն քո»: Մերթ Գէորդ անպատրուակ իմն
բանիւք պարզէր զկարծիս իւր ըստ խնդրոց ոմանց առ Ներսէս, որ եւ
հաւանէր: Օրինակ իմն:

Գիտացեալ եւ հետազօտեալ Գէորգայ, զի հայք ստիպեալ են զը-
նոյ անուր ի ռուս արտօնատէր-կապալառուէ զմոմս ի պէտս եկեղե-
ցեաց, մինչ պարտ էր Հայոց ինքնին պատրաստել զմոմս ի շահս եկե-
ղեցեաց իւրեանց, որպէս առնեն եւ ազատ են Հայք ի Թուրքիա, ա-
ռաջարկէ Ներսիսի արդիւնաւորել զայս խնդիր յօգուտ եկեղեցեաց
Հայոց: Հաւանի Ներսէս, եւ պատուիրէ Գէորգայ ասել զայս բան ի
ներկայութեան իշխան Վորոնցովի, որպէս եւ ասէ, յաւուր միում
տարեալ ընդ իւր զԳէորդ առ Վորոնցով: Եւ յետ ոչ բազում ժամանա-
կաց յաջողի Ներսիսի կարգադրել զայս խնդիր՝ հաստատեալ զհայ-
կական մենապաճառ մոմի յատուկ վասն եկեղեցեաց Հայոց ի Կոյ-
կասեան սահմանս, որ շարունակէ մինչեւ ցայսօր եւ ապահովէ զոչ
սակաւ շահս ի պէտս թեմօրէից եւ եկեղեցեաց Հայոց:

Միանգամ Ներսէս ի տեսակցել իւրում ընդ Գէորգայ առթիւ ի-
ւրիք, պարծի, զի ինքն է՝ ալքը մեմաաք փաթրիքի, կարծելով զի Ալ-
քը ձեմաաք նշանակէր զվեց ազգ: Գէորդ բացատրէ նմա, զի ոչ
պատուարեր է տիտղոսդ, որ նշանակէ զվեց ժողովուրդ կամ զանա-
խումբ (օտալար), եւ պատմութիւնն պարզէ զխնդիրդ, զի Յովակիմ
Եպ. Պրուսայու՝ յաւուրս թագաւորութեան Օսմ. Ֆէթիհ Սուլթան
Մէհմէմէտի յառնուլ նորա զմայրաքաղաքն Կ. Պօլիս եւ ի փոխադր-
րենն անդր զգահն կայսերական, բստ հրամանի նորա տեղափոխի ի
Պրուսայէ ի Կ. Պօլիս տարեալ ընդ իւր զվեց տունս Հայոց, որք ոչ
էին իսկապէս տունք, այլ օտալար անուամբ խաւմք իրրեւ զվանս
բաղկացեալ ի բազում սենեկաց յաճուկ միայարկից, յորս բնակէին
ըստ հնոյ սոյորութեան բազում բնտանիք, որոց թիւ անցանէր յա-
ճախ առաւել քան դիսուն, որպէս եւ վեց տունք բստ անուանց այլա-
ձեւ տանց իւրեանց որ ի կողմն Մուրադիէի Պրուսայու՝ հիմնեն ըզ-
նոնչչափ տունս ՕՏԱԼԱՐ (սենեակք) անուամբ, եւ ի վերայ նոցա
կարգէ Սուլթան Մէհմէմէտ ի բաթրիք – Պատրիարք զՅովակիմ Եպ.
գսիրելին իւր ի հակակշիռ Յունական Պատրիարքին:

Սթափեալ Ներսիսի ի բանիցդ Գէորգայ, փութայ մերժել եւ ա-
սել զախաղոսդ:

Արդ՝ Ներսէս հաւանեալ յաւէտ ընդ խոհեմութիւն Գէորգայ Զա-

նար սիրաշահել եւ մխիթարել զսա, այցելէր երբեմն ի սենեակ սորա, յաճախ տանէր ընդ իւր կառօքն կաթուղիկոսական ի շրջելն եւ յայցելելն այսր անդր, սակայն կամեցաւ այլեւս փութալ վերադարձուցանել զնա եւ զընկերն եպիսկոպոսացու: Վասն որոյ սկսաւ տեսանել ըզպատրաստութիւնս կարեւորս առ ի լինել ուղտոյ:

Համաձայն հրամանի Նորին Վեհափառութեան եւ Հայրապետի Լեկալ հասեալ էին մեծադիր-ուղեւորական կառքն կաթուղիկոսական հանդերձ վեցիւք կառածիովք եւ այլովք երիվարօք եւ բեռնակրօք ի Ս. Էջմիածնէ, ունելով եւ զյատուկ կառապանս եւ զձիապահս: Ս. Հայրապետ առանց պահանջելոյ զձիս կառաց յարբուսական սուրիանդակութեանց եւ ի պաշտօնական իջեւանաց (ստանցիա), Էջմիածնական միջոցօք եւ ի ճանապարհ ըստ պատշաճի ի 24ն Յունիսի (1848), առեալ ի կառս իւր զԳէորդ վարդապետ զսիրելին իւր նորածանօթ, զբաղելով ընդ նմա ի շահեկան խօսակցութիւնս եւ ի զրոյցս զճանապարհացն: Հարկ է յաւելուլ, զի Հայք զիւրօրէից դատանելոց զճանապարհաւ ընդ որ անցանէր Վեհ. Հայրապետ, սկսեալ ի Տփիսեաց, զանխեալ զձորն եւ զգծուարանց լեռոն Տէլիքանու, մինչեւ ցՍ. Էջմիածին, հանդերձ գործակալովք եւ եկեղեցականօք փութացին զիմաւորել ըստ սովորութեանն կարգի Սրբութեան Նորին ըստ արժանւոյն, ուղեկցեալ ըստ իւրաքանչիւր սահմանս:

Յետ անցանելոյ զլեռոն Տէլիքանու, որոյ յարեւելեան-հարաւային կողմն է լճակն Գեղամայ եւ անապատն Սեւանայ, հասեալ Վեհ. Հայրապետի հանդերձ իւրայնովք ի 26ն ամսոյ, եմուտ հանդիսիւ յանապատն եւ զիշերեաց անդ: ...

Էին յայնժամ յանապատիդ հռչակաւորի վեղարակիրք առաւել քան զ15 ընդ վանահօր, եւ խառն Միարանք եւ աշխատաւորք առաւել քան զ30, եւ ծառայէին եւ պաշտէին ըստ հնոյ կարգին զպարտս իւրեանց, այլ տկարանային քարոզել եւ հովուել զժողովուրդ շրջակայից իւրեանց (Գեղարքունւոյ), թէպէտ ոչ մոռանային պահանջել եւ մթերել զհողեւոր եկամուտս իւրեանց եւ զպլուղիս: Թուի մեզ, զի էր յայնժամ զժողովիւն ինչ յանապատի, որ առթէ զգայրոյթ Նորին Սրբութեան, միանգամայն արտասանէ ի կարգի բանից իւրոց եւ զայս իբրեւ յանդիմանական, եթէ «բարօք էր զի եթէ ուտէիք զմիս չորքոտանւոյ քան զմիս մարդոյ»: — Ունի անապատդ հանդէպ իւր յեզերս լճակի զհայաբնակ զիւղ մի սեփական Գումանոց անուն: Ի յաջորդ աւուր շարունակեաց Վեհ. Հայրապետ զճանապարհ իւր եւ ի 28րդ աւուր ամսեան եմուտ հանդիսիւ մեծաւ ի քա-

դաքն Երեւան, գիշերեաց ընդ Գէորգայ հիւրասիրեալ ի տան Սիմէօն Սուլթանի (Գեղամեան) :

էր 1 Յունիսի, Վեհ. Հայրապետ եհաս եւ եմուտ ի Ս. Էջմիածին ըստ սովորական կարգի եւ թափօրով եկեղեցականաւ :

ՅՅն ամսոյն սկսաւ ջերմել Գէորգ վարդապետ, որպէս ջերմէին Պետրոս վարդապետ եւ սպասաւոր իւր : Զոր լուեալ Ս. Կաթողիկոսի՝ փութեայ ի 11 Յունիսի, ի Կիւրակէի ի բարիկենդանի պահուց վարդապետի, ձեռնադրել զԳէորգ եւ զԴաւիթ Կարնեցի - միաբան Ս. Երուսաղէմի - զվարդապետս յԵպիսկոպոս համաձայն կանոնի եւ արարողութեանց Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ :

Միանգամայն յորդորէ զԳէորգ նորապսակ Եպիսկոպոս եւ զԴաւիթ Եպիսկոպոս, որ ազատ մնայր ի ջերմախտէ, փութալ ելանել յուզի եւ օղափոխութեամբ ազատել ի հիւանդութեանց, ըստ որում էր տակաւին օղ Էջմիածնի տապալին եւ ծանր յոյժ յամառայնի :

ԳԼՈՒԽ ԺԴ.

ՅԱՂԱՔՍ ՄԵԿՆԵԼՈՅ ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի Ս. ԷՋՄԻԱԾՆԷ

ԵՒ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՅ Ի ՊՐՈՒՍԱ.

Համաձայն յորդորանաց Տ. Ներսէս Կաթողիկոսի, եւ առանց մատուցանելոյ զառաջին Ս. Պատարազ Եպիսկոպոսական ի Ս. Սեղանոջ Իջման, զժուարութեամբ իմն նստաւ Գէորգ Եպ. յերիվար եւ մեկնեցաւ ի Ս. Էջմիածնէ ի 14ն ամսոյ, եւ դանդաղ գնացիւք հասանէ եւ մնայ յՕշական գեղջ Հայրապետանցի, որ իբր 1-1½ ժամաւ հեռի գտանի ի Ս. Էջմիածնէ ընդ հիւսիս-արեւելս :

Ի յաջորդ աւուրն գիշերէ յԱշտարակ գեղջ, որ հեռի է յՕշականէ իբր միով ժամաւ :

Այսպիսի գնացիւք տակաւ առ տակաւ հատեալ զուղին, անցեալ ընդ Ապարան դաւառակ օղատուն յարեւելեան ստորոտս Արագածու, ի 18ն Յունիսի հասանէ յԱղեքսանդրապօլ - Գիւմրի քաղաք ի ներքին Ծիրակի : Կացեալ յԱռաջնորդարանի զաւուրս ինչ տայ դարմանել զանձն, որ տկարացեալ եւ թուլացեալ էր յոյժ : Սիրական Աղայն ոչ մոռանայ զԳէորգ Եպ. :

Ոգի առեալ զոյլն ինչ, ի 28ն Յունիսի մեկնի եւ ուղւոյ լինի եւ անտի շարունակէ զճանապարհ իւր հանդարտ իմն ուղեգնացութեամբ օակս տկարութեան անձին, որ տակաւ բարեփոխէր :

Անցեալ Գէորգ Եպ. - ի ընդ Ախուրեան գետ եւ գիշերեալ ի բազում գիւղօրայս սկսեալ յարեւտեան սահմանաց Կարուց, եհաս ի Կարին,

յորմէ ի Բարերդ, եւ անդի ի Տրապիզոն ի 22ն Օգոստոսի, եմուտ անդ ի Մաքրանոց (քարանթին) :

Աւարտեալ զպայմանաժամ մաքրանոցական, եւ յետ վաճառելոյ զերիվար իւր եւ զաւելորդ կազմածս ուղեւորականս, ի՞նչ Սեպտեմբերի նստաւ ի շոգենաւ, եհաս ի Կ. Պօլիս յ8ն ամսոյ, եւ զնաց ի տուն իւր առ ի հանդիստ ատնուլ զաւուրս ինչ, ոչ մոռացեալ զպաշտօնական պարտաւորութիւնս հանդէպ Պատրիարքարանի եւ բարեկամացն :

Յաւուրս յայտոսիկ ծանրացեալ էին դժգոհութիւնք եւ ամբաստանութիւնք զՄատթէոս Եպ. — Պատրիարքէ, եւ Ամիրայք եւ երեւելի ազգայինք յորդորէին զնա առ ի հրաժարել ի պատրիարքութենէ, որպէս եւ ի 12ն սեպտեմբերի, զնացեալ յատկապէս առ Մատթէոս խնդրեցին զհրաժարական նորա, որ մերժեաց, միանգամայն ջան կալաւ յուզել զխոսովութիւնս եւ զերկպառակութիւնս, մինչեւ եկն պաշտօնական ոմն ի Բ. Դրանէ Օամ. Կայսերական Կառավարութեան, պահանջեաց եւ ընկալաւ յետս զնշանն պատրիարքական, եւ այսպէս հրաժարեցուցին զնա ի պատրիարքութենէ ի 16ն սեպտեմբեր ամսոյ :

Ի նմին աւուր եկին պարազլուխ ամիրայք եւ զխաւորք Ազգի առ Գէորգ Եպ.՝ կամեցեալ ընտրել եւ նստուցանել զնա ի պատրիարքութիւն, որոց ետ սա զպատասխանի բացասական, մինչեւ շարժել ըզպարմանս նոցա եւ զայրոյթ : Իսկ յամսեան Հոկտեմբերի ընտրեցաւ ի նորոյ Յակոբոս Արքեպիսկոպոս Առաջնորդ Ամասիու — Մարտունու ի Պատրիարք, յամսեանն Նոյեմբերի եհաս ի Կ. Պօլիս եւ ստանձեաց զպաշտօն պատրիարքութեան ըստ սովորական կարգի :

Կազդուրեալ ոչ սակաւ Գէորգ Եպ. կամեցաւ ոչ սակաւ մնալ ի Կ. Պօլիս, ի 28ն Սեպտեմբերի մեկնի եւ աստի, ուղեկցութեամբ հրաւիրակացն եկելոց ի Պրուսայէ, գիշերէ ի Կէմլէյիկ յունական գիւղաքաղաք — նաւահանգստի, եւ ի յաջորդ աւուրն ուղղէ զուղին ի Պրուսա :

Խնդացեալ եւ ողեւորեալ Հայոց Պրուսայու, դիմէին ընդ առաջ նորապսակ թեմակալ Առաջնորդի իւրեանց, բազումք եկեալ էին ի Կէմլէյիկ, որք ստուարացեալ էին յԱթըճըլար, բազումք հետիոտս եկեալ : Անդ եղեալ էին զվրանս, եւ հանդիստ էառ Գէորգ Եպ., վայելեալ եւ զպատրաստութիւնս ինչ ըստ սովորութեան Պրուսացոց :

Մեկնկալ եւ անդի ուղեկցութեամբ ոմանց քահանայից, իշխանապետաց եւ իշխանաց ազգայնոց ընդ բազմութեամբ համակիր եւ եռանդալիր ժողովրդեան Հայոց, եմուտ ի քաղաքն Պրուսա : Էին ընդ Հայոց եւ ոմանք նշանաւոր անձանց օտարազգեաց, որք սիրէին եւ պատուէին զԳէորգ : Ի մերձենալ ի սահմանս Եկեղեցոյ ի Սէք — Պաշը

Թաղի՝ մտեալ ի տուն ուրումն իշխանապետի, զգեստաւորեցաւ Ս. Գէորգ, եւ այսպէս կանգնեալ ի գլուխ մեծահանդէս Թափօրի եկեղեցականի՝ ընդ ամպիռլանեալ՝ ի ձայն երգոց յառաջեաց եւ եմուտ ի Ս. Աստուածածին եկեղեցի, որ զարդարեալ պանծայր լուսավառ ընդ գալուստ փեսայի իւրոյ:

Անդ էր տեսանել զբազմութիւն Հայոց ի փողոցս, ի տունս, յանցս եւ ի մէջ եկեղեցւոյ, որք արտասոււլից բարձեալ զաղաղակս հրճուլիցս գոչէին զկեցցէս եւ թնդացուցանէին զօրս: Եռայր ժողովուրդ մեծաւ իմն ոգեւորութեամբ, եւ զոգցես իբր երկամեայ կարօտութիւնն մղէր զնոսս ի չափազանցութիւնս ի համակրական ցոյցս:

Յետ Ուրախ եղէ սաղմոսի ի մէջ եկեղեցւոյ, փոխադարձ արտասուօք լցեալ՝ դարձաւ Գէորգ Եպ. առ ժողովուրդ, օրհնեաց զամենեւին զեկեղեցականս եւ զաշխարհականս, զմեծն եւ զփոքրն, զարս եւ զկանայս, փոխանակեաց ամենեցուն զսէր եւ զչնորհակալութիւն: Եւ խոստացեալ ի յառաջակայ Կիւրակէի խօսել ընդ երկար, թէպէտ ունէր խօսել դարձեալ ոչ աւելի քան զքսան վայրկեան կամ զկէս ժամ՝ համաձայն սովորութեան իւրում, սասց զպահպանիչն, զՀայր մեր, եւ տալով զաջ իւր կարօտակէզ խուռներամ ժողովրդեան՝ որչափ լինէր հնարաւոր, ել յԱռաջնորդարան հանդիսիւ: Եւ անդ տեսակցեալ սակաւ ինչ, օրհնեաց զներկայս եւ արձակեաց ի խաղաղութիւն:

ԳԼՈՒՆ ԺԵ.

ՅԱՂԱԳՍ ԶԵՌՆԱՐԿՈՒԹԵԱՆՑ ՈՄԱՆՑ ԵՒ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԵԱՆՑ
ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Աւարտեալ սորա զբաղաքավարական եւ զպաշտօնական այցելութիւնս առ կուսակալ փաշայ, առ թեմակալ Յունաց, առ Քահանայապետ-Ազգապետ Հրէից, առ գլխաւոր աւագանի Օսմանեան եւ առ հիւպատոս Անգղիական, Գաղղիական, Աւստրիական եւ Պարսկական (Սարգիս աղայ Պարոնեան) եւ այլն, փոխադարձաբար, ձեռն ի դորձեարկ ոգեւորութեամբ մեծաւ, հետեւեցաւ ի նորոյ պայծառութեան եկեղեցաց, բարեկարգութեան դպրոցաց, հաւատարիմ եւ պարտաճանաչ պաշտօնակատարութեան քահանայից, ի պահպանութիւն օրինաց եւ կանոնից, ի բարձումն զեղծմանց եւ շուայութեանց, յարդար բաշխումն արքունական տրոց, ի կանոնաւորութիւն ազգային վարչական ժողովոց, հոգարարձութեանց եւ խորհրդոց, հիւանդանոցի, ի նորոք յաւելումն եւ ի հաստատութիւն ոմանց կանոնաց ըստ նշանատուութեան եւ հարսանեաց, ըստ տօնախմբութեանց եւ ըստ շնորհաւորութեանց:

Յերկարամտեայ բացակայութեան ստրա խանգարեալ էր բազում ինչ եւ յաւելեալ էին արդար դժգոհութիւնք ժողովրդեանն բարեպաշտի :

Նախ՝ լրացոյց զպակասեալ անդամս երկուց ժողովոց՝ իշխանապետաց եւ իշխանաց, հոգաբարձութեանց զպրոցաց, աղքատաց եւ հիւանդանոցի, եւ հաստատեաց ըստ տեղական սովորութեան զնոր եկեղեցականս (նախ քան զհաստատութիւն թաղական խորհրդոց ըստ ներկայ Աղգ. Սահմանադրութեան) :

Վերահաստատեաց զկանոնս եւ զկարգադրութիւնս որ զպրոցաց յաւելեալ ընդ Կաղղիարէնի, զուսմոնս ազգային պատմութեան եւ աշխարհագրութեան՝ որչափ ներէին միջոցք, յաւելեալ զնոր ձեռնհաս ուսուցիչս ի Կ Պօլսոյ : Հետեւեցաւ արդիւնաւորութեան երաժշտութեան եւ ներդաշնակ երգեցողութեանց յեկեղեցոյ : Յաճախեալ յայցելութիւնս դպրոցաց, հսկէր դասուց, բարեկարգութեան, պարկեշտութեան եւ բարի վարուց մանկանց, կրօնաբնութեան, եւ հաւատարիմ եւ արդիւնաւոր պաշտօնավարութեան պաշտօնէից : Հետեւէր ուշադիր հայախօսութեան թուրքախօս մանկանց երկուց սեռից՝ հաստատեալ եւ ճոխացուցեալ զըրուցատրական կրթութիւնս :

Համաձայն սովորութեան Միջագեղջ Կ. Պօլսոյ շարունակելոյ ի Նեխտառիմեան դպրոցէ Ալփատանցի հաստատելոյ ի բարեյիշատակ ձանիկ Ամիրայէ Փափազեան յաւել եւ հաստատեաց եւ ի Պրուսա, եւ ըստ այսմ յերեկոյս ճրագալուցաց Ս. Մննդեան եւ Զատիկի՝ մանկունք դպրոցականք ընթեռնուն զգիրս մարգարէականս՝ փոխ ի փոխ եւ կոյս առ կոյս՝ արականք կացեալ յաշակողմն բեմի, եւ իզականք ի ձախակողմն, ընդ որ ուրախ եղէ ժողովուրդ յոյժ եւ խուռնեւրամ յաճախեաց ի Ս. եկեղեցի, մինչ յառաջագոյն դային սակաւաթիւ անձինք յերեկոյեան ժամերգութեան եւ ի Ս. Պատարազ ի ճրագալոյցս յեկեղեցիս : Հաստատեաց դարձեալ, զի ի տօնի Սրբոց Հռիփսիմեանց եւ Գայեանեանց կատարեն դպրոցական օրիորդք եւ եթ զժամերգութիւնըս ընդ Քահանայից եւ ընդ հասակաւոր դպրաց եթէ յերեկոյեան Նախատօնակք եւ եթէ յառաւօտու մինչեւ ցվեբջ Ս. Պատարազի : Մոմակալք եւ փոխասացք լինէին յարականաց : Եւ այսու փառաւորէին եւ զտօնախմբութիւն Ս. Հռիփսիմեանց Դպրոցի օրիորդաց : Միանպամայն լնոյր ժողովուրդ, մանաւանդ իզական սեռն զս. եկեղեցի :

Կանոնադրեաց եւ ընդարձակեաց զհրահանգս, զի երկսեռ մանկունք յետ ճաշու պարապեսցին ի զբօսանս իբր ժամ մի՝ արականք ի պարտիզի որ առաջի Պօղոսեան Դպրոցի եւ իզականք ի ներքին բացօթեայ բակի օրիորդաց դպրոցի որ ի յետսակողմն և կից եկեղեցոյ :

Յաւել հաստատել զնոր եւ զընդարձակ զմտենադարան ի վարժարանի :

Հաստատեաց, զի հասակաւորքն դպիրք ուսցեն զշարականս ի դասատուէ (ի Պետրոս շարականագէտ եւ քաղցրաձայն վարժապետէ Քեահեանի Պրուսացւոյ), և այնպէս երգեսցեն յեկեղեցւոյ կանոնաւորապէս եւ ներդաշնակաբար : Էին ի Պրուսա եւ այլ շարականագէտք ոմանք քաղճրաձայնք եթէ յերեւելեաց եւ եթէ յարհեստաւորաց, հրաւիրեաց եւ զնոսա յերգեցողութիւնս ի Կիւրակէս եւ ի հանդիսաւոր աւուրս :

Ետ գրգիւռ եւ նախանձ բարի եկեղեցւանաց, զի ջան կալցին ոչ եթէ ի հաւասարակշռել միայն զեկամուտս եկեղեցւոյ՝ յետ վճարելոց զպայմանեալ բաժինս ի պէտս եւ ի կառավարութիւն Դպրոցաց, այլեւ յաւելուլ գէթ զարդիւնարեր զմի կալուած եւ զլիշատակ ի լըրման քառամեայ պաշտօնավարութեանցն : Յորում յաջողեցաւ յաճախ :

Յորդորեաց եւ ողբերկաց զժողովուրդ յաճախել ի կտակարարութիւնս ի պէտս եւ ի պայծառութիւն եկեղեցւոյ, Դպրոցաց և Հիւանդանոցի :

Հետեւեցաւ հաստատել, զի ազգային բաղանիք լիցի նսարմ բաշա համաձր անուանեալ կալուածն Եկեղեցւոյ, որ գտանէր ի համանուն թաղի յայնկոյս ի ձախակողմն ձորոյ Կեօֆ-տէրէի, ի կողմն որոյ սակաւաթիւ էին բնակարանք եւ բնակիչք հայոց, եւ էին զժուարութիւնք երթեւեկութեանց հայոց յայսկուսէ ձորոյն եւ ի վերին թաղից՝ անցեալ ընդ չուկայն Սէք-պաշի կամ Ըրվանդը-Քէօրբիւսիւ, յորըս էին կամուրջք քարուկրեայ, վերջինն կամարակապ ունէր միանգամայն զքարուկրեայ խանութս յերկուս յեզերս ի վերայ ձորոյն-ձորահայեաց՝ եւ ի ձախակողմեան ոտին մտան ընդարձակ ի պէտս չուֆուր մէյխանէ անուանեալ մեծի գինետան :

Սովորութիւն է ի Պրուսա, զի զառաջին շարս երկուս վերնատան կանանց՝ որոշեալ ի քառակուսի կանգունս՝ վաճառեն եկեղեցւանք, եւ որ զնոյ առնուն՝ թողուն ի ժառանգութիւն իւրացւոցն յետ մահուան իւրեանց առանց սահմանափակ պայմանի : Եւ աստի ծնանին յաճախ ի կանայս, նաեւ ի ժառանգակիցս վէճք, կռիւք, աղակակք եւ կռիահարութիւնք անդամ՝ մինչև առիթ լինել խանգարման յաճախ ժամերգութեանց : Լսէին բազմիցս Առաջնորդք եւ ժողովք ազգային զգատս նոցա :

Եւ սոյն այս խնդիր յաւէտ էր քար գայթակղութեան, միանգամայն առիթ զժառանգութեանց ընդ մէջ Առաջնորդաց եւ իշխանաց հանդերձ սարօքն :

Գէորգ Եպ. ջան կալաւ նախ բառնալ իսպառ զմենավաճառ սո-
վորութեանդ եկեղեցւոյ՝ զչարժառիթն յաճախադէպ զժտութեանց
եւ հակառակութեանց, եւ ազատ թողուլ զկանայս կանգնել խաղաղու-
թեամբ ի վերնատան ուր եւ կամիցեն:

Հուսկ ուրեմն առաջարկեաց, զի սեփականութիւն տեղեաց լիցին
ցկեանս որք զնոյ առնուն, եւ յետ վախճանի սոցա մնացեն տեղիք
յազատ վայելումն հասարակաց, բաղխեցաւ եւ այս հակառակու-
թեան եւ խոչընդոտից: Վասն որոյ եթող առժամս զայս ձեռնարկ՝
արգելեալ այլես զվաճառումն տեղեաց կամ զիտխանցումն:

Վերհաստատեաց առաւել ընդարձակ զկանոնս նշանադրութեան
եւ հարսանեաց, ի չորս կարգս վճարմանց որոշեալ, խստիւ պատուի-
րեալ եւ արգիլեալ ի զխտութեանց եւ ի շուայլութեանց զժողովուրդ,
որք հեծէին յաճախ ընդ պարտուք յերեսաց հարսանեաց: Գողցես
ևօթնեակս ինչ տեւէին հարսանիք՝ միով եօթնեակաւ յառաջ սկսեալ,
հանդերձ նուագարանօք եւ կերակրովք եւ այլն: Սահմանեաց զերիս
աւուրս առնել զհարսանիս սկսեալ յերեկոյէ շաբաթու մինչեւ ցերե-
կոյ երկուշաբթի աւուր յորում միջոցի եւ յաւուր էր ըստ տեղւոյն
սովորութեան առնելոյ զքազվերաւստ, ոմանք առնէին ի միջօրէի,
որպէսզի քահանայք ժամանեացեն եւ այլոց, եւ մի՛ լիցին զժգոհու-
թիւնք:

Արգելեաց խստիւ եւ զարեցութիւնս որ ի հարսանիս, ի տօնա-
լըմբութիւնս եւ ի շնորհաւորութիւնս Ս. Մննդեան եւ Ս. Յարու-
թեան, յորս յաճախէին զէպք անախորժելիք, խոռովութիւնք եւ զըժ-
զոհութիւնք ի տունս եւ յընտանիս: Առաւել եղև նախանձախնդիր
ի կրթութիւն քահանայից, որոց պատուիրէր յաճախ եւ խոհեմու-
թեամբ հետեւել անթերի կատարման պարտուց իւրեանց, միանգա-
մայն խօսել յանապաղ, մանաւանդ յեկեղեցւոյ, ի հայ-մայրենի լեզու,
յորում ոչ յաջողէր Գէորգ Եպ. եւ վշտանայր յոյժ, մինչեւ հարկա-
զըրել պատժել զոմանս, որ եւ այս լինէր առիթ զըզումանց եւ զըժ-
տութեանց, ցորչափ զժուարիին էր հասակաւոր անձանց ողորմելեաց
ուսանել զհայախօսութիւն:

Մի միայն էր եկեղեցի Հայոց Պրուսայու եւ յայնժամ թիւ քա-
հանայից տասն: Տունք հայոց էին մի հազար երկերիւր (բաղկացեալ
իրբ յ2500-3000 հոգւոյ), որք ոչ բաւականանային հոգալ զնիւթական
պիտոյից քահանայից ըստ արժանւոյն, իսկ պէտք Եկեղեցւոյ ոչ նե-
րէին պակասեցուցանել զթիւ քահանայից: Վասն որոյ քահանայք ո-
մանք պարապէին յերկրագործութիւնս, ունէին եւ պահէին զայգիս,
զթթենիս, արդեամբք որոց օգտէին: Հովուութիւն եւ արդիւնք պան-

զըխտոց՝ որպէս յիշեցաք վերագոյնս՝ էին սեփականութիւն Առաջնորդի, որ յանձնէր միւսում ի քահանայից առ ի հովուել զնոսս. ստանայ Առաջնորդը գրածինս ի գանձանակաց վերաբերելոց ընդհանուր քահանայից, որպէս եւ ի կտակաց: Գէորդ Եպ. յաճախ թողոյր քահանայից գրածինս իւր, միանգամայն պատուիրէր նոցա վարել ընդ ժողովրդեան խոհեմութեամբ եւ քաղցրութեամբ ի կողոպուտս եւ ի տուրս հարսանեաց, ննջեցելոց եւ այլոց: Պատժէր զորոց լսէր գրողոքս ըստ նուիրաց եւ ըստ կամաւոր տրոց, որ եւ առիթ լինէր երբեմն զժողոհութեանց քահանայից: Ըստ մտաւորականին պակասէին քահանայից բարեկրթութիւնք քաղաքավարականք, յորպիսիս էր Գէորդ Եպ. նախանձախնդիր: Արդելոյր նոցա չըջել ի քաղաքի եւ ի մէջ ժողովրդեան՝ առեալ յուսս զվերարկուս իւրեանց փոխանակ ազանելոյ, որպէս առնէին սամիկք եւ հասարակ ժողովուրդք: Էին եւ այլ թերութիւնք այնպիսիք, որոց ոչ ներէր, միանգամայն յետ երբեակ իրատուց սաստէր զըմբոստս եւ պատժէր:

Այսպէս ուրեմն յառաջ վարեալ Գէորդ Եպ. ի զինամս իւր եւ ըզհոգս արթնութեամբ շահէր օր ըստ օրէ զսէր եւ զհամակրութիւն ժողովրդեան, թէպէտ ոչ պակասէին եւ հակառակորդք սակաւաթիւք, կուսակիցք Գապախնեանց, ընդ որոց յաճախ խոթոէր Գէորդ սակս ազգային խնդրոց, եւ Մատթէոս աղայ Գապաքճեան հետեւէր լինել ի նորոյ ներկայացուցիչ ի կառավարական ժողովս ի զիմաց Հայոց՝ մինչ չարաչար յուզեալ էր յաճախ զժողոհութիւնս Գէորդայ եւ ժողովրդեան: Եւ զի Սիմէօն աղայ Տէր-Յակոբեան մեծն զզուեալ հրատարէր ի յիշեալ պաշտօնէ, կարգեաց Տ. Գէորդ ի տեղի նորա զայլ ոք (Կարապետ աղայ Ամիրայեան), 1 Յունիսի 1849 ամի, յորմէ զըզուեալ էր Մատթէոս յոյժ եւ խարդաւանէր, դաւադրէր եւ զըզուէր զկուսակիցս իւր ընդդէմ Առաջնորդի:

Յորժամ Գապաքճեան էր ներկայացուցիչ ի կառավարական ժողովոյ, որպէս էր եւ անգամ ազգային վարչական ժողովոյ իշխանապետաց, ջանայր արդիւնաւորել զազդեցիկ դերս յազգային գործս, կապտէր զազգային եկամուտս ինչ, խարդաւանէր ի հոգաբարձութեան աղքատաց եւ Հիւանդանոցի, խանդաբէր զարդար յաշխուժն արքունական տրոց զլիսահարկի հաստատելոյ փոխան Խարաքի ի նրպաստ կուսակցաց իւրոց եւ ի զրկանս ստուարաթիւ ժողովրդեան:

Ուստի սպառեալ էին բարեկամական յորդորք եւ համբերութիւն Գէորդայ, եւ հարկեցաւ հուսկ ուրեմն չէզոքացուցանել զԳապաքճեանս և յայլ գործս և ի խնդիրս, ոչ մոռացեալ յաւէտ փշրել և ըզխարդաւանութիւնս առնն ճարտարի եւ լեզուանուց:

ԳԼՈՒԽ ԺԶ.

ՅԱՂԱԳՍ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆՑ ԳԷՈՐԳԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
Ի ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՍ.

Ըստ նորոգ կարգադրութեանց եւ օրինաց Օսմ. Պետութեան համաձայն հրովարտակի Կիւլիանէի բացարձակ հրամանաւ լուսամիտ եւ հպատակասէր Սուլթան Մէճիտ կայսեր Թուրքիոյ հաստատեալ էր յիւրաքանչիւր նահանգս կառավարական ժողով կեդրոնական ընդ նախագահութեամբ կուսակալ փաշայի, եւ վարէր զընդարձակ իրաւունս ըստ վարչականին, ըստ տնտեսականին, ըստ դատականին եւ ըստ այլոց խնդրոց բազմապիսեաց :

Էին ի նմա ներկայացուցիչք իւրաքանչիւր ազգաց հպատակաց, թէպէտ ստուարաթիւ մեծամասնութիւն անդամոց ժողովոյ բաղկանայր ի Մահմէտականաց, ունելով զայլ եւ այլ դիրս պաշտօնականս այլ եւ այլ անուամբք :

Առաջնորդք եւ ազգապետք հպատակ ազգաց էին բնական անդամք ի ժողովի անդ ըստ նորոգ օրինաց պետութեան, առանց ստանալոյ զոտճիկ ինչ եւ զծախս ի գանձարանէ պետութեան :

Ըստ այսմ կանոնի եւ կարգադրութեան՝ ուրեմն ստանձնեալ էր Գէորգ Եպ. եւ վարէր զանդամակցութիւն նահանգային ժողովոյ (վիլայէթ իտարէխի մէճլիսի), իրրեւ զԱռաջնորդ Հայոց, եւ պաշտպանէր զշահս Հայոց ոչ միայն վիճակի իւրոյ, այլ եւ ընդարձակագոյն համայն նահանգին, յորում էին վիճակք Կուսիկայու, Նիկիոմիտայ, Պանորմայու եւ նման ինչ յԱնկիւրիոյ եւ ի Զմիւռնիոյ ըստ ժամանակին :

Պահէր Գէորգ եւ զսիրայիւր յարարերութիւնս ընդ կուսակալ փաշայից եւ ընդ Օսմանեան աւագանւոյ, որպէս նաեւ ընդ այլոց ազգաց եւ Ազգապետացն մանաւանդ ընդ Յունաց եւ Հրէից :

Եւ ի կարեւոր դէպս համարձակութեամբ իմն պարզէր Տ. Գէորգ զիւր կարծիս առ նոսա եւ ի ժողովս : Առանց խորութեան պաշտպանէր եւ զՕսմանցիս եւ զՅոյնս, զՀրեայս եւ զայլս, ուստի սիրելի գանձն կացոյց բազմաց օտարաց : Սիրէին յոյժ եւ կուսակալք զսա, եւ ախորժ իմն հաճութեամբ ունկնդրէին խորհրդոց եւ կարծեաց սորա :

Յաւուր միում առթիւ իւրք յուզէր ժողովն կառավարական զխընդիր ինչ վարչական ընդդէմ ոմանց պաշտօնէից եւ վիճարանէր : Կուսակալն Նամըզ փաշայ՝ այր զինուորական, արթուն, ժիր եւ խիստ՝ մնայր եւ եթ եւ ունկնդրէր : Տեսեալ Գէորգայ զաշառութիւն ժողովականաց, որ պայմանեալ միացեալ էին կանխաւ, եւ ոչ զօգուտ ժո-

դովբրեան կամ պետութեան պաշտպանէին, ետ զհակառակ կարծիս եւ յամոնեացաւ: Յորմէ զայրացեալ միոյ անգամոյ մահմէտականի քէօր (միականի) շէյի կոչելոյ, անարգէ գիչորդ եւ զՀայս՝ ասելով՝ էրմէնի ինտը քուքուու եւ էրմէնի ինտը իւքէմիշ (կալա հայկական յամտութիւն): Ընդ որ զայրացեալ Գէորգայ կչուէ նմա զյանդիմանութիւն արժանաւոր, մինչեւ փութացաւ միջամտել կուսակալ փաշայն եւ յանդիմանութեամբ եւ անարգանօք արտաքէ ըզէյին ի ժողովոյ:

Յաւուր միում յուղէ զխնդիր վկայութեանց որ առաջի դատարանաց (չէրի) եւ ալլոց, մինչ մերժէին ցայն վայր զվկայութիւնս ոչմահմէտականաց, յորմէ օգտէին անարգար թուրքք, դատաւորք եւ վճռատուք (զազր, միւֆթիւ), օրինազէտք եւ անձինք շահամոլք: Յետ բազում վիճարանութեանց ի կառավարական ժողովի, ասէ, եթէ «իրաւացի էր երբեմն մահմէտականաց լսել զվկայութիւնս մահմէտականաց եւ եթ, որք ըստ հաւատոց իւրեանց ոչ ներէին անձանց խօսել զսուտ, զրպարտել զայլ ոք, առնել զվկայութիւնս ստապատիրս, զորպիսի օրէնս ունիմք եւ մեք քրիստոնեայք եւ վարէակ յաճախ, զիտացեալ զի քրիստոնեայք ատել ատեն զսուտ վկայութիւնս, սակայն արդ զիտեմք հաւատեաւ զհակառակ արգիւնս յերկուս կողմանս միանգամայն եւ ի մի բան. կարէ՞ք դուք ապացուցանել, զի զարդիս մահմէտականք ոչ տան հանապաղ զվարձեալ վկայութիւնս սուտս, մինչ ես կարեմ ցուցանել զբազում օրինակս ի պաշտպանութիւնս առարկութեանց իմոց եւ յապացուցութիւնս»: Ընդ որ պապանձեալ ժողովականաց՝ տան միահամուռ իրաւունս եւ հաստատեն զառաջարկութիւնս Գէորգայ, յորմէ օգտին եւ ալլ քրիստոնեայք եւ հպատակք:

Թողցուք զայլեւայլ խնդիրս թաղականս, շինականս, դատականիս եւ ջրալիս, որք ստուարացուցանեն զկենսագրութիւնս զայս. յիշեսցուք զոմանս ի կարելորաց միայն, որք պարզեն զխնդիրս իրաւաբանականս եւ զկենցաղագէտ ընդունակութիւնս սորա ընդ վարչական հմտութեան:

Չերբակային զոմանս հայս ի զիւրօրէից Նիկոմիտայ՝ ամբաստանեալ, իրր զի տան պաշարս աւազակաց, եւ թէ գողակից եւ կամ զողօնաթաքոյց իցեն: Ուր ուրեք ներկայացուցանեն զայս զատ կեդրոնական կառավարական ժողովոյ:

Գէորդ Եպ. յետ ունկնդրելոյ վիճարանութեանց անգամակցացս համաձայն սովորութեան իւրում, յորժամ կամէին տալ զվճիւր, փութաց պարզել զկարծիս իւր: Նախ պախարակէ զզողս, զգողութիւնս ընդ զողօնաթաքոյցս եւ ընդ պաշարատուս: Ապա առարկէ, զի ի դըժ-

ուարանալ կոաւարութեան ձերբակալել զգոյս եւ զաւազակս, յորժամ պնդեալ են զհետ նոցա խումբ խումբ ոստիկանք եւ պահակք ընդ շինականաց ի բազմաց հետէ, զի՞նչ պարտեն առնել ջաղացսանն եւ ընկերք որ զուրկ գտանին ի զինուոց եւ ի զինավարժութեանց, պարապեն զցայգ եւ զցերեկ ի ջրագացս՝ հետու ի բնակարանաց եւ իր մեծակեացս, վտանգ կրկնակի ծանրանայ ի վերայ նոցա, ի միոյ կողմանէ երկնչին ի կառավարութենէ, որ ունի զօրէնս, սիրէ զարդարութիւն, հետեւի ճշմարտութեան, եւ ի միւսմէ՝ զօղան յաւազակաց, որ ոչ ունին զօրէնս կանոնաւորս, զէնք եւ քմահաճոյք իւրեանց պարունակեն զարդարութիւն եւ զճշմարտութիւն. ոչ մոռացուք եւ զնոսա, որք երբեմն ազդեցին կառավարութեան զյարարելութիւնս եւ զպահանջս աւազակաց՝ խնդրեալ եւ զպաշտպանութիւն, եւ ապա հարուածեցան չարաչար եւ զրկեցան ի կենաց ընդ ընտանեաց իւրեանց եւ ընդ անմեղ անձանց, եւ կառավարութիւն փոխանակեաց զօհից կամ պարագայիցն եւ զոչինչ: Ապա ուրեմն զի՞նչ պարտէին առնել եւ սորա յորժամ աւազակք պահանջէին ի սոցանէ զպաշար կերակրոյ, տալին պահել զգոյսն, եւ զի զործ սոցա էին եւ հանապազ ի բացօթեայ դաշտս եւ ի ճանապարհս, զի՞արդ պարտէին առնել, մերժե՞լ զքմահաճոյս աւազակաց, եւ դայ ապաստան լինել քաղաքաց, եւ յայնժամ ո՞ հոգայր զպիտոյից նոցա եւ ընտանեացն, ունի՞ կառավարութիւն բստ ախոցիկ զկարեւոր օրէնս եւ զհրահանգս յապահովութիւն ախախտեաց բաց ի լակոնական կանոնաց եւ օրինաց վերաբերելոց զոգոյս, աւազակաց, զոգոնաթաքուցից եւ այլն:

Եւս որոյ խորհրդակցեալ վարչական ժողովոյ ի նորոյ, արձակեն անպարտ զձերբակալեալս եւ զբանտարկեալս, զորոց ակնարկեցաք վերագոյն:

Դարձեալ յաւուրս կուսակալութեան հռչակաւոր Նամրզ փաշայի վերոյիշելոյ, յետ մեծի երկրաշարժի Պրուսայոս (1854-5թ.), զորմէ ունիմք զրել ի կարգին, կործանեալ կամուրջ Սէր-Պաշի անուանելոյ, ի վեր քան զԲրկանտր կամուրջն կամարակապ, դժուարութիւն մեծ էր ժողովրդեան, մանաւանդ Հայոց, անցանել յայսկուսէ յայնկոյս (յաջակոյսէ ի ձախակողմն, նոյնպէս ի հակառակն) ձորոյ Կօֆտէրէի եւ երթեւեկել ի շուկայն մեծ, դայ ձախակոյսեան Հայոց ի վարժարանս եւ ի Ս. Եկեղեցի: Եւ երկարէին ճանապարհք սա ի անցանել ի կամրջն Ըրկանտոյ, որոյ ճանապարհածածք կամարն եւ եթ խոնարհեալ ոչնչացեալ էր, կամ ի կրկին կամրջոց Մախսէմի (Մահզէնի) - ջրամբարի, որ եւ հաստատեալ կայ անդ ի հին ժամանակաց հետէ սա ի ամբարել զվտանգաւոր եւ զկործանարար սեւ

ջուր) : Վասն որոյ առաջարկէ Գէորգ Եպ. կառավարական ժողովոյ վերաշինել զկործանեալ կամուրջ Սէթ-Պաշի :

Յետ երկար խորհրդակցութեանց յաղազս զրամական անձկութեանց քաղաքի եւ վարչութեան յերեսաց այլեւ այլ ձախորդութեանց խուժելոց՝ երկրաշարժի, հրկիզութեան, խանգարմանց այդեաց եւ որթատնկից եւ այլոց եւ այլոց, որոշեն վերականգնել զկամուրջը, հաստատեալ առնուլ զհնգալիս փարայս յանցորդաց յերկուց կողմանց մինչեւ վճարեսցեն պարտք վերաշինութեան : Յայնժամ առարկէ Տ. Գէորգ Եպ., եթէ դժուարութիւն մեծ լիցի մանաւանդ աղքատաց, որք գնոյ առնեն ի շուկայէ զկարեւոր պէտս իւրեանց օրականս եւ զհաց, եւ առ ի գնել զօխայ զհաց ի մերձաւորագոյն շուկայէ Սէթ-Պաշույ, որ արժէ 30-40 փարայ, եւ գնեսցեն տասն փարայի միայն, պարտին վճարել յերթեւեկելս իւրեանց ընդ կամուրջ զհնգական փարայս՝ երկիցս, մինչ դժուարութեամբ իմն գտանեն գտան փարայ ի գին քառորդ կամ կիսոյ մասի հօխանց հացի, զիս՞րդ վճարեսցեն դտուրս կամընոյ. եւ եթէ սեփական պարտք քաղաքի կամ քաղաքային վարչութեան են վերաշինել զկամուրջը : Եւ այսպիսի առարկութեամբք ազդէ ժողովոյն եւ տայ փոխել զօրոշումն իւր : Եւ արգարել վերականգնեցաւ կամուրջ Սէթ-Պաշույ յարդեանց քաղաքին (ի 1855-6 թուականս), ի ձեռն Հայազգի ճարտարապետի Սարգիս անուամբ եւ Հայազգի արհեստաւորաց :

Ըստ այոցիկ վայելէր Գէորգ զազդեցիկ դիրս ի ժողովս, եւ զհամակրութիւնս եւ զսէր յօտարազգիս, մանաւանդ Յոյնք եւ թեմակալ Եպիսկոպոս նոցա եւ Քահանայապետն Հրէից եւ Հրեայք ապաւինէին պաշտպանութեան Գէորգայ ի ծանրակշիռ գործս իւրեանց ազգայինս :

Ոչ էր հեռի (իբր 10-15 վայրկեակ հետիտոն) Սէրայ անուն պաշտօնատունն կառավարական Առաջնորդարանէ Հայոց, յայնկոյս — ի ձախակողմն կիօժ-տէրէի, եւ միանգամայն եւ եթ յեօթնեկի մասնակցէր ժողովոյ՝ բաց ի կարեւոր ինզրոց, երթեւեկելով երիվարաւ եւ պատուով, ուղեկցութեամբ քահանայից երկուց, որոց մին տանէր յառաջոյ զցուպ Առաջնորդ — Եպիսկոպոսի բարձրացուցեալ ի ձեռս, — երկուց համազգեստեալ ժամակոչաց իբրեւ բարապանաց եւ ազգային մըքտարի Հայոց (ըստ տեղւոյն ֆէհեա կոչեալ) : Ի պաշտօնական եւ ի տօնական այցելութիւնս ուղեկցէին եւ ոմանք յիշխանաց եւ յերեւելիաց, եւ փոխանորդ — վարդապետ նստեալ ի ձիս (եւ ի վերջին ամս կառօք) : Ոչ միջամտէր սա պաշտպանութեան անձանց եւ զործոց իրաւամբք դատապարտելեաց, միանգամայն զգուշանայր յոյժ ի դժբամական եւ տասանորդական գործս եւ ի կապալառութիւնս : Սիրէր

և. գործէր յաճախ եւ յաւէտ արդարութեամբ եւ նախանձախնդրութեամբ մինչեւ ակնածելի լինել յաչս կուսակալաց, յորոց բազումք էին ի դադարեալ նախարարաց, յեպարքոսաց, ի սիրելեաց կամ մերթ ի քնոայրից Վեհ. Կայսեր, որպիսիք էին հռչակաւոր Բիլա-փաշայ (երբեմն սպարապետ), Սարեմ փաշայ (երբեմն մեծ-եպարքոս, արբեցող), Նամրզ փաշայ, Շէրիֆ փաշայ Եղիպտացի, Սալիլ փաշայ (քնոայր Սուլթանի) եւ այլք:

Ատէր ստել սա եւ զկաշառակույութիւնս եւ զմասնակցութիւնն ի կապալառութիւնս տասանորդաց (միւլթէզիմ):

ԳԼՈՒԽ ԺԷ.

ՅԱՂԱԳՍ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԻՆ ՀԱՅՈՅ ԿՈՒՏԻՆԱՅ

Յետ անկման Առաջնորդութեան Հայոց Իկոնիոյ (Գոնիա), էր երբեմն Կուտինա (Քէօթահ) քաղաք հռչակաւոր եւ ի հնումն Լնթարկէր եւ Պրուսա սակաւաթիւ գաղթականութեամբ հովուութեան Առաջնորդի Հայոց Կուտինայու:

Գաղթեալ էին Հայք ի Կուտինա եւ ի շրջակայս՝ որպէս եւ ի Պրուսա եւ ի մերձակայսն՝ ի կողմանց Կիլիկիոյ եւ Կեսարիոյ, անցեալ ընդ Իկոնիա, յաճախեալ ի վերջին աւուրց Ռուբինեանց: Էսանդ ստուար մատեն մի քիւրթիկ անուն, հաստատեալ ի ՊՂԴ (1443-5) թուոց հայկական, յորում գտանիմք զկարեւոր արձանագրութիւնս եւ զտեղեկութիւնս համառօտս զանձից անցելոց, եւ զթաղաւորաց: Յորում երեւին, զի յաւուրս Սուլթան Մուրատի (Բ.), յամս Տեառն 1421-1444 կանգնեալ են Հայք գաղթականք զառաջին եկեղեցի յանուն Ս. Աստուածածնի ի Կուտինա ջանիւք Կոստանդին Երէցի: Եկեղեցիս այս ընդ երկուց եկեղեցեաց մատնէ ի լուր հանդերձ քաղաքաւ յամի աղգ. ՋԿԱ ի թշնամեաց (1500-1510 թուին):

Ապա ուրեմն հաստատութիւն հայ գաղթականութեան ի Կուտինա հասանէ մինչեւ ՅԺԳ-ԺԴ դարս: Եւ մի զկնի միոյ կանգնեալ զերիս եկեղեցիս եւ վերականգնեալ են զերկուսն միայն յետ հրկիւղութան:

Երեւին հատուկոտոր տեղեկութիւնք ինչ ի Քիւրթիկի զվարչութենէ եւ զվիճակէ Հայոց տեղւոյն, զԱռաջնորդացն կարգելոց ի Կիլիկիոյ եւ զջանից ոմանց քահանայից եւ իշխանաց հանդերձ այլովքն:

Որպէս տեսնի յաճախ, զի ուր հայք բազկանան ի խառն դաղթականութեանց, աստի եւ անտի, մանաւանդ հաստատելով զեկեղեցիս երկուս եւ աւելի, կուսակցութիւնք եւ խռովութիւնք երեւին անխափան, հակառակութեամբք հալածեն եւ կործանեն զմիմեանս: Իսկ

անդ՝ ուր սահաւախտան են դաղթականք եւ ունին զմի եկեղեցի, տիրէ առաւել խաղաղութիւն եւ միութիւն՝ բաղդատեալ ընդ այլս :

Ըստ այսմ՝ ուրեմն, մանաւանդ յետ տեղափոխութեան Յովակիմ Եպ.—ի ի Պրուսա եւ անտի ի Կ. Պօլիս, տիրէր կուսակցութիւն եւ խռովութիւն եւ ի Կուտինա, եւ Առաջնորդք տկարանային սիրաշահել զնոսա, վասն որոյ փոխադարձ ամբաստանութիւնք եւ բողոքք տեղային ի Պատրիարքարան եւ ի վերջին երկուս դարս յաճախէր փոփոխութիւն առաջնորդական, որպէս պարզէ Քիւրիւկն վերոյիշեալ, ուր անձնիւր Առաջնորդ մատամբ իւրով համառօտեալ արձանագրեալ է զանցս իւր եւ զպաշտօնավարութիւն, որպէս տեսաք առօք մերովք եւ ունիմք զպատճէնն կամ զօրինակն Քիւրիւկի :

Պատրիարքարան փորձէ քանիցս միացուցանել զվիճակ Կուտինայու ընդ Պրուսայու, որպէս միացուցեալ է յաւուրս Յարութիւն Եպ.—ի (ի վարդապետութեան) Եղեսացւոյ, եւ այսպէս ազգել Կուտինայու, այլ ստիպեալ է ի նորոյ հաստատել զառանձին առաջնորդութիւն եւ կարգեալ է ի կառավարիչ Գէորգ վարդապետ Էօտէմեչցի, յետ որոյ զՊօղոս վարդապետ Ֆիլիզայ Կ. Պօլսեցի, յետ որոյ զԹովմաս վարդապետ Մարաշցի (վախճանեալ անդ), ապա զՅովսէփ վարդապետ Պրուսացի սկսեալ ի 1835—8է ցամն Տեառն 1848—52 :

Զկնի անցից Յովսէփ վարդապետի Պրուսացւոյ, որ կարգեալ էր յառաջնորդ ի Պատրիարքարանէ ի 1ն Դեկտ. 1848ամի, յետ մահուան Թովմասու մաղձայութեան ախտիւ, յամի Տեառն 1851 ի նորոյ որոշէ Պատրիարքական Վարչութիւն Կ. Պօլսոյ եւ միացուցեալ զԿուտինա ընդ Պրուսայու՝ յանձնէ Գէորգ Եպ.—ի թեմակալի Պրուսայու, ոչ ունկն տուեալ մերժման եւ հրաժարականի վերջնոյս :

Վասն որոյ Գէորգ Եպ. խնայրհեալ ի հրաման հոգեւոր իշխանութեան յամի Տեառն 1851 եւ ի 10ն Մայիսի ուղւոյ լինի եւ չրջի յայցելութիւն համայն վիճակի Կուտինայու սկսեալ ի սահմանաց Պիլէճիկու, նախ քան զբաժանել վերջնոյն որ յաւուրս երկրորդ առաջնորդութեան Յովսէփայ յամուն 1858—59: Սակաւաթիւ էին հայք զիւղօրէից վիճակին Կուտինայու, բացի Պիլէճիկէ, ի Մուրատչայէ եւ ի Թաւշանլը անուանեալ վանքաղիւղէ, որոյ բնակիչք զազթեալ եկեալ են ի Վանք զեղջէ Շամախույ վիճակի: Թուրքարօսս եւ Հայք որպէս Կուտինայու, նոյնպէս Պիլէճիկի, Մուրատչայու (Գաղթողք ի Պարսկաստանէ) եւ այլոց սմանց :

Ի սուղ ինչ ժամանակի չրջեալ ի շէնս, ըստ կարելւոյն ջանայ մխիթարել զփողովուրդ, խաղաղել զնեքքին երկպառակութիւնս,

բարեկարգել զեկեղեցիս, եւ վերագործեալ ի Կուտինայ հաշտեցուցանէ զերկուս կուսակցութիւնս բարձեալ զգժտութիւնս, յաւելեալ եւ զայս, որպէս գրեալ է ինքն Տ. Գէորգ Եպ. ի Բիւքիւլի եւ մեք արձանագրեմք աստ :

« Պարտ անձին համարեցայ ընդ այլ բարեկարգութեան հոգայ
 « եւ զաս, զի եկեալ տեսի զի սակաւաթիւ ժողովուրդք Ազգիս յեր-
 « կուս են բաժանեալ ի պատճառս երկու գոյոյ եկեղեցեաց, եւ քա-
 « հանայք եւ զպիրք բաժանեալ յերկուս, երկուքին եւս լեալ անպա-
 « տեհ, եւ եկեղեցական արարողութիւնք եւ պաշտամունք Սրբոյ
 « Պատարագին անշուք : Ի վառաւորել եւ ի շքեղապարզել զեկեղե-
 « ցական հանդէս, հրամայեցաք երկուս եօթնեակս ի Ս. Աստուա-
 « ծածին եկեղեցւոջ ասնել ժամերգութիւն, եւ երկուս եօթնեակս
 « ի Ս. Թորոս եկեղեցւոջ, եւ ժողովուրդք քաղաքիս հաշտագի միա-
 « համուս ժողովեալ են անդ ուր պաշտամունքն իցեն : Այլ քանզի
 « հեռարձակացն դժուարութիւն լինէր ի ձմեռային եղանակի զնայ
 « յեկեղեցին, եւ ի մերձ կացուցանել զերկուս թաղսն կարօտ էր
 « Եղծեան Սարգսի տանն՝ ընդ որ ճանապարհ քացեալ երկոցունց
 « կողմանց լիցի դիւրութիւն յերթեւեկս : Ուստի խնդրեցաք ի բա-
 « րեղարդ Հովիւեան Յակօր աղայէ (ի Կ. Պօլսոյ) որ զասնէր աստ
 « Գումբանիս պաշտօնիւ (ի զիմաց Անատոլու Գումբանեսար ընկե-
 « րութեան Հայոց, հրովարտակաւոր սեղանաւորաց եւ գրամա-
 « տեարց. Վ.Ն.Մ.), եւ նա իւրով իսկ աղգասիրութեամբ զնոյ սու-
 « եալ զտուն Կարկանան Գէորգին եւ տուեալ ձրի Եղծեան Սար-
 « գրսի, եւ զնեաց ի տանէ նորին տեղ ինչ, որ անտի ճանապարհ
 « քացաք ի դիւրութիւն երթեւեկաց : Ուստի այս ճանապարհ յիշա-
 « տակ է Հովիւեան Յակօր աղայի . Տէր Աստուած օրհնեսցէ զբա-
 « րեպաշտութիւն նորին, եւ լուսաւորեսցէ զհոգիս ննջեցեայոց նորին :
 « Արդ ի յայտ ածել նորին աստուածսիրութիւն արձանագրեալ աս-
 « տանօր կնքեցաք : »

Գէորգ Արքեպիսկոպոս Պրուսայու

« 1851 Օգոստ. 15

եւ Կուտինայու

« ի Կուտինա

Կնիք

Տուեալ Գէորգայ Եպ.—ի եւ զայլ պատուէրս ընդ այլոց զպրօցական եւ եկեղեցական բարեկարգութեանց առ քահանայս, իշխանս եւ առ ժողովուրդ մեկնի ի Կուտինայէ եւ վերագառնայ ի Պրուսայ, եւ առաքէ ի փոխանորդ ի Կուտինա զԵփրեմ վարդապետ Հաւուճեան Պրուսացի ի Միարանութենէ Արմաշու :

Իսկ յամենան փետրվարի 1852ամի, յաւուրս Պատրիարքու-

թեան Յակոբ Եպ.—ի (երբեմն Յակորոս Եղեյոյ), Հրաժարի, Առաջնորդութենէ Կուտինայու պատճառեալ իրաւամբ զգժուարութիւնս ճանապարհաց եւ երթեւեկութեանց, մինչ հարկ էր ի ժամու եւ ի տարածմու փութալ այցելել ի հեռաւոր գիւղս վիճակին այնորիկ եւ պաշտպանել զժողովուրդ յորոգայթից պապականաց, որը նորոգիմն ոգևորութեամբ ըստ թելադրութեանց Հասունեան Գերապայ-ժառի գուն զորձէին սունել զեկամուտս, որսալ զմիամիտս պատրուակեալ ազատել յարքունական տրոց, եւ այսպէս որոմնեալ եւ յուզեալ զգժուութիւնս ի զիւզօրայս: Սակայն Պատրիարքարան մերժեաց ի նորոց զհրաժարական սորա: Պնդեաց սա եւ յաջողեցաւ սմա թողուլ զԿուտինա ի Յունիսի:

Եւ զի առթիւ յուզմանց խարդաւանէին պապական քարոզիչք եւ ի Թիւրքմէն գեղջ ի վիճակին Կուտինայու, եւ բողոքք Հայոց հարազատաց ընդ զէմ հարստահարութեանց սակաւաթիւ ուժացելոցն հայոց ի պապականութիւն եւ ժողովրդապետի նոցա ստիպեալ էր զՊատրիարքարան կարգել զքննութիւն, վասն որոյ յամսեանն Մարտի (1852) փոխանորդ պատրիարքական (վէքիլ) Թադէոս վարդապետ (ապա Եպիսկոպոս) թէքիրտազցի Եկեալ ի Պրուսա, զնաց անդր ընդ քննիչ էնէզ Էֆէնտի որ ի զիմաց Օսմանեան կառավարութեան, որք յետ աւարտելոց զքննութիւն իւրեանց եւ հաստատելոց զխարդաւանութիւնս եւ զմեղադրութիւնս պապականաց եւ ժողովրդապետի նոցա, վերադառնան ի Պրուսա եւ ի նորոյ հիւրասիրէ Գէորգ Եպ. զԹադէոս վարդապետ, զնիկողոս Եպ. Սսեցի քաջաբարոյ (որ երբեմն ձեւացաւ կաթուղիկոս ինքնազուխ) եւ զԳալուստ զբազիր յԱռաջնորդարանի, ի 15ն Ապրիլի: Զկնի տասն աւուրց մեկնեցաւ վերադառնալ ի Կ. Պօլիս:

ԳՂՈՒԽ ԺԸ.

ՅԱՂԱԳՍ ԳԱԼՍՏԵԱՆ ՍՏԵՓԱՆՆՈՍ—ԱՂԱԿՆԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
Ի ՀԱՆՔԱՋԵՐՄՈՒԿՍ Ի ՊՐՈՒՍԱ.

Երբեմն Պատրիարք Կ. Պօլսոյ, առաջնորդն Արմաշու եւ Նիկոմիտայ Տ. Ստեփաննոս—Աղանի Արքեպիսկոպոս Պրուսացի կանխաւ գրեալ էր եւ ազգարարեալ Տ. Գէորգ Եպ.—ի սակս տկարութեան իւրոյ, որպէս եւ 17 Յուլիսի (1852) Եկն Եհաս ի Պրուսա ի հայրենի իւր, զոր հիւրասիրեաց հոգևոր որդի իւր Գէորգ Եպ. ի Պօլսու—Կիւզլի հանքաջերմուկս ի Չէքիրկէլէր գեղջ մեծաւ պատուով: Առթիւ Գալստեան Աղանոյ ոգևորութիւն մեծ տիրէր ի Հայս Պրուսայու, միանգամայն ուրախացեալ էր յանչափս Գէորգ Եպ.:

Ոչ թողոյր զպակասութիւն ինչ ի հիւրասիրելն զհողեւոր ծնող իւր, յորում մըցէին եւ եկեղեցականք ընդ Առաջնորդի իւրեանց :

Սակաւ ինչ կազդուրեալ Ստեփաննոս Արքեպ. հասնեցաւ ի խընդիրս Գէորգայ եւ Հայոց, եւ էջ ի Ս. Եկեղեցի առ ի քարոզել եւ ի մատուցանել զՍ. Պատարագ մեծահանգէս :

Թախանձէ Գեորգ եւ խնդրէ յԱղանոյ ելանել յաթոնն աջակողմեան, զոր մերժէ նա առարկեալ իրաւամբ զիրաւունս Առաջնորդի եւ զկանոնս եկեղեցւոյ ըստ եպիսկոպոսաց եւ թեմակայաց, միանգամայն պատուիրէ զնել զաթոն ի ձախակողմեան զասու յանուն եւ ի պատիւ երբեմն Պատրիարքի առարկեալ : Եւ ըստ այսմ կանոնի աստ :

Երբունին Ստեփաննոս յիշատակաւ Հոգեւոր Ծնողի իւրոյ Պօղոս Ա. Եպ. -ի Գարագօղեան եւ ի տես հայրենեացն յուզի յարտասուս ի քարոզելն, յուզէ զխուռն բազմութիւն Հայոց, որոց ոչ բաւէր եկեղեցի, օրհնեաց եւ զովեաց զԱռաջնորդ զՏ. Գէորգ եւ զբարեպաշտ Հայս՝ ուրախ լեալ ընդ բարեկարգութիւնս եւ ընդ պայծառութիւնս Եկեղեցւոյ եւ զպրոցաց, յորդորեաց յարատեւել ի սոյնպիսի ջանս :

էր Ստեփաննոս ի հասարակ զասակարգէ եւ ի ցեղէ ձիւնիգեանց (°) : Եղբօր սորա անուանէին ի հեծուկս կամ ի կատակս Բրկանտը-իմամբ : Պարսպէր եղբայրն եւ զործէր զընտիր կէզի (կերպաս) ի կամարակապ քարուկրեայ խանութս Բրկանտը կամընոյ, եւ էր քաջահմուտ եւ սառջին յիւրում արհեստի կերպասագործութեան : Եւ զի էր եղբայրն Եպիսկոպոս, Առաջնորդ եւայն մակամուանսէր Պրուսացիք հոտուն նմա ի կատակս զանճահ մականունս իմամի Բրկանտուոյ (իբր մահմէտական պաշտօնեայ Բրկանտուոյ) :

էր նա ամուսնացեալ եւ ունէր զչորս որդիս, երկու ուստերք եւ երկու դստերք. էր տուն նորա ի կողմն Էշրէֆէլէր թաղի կամ Քիւչիւք մէգարլըքի, երբեմն յանել փողոցի, ընդ որ ելանեն այժմ ի Շապան Պահեալար :

Մեծամասնութիւն ծառայից Ստեփաննոսի եւ փոքրաւորացն էին ի Պրուսայէ, յորոց մի եւ գլխաւոր էր Ստեփաննոս Թանգերեան՝ այր հմուտ գրոց, եւ ամուսնացեալ ընդ թոսան Պօղոսի Կէօյնիւպէօյիւքեան՝ մօրեղբօր մերոյ մօր : Երկրորդ էր Մելքոն քահանայ Ուզուն-Արթինեան :

Աշակերտ նորա էր երբեմն պատրիարքական տեղապահ Ստեփաննոս Եպ.՝ Առաջնորդ Նիկիմիտայ : Որոյ աշակերտ էր Գէորգ վարդապետ (այսպ եպիսկոպոս) Դերձակեան, որ այսպ եղեւ Առաջնորդ Կուտինայու յետ մահուան Յովսէփ Եպ. -ի :

Իբր ամիս մի կացեալ Ստեփաննոսի ի հանքաջերմուկս եւ վա-
յելիալ զլիառատ հիւրասիրութիւնս Հոգեւոր որդւոյ իւրոյ, ի 27ն
Օգոստոսի վերագարձաւ ի Կ. Պօլիս առ ի երթալ անտի ի վիճակ
իւր եւ յԱրմաշ:

Ի յաջորդ ամի յամսեանն Ապրիլի (6) կնքեաց Ալաւնի զկեանս
իւր եւ փոխեցաւ առ Տէր: Ասէին լինել ամաց իբր Եօթանասուն:

Իսկ առաջին պաշտպան Գէորգայ, Կարապետ Արքեպ. երբեմն
Պատրիարք, զոր եւ սիրէր յոյժ Տ. Գէորգ եւ զովէր հանապազ ընդ
քաղցրարան քարոյլիցն, վախճանեալ էր յաւուր Վարդապետի յ30
Յուլիսի 1850 թուականի, յիւսկիւտար ի Կ. Պօլիս, լեալ ամաց իբր
վաքսուի եւ վեց. թաղեցաւ նա յիւրակերտ զերեզմանի ի հասարա-
կաց գերեզմանատան մերձ ի Պաղլար-Պաշը՝ յիւսկիւտար:

ԳԼՈՒԽ ԺԹ.

ՅԱՂԱԳՍ ԳՆԱԼՈՅ ԳԷՈՐԳԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի Կ. ՊՕԼԻՍ

ԵՒ ՅԱՂԱԳՍ ԱՆՑԻՑ ԻՆԶ.

Ժառանգական սեփականութիւնք տեղեաց կանանց որ զառաջ-
եաւ վանդակի ի վերնատան եկեղեցւոյ, որպէս յիշեցաք քանիցս,
յարուց անէին յաճախ զվէճս, զկազ, զկուիւ, զկուփափորձ զգլո-
րումն միևտէրաց (նստալաթ կամ գորգիկ) ի վայր ի վերնատանդ
ի գլուխս արանց, պատճառէին բազմիցս եւ զզագարումն ժամեր-
գութեանց, յորում միջոցի ելանէին քահանայք ի վերնատուն առ
ի խափանել զկուիւս եւ զզոմուկս վիճաւոր կանանց:

Գոզցես զլիաւոր եւ ծանր խնդիր էր այս ի Պրուսա, եւ իշխա-
նապետք եւ իշխանք ակնածեալ ի միմեանց, ըստ որում ունէին զազ-
գականութիւնս, կամ զինամութիւնս եւ կամ զբարեկամութիւնս,
թող զառեւտրական յարարերութիւնս եւ զչահս, զզուշացեալ միան-
գամայն յազդեցիկ կանանց, մնային անփոյթ, մանաւանդ թէ յեր-
կուս ոտս եւ երկզիմի կաղուցեալ հանդէպ Առաջնորդի եւ բարեկա-
մացն, լինէին պատճառ ընդարձակման վիճուց եւ գժտութեանց:

Ճարտար այրն Մատթէոս աղայ Գապաքճեան սպասէր միշտ
պատեհ առթից, իբր յորսալ ձուկս ի պղտոր ջրուջ, եւ ջնայր առ-
նուլ զվրէժ ի Գէորգայ՝ ի գաղտնի թելադրեալ եւ խրախուսեալ
նաեւ զինդիրս եւ զվէճս այսպիսիս, ընդ զէմ որոյ անկեղծութեամբ
իմն եւ անպատրուակ մաքսութիւն Կարապետ աղայ Սարաֆեան եւ
Կարապետ աղայ Ամիրայեան. իսկ այլք զզուշանային, թէպէտ ի
գաղտնի էին հակառակորդք Մատթէոսի՝ բաց ի սակաւուց ոմանց:

Ստուար մեծամասնութիւն ժողովրդեան էր համակիր եւ ի կողմն Գէորգայ :

Խնդիրք այսպիսիք քանիցս յուղեցին զժողովուրդ ընդ դէմ Մատթէոսի, այլ Գէորգ խոհեմութեամբ խաղաղեցոյց զնոսա եւ ոչ տայր ասպարէզ երկպառակութեանց :

Սակայն Մատթէոս ոչ հանդարտէր եւ ոչ դադարէր ի խարդաւանութեանց, միանդամայն ջանայր ի գաղտնի պատրաստել եւ առաքել ի Պատրիարքարան զամբաստանազիրս զԳէորգայ՝ ապաւինեալս յաջակցութիւնս, մանաւանդ, ի թելադրութիւնս Մատթէոս Եպ.—ի, եւ ի պաշտպանութիւն ամիրայիցն Պօղոսի Տատեան եւ Ճանիկի Փափաղեան : Ճանիկ միանգամայն էր բարեկամ Գէորգայ, որպէս էր եւ Մաքսուտ ամիրայ, որ սիրէր զսա յոյժ :

Ոչ կամէր Գէորգ խաթոտակել իսպառ զՄատթէոս արտաքսեալ եւ յազգային ժողովոց եւ իշխանապետութենէ, զի մի՛ առաւել զբզոնեցն զժառութիւնք եւ խոսովութիւնք ծանունք, յորպիսիս քաջ էր եւ հնարազէտ Գապաքճեան, բայց ոչ յաջողէր դարձեալ սիրաշահել զնա ցորչափ հետեւէր նա առնուլ զվրէժ, բերել ի ձեռս զազգեցիկ զիրս եւ զգեկալարապետութիւն (իբր Մենտոր) յազգային գործս, կարգել ի նորոյ յանգամ նահանգային կառավարական ժողովոյ յօգուտ եւ ի շահ անձին իւրոյ՝ հակառակ կամաց եւ շահուց ստուար մեծամասնութեան ժողովրդեան :

Վասն որոյ ձանձրացեալ Գէորգայ Եպ.—ի յանցիցդ եւ յասիական վարուց եւ ի բարուց իշխանապետաց եւ իշխանաց առաւել քան ի նենգամտութեանց, ի խարդաւանութեանց եւ յորգայթից Մատթէոսի, կամեցաւ երթալ ի գաղտնի ի Կ. Պօլիս ի 4ն Փետրվարի 1853 ամի : Զիք ինչ ի ծածուկ որ ոչ յայտնեսցի : Մանաւանդ ոչ էր դիւրին պահել զուղեւորութիւնդ զաղտ ի ժողովրդենէ կամ ի ներկայացուցչացն : Ըստ այսմ իմացեալ ժողովրդեան զմիտս Առաջնորդի իւրեանց սիրելոյ՝ պաշարեցին զԱռաջնորդարանաւ, եւ արտասուօք պաղատէին զսա դադարել ի մտադրութենէ իւրմէ եւ մնալ՝ սպառնացեալ յարձակել եւ ի վերայ տան Մատթէոսի : Եւ այսպէս շարունակէ ժողովուրդ զթախանձանս իւր մինչև ցճրդ օր Փետրվարի, յորում աւուր խոստանայ սա առաջի ստուարաթիւ բազմութեան ժողովրդեան մնալ ի պաշտօնի իւրում ի Պրուսա :

Այսու առթիւ անուր Գէորգ զհաւանութիւն եւ դադարեցուցեալ զվարչութիւնս իշխանապետաց եւ իշխանաց շարունակելոց ի վաղ ժամանակաց հետէ, հաստատէ զհոգարարձական վարչութիւն կամ զվարչական ժողով (Աղալար մէճլիսի) բաղկացեալ յօթանց անձանց, ընդ որս էր դարձեալ Մատթէոս :

Սակայն եւ այս տնօրինութիւնն ոչ օգնեաց, եւ դժնիկն ոչ փոխէր գրնութիւն իւր: Մանաւանդ թէ յաւելոյր օր աւուր զդառնութիւնս եւ զթոյն սրտի, եւ սպասէր յաճախ զիպող ատթի՝ առանց երբեք դադարելոյ:

Առ իմանալ զանհանդուրժելի բնութիւն եւ զկարիճութիւն Մատթէոսի, բաւական լիցի պատմել հետագայն համառօտիւ:

Ի վերադառնալ Թաղէոս վարդապետի պատրիարքական փոխանորդի ի քննութենէ որ ի Թիւրքմէն գեղջ (Ապրիլ 1852ի) եւ ի հիւրասիրելն Գէորգայ զնա յԱռաջնորդարանի, տայ նմա ի կիւրակէի խօսել զքարոզ եւ մատուցանել զՄ. Պատարագ:

Յետ արձակման Ս. Եկեղեցւոյ՝ յորժամ ժողովեալ էին իշխանապետք եւ իշխանք յընդարձակ սենեկի Առաջնորդական փոխանորդի, ի ներկայութեան փոխանորդ Պետրոս վարդապետի զովէ Մատթէոս զքարոզ Թաղէոս վարդապետի, եւ յաւելու ասել միանգամայն. «չօխան տըր պէօյլէ կիւզէլ քարոզ իշիքսիպիմիզ եօղուտու» (ի բազմաց հետէ ոչ էաք լուեալ զգեղեցիկ քարոզ այսպիսի): - (Քարոզն էր առակախօսութիւն երկաթակիր մկան):

Ներկայք հայեցեալ յիւրաքանչիւր երեսս, ոչ ոք կչոէ նմա զպատասխանի ինչ, եւ ոմանք բաւականանան խոժոռեալ զգէման:

Արդ ինքնին պարզի բնութիւն եւ ոգի Մատթէոսի այսու շնչին պատմութեամբս:

Սակայն ոչ աւելորդ համարեացի ասել եւ զայս, զի քարոզք եւ ատենաբանութիւնք Գէորգայ էին ընտիրք եւ իմաստալիցք, սօզուք եւ պիտանիք ընդ համառօտութեանցն, մինչ Թաղէոս տկար էր յոյժ եւ պառաւարան, յաջողակ միայն ի զուարճաբանութիւնս եւ յառակախօսութիւնս երկաթակիր մկանց, զորպիսիս կամ զմիեւնոյն քարոզս խօսէր ուր եւ զտանէր: Վայն^օ է արդեօք զուարճացուցանել զժողովուրդս յեկեղեցիս յաճախակի ծիծաղիւք, լիաթոք եւ քրքջալիր քահքահեօք եւ այսպիսեօք խայտառակութեամբ, թողումք ընթերցողաց ի դատել:

Ապաքէն այրն այս ոչ էր արժանի վեհանձնութեան եւ ներողամտութեանց, հարկ անհրաժեշտ էր հեռացուցանել իսպառ զնա յազգային զործոց, կամ ենթարկել քմահաճոյին եւ վարչապետութեան նորա ըստ ամենայնի, որ էր յանհնարիցն:

Վասն որոյ մնայր Գէորգայ Եպ.—ի մաքառել զօրհանապաղ ընդդէմ Մատթէոսի, կամ թօթափել զփոշի ոտիցն եւ ինքնին հեռանալ ի Պրուսայէ եւ վերադառնալ ի Կ. Պօլիս հրաժարել յԱռաջնորդութենէ, առանց ունկն տալոյ թախանձագին աղաչանաց ժողովրդեան,

Գիտէր Գէորգ Եպս. զի Մատթէոս Գապաքճեան կազմեալ զամբաստանագիր ինչ ի գաղտնի սակաւաթիւ կուսակցութեամբ իւրով՝ առ սաքեալ էր ի Պատրիարքարան, եւ պատուիրէր գլխաւորաց ազգայնոց եւ բարեկամացն ընդ ներկայացուցչաց ստուար մեծամասնութեան ժողովրդեան՝ մնալ ի խաղաղութեան եւ ի սէր եւ ի պատիւ իւր, զգուշանալ ի յուզմանց եւ ի դժտութեանց, արգելուլ զնպաստաւոր հանրագիրս, միանգամայն առ ոչինչ համարել զՉանս եւ զգիրըս սակաւաթիւ հակառակորդաց եւ ահա ի 13ն Մայիսի (1853) ընկալաւ զհրաւիրադիր Յակորոս Արքեպս. Պատրիարքի առ ի փութալ ի Կ. Պօլիս: Պահեաց Գէորգ զայս ի ժողովրդենէ եւ ոչ ումիք ի բարեկամացն ասաց ինչ, եւ պատրուակեալ զազգային դործս ինչ, ի 27ն Մայիսի եւ եւ եկն ի Կ. Պօլիս եւ իջեւանեցաւ ի տուն քես իւրոյ ի Կէտիկ-փաշայ:

Ըստ հրաւիրանաց Պատրիարք-Արքեպս. ի եկն եւ Գապաքճեան ի Կ. Պօլիս:

Ի 17ն Յունիսի ներկայանան Գէորգ Եպ. եւ Մատթէոս Գապաքճեան յատեան Գերագոյն ժողովոյ ի Պատրիարքարանի:

Զկնի թեթեւագոյն հարցափորձից՝ խտոն ընդ բունն վիճուց՝ ժողովն ինքնին պարզեաց զխարդաւանութիւնս Մատթէոսի Գապաքճեան եւ զկեղծ ստորագրութիւնս ամբաստանագրոց ընդ հնարեալ զրպարտական ամբաստանութեանց, յանդիմանէ զԳապաքճեան, որ առ ահի լաց դառնապէս եւ գոչէ մեղայ: Հուսկ ուրեմն միջնորդ կացեալ ձանիկ ամիրայի՝ հաշտեցուցանեն ձանիկ եւ Պօղոս ամիրայք զնա ընդ Գէորգայ Եպսի՝ խնդրելով ներել նմա իբրեւ առն ողորմելոյ, միանգամայն պարտաւորեն զԳէորգ փութալ վերադառնալ ի Պրուսա՝ մինչ սա ոչ կամէր, եւ հուսկ ուրեմն համակերպեցաւ առաւել բանից Միջագիւղարնակ Մաքսուտ եւ ձանիկ ամիրային քան Պատրիարքի ողորմելոյ:

ԳԼՈՒԽ Ի

ՅԱՂԱԳՍ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՅ ԴԷՈՐԳԱՅ Ի ՊՐՈՒՍԱ

ԵՒ ԾԻՆՈՒԹԵԱՆ ՏՕՆՏՈՒՐՄԱՅԻ

Համաձայն խոստման իւրում փութայ Գէորգ Եպիսկոպոս ի 20ն Յունիսի (1853) մեկնել ի Կ. Պօլսոյ՝ չոզեւաւաւ, ընդ երէկս հասանէ ի Պրուսա ի մեծ ուրախութիւն եւ ի միխթարութիւն ժողովրդեան, որք լուեալ էին զմեքենայութիւնս Մատթէոսի Գապաքճեան եւ յուզեալ յոյժ, այլ Գէորգ էառ զառաջս զրզումանց եւ հանդարտեցոյց զյուզեալս՝ փութալով ի վերադառնալ:

Խորհեցաւ Գէորգ կառուցանել զընդարձակ դպրոց օրիորդաց եւ փոխադրել անդր զանձուկ դպրոցն Ս. Հռիփսիմեանց :

Համաձայնեալ ընդ փոյթ ընդ ժողովականաց եւ գլխաւորաց ազգիս, որոչեաց ի վերին եղերս Ձիթաստանի Եկեղեցւոյ որ առաջի Առաջնորդարանի յաջակողմեան եղեր ձորոյն կէօֆ- տէրէի առ փո- զոցաւ յէշրէֆիլէր թաղի կանգնել զչէնն ընդ որով կամէր հաստատել զփուռ եւ զխանութս ինչ յարդիւնարեր կալուածս յօգուտ Եկեղեց- ւոյ :

Որոյ վասն յՅն Օգոստոսի (1853) ձեռնարկեաց բանալ զհիմունս հաստատունս, եւ կանգնել զքարուկրեայ որմունս երիւք բաժան- մամբք: Անդ էր տեսանել զոգեւորութիւն ժողովրդեան, որք ինքնա- յորդոր կրէին ի ձորոյ զաւազ եւ զքարինս ի պէտս շինութեան: Տօն- տուրմա (որպէս եւ զհամայն քարուկրեայ շէնս) անուանէր ժողո- վուրդ զշինութիւնս զայս, որ եւ կրկնակի եցոյց զօգուտ՝ ապահով- եալ զհանդիպակաց փողոց եւ գտունս ի սահելոյ եւ ի կործանե- լոյ յերեսաց Սեւջլոյ, որ գործէր զաւերս ի վերին կողմունս սկսեալ ի հին ջրամբարէ ելլալովի (Մահզէնի), որպէս տեսանի ցարդ :

Աւարտեալ ի յաջորդ ամի (1854) գորմունս առանց զանդիտելոյ ի պատերազմական տազնապից սաստկացելոց ընդ մէջ ռուսաց եւ օսմանցւոց, որոց - օսմանցւոց - միացեալ էր եւրոպական Գաշ- նակցութիւն Անգղիոյ, Գաղղիոյ եւ Սարտինիոյ ընդգէմ ռուսաց, սկսաւ նախ եւ շինեաց զփուռն (խանութ) հասարակաց յարեւելեան կողմն ըստ երկարութեան :

Մերձ էր ձեռնարկել ի շինութիւնս այլոց խանութից եւ ի վերայ նոցա կանգնել զընդարձակ դպրոց բարձրադիր՝ տեսարանաւոր եւ օղասուն, եւ ահա Գապարճեան սկսաւ եւ շարունակեաց որմնել եւ խորգաւանել, եւս եւ սպառնալ խաղաղութեան ժողովրդեան :

Անցք եւ առիթք պատերազմականք յաւելուին զչփոթութիւնս, եւ Գապարճեան ջան կալաւ քաղել զօգուտս յանցից ընդ վրէժխընդ- րութեան :

ԳԼՈՒԽ ԻԱ.

ՅԱՂԱԳՍ ԶՈՒԵԼՈՅ ԳԵՈՐԳԱՅ ԵՊՍԻ. Ի ԿՈՍՏԱՆՏՆՈՒՊՈԼԻՍ
ԵՒ ՀՐԱԺԱՐԵԼՈՅ ՅԱՌԱՋՆՈՐԳՈՒԹԵՆԷ

Ապաքէն անցք եւ պէտք պատերազմականք ի միոյ կողմանէ, եւ դրամական անձկութիւն ժողովրդեան ի միւսմէ, հարկիցեն զԳէորդ Եպս. դադարեցուցանել առ ժամս զշարունակութիւն շինութեան տօնտուրմայի եւ դպրոցի, մանաւանդ զի հաւաքէին ի ժողովրդենէ

զնպատ ի պէտս պատերազմական պաշարաց: Իսկ յանհնարիցն իմն էր դադարեցուցանել զԳապաքճեան յորոգայթից եւ ի խարդաւանութեանց, որպիսեօք սպառնայր եւ խաղաղութեան ժողովրդեան, եւ վերելայր յուզել զՂանս իւր եւ զբարեկարգութիւնս: Ոչ կամէր Գէորգ հարուածել զնա իսպառ արտաքին զիւրութեամբք, եւ ոչ տեսանել աչօք իւրովք զիսնդարմունս ներքինս: Մանաւանդ զի ոչ դադարէին նա եւ Մատթէոս Եպս. եւ կուսակիցքն, յորս էր Պատրիարքրն, ի թելազրելոյ զԳապաքճեան, որ ի պատրաստի էր հանապազօր:

Վասն որոյ այլ իմն ցուցեալ զպատճառս ի միամտութիւն եւ ի հանդարտութիւն ժողովրդեան, եթող զփոխանորդ իւր ի Պրուսա, եւ ինքն չուեաց ի Կ. Պօլիս ի 25ն Օգոստ. (1854): Կալաւ զրնակութիւն ի տան քեռ իւրոյ ի Կէտիկ-փաշա:

Տեսեալ զկարեւոր պատրաստութիւնս կանխաւ, ի 22ն Սեպտեմբերի ետ զհրաժարագիր իւր առ Ազգ. Վարչութիւն Կեդրոնական (Գերագոյն Ժողով) յԱռաջնորդութենէ Պրուսայու, միանգամայն կոչեաց զփոխանորդն իւր զՊետրոս վարդ. Տէր Ստեփաննոսեան՝ պատուիրելով նմա փոխադրել այսր ի Կ. Պօլիս զամենայն գոյս եւ զկահս իւր:

Ոչ ընկայաւ Ազգային Վարչութիւն զհրաժարական սորա, առաջարկելով մնալ առժամանակ ինչ աստ ի Կ. Պօլիս, եւ կառավարել զՊրուսա փոխանորդաւ կարգելով յիւրմէ կողմանէ, ուր ուրեմն ինդրեաց սա յԱզգ. Վարչութենէ առաքել ի Պրուսա զոմն ի զիմաց Պատրիարքարանի ի փոխանորդ եւ ի կառավարել զվիճակն: Եւ առաքեցաւ Կարապետ վարդապետ Պրուսացի ի Միարանութենէ Արմաշու յՆն Հոկտեմբերի: Պետրոս վարդապետ փութացեալ էր վերադառնալ ի Կ. Պօլիս:

Պրուսացիք տիրեցան յոյժ ընդ այս: Եւ պատրաստէին զհանրադիրս, սպասեալ պարզելոյ ձմեռնային եղանակի, թէպէտ Գէորգ յաճախ անպատասխանի թողոյր զազաչագիրս բազմաց, եւ յորդորէր մնալ ի խաղաղութեան:

ԳԼՈՒԽ ԻԲ.

ՅԱՂԱԳՍ ՊՐՈՒՍԱՅՈՒ ԵՒ ԲՆԱԿԶԱՑ ՆՈՐԱ

Պրուսա քաղաք յաշխարհին պատմական Բիւթանիոյ՝ երբեմն թագաւորանիստ մինչեւ յաւուրս Ֆաթիհ Սուլթան Մէհմէտի՝ հաստատեալ է ի հիւսիսային եզեր Փոքուն Ասիոյ՝ առ հիւսիսային եւ արեւմտեան ստորոտով Ողիմպեան լեռին հռչակաւորի եւ արեւմրտեան լեռնաշղթայի նորա՝ երկայնեալ մինչեւ ցղաչուն: Գտանի

յաստիճան արեւելեան 26° 40'' եւ ի հիւսիսային լայնութիւն 40° 3'' : Բարեբեր է յոյժ, օդասուն, ջրաշատ, պարտիզային եւ այգելից :

Ունի քաղաքն զհնաշէն զաւերակ բերդ հին Հիւսար անուամբ ի կողմն արեւմտեան հարաւոյ յառանձին բլրակի, թուրքաբնակ այժմ, առ ստորտոտով որոյ բնակին Յոյնք եւ ի Պալլբ պագարի, որպէս եւ ի բարձրաւանդակին Տէմիր-Գաբուլի : Ի միջնավայրի նոցա բնակին Հրեայք՝ յերկուս բաժանեալ գՅոյնս : Անդ ի Հիւսարի է զբօսատեղի ինչ կոչեալ Բոււնար-Պաշը, որոյ ջուր իբր հոսի այսր ի Մահգէնէ (Ջրամբար), որպէս պնդեն եւ ասեն գիտակք, թէպէտ մեք դժուարնամք հաւատալ :

Ի հնումն լեալ են շուրջ քաղաքաւ արուարձանք լի բնակչօք, Լըբգլար, Գըբգլար, եւ այլ անուամբք : Որովք երեւի լինել երբեմն քաղաք ընդարձակ եւ բազմամարդ :

Ըստ մասնեաց վատառողջ է եւ խոնաւ օդ դաշտային մասի քաղաքի, որպէս եւ բարձրադիր գեղջն (արուարձան) Ձէփիլկէլէրի, յորում են հանքաջերմուկք, որոց ապականեալ ջուրք ոչ դտեալ զգընացս, ծանրացուցանեն զօղն յամառնային եղանակի՝ մինչեւ առթել եւ հաւուց զտեղդ, առթիւ ճահճացն կազմելոց ի ջերմկաց, որոց ետ ընթացս Ահմէտ Վէֆիք փաշա յամին 1864-9 եւ մաքրեաց զօղն ըստ բաւականին : Նոյնպէս ի կողմն ջերմկաց Քիւլիւրթլիյի (ծծըմբաւոր), որում մերձեանս տակաւ շինուածք քաղաքի յարեւմտից կուտէ :

Պարունակեն Պրուսա, շրջակայ լերինք եւ դաշտն մեծատարած զայլ եւ այլ հանքս ծծմբոյ, քարից, արծաթոյ, երկաթոյ, եւ այլոց, զորպիսիս ապացուցանեն եւ հանքաջերմուկք : Արհեստագէտք արարդիւնաւորեն հաղիւ զչնչին մասն ի հանքաց, բաց ի ջերմկաց : Հրարդխային նշանք են յողիմպեան լերին (Քէշիշ-Թաղ), յորմէ կործանեալ թուի յունական վանք ինչ որ անդ ի դագաթան, դուցէ երբեմն կուտուն լեալ, առ որով մնան ցարդ մեծադեր գերեզմանաքարինք (տապանաքարինք) : Եւ նշանք այսպիսիք տան կարծիս, զի Պրուսա յաճախ ենթարկեալ է երկրաշարժից, ապա ուրեմն եւ քաղաքային փոփոխութեանց ըստ դրին եւ ըստ տարածութեանց, երբեմն նուազեալ եւ մերթ ընդարձակեալ հանդերձ բնակչօք :

Երբեմն լեալ են անտառք մեծատարածք՝ կաղնի, հացենի, եւ այլ պտղատու ծառովք - ընկուղենի, շագանակենի - ի շրջակայ լերինս, որպէս մնան ցարդ անտառք յողիմպեան լերին եւ ի հեռաւոր շղթայսն, լի մեծամեծ ծառովք, յորոց հատանն զվառելափայտս եւ փոխադրեն մերձ ի Ձէքիլկէլէր լցեալ ի հոսանս Նիւլփէր գետոյ առ ի տեղափոխել :

Հռչակաւոր են այգիք Տօպու եւ Միսի գիւղօրէից հետի եղելոյց ի Պրուսայէ երկու երկու ժամու ի կողմն արեւմտեան անդր քան զՁէքիրկէլէր: Պօղոս առաքեալ անցեալ է ընդ Միսի եւ յիշատակի ի Գործս առաքելոյց, առանց յիշելոյ զՊրուսա:

Զարդիս պարունակէ Պրուսա զտունս առաւել քան զքսան հազար, մինչեւ ցամ Տեառն 1878 էր տուն իբր հնգետասան հազար: Մահմէտականք (Թուրք, Թաթար, Չէրքէզ, Արնաւու, Ափխազ, եւ այլն) ունին զ15 հազարն տուն, Հայք՝ զ1500, Յոյնք՝ զ1200, Հրեայք՝ զ1000 տուն: Լնուն զմնացեալ թիւս եւրոպացի դաղթականք եւ այլք: Համադումար թիւ բնակչաց անցանէ առաւել քան զութսուն հազար ուրիս:

Մեծագոյն մասն արհեստաւորաց է ի հայոց, ապա ի Մահմէտականաց, ապա ի Յունաց, եւ ապա ի Հրէից:

Հայք պարսպին, բաց ի պարտիզաց, յայգեաց եւ ի շերամատածութենէ, նաեւ ի հիւանութիւն, ի նրբաքանդակ եւ ի կոշտ ատաղձագործութիւն, ի պղնձագործութիւն, յայլ եւ այլ վաճառականութիւնս, յերկաթագործութիւն, ի դարբնութիւն, ի մարմարագործութիւն, ի կօշկակարութիւն, ի նպարսպաճառութիւն, յոսկերչութիւն, ի տարագործութիւնս, ի կերպասագործութիւն, ի թաւարծիագործութիւն, ի սափրիչութիւն, ի լումայափոխութիւն, ի հին եւ նոր դերձակութիւնս, ի ձուլիչութիւն, ի վաճառականութիւնն ըս ճոթեղինաց, կերպասեղինաց, եւ բրդեղինաց, յայլ եւ այլ մանրավաճառութիւնս, ի կառապանութիւն, ի գինեկաճառութիւն, ի դեղագործութիւն, ի ձեռահիւսս, ի ձիապանութիւն եւ ի բեռնակրութիւն, ի բաղնիկանութիւն, ի հնակարկատութիւն, ի հանդերձավաճառ, ի հացագործութիւն, ի գործս ապակեոյ եւ ի մետաքսագործութիւն: Արհեստագէտ է եւ ստուար մասն կանանց եւ օրիորդաց հայոց Պրուսայու եւ մեծամասնութիւն շահին զգրամս առաւել քան զարս. նոյնպէս ի մետաքսագործարանս, եւ ի մետաքսագործութիւնս ընդ բարակ կերպասագործութեանց (Թէգլեանի, գառնաք, կէրկէֆ, տիվալ, սիւգէնի, անքիքա) եւ այլն: Են Հայոց եւ այլ ճիւղք արհեստից ոչ սակաւուց (ծխավաճառ, թղթավաճառ, միջնորդ եւ այլն):

Մահմէտականք պարսպին ի մսավաճառութիւնս, ի համետագործութիւն, ի սափրիչութիւն, յերկրագործութիւն, ի տաւարաբուծութիւն, ի մանրավաճառ պահարեղինաց, ի քարակոփութիւն, (մարմարեայ), ի թելավաճառութիւն բամբակեայ, ի կառապանութիւն, ի բաղնիկանութիւն, յուղապանութիւն եւ ջրբեկանութիւն, ի փայտահատութիւն, ի թղթավաճառութիւն, ի կահագործութիւն,

ի գինազործութիւն, ի պայտառութիւն, ի շաքարավաճառութիւն, ի վարսաճաշինութիւն եւ այլն: Են արդեւ եւ նշանաւոր վաճառականք եւ դրամատէրք, գործարանատեսարք եւ սեղանաւորք եւ այլն:

Յոյնք պարապին ի նպարավաճառութիւն, յորմնադրութիւն, ի ձրապանութիւն, ի դերձակութիւն, ի ձկնավաճառութիւն, ի պարտէզս, ի ձեռահիւսս ինչ կանացիս եւ ի ձեռարուեստս, ի հացագործութիւն եւ այլն: Ուին էւ դեղագործս:

Հրեայք պարապին ի թիթեղագործութիւն, ի մանրավաճառութիւն, ի դերձակութիւն եւ յայլ աշպիսի արուեստս մանուկս ի սահմանափակ ազգային շրջանակի:

Են բժիշկք ի Հայոց, ի Յունաց, ի Հրէից եւ ի Մահմէտականաց:

Մահմէտականք ունին զարդիս զմեծամեծ վաճառանոցս ատաղձի, շաքարեղինաց եւ սրճեղինաց եւ այլոց: Ունին զջրաղացս եւ ըզհանքաջերմուկս (Քիւֆիւրքիւֆ, Էսկի եւ Եէնի Գապլընայֆ, Գայնարնա, Գարա-Մուսքաֆա, Սէլվինազ, Չէֆիքէ, Արմուտլու Հիւսնիւ Կիւզէլ, Էօյնիւ-Ֆէրաիս եւ այլն): Վաճառականութիւն ցորենոյ եւ ալիւրի է ի ձեռս Հայոց, նոյնպէս հանքաջերմուկքն Պոյուկիւզէլ, Քէշէլի, Ֆալէգ-Օթէլի եւ այլն: Հայոց էին երբեմն Հիւսնիւկիւզէլ, Սէլվինազ, երկոքին Քիւքիւրքիւք:

Գլխաւոր պտուղք պարտիզաց Պրուսայու են շագանակ, ընկոյզ, դեղձ, խնձոր, տանձ, սալոր, տոմպիլ, կեռաս, նուռ, թութ, եւայլք աշպիսիք: Հռչակաւոր է սեր Պրուսայու:

Նահապետական իմն ուղղութեամբ յարատեւեալ Պրուսացւոց դժուարանան ցարդ քաղել զմեծաքանակ օգուտս ի տրից եւ յարդիւնարեքութեանց իւրեանց, ի ծառոյ, ի գինւոյ, ի հանքաջերմկաց, յայլ եւ այլ հանքաց, յանտառաց եւ այլոց արհեստագործութեանց իւրեանց, կաղմեալ զմիութիւն, զդրամազլուիս, զգործարանս եւ ըզյարարերութիւնս ընդ հրապարակաց այլոց քաղաքաց եւ ընդ Եւրոպայի:

Ապաքէն հարկ է յաւելուլ, զի ըստ ներկայիս մեկուսի դիրք քաղաքիս, ձախորդութիւնք պատահեալք յալգիս եւ ի շերամատածութիւնս ընդ երկրաշարժին յարուցանեն յաճախ դժուարութիւնս առաջի Պրուսացւոց, սակայն բազմաթիւ եւ բազմատեսակ են նպատաւոր առաւելութիւնք, յորոց հնարաւոր էր յաւէտ շահել հմտութեամբք, յարարերութեամբք, փորձառութեամբ եւ ընկերութեամբք յորպիսիս ակարանան հին բնակիչք Պրուսայու եւ տակաւ գորանան նորեկ Մահմէտականք:

Ունիմք դրել առանձին զգաղթականութենէ Հայոց Պրուսայու, եթէ Տէր յաջողեսցէ :

ԳԼՈՒԽ ԻԳ.

ՅԱՂԱԳՍ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՊՐՈՒՍԱՅՈՒ

Յեա համառօտելոյ զՊրուսայէ եւ զընակչաց նորա զտեղեկութիւնս կարեւորս, դամք ահա ի նկարագիր աղէտալի անցից երկրաշարժից :

Յաւուրն հետէ յամսեանն Փետրվարի 1855 թուականի Փրկչի թանձր մառախուղ եւ անձրեւ թեթեւ իբր ցօղածեւ սաշարէր զՊրուսայիւ, որպէս էր եւ ի 16ն նոյն ամսոյ յաւուր չորեքշաբթու՝ յերկրորդում եօթնեկի Մեծի Պահոց : Այր իւրաքանչիւր եւ կին ըզրազեալ էր ի գործ եւ ի պէտս իւր : Եւ ահա զկնի միջօրէի՝ զինն ժամու՝ սկսաւ ցնցումն երկրի՝ տեւեալ երկվայրկեանս ինչ՝ ի հարաւոյ ի հիւսիսի : Զկնի միոյ քառորդի կրկնեաց երկրաշարժն ահագին զղրղմամբ եւ որոտածայն արձագանքեալ, որ եւ տեւեաց իբր տանն երկվայրկեան եւ զաղբեցաւ խառն ցնցմամբ եւ թօթափելով : Ի նմին ժամու սաստկագոյնս ցնցեալ է եւ ի Կ. Պօլիս :

Անդ էր տեսնել զաղէտալի հետեւանս երկրաշարժի, զազմուկ, զօզր, զկոծ եւ զխուճապ տազնապի եւ փախստեան բնակչաց քաղաքին :

Որք վերադարձեալ էին ի տունս, ի խանութս եւ ի զբաղմունս իւրեանց յետ առաջին ցնցման, սաշարեալ յահ եւ յերկիւղ, յերկրորդելն երկրաշարժի աղէտալոյ սկսան փախչիլ ի բակս, ի սարտէզս եւ ի բացօթեայ, անկեալ ի տազնապ մեծ եւ ի զողումն. հոսէին արտասուք յաչաց բազմաց, սղբային աղիողորմ եւ կոծէին, կարդային զօգնութիւն երկնից : Արք փութային սրբնթաց ի բնակարանս իւրեանց յօգնութիւն ընտանեացն, ծնողք զիմէին ի դպրոցս եւ ի փողոցս առ ի գտանել եւ փրկել զորդիս իւրեանց : Ազգ իւրաքանչիւր եւ բնակիչ կրէր զսարսուռ եւ զվիշտս դառնազինս :

Ընդ որոտածայն արձագանից երկրաշարժից՝ լսելի լինէին զըզրրդիւնք անկանելոց ապառաժից ի յերանց յոմանց տեղեաց, մեծաշառաչ կործանմունք տանց, մեծամեծ եւ հոչակաւոր մղկիթաց, քարուկիր շինութեանց՝ բազանեաց, խանից (օթեւանի), մթերանոցաց, որմոց, միմարէից եւ այլոց եւ այլոց :

Յերկրորդ ցնցման անկան մասն ինչ ի հարաւային որմոյ Ս. Պօղոսեան Վարժարանի կցելոյ մեծի ներքին ճանապարհի եկեղեցւոյ Հայոց, եւ զի ոչ էին տակաւին դպրոցք արձակեալ, եւ երկսեռ մանկունք մնացին ի դպրոցս, համբաւ աղէխարչ տարածեցաւ ի Հայս եւ յաւել զխուճապ տազնապի եւ շիտթից Հայոց ընդ մեծի վրդովմանց եւ ողբից :

Յաճախէաք եւ մեք ի Պօղոսեան վարժարան, եւ յառաջին ցընցման փութացաք փախչել ի բակս եկեղեցւոյ եւ ի բացօթեայս ի դպրոցաց, որք մերձաւորագոյն եւ գրեաթէ կից էին միմեանց, եւ կառավարիչք, մանաւանդ Ստեփան վարժապետ Թուրումճեան, անփորձութեամբ իմն ի նորոյ ամփոփեցին զմանկունս ի դպրոցս, եւ ի ծունկս անկեալ ետուն մեզ երգել զՏէր Ողորմեա, մինչ առ ի ապահովել զմանկունս ի վտանգից այլ եւ այլից՝ զիւրագոյն եւ հարկ էր ամփոփել ի հիւսիսակողմն յընդարձակ պարտիզի դպրոցաց առ եղերքն ճորոյ: Եւ ահա յերկրորդէն ցնցման առաւել ուժգին եւ երկարատեւ, յորժամ անկաւ մասն ինչ յորմոյ մեծի վարժատան, անդ, ուր դնէաք զսակառս կերակրոց մերոց, գրեաթէ խափանեցան անցք մեծի դրան շինւածոյ՝ ի ներքուստ, եւ մեք առխարխափ ի մթութեան փոշոյ եւ ի սարսափման՝ բարձեալ զողոս, զաղաղակս եւ ըզվայնասունս, զիմեցաք ի դրունս, ոմանք ի հարաւային դուռն փոքրը՝ որ հանէր ի ճանապարհ եւ ի բակ եկեղեցւոյ, եւ ոմանք յարեւելեան դուռն մեծ, որ էր կրկին՝ բաց ի մեծ դրանէ բակի՝ ընդ որ երթեւեկէին մանկունք Մաղկոցի եւ Վարժատան, եւ ներքին դուռն մեծ ի ներքուստ խափանեալ իմն էր աւերակօք փլուզեալ որմոյ, եւ բազումք անգիտակցարար խոյս եւ գրոհ տուեալ ի փոքու ծակէ անցանէին ընդ փլատակս եւ ելանէին արտաքս ի վարժարանէ: Մանուկ մի գտանէր ի փլատակօք, եւ Օննիկ էր անուն նորա, ութամեայ եւ որդի մեծի մօրաքեռ իմոյ Պէնկզատէի, որ եւ այս համբաւ աղէխարչ զառնացոյց զծնողս, եւ զիմեալ ողբովք եւ աղաղակօք խնդրէին զորդիս իւրեանց, մինչեւ յետ երկուց ժամուց յայնի եղեւ թէ ո՛ր էր զոհն, ըստ ասելոյ իմում, եւ առանց ունկն տալոյ յաճախութեան ցնցմանց՝ հայր եւ աղբականք մանկան սկսան որոնել ընդ փլատակօք զմանուկն Օննիկ, զոր հնար էր ազատել ընդ փոյթ՝ եթէ գիտէին զտեղին զիւրագոյն՝ յորում անկեալ էր, մինչ

անգիտակցաբար դիզեալ են ի վերայ նորա զհող եւ զքարինս յորոննին զնա ալուր, եւ հազիւ յաջողեցան դառնել ի յաջորդ աուր՝ զրկեալ ի կենաց:*)

Եղեն եւ այլ կորուստք անձանց ոչ սակաւուց, մանաւանդ ի Պալլէ-Ֆագարի ի թաղն յունաց, առ ստորոտով Հիսարի, զի ի բարձրաւանդակէ անկեալ անհազին ժայռ առնոյր ընդ իւրեւ զգործարան մետաքսի, յորում աշխատէին կանայք եւ օրիորդք առաւել քան զբեսուն օգիս ընդ գործաւոր արանց, եւ ի գեհնէ կաթսայի մետաքսագործարանի հրկիզեալ եւ բոցավառեալ շինուածոյ՝ այլէր կենդանւոյն զյունազգի մնացեալսն ընդ փլատակս, որոց աղաղակք եւ հոգեվար կոծք հասանէին յերկինս, յային եւ աղաղակէին ի հառաչանս եւ յաղեխարչ ողբս որք տեսանէին կամ լսէին զսոսկալի աղէաս եւ զմահ դառն, որպէս պատմէին, ջանային հասանել յօգնութիւնս զոհից, ոչ ոք յաջողէր, մանաւանդ թէ ոչ համարձակէր ոք մերձենալ ի նոսա, տեսեալ զայլ ապառաժ մեծագոյն՝ պատառեալ ի բարձրաւանդակէ՝ սպառնայր անկանել ի վայր, մինչեւ լափեաց հուրն զշինուածն եւ զղոհս եւ սպառեցան աղաղակք: Կին ոմն ազատեցաւ ի նոցանէ, որ յաջողեալ էր ի պատուհանէ սենեկի պահարանի մետաքսաթելից արկանել զանձն ի փողոց՝ մինչ այլէր շինուածն, եւ այլ կին ոմն ազատեցաւ առթիւ իւրք կանխեալ զոլով երթալ ի տուն իւր յառաջ քան զպատահել աղետիցդ:

Սակաւաթիւ եղեն զոհք Հայոց համեմատեալ ընդ Թուրքս եւ

ԾԱՆՕԹ. վ. Ե. Մ.—Օննիկ Մահուպեան գայր ի վարժարան ընդ Յարութիւն անուն մեծ եղբոր իւրոյ առ ի ընտանեան, եւ նստէր մերձ փուրգեալ որմոյ ընդ եղբօրն: Եւ զի տախտակեայ բաժանումն էին շար ընդ շար յերկայնութեան վարժարանի, բարձրութեամբ կէս-կէս կանգնոյ, որպէսզի աշակերտք նստեալք ի գետնոջ ամձնիւր «միտէք»աւ կրքնեցեմ, դժուարացուցանէին՝ գիտխուստ աշակերտաց մերձ եղիւոց փուրգեալ որմոյ: Օննիկ գառաջինն փախուցեալ էր, եւ յերկրորդում նուագի թիկնոց տախտակէ վերջին շարի դժուարացեալ էին գիտխուստն եւ անկեալ ընդ փլատակօք ի վերջին ծայրի կից գանգակատան: Մեք մընայք յոտին ի վերակացութիւն, եւ դարձեալ դժուարութեամբ իմն փախեալ անցեալ ընդ փլատակս եւ ընդ մեծ դուռն: Նստարանք դպրոցակամք էին ի դասարանս եւեթ եւ շինեալ ի վերջին ժամանակս: Իսկ ի վարժարան ի դպրոցի օրիորդաց եւ ծաղկոցի ոչ էին նստարանք դպրոցակամք, եւ աշակերտք եւ աշակերտուհիք նստէին ի գետնոջ եւ սակաւ ոմնմք ի «դախտ»ս որ ի ներքս շուրջ գպրոցօք կից որմոց՝ յայնութեամբ իրքն կանգուն մի: Նարաշէն երկու սեմեակ էին իրքն դասարան շինեալ ի վարդերես ադայէ Միսաբեան յաուրս Առաջնորդութեան եւ ընդ առաջարկութեան Գէորգայ:

ընդ Յոյնս, զբաղումս հանկալ եւ ազատեալ ի ներքոյ փլատակաց խարխուռ տանց փոքունց եւ այլ շինուածոց: Նշանաւոր հաստատունք կամ չէնքն են որ անկան կործանեցան իսպառ յերկրորդ ցնցման ընդ այլոց, Մզկէթն Դաւուրու Մանաքքըր (Էրբեմն լեալ վանք յունական) ի Հիսարի եւ Մեծ մզկէթն ի Քալաղանի, բաց ի բաղանեաց եւ ի Խանից (քարվանսարայ):

Յետ աւուրց ինչ, թէպէտ ոչ էր փարատեալ իսպառ ահ եւ տագնապ բնակչաց, սկսան վերադառնալ ի բնակարանս, պարապել յանձընիւր գործս եւ ի զբաղումս ի տան, ի շուկայի եւ ի գործարանս: Եւ այսպէս լրացան աւուրք քառասուն:

Եւ ահա՛ զմիով ժամաւ առաջին պահողիչերոյ՝ որ ունէր լուսանալ յՅ0ն Մարտի՛ մինչ բաղումք վերադարձեալ ի շուկայից եւ ի գործարանաց հանդէին ի տունս իւրեանց յետ ընթրեաց՝ բացառութեամբ սակաւուց ոմանց, տիրեաց համայն բնակչաց քաղաքին ի նորոյ ահ, սարսափ եւ տաղնապ մեծ: Մեղմ էր առաջին հարուած երկրաշարժի, եւ հազիւ է անց վայրկեան ինչ, կրկնեցաւ սաստկագոյնս, զգրդեաց եւ զողացոյց զերկիր՝ ի հարաւոյ ի հիւսիս, տեւեալ առաւել քան զտասն երկվայրկեան: Չոյզ ընդ շարժից լսելի լինէին ստորերկրեայ դղորդմունք եւ որոտմունք, զոգցես հեծէին եւ մոնչէին երկին եւ երկիր: Թուէր այնպէս իմն, զի պատերազմ ահեղ եւ ահազնագոչ թնդանօթք դղրդէին զանդունդս երկրի, հոտ գարշարոյր տարածեալ ի սկզբան ցնցմանց, որ յաճախէին, թէպէտ թուլացեալ տակաւ առ տակաւ:

Անդ էր ի նորոյ տեսանել զդառնագոյն տեսարանս աղետալի եւ սրտաճմլիկ:

Այր իւրաքանչիւր ճողոպրեալ զանձն փախչէր արտաքս ի տանց, յօթեւանաց եւ ի ծածկոցաց, եւ հաւաքէին եւ ջանային պատսպարել ի բացօթեայս, մանաւանդ ի պարտէզս: Մեղմ անձրեւ սրսկէր յերկնից, եւ աղաղակք, ողբք եւ կոծք մարդկան դղրդէին զերկինս, այր եւ կին եւ ազգ իւրաքանչիւր կարգայր զՏէր Աստուած իւր, յոգւոց հանէր եւ լայր դառնապէս: Չի՞նչ ասել եւ զմանկանց, որոց աղիւղորմ հեծեծանք ընդ սարսափի միացեալ՝ յաւելուին պարզել գոգցես գորն վերջին դատաստանի:

Եւ զի տակաւին էր զձմեռնային եղանակ, եւ կրակարանք (մանկալ եւ քոնիք, վառարան֊գօպա), էին ի տունս, կործանեալ նաեւ բաղում տանց յոչ սակաւ տեղիս երեւէին հրդեհք, մանաւանդ առաւել ծանր եւ մեծատարած ի Քալաղան շուկայի, եւ ի բազում թիւս ճիւղաւորեալ հրոյ՝ կանգնեալ իբրեւ զհրեղէն սիւնս ի կոշմանս կող-

մանս՝ յաւելոյր եւ առթէր Պրուսացւոց դյուսահատութիւն կրկնակի :

Ի տեղիս տեղիս պատահեալ էր երկիր եւ բացեալ զխրամս խորս . փլատակք լցեալ էին զփողոցս եւ զժուարացուցեալ զերթեւեկութիւնսն . կամուրջն Սեքպաշույ իսպառ կործանեալ, եւ վերին կամար եւ խանութք Ըրկանդը կամրջոյ խոնարհեալ, վասն որոյ անհնարին լինէր անցանել մանաւանդ Հայոց յայսկուսէ ձորոյն կէօֆ տէրէի յանկոյս, եւ հրդեհն մեծ ի շուկայի էր յայնկոյս ի ձախակողմն ձորոյ : Ի միոյ կողմանէ յաճախութիւն ցնցմանց եւ ստորերկրեայ որոտածայն շփմանց, եւ ի միւսմէ՝ աղաղակք եւ սարսափք բնակչաց, ողբք եւ կոծք, շառաչիւնք հրդեհից եւ փլուզմանց պաշարեալ էին զհամայն բնակիչս ի սարսուռ եւ ի յուսահատութիւն, ամենայն ոք յոգիս ապաստան լեալ՝ գողցես ի սկզբան ոչ համարձակէր ոք հեռանալ ի տեղուջէ իւրմէ, մանաւանդ կանայք եւ մանկունք ճիչ բարձեալ՝ ոչ թողուին արանց եւ սիրելեաց իւրեանց երթալ եւ հեռանալ այլուր, մինչ հրկիզութիւն շուկայի սպառնայր համօրէն ամենայն խանութից բազմածիւղ շուկայի ընդ համայն քաղաքին, եւ այս աղէտ առաւել մաշէր գողցես զվերջին շունչ արհեստաւորաց եւ խանութպանից (ընդ որս եւ հօր իմոյ, որոյ էր սրճարան ի Քայաղանի հանդէպ կործանեալ համանուն մեծի մզկիթի ի կողմն արեւմտեան, որ եւ այրեցաւ ի նմին գիշերի):

Սակայն եռեալ վառէին սիրաք խանութպանաց եւ արհեստաւորաց, եւ յետ կէս գիշերոյ գողցես խելայեղեալ եւ դանգիտեալ ի վրտանդից ցնցմանց եւ փլատակաց, անցեալ ընդ ձորն դիմեցին բազումք ի կողմանս հրդեհից, մանաւանդ ի շուկայ, եւ սկսան ողի ի բռին ջանալ շիջուցանել զհուրն օգնութեամբ եւ ջանիւք բազմաթիւ պանտուխտ Հայոց բնակելոց ի խանս, եւ ի միւսմէ կողմանէ հանել եւ աղատել ի փլատակաց դանձինս՝ որ մնային կենդանի, աղաղակէին եւ աղաչէին փրկել զինքեանս ի կիղելոյս եւ ի մահուանէ : Էր որ ի տեղիս տեղիս ինքնին դադարէր հուրն՝ ոչ գտեալ զայն ինչ առ ի բողափառել, կամ հանդիպեալ մեծամեծ որմոց քարուկրեայ բաղանեաց եւ կիսաւեր խառնից :

Ընդ արշալոյսն եւ ի ծագել արեղական, յորժամ հնար էր աչօք բացօք տեսանել զձանապարհ եւ դամենայն ինչ, յաճախեցին բազմաթիւ մարդիկ ի հրդեհավայրս, բազմացան օգնութիւնք, թափեցին զյուսահատ ճիգս, եւ հազիւ ուրեմն յաջողեցան շիջուցանել զհուրն բազմակուլ եւ բազմաւեր յետ տասնեւութն ժամեայ շարունակութեանց եւ աւերածութեանց : Սպառեալ էին ոգիք, պարտասեալ եւ չարաչար խոնջեալ ներկուռ բազուկք հաստատունք, բայց եւ այնպէս առ ոչինչ համարել զտառապանսն, ընդ որովք հեծէին եւ հիւծէին,

Հետեւեցան ի նորոյ հետազօտել զաւերակս, հանել զկիսաւեր անձի-
նրս եւ յաճախ զղիակունս ալլակերպեալս՝ կամ ջախջախեալս եւ
կամ կիսայրեացս, զբանականս եւ զանբանս միանգամայն, կանգնել
զվրանս, կամ կազմել զվրանաձեւ ծածկոցս յապահով վայրս բացօ-
թեայս եւ ի պարտէզս, ամփոփել զընտանիս ի նոսա. էին զի տունք
4-6-8 կառավարէին ի միում վրանի յանձուկ դիրս: Սակաւ ոմանք
էին որ համարձակեցան եւ բնակեցան ի տունս իւրեանց:

Եօթնեակս ինչ ոչ զաղարէր ժափն - շարփն, եւ ոչ ողբք աղիո-
ղորմք զաղարէին ընդ կորուստ սիրելեացն:

Անկան կործանեցան յայսմ նուագի ստուար մասն մեծամեծ օթե-
ւանաց (խան), գլուխք միկարէից, մզկիթք եւ բաղանիք բազումք,
կամարք եւ զմբէթք ոմանք հոչակաւոր Մզկիթին մեծի Ուլուխամի
կոչեցելոյ, տունք եւ խանութք բազումք՝ բաց ի հրկիզելոց:

Բղխեցին յոմանս տեղիս աղբիւրք, ոմանք ցամաքեցան:

Ի նորոյ բղխեաց եւ առաւել առատօրէն հանքաջերմուկն Բիւ-
քիւրքիւ անուանեալ երկու բաղանեաց (արանց եւ կանանց), որ ցա-
մաքեալ էր յառաջին երկրաշարժի որ ի փետրվար ամսեան:

Պատառուածք անհրատեսք բացեալ էին ի դաշտի անգամ: Ոմանք
ծառք մեծամեծք եւ հնաւորքք տապալեալ էին:

Թողցուք պատմել զանցս բանախ: Եւ եթէ ոչ ի գիշերի պատա-
հէր ժափն, կրկնապատիկ եւ հոսապատիկ լինելոց էին կորուստք
անձանց:

Արդ՝ ի լուր ալտոցիկ աղետիցս երկրաշարժի՝ որպէս տեղական
կառավարութիւն եւ յանուանէ կուսակալ փաշայն փութայր հոգայր
զկարեւորաց, նոյնպէս Կեդրոնական կառավարութիւն Օսմանեան
ըստ հրամանի բարեխնամ կայսեր օգոստ. Սուլթան Մէճիտի ոչ յա-
պաղեաց հասնել օգնութիւն հարուածելոց եւ վտանգելոց իրբեւ գթա-
ուատ հայր հասարակաց: Ընդ փոյթ առաքեաց զվրանս, զղրամս եւ
զգեղօրայս ընդ ալոց պիտոյից, ետ բաշխել կարօտելոց, ամենայն
ազգաց առանց խտրութեանց եւ զանցառութեանց, եւ ջան կալաւ
մխիթարել զպրուսացիս: Յատկացոյց զերկուս շողենաւս առ ի փո-
խադրել ձրիարար ի Կ. Պօլիս՝ որք երկնչէին եւ փութային ի փա-
խուստ, որպէս եւ բազումք մեկնեցան ի շրջակայս, ի Պանտրմա, ի
Կ. Պօլիս եւ այլն:

Իսկ Գէորդ Եպսոս. որ չուեալ էր յանցելումն ամի եւ մնայր ի
Կ. Պօլիս, լուեալ զաղէտս զայնոսիկ՝ փութաց ի խորհրդակցութիւն
ընդ Պատրիարքի եւ ընդ գլխաւոր ամիրայից, եւ յՏն Ապրիլի ձեռ-
նարկեաց ի մեծ շուկայի խնդրել եւ հաւաքել զնպաստս ի պէտս եւ

յօդնութիւնն Հայոց Պրոուսայու՝ ընդ ազգեցիկ եւ բարեջան օժանդակութեամբ ճանիկ ամիրայի Փափազեան, որ էր կառավարիչ կամ պետ (սարաֆլար քեհնասար) դրամատեարցն սարաֆ անուանելոց :

Եւ ի 19ն Ապրիլի առաջեաց ի Պրոուսա գլխուն հազար դահեկան (50,000) ի ձեռն Կարապետ Եպս.ի Սեբաստացոյ Պատրիարքական փոխանորդի եւ Պետրոս վարդապետի Տէր-Ստեփաննոսեան ի մխիթարել զՀայս եւ բաշխել ազքատաց եւ որոց կամեցին ելանել ի քաղաքէ եւ գաղթել ի Կ. Պօլիս եւ այլուր :

Ապաքէն բազմօք լքեալ թուլացեալ էին սիրաք եւ բազուկք բընակչաց Պրոուսայու, եւ բազումք ոչ զիտէին զինչ առնել, մանաւանդ թէ ապրելոց էին : Յորս Հայք առաւել կալան զմխիթարութիւն հոգեւոր քարոզչութեամբք եւ խրախուսանօք Կարապետ Եպիսկոպոսի եւ Պետրոս վարդապետի, մանաւանդ հայրական բարեխնամ հոգածութեամբք Գեորգ Եպս.ի Առաջնորդի իւրեանց : Արդիւնաւորեցին զբարերար պղղեցութիւնս եւ զքաջալերութիւնս : Պատուիրակքդ ի ձեռն հաւատարիմ եւ փորձառու անձանց բաշխեցին կարօտելոց զնրպաստ, ետուն կանգնել զհիւղակս եւ զխցիկս ի պէտս ազքատաց ի բացօթեայ, վերանորոգել ամբարտայ զքնակս ոմանց՝ որք կամէին բընակել ի նոսա, ետուն զծախս ճանապարհի որոց կամէին գաղթել այլուր, որպէս եւ Գեորգ Եպս.անձամբ մխիթարէր զգաղթեալսն ի Կ. Պօլիս, գտանէր նոցա զքնակարանս կամ զսենեակս ի բնակութիւն, հասուցանէր նոցա զնպաստս հանգանակեալ ի բարեզարդից :

Յայսպիսում ազետալի վիճակի յաճախէին ի Պրոուսա տարածայնութիւնք ստապատիրք եւ յաւելուին զնոր սարսափս եւ զյուսահատութիւնս բնակչաց, իբր զի իսպառ կործանեցի Պրոուսա ըստ գուշակելոց զխոնականացն երկրաբանից, որպէս եւ յաւուր միում ըստ պատուիրանի քաղաքական իշխանութեան ի ձեռն մունետիկաց ելին բազումք վաղ քաջ ընդ առաւօտս ի բացօթեայս ի շրջակայս քաղաքին, ի Պէօյիւֆ եւ ի Բիւլիւֆ Թէֆէրիմս (գրօսավայրք), ի Պէօյիւֆ Մէգարիւֆ, ի Չամլընա (Գերեզմանատուն Հայոց), ի Քուրտ-Օզլու Մէգարիւֆ, յԼըբլար, ի Պատեմլի, յԱքբըլար, յԱնեմլիք եւայլն, եւ իբրեւ զՅոնան սպասեցաք տեսանել զկործանումն քաղաքի. իսկ ընդ երէկս համոզեալ ընդ տարապարտութիւնս գուշակութեանց՝ յառաջին պահու զիշերոյ վերադարձաք յիւրաքանչիւր բնակարանս՝ բազումք՝ ի վրան եւ ի հիւղակս :

Ասասցուք ի փակագծի : Ոչ խղճէին եւ փոքրաթիւ հակառակորդ յաւելուլ գտարածայնութիւնս առ ի գրգռել զՀայս ընդ զէմ Գեորգայ եւ պատուիրակացն նպաստաբերից, - իբր զի կամին փոխադրել ի

Կ. Պօլիս զամենայն զսպասս եւ զանօթս եկեղեցւոյ, զարծաթեղէնս, զզարզս եւայլն, եւ այսպէս մերկացուցանել զՀայս Պրուսայու: Գուցէ կարծէին մեծարժէք լինել ամենատեսակ ներքին պարագայից եկեղեցւոյ, որք հազիւ լինէին ի դումարի իբր 1500-2000 ոսկեաց:

Իսկ զյետ միոյ ամսոյ նուազէր ժափն տակաւ առ տակաւ, ոմանք վերադառնային ի բնակարանս, սակայն բազումք մնային ի վրանս եւ ի հիւղակս տախտակեայս ցվերջ ամսուան, զկնի որոյ ոչ ոք կալաւ զքնակութիւն ի բացօթեայս, մանաւանդ մօտալուտ ձմեռնային եղանակ յարուցանէր զգոտարութիւնս բազումս:

Սակաւք ոմանք ոչ երբեք մեկնեցան ի տանց իւրեանց, եւ ոչ ի ժամու աղետալի եւ վտանգաւոր ցնցմանց: Ի շարս նոցա զտանէր մի ոմն ի զրացեաց մերոց, Գրիգոր աղայ Մաւիեան ասպակեզործ հանդերձ ընտանեօք:

Նպաստարեք Պատուիրակք եկեալք ի Կ. Պօլսոյ մեկնեցան ի Պըրուսայէ եւ հասին ի մայրաքաղաք ի 27ն Ապրիլի, կացեալ ի Պրուսա իբր եօթնեակ մի: Կատարեցին եւ զիսկումն յեկեղեցւոջ զերիս զիշերս:

ԳԼՈՒԽ ԻԴ.

ՅԱՂԱԳՍ ԶԱԽՈՐԴՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԽԱՆԳԱՐՄԱՆ ԱՅԳԵԱՑ,

ՇԵՐԱՄԱՏԱԾՈՒԹԵԱՆ, ԵՒ ՈՄԱՆՑ ՀՐԴԵՀԻՑ

Գողցես ոչ բաւէին ի թշուառութիւն եւ ի յուսահատութիւն Պըրուսացւոց անցք պատերազմականք, տազնապք եւ աղէտք երկրաշարժից, փութացին եւ յաճախեցին մի զկնի միոյ եւ այլ աղէտք եւ փորձութիւնք դառնազինք՝ մինչեւ իսպառ յոգիս ասպատան առնել զամենեսին, մանաւանդ զՀայս, եւ տառապեցուցանել ի ծայրագոյն անձկութիւնս եւ ի կարօտութիւնս:

Յամաց հետէ տարածէին հիւանդութիւնք եւ խանգարմունք յորթատունկս այգեաց, մանաւանդ ի Տօպու եւ ի Միսի եւ ի մերձաւորագոյն այգիս քաղաքի, որք սակաւքանակ էին համեմատեալ ընդ վերին այգեաց հռչակաւորաց, որոց խաղողք քաղցրահամ, զօրաւոր եւ հոտաւէտ էին, եւ գինիք պատուականք եւ տեւականք հակառակ ջրարբի մերձաւորագոյն այգեաց քաղաքի: Ոչ սակաւ էին Հայոց այգիք ի Տօպու, ի Միսի, ի Չէքիրկէլէր եւ ի քաղաքի, ոմանք աշխատէին այգեգործութեամբ միայն, պարապեալ յաւէտ ի գինեկաճառութիւն, յօղիվաճառութիւն եւ ի քաղցրաւէնիս, որպէս եւ բազումք ունէին զայգիս առ ի պէտս տանց եւ եթ:

Լուեալ եւ ուսեալ ի գաղղիացւոց, նշանակաւոր այդեզործք ոմանք սկսան դարմանել զնորածիլ ողկոյզս խաղողոյ՝ յածեալ զծծմբափոշիս ի խաղողային ազոխս, առանց յաջողելոյ ստանալ զսպահով արդիւնս ի խանդարեալ յորթատնկոց, եւ առանց դէժ չաւասարապէս փոխարինելոյ զծախսն՝ մերթ պատահէր՝ զի անձրեւք սպարդիւն ջնջէին զփոշիս ծծմբոյ, որ եւ յաւելոյր զդժուարութիւն ծանր եւ զտարապարտ ծախս: Այսպէս ուրեմն քիւլլեմէն, որպէս անուանէին ի թուրք լեզու զխանդարմունս որթատնկոց, պատճառէր զվրնաս մեծ Պրուսացւոց, մինչեւ յուսահատել բազմաց՝ բարձի թողի առնել եւ զայգիս: Եղեն եւ Հայք ոմանք՝ որք իսպառ կործանեցան յերեսաց ձախորդութեանց այգեաց՝ անկեալ ընդ ծանր պարտուք, եւ առ վշտի եւ յուսահատութեան եղեն կաթուածահարք, որպէս Մելքոն աղա Կէօյնիւպէօյիւքեան, ազգական մեր ի կողմանէ մօր, եւ այլք:

Սկսան հիւանդութիւնք եւ աւերմունք եւ ի շերամատածութեան, յորում զբաղէին Հայք առաւել քան զՕսմանցիս եւ զՅոյնս:

Երեւէր հիւանդութիւն ինչ յորդահունտս շերամի, եւ եթէ հիւանդանային եւ ոչնչանային որդք յառաջին շրջանի, յանժամ առթէին զվնաս սակաւս, մինչ ի վերջին, իմա ի չորրորդ եւ ի հինգերորդ շրջանին պատճառէին զկորուստ մեծաքանակ ծախուց աւելորդաց եւ զյուսահատութիւն աշխատաւորաց:

Աստի եւ անդի խնդրէին եւ զնէին զառողջ որդահունտս յարտաքուստ, ի հեռաւորաց, ի կողմանց Բարձր Հայոց, ի Ռուսիոյ, ի Պարսկաստանէ, ի Ճարոնէ եւ յայլոց վայրաց, դարձեալ ոչ յաջողէին՝ բացառութեամբ սակաւուց ոմանց: Վարեալ Պրուսացւոց ըստ նահապետական կարգի հնոյ՝ ոչ իմանային զպատճառս եթէ առ ի՞նչ յաջողէր ոմանց, եւ այլոց բազմաց պատճառէր զկրկնակի ձախորդութիւնս՝ մինչ որդահունտք էին ի միոյ տեսակէ եւ ի տեղոյ. գուցէ եւ հունտարերք խառնէին մերթ մերթ զխարդախութիւնս եւ զհենդութիւնս, սակայն յաճախ երեւէին՝ զի խանգարէին եւ շերամատածութիւնք հունտարերից եւ հունտավաճառից: Չեւ էր հաստատեալ Բասքէօրեանն զրութիւն, եւ այսպէս ծանրանային աղէտք եւ ձախորդութիւնք շերամատածութեան, եւ ոչնչացուցանէին զկարելոր եւ զմեծարժէք աղբիւր եւ զչահս արդեանց շերամի, յորմէ վնասէին յաւէտ Հայք ի Պրուսա եւ ի շրջակայ գաւառսն:

Վասն որոյ բազումք սկսան քակել զթթենիս, տնկել զպտղատու ծառս, կամ փոխարկել զպարտէզս յարտս եւ ի բանջարանոցս, եւ կամ բարձի թողի առնել: Իսկ արհեստք ոչ բաւէին ի պէտս նոցա, են դիմէին ոմանք ի գաղթականութիւն առ ի հայթայթել զպարուս-

տըս իւրեանց :

Եղին եւ հրկիզութիւնք, որք դարձեալ եւ միշտ հարւածէին առաւել զՀայս, որպէս տեսցին ի ստորեւ :

Զմետասաներորդ ժամու ընդ երէկս ի 20ն Յունիսի 1854 թուականի Փրկչի, յորում աւուր էր կիր. եւ բարիկենդան պահոց Ս. Լուսաւորչի, եւ հրդեհ ի տանէ Սարգսի Պէնտէրլեան յանկոյս եւ յեզերս ձորոյն՝ զէմ յանդիման ս. եկեղեցոյ եւ դպրոցաց Հայոց, եւ այրեցան տունք իրր վաթսուն եւ հինգ, յիսուն տունն լեալ Հայոց պատուաւորաց : (Սպասուհի տանն արկեալ էր զհուր առ ի ծածկել զգողութիւնս իւր) :

Եւ զի աւուրք շերամատածութեան էին, լի էին ի տունս բազմաց դիւրավառ նիւթք եւ խոիւք, հողմէր ի հարաւոյ, միանային ընդ ձախորդութեանցդ առժամեայ պակասութիւնք ջրոյ եւ անձկութիւնք փողոցաց ընդ անփոճութեանց, սպառնայր հուրն ընդարձակել զաւերսն՝ ի չորս թեւս բաժանեալ դուրով : Արձակէին հրայրեաց բեւեռք եւ կարմրացեալ մասունք փայտից եւ անկանէին ի վերայ հանդիպակաց եկեղեցոյ, դպրոցաց եւ տանց Հայոց, ընդ զէմ որոյ տնօրինեցան խիստ հսկողութիւնք եւ պաշտպանութիւնք ի տանեաց եւ ի փողոցաց՝ պատրաստութեամբք ջրոյ եւ այլոց, եւ արգելեն զնոր հրկիզութիւնս յայսկոյս — յաջակողմն ձորոյ :

էր ժամ վեց ի գիշերի՝ յորժամ շիջաւ հուրն ոգեսպառ ջանիւք բնակչաց եւ ջրհանկրաց : Յորս ոչ սակաւ էին աշխատակցութիւնք կառավարական պաշտօնէից :

Դարձեալ յաւուրս Քառասնորդական Պահուց ի 1861 թուականի հրդեհեցան պատուաւոր շուկայն Հայոց որ ի Տէմիր-Գաբու, եւ զի էր քարուկիր կամարակապ, որպէս եւ մեծ շուկայն Ուզուն-Չարշը ունէր զերկաթաթեղեայ կամարս ձգեալ ի վերայ հանդիպակաց խանութից զճանապարհացն, ծուխ հրոյ թանձրացեալ էր ի շուկայի եւ ոչ ոք համարձակէր մտանել ի ներքս ընդ կամարս. միանդամայն ի յետսակողմանս, էին խիտ առ խիտ եւ կից միմեանց խանութք եւ մթերանոցք, որք յաւելուին զըժուարութիւնս ընդ զէմ հրդեհաշիջական ջանից եւ գործողութեանց : Վասն որոյ բազումք ի Հայոց ոչ կարացին ազատել զպարանքս եւ զգոյս իւրեանց, զգրամս պատրաստիս, եւ զհաշուատետրս, եւ արք առաւել քան զերեսուն ի Հայոց ճոթավաճառաց եւ կերպասավաճառաց մերկացան յամենայնէ, սակաւուց ոմանց յաջողեցան դատարկել զխանութան՝ փոխադրեալ զպարանսն յապահով մթերանոցս քարուկրեայս եւ յօթեւանս (խան) : Իսկ բազմաց հնարաւոր եղև հազիւ ազատել զմասն ինչ ի վաճառացն :

Այրեցաւ արտաքին մասն Տէմիր-Գաբույի համայն Ուզուն-չարշը,

Գաղեղէր, մի մասն Գավաֆլարի.— խանութք առաւել քան զերկերիւր եւ գլխուն: Սակաւք ոմանք յօտարաց ենթարկեցան ծանր հարուածոց հրոյդ, մինչ Հայք կրեցին նաեւ յայս նուագի զդառնութիւն եւ զմեծագոյն մասն աղետից հրկիզութեան:

Թողումք յիշել զպակասելն առեւտրական միջոցոց, զսնանկութիւնս ոմանց մետաքսագործարանապետաց եւ զկորուստս մեծագումար դրամոց, զփոփոխութիւնս յարաբերութեանց եւ ճանապարհաց, զմրցմունս հրոպատոց ընդ դէմ ներքին գործուածոց եւ վաճառաց, եւ զնուագելն սպառմանց արդեանց ներքին արհեստից եւ այլոց եւ այլոց:

ԳԼՈՒԽ ԻԵ.

ՅԱՂԱԳՍ ՎԵՐԱԳԱՐՁԻ ԳԷՈՐԳ ԵՊՍԻ Ի ՊՐՈՒՍԱ.

Գէորդ Եպս. ընտրեալ յանդամ կեդրոնական Հոգեւոր ժողովոյ Հայոց Կ. Պօլսոյ՝ յորում վերընտրեցաւ ի սեպտեմբերի 1855ի, ոչ մնայր ազատ ի զբաղմանց, եւ հետեւէր ընդ նախանձախնդիր անդամակցացն եկեղեցականաց եւ ընդ Գեղազոյն ժողովոյ ի հաստատել զկանոնն բարեկարգութեան ի պէտս վիճակաց եւ այլոց: Թէ որպիսի կանոնք էին եւ յո՞ր պէտս հաստատեալ, կամէաք արդեօք հետագօտել եւ առնուլ յուշադրութիւն՝ եթէ տեսանէաք զգործադրութիւն նոցա եւ զարդիւնաւորութիւն:

Սակայն պարզ է խոստովանել, զի ժամանակակից կարօտութիւնք եւ պէտք, մանաւանդ ընդարձակութիւն յարաբերութեանց ընդ լուսաւորեալս ազգս Եւրոպայի, շարժէին տակաւ զազգային վարիչս ընդ բանիրուն անձանց զարգացելոց յԵւրոպա եւ յարտաքին զխտութիւնս զծել զբարեկարգ ուղղութիւն նոր եւ զվարչութիւն սահմանադրական, յորպիսիս զնային երբեմն առխարխափ, մերթ ոչ զիտէին զոր գործէին, եւ յաճախ վիճէին ընդ միմեանս եւ մրցէին ընդ դէմ միմեանց:

Ապա ուրեմն ժամանակակից նորոգ հոսանաց յառաջադիմութեան էին արդիւնք եւ նախանձախնդիր կանոնադրութիւնք Հոգեւոր ժողովոյ, բայց ոչ բաւէին ի գոհացումն շարժմանց՝ մինչեւ հաստատեցաւ Ազգ. Սահմանադրութիւն թերի իմն եւ անփորձ կանոնիւք եւ ուղղութեամբ՝ հետեւեալ Ամերիկեան եւ Անգղիական վարչութեանց սահմանադրականաց:

Մինչ պարապէր այսպէս Գէորդ Եպս յանդամակցութեան Հոգ. ժողովոյ, Հայք Պրոսայու զգացին մեծապէս զկարօտութիւն ներկայութեան Առաջնորդի իւրեանց, մանաւանդ ցանկային վայելել

զհոգեւոր մխիթարութիւնս ի թեթեւութիւն այնքանեաց աղետից եւ վշտաց՝ որովք հեծէին: Վասն որոյ յուզէին գինդիրս, յաճախակի գրութեամբք եւ հանրաթղթովք թախանձէին զԱզգ. Վարչութիւն Կ. Պօլսոյ եւ զԳէորդ Եպս. զԱռաջնորդ իւրեանց, որպէսզի վերադարձցի ի Պրուսա:

Պատրիարք-Արքեպիսկոպոս եւ հոգեւոր ժողովականք կարծէին սիրաշահել զՊրուսացիս՝ առաջարկեալ Գէորդ Եպսի՝ զի վերստանձնեալ եւ զԱռաջնորդութիւն Պրուսայու՝ փոխանորդաւ կառավարեսցէ զվիճակ Պրուսայու, եւ ինքն կացցէ մնացէ յանդամակցական պաշտօնի իւրում աստ ի Կ. Պօլիս: Պրուսացիք շարունակէին անընդհատ զթախանձանս իւրեանց եթէ հանրադրութեամբք եւ եթէ հրաւիրակօք, եւ արտասուտախառն պաղատանօք աղաչէին զԳէորդ Եպս: Գիտէր նա, զի վտանգ իմն նոր սպառնայր Հայոց Պրուսայու, այս է յուզումն ծանր ընդ դէմ նուազաթիւ հակառակորդաց եւ շարժումն կրօնափոխական, զոր հետեւէին արդիւնաւորել նորեկ անձինք ոմանք Եւրոպացիք եղեալ ի զիմակ բժշկական արուեստ եւ խմորէին զմիամիտս ի լութեբականութեան:

Վասն որոյ փութացաւ Գէորդ Եպս ապացուցանել ի նորոյ յանձին իւրում զարժանաւորութիւն եւ զյատկութիւնս Քաջ Հովնի, խոնարհեցաւ ի խնդիրս Պրուսացւոց, եւ ետես զպատրաստութիւնս ուղւոյ:

Պատրաստ մնային հրաւիրակք ի Պրուսայէ, քահանայք եւ իշխանք, ընդ որս մեկնեցաւ աստի ի Կ. Պօլսոյ յՏն Նոյեմբերի (1855) եւ էջ ի Կէմէլէյեկն: Յետ դարմանելոյ անդ զանակնկալ՝ այլ զթեթեւ տկարութիւն անձին իւրոյ, ըստ սովորական կարգի եւ ուղեկցութեամբ ստուարաթիւ ժողովրդեան հմուտ ի Պրուսա: Ի կազմելն զթափոր եւ զհանդէս եկեղեցական մերձ եկեղեցւոյ, քաղցրանուազ երգեցողութիւնք, կարօտայիր շարժմունք եւ ողեւորութիւնք ժողովրդեան շարժեցին զԳէորդ Եպս. յարտասուս, եւ լայր հեղձամաղձուկ, լացին եւ Հայք հեկեկանօք, որով տեսարան բերկրառիթ՝ միանգամայն սրտածմլիկ պարզեցաւ առաջի աչաց:

Յետ աղօթից հեղձամաղձուկ ձայնիւ խօսեցաւ ժողովրդեան զմխիթարական բանս համառօտս, օրհնեաց զնոսս եւ ել յԱռաջնորդարան՝ տուեալ զԱջ իւր խուռներամ եւ կարօտակէզ ժողովրդեան ըստ ջերմեռանդ փափաքանաց նոցա:

Զերիս գիշերս արարեալ զՀսկումն յեկեղեցւոջ առթիւ Երկրաշարժի, ի 13ն ամսոյն յաւուր կիւրակէի մատոյց ինքն Տ. Գէորդ Եպս. զյատուկ ս. պատարագ մեծահանդէս, խօսեցաւ զխրատական

քարոզ սրտաշարժ եւ ոգեւորեաց զժողովուրդ, որ լցեալ էր բերկրառիթ իմն ուրախութեամբ, եւ յուսայր ներկայութեամբ Առաջնորդի իւրեանց ազատել այլեւս ի փորձանաց եւ յաղետից, գտանել զյաջողութիւնս հանդերձ հոգեւոր միաթարութեամբք: Յետ աւարտման ս. պատարագի արար անդատան փառաւոր իմն թափորիւ ի չորեսին կողմունս եկեղեցւոյ: Եւ յետ այնորիկ արդարեւ զազարեցաւ ժամն, որ մերթ երեւէր: Սկսաւ ժողովուրդ յաճախել ի ս. եկեղեցի խոռն բազմութեամբ: Եւ փութով վերաշինել զկիսակործան մասն որմոյ ս. Պողոսեան վարժատան, փոխադրեաց զաշակերտս զպրոցաց ի Հին-Առաջնորդարանէ (գտանելոյ իրր ի յետսակողմն եկեղեցւոյ եւ առնթեր եւ ի ստորեւ նորոյ Առաջնորդարանի կառուցեալ ի Յարութիւն Եպսէ) ի վարժարան եւ ի ծաղկոց, որք փակեալ մնային առթիւ երկրաշարժից, եւ մանկունք պարապէին յուսմունս ի Հին Առաջնորդարանի շինելոյ ի Քարաքօղեանէ: Ոչ զազարեցաւ զպրոցն օրիորդական՝ գտանելով յապահով եւ յանվտանգ շինուածի, որ գրեաթէ էր կից հնոյ Առաջնորդարանի ի հիւսիսակողմն:

Ըստ այսմ խնամ կալաւ Գէորգ Եպս եւ ետ վերանորոգել զվնասեալ կալուածս ազգայինս, հետեւեցաւ պայծառութեան եկեղեցւոյ, բարեկարգութեանց ըստ այլ եւ այլ զործոց՝ խնդրոց եւ ժողովոց:

Սոհեմութեամբ իմն եւ քարոզութեամբք զազարեցոյց զյուզմունս կրօնափոխականս, եւ խաղաղութիւն նախանձելի թագաւորէր ի Հայս Պրուսայու, թէպէտ նախանձելի ոչ էին անձկութիւնք նոցա ըստ այլ խնդրոց կենցաղականաց:

Պապանձեցոյց զհիւպատոսն Անգղիական զպ. Սանտիսըն Անգլիացի, որ յանիրաւի պաշտպանէր եւ խրախուսէր զոմանս հայս մոլորեալս հանդերձ հակառակութեամբք: Յաւուր միում եկն պ. Սանտիսըն առ Գէորգ Եպս ի վանս (որպէս անուանեն Պրուսացիք զԱռաջնորդարան) առ ի պահանջել պատժել զմանկունս հայոց՝ զոր քարկոծէին զոմն հաւատուրաց զձիւնիչեան ի տոհմէ Աղաւնի Ստեփաննոս Արքեպսի, (երբեմն սարկաւագ) ի Քարաղաք թաղի՝ նախատեալ եւ անուամբս չարգաւակ: Եւ զի եկեալ էր այրն այն անպատկառ իմն եղանակաւ, ազուցեալ զերկայն կոչիկս ուղեւորականս յոտս եւ կալեալ զմտրակ ի ձեռին, անմիջապէս արտաքսեաց Գէորգ Եպս զնա ի ներկայութենէ իւրմէ, ասելով, զի «նախ ուսջի՛ր զքաղաքավարութիւն եւ զպարտս քո, եւ ապա եկ առ իս»: Որպիւսոյ պատուոյ արժանացաւ նա մի անգամ եւ ի Սարիմ-փաշայէ երբեմն մեծ եպարքոսէ:

ԳԼՈՒԽ ԻԶ .

ՅԱՂԱԳՍ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԳԷՈՐԳ ԵՊՍԻ Ի ՊԱՏՐԻԱՐԲ

ԵՒ ԳԱԼՍՏԵԱՆ Ի Կ . ՊՈԼԻՍ

Ս . Յակոբոս Արքեպս Պատրիարք տեսեալ զանձեռնհասութիւն իւր եւ զգոհարութիւնս արտաքինս ընդ դէմ պաշտօնավարութեան իւրոյ, մանաւանդ զպահանջս նորս եւ զյառաջադիմական շարժմունս երիտասարդաց նորահասից, զրեաց զհրաժարական իւր եւ առաքեաց Բ . Դուռն ըստ սովորական կարգի յօգոստոս ամսեան 1858՝ յետ փորձելոյ սիրաշահել զգլխաւորս Ազգի եւ զերիտասարդս Տեղապա-
հաւ, որում կարգեցաւ Գաւիթ Եպս . Միաբան Ս . Երուսաղէմի, որ եւ տեւեաց ամիսս ինչ :

Զյայտւ միջոցաւ հաստատեալ էր Տ . Մատթէոս Արքեպիսկոպոս երբեմն Պատրիարք ի Կաթողիկոս ամենայն Հայոց՝ յետ վախճանի Տ . Ներսիսի Ս . Կաթողիկոսի որ ի 13ն փետրվարի 1857ամի :

Արդ հարկ ի վերայ կայր ընտրել զնոր պատրիարք, որոյ վասն եկեալ էր պաշտօնաթուղթ կարեւոր ի Բ . Դրանէ :

Վասն որոյ յԴն Հոկտեմբերի հաւաքեալ Ազգային ժողովոյ համաձայն յայնժամեան սովորութեան եւ կարգի, ընտրէ զԳէորգ Եպս . Պրուսայու ի Պատրիարք Հայոց Կ . Պօլսոյ, եւ կազմեալ զհանրագիր - տեղեկագիր (Մագալաթա) ներկայացուցանէ Բ . Դրան առ ի մատուցանել ի հաստատութիւն Վեհ . Սուլթանի :

Յետ աւուրց ինչ պատրաստեալ Ազգային Վարչութեան զհրաւիրակս եւ զկարեւոր պաշտօնաթուղթս, առաքէ առ նորընտիր Պատրիարք Տ . Գէորգ Եպս . ի Պրուսա, որք հասին անդր ի21ն Հոկտեմբերի :

Ոչ էր սահման տրտմութեան Հայոց Պրուսայու եւ համայն վիճակայնոցն, որք ոչ կամէին զրկել ի մերձաւոր խնամոց եւ ի հոգածութեանց Առաջնորդի իւրեանց, որում մեծ պէտս ունէին : Այլ հարկ էր պահմայ խոնարհիլ առաջի կամաց Տեառն եւ ընտրութեան Ազգային ժողովոյ :

Փութային կուսակալ, աւազանի, Առաջնորդք, Մետրապոլիտ յունաց, Քահանայապետ Հրէից, Հիւպատոսք եւ գլխաւորք օսմանց եւ օտար ազգաց զալ ի շնորհաւորել զընտրութիւն Տ . Գէորգ Արքեպսի ի պատրիարք, որ եւ փոխանակէր նոցա զշնորհակալութիւն փոխադարձ այցելութեամբք եւ սիրալիբ յարարերութեամբք :

Միանգամայն սնօրինէր զկարեւորագոյն գործս առաջնորդակա-
նըս եւ վիճակայինս, տայր պատուէրս եւ զհրահանգս քահանայից

և անդամոց ազդային վարչութեան, առնէր զյանձնարարութիւնս, եւ տեսանէր զպատրաստութիւնս ուղւոյ:

Ի բնարան առեալ զայս բան Փրկչին «Եղիցին կամք քո», խօսեցաւ զսրտառուչ մնայք բարեաւ ի ս. Եկեղեցւոյ: Լայր ինքն, լային եւ ժողովուրդ հեկեկանօք:

Ի 26ն Հոկտեմբեր ամսոյ յետ տալոց զհրաժեշտն վերջին առ կուսակալ (Խիւտավէնտրիկեար նահանգի) կազմեցաւ թափօր եկեղեցական եւ ուղեւորական, եւ Տ. Գէորգ Արքեպս. նստեալ ի ձի (զոր առաքեալ էր վսեմ. կուսակալ ի պատիւ նորին սրբազնութեան) ել յուղի ընդ հրաւիրակս եւ ուղեկցութեամբ նշանաւոր անձանց մերոց եւ օտարաց՝ կազմեալ զփառաւոր թափօր, քաղցրաձայն երգովք զպրաց եւ մանկանց յառաջացաւ մինչեւ զկամուրջն նորաչէն ի Սէք-Պաշի:

Ոստիկանք զժուարանային կառավարել զխուռներամ բազմութիւն երկսեռ ժողովրդեան, որք հոսէին յաչաց զյորդ արտասուս, զորս խաչակնքեալ օրհնէր նորընտիր պատրիարք՝ հեղձամաղձուկ լեալ եւ ինքն:

Յետ արձակելոյ զստուար մասն ուղեկցաց ի Տէմիրքաշ հասեալ յԱքընրլար, օրհնեաց Տ. Գէորգ Արքեպս. ի նորոյ զբազմութիւն Հայոց եւ արձակեաց վերադառնալ ի Պրուսա: Իսկ յետ օ առնւոյ անդ զհանդիստ սահաւուք, շարունակեաց զճանապարհն ուղեկցութեամբ ոմանց քահանայից եւ երեւելեաց քաղաքի եւ ընդ երէկս հասեալ ի Կէմլէյեկ, եմուտ ի շոգենաւ:

Ի յաջորդ աւուր ժամանեցաւ ի Կ. Պօլիս: Խոսովեալ էր ծով, որոյ վասն յամեցաւ եւ ընդ երէկս յաջողեցաւ հասանել եւ մտանել ի նաւահանգիստ:

Դիմեցին ի շոգենաւ եւ ներկայացան նորընտիր Ս. Պատրիարքի խորին մեծարանօք փոխանորդ պատրիարքական, անձինք կարեւորք եւ նշանաւորք որք փութացեալ էին եւ սպասէին, որպէս եւ ժողովուրդ բազում յոյժ մնար եւ սպասէր առ ծովեզերքն ի Պահնէ-Գարու եւ ի կամրջի:

Ելեալ ի շոգենաւ եւ հասեալ ի Գում-Գարու, ուր կազմ եւ պատրաստ սպասէր սովորական թափօր մեծահանգէս ի փողոցի Պատրիարքարանի ընդ խուռներամ բազմութեան ժողովրդեան, սկսան երգել զպիբք զերդ նոր եւ սրտաշարժ ի պատիւ նորին սրբազնութեան: Եւ այսպէս մտեալ յաւազ եկեղեցի, յետ աղօթից խօսեցաւ զհամառօտ բանս առ ժողովուրդ ըստ պատշաճի, եւ օրհնեաց զժո-

զովուրդ: Էր ժամ մի յառաջի պահու գիշերոյ եւ ճրագունք լուցեալ, եւ ի Պատրիարքարան, ուր սպասէին ոմն ներկայացուցիչ եկեղեցական ի դիմաց վեհ. Կաթողիկոսի, անձինք նշանաւորք, եկեղեցականք եւ աշխարհականք, ամիրայք, եւ արտաքին պաշտօնեայք, եւ ընկալաւ զչնորհաւորութիւնս նոցա հանդերձ այլովք:

Ի 29ն ամսոյ զնաց ի Բ. Գուռն հանդիսիւ մեծաւ՝ ըստ սովորական կարգի, եւ ետ զայցելութիւնս պաշտօնականս առ Մեծ Եպարքոս, առ պաշտօնեայս Արտաքին եւ Ներքին Գործոց, եւ վերադարձաւ ի Պատրիարքարան: Հաստատէր այս կարգ ըստ մասնեայ զստանձնումն Պատր. պաշտօնի համաձայն հնոյ կարգի:

Փութացաւ տալ եւ ինքն զփոխադարձ այցելութիւնս սկսեալ նորընտիր Վեհ. Կաթողիկոսէ, որ մնայր ի Միջագեղջ, ի Յակոբոս Արքեպիսկոպոսէ ի նախորդէ իւրմէ, որոյ վասն էանց յիւսկիւտար: Եւ ի գեշերի դայ թուղթն հրաւիրանաց առ ի ներկայանալ Վեհ. Սուլթան Մէճիտ կայսեր ի յաջորդ աւուր: Իսկ փոխանորդն պատրիարքական Իզնատիոս վրդ. (ապա Եպս. եւ Պատրիարք) Սամաթիացի դանդաղի առ ի հասուցանել զթուղթ առ Գէորգ Արքեպս. Պատրիարք յիւսկիւտար, իսկապէս ոչ զիտեցեալ զպարունակութիւն՝ կարծելով սովորական ինչ թուղթ լինել պաշտօնական, եւ այսպէս յետաձգի պաշտօնական ներկայացումն, որոյ վասն զայրացաւ յոյժ նորին սրբազնութիւն եւ արձակեալ զԻզնատիոս վրդպ. ի փոխանորդութենէ՝ կարգելով ի տեղի նորա Գէորգ վրդպ. Բարերդցի: Միանգամայն փութացաւ հաղորդել որոց եւ զոր ինչ հարկ էր, եւ Կայսրն բարեսիրտ հաճեցաւ յատկացուցանել ի նորոյ զօր ընդունելութեան ի կայսերական սպարառ ի 11 նոյեմբեր ամսոյ:

Ուստի ի սմին աւուր եւ եւ զնաց հանդիսիւ մեծաւ ի պալատն կայսերական ի Տօլմա-Պահիէ,^{*} եւ ներկայացաւ Վեհ. Կայսեր Թուրքիոյ - բարեհամբաւ եւ բարեսիրտ Սուլթան Մէճիտի, որ ընկալաւ զՏ. Գէորգ Արքեպս. զպատրիարք սիրով մեծաւ եւ մեծարանօք, եւ տեսակցեցաւ իւր քսան վայրկեան, հարցեալ զողջունէ եւ զլիճակէ հայոց, եւ խոստացեալ շարունակել զհայրական խնամս իւր բարեգութիւն: Որում փոխանակեաց եւ Գէորգ Արքեպս զչնորհաւալութիւն երախտապարտ հանդերձ պատշաճ պատասխանեօք եւ բարեմաղթութեամբք, եւ մեկնեցաւ ի պալատէ անտի: Հասեալ ի Գոււմ-Գարու ի

^{*}ՅԱՆՕԹ. Վ. Ե. Մ. - Զարգիս պարտ է նորընտիր պատրիարքի նախ ներկայանալ Կայսեր, եւ ապա երբայ ի Բ. Գոււմ: Երեւի խանգարումն ինչ, եւ դժուարացաւ ստուգել զպատմառն:

վայրն սովորական, եմուտ յուսկ եկեղեցի եկեղեցական հանդիսիւ, յետ աղօթից օրհնեաց զժողովուրդ Հայոց, հաղորդեաց զբարեւն կայսերական, արար զբարեմաղթութիւնս, եւ ել ի Պատրիարքարան, յորում էին տակաւին բնակութիւնք եւ պաշտօնատուն պատրիարքաց :

ԳԼՈՒԽ ԻԷ.

ՅԱՂԱԳՍ ԶԱՆԻՑ ԵՒ ԶԵՆՆԱՐԿՈՒԹԵԱՆՑ

ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊՍ. — ՊԱՏՐԻԱՐԻԻ.

Ոչ էր անփորձ Տ. Գէորգ Արքեպս. ի գործս եւ ի պարտաւորութիւնս պատրիարքականս ընդ իրաւասութեանցն եւ ի վարչութեան պատրիարքարանի, եւ ոչ պէտս ունէր սպասելոյ զժամանակ ինչ ի դիտել զընթացս գործոց, ժողովականաց, պաշտօնէից եւ այլոց, եւ այնպէս ձեռնարկել ի պաշտօնավարութիւն :

Յետ դրելոյ եւ տարածելոյ զառաջին շրջաբերական — կոնդակ պատրիարքական առաքեալ եկեղեցեաց եւ վիճակաց՝ ամփոփելով ի նմին եւ զպատուէրս եւ զխրատս կարեւորս, խնդրեաց յանդամոց Հոգեւոր եւ աշխարհական ժողովոց, եւ Գերագոյն ժողովոյ՝ անխափան զալ ի պաշտօնավարութիւնս իւրեանց եւ կարգադրել ընդ փոյթ զգործս ազգայինս. պատուիրեաց խտրիւ պաշտօնէից պատրիարքարանի եւ դիւանատան կանխել ի գլուխս պաշտօնավարութեանց եւ հաւատարմութեամբ վճարել զանձնիւր պաշտօն. հրամայեաց եւ քարոզչաց եւ քահանայից եկեղեցեաց Մայրաքաղաքի խնամ առնել եւ հսկել ի բարեկարգութիւնս եւ ի պայծառութիւնս եկեղեցեաց եւ զբարոցաց, ի պաշտպանութիւն օրինաց եւ կանոնաց, յանխափան կատարումն եւ ի փառաւորութիւն ժամերգութեանց եւ արարողութեանց, արթուն կալ ի հոգեւոր մխիթարութիւնս եւ ի պէտս ժողովրդեան, որպէս եւ ինք Գէորգ Արքեպս. անակնկալ իմն այցելութեամբք հսկէր ի վերայ նոցա :

Ուստիանեաց զքմահանձոյ միջամտութիւնս եւ զտնօրէնութիւնս ոմանց անձանց վարժելոյ ի գործս Պատրիարքարանի եւ դաւառացւոց, եւ կարգադրեաց, զի ի ներկայութիւն ժողովոյ քննեալ որոշեացին ամենայն խնդիրք եւ գործք, լուրջ իմն խորհրդակցութեամբք, եւ ինքն գործադրեսցէ, թէ եւ զանմիջական զինդիրս եւ զգործս ընթացիկս ինքնին փութայր տնօրինել : Ըստ այսմ խափանեցան ազբիւրք անձնական շահուց ոմանց անձանց վարժելոց յաւուրս թոյլատու պատրիարքութեան նախորդի իւրոյ :

Ոտորհրդակցեալ ընդ կարեւոր անձանց, տնօրինեաց զայս : Անդամք վարչութեան, հոգեւոր եւ աշխարհական ժողովոյ, ի քննելն

եւ յորոշել զայս եւ զայն զործ եւ զինդիր, վիճէին յաճախ ոչ զիտակցարար, եւ անդամ իւրաքանչիւր տարաձայնէր ի ժողովրդեան զքմահաճոյ տեղեկութիւնս զայթակղեցուցիչս հակառակ կարծեաց եւ բանից՝ զորս արտայայտէին ի ժողովս: Եւ այսպէս նենգամտութեամբ իմն արկանէին զմեղադրութիւնս ի վերայ պատրիարքաց, առ ի զրգուել զժողովուրդ, համաձայն մտադրութեանցն եւ խարզաւանութեանցն: Կարգադրեաց սա, զի փոխանակ համառօտ արձանադրութեան որոշման խնդրոց, արձանադրեցցին բանք եւ զիտողութիւնք անձնիւր անդամոյ: Եւ առ այս կազմեաց զղբւան նոր, եւ Սերորէ վրդպ. Արարատեան ընդ բշչկապետ Ստեփան պէյի (այլա փաշայ) Արսլանեան սկսան արձանադրել զբանս եւ զկարծիս անձնիւր անդամոյ Գերազոյն ժողովոյ, եւ ի յաջորդ ժողովի ներկայացուցանել ի վաւերացումն ժողովոյ նախ քան զձեռնարկել յօրակարգ խնդիրս: Եւ յետ այտորիկ բազումք սկսան լուռ եւ եթ կալ ի ժողովս՝ զգուշացեալ ի խօսելոյ, մինչ Գէորգ Արքեպս. յորդորէր յայտնել զկարծիսն համարձակարար եւ մի՛ երկնչել յարձանադրութեանց:

Տնօրէնութիւն այսպիսի եւ խստութիւն աջալուջ ի նորոյ յաւել եւ զժգոհուցութիւնս ոմանց անձանց ոչ բարեմտաց:

Արգել զյաճախութիւն անձահ եւ անպէտ տեղեկադրութեանց (թաքրիք) եւ խնդրադրութեանց առ պետութիւն, եւ ուշ եղ կանոնաւոր եւ ամփոփ խմբադրութեանց եւ այն ազգօգուտ խնդրոց կարեւորաց եւ եթ: Միանգամայն հետեւէր ինքնին եւ արդիւնաւորէր զփութաջան կատարումն խնդրոց ի Բ. Գրան, մինչ յամաց հետէ բարձի թողք առնէր Օսմ. կառավարութիւն զմեծազոյն մասն զրութեանց Պատրիարքարանի՝ տեսեալ զանպատեհ զրուածս եւ զմիջամտութիւնս օտարոտիս: Մակայն եւ այս տայր առիթ զժգոհութեանց ոմանց անձանց:

Հաստատեաց զսիրալիք եւ զազգեցիկ յարարերութիւնս ընդ Օսմանեան նախարարաց, մանաւանդ ընդ պաշտօնէից արտաքին եւ ներքին զործոց, ընդ մեծ եպարքոսի (Ալի եւ Ֆուադ փաշայից), ընդ զեսպանս օտար պետութեանց եւրոպականաց եւ ընդ ալլոց կարեւորազոյն անձանց:

Եւ այսպէս բարձրացոյց զազգեցութիւն եւ զպատիւ պատրիարքութեան եւ պատրիարքարանի:

Առանց ահն տալոյ տկարամտաց եւ նենգամտաց, յատկացոյց զյատուկ կառս եւ զերիվարս ի պէտս իւր, մինչ համարէին զայս նշան փառասիրութեան՝ առանց ըմբռնելոյ զպէտս եւ զպատիւ պատրիարքի որ յարտաքին յարարերութիւնս: Մանաւանդ ինքն հոգար զժախուց:

Տնօրէնութիւն այսպիսի եւ խտուութիւն աչալուրջ ի նորոյ յաւելլել զգոյնութիւնսս ոմանց անձանց ոչ բարեմտաց :

Արդեւ զյաճախութիւն անձահ եւ անպէտ տեղեկազրութեանց (քաղքիք) եւ ինդրագրութեանց առ պետութիւնս, եւ ուչ եղ կանոնաւոր եւ ամփոփ խմբազրութեանց եւ այն աղբուրտ ինդրոց կարեւորաց եւ եթ : Միանդամայն հետեւէր ինքնին եւ արդիւնաւորէր զփութաջան կատարումն ինդրոց ի Բ. Գրան, մինչ յամաց հետէ բարձիթողի առնէր Օսմ. կտավարութիւն զմեծագոյն մասն զրութեանց Պատրիարքարանի՝ տեսալ զանպատեհ զրուածս եւ զմիջամտութիւնս օտարոտիս : Սակայն այս տայր առիթ զգոյնութեանց ոմանց անձանց :

Հաստատեաց զսիրայիւր եւ զաղղեցիկ յարարելութիւնս ընդ Օսմանեան նախարարաց, մանաւանդ ընդ պաշտօնէից արտաքին եւ ներքին գործոց, ընդ մեծ Լպարքոսի (Ալի եւ Ֆուատ փաշայից), ընդ զեսպանս օտար պետութեանց եւրոպականաց եւ ընդ այլոց կարեւորագոյն անձանց :

Եւ այսպէս բարձրացոյց զաղղեցութիւն եւ զպատիւ պատրիարքութեան եւ Պատրիարքարանի :

Առանց ուկն տալոյ տկարամտաց եւ նենդամտաց, յատկացոյց զյատուկ կտուս եւ զերիվարս^{*)} ի պէտս իւր, մինչ համարէին զայս նշան փառասիրութեան՝ առանց բմբունելոյ զպէտս եւ զպատիւ պատրիարքի որ յարտաքին յարաբերութիւնս : Մանաւանդ ինքն հոգայք զճախուց :

Այցեւէր վարժարանի Աւազ Եկեղեցւոյ Գում-Գարույի :

Հարկ էր պատրիարքի տալ Ազգ. Հիւանդանոցի զպաշտօնական այցելութիւն, եւ հակառակ ինդրանաց հոգարարձութեան՝ օրածոյէր Գէորգ Արքեպիսկ. զայցելութիւն իւր, կամեցեալ ի յեղակարծ ժամուերթալ ինքնին եւ տեսանել աչօք իւրովք զիսկական վիճակ Ս. Փրկչ. Կեդր. Հիւանդանոցի :

Գիտէր սա ստուգութեամբ զվիճակ Հիւանդանոցի եւ կամէր մերկացուցանել զխարդաւանութիւնս որ պաշտօնական այցելութիւնս :

Միջոցաւ բժշկապետ Սերոբէի Վիչէնեան (Սերվիչէն Էֆէնտի) եւ այլոց հաւատարիմ անձանց առնոյր հանապաղ զճշգրիտ, միանդամայն զլակճառիթ տեղեկութիւնս զԱզգ. կեդրոնական Հիւանդանոցէ, զանխնամ վիճակէ Հիւանդաց եւ անկելոց, ցաւազարաց եւ խելագարից զանկողնոց, զհանդերձից եւ զաննդոց նոցա, զորբոց եւ զզպրոցէ

*) Երանօթ. Վ. Ե. Մ. - Պօղոս Պէյ Տառեան, վառօղպիտ, նուիրէ զկէս կառաց, իսկ ինք գնայ առնու զկտուսն :

և և թէ պահպանէին յոյժ յոյժ ի դպրոցի մահճակալք և անկողինք համեմատութեամբ թուոց աշակերտաց, մինչև ի միում անկողնուջ ննջել 20-25 ամեայ երիտասարդաց ընդ 8-10-12 ամեայ մանկանց և պատանեաց: Հակառակ նուազ և անխնամ սննդեան պատասպարելոցն Հիւանդանոցի և որրոց, յաւուրս պահուց անդամ վայելէին պաշտօնեայք և վարժապետք ընդ տեսչի զհամադամ կերակուրս ուտեաց՝ ընդ ոմանս սիրելիս իւրեանց:

Ուստի յաւուր միում ի յեղակարծ ժամու մեկնեցաւ Տ. Գեորգ Արքեպս -- Պատրիարք ի պատրիարքարանէ, և զճանապարհացն հրամայէր կառապանի ուղղել զկառան յայս և յայն կողմ: Եւ այսպէս եհաս և և մուտ ի Հիւանդանոց, ընդ որ յապուշ կրթեալ և շփոթեալ պաշտօնէից համայնից, տեսչի և վարժապետաց, ոչ զիտէին զինչ առնել: Միանգամայն ազգեցին Հոգարարձուաց ղյեղակարծ գալուստ Ս. Պատրիարքի:

Ինքնին զնաց ուղղակի ի խոհանոց, և սկսաւ հետազօտել զկերակուրս, զկաթսայս, զսանս և զայս: Ետես զանխնամ և զորդնոտեալ կերակուրս պահոց համայն պատասպարելոց Հիւանդանոցի և զհամադամ կերակուրս ուտեաց պաշտօնէից և վարժապետաց յաւուրն պահոց, զանմաքրութիւնս խոհարարի և խոհանոցի, և թէ կարգեալ էին զոմն յապուշ-խելագարից յերկրորդ Մուրֆուրիկ (եամաք) խոհարարի: Ապա չօքաւ ի ննջարան որրանոց դպրոցի ի Ս. Յակոբ և ստուգեաց զտիրատիթ ճշմարտութիւն տեղեկութեանցն հազորդելոց ինքեան:

Չննեալ և զննջարանս հիւանդանոցի, զհիւանդոս, եկն և նստաւ ի սրահի ընդունելութեան՝ մշտացեալ և զայրացեալ:

Պահանջեաց ի տեսչէ և զայլ տեղեկութիւնս կարելորս՝ զքանակութեանէ պատասպարելոց, որրոց, մանկանց և պաշտօնէից, և վերադարձաւ ի Պատրիարքարան: Եւ ի Ժողովի հազորդեաց զարդիւնս այցելութեան իւրոց և զտխուր միճակ Հիւանդանոցի, առաջարկեալ մութեալ բարեկարգել զհաստատութիւն զայն, միանգամայն զՍ. Յակոբ յատկացուցանել ի դպրոց և ի բնակութիւն երիտասարդաց՝ որոշեալ և հետացուցեալ զնոսա ի մանկանց և ի պատանեաց:

Եւ ահա Հոգարարձութիւն Հիւանդանոցի զամօթի հարեալ, զբարոնեալ և բորբոքեալ ընդ յեղակարծ այցելութեան Ս. Պատրիարքի և ընդ խայտառակութիւնս իւրեանց, սկսան յուղել և զբողոքել զկուսակցութիւն իւրեանց և զաղղ (իմա՛ զԿ. Պօլիս) ընդ որս միացեալ էին պարոնայք Քրիստոսաուր Ղազարոսեան և Ստեփան Փափազեան ուսուցիչք դպրոցի Աղղ. Հիւանդանոցի, և տարաձայնէին իրր զի Ս. Պատրիարք կամի կործանել զՀիւանդանոց, ցրուել զաշակերտս,

և և թէ ասացեալ իցէ երկտասարդ աշակերտաց դաւառացւոց ի Հիւանդանոցի, եթէ «զի՛նչ պիտոյ է ձեզ ուսումն, զնացէ՛ք եւ արարէ՛ք զթէլլաբուքիւն (ըստ ոմանց սափրիչութիւն եւ ըստ այլոց լուացարար կամ լուացող լինել ի բազանիս)» :

Ամիրայք ոմանք եւ բարեմիտ անձինք դիմեալ առ Ս. Պատրիարք ազաջէին զնա զազարեցուցանել կամ մեղմել զայս խնդիր կամ սիրաշահել զպղեցիկ հոգարարձուս, վերականդնեալ զպատիւս նոցա :

Ուր ուրեմն հաճեցաւ Ս. Գեորգ Արքեպս. խոստանալ, եւ կանխաւ ազգ արարեալ, զնաց ի նորոյ ի Հիւանդանոց, յորում էին նախապատրաստութիւնք ըստ ամենայն մասանց : Այլ ոչ յայս եւ յայն կողմ չըջեցաւ, ասելով, զի ես զիտեմ զնոր փոփոխութիւնս առթիւ յատուկ այցելութեան իմոյ : Եւ նստաւ ժամս ինչ եւ պարապեցաւ յայլ խօսակցութիւնս ի մեծ ընդունարանի, ընդ ուղեկիցան եւ ընդ հոգարարձուս : Եւ այսպէս վերադարձաւ ի Պատրիարքարան. ոչ ախորժելի եղև եւ այս հոգարարձուաց :

Եղև պատճառ զժգոհութեան եւ սրտմտութեան ոմանց մեծամեծաց եւ խնդիրն գերեզմանատան Բերայի որ ի Բանկայթի թաղի :

Ոչ էր առջին, եւ ոչ վերջին, զոր յուզէին յաւուրս պատրիարքութեան Գեորգայ Քաղաքապետութիւն Բերայի ըստ թելադրութեանց ազգեցիկ անձանց ոմանց ի հայ պապականաց ընդդէմ գերեզմանատան Հայոց Բերայի, կամեցեալ իւրացուցանել զմասն ինչ, որպէս քանիցս փորձեալ էին եւ փորձէին :

Յետ բաժանման Հայոց ուժացելոց եւ մոլորելոց ի պապադաւանութիւն, որպէս յոմանս տեղիս, նոյնպէս ի Բերա պահանջէին զմասն ի հոչակաւոր գերեզմանատանէ յիշելոյ, աւարկեալ եւ ցուցեալ զտապանաքարինս՝ զի նախնիք իւրեանց թաղեալ են անդ եւ ունեն զյիշատակարանս : *)

Եւ զի պատուական զիրք եւ վայր գերեզմանատանն այնորիկ ի Բանկայթի առնուին զնշանակութիւն կարեւոր եւ զգնահատութիւն

Ծանօթ. Վ.Ե.Մ.— Ինքնին հետագօտեալ եւ քննեալ զգերեզմանատունդ յամի Տեառն 1911 տեսաք, զի Պատրիարքունիք՝ յորժամ ի խնամս Պատրիարքարանի բողեալ էր Բ. Դուռն գուժացեալսն, բոյլատրեալ են ոմանց ուժացելոց բաղի յեզերս գերեզմանատան իբր յանպէտ տեղիս զպապադաւան Հայս իբրև գրամադրեալս եւ առ ի որոշել տալով զին ի վերայ գերեզմանաքարից գտաւս Ք՝ եթէ քահանայից եւ եթէ աշխարհականաց, գոր եւ արգելեալ են իսպառ յետ կազմելոյ մոցս գտանմին հոգեւոր կրօնապետութիւն պաշտպանութեամբ պապական պետութեանց : Որով եւ իսպառ որոշեցան ի Հայոց եւ անջատեցան :

բարձր յընդարձակելն եւ ի բարեկարգել Բերայի, դամ քան զգամ մտեալ ի չըջանակ շինուածոց, առթիւ բողոքանաց եւ խնդրոյ պապադաւանից Հայոց նախ եւ զառաջինն կամեցաւ եւ ջան կալաւ երբեմն սպարապետ հռչակաւոր Բիղա փաշա ի գրաւել զվայրն զայն եւ շինել անդ զգօրանոց եւ զայլ շինուածս: Եւ յաջողեցաւ նմա ճարտարութեամբ իմն առնուլ եւ տիրել միոյ մասի գերեզմանատան եւ կանդնել անդ զգօրանոց անկցութեամբ ոմանց ազդեցիկ Հայոց յաւուրս պատրիարքութեան Յակոբայ վերջնոյ:

Յետ նորա յարկաւ քաղաքապետութիւն Բերայի ըստ թելադրութեանց ազդեցիկ Հայոց պապականաց յափշտակել խապառ զգերեզմանատունն զայն յանուն եւ ի պէտս արուարձանին և քաղաքամասին Բերայի, ջան կալեալ նաեւ խափանել զթաղումն ննջեցելոց: Շարունակէին եւ խնդիրք պապականաց ընդ պաշտպանութեամբ պապադաւան զեսպանաց եւրոպականաց, իսկ Պատրիարքարան եւ Հայք Բերայի վիճէին ընդդէմ հակառակորդաց եւ ջանային ի պաշտպանութիւն ազգային սեփականութեան ըստ կալուածազրոյց եւ ըստ վարաւոր տիրապետութեան:

Արժանայիշատակ Աւագ Քահանայ Զաքարիա Ս. Երրորդութեան Եկեղեցւոյ ժրջանութեամբ իմն եւ արթնութեամբ յաջողեալ էր տալ չըջապատել զգերեզմանատունն զայն յետ անցիցն որ յաւուրս սպարապետ Բիղա փաշայի:

Այսպէս շարունակէր յաւուրս պատրիարքութեան Գէորգայ Արքեպիսկոպոսի:

Լուեալ Գէորգայ ի հաւատարիմ ազրերաց, զի ոմանք ի գլխաւորաց Հայոց, եւ յանուանէ Պօղոս պէյ-ամիրայ Տատեան, խոստացեալ են ի զադտնի տալ զբաժին ինչ ի գերեզմանատանէ ի նուէր և ի զօհացումն պապականաց, եւ զի ոմանք ի խոստմնատուաց էին անգամք Գերագոյն Ժողովոյ եւ ազգային վարչութեան Պատրիարքարանի, առանց հաղորդելոյ ումեք զմտադրութիւն իւր, ինքնին եւ ի զադտնի ձեռնարկեաց պաշտպանել զզատ ազգային ոստ գիւնադիտութեան իւրոյ:

Փութացաւ զիմել նախ եւ քանից Մեծի Եպարքոսի եւ պաշտօնէի արտաքին գործոյ Թուրքիոյ, եւ ասպ մի անդամ զեսպանի Գաղղիոյ պաշտպանի պապադաւանից:

Ի շարս պաշտպանողական բանից իւրոց ըստ վարաւոր իրաւարանական նկատողութեանց եւ ըստ սեփականատիրութեան, առարկեաց առաջնոյ եւ զայս, եթէ զուք ինքնին խրախուսէք զհպատակս Օսմանեան պետութեան զիմել ի պաշտպանութիւն այլոց պետութեանց ի կարեւորագոյն խնդիրս՝ յորժամ յարգէք եւ կատարէք զանիրաւ պաշտպանութիւնս նոցա եւ առ այն հարկանէք զարդար իրա-

ւունս հպատակաց ձերոց, մինչ հարկ է արդիւնաւորել շահաւորակն ի պաշտպանութիւն արդարութեան՝ իրաւանց եւ հպատակաց ձերոց :

Գիմէ եւ առ ի զեեսպանն գաղղիական, զոր սերաշահէ առարկեալ՝ եթէ սակաւաթիւ են պապաղաւանք ի Հայոց, մինչ միլիոնաւոր մասն ստուարաթիւ կազմէ զհայ ազգ, եւ անշո՛ւշտ հաճոյ լինի Գաղղիական կայսրութեան շահել յաւելտ զհամակրութիւնս միլիոնաւոր Ազգի Հայոց, քան զ40 – 50 հազար պապականաց : Միանգամայն պարզէ զարդար իրաւունս Հայոց եւ զանիրաւ պահանջ փոքրաթիւ ուծացելոց :

Այսպիսեօք միջոցօք եւ ճարտարամտութեամբ հնարէ զպաշտպանութիւնս եւ տայ զաղարեցուցանել զվէճ հակառակորդաց, յորս մասնակցէր եւ պետութիւն Օսմանեան եւ հետեւէր առաւել սեփականել ինքեան յանուն զօրանոցի կից եզելոյ եւ շարունակելոյ մինչեւ ցայսօր :

Յետ շահելոյ զայս զատ՝ հաղորդէ Ս. Գէորգ Արքեպս. Պատրիարք վարչական ժողովոյ Պատրիարքարանի, ընդ որ խոթոտին եւ վշտանան որք խոստմնատուք էին ի գաղտնի :

Ուստի աստ եւ անդ ամբաստանէին զպատրիարքը, առարկեալ զայս զործ, եթէ ինքնին զործէ ի գաղտնի եւ առանց հաղորդելոյ մեզ, իմա՝ ժողովոյն պատկանելոյ եւ առանց խնդրելոյ զաջակցութիւն մեր :

Յաւուր միում, յորժամ մեղադրէին զԳէորգ ըստ այսմ խնդրոյ ի Մեծ նոր Խանի, Պէօյիւֆ Ենի Խան) ուր էին կեդրոնք հայազն զրամատեարց, վաճառականաց եւ այլոց, լսէ ոմն յունազգի – հայհոսոմ – զրամատէր - վաճառական Գատը գիւղացի (Գուլքետոն) զտրտունջս հակառակորդաց, եւ հարցանէ զնոսա, «եթէ շահեցա՞ւ պատրիարք ձեր զգատն» : Պատասխանեն հաստատական այն՝ : Ապա ուրեմն, յաւելու ասել Յոյնն. «սա ի՞նչ են ամբաստանութիւնք եւ զժգոհութիւնք ձեր՝ եւ աղաղակք՝ ցորչափ վատտակեալ է զգատն : Եթէ լինէր նա պատրիարք ազգի մերում (Յունաց), պաշտէաք զնա» :

Ոչ զիտէր Յոյն զրամատէր Գատը գիւղացի զիսկական միտս նոցա :

Ձան մեծ կալաւ Գէորգ Արքեպս. ի բարեկարգել զգալոցս Մայրաքաղաքի, եւ կազմել զկրթական ծրագիր միօրինակ, զօրացուցանել զկրթութիւն մայրենի հանդերձ այլովք, եւ եկեղեցական երաժշտութեամբն : Որոյ վասն խորհրդակցէ, եւ ընդ ազգային խմբագիրս ումանս : Որ եւ այս գրգռէր զնախանձ Սէթեան–Տէրոյեանց կուսակցութեան :

Վարէր նախանձախնդրութեամբ առանձին եւ ընդ անձինս գիտնականս եւ խստիւ ընդ եկեղեցականս եւ ընդ պաշտօնեայս :

ԳԼՈՒԽ ԻԸ .

ՅԱՂԱԳՍ ԳԱԼՍՏԵԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԱՑ ԵՒ
 ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ ՄԻՔԱՅԷԼԻ ԼՕՌՈՒ ՄԵԼԻՔԵԱՆՑ
 ԵՒ ԿՈՍՏԱՆԴԻՆ ՄԵԾԻ ՏՔՍԻ ՆԻԿՈԼԱՅԷՎԻՉԻ ԵՒ
 ՍԱԿՍ Տ . ՄԱՏԹԷՆՈՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԵՒ ԱՆՑԻՑ ԻՆՉ

Առ ի սիրաշահել զՀայս Թուրքիոյ ըստ քաղաքական-դիւանա-
 դիտական նկատողութեանց եւ ակնկալութեանց, ջան կալաւ ոռւսա-
 կան կառավարութիւն տալ ընտրել ի կաթողիկոս ամենայն Հայոց
 յետ հանգստեան Տ . Ներսիսի Ս . Հայրապետի Ազգի մերոյ զոմն յե-
 պիսկոպոսաց Հայոց Թուրքիոյ, որոյ վասն բանակցէր ի դադոնի
 ոռւսական դեսպան Կ . Պօլսոյ ընդ երեւելիս Հայոց : Եւ այսպէս ընտ-
 րեցաւ Տ . Մատթէոս Արքեպս . ի կաթողիկոս եւ սպասէր մնայր
 ասդ ի Կ . Պօլիս գալստեան Հրաւիրակաց ի Ս . Էջմիածնէ եւ պատ-
 ուիրակի ոռւսական կառավարութեան, զորպիսի պաշտօն յանձնեալ
 էր պետութիւնն ոռւսաց զօրապետ Միքայէլի Լօռու-Մէլիքեանց առ
 ի հրապուրել զՀայս :

Եկեալ հասեալ էին Տ . Մակար Արքեպս . եւ Տ . Մկրտիչ վարդա-
 պետ Բարամեանց Հրաւիրակք ի Ս . Էջմիածնէ, եւ առեալ զհրաման
 Վեհ . Հայրապետի՝ դիմեալ էին յուխտ եւ յերկրպագութիւն Ս . տե-
 դեացն տնօրինականաց ի Ս . Երուսաղէմ :

Եկն եւ Լօռու-Մէլիքեանց (Լօրիս Մէլիգօֆ) զօրապետ ի 20ն
 Ապրիլի 1859 ամի : Եւ իջեանեցաւ ի ոռւսական դեսպանատան :

Ամիրայք եւ գլխաւորք Հայոց Կ . Պօլսոյ՝ առ ի մեծարել եւ
 փառաւորել զՏ . Մատթէոս Կաթողիկոս եւ ի դիւրացուցանել զյա-
 րաբերութիւնս որ ընդ նորին Սրբութեան, խորհրդակցեալ առթիւ
 գալստեան զօրապետ Միքայէլի, տեղափոխեցին զՏ . Մատթէոս Կա-
 թողիկոս ի Միջագեղջէ ի Բերա, յատկացուցեալ ի ընկուծիւն Նո-
 րին Սրբութեան զհոյակապ սպարանս Պօղոս Ամիրայի Տատեան վա-
 սօղապետի որ ի Թօղրու եօլ, մերձ Եկեղեցոյ Ս . Երրորդութեան :

Յետ աւուրց ինչ եկն Լօռու-Մէլիքեանց եւ ներկայացաւ առ
 Գէորգ Արքեպս . Պատրիարք ի Պատրիարքարանի, եւ ետես զմեծա-
 րանս վայելուչս :

Տեսակցեալ սակաւուք ընդ միմեանս, առեալ Ս . Պատրիարքի
 տարաւ զզօրապետ Միքայէլ զպատուիրակ ոռւս . կառավարութեան
 եւ ներկայացոյց Վեհ . Տ . Մատթէոս Կաթողիկոսի ի Միջագեղջ
 արժանաւոր իմն հանդիսիւ, նախ քան զտեղափոխելն ի Բերա :

Յետ տալոյ Ս . Պատրիարքի զփառաւոր իմն կոչունս ի պատիւ

զօրապետի յիշելոյ, սկսաւ ոգեւորութիւն մեծ եւ մրցումն ի գլխաւորս Ազգի մերոյ առ ի պատուել զԼօռու—Մէլիքեան :

Չալսու միջոցաւ եկն եւ Կոստանդին Մեծ դուքս եզրայր Օգոստ. Աղեքսանդր Բ. Կայսեր ուսաց ի Կ. Պօլիս (ի 28 Մայիս 1850), զորոյ զգալուստ շնորհաւորեցին Տ. Մատթէոս Ս. Կաթողիկոս եւ Ս. Գէորգ Արքեպս.—Պատրիարք ըստ արժանւոյն :

Մի գկնի միոյ յաճախեցին առիթք ոգեւորութեանց Հայոց Կ. Պօլսոյ, եւ հանդէսք նշանաւորք, յորպիսիս եղեւ նշանաւոր՝ եգազան եւ պատմական նաեւ հանդէս շքեղ յուզարկաւորութեան թաղման Մաքսուտ ամիրայի Սարիմեան վախճանելոյ ի 29—30 Մայիսի, ներկայութեամբ Վեհ. Հայրապետի, և ներկայ և նախկին պատրիարքաց եւ այլոց, թէպէտ անձրեւ յորդահոս վրդովէր զհանդէս յուզարկաւորութեան :

Ռուսական կառավարութիւն ջանայր ի գաղտնի փութացուցանել չչու Վեհ. Կաթողիկոսի ի Ս. Էջմիածին՝ աղղեալ ոմանց ազդեցիկ անձանց մերադնեայց, որք հետեւէին հաճոյանալ միշտ եւ հանապաղ ուստական կառավարութեան, ակնկալէին տիտղոսից եւ արտօնութեանց եւ շքանշանից, որպէս եւ խնդրեալ էին լ Տ. Մատթէոս Կաթողիկոսէ, թէպէտ սա կամէր դանդաղել ի չու, եւ յուզէր զինդիրըս ինչ :

ԳԼՈՒԽ ԻԹ.

ՅԱՂԱԳՍ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԵԱՆՅ ԱՌ ՎԵՀ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Որպէս տեսցի ի ստորեւ ի վերջ այսմ գլխոյ ի պատճէնէ ծրագրրի, Տ. Մատթէոս Կաթողիկոս եթէ ըստ գաղտնածածուկ նպատակաց իւրոց եւ եթէ խրախուսեալ յանխորձ անձանց ոմանց, մանաւանդ ի Յովհաննէս վարդապետէ Սէթեան եւ ի Յովհաննէս պէյէ Տատեան վառօղապետէ, ջան կալաւ տալ ծրագրել զառաջարկութիւն ինչ իրր ի պէտս եւ ի պայծառութիւն Եկեղեցւոյ Հայաստանեայց, զոր եւ ստորագրեալ ոչ սակաւ Հայոց ի Կ. Պօլսոյ եւ ի գաւառաց, ներկայացուցին իրրեւ զհանրագիր առ Տ. Գէորգ Արքեպս. Պատրիարք, որպէս զի Ազգային Վարչութեամբ խորհրդակցեալ՝ խնդրեսցեն ի Ս. Կաթողիկոսէ կարգել ասդ ի Կ. Պօլիս զոմն յեպիսկոպոսաց Մայր Աթոռոյ ի կաթողիկոսական ներկայացուցիչ, կազմել զժողով եկեղեցական ի Կարին առ ի բարեփոխել զամուսնական, զվարչական եւ զայլ օրէնս ինչ, հաստատել զկարգապահական կանոնս ի պէտս եկեղեցական պաշտօնէից եւ կարգել զնոր բարեկարգութիւնս ի պէտս Ազգի եւ Եկեղեցւոյ :

Յանձնէ Տ. Գէորգ Արքեպս. Պատրիարք խորհրդակցութեան և որոշման Հոգեւորական և Գերագոյն Ժողովոց զհանրագիր ժողովրդական և զառաջարկութիւնդ, միանգամայն տայ զխորհուրդս՝ ըզգուշանալ զարդիս յեկեղեցական ժողովոց և ի հնաւանդ օրինացն և յամուսնական կանոնացն փոփոխութեանց, խնդրել ի նորընտիր Ս. Կաթողիկոսէ՝ յետ օժմանն առնուլ յուշադրութիւն զժրագիրն բարեփոխեալ, յետ կարելոր փորձառութեանց և խորհրդակցութեանց անդ ի Ս. Էջմիածին ընդ խոհեմ, հեռատես, հմուտ և եկեղեցասէր եկեղեցականացն բարձրաստիճանաց և փորձառուից և ըստ այնմ տնօրինել զոր ինչ արժան իցէ :

Իսկ Հոգեւոր և Գերագոյն Ժողովք կարգեն զՄասնաժողով յատուկ, որ բարեփոխէ և համառօտէ զժրագիրդ առաջարկութեանց, և ուր ուրեմն օրաձգէ և թողու յանորոշ վիճակի :

Ընդ այսպիսի հետեւանս խոժոռեալ Տ. Մատթէոս Կաթողիկոսի և կուսակցացն՝ զբզոնն զժգոհութիւն ժողովրդականն ընդ զէմ Գէորգայ, հնարեալ զստապատիր տարածայնութիւնս, միանգամայն փութայր այլևս Տ. Մատթէոս Կաթողիկոս մեկնել աստի ի Կ. Պօլսոյ և երթալ ի Ս. Էջմիածին՝ թողեալ զորոմս խռովութեանց :

Հակառակորդք յեղաշրջեալ զիմաստս առաջարկութեան և վարագուրեալ խորդաւանօք զիսկական նպատակ և զջանն, առ ի զբզոնի զՀայս, տարածայնեն տակաւ առ տակաւ, իբր զի Գէորգ Արքեպս. Պատրիարք և զօրպետ Միքայէլ Դանիէլեան Լօռու - Մէլիքեան միարանեալ ի գաղտնի՝ պատրաստեն զժրագիր և զառաջարկութիւն միարանութեան ընդ յունական - ուստական եկեղեցոյ, և այսպէս շարժեն զգայթակղութիւնս սկսեալ ի 1858 թուականէ և հասուցանեն զարձագանս ստապատիր տարածայնութեանցն մինչև յօտարս և ի հեռաւորս : Զորպիսի գայթակղութիւնս արծարծէին մերթ հակառակորդք Գէորգայ մինչև զամս 1870 առթիւ կաթողիկոսական ընտրութեան ի 1864-5 ամս, և ի պատճառս այլոց խնդրոց :

Օրինակեմք ասպէն զերկուս յողուածս ի Մասեաց Աղաւոյն Հրատարակելոյ ի Թէոդոսիա յապացուցութիւն բանից մերոց և ի յանդիմանութիւն անխիղճ հակառակորդաց :

Վերնագիր առաջնոյ յողուածոյ է այս. Լօռու Մէլիքեանց գորավարին նամակը .

«Քաջ և անուանի Հայկազն զօրպետը Միքայէլ Տարիէլեան Լօռու-Մէլիքեանց (որ և Լորիս-Մէլիքով) զեղեցիկ և զօրաւոր պատասխանով մը հերքեր է Օղեսայի ուսս լրագրոյն՝ իրեն այս «տարի զէպի Պոլիս ըրած ճանապարհորդութեանը համար տուած

«գոռնակահան լուրերը: Արդէն Մասիսը Պոլսոյ անդղիական լրագրի «տուած յեղակարծ տեղեկութիւններուն անհիմն լինելը ցուցուցեր «էր, մեր Ծիածանն ալ իր ոռւսերէն մասին մէջ Օղեսայի լրագրոյն «այս կողմանէ ըրած սխալները քանի մը խօսքով ուղղեր էր, բայց «մեծ ուրախութիւն է մեզի տեսնելը որ քաջ զօրապետը ինքնին պար- «զեր է ճշմարտութիւնը ի յանդիմանութիւն խռովասէր կամ չարա- «միտ հակառակորդաց: Դիտմամբ կը բանեցնեմք հոս խռովասէր բա- «ուր, վասն զի յայտնի կը տեսնեմք որ այն անդղիական լրագիրը եւ «Օղէսայի թղթակիցը Ազգին մէջ նոր խռովութիւն եւ անհիմն կաս- «կածներ սերմանելու մտքով կը հրատարակեն այսպիսի լուրերը: Օ- «րինակի համար, Հայոց եւ Յունաց Պատրիարքները քրիստոնէական «քաղաքավարութեամբ իրարու հետ յանկարծ կը տեսնուին, — իսկոյն «պատրաստ են պապականն ու բողոքականը Հայուն ահանջէն վար «ընելու, ոմանք նաեւ իրենց լրագրացը մէջ հրատարակելու, թէ Յու- «նաց միտքը Հայերը յոյն դարձնելն է...: Բայց փա՛ռք Աստոյ որ «Հայն ալ խելք ունի, եւ Զմիւռնիոյ Արշալոյսիմ պէս ու Պոլսոյ Մա- «սիսիմ պէս լրագիրները, եւս եւ մանաւանդ ջատագովներն ալ պա- «կաս չեն, որ կարող են իրենց Ազգին պատիւը արժանաւորապէս «պահպանել ու պաշտպանել: Լոռու Մէլիքեանց զօրավարին նամակը «ահա միայն անոր համար կը թարգմանեմք ու կը հրատարակեմք «հոս որ մեր ազգութեան թշնամիներն եւս, որ ոռւսերէն ընաղիբը «չեն հասկնար, կարդան ու խրատուին:

« Պարոն. — Ձեր հրատարակած Օղեսայի լրագրոյն 46 թուահա- «մարին մէջ Պոլսոյ թղթակցէդ նամակէն առնուած լուր մը կարդա- «ցի Մեյիխով ըսուած զօրավարի մը վրայ: Եւ որովհետեւ Կովկա- «սու երկիրը Մեյիխով զօրավար չկայ, իսկ ի Պօլիս այն ատենները «ես կայի Լորիս-Մեյիքովս, անոր համար տեղեկութիւնը իմ վրաս «կառնում:

« Աչքիս չէի ուզեր հաւատալ՝ երբ կարդացի այն թուահամարին «մէջ որ իրբ թէ իմ Տաճկաստան երթալուս նպատակն է եղեր եր- «կու եկեղեցեաց մէջ միարանութիւն ընել... Յետոյ, առաջին լուրը «փոխելով, եւ իրբեւ անոր սխալը շտկելու մտքով, ձեր լրագրոյն «52 թուահամարին մէջ տպուած է թէ ես կաշխատեմ եղեր իջմիա- «ծընի եւ Վանայ Կաթողիկոսութիւնները միաւորել, այնպէս որ «առաջինին տրուի բոլոր Հայոց ազգին վրայ հոգեւորական իշխա- «նութիւնը, իսկ երկրորդին բոլոր աշխարհական իշխանութիւնը: — «Շատ ալ լայնդակ մտածութիւն. մի՞թէ կարելի բան է որ օտար տէ- «րութեան հպատակ մարդ մը ուրիշ թագաւորութեան տակ եղած «պատրիարքութեան մը աշխարհական գործերուն խառնուի »:

« Իմ սիրտս ամենեւին չցաւիր այսպիսի լուրերու վրայ, վասն
 « զի խելացի մարդը չհաւտար անոնց, եւ դիտէ թէ անոնք ամենեւին
 « չեն յարմարիր՝ ոչ իմ վիճակիս, եւ ոչ ունեցած ջերմեռանդութեա-
 « նըս այն դաւանութեան, յորում ծնած եմ՝ բայց այս անհիմն լուրերը
 « անտարակոյս իմ հաւատակից եղբարցս սրտին մէջ զանազան կաս-
 « կածներ պիտի ձգեն՝ թէ հոս Ռուսաստան եւ թէ Տաճկաստան :
 « Հրամանքը լաւ պէտք է հասկնաս, պարոն խմբագիր, թէ ես ամե-
 « նեւն յօժարութիւն չունիմ որ իմ անուշոյնս եւ ոչ ամենափոքր բա-
 « րոյական անհանգստութիւն մը պատճառէ իմ հաւատակիցներուս՝
 « ձեր թղթակցին անխոհեմութիւնը, եւ ահա անոր համար զբիչը
 « կառնեմ որ եղածը ճշմարտութեամբ պատմեմ ու անհիմն մեկնա-
 « բարանութիւնները հերքեմ : »

« Անցած տարի՝ ես իրրեւ լուսաւորչական հայ՝ յուղարկեցայ
 « Կոստանդնուպօլիս ընդ առաջ եւ յուղեկցութիւն ի Կովկաս նոր-
 « ընտիր կաթողիկոսին Ամենայն Հայոց Մատթէոսի, որով մեր տէ-
 « րութիւնը փափաքեցաւ պատիւ ընել Վեհափառ Հայրապետին աս-
 « տիճանին եւ Աղգիս Հայոց . իսկ այս տարի դնացի հոն՝ մեր երկրէն
 « փոխադրուող Չերքէզներուն գործերը կարգի դնելու համար, եւ ոչ
 « թէ եկեղեցական ո՛րեւիցէ խնդրոյ վրայ խօսելու մտքով : »

« Ահա այսչափ բան միայն կրնար եւ պարտական էր ըսել ձեր
 « թղթակիցը իմ Պօլիս երթալուս վրայ : Չեմ ուզեր քննութեան ել-
 « նել թէ ինչ աղբիւրներէ կանուտ նա ձեզի տւած տեղեկութիւնները,
 « արդեօք Տաճկաստանի այլալեզու շուկաներէ՞ն թէ հոն սպուռող
 « օտարազգի լրագիրներէն, որ վաղուց ծանօթ են մեզի իրենց ան-
 « ճոռնի սուտերովը եւ մեր կողմերուն վրայ ունեցած կատարեալ
 « տգիտութեամբը : Ինչ եւ իցէ, կը խնդրեմ պարոն՝ որ այս լուրերուն
 « ստոյգ միտքը զուրս հանես եւ այս նամակս լրագրոյդ մէջ հրա-
 « տարակես : Մնամ . . . եւ այլն :

Միքայէլ Լոուս - Մելիքեանց»

(1860, Յունիս 14, Մասեաց Աղաւնի, երես 120)

Դարձեալ ի նորին հանդիսի, ընդ վերնադրոյնս Փարիզ լրագրին տեղեկուքիւնները :

« Փարիզ անուշով լրագիրը իւր անբաղաքագէտ եւ անզոյճ
 « ճճոյն պատճառաւ չկարենալով կանոնաւոր կերպով մտնել Ռու-
 « սաստան, անոր քանի մը յօդուածներուն օրինակները ատեն ատեն
 « կհասնին մեր ձեռքը, եւ օրէ օր աւելի յայտնի կընեն մեզի անոր
 « խեղճ խմբագրութեանը պէս՝ թղթակիցներուն ու խմբագիրներուն
 « ալ խզճալի մարդիկ լինելը : Խղճալի կըսեմք՝ նոցա ցուցուցած

« միամտութեանն ու արդիւնութեանը համար, իսկ եթէ չարամտութեամբ է գրածնին, ինչպէս որ բաւական տեղի կայ կասկածելու, « պէտք է ըսեմք նաեւ ատելի եւ գգուշալի...»

« Մենք ուզելով փոքր ինչ պատիւ ընել լրագրին, եւ հերքել « նոր թղթակցութիւններուն անհիմն ու անպատկառ զրուցուածքը, « որով կ'անդեն որ իբր թէ հայագրի զօրավար մը եւ քանի մը ազգադաւ (լրագրին տուած յիշոցքն է) ամիրաներ ու եկեղեցականներ՝ միտք ու ջանք ունեցեր են մօտ տարիներս՝ Հայոց եւ Յունաց եկեղեցիները միացնելու, կ'ըսեմք թէ այն դիտաւորութիւնը կամ ջանքը սոսկ եղջերուաքաղ կամ խրտուիլակ մըն է՝ մեր բարեմիտ ժողովուրդները չփոթելու մտքով՝ քանի մը չարամիտներէ հնարուած, ու Փարիզ անուանեալ լրագրին մէջ միամտութեամբ կամ չարութեամբ հրատարակուած»:

« Բայց որովհետեւ այս խօսքն ալ կ'ըսէ լրագիրը յանդգնաբար, « - այսինքն «Երկու տողին մեծարան սնտոեաց բարբառով» հեղինակին ստույգ, թերեւս եւ բերնովը, թէ «Եթէ նորէն տարածեն այդ սուտ խօսքերը թէ բնաւ Յունաց եկեղեցւոյն հետ միաւարութեան խօսք չէ եղած, այն ժամանակ ինքը Վեհ. Ս. Կաթողիկոսը պիտի ստիպի չըջարերական հանել ու եղելութիւնը մի ըստ « միովէ պատմել», ահա մեք ստուգիւ գիտնալով որ Վեհափառ Կաթողիկոսին անունը այս բանին մէջ զուր տեղը եւ յանդգնաբար մէջ բերուած է, - ահա մեք՝ կ'ըսեմք եւ կը կրկնեմք թէ ԲՆԱԻ ՅՈՒՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՀԵՏ ՄԻԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԽՕՍԲ ՁԷ ԵՂԱՄ: Տեսնենք թէ երբ պիտի հրատարակէ անուանեալ Փարիզը այն չըջարերականը զոր ինքը կ'ըսէ թէ Վեհափառ Կաթողիկոսը հանելու պիտի ստիպի (չգիտեմք յուսմէն)»:

« Արդեօք բարեսէր ընթերցողք աւելի իրաւունք չունին յուսալու որ Սրբազան Կաթողիկոսը այդպիսի լիբր եւ խոսվարար լրագրաց դէմ կամենայ հանել վաղ կամ անազան իրեն պատկառելի չըջարերականը»:

« Այսպիսի լրագրաց մէկն է ահա նաև Պօլսոյ Մեղաւ անուանեալ անոճ եւ չարաթոյն հանդէսը, որ - ինչպէս այդ օրերը ստուգեցինք - երդում ըրեր է եղէր որ ազատութեամբ (այսինքն լրագրութեամբ) գիր անցնէ ու հրատարակէ, առանց բնաւ քննելու, ո՛ր եւ իցէ չարախօսութիւն եւ զրպարտութիւն, մանաւանդ թէ ընդ դէմ եկեղեցականաց Ազգիս առհասարակ՝ հեռաւորաց եւ մերձաւորաց, կենդանեաց եւ ննջեցելոց»:

(Մասեաց Աղաւնի, Թէոդոսիա, 1861, Մայիս 10, Էրես 120) .

Այսպէս ուրեմն ոչ դադարէին հակառակորդք անբարեմիտք յար-

ծարձելոյ զգրպարտութիւնս այսպիսիս համաձայն նպատակաց իւրեանց՝ քմահաճոյից եւ շահուցն յորժամ զտաննէին զառիթս կամ պէտքս ունէին, զոր ոչ մոռանային փորձել մանաւանդ եւ յաւէտ ընդ դէմ Գէորգայ, սրպէս փորձեցին անրարեմիտք առթիւ կաթուղիկոսական ընտրութեան յամսն Տեառն 1844-1866:

Վասն որոյ առիթ պատեհ եղեւ եւ բարւոք արար, զի Տ. Գէորգ Ս. Արքեպիսկոպոս երբեմն Պատրիարք ըողոք կալաւ առ Տ. Պողոս Արքեպս.՝ Պատրիարք եւ եթող զհատուած ինչ պատմական եւ կարեւորագոյն, սրպէս տեսցի ի պատճենէ բողոքագրոյն զոր ամփոփեմք աստանօք ի տեղեկութիւն տպագրայից եւ ի դուրնաքեայ բացատրութիւն երկուց յօդուածոցդ եւ տարաձայնութեանց:

« Առ Ամենապատիւ Ս. Պատրիարք, առ Աստուածասէր զերանդամս Խառն ժողովոյ եւ առ Ազգ. Երեսփոխան յարգելիս »:

« Ամենապատիւ Սրբազան Եղբայր ի Քրիստոս: Տ. Պողոս Արքեպսկոպոս, Պատրիարք Հայոց Կոստանդնուպօլսոյ

« Որ ի հոգեւոր ծառայութիւն Ազգին ուխտէ զանձն առաջի
 « Աստծոյ, նուիրական պարտաւորութիւն է նմին ըստ անստերիւր
 « ճշմարտութեան եւ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց
 « Սուրբ Եկեղեցւոյ ծառայել սիրով յօգուտ Ազգին ըստ հոգւոյ եւ
 « ըստ մարմնոյ, եւ համբերել տանել մանաւանդ հալածանաց եւ նա-
 « խատանաց՝ սրպէս արժանն է ծառայի եւ աշակերտի Քրիստոսի:
 « Ուստի եւ մեք ջան ի գործ արկեալ յամենայն ըստ այսմ կատա-
 « րել զպարտաւորութիւնս մեր զայս զմե՛ծ՝ յիրաւի համբերել համ-
 « բերէաք առանց վրէժիներութեան եւ ռիսակալութեան, որ ինչ նա-
 « խատինք եւ անուանարկ քարաձուլութիւնք զմէնջ լինէին երբեմն
 « յոմանց, մինչեւ անգամ պատասխանեոյ արժանի առնել չախորժե-
 « լով՝ ներողամիտ իսկ լինէաք այնպիսեացն »:

« Եւ թէպէտ ի 104 թիւն Մանգուվէի ի դէպ եղեւ մեզ ի շարս
 « եօթն ընտրելի եպիսկոպոսաց ընթեռնուլ անպատեհս եւ զմէնջ,
 « զուցէ առաւելագոյն քան զայլոցն, սակայն ոչ փոյթ արարաք, զի
 « զբաղեալ զընով ի շինութեան զպրոցիս եւ սրբոյ եկեղեցւոյս եւ
 « այլոց ազգային բազմախուռն գործոց հրկիղեալ ժողովրդեանս
 « (Պրուսայու)՝ չունէաք երբեք ժամանակ եւ միջոց ունկն մատու-
 « ցանել այնպիսի ազատարանութեանց: Եւ թէ զի՛նչ ինչ գրեալ
 « իցէ զմէնջ Ծիլն Աւարայրի՝ չկարացաք իմանալ զայնս առ ի չգոյ՛
 « յիշեալ օրագրին ի քաղաքս »:

« Բայց քանզի անստորագիր քննիչն այն հանգամանաց եպիս-
 « կոպոսաց յայտնագոյնս բացատրեալ է զնոյն բան «Աւարայրի Ծի-
 « լին» ի 129 թիւն «Մանգուվէի», վասն որոյ ի տեսանել մեր զայն

« Եւ յընթեռնուլ՝ վիրաւորեցաք յոյժ, ոչ առ այլ միտս՝ որպէս թէ
 « վիրպեալ դատք ի յուսոյ եւ այլն, այլ զի Եպիսկոպոսական սուրբ
 « կարգն լեալ էր խաղալիկ ի ձեռս այնպիսեաց, որ ազգասիրական
 « զիմակաւ յանդգնէին զրպարտել յանիրաւի զպաշտօնեայ Տեառն
 « մերոյ Յիսուսի Քրիստոսի, որոյ իբրեւ անարժան սպասաւոր փու-
 « թացայ յայս նուազ բողոքել առ Սրբազնութիւն ձեր եւ առ արդա-
 « բազատ անդամս Խառն ժողովոյ Ձերզ միջոցաւ, որպէս զի որով
 « Եղանակաւ եթէ արժան իցէ՝ բարեհաճեալիք քննելով զբանս զբր-
 « պարտութեանց ի վեր ածել զճշմարտութիւնս» :

« Ձնոյն բան բացատրութեան զրպարտչին այնորիկ անշուշտ ըն-
 « թեցեալ է եւ ձերզ Սրբազնութիւն, որով ընդհանուր աշխարհի
 « յայտ առնէր զմէնջ լինել անհաւատարիմ Սրբոյ Եկեղեցւոյ եւ Այդ-
 « գին, որպէս թէ առ պատրիարքութեամբ մերով միացեալ իցեմք
 « ընդ ժէնէրալ Մէլիքովն առնել փոփոխութիւն ինչ ի ճշմարիտ դա-
 « ւանութիւնս մեր եւ այլն, եւ այլն, բայց այս բան՝ զոր անստո-
 « բազիր նամակն ի բերանոյ «Ծիյն Աւարայրի» խօսի՝ սուտ է բո-
 « յրովին եւ անիրաւ զրպարտութիւն : Այդպիսի առաջարկութեանս
 « ինդիր ոչ Երբեք եղեալ է, այլ այն ի կողմանէ Ազգայնոց առ մեզ
 « առ պատրիարքական դիւանն մատուցաւ խորհրդով եւ զիտութեամբ
 « հանդուցեալ Ս. Կաթողիկոսին, զոր եւ մեք առաջի եղաք յայն-
 « ժամ անդամոց Հոգեւոր եւ Գերազոյն ժողովոց ի քննութիւն, եւ
 « այն իսկ զժկամակութեամբ, մինչեւ առիթ լինելոյ ընդ ակամբ
 « հայելոյ ի մեզ Հանդուցելոյն : Խորհուրդ ի մէջ ասեալ կրկին ժո-
 « ղովոցն Յանձնաժողով իմն հաստատեցին, յորում յետ ի սրբազր-
 « բութեան ածելոյ դնոյն տետրն առաջարկութեան իբրեւ ներկայա-
 « ցուցին մեզ՝ բազում ինչ եւ մեք՝ յապաւեցաք անտի : Ապա յընդու-
 « նել եւ ի ստորագրել յիշեալ կրկին ժողովոց՝ մեք իսկ ստորագր-
 « րեցաք ի հաստատութիւն : Ահա, այս է զորմէ ծածուկ դաշնագր-
 « բութիւն ասէ լինել : Ձի որ ինչ ազգային ժողովով քննեալ, սրբա-
 « զրբեալ եւ ստորագրեալ է, զիա՞րզ կարէ ծածուկ դաշնագրութիւն
 « կոչել : Ուրեմն սուտ է այս բան, եւ բոլորովին զրպարտութիւն :
 « Նա զի ի տետրն յայն չերեւէին երբեք հետք կամ նշմարանք ան-
 « զամ կրօնափոխութեան : Բայց եթէ ի թիւր մեկնութիւնս զառա-
 « ծանիցի ոք՝ չունիմք ինչ ասել առ այն, զի եթէ ոչ թիւր մեկնէին
 « եւ բանք Սրբոյ Աւետարանին, չերեւէին երբեք զանազան ազանդա-
 « ւորք ի միջի» :

« Ապաքէն վկայեցեն ստութեան Աւարայրի Ծիլին եւ հետեւո-
 « զաց բանի նորա անդամք հոգեւորական եւ Գերազոյն ժողովոց
 « այնր ժամանակի, յորոց եթէ սմանք կնքեցին զմահականացու ըն-

« Թացս կենաց իւրեանց, այլ բարերադրարար բազումք վաշելեն ի
 « կենդանութեան, զորոց անուանս չէ հարկ գրել մի առ մի, ըստ
 « որում ներկայացուցէ զայնս արձանազրութիւն ստարիարքական
 « դիւանին» :

« Եւ յիրաւի ասելով, դարձեալ անվայել համարէաք մեզ, նա-
 « մանաւանդ զայսու միջոցաւ դրել ձեզ զայսմ ամենայնէ, որպէս զի
 « մի՛ կարծիս զմէնջ տայցեմք, իբր առ վրիպելոյ յուսոյն մերոյ մը-
 « տարերեալ ի բողոքս յայս, ոչ ինչ փոյթ է մեզ եւ չկարէ գէթ եւ
 « դուզնաքեայ ցաւ իմն պատճառել, զի ոչ բնաւ թեկն ածեմք զա-
 « ւազուութեանց եւ զիշխանութեանց, այլ վասն յանիրաւի անուա-
 « նարկութեանս պարտաւորեմք բողոքել: Առ իմէ՞՞ այլքան զրպար-
 « տութիւն զմէնջ, ո՞չ սպաքէն առ նախանձու եւ շարամտութեան.
 « ա՞յս իցէ վարձ հաւատարիմ ծառայութեանս մերոյ զոր ծառայե-
 « ցաք Ս. Եկեղեցւոյ եւ Ազգին իմոյ սիրայնոյ, եւ ընդէ՞ր լիցի
 « զծառայութիւն մեր համարել մատնութիւն, գհարազատութիւն մեր
 « դրել անհարազատութիւն, եւ այսպէս նշաւակ առնել զանուն մեր
 « ընդ ամենայն աշխարհ: Քա՛ւ՛ ասել զանձնէս կատարեալ ըստ ա-
 « մենայն մասին, զի չէ ի մեզ ողի հրեշտակաց, այլ յամենայնի
 « դուն գործեցաք եւ գործեմ ըստ մերովասանն այնպէս գնալ, որպէս
 « արժանն է հաւատարիմ պաշտօնէի Ս. Եկեղեցւոյ Քրիստոսի, բայց
 « այս յանհարինս խոցեալ եւ կարեւիւր վշտացուցեալ զսիրտ մեր
 « եւ հոգի՛ տրտմեցաք յոյժ յոյժ, զոր չէ գրչիւ նկարագրել ըստ ար-
 « ժանւոյն աստանօր» :

« Արդ ոչ կամելով անստորագիր նամակագրողին եւ «Աւարայ-
 « ըի Ծիլ»-ին զրպարտութեանց ի ձեռն այլոց օրագրաց առնել պա-
 « տասխանի, ահա իբրեւ Եպիսկոպոս Ազգին բողոքեմ սրբազնութեան
 « ձերում, որ ունեքդ այսօր զպատիւ Պատրիարքական Իշխանութեան
 « Հայոց Հպատակելոց Օսմանեան մեծագոր Տէրութեանս, եւ ընդ
 « ձեզ՝ Մեծ. անդամոց Երեսի. Ժողովոյն, զի խառն Ժողովով եւ
 « կամ յատուկ Յանձնաժողովի ի քննութեան առեալ զբանս
 « յիշեալ զրպարտօցան, շնորհ արասջիք ի վեր հանել զճշմարտու-
 « թիւն եւ զարդարութիւն: Զի եթէ իրաւացի իցեն բանք Ծիլին եւ
 « արբանեկաց զորա՛ ես ինքնին ամենայն զովութեամբ զտայց չը-
 « նորհազարդ ջանից նոցա, զի ջանան հրապարակաւ ծանուցանել
 « զվնասակարս Սրբոյ Եկեղեցւոյ եւ Ազգին: Ապա թէ ոչ՛ քերեսցի
 « այս ազտ ի մէնջ հրապարակաւ եւ պաշտօնական կերպիւ, եւ
 « յայտնի եղիցի զի նօքին ինքեանք զրպարտիչքն են մատնիչ Ազգին,
 « խանդարիչք Սրբոյ Եկեղեցւոյ օրինացն, որ առ սէր անձնական
 « օգտի իւրեանց ոչֆողճեն բնաւ խաղալիկ առնել ի ձեռս իւրեանց
 « զեկեղեցին եւ զեկեղեցականս, մինչեւ զտուրբ հաւատս անգամ» :

« Ի սէր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի դարձեալ խնդրելով
 « ի Զերդ Սրբապնութեանէ եւ ի մեծապատիւ անդամոց Խառն եւ Ե-
 « ընսփ. Ժողովոց զատ առնել ընդ մեզ եւ ընդ զրպարտիչս մեր, մը-
 « նամք Սրբոյ Եկեղեցւոյ պայծասութեան յաւէտ Զանախնդիր, յա-
 « ռաջաղութեան Ազգիս հոգեառնջ խանդակաթ, եւ երջանիկ բա-
 « ըմամանութեանց Սրբազնութեան Զերոյ ցանկացող եւ աղօթարար
 « նախկին Պ. Կ. Պօլսոյ

Գէորգ Արքեպիսկոպոս Պրուսայու»:

՝ 1866 Յուլիս 30, ի Պրուսա.

Հախառակ այսմ խնդրոյ Տ. Գէորգայ Եպսի ոչ կարգեաց Պատ-
 ըրարքարան գքնութիւն եւ ոչ հրատարակեաց զհերքումն պաշտօնա-
 կան, գուցէ ոչ գտեալ ի պատրիարքական գիւանատան զարձանա-
 գրութիւն եւ զժրպիր առաջարկութեան, որպէս եւ մեք հետազօ-
 տեցաք բազմօք առ ի առնուլ զպատճէնն, եւ ոչ գտաք, մանաւանդ
 ընկալաք զպաշտօնական պատասխանիս, զի անհետացեալ են համօ-
 բէն ամենայն արձանագրութիւնք եւ գիւանական դորժք Պատրիար-
 քարանի եղևալքն նախքան զհաստատութիւն Ազգ. Սահմանադրու-
 թեան, թէպէտ կտոկած լիմք մեք եւ ընդ պահպանութեանս կարեւոր
 դորժոց եւ արձանագրութեանց՝ թղթոց եւ որոշմանց եւ այլոց եւ
 այլոց ձեռագիր մնացելոց յառուրս Սահմանադրական վարչութեան,
 եւ ունեմք զպայցոցս:

Արդ գտեալ ի մէջ թղթոց Հոգելոյս Հայրապետի Տ. Գէորգայ
 Դ. զպատճէն առաջարկութեան ըստ կրճատեալ ծրագրի, բաւական
 համարեմք զոր զրեցաք, եւ յաւելումք աստ զոր գտաք.

Ահաւաստիկ:

« Սրբազան Մատթէոս Ա. Կաթուղիկոսի Հրաւիրակ եկած Մա-
 « կար Եպս. եւ Մկրտիչ վարդապետ (Բարամեան) Միաբանի Ս. Էջ-
 « միածնի եւ ձենեոս մայր Միքայէլ Լօռու Մելիքեան Հայկա-
 « զուն զօրպետան Կովկասու բանակին ռուսաց եւ իւր թիկնապահ
 « հաղարապետ Միքայէլ Միանսարեան, եւ խորհրդական Ղորչազօֆ
 « առննազպիրն, որք 1859 Ապրիլ 20ին խրկւոված էին ի կողմանէ
 « Աղեքսանդր Բ. Կայսեր, եւ ի կողմանէ Պարեանսդլաքի (Պարեա-
 « թիւսքի) ընդհանուր կուսակալին Կովկասու, յայժմամ Ազգայինքս
 « որ ի Կոստանդնուպօլիս միաբանեալ Ազգային Ժողովով խորհեալ
 « պատշաճ համարեցաւ (ն) խնդիր եւ յայտարարութիւն մի առաքել
 « ի Ս. Սինոզն որ ի Մայր Աթոռն Ս. Էջմիածին: Եւ 1859 Մայիս
 « 11ին զրեցաւ ըստ ներքոյ զրեալ օրինակին, եւ Մայիս 15 յանձնե-
 « ցաւ Լօռու Մելիքեան զօրպետին, որպէս զի անկորուստ մատուս-
 « ցէ Սինոզին, եւ զպատշաճն ըստ իւրումն խոհականութեանն տնօ-

« րինեսցէ յօղուտ Սր. Եկեղեցւոյ եւ Ազգին համայն : Ահա օրինակն :
 « Խնդիր եւ առաջարկութիւն ի դիմաց Հոգեւորականաց եւ Ժո-
 « ղովրդականաց բնակելոցս ի Տաճկաստան առ Սր. Սինօզն Արա-
 « բատեան Մայր Աթոռոյ Սր. Էջմիածնի, որպէս զի յարբերութիւն
 « մեր ընդ Սրբոյ Աթոռոյն որ առ ժամանակ մի զազարեալ էր (ի
 « 1827է ց1842-6. Վ. Ե. Մ.) սկիզբն առցէ ի շարունակել անընդմէջ
 « եւ սիրտանու (°°), որպէս եւ էրն կանխաւ :

« Ա. — Ընտրութիւն Կաթողիկոս Հայրապետի Հայոց, յորժամ պա-
 « բապեցէ Աթոռն, լինիցի ըստ Սահմանադրութեանն որ հաստատե-
 « ցաւ առ Հայրապետութեամբ Տ. Տ. Յովհաննու Կարբեցւոյ (1834-
 « 6. Վ. Ե. Մ.) :

« Բ. — Սրբազան Սինօզն Սր. Էջմիածնի ունիցէ զերկոտասան Ան-
 « դամս, որոց վեցն իցէ ի Ռուսաստանէ՝ ներկայացուցանել զուխտ
 « Հայ Եկեղեցւոյ Ռուսաստանի : Չորս ի Տաճկաստանէ՝ ներկայա-
 « ցուցանել զուխտ Հայ Եկեղեցւոյ եղելոյ ի նմա : Մի՛ ի Պարսկաս-
 « տանէ : Եւ միւս եւս ի զաղթելոց Ազգայնոց յարեւմուտս ի Մօլտօ-
 « վալաքիա, ի Սուչովա եւ յայլուր, ուր դտանիցին ի լուսաւորչա-
 « կրօն Ազգայնոց :

« Գ. — Սրբազան Կաթողիկոսն Սրբոյ Էջմիածնի, առաքեսցէ
 « զարժանաւոր եկեղեցական ոք ի Կոստանդնուպօլիս՝ փոխանորդ
 « Արարատեան Մայր Աթոռոյ՝ լինել օգնական հոգեւորական կա-
 « ռավարութեան Ազգայնոց ի Տաճկաստան, եւ Անդամ Հոգե-
 « ւոր Ժողովոցն Կոստանդնուպօլսոյ, եւ յօղակապ սիրոյ եւ
 « միջնորդ յարբերութեանց ընդ Կաթողիկոսական Մայր Աթոռն
 « Սրբոյ Էջմիածնի, եւ ընդ Պատրիարքական Աթոռն Կ. Պօլսոյ : Խոր-
 « չեալ ի յուզմանց անհամաձայնութեանց ընդ քաղաքական եւ ընդ
 « եկեղեցական իշխանութիւնս եւ ցորչափ է ի փոխանորդութեան
 « Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ի Կոստանդնուպօլիս, անհնարին
 « լինիցի ի նմին պաշտամանէ իւրմէ բարձրանալ ի Պատրիարքութիւն
 « Պօլսոյ, բայց եթէ յետ ելիցն ի փոխանորդութենէ եւ երթալ դա-
 « դարելոյ իւրոյ ի Մայր Աթոռն դամս երիս, այնուհետեւ մարթ է
 « Ազգին ընտրել եւ կարգել զնա Պատրիարք Կ. Պօլսոյ :

« Դ. — Իշխան է Սրբազան Կաթողիկոսն զումարել Ազգային
 « Ընդհանուր Ժողով՝ վասն վերանորոգութեանց օրինաց եւ կանոն-
 « նաց եւ աւանդութեանց սահմանելոց ի նախնի սրբոց հարց եւ
 « ժողովոց :

« Ե. — Գերագոյն իշխան է ի Հայաստանեայց Եկեղեցւոջ՝ ի դատել
 « զանհնազանդս եւ զմոլորեալսն եւ զայնոսիկ՝ որք զանցանեն զօ-
 « րինօք, եւ զյամատեալս ի մոլորութեան եւ զոր ոչ անսան օրինա-
 « ւոր Եպիսկոպոսի իւրեանց՝ եւ վճռոյ հոգեւորական ժողովոյն :

« Զ.— Չեռնադրեսցէ յեպիսկոպոսութիւն, զորս եկեղեցականք
 « եւ ժողովրդականք իւրաքանչիւր վիճակի միակամ հաճութեամբ
 « եւ վկայութեամբ ընտրեալ մատուցանիցեն, իսկ զորս վասն վի-
 « ճակաց Տաճկաստանի, յետ ընդունելոյ վկայագրութեան ի Պատ-
 « րիարքարանէն Կ. Պօլսոյ, նոյնպէս եւ զորս մատուցանիցէ ի Մի-
 « արանութենէ Սրբոյ Երուսաղէմի, վկայական գրով Պատրիարքէ
 « նոյնոյ Աթոռոյ՝ ձեռնադրեսցէ եպիսկոպոս :

« Է.— Բացարձակապէս իշխան է օրհնել զսրբալոյս Միւռօնն,
 « եւ առաքել ընդ ամենայն եկեղեցիս Հայոց :

« Ը.— Սրբազան Կաթողիկոսն ունի իշխանութիւն պաշտպանե-
 « լոյ եւ պահպանելոյ զիրաւունս Ազգային Կալւածոց եղելոց ի
 « Տաճկաստան եւ յամենայն տեղիս՝ ուր եւ գտանիցին, որպիսիք
 « համարեալ են վանորայք, եկեղեցիք եւ զերեզմանատունք եւ այլն
 « հանդերձ նոցին ստացուածովքն առանց միջամուլս զսրոյ վերակա-
 « ցութեան նոցին, եւ առանց փոխադրելոյ իրիք ի նոցունց ըստ
 « հաճոյս :

« Թ.— Ի բազմաց ժամանակաց առ աստանդական թափառելոյ
 « Ազգի մերում ի զանազան տեղիս եւ յիշխանութիւնս, չեղեւ զու-
 « մարումն Ազգային Ընդհանուր Ժողովոյ, վասն որոյ Սրբազան Կա-
 « թողիկոսն ըստ Չորրորդ յօդուածոյ ծանուցեալ կարողութեան իւ-
 « րոյ, յետ ոչ բազում ժամանակաց զումարեսցէ Ընդհանուր Ազ-
 « գային Ժողով ի վիճակաւոր եպիսկոպոսաց, ի վարդապետաց, ի
 « վանահարց, յուսումնական կղերց եւ յիշխանաւորաց ամենայն
 « վիճակաց Ռուսաստանի, Տաճկաստանի եւ Պարսկաստանի եւ այ-
 « լոց տեղեաց, որպէս զի ի նմին ժողովի ի քննին առեալ զարդի
 « վիճակ եւ զհանգամանս եկեղեցեաց Ազգիս, զխափանեալսն վե-
 « րածիցեն (ծեսցեն) յիւր տեղի, զպակասեալս լցուցեն, եւ զթիւր-
 « եալսն ուղղեսցեն, ըստ Առաքելական եւ Հայրապետական կանո-
 « նաց եւ կարգաց Եկեղեցւոյ, եւ հրատարակել ըստ ամենայն նոցա,
 « որպէս զի որք զանցանիցեն զնոքօք, զորս ժողովն հաստատեաց եւ
 « հրատարակեաց, անկցին ընդ պատժովք զատապարտութեանն :
 « Նոյնպէս եւ բազմաց զործոց Ազգայնոց ցրուելոց ընդ զանազան
 « կողմանս, յորոց են՝ որ առ նուազութեան խղճի, եւ են՝ որ առ
 « անդիտութեան կամ ի պատրելոյ՝ ի չարօրինակ անցեալ իցեն ընդ
 « օրէնս եւ ընդ կանոնս, եւ զԱզգն թողեալ ընդ պարտօք օրինա-
 « զանցութեան, եւ յանցաւոր եւ պակասաւոր, հոգ տարցէ ժողովն
 « ի քաւութիւն անցելոցն եւ ի հանդարտութիւն խղճի բովանդակ
 Ազգին :

« Ժ.— Սրբազան Կաթողիկոսն հաստատեսցէ ի միումն ի մօտա-

« ւոր մենաստանաց Սրբոյ Մայր Աթոռոյ Էջմիածնի բարձրագոյն
 « ուսումնարան վասն ժառանգաւորութեան Եկեղեցւոյ, զի ի զար-
 « թելոյն ի նմա յարիցեն բանիրուն եկեղեցականք :

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆԻ ՊԱՏՐԻԱՐԿԱՅ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱԿԵՄԻ

ԵՒ Կ. ՊՕԼՍՈՅ

« Ա. — Ընդհանրական Կաթուղիկոս Սրբոյ Էջմիածնի, ծանիցէ
 « զՊատրիարքն Երուսաղէմի Մայրագոյն Արքեպիսկոպոս եւ Պատ-
 « րիարք եւ նախապատիւ՝ զահեբէց Աթոռոյ Սրբոյ Յակոբեանց ա-
 « ռաքելոցն, ընդ գերագոյն հոգեւոր իշխանութեամբ Մայր Աթոռոյ
 « Սրբոյ Էջմիածնի :

« Բ. — Ընդհանրական Կաթուղիկոսն Սրբոյ Էջմիածնի ծանիցէ
 « զՊատրիարքն Կ. Պօլսոյ՝ Մայրագոյն Արքեպիսկոպոս եւ Պատ-
 « րիարք Ամենայն Հայոց բնակելոց ի Տաճկաստան, ընդ գերագոյն
 « իշխանութեամբ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, եւ ունել իշխա-
 « նութիւն կարգելոյ եւ յետս կոչելոյ զԱռաջնորդս վիճակաց եղելոց
 « ի Տաճկաստանի խորհրդակցութեամբ Հոգեւոր Ժողովոյն ընդ
 « իւրեւ եղելոյ :

« Գ. — Կաթուղիկոսունք Սոոյ եւ Աղթամարայ ի նստել յԱթոռն
 « Հայրապետութեան իւրեանց, նոյնպէս եւ Պատրիարքունք Սրբոյ
 « Երուսաղէմի եւ Կ. Պօլսոյ, յընտրել իւրեանց յուխտէ եկեղեցւոյ
 « եւ ի ժողովրդենէ, եւ ի նստել յԱթոռ, յատուկ զրով յորում ստո-
 « րագրեալ իցէ եւ ուխտ եկեղեցւոյն, մատուցեն զհաւատիս մե-
 « ծարանաց առ Մայր Աթոռն Սրբոյ Էջմիածնի : Չորեքին Աթոռքս
 « այսոքիկ խորհրդով Հոգեւոր Ժողովոյ իւրեանց՝ զամենայն իրո-
 « ղութիւնս որ վերաբերեն ի հեղեւորս՝ կարեն անօրինել եւ կար-
 « զազրել իւրաքանչիւր յիւրեանց վիճակի . իսկ ի բոնի եւ ի դէպս
 « զԺուարին խնդրոց փութացեն խորհուրդ հարցանել ի Սուրբ Սի-
 « նոզէ Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի :

« Դ. — Իւրաքանչիւր վիճակաւոր եպիսկոպոսունք Հայոց բնակե-
 « լոց ի Տաճկաստանի՝ վասն ամենայն հոգեւորական եւ քաղաքա-
 « կան խնդրոց, սպարտին դիմել ի կեդրոն իւրեանց ի Պատրիարքա-
 « կան Աթոռ Հայոց ի Կոստանդնուպօլիս, ունելով իրաւունս յոր-
 « ժամ հարկաւորիցէ բողոքել եւ առ Մայր Աթոռ Սրբոյ Էջմիածնի :
 « Սակայն Սուրբ Աթոռն, յորժամ բողոք ինչ հասցէ առ ինքն ի վի-
 « ճակէ իմիքէ, զպատճէն բողոքոյն արձանագրեալ յիւրում դիւանի,
 « կանխաւ վասն նմին իրաց խնդրեսցէ եւ ընկալցի զձանօթութիւն

« Ի Պատրիարքարանէ Կ. Պօլսոյ, եւ ապա մատիցէ տալ զարժանին
« վճիռ :

« Ե.— Ամենայն զանգատք, որ լինիցին ի հոգեւորական մասին
« զԿաթողիկոսաց Ստոյ եւ Աղթամարայ եւ զՊատրիարքէ Սրբոյ Ե-
« ռուսաղէմի, կամ զմիոյ ումեքէ յԱռաջնորդաց Տաճկաստանի,
« առաջարկեսցեն նախ Հոգեւոր Ժողովոյն Կ. Պօլսոյ, ուր եւ տար-
« ցի փոյթ ամենայն խնամով վճարել զիրան: Բայց եթէ խնդիրն ոչ
« լուծանիցէ ի ժողովի անդ, իրաւունս ունիցին որք զբողոքն հա-
« րեն՝ այնուհետեւ բողոքել եւ առ Սր. Սինոզն Մայր Աթոռոյ Սըր-
« բոյ Էջմիածնի, որոյ արձանագրեալ յիւրումն զիւանի զպատճէն
« ամբաստանութեանն, խնդրեսցէ ՝ ծանօթութիւն ի Պատրիարքա-
« րանէ Կ. Պօլսոյ վասն նմին իրաց, եւ ընկալեալ օրինաւոր կերպիւ
« զնիցէ ի գործ զպատշաճն եւ զարժանաւորն:

« Զ.— Սրբազան Պատրիարքն Սրբոյ Երուսաղէմի, յառանձին
« և ի պատշաճաւոր ուրեք արտաքոյ քան զմեծահռչակ վասն Սրբոց
« Յակոբեանց, հաստատեսցէ բարձրագոյն ուսումնարան վասն ժա-
« ռանդաւորութեան Եկեղեցւոյ:

« Զայտոսիկ ամենայն ապաքէն ի զիր առեալ միաբանութեամբ,
« եւ մատուցեալ Սրբոյ Սինոզի Արարատեան Մայր Աթոռոյ մերոյ
« Սրբոյ Էջմիածնի, կամիք՝ զի պատճէն այսր թղթոյ նոյնութեամբ
« յերկուս այլ եւս օրինակս գրեալ եւ վաւերացեալ, մինն որ առ ի
« մէջ մատուցեալ բնագիրս է, պահեսցի ի զիւանի անդ Սրբոյ Ա-
« թոռոյն, իսկ մնացեալ երկոցուն պատճէնից այսր սահմանադրու-
« թեանս զվաւերացուցեալս ի Սրբոյ Աթոռոյն, զմինն առաքել ի
« Կոստանդնուպօլիս՝ զի պահեսցի անկորուստ ի զիւանի Պատրիար-
« քարանին, եւ զմիւսն ի Սր. Երուսաղէմ յԱթոռ Սրբոց Յակոբեանց՝
« զի պահեսցի, եւ իւրաքանչիւր Պատրիարքունք անմոռաց յուշի
« ունիցին, եթէ ընդ որովք պարտեօք իցեն ի զիտել զիրաւունս սըր-
« բազան Կաթողիկոսի Ամենայն Հայոց, եւ ի կատարել զամենայն
« գործ հոգւոր Իշխանութան յանձն եղելոյ ինքեանց, եւ ըստ այնմ
« միտ զիցեն վարել:

« Անստեւրիւր պահպանութիւն գրից ելոց ի սմա կարեւոր ճանա-
« չի ի պահպանութիւն արտօնութեանց սրբազան Հայրապետի Հայ-
« կազեան Ազգիս՝ ի հոգեւոր տեսչութիւն նորին, եւ ի գործադրու-
« թենէ եւ ի պահպանութենէ սահմանելացս ծանիցի գերագոյն հո-
« գողութիւն նորա ի վերայ Ազգին, որովք եւ Ազգն ծանիցէ զնա
« Գերագոյն Հայրապետ Հայաստանեայցս Եկեղեցւոյ, եւ արժանա-
« ւոր յաջորդ Սրբոյ Առաքելոյն, Թաղէոսի եւ Բարթողիմէոսի,
« եւ Սրբոյ Նորին մերոյ Գրիգորի Լուսաւորչին: Իսկ եթէ ոք կամ

« առ շահասիրութեան, կամ անձնդիրի, կամ առ ակնածութեան
 « իշխանութեան իրիք անհոգացեալ ի միում իմիք յայսցանէ բերցի
 « ի նուազեցուցանել զսա ի Սրբոց Հարց անտի մերոց ստացեալ եւ
 « պահեալ արտօնութիւնս եւ անկախութիւնս, եւ պատճառ դտցի
 « իւրով անհոգութեամբ՝ վատթարելոյ Ազգիս, զայնպիսին ոչ ըն-
 « զունէ եւ ոչ ճանաչէ Ազգն իրբեւ արժանաւոր յաջորդ Լուսաւոր-
 « չեան Աթոռոյ ընդհանուր Հայրապետութեան Ազգիս: Սակայն եւ
 « ոչ այսու ցրտանայ ինչ եւ հեռանայ ի գրկաց Սբ. Աթոռացն, զոր
 « միշտ Մայր իւր ճանաչէ, այլ համարէ զայն առ ժամն իրբ Աթոռ
 « Թափուր առանց արժանաւոր զահակալի, եւ խնդրէ յաղօթս իւր
 « յԱստծոյ՝ շնորհել Եկեղեցւոյ իւրում, զոր ապրեցոյց արեամբ իւ-
 « բով եւ պայծառացոյց առաքելական ջանիւք Սրբոյ Հօրն մերոյ
 « Գրիգորի Լուսաւորչին ժառանգ արժանի նմին՝ ի Տեսչութեան եւ
 « ի մատակարարութեան հոգեւոր պիտոյից Ազգիս:

Յամի Փրկչին 1859 Մայիս 8՝ ի Կոստանդնուպօլիս:

Պ. Կ.

Յակոբ Եպիսկոպոս

Սրբոյ Երուսաղէմի փոխանորդ
 Իսահակ վարդապետ,

Պօղոս Պետրոսեան վարդապետ
 անդամ Հոգեւոր Ժողովոյ

Յովհաննէս վրդ.՝
 անդամ Ժողովոյ Կ. Պօլսոյ.

Տ. Յովհաննէս

Մայր Եկեղեցւոյ, անդամ Հոգեւոր
 Ժողովոյ

Արիստակէս քհնյ.
 անդամ Հոգեւոր Ժողովոյ

Սարգիս Եպս.

անդամ Հոգեւոր Ժողովոյ

Յօհաննէս վրդպ. Սեթեան
 անդամ Հոգեւոր Ժողովոյ

Պատրիարքական փոխանորդ
 Յարութիւն վարդապետ.

Անդրէաս վրդպ. Պօղոսեան
 անդամ Հոգեւոր Ժողովոյ

Երևակ. Սբ. Խաչ եկ.

Յօհաննէս աւագ քհնյ Փափաղ-
 եան անդ. Հոգեւոր Ժողովոյ

Երեմիայ քհնյ

անդամ Հոգեւոր Ժողովոյ

Անդամք Ազգային Գերագոյն Ժողովոյ

Կնիք ազգային

Ստորագրութեան Հոգեւոր Ժողովոյս մերոյ եւ կնքոյ Ժողովոյ
 Ազգիս ստորագրութեանն վկայելով, զայս Ազգային խնդիր եւ առա-

Հարկութիւն ստորագրութեամբ եւ կնքով մերով վաւերացուցանեմք

1859 Մայիս 11 ի Կոստանդնուպօլիս

Ի Պատրիարքարանն Ամենայն Հայոց .

Պատրիարք Կոստանդնուպօլսոյ

Գէորգ Արքեպիսկոպոս

Կնիք Պատրիարքին

« (Իսկական յայտարարութեան թուղթն յանձնեալ եղեւ առ ձեռն
« նեռալ մայեօր Մելիքեան : 1859 Մայիս 15ին Հանդերձ նամակաւ
« Պատրիարքին առ Զօրապետն) :

« Բաց ի յայտարարութենէս յայսմանէ վերողբելոյ, յիշեալ
« զօրապետին մատուցաւ՝ առանց ստորագրութեան փոքր ցուցակ
« մի ծանուցազիր, օրինակ զայս :»

« Աղթամարայ Կաթողիկոսն Հանդերձեալ է երթալ յուխտ ի
« Սբ. Էջմիածին եւ Վեհափառ Սրբազան Կաթողիկոսին Ամենայն
« Հայոց՝ մատուցանել զհպատակութեան իւրոյ եւ սիրոյ եւ միա-
« բանութեան մեծարանս եւ շնորհաւորել զսուրբ կոչումն նորա ի
« գահ Հայրապետական : Վասն որոյ առ այս խնդրի, զի ի գալ նո-
« րին՝ Սրբազան Հայրապետն եւ Սինօզն Մայր Աթոռոյն ցուցցեն
« առ նա զիւրեանց պատուասիրութիւն, եւ մի՛ խտութեամբ բանից
« եւ առաջարկութեանց վարեցեն, այլ չափաւորեալ վայելչու-
« թեամբ կարգազրելով զպատշաճ իրողութիւնս, երկուց Աթոռոցն
« իրաւասութիւնք բացատրեսցին զաշնազրութեամբ ընդ միմեանս :
« Եւ յորժամ Սրբազան Հայրապետն ընդ զերպոյն իշխանութեան
« իւրոյ հաստատել բարեհաճեսցի կաթողիկոսական պատուով (այ-
« սինքն՝ թէ պատուեալ միայն Կաթողիկոս անուամբ), անուանես-
« ցէ զնա Տեղապահ իւրումն ընդհանրական կաթողիկոսական իշ-
« խանութեան ի վերայ վիճակիս Աղթամարայ եւ սրբոց վանացն,
« միշտ ըստ կարելոյն չափաւոր կերպիւ կախումն ունելով յիւրմէ,
« փոքր ընդարձակութեամբ յերս զործանունութեանց իւրոց :»

Ահա հռչակաւոր ծրագիր այն զորմէ տարածայնէին նպատակա-
ւոր հակառակորդք իրր առաջարկութեան առ ի միանալ ընդ ուր-
ասական եկեղեցւոյ կամ մտանել ի պաշտպանութեան նոյն եկեղեցւոյ :

Արդարեւ տարապարտ միանգամայն տղիտական էին համար-
մունք եւ ակնկալութիւն տացեալք հանդէպ հասարակ զօրապետի
միտմ հայողւոյն, որպիսին էր յայնժամ Միքայէլ ԼօռուՄելիքե-
ան : Նոյնպէս քննադատելի էին առաջարկութիւնքն ուղղեալ առ

գաւառական կրօնական ժողովն ուսասհայոց, թէև կրէ նա զպիտակ անուն Սինօղ վաւերացեալ ուսասհաստատ կանոնադրութեամբ 1836ի :

Այլիկար թելադրութիւնք եւ անփորձ մտադրութիւնք Տ. Տ. Մատթէոս Կաթողիկոսի՝ առանց երեւելոյ ի միջի, պարզին զտր- գիտութիւնն միջազգային իրաւանց՝ մանաւանդ ուղղութեան ուս- սական կառավարութեան՝ առաջարկելով կազմել զընդհ. ժողով ե- կեղեցական (յօդ. 4) եւ կարգել յանդամս Սինօղի զեկեղեցականս ի Հայոց Տաճկաստանեայց, Ռուսաստանեայց, Պարսկաստանեայց եւ զաղթականութեանց (յօդ. ք.), միանգամայն ի փոխանորդ Կա- թողիկոսական զոմն ուսասհայ եկեղեցականաց հանդերձ սարօքն (յօդ. ք.) եւ մոռնալ զփոխանորդն իւր յանձին Պատրիարքին Կ. Պօլսոյ, որպէս ճանաչէ մեծ Եպարքոսն Օսմանցւոց յամսն 1868-69 յատուկ զրութեամբն, որպէս տեսցի յիւրում տեղւոջ ի պատմու- թեան փախանորդութեան Սարգիս Եպսի Ջորլոյեան :

Ի գլխոջ Արտօնութեանց ուշագրաւ են առաջարկեալքն վասն Սոոյ եւ Աղթամարայ, եւ գովելի ըստ ամենայնի :

Յաւիտենական են յանգերզն եկեղեց. Ընդհ. ժողովոյ եւ առա- ջարկն Աղք. Եկեղ. բարեկարգութեան, զորս զեղգեղեն մինչև ցայժմ առանց գիտակցութեան :

ԳՆՈՒԽ Լ.

ՅԱՂԱԳՍ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՅ ԹՈՒՐԿԻՈՅ

Օր աւուր զօրանային ազդեցութիւնք ոմանց երիտասարդաց, եւ ջանային հաստատել զՍահմանադրութիւն ազգային եւ զսահմանա- դրական վարչութիւն ընդ դէմ ամիրայից իբր յապահովութիւն ազ- գային զարգացման եւ յառաջադիմութեան :

Միացեալ էին ընդ նոսա ոմանք յամիրայից յառաջադիմասիրաց՝ Յովհաննէս Պէյ Տատեան, Պետրոս աղայ Սօրասանճեան, զարգաց- եալ որդիք ոմանց գլխաւորաց ազգայնոց՝ Նիկող. Պալեան, Գրիգոր Օտեան եւ այլն, եկեղեցականք սակաւաթիւք, եւ մեծամասնութիւն համակիր լրագրաց եւ հանդիսից Հայոց արծարծէին բաց է բաց եւ եռանդեամբ զինդիրս զայս եւ վառէին, պատրաստէին զժողովուրդ :

Ս. Պատրիարք Գէորգ Արքեպս. խրախուսէր զնոսա, եւ հաստա- տութիւն արձանադրութեան վիճարանութեան ժողովոյ նախարան եւ կարապետ լեալ՝ ողեւորեալ էր յառաջադիմականս : Ապաքէն օրէնք եւ կանոնք հաստատունք ապահովեն զբարեք զեկավարութիւն ան-

ձընիւր Ազգի, պետութեան եւ եկեղեցւոյ, բացակայութիւն որոյ խանդարեն եւ կործանեն զազգ, զպետութիւն, զեկեղեցի, զընկերութիւն, զընտանիս եւ զտունս, սպառեալ եւ զգոյութիւնս նոցա :

Զուրկ էին Հայք յայսպիսեաց հաստատուն եւ ընդարձակ օրինաց եւ կանոնաց կարեւորաց ըստ վարչականին :

Էին արդարեւ կանոնք եկեղեցականք եւ հաւաքածոյք Մխիթար Գօշի, որք ոչ օգնէին եւ ոչ կարէին ուղղել զվարչութիւն ազգային, մանաւանդ թէ կարի անձուկք եւ սահմանափակ էին, մինչ կանոնք ազգայինք թէ եւ իցեն թերիք եւ համառօտք, արդիւնաւորեն յաւէտ եւ հանապազ զհամերաշխութիւն, զբարեկարգութիւն եւ ըզխտակցութիւն ընդհանուր առանց կամայականութեանց եւ քմահաճոյից ըստ ամենայնի եւ յամենայնի :

Մխիթար Գօշ ամփոփեալ է ըկանոնս կարեւորս ըստ ազգային կառավարութեան զոյգ ընդ եկեղեցականին, յորոց չափեմք զուղղութիւնս որպէս ժամանակակցոց Գօշի, այնպէս նախնեաց մերոց սկսեալ ի վերջին կանոնադիր արքայէ Հայոց ի Լեւոնէ (?), խառն ընդ օտարականաց : Իցի՞ւ թէ բարեփոխեալ զկանոնսդ՝ ըստ յարմարութեան ժամանակաց՝ յօրինէին զկանոնադրութիւն ընդհանուր, եկեղեցական եւ ազգային, յորպիսի ջանս թերացեալ է Հայրապետութիւն Ամենայն Հայոց, եւ յականէ յանուանէ՝ առթիւ հաստատութեան կանոնադրութեան 1836 ամի որ ի պէտս Ս. Էջմիածնի եւ կառավարութեան եկեղեցւոյ Հայոց որ ի Ռուսիա : Կամեցաւ լրացուցանել Գէորգ զսոյն զայս թերութիւն ի Հայրապետութեան իւրում ընդ վերաքննութեան Պայտէնիոյ, այլ յարոյց ուսս պետութիւն զմեծամեծ զօրարութիւնս մինչեւ արդել լինել :

Արժան է յայտնել եւ զայս, զի կանոնադրութիւն 1836ի, թէպէտ թերի յոյժ եւ հակասական, միանդամայն հակառակ դարաւոր աւանդութեանց մերոց, ազգայնոց եւ եկեղեցականաց ըստ նուիրականացն խնդրոց անդամ, այլ զի կրէր զհաստատութիւն պետական, ուստի ըստ մասնեայ ապահովէր զկառավարութիւն եկեղեցական եւ ազգային ընդ յարաբերութեանց պետութեան, ընդ որ ստրջացեալ է զարդիս ուսս պետութիւն : Պակասէր կանոնադրութիւն այսպիսի Հայոց Թիւրքիոյ, զոր ջանացին հաստատել անձինք բանիմացք եւ երկտասարդք ոմանք միացեալ ընդ Ս. Պատրիարքի :

Սակայն պակասէին համերաշխութիւնք եւ զխտակցութիւնք, եւ քառեակ կուսակցութիւնք հետեւէին արդիւնաւորել զանձնիւր ծրագիրս իւրեանց սահմանադրականս, զորս եւ ներկայացուցեալ էին Ս. Պատրիարքի :

Ծրագրերը այնոքիկ էին անյարմարք ազգային վիճակի Հայոց եւ կարօտութեանց, հետեւեալ սկզբանց եւ դրից անզղիական եւ ամերիկեան սահմանադրութեանց, մինչ պակասէր ի Հայս զոյութիւն քաղաքական եւ բացարձակ :

Տ. Գէորդ Արքեպօ. Պատրիարք Ջանայր համոզել զամիրայս եւ զազգեցիկ անձինս միանալ ի հաստատութիւն սահմանադրութեան, միանգամայն յորդորել զսահմանադրականս որոշել զմի ծրագիր եւ զկանոնադրութիւն՝ յարմարեալ պիտոյից եւ կարօտութեանց ազգային վիճակի, յորում պահպանել զկարեւորս մասունս իրաւանց եւ արտօնութեանց պատրիարքական իշխանութեան՝ հաշտեցուցեալ ընդ արամադրութեանց հրովարտակաց տուելոց պատրիարքաց :

Մեծամասնութիւն զօրաւոր ամիրայից եւ կուսակիցք իւրեանց ընդ բազմութիւ եկեղեցականաց բարձրաստիճանաց, յամառէին ի հակառակութիւնս իւրանց : Կուսակցութիւնք Նիկողոս Պալեան եւ Գրիգոր Օտեանի, Սերոբէի Վիչէնեան (Սերվիչէն) եւ Ստեփանի Արսլանեան բժշկապետաց, եւ երկուց ուրոյն կուսակցուց Միջազնղջ եւ Սասզեղջ՝ պնդէին յընդունելութիւն եւ ի հաստատութիւն անձնիւր ծրագրաց :

Իսկ Տ. Գէորդ Արքեպօ. բաղխէր յաւէտ հակառակութեանց, տեսանէր միանգամայն զմեքենայութիւն ընդ զէմ իւր ի զօրաւոր ամիրայիցն, որոց պարագլուխք էին Կարապետ Պալեան, եւ Պօղոս Տատեան ամիրայք :

էին եւ այլ խնդիրք եւ պատճառք, զորոց համառօտեցաք :

Այսպէս ասպ ծանրանայր վիճակ իշխանութեան Ս. Պատրիարքի, մինչեւ ծանրանալ հակառակորդաց յուզել զխնդիր հրաժարականի :

ԳԼՈՒԽ ԼԱ.

ՅԱՂԱԳՍ ՀՐԱԺԱՐԵԼՈՅ ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊՍ.-Ի Ի ՊԱՏՐԻԱՐ-

ԲՈՒԹԵՆԷ

Յետ վերադարձի Օգոստ. Սուլթան Մէճիտ Կայսեր Թուրքիոյ ի ճանապարհորդելոյ յնզիպտոս, զոր զիմաւորեաց եւ ողջունեաց Տ. Գէորդ Արքեպօ. Պատրիարք մեծաւ հանդիսիւ եկեղեցականաւ կացեալ ի ծովեղոն յԵՆԻ.Գաբու ի 23ն Յուլիսի 1859ի, ձեռնարկեն հակառակորդ ամիրայք ի նոր դաւադրութիւն ընդ զէմ Գէորդայ եւ հաստատութիւն Ազգային Սահմանադրութեան առաւել իմն առարկութեամբ եւ փութաջանութեամբ :

Սրամտեալ կանգնեալ էին Ամիրայք Արքունի ճարտարապետ Կարապետ Պալեան, արքունական վառօդապետ Պողոս եւ Յովհաննէս Տատեան, արք զօրաւորք եւ աղբեցիկք ըստ բազում մասանց, եւ հանդիսացեալ ի սարազլուլիս հակառակորդաց՝ միացուցեալ ընդ իւրեանս զմեծամասնութիւն բարձրաստիճան եկեղեցականաց ընդ Տ. Յակոբոս Արքեպս-ի երբեմն պատրիարքի: Ոչ պակասէին նոցա ամբաստանութիւնք զԳէորդայ առ ի դրզուել զկուսակցութիւնս իւրեանց եւ զչէզոքս անգամ՝ բաց ի Սահմանադրականաց եւ ի գաւառացւոց:

Բաւական էին նոցա խնդիրք Աղլային Հիւանդանոցի, Գերեզմանատան Բերայի, արզելման անճահ Տեղեկազրոց (քաֆրիք), արձանադրութեանց վիճարանութեանց ժողովոց, մանաւանդ խմբադրութեան եւ հաստատութեան Աղլ. Սահմանադրութեան, այլ սակայն առարկեալ եւ պատրուակեալ նոցա զխնդիր Սահմանադրութեան՝ որ ջլատելոց էր զքմահաճոյ գործողութեան ամիրայից եւ անճանց նշանաւորաց, յաճախ արդիւնաւորելոց ի վնաս Աղլի եւ Եկեղեցւոյ, յաւելին ամբաստանել զԳէորդայ եւ զայտոսիկ, թէ ունի զփառասիրութիւն ծայրայեղ, թէ խայտառակէ զեկեղեցականս ի ժամու եւ ի տարածամու՝ ի դէպս թէ յանդէպս յանդիմանեալ, թէ մերժեաց զկարեւոր խնդիր առաջարկութեան որ առ Տ. Մատթէոս Կաթուղիկոս ապ ի Կ. Պօլիս, թէ ինքնին եւ միապետարար վարէ զիշխանութիւն պատրիարքական եւ զգործս ազգայինս, թէ ունի զխորխոր վարս եւ զբարս, թէ արդելու ժողովականաց ծխել ի ժողովի, թէ խանգարէ զեկեղեցիս եւ միջամտէ երզնցողութեանց դպրաց, եւ թէ անարդանօք վարի ընդ աղլային պաշտօնեայս, ընդ ժողովականս եւ ընդ խնդրատուս, եւ յարմարէին զայլս բանս եւ զգրպարտութիւնս այսպիսիս: Արդար էին բանք վերարեւելալ խստութեան, նախանձախնդրութեան, կարգապահութեան եւ օրինապահութեան Տ. Գէորդայ Արքեպս-ի ըստ ամենայնի եւ յամենայնի՝ ապացուցեալ յամենայն պաշտօնավարութիւնս սորա:

Իսկ սահմանադրականք երկպառակեալ էին, եւ մինչ ջանային բառնալ զաղբեցութիւնս ամիրայականս եւ հաստատել զաղլային վարչութիւն սահմանադրական, երկպառակութիւնք նոցա զժուարացուցանէին զջանս Ս. Պատրիարք, մանաւանդ նպաստէին խարդաւանութեանց հակառակորդաց հակառակ կամաց եւ նպատակաց իւրեանց:

Ապա յետ բազում ջանից եւ խորհրդակցութեանց որոշեն հակառակորդք ի մասնաւոր ժողովակի ի Մեծ-Նոր-Սանն ի Կ. Պօլիս պահանջել զհրաժարական Գէորդայ ի Պատրիարքութենէ, զոր բանի-

բերանոյ պատգամաւորութեան առաջարկեն առ Գէորգ Արքեպս.—ի ի զիմաց զօրաւոր Ամիրայից եւ ժողովականաց ի 13ն Նոյեմբերի (1859) : Իսկ ամիրայք բարեմիտք եւ ազատականք՝ որպիսիք էին Պետրոս Խօրասանճեան, Գէորգ Փափազեան, Աշնունեանք, միացեալ ընդ մեծամասնութեան ժողովրդեան եւ սահմանադրականաց ջանան սիրաշահել զԳէորգ, զի մի՛ հրաժարեսցի, միանգամայն մտանել ի միջնորդութեան եւ իրաւախօսութեամբ կարգադրել } զհաշտութիւն ամիրայից եւ հակառակորդաց ի 17ն ամսոյն (Նոյեմ.) :

Փոխադրեն հակառակորդք առժամս զժողովատեղի իւրեանց ի Մեծ-Նոր-Խանէ ի Պէշիկթաշ, ի տունս Պալեանց եւ Յովհաննէս Տատեան, եւ ի 14ն Մարտի 1860 թուականի ուխտեն հրաժարեցուցանել եւ հանել զԳէորգ ի Պատրիարքութենէ :

Յայնմիկ ժողովակիւն էին ամիրայք Կարապետ Պալեան, Պօղոս եւ Յովհաննէս Տատեան, Պարոնայք Յակոբ Մուպահեաճեան, Եազուպ Եաղուպեան, Աւետիս Պարտիզպանեան, Յովհաննէս Սուրէնեան եւ այլք ոմանք :

Իսկ ի 17ն Մարտի ժողովեալ ի նորոյ ի Մեծ-Նոր-Խանի, ընտրեն ի միջոյ իւրեանց զպատուիրակս առ ի Երթալ առ Գէորգ Արքեպս. եւ պահանջել զհրաժարականս :

Պատուիրակքն էին. Եաղուպ Եաղուպեան, Աւետիս Պարտիզպանեան, Կիւմիշճի (ոսկերիչ) Գասպար, Յակոբ Մուպահեաճեան, Թովմաճան Կեսարացի, Մինաս Թօղաթլեան եւ Յովհաննէս Սուրէնեան, որք եկին ի Պատրիարքարան ի յաջորդ աւուր (ի 18ն Մարտի) եւ առաջարկեցին Ս. Պատրիարքի տալ զհրաժարական, որոց խոստացաւ Գէորգ Արքեպս. առաքել զհրաժարադիր իւր առ Բ. Դուռն ըստ սովորութեան :

Եւ ահա ի սմին աւուր յետ նոցա, եւ ի յաջորդ աւուրս փութացին առ Գէորգ Արքեպս. Պատրիարք դալ վեշտասան պատգամաւորք անձինք պատուաւորք եւ ի զիմաց Հայոց Խազդեղձ, ի Միջագեղձ, յիւսկիտարէ, ի Սամաթիոյ եւ յայլոց գլխաւոր թաղին ոմանց եւ յարուարձանաց, ընդ որս բազումք ի խմբադրաց լրադրոց, եւ խնդրեսցին ի սմանէ մերթել զպպօրէն առաջարկութիւն հակառակորդաց եւ չտալ երբեք զհրաժարական ի պատրիարքութենէ, սպանացեալ յուզել զխոսովութիւն մեծ եւ զարժումն ազգային ընդ դէմ հակառակորդաց : Պնդէլին ընդ թախանձանս իւրեանց, որոց պատասխանէ Գէորգ եւ յորդորէ ի խաղաղութիւն եւ թողուլ կամաց իւրոց եւ տնօրէնութեան առ ի գործել զարժանս, եւ սիրաշահեալ ուղւոյ դնէ զնոսա, խոստացեալ շարունակել զպաշտօնն :

Իսկ ի գաղտնի եւ լուկեայն գրեալ զհրաժարական իւր ի նմին

իսկ աւուր՝ առաքեաց որում հարկ էր, դրալ ընդ նմին եւ զառան-
ձին նամակ առ Մեծ Եպարքոս Բիւշտի-Մէհէմէտ փաշայ բարեկամ
իւր՝ թախանձեաց փութացուցանել զընդունելութիւն հրաժարականի
իւրոյ եւ զպատուութիւն ի պատրիարքութենէ, զոր եւ առաքեաց ի
յաջորդ աւուր:

Սահմանադրականք եւ ժողովուրդ, խուռներամ բազմութեան
Հայոց զաւառացւոց շարունակէին դալ առ Տ. Գեորգ Արքեպս. եւ
թախանձին չհրաժարել, որ եւ միամտեցուցանէր զնոսա: Եւ ի միւս-
մէ կողմանէ հետեւէր ազատութեան իւրում:

Յ31ն Մարտի առաքեաց զբժշկապետ Սերորէ Վիչէնեան (Սեր-
վիչէն) ի զաղանի ի միջնորդ առ Սատրազամ Բիւշտի-Մէհէմէտ փա-
շայ եւ առ նախարար արտաքին գործոց (Սարիճիյէ) Փուատ փա-
շայ առ ի հաճեցուցանել զնոսա, որպէսպի ընկալցեն զհրաժարական
իւր, զոր մերժէին եւ վերադարձուցանէին առարկեալ զհրաման
կայսերական:

Մինչեւ ցտաններորդ օր Ապրիլի կրկնեաց եւ երեքկնեաց առա-
քել զբժշկապետ Սերորէ ի միջնորդել առ նախարարսք երկուս, ո-
րոց էր բժշկապետ անձնական, որպէս եւ առ հռչակաւորն Առլի փա-
շայի: Այլ ի նանիր: Գուցէ ոչ կատարէր եւ Սերորէ զմիջնորդու-
թիւն իւր ըստ արժանւոյն՝ ի զաղանի լեալ ի կողմն սահմանադրա-
կանաց եւ ի շարս անկեղծ բարեկամաց Գեորգայ:

Ի 14ն ամսոյն (Ապրիլի) ինքնին զիմեաց առ Մեծ-Եպարքոս եւ
առ Խարիսիյէ, որք շարունակէին մերժել զհրաժարական սորա, իսկ
սա պնդէր խնդրել առ ի ազատել զանձն ի պիտակ պաշտօնէ Պատ-
րիարքութեան, յաւելեալ միանգամայն, զի ոչ շարունակեսցէ յետ
այսօրիկ զպաշտօնդ զայդ:

Հազիւ ուրեմն յաջողեալ ստանալ զպատասխանի առանձին նա-
մակի իւրոյ ի Փուատ-փաշայէ, որ թողոյր ազատ կամաց սորա, ի
յաջորդ աւուր՝ իմա՝ ի 20ն Ապրիլի ինքնին երթալ Գեորգ Արքեպս. —ի
առ Սազրագամ ձեռամբ իւրով յանձնեաց նա զհրաժարաթուղթս,
թէպէտ քաղաքավարութեամբ իմն շարունակէր եւ ջանայր Բիւշտի-
Մէհէմէտ փաշայ սիրաշահել զսա եւ մերժել զթուղթն: Հազիւ ու-
րեմն հաճեցաւ ընդ թախանձանս սորա, եւ պատուիրեաց տանել եւ
տալ զհրաժարաթուղթդ առ նախարար Արտաքին գործոց, ընդ ո-
րում էին յայնժամ յարարերութիւնք պատրիարքաց, որպէս եւ արար
իսկ ի 21ն Ապրիլի, և յետ յանձնելոյ զհրաժարականն մատոյց Փու-
ատ փաշայի զշնորհակալութիւն, եւ եկն ուղղակի ի տուն քեռ իւ-
րոյ ի Կէտիկ-Փաշայ՝ վերադարձեալ ի Բ. Դրանէ: Փոխադրեաց
անդ ի Պատրիարքարանէ զգոյս իւր զամենայն եւ բնակեցաւ անդ

մինչև ցտեղափոխել զընակութիւն իւր ի Ռուսէի-Հիսալի Վոս-
փորի :

Ի վերադառնալ սորա ի տուն ի Բ. Դրանէ, զրեաց անմիջապէս
առժամեայ Պատրիարքական փոխանորդի (Ալէքսան վրդպտ. Ուն-
ճեան) զպատուէր զայս :

« Շնորհունակ սիրելի՛ ,

« Գրովս ծանուցանեմ քեզ զկամաւոր հրաժարումն ի պատրիար-
« քական պաշտամանէս եւ զնաչն մեր ի տուն հաճութեամբ Բ. Դը-
« րան, նախապատիւ եւ մեծարու համարեալ զօգուտն Աղլիս քան
« զանձինս, զանց զամենեքումք արարեալ, զի մի՛ ցաւալի երկպա-
« ոակութիւնք եւ վէճք ընդունայք զտեղի ունեցին յաւուրս մեր, որ
« պէս երբեմն պատահեալ են ի դժբաղդութիւն եւ ի դառն հետե-
« ւանս Աղլիս. արդ յանձնելով զօրհնեալ լրութիւն համազգայնոցս
« ի խնամոյ եւ յամենազօր պաշտպանութիւն Բարձրելոյն Աստծոյ,
« աղօթս եւ պաղատանս վերառաքեմք, զի նոյն ինքն Սրտազէտն
« ամենայնի՛ որ առաւել զիտէ զպէտս Եկեղեցւոյ, քան զոր խնդ-
« րեմք եւ իմանամք, բարեխօսութեամբ Սրբազան Առաքելոյն իւրոց
« Թաղէոսի եւ Բարդուղիմէոսի եւ երիցս երանեալ Հօրն Մերոյ Սը-
« րոյն Գրիգորի Լուսաւորչի, շնորհեսցէ ի տեղի մեր զայլ ոք հո-
« վիւ արժանաւոր ի պատրիարքական բարձրագոյն պաշտօն, հո-
« վուել զեկեղեցին Քրիստոսի ըստ իւրոց ամենասուրբ կամացն : Եւ
« քեզ սիրելւոյդ հայրաբար պատուիրեմք. մինչև ջգալ հրամանա-
« զբրի ի կողմանէ Մեծազօր Տէրութեան սակս ընտրութեան նորոզ
« Պատրիարքի եւ զհաստատութիւն Աղլային Կառավարութեան՝ ա-
« մենայն աջալրջութեամբ եւ ամենայն փութոյ՛ յայս անիշխանու-
« թեան փոքր միջոցի պատահեալ դործոց հոգ տարցես ըստ քում
« կարողութեան. եւ զամենեսան ոք դործոց աղապաւ եկեսցեն ի
« Պատրիարքարանն, շահեսցես եւ միխիթարեսցես՝ որքան ձեռնհաս
« իցես, զգուշացեալ յամենայն պարագայից եւ ի կասկածելի միջո-
« ցաց խոսովութեան եւ երկպառակութեան՝ զհետ լինելով սիրոյ,
« խաղաղութեան եւ անդորրութեան Աղլիս :

« Տէր ինքն զօրավիդն լիցի քեզ ի դործ քո : Եւ ես եմ եւ եղէց
« աղօթող զկեանս վասն բարեբաղդ ամենաողորմած թաղաւորին
« մերոյ եւ համայն բարեխորհուրդ նախարարաց, եւս առաւել հա-
« մազգայնոցս երջանկութեան, անդորրութեան եւ յառաջիմու-
« թեան :

« Լե՛ր ողջ : »

1860 Ապրիլ 21.

Ամիսս իրր տասն եւ ինն վարեաց զԻշխանութիւն պատրիարքութեան Կ. Պօլսոյ :

ԳԼՈՒԽ ԼԲ.

ՅԱՂԱԳՍ ՄԵԿՈՒՍԱՆԱԼՈՅ ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊՍ.—Ի ԵՒ ՍԱԿՍ

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՍԱՐԳԻՍ ԵՊՍ.—Ի ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՒ ՎԱՍՆ ԱՅԼՈՅ ԱՆՑԻՑ ԻՆՁ

Տարածեալ համբաւոյ հրաժարման Տ. Գէորգ Արքեպս.—ի պատրիարքութենէ եւ տեղափոխելոյ զընկուլթիւն իւր Պատրիարքարանէ ի Կէտիկ—Փաշայ, սկսան շարունակել եւ յաճախել անձինք նշանաւորք եւ Սահմանադրականք, պաղատանօք իմն թախանձել զԳէորգ Արքեպս., զի մի՛ հրաժարեսցի, այլ սա չլսելոյ զայդ զինդիր նոցա, սիրաչափէր զնոսա, մանաւանդ ջանայր աւուրբ յառաջ ազատել զանձն յերթեւեկութեանց եւ ի թախանձանաց ժողովրդեան՝ մեկուսացեալ անկեան ուրք՝ ի Վոսփորի՝ հետի ի բազմամարդ թաղից եւ յարուարձանաց հայարնակաց :

Ի 28ն Ապրիլ ամսոյ ընկալաւ Տ. Գէորգ Արքեպս. զպաշտօնաթուղթ Բ. Դրան, որում ապասեալ մնայր, որ հաղորդէր, զի Վեհ. Սուլթան հաճեցաւ յահամայս ընդունել զհրաժարական, եւ սահմանել զերկու հազարակամ դահեկանս յամսական ոռճիկ :

Յետ այսորիկ վարձեաց զտուն ի Բումբէլի. Հիսար եւ փոխադրեալ անդր զընկուլթիւն իւր, մեկուսացաւ իսպառ յաղապին գործոց եւ ի ձանձրալի յարարերութեանց եւ ի թախանձանաց :

Իսկ Սահմանադրականք, հակառակ յորդորանաց սորա եւ խրատուց՝ ջանային յուզել զինդիրս նորս, յորս յաւելուին նաեւ ջանալ խախանել զընտրութիւն նորոյ պատրիարքի, վասն որոյ, յՁն Մայիսի համախմբեալ ի խուռն բազմութեան ի պատրիարքարան՝ յորում աւուր կազմեալ էր ժողով ընդհանուր առ ի ընտրել զնոր պատրիարք, ազաղակէին թէ զո՛հ եմք մեք ի պատրիարքէ մերմէ եւ ոչ կամ իմք զայլ ոք ի պատրիարք ի տեղի նորա : Սաստկանան բանակուիւք, մինչեւ հնարս ինդրել ժողովականաց եւ կազմել զժողով զոնփակ, պատրեալ զժողովուրդ, եթէ ունին խորհրդակցել առանձին ըստ պատրիարքական ինդրոյ, եւ թէ միացեալ էին ընդունել եւ հաստատել զՍահմանադրութիւն աղապին : Եւ այսպէս առանձին ի գաղտնի կատարեն զընտրութիւն նորոյ պատրիարքի, յանուն Սարգիս Եպս.—ի Էտիրնէցւոյ, զոր առաքեալ էր Գէորգ Արք-

եպս. ի տեղի իւր ի դէպ վիճակին Պրուսայու՝ յետ դալստեան իւրոյ Պրուսայէ :

Առիթ պատեհ առեալ զայս ընտրութիւն, կարեւոր համարեմք յաւելուլ, զի սոյն այս Տ. Սարգիս ծնեալ յետիրնէ ի 1805 թ. էր եղբորորդի (որդի Յարութիւն անուն եղբոր) հռչակաւոր Պօղոս Արքեպիսկոպոսի Անդրիանուպօլսեցւոյ երբեմն Պատրիարք, միանգամայն պատրիարքական գործակատարի ի Սուրբ Երուսաղէմ աթիւ պարտուցն Ս. Յակոբեանց վանուց, ձեռնասուն աշակերտ Մեսրոբ Եպս.-ի*) Առաջնորդի Էտիրնէի: Կարգեալ սորա ընտրութեամբ եւ ինդրանօք վիճակայնոց յԱռաջնորդ Էտիրնէի, հրաժարեցաւ անտի ի 1851-2 թուականի: Գնաց ի Ս. Էջմիածին առ ի ձեռնադրել եպիսկոպոս, այլ քանզի վախճանեալ էր Յովհաննէս Կաթողիկոս Կարբեցի (1840.1), ոչ կամեցաւ սպասել մնալ մինչեւ ցընտրութիւն եւ ցօծումն նորոյ Կաթողիկոսի, եւ դիմեաց զնաց ի Սիս, ուր եւ էառ զեպիսկոպոսութիւն:

Յորժամ մեկնէր նորընտիր Տ. Մատթէոս Կաթողիկոս աստի ի Կ. Պօլսոյ առ ի երթալ ի Մայր Աթոռ Արարատեան, ուղեկցեցաւ նմա Սարգիս եւ այսպէս ընկալաւ զվաւերացումն եպիսկոպոսութեան իւրոյ ի Ս. Էջմիածնէ:

Յետ հրաժարելոյ Տ. Սարգսի Եպս.-ի ի վիճակէն Անդրիանուպօլսոյ, կարգեցաւ յառժամանակեայ պատրիարքական փոխանորդ ի Գում-Գարու: Յամի Տեառն 1857 առաքեցաւ յայցելու հովիւ գաղթական Հայոց Ուլա-Պուղղանի (Բումանիոյ) եւ Հունդարիոյ ի Յակոբոս Պատրիարք - Արքեպս.-ի, եւ վերադարձաւ ի 1859 ամի, յաւուրս պատրիարքութեան Գէորգայ, յորմէ ապա կարգեցաւ յԱռաջնորդական Դէտ վիճակին Պրուսայու:

Արդ՝ Սարգիս Եպս. եկեար ի Պրուսայէ ի 12ն Մայիսի, զնաց ի Բ. Դուռն ի 14ն ամսոյն, եւ ստանձնեալ սկսաւ վարել զպաշտօն պատրիարքութեան:

Մինչ կարգս պաշտօնի պահանջէր ի Գէորգայ կանխել ի շնորհաւորութիւն պատրիարքութեան Սարգսի, ցորչափ շրջէր ի շնորհաւորութիւնս նորահաստատ եպարքոսի Գրպրբզր (Կիպրոսցի) Մէհէմէտ փաշայի բարեկամին իւրոյ, եւ այնոց փաշայից եւ շէյխիւլիսլամի (Դէնպետ) ի 16ն Մայիսի, նորընտիր պատրիարք Տ. Սարգիս Արքեպս. փութայ խոհեմութեամբ իմն կանխել զայ ի տեսութիւն Տ. Գէորգայ նախորդի իւրոյ ի Բումէլի-Հիսաբ ի 23ն ամսոյ,

*) Աշակերտի Աստուածարան կոչեալ Յովհաննէս Եպս.-ի. որ եւ էր աշակերտ հռչակաւոր ամուսն Զաքարեայ Արքեպս. պատրիարք Կաղզուացոյ:

որ եւ յետ երկուց անուրց վճարեաց նմա զվոխադարձ տեսութիւն եւ գայցելութիւն զչնորհաւորական ի Պատրիարքարանի ի Գում-Գարու :

Մնդիրն սահմանադրութեան սպառնայր շարժել զերկպառակութիւն աղգային եւ զկնճիոս ծանրակշիոս, որոյ վասն Տ. Գէորգ Արքեպոս. ջանայր մնալ մեկուսի, ոչ երթալ ի Պատրիարքարան, եւ լուս եւ եթ սպասել ելից իրացն չէզոքութեամբ :

Հակառակորդք տեսեալ զվտանդ մեծ եւ զշարժումն նոր որ ընդ զէմ իւրեանց, ջան կալուն սիրաշահել զԳէորգ Արքեպոս. եւ միացուցանել ընդ կուսակցութեան իւրեանց, վասն որոյ ի 18ն Յուլիսի ամիրայքն ճարտարապետ Կարապետ Պալեան, եւ վառողապետք Պողոս եւ Յովհաննէս Տատեան ճեպեցին զալ առ Տ. Գէորգ Արքեպոս. ի Բումէլի. Հիւար, եւ պարզեալ մեղայիւ զյանցապարտութիւնս իւրեանց, խնդրեցին եւ ընկալան զպահպանիչ, իսկ Տ. Գէորգ յետ ասելոյ զպահպանիչն խրատեաց եւ սիրաշահեալ ուղևոյ ետ զնոսա :

Ոչ կամէր եւ ոչ հեռանայր սա ի չէզոք զրից իւրոյ, եւ թողոյր տեսանել զելս իրացն :

Յաւուրս յայտոսիկ Օգոստ. Սուլթան Մէճիտ Կայսր յաւել չրնորհել ամա զչքանչան յերկրորդ կարգի Մէնիսիյէի ի 25ն Յուլիսի, զոր ոչ ումեք ի քրիստոնէից հպատակաց եւ ի պատրիարքաց տուեալ էր՝ բաց ի հինգերորդ, ի չորրորդ եւ յերրորդ աստիճանացն : Փաշայք ոմանք եւ եթ րնկալեալ էին տակաւին եւ կրէին ի կուրծս զչքանչանս առաջին եւ երկրորդ կարգաց Մէճիտիյէի : Եւ սոյն այս ասիթ յաւել զնոր փորձս բարձր զրից, զիւանադիտութեան, ճարտարութեան եւ աղղեցութեան սորա (Գէորգայ) : Ընկալաւ զչքանչանն զայն ի ձեռանէ Առի փաշայի հոչակաւոր նախարարէ Արտաքին Գործոց ի ծովեղերեայ սպարանս որ ի Պէպէք ըստ յատուկ հրաւիրանացն ի 11ն Օգոստոսի : Եւ ի յաջորդ անուր չրջեցաւ սա ի Պահրիյէի, ոչ մտացեալ զմտերիմ բարեկամս իւր զՖուսա եւ վճարել զչնորհակալութիւն առ Մեծ-Եպարքոս, առ Խարիմիյէ, առ չէյի-իւլ-իւլամ, եւ առ նախարարան Հարպիյէի, Տախիյիյէի եւ Պահրիյէի, ոչ մտացեալ զմտերիմ բարեկամս իւր զՖուսա եւ զԲուշաի փաշայս :

Սակաւ ինչ առեալ հանդիստ եւ ոգի ի յուզմանց եւ ի ծանրատաղտուկ զբազմանց պաշտօնի պատրիարքութեան յետ հրաժարմանն, ջան կալաւ ուսանել զգաղղիարէն լեզու, որում հետեւէր եռանդեամբ, եւ սկսաւ ի 1ն Սեպտեմբերի : Գողցես ուսեալ զհամաշխարհային լեզու գաղղիական՝ կարեր ուղեւորել յԵւրոպայ, զոր եւ սիրէր յօյժ : Իսկ Սարղիս Արքեպոս. - Պատրիարք, խորհրդականք եւ

նշանաւոր ազգայինք ոչ թողին հանդիստ առնուլ եւ յաճախակի երթեւեկութեամբք թախանձեցին եւ հաղիւ ուրեմն յաջողեցան առնուլ զհաւանութիւն Գէորգայ Արքեպօս.—ի, որ անդամակցեցաւ Կրօնական Ժողովոյ ի 27ն Ապրիլի, 1861 տարւոյ, եւ եղ կաղմել զՅանձնաժողով յատուկ առ ի պատրաստել զնոր ծրարիւր բարեկարգութեան եկեղեցւոյ իրր ի նախակարապետ Ազգ. Սահմանադրութեան:

Եւ ահա Սահմանադրականք եւ երիտասարդք առաւել իմն ստուկութեամբ սկսան յուզել զինդիւր Սահմանադրութեան եւ պահանջել զկատարումն խոստմանց Պատրիարքի եւ Ամիրայից: Կազմեցաւ Ժողով Ազգային ի 22 Օգոստոսի (1861) ըստ պահանջման յառաջադրմական ամիրայից, զլիսաւորաց եւ Սահմանադրականաց: Եւ Սարգիս Արքեպօս.—Պատրիարք տկարանայր ընթանալ յուզողութիւն ինչ հաստատուն, շփոթէր, տատամէր, եւ հակամէտ յուէտ եւ ապաստան ի կողմն հակասահմանադրականաց եւ ամիրայից զլիսաւորաց լեալ՝ ոչ զիտէր առնել ինքնին զխոհեմ տնօրինութիւն առ ի սիրաշահել զամենեսին, որ եւ առիթ ետ մեծի խոռվութեան եւ գրգռմանց Սահմանադրականաց եւ իրր երկու հազար երիտասարդացն համախմբելոց ի Պատրիարքարան եւ յաւազ եկեղեցի, որք սկսան աղաղակել առ Պատրիարք՝ եթէ ոչ ճանաչեմք եւ ընդունեմք զքեզ ի Պատրիարք, միանգամայն յարձակեցան ի վերայ նորա եւ այլոց հակառակորդաց, որք ոչ զիտէին զինչ առնել, եւ քաջին ի նոցանէ ծակամուտ յինչին կամ փութային ի փախուստ: Խոռվութիւն եղեւ փտանդաւոր, մինչեւ ապտակամարտից եւ փայտափորձից բանալ զգրունս ընդ մէջ Ամիրայից ոմանց եւ երիտասարդաց, ընդ Պողոս պէյի Տատեան եւ խմբադրապետ Կարապետի Փանոսեան եւ այլոց:

Միջամտութիւն կառավարութեան ոչ յապաղեաց, եւ յետ ցրրուելոյ ժողովոյ եւ բազմութեան, էառ ընդ հսկողութեամբ զՊատրիարքարան: Միանգամայն տնօրինեաց Քաղ. Իշխանութեան Հրաւիրել զՊատրիարք եւ զանդամս ազգային վարչութեան (Կրօն. եւ Քաղաք. Ժողովոց) յառանձին խորհրդակցութիւն առթիւ ազգային խոռվութեան, որ ծանրանայր օր աւուր:

Վասն որոյ անձինք նշանաւորք ընդ Պատրիարքի, ընդ նախկին եւ նախորդ Պատրիարքաց եւ հանդերձ անդամօք Ազգ. Վարչութեան հաւաքեցան ի խորհրդակցութիւն ի տան Մէհմէտ — ճէմիլ պէյի փոխանորդի պաշտօնէի արտաքին գործոց ի 14ն Սեպտեմբերի:

Կրկնեալ զխորհրդակցութիւն զայսպիսի եւ ի տան Գապուլի Էֆէնտի տեղապահի նախարարի արտաքին գործոց ի 22ն ամսոյ, ոչ օգնեաց ինչ:

Ազդեցութիւնք ամիրայիցն հակառակորդաց եւ շփոթեալ վիճակ

Սարգսի Արքեպս. — Ի փոխանակ սիրաշահելոյ զերիտասարդս եւ զսահմանադրականս գրգռէին յաւէտ զխռովութիւն ազգային եւ զերկպառակութիւն, մինչեւ ստիպել զՍարգիս տալ զհրաժարական իւր ի Պատրիարքութենէ, ընդ որ հաճեցաւ Օսմ. Կայսերական Կառավարութիւն:

Կազմեցաւ Յանձնաժողով յատուկ ընդ նախագահութեամբ Ստեփան Եպս. — Ի Առաջնորդի վիճակին Նիկոմիտիոյ, որ ապա եղև տեղապահ պատրիարքական: Մինչ շարունակէր յանձնաժողովն զխորհրդակցութիւն եւ զվերաքննութիւն Ազգ. Սահմանադրութեան ի Բ. Դրան, սկսեալ ի 17-23էն Հոկտեմբերի, արձակեցաւ Սարգիս Արքեպս. ի պատրիարքութենէ:

ԳԼՈՒԽ ԼԳ.

ՅԱՂԱԳՍ ԳՆԱԼՈՅ ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊՍ. Ի Ի ՊՐՈՒՍԱ
ԵՒ ՍԱԿՍ ԱՅԼՈՅ ԱՆՅԻՑ.

Հայք վիճակայինք Պրուսայու թախանձել թախանձէին զպսակեալ զթեմակալ եպիսկոպոս իւրեանց զՏ. Գէորգ երբեմն պատրիարք վերադառնալ ի Պրուսա, եւ առ տեղեաւ մխիթարել անձամբ եւ ներկայութեամբ իւրով զկարօտակէզ ժողովուրդ, թէպէտ զիջեալ ի թախանձանս նոցա առաքէր զիսխանորդս, որպէս եւ յառաջ քան զամիսս ոչ սակաւս առաքեալ էր ի Պրուսա զձեռնաստուն աշակերտ իւր ի փոխանորդ ինքեան առ ի հովելել եւ մխիթարել զՀայս:

Յաճախէին խնդրագրութիւնք, հանրագրութիւնք, նամակք պաշտօնականք եւ միջնորդք առ Տ. Գէորգ Արքեպս. եւ հրաւիրէին ի Պրուսա, եւ սա խոստանայր զալ ի պատեհ ժամանակի: Որ եւ ոչ անագանեցաւ:

Գանդի առթիւ ազգային յուզմանց, խռովութեանց եւ յարձակմանց խնդրէր Օսմ. Կառավարութիւն զպարագլուխս երիտասարդաց սահմանադրականաց տալ ձերբակալել եւ արկանել ի բանտ, իսկ Տ. Գէորգ Արքեպս. ի միոյ կողմանէ խնդրէր ի Պատրիարքէ եւ յանդամոց Ազգ. վարչութեան զուշանալ յազգային խռովութեանց եւ յերկպառակութեանց, ոչ հալածել զոք, եւ ի միւսմէ կողմանէ պաշտպանէր զերիտասարդս առաջի նախարարաց կարեւորաց, միջնորդէր յազատութիւն պարագլխոց, որոց զհետ պնդեալ էր ոստիկանութիւն: Եւ յաջողէր դադարեցուցանել զկառավարական հետապընդութիւնս եւ զհալածանս:

Վասն որոյ հրաւիրեաց զկասկածունս կառավարութեան եւ զխաւորացն նախարարաց, որոց նպաստէին եւ ամբաստանութիւնք ամիրայիցն հակառակորդաց եւ ալլոց: Եւ յաւուր միում ի տեսակ-

ցել Գէորգայ ընդ բարեկամի իւրոյ Նամըզ փաշայի նորընտիր պաշտօնէի պատերազմական գործոց, անպատրուակ իմն բանիւք պարզէ Նամըզ փաշայ զամբաստանութիւնս յաճախեալս զԳէորգայ առ Ալի փաշայ մեծ — եպարքոս, եւ առ այլ նախարարս ոմանս, եւ եթէ համարեն զինքն զԳէորգ զրգոիչ եւ պարազլուս երիտասարդաց եւ սահմանադրականաց, միանգամայն խրախուսիչ ազգային խոռովութեան, եւ՝ ի մի բան՝ տայ խորհուրդ ի զիմաց Ալի փաշայի՝ երթալ ի Պրուսա համաձայն խնդրանաց վիճակայնոցն, եւ ազատել զանձն ի տարապարտ կասկածանաց եւ յամբաստանութեանց: Եւ Գէորգ ընտրեալ ինքնին զիտքրագոյն յերկուց չարեաց, որոչէ հեռանալ աստի ի Կ. Պօլսոյ եւ երթալ ի Պրուսա:

Ուստի ժամ եւ առիթ բարեպատեհ համարեալ զվերջին հանրազիր եւ զթախանձանս Հայոց Պրուսայու՝ առաքեալ ի Պրուսայէ ի ձեռն Խորէն աւագ քահանայի ի 25ն Սեպտեմբերի 1861 ամի սկսաւ տեսանել զպատրաստութիւն կարելոր, մինչ խոռովութիւնք չարունակէին եւ ծանրանային, եւ Սարգիս Արքեպօ. հրաժարեալ էր:

Յետ երկուց աւուրց արձակման Տ. Սարգսի ի Պատրիարքութեանէ, ի 25ն Հոկտեմբերի շրջեցաւ Գէորգ Արքեպօ. ի մնաք բարեաւ առ հռչակաւոր Ալի փաշայ եւ առ այլ նախարարս ոմանս:

Իսկ յ30 ամսոյն ել ի ճանապարհ եւ մեկնեցաւ ի Կ. Պօլսոյ: Ի յաջորդ աւուր եմուտ ի քաղաքն Պրուսա հանդիսիւ մեծաւ:

Ուրախացաւ ժողովուրդ յուրախութիւն մեծ, եւ սկսաւ ոգելորութեամբ իմն յաճախել յազօթս եւ ի ս. եկեղեցի:

Յետ լրանալոյ այցելութեանց եւ փոխադարձիցն առ կուսակալ, առ դատաւոր, առ օսմանեան աւագանի, առ հիւպատոս Անգլիոյ, Գաղղիոյ, Իտալիոյ, Ռուսիոյ, Յունաց եւ Պարսից, սկսաւ Տ. Գէորգ Արքեպօ. լրացուցանել զժողովականս Ազգ. Վարչութեան նորոզ ընտրութեամբ, հետեւել պայծառութեան եւ պիտոյից եկեղեցւոյ եւ դպրոցաց, վերհաստատեաց ի նորոյ եւ ընդարձակեաց զնոր կանոնս բարեկարգութեան նշանադրութեան, հարսանեաց, Հիւանդանոցի եւ Վարչութեան:

Կասեցոյց եւ դադարեցոյց ի նորոյ զխլրտմունս լութերականութեան ի Հայս:

Յաւել զպարծանս Հայոց Պրուսայու ներկայութեամբ եւ կարգադրութեամբ իւրով ի դալն օգոստ. Սուլթան Ապտ-Իւլ-Ազիզ Կալսեր յայցելութիւն եւ յուխտ դամբարանի Օսմանայ ի Պրուսա յաւուր Աւագ երեքշարթի յ3ն Ապրիլի 1862 թ. զոր զիմաւորեցին հանդիսիւ մեծաւ եւ երգեցողութեամբ մանկանց դպրոցականաց հանդերձ կրօնական պատրաստութեամբք ըստ իւրաքանչիւր Ազ-

դաց եւ Կրօնից յԱթրճըլար, եկեալ ի Կէմբլէյիկէ : Ուղեկցէին կայսեր Ֆուատ փաշայ մեծ եպարքոս եւ Մէհմէտ Ալի փաշայ նախարար ծովային գործոց : Յ՛ն ամսոյն վերադարձաւ Սուլթան ի Կ. Պօլիս : Վեհ. Սուլթան բնակեցաւ ի Հիւնեխարքէօշկիւ անուանեալ բնակարանի շինելոյ հրամանաւ բարեյիշատակ Սուլթան Մէհմետի ի ձեռն Հայկազն ճարտարապետի եւ արհեստաւորաց յընթացս երկուց-երկից եօթնեկաց ի բարձրադիր եւ ի գեղեցկատեսիլ տեղւոյ՛ջ ի հիւսիսային լանջս լեռնաշղթայի Ողիմպեայ - Բէշիշ թաղ :

Կամեցեալ Տ. Գեորգ Արքեպս. ի վերանորոգել ըստ կարեւորութեանն զս. Աստուածածին եկեղեցի Հայոց, առիթ բարեպատեհ կալաւ վերաշինել եւ պայծառացուցանել զճախակողմեան կից եկեղեցի ս. Գրիգոր Լուսաւորչի, որում անուանեն Պրուսացիք Սեղանատուն : Ըստ որում երբեմն լեալ է գերեզմանատուն գրեաթէ առնթեր փոքու եկեղեցւոյն այնորիկ եւ առ նովաւ սեղանատուն առանց ծածկոցի, ուր, որպէս պատմէին ծերագոյն անձիք գիտակը եւ ականատեսք, ըստ գաւառական եւ հայկական սովորութեանց՝ վայելէին զկերակուր, կամ հաց ընդ պանրոյ կամ ընդ ձիթապտղոյ ըստ պահոց եւ ըստ ուտեաց, հանդերձ ըմպելեօք : Բաժանէին անդ զմատաղս աղբատաց եւ ի Տաղաւարս դնէին զսեղանս հասարակաց : Էին անդ՝ որպէս եւ ի գաւթի եկեղեցւոյ մեծի՝ գերեզմանք ոմանց Առաջնորդաց Պրուսայու՝ Սուքիասայ, Գեորգայ երբեմն պատրիարքի, եւ այլոց :

Ի քանդել Պօղոս Եպս. ի Քարաքոչեան Առաջնորդի միացեալ վիճակաց Պրուսայու եւ Արմաշու գիւրքրիկ եկեղեցի շինեալն յեղիազար Եպս. ՝ է (ապա Կաթուղիկոս Ամենայն Հայոց, արդեամբք եւ ծախիւք Ս. Երուսաղէմի՝ ուր աղօթել միայն ունէին Հայկ Պրուսացիք՝ որպէս եւ տուեալ էին առ Եղիազար զստորագրութիւն) յանուն ս. Աստուածածնի ի նմին իսկ տեղւոյ՛ յաւելեալ շինել յաջակողմն զառանձին եկեղեցի փոքր յանուն Ս. Կուսի ի պէտս կանանց եւ Աւազանի Մկրտութեան, եւ ի ճախակողմն կցեալ զՍեղանատուն, ծածկէ եւ զՍեղանատուն տանեօք, եւ հաստատէ զսեղան յանուն Սր. Գրիգոր Լուսաւորչի, ուր եւ կանգնեն արք, մինչ աջակողմեանն եկեղեցի յատկացեալ էր կանանց եւ Մկրտութեան, որպէս յիշեցաք : Չեւ էր յրացուցեալ Պօղոսի զշինութիւնդ, Մահմէտականք հրճիգ լեալ զգիշերայն այրեն, եւ Պօղոս ի նորոյ վերաշինէ (1749-6) յաւելեալ զբազում ծախս յերկրորդ շինութեան եւ ի կաշառել զազգեցիկ անձինս : Փոխադրէ եւ զգերեզմանատուն Հայոց ի տեղին որում ասեն զարդին Չամլընա, եւ է վայրդ բարձրագիր եւ օղասուն արտաքոյ քաղաքին յարեւելեան կողմն մերձ յԸշրգլար եւ

ի ստորոտս Քէշիչ-Դաղ լեռին :

Արդ ի 22ն Յունիսի (1862) առեալ ի վայր զխախտա եւ զհին շինուած եւ զորմունս ս . Լուսաւորիչ եկեղեցւոյ, ընդարձակեաց սակաւուք ըստ լայնութեան, եւ ի նորոյ կառոյց զեկեղեցի զեղեցկաչէն եւ պայծառ, զոր եւ աւարտեաց Փ 25ն Օգոստոսի : Ի յաջորդ աւուր կատարեաց զմեծահանդէս օծումն նորաչէն մասանց եկեղեցւոյ :

Ի շինութիւն եկեղեցւոյ ծախսեցան գումարք իրր 53541 դճ . եւ 10 ստակ յարդեանց եկեղեցւոյ եւ ի նպաստից Հայոց Պրուսայու :

Ի սմին եկեղեցւոջ ամփոփեաց մերձ յարեւմտեան դռնն զոմանս գերեզմանս Առաջնորդաց Հայոց Պրուսայու փոխադրեալ ի ներքին զաւթէ մեծի եկեղեցւոյ, եւ այսպէս ի միում վայրի հաստատեցան գերեզմանք Եպիսկոպոսաց եւ Առաջնորդաց վախճանելոց ի Պրուսա :

Անուանք են ամփոփելոցն ի գերեզմանն :

- Ներսէս Եպիսկոպոս Կ . Պօլսեցի, երբեմն պատրիարք, Առաջնորդ (†ՌՁԸ) :

- Սուքիաս Եպս . Եւզոկիացի, Առաջնորդ (†ՌՃՁԸ) :

- Անտօն Եպս . Պրուսացի (†ՌՃՂԶ) :

- Գարրիէլ Եպս . Առաջնորդ (†ՌՄ) : Եւ

- Գէորգ Եպս . Խարանտանցի, Նուիրակ Ս . Էջմիածնի, երբեմն Պատրիարք Կ . Պօլսոյ, Առաջնորդ Պրուսայու (†ՌՄԵ) :

Ի կառուցանելն Տ . Գէորգայ Արքեպս .-ի գոյն զայս զեկեղեցի, ի 13ն Յուլիսի (1862), ոմանք յայլադեաց մահմէտականաց ընդ բազմութեան կրօնական ուսանողաց (սօֆթա) յարձակեալ զմիջաւորք ի վերայ նորաչէն մետաքսագործարանի առն ուրումն Պապական Հայոց Քրմգեան մականուանելոյ, փլուզանեն, միանգամայն այրեն զգործարանն ստարկեալ՝ զի հաստատեալ է ի սնարս եւ կից օսմանեան գերեզմանատան, զորմէ էր վէճ, եւ Քրմգեան բնարարէն զնուիրական վայրդ Մահմէտականաց պաշտպանութեամբ դադրիական հիւպատոսի եւ առթէր այսպէս զզրգոմունս :

Վասն որոյ զաղտնի իմն թելադրութեամբ եւ տարածաշնութեամբ պապական հիւպատոսի տարածեցին զահ եւ զերկիւղ մեծ ի Հայս եւ ի համայն քրիստոնեայս, իրր զի Մահմէտականք զրդուեալ են եւ կտորեացն զքրիստոնեայս, ըստ որոց հեռագրեալ էին եւ պապական հիւպատոսք եւրոպականք ի Կ . Պօլիս եւ խնդրեալ զղինւորս :

Տ . Գէորգ Արքեպս . փորձառութեամբ իւրով զիտացեալ զԵւրոպայական խաղս նիւթեալս յարտաքինոց՝ պատուիրեաց Հայոց անխոյթ լինել եւ մի՛ երկնչել յումեքէ . միանգամայն երաց զմեծ

զբունս Առաջնորդարանի եւ եթող այնպէս ի գիշերի: Մերժեաց եւ զթեւազրութիւնս ոմանց հիւպատոսաց եւ Հայոց պապականաց:

Ընդ այս հաւանեալ յոյժ եւ զոհ լեալ կուսակալ փաշայի, նըուիրեաց Տ. Գէորգայ Արքեպս.—ի գերախտագիրտական զզգացմունս եւ զպաշտպանութիւն զօրաց իւրոց, որպէս եւ հիւպատոս անդղիական ի զիմաց բրիտանական կառավարութեան, եւ Կեդրոնական Օսմանեան Կառավարութիւն Կ. Պօլսոյ յայտնեաց զյատուկ յատուկ զչնորհակալութիւնս, զովելով զխոհեմութիւն, զհեռատեսութիւն եւ զհաւատարմութիւն սորա:

Յաւուրս յայտոսիկ յուղեալ էին երկուսասարգք եւ սահմանազրբականք ի Կ. Պօլիս զնոր խռովութիւնս եւ ինդրէին ի Գէորգայ Արքեպս.—է զպաշտպանութիւն, որ պախարակէր զխռովաութիւն շարժմունսն, եւ ոչ իսկ տայր պատասխանի, իսկ ի Լն օգոստոսի ամբոխ բազում հաւաքեալ փակեցին զզբունս Պատրիարքարանի առ ի ազատել եւ զՍահմանադրութիւն ազգային, արտաքսեալ անտի եւ զՏեղապահն Պատրիարքական՝ զՏ. Ստեփաննոս Եպս. Առաջնորդ Նիկովիզայ: Եւ հազիւ ուրեմն յճն սոյն ամսոյն եկն ոստիկանապետ նախարարն եւ ի ձեռն զարբնոյ երաց զզբունս Պատրիարքարանի:

Վշտանայր սա յանցիցդ անցելոց, եւ զտանէր զմխիթարութիւն իւր յաճախեալ եւ զբաղեալ ի վիճակային զործս իւր եւ ի իշխանութիւնս:

Իսկ զձեռնասուն աշակերտս իւր եւ զփոխանորդ առաքէր յաճախ ի գիւղօրայս վիճակի իւրոյ առ ի հովուել եւ մխիթարել զժողովուրդ քարոզութեամբք, հոգալ զպիտոյից եկեղեցեաց եւ զպրոցաց, զկառավարութեանէ ժողովրդեան եւ զարտաքին յարարերութեանց ընդ պաշտօնեայս Օսմանցիս եւ ընդ Կառավարութիւն:

ԳԼՈՒԽ ԼԴ.

ՅԱՂԱՔՍ ՄԵՏԻ ՀՐԿԻՁՈՒԹԵԱՆ ՊՐՈՒՍԱՅՈՒ.

Պ. Մատթէոս Գապաքճեան ի փորձս հակառակութեան եւ ջանից իւրոց որ ընդ զէմ Գէորգայ եւ առ ի հրապուրել զՀայս իւր կողմն գուն զործէր նախ հաստատել զմի եկեղեցի յԱզգային Հիւանդանոցի ի Զօպանսլէյ Թաղ առ ստորոտով լեռնաշղթայի ի վերին եզերս քաղաքի յարեւելեան—հարաւ կոյս, որ եւ սակաւուք հեռի գտանի ի ս. Եկեղեցոյ: Ի տեղւոջն յայնմիկ ունէր նա մերձ Հիւանդանոցի զբնակարան եւ զմետաքսազործարան, որպէս եւ մեծամասնութիւն տանց տեղւոյն այնորիկ էր Հայոց: Եւ քանզի գտանի վայրը որպէս ի վերին ծայրի քաղաքէ եւ առ սովորական ճանապարհաւ Զամլըճա գերեզմանատան Հայոց, այսու կարէր Գապաքճեան

հրապուրել զմեծամասնութիւն Հայոց քաղաքին, միանգամայն խոստանայր, զի զոյդ ընդ շինութեան նորոյ եկեղեցւոյ յաւելցէ անդ եւ զգերեզմանատուն նոր, որով եւ կարճեսցէ մարմօք զգժուարութիւնս երթեւեկութեանց :

Երկրորդ ջան եւ նպատակ նորա էր շինել զմի փոստուն հացագործի մերձ Ծաղկոց-Դպրոցի առ վերին եզերր կէօյ-Դէքէ ձորոյ ի շարս տանց, մինչ ի վերին կողմ եկեղեցւոյ ի վերին սահմանի ձիթաստանի էին եւ այլ փոստունք մերձաւորագոյնք միմեանց յայլ եւ այլ թաղս, թո՛ղ յիշել զշուկայն Սէք-Պաշը, որ եւ մերձաւորագոյն էր եկեղեցւոյ, որպէս եւ կեղրոնի թաղից Հայոց :

Տ. Գէորդ Արքեպ. ոչ տայր թոյլ ումեք եւ ոչ Մատթէոսի մըտարբերել անգամ զշինութիւն եկեղեցւոյ երկրորդի ի Հիւանդանոցի, զխտելով քաջ՝ զի առաւելութիւն եկեղեցեաց յաճախ առթէ զխոսվութիւնս, զերկպառակութիւնս եւ զԱռաջնորդական կոիւս, արդելոյր եւ զշինութիւն փոստան մերձ Ծաղկոցի եւ տանց Հայոց, առարկեալ իրաւամբ զվտանգն մեծ, եւ զաննչան շահս եւ զպէտս, համեմատութեամբ առաւելութեան ծախուց շինուածոյ եւ այլոց, թո՛ղ զանապահովութիւն :

Ի վերայ այս ամենայնի, ուր ուրեմն եզիտ Գապաքճեան զժամանակ յարմար ի բացակայութեան Տ. Գէորդայ Արքեպս.—ի յաւուրս Պատրիարքութեան նորա, հրապուրեաց ճարտարամտութեամբ իւրով եւ լեզուանութեամբ զմեծամասնութիւն անդամոց Ազգային Վարչութեան եւ զՍարգիս Եպս. զԴէտն՝ զայրն անտորձ եւ անհրժմուտ, ետ շինել ախյափոյ զփոստուն յազգային կալուած իրր շահարեք մերձ Ծաղկոցի եւ կից տանց՝ ի նեղ փողոցի՝ առանց բաժանելոյ զփոստունն քարուկրեայ որմով ի տանէ որ ի ձախակողմն, որ եւ պատճառէր ի նորոյ զմեծ ծախս :

Փոքր միւս եւս յաջողէր նմա պապքէն կառուցանել եւ զերկրորդ եկեղեցի յաւուրս կառավարութեան Դէտ Սարգիս Եպս.—ի՝ եթէ ոչ ծագէին զժուարութիւնք զբամականք, որում ոչ բաւէին միջոցք եկեղեցւոյ եւ Հայոց քաղաքին, թէպէտ Մատթէոս ջանայր տալ շինել տոկոսաւոր փոխառութեամբ եւ պարտուք, այլ ի նանիր վաստակէր :

Եւ ահա այրս այս պատճառ եղեւ եւ յաւել զաղէտ մեծ եւ զսոսկալի ընդ երէկս զիններորդ ժամու յՄն Սեպտեմբերի 1863 թ. յաւուր շարաթու :

Վերանորոգեալ էր ներքին մասն եւ յատուկ փոսն, յիտ որոյ վառէր Առնաւուտ (քրիստոնեայ) վարձակալն ի 24 ժամուց հետէ առ ի ջերմացուցանել եւ պատրաստել զաղիւսապատ յատակ փոսն,

որով տապալակին ջերմութիւն ծխնելուդի ներդործեալ փայտեայ տանն հնոց կից եղելոյ՝ լուցեալ բորբոքէ զնա մերձ ի տանին, եւ փթթել ահան բոցավառեալ տուն՝ իբրեւ զշանթա արձակէ զկայծս եւ տարածի հուրն ի շրջակայ եւ ի հանդիպակաց տունս խիտս ի նեղ եւ յանձուկ անկրնաւոր փողոցի: Մանաւանդ ի նմին իսկ ժամու յանակնկալս յարեաւ եւ միացաւ հողմն սաստկաշունչ եւ խտուն ի հիւսիսոյ եւ յարեւելից բաժանեաց զհուրն բոցավառ ի բազում թեւս ի նեղ եւ յանձուկ փողոցս հայարնակս, էանց անգամ յայնկոյս ձորոյն Կէօք-Դէրէի, որոյ լայնութիւն առաւել էր քան զ300-400 կանգուն: Խափանեցան ճանապարհք եւ անցք, եւ դժուարութիւնք յաճախէին մի զկնի միոյ:

Այն ինչ բորբոքէր տունն առաջին ընդ փռան, զոր տեսաք յԱռաջնորդարանէ, զիմեաց Տ. Գէորգ Արքեպս. ի փռատուն, հասին ջրհան եւ ջրհանկիրք եկեղեցւոյ, առատ էր ջուր, այլ անտէն պատուեցան կաշեայ խողովակք ջրհանի մեծի, ջրհանն փոքր էր ի վերաշինութեան: Եւ մինչ ոստոսեալ տարածէր եւ ընդարձակէր հուրն ստեղծի զթեւս իւր ի վայր եւ ի վեր կոյս առ եղբր ձորոյ եւ ի ներքս, որպէս եւ յայնկոյս ձորոյն բորբոքեալ էր զտունս անակրոնելի իմն արագութեամբ եւ ուղղութեամբ, այլ իւրաքանչիւր անկեալ ի սարսափ նոր եւ ի տազնապ դառն, փութայր ազատել զկարեւոր կահս տան, զանձն եւ զիւրայինս: Թողոցուք յիշել, զի Պրուսացիք՝ բացի ջրհանկրաց՝ անփորձք էին ի գործս եւ ի պէտս հըրջիշականս, թէպէտ էր ջուր առատ եւ մեծ աւազան եկեղեցւոյ մընայր լի ջրով: Զայս աւազան քառակուսի իբր հինդ հինդ կանգնով ըստ լայնութեան եւ երկարութեան ընդ խորութեանն ետ շինել Տ. Գէորգ Արքեպս. յերկրորդ ամի Առաջնորդութեան իւրոյ (1847) ի պէտս եւ ընդ դէմ հրկիղութեան, ծախսել զ14330 դհ. եւ 20 բրյ նուիրանօք ժողովրդեան: Ի կողմն փողոցի եղեալ էր - զաղբիւր եւ զձորակս մեծս:

Այսպէս ուրեմն բազմօք ճիւղաւորեալ հրոյ ի տարանջատ վայրըս անգամ, չփոթեցոյց զհայս, միանգամայն զհամայն բնակիչըս եւ զկառավարութիւն: Տ. Գէորգ Արքեպս. զիմեաց ի ս. եկեղեցի ի բորբոքելն Մաղկոցի եւ տանց որ հանդէպ եկեղեցւոյ եւ մեծի նուիրակատան յարեւելեան կողմն (զառաջեաւ եկեղեցւոյ) առ փողոցաւ: Այլ ի նանիր էին ջանք իւր, զի ոչ էին ջրհանք, պակասէին կարեւոր գործիք եւ հրէջջք, խտունաշունչ հողմըն յարուցանէր աստ եւ անդ զհրձիղութիւնս մինչեւ պաշարել զկարեւոր փողոցովք եւ խափանել զանցս իսպառ, եւ բազումք փութային ի փախուստ եւ մագապուրծ ձո-

զորքէին զանձինս ի հրկիզութենէ, որպէս եւ Տ. Գէորգ Արքեպս. երկից անկաւ ի վտանգս հրկիզութեան, մի անգամ անկեալ կայծ ի փառահեղ մօրուան եւ ի հանդերձսն:

Իսկ յորժամ երեկոյացաւ, եւ ճանապարհք խափանեցան, ահ պատեաց զամենեւին եւ սկսան այր իւրաքանչիւր դիմել ի վերին եղերս քաղաքի առ ստորոտովք լերանց, ի բացօթեայ վայրս, եւ ի պարտէզս, զի արազաւաց հուրն սպառնայր լափել կլանել ոչ միայն զչէնս, զբնակարանս, զխանութս, այլ եւ զմարդիկ, որպէս զիտեմք զբազումս՝ որք հաղիւ փրկեցին զանձինս արտաքին օգնութեամբ, ըստ որում կառավարութիւն ձեռնարկեալ էր ի հետազօտութիւնս տեսեալ զբազմավտանգ արդիւնս հրկիզութեան:

Անդ էր տեսանել զսոսկալի տազնապ ժողովրդեան, զվայնասուն եւ զկականս մանկանց եւ կանանց, զորոտալիւր աղաղակս արանց, զշառաշիւն եւ զզոնդալից այրումն շինուածոց, զըղըրդիւնս կործանման հրկիզելոց եւ աւերակաց, զրոցալեզու ծառակերպ սիւնս հրկիզութեանց, զթանձր եւ զյորդարուղի ծաւալումն ծխոյ եւ զհեղձուցիչ զարշահոտութիւնս տարածեալս սաստկաշունչ հողմով:

Մինչեւ ցեօթներորդ ժամ կէս դիշերոյ ոչ ոք համարձակէր այլ եւս դիմադրել հրկիզութեան: Ջայսու միջոցաւ դաղարեցաւ հողմն խոռնաշունչ, վերին կողմն հրոյ յետ լափելոյ զեկեղեցի ս. Աստուածածնի, զԱռաջնորդարան, զզպրոցս հանդերձ այլովքն եւ շրջակայիւք՝ հասեալ ի պարտէզս եւ ի պարտիզաւոր տունս՝ զկայ էսո, ի ներքին կողմն այրեալ զամենայն զոր ինչ եդիտ ի թաղսն Սէք-Պաշի, Ժամ-Էօնի, Գարա-աղան, Սաբալ-տօօֆէն, Միւսիւ-Էօնիւ, Չաքալ-չէշմէ, Աք-Էօզուշու, եւ այլն եւ այլն: Մզկիթն Սէթ-Պաշուոյ եւ լայնաղիւր վայրք ինչ արդելեն զհուրն յուսահատ ջանիւք մահմէտական բնակչաց ընդ Հայոց՝ օժանդակութեամբ կառավարութեան եւ ջրահանաց. շիջուցին եւ զայլ կողմանս ի վերին եւ ի ներքին սահմանս եւ յայնկոյս ձորոյ՝ այսպիսեօք ջանիւք եւ օժանդակութեամբ պարտիզաց որ ի տունս տունս: Էր դիշերային ժամ ութերորդ յորժամ դաղարեցաւ հուրն իսպառ, եւ թանձր ծուխ աւերակաց միայն շարունակէր:

Այրեցան Ս. Եկեղեցի Հայոց, Հին եւ Նոր Առաջնորդարանք, Ծաղկոց եւ Դպրոցք Ս. Պօղոսեան եւ Ս. Հռիփսիմեան, Ժամարարատուն, Նուիրակատուն, Ժամակոչատուն, մթերանոցք եկեղեցւոյ, մոմատուն, տունք Հայոց եւ այլոց ոմանց յօտարազեաց առաւել քան զհինգ հարիւր վեց (506) ընդ խանութից սակաւուց (իբր 30), եկեղեցի եւ դպրոց Հայոց պապականաց (ի Չաթալ-չէշմէ թաղի), երկու փոքրիկ աղօթատունք մահմէտականաց, եւ մետաքսագործա-

րանք փոքունք: Մնային զերծ ի հրոյ իբր երեք հարիւր տունք Հայոց յայլ եւ այլ թաղս, ի վերին եւ ի ստորին կողմանս քաղաքի, որպէս եւ յայնկոյս ձորոյ: Շրջեցան ի մոխիր թաղքն ժամ-էօնիւ, Գարաղաջ (Գարա-Աղաջ), Սաֆալ-տէօֆէն, Էշրէֆիլեր, Սէք-Պաշը, Չաքալ-չէշմէ, Աք-Խօզուշու, Պահնալար, մի մասն Քիւշիւք-մէ-գարլըքի եւ այլոց:

Ի լուսանալ առաւօտու, այր իւրաքանչիւր խնդրէր եւ ժողովէր աստի եւ անդի զընտանիս իւր եւ զմանկունս. որպէս եւ կանայք զարս իւրեանց, զծնողան, զեղբարս, զքորս, լային դառնապէս տեսեալ զաճիւնս եւ զաւերակս տանց, մանաւանդ զպրօցաց եւ Ս. Եկեղեցւոյ, զթափրանալն յընչից եւ ի ստացուածոյ իւրեանց, միանգամայն յանհրաժեշտ պիտոյիցն կենսականաց՝ մթերեալ առթիւ յառաջակայ ձմեռան, կացեալ մնացեալ բազումք բոկոտն, բացազըլուխ եւ պատառոտուն հանդերձիք: Պարզէր առաջի աչաց տեսարան աղէտալի՝ աղեխարշ եւ ողբալի:

Գառնութիւն աղետից եւ թշուառութեան սրտաճմլիկ ծանրացեալ էր ի վերայ Հայոց առաւել քան զայլ բնակիչս:

Իսկ Տ. Գեորգ Արքեպս. յետ աստանդելոյ ի գիշերի, եւ սակաւիկ ինչ հանգիստ առեալ ի թագաւորական Հիւնքեար-էօշլիւ վաղ քաջ ընդ առաւօտս էջ ի քաղաքն եւ եկ ի տուն պ. Սարգսի Մարաշլեան որ յայնկոյս ձորոյ մերձ յԵրզնանք-էօթրիւսիւ, հրաւիրեաց առ ինքն զկարեւոր անձինս եւ օգնութեամբ նահանգական կառավարութեան եւ կուսակալի՝ խնամ կայաւ նախ զաղքատաց եւ տեղաւորեաց զնոսա ի ձեռն յատուկ Մասնախմբոյ բազկացելոյ յՕսմանցւոց եւ ի Հայոց ի տունս Հայոց եւ Օսմանցւոց եւ ի վրանըս տուեալս յարքունուստ: Եւ որոց էին աղզականք կամ բարեկամք ազատ մնացեալ ի հրկիզութենէ, ապաստանէին ի տանս նոցա: Ետ բաշխել աղքատաց զհաց եւ զզրամական նպաստս ինչ:

Մեծի զովութեան արժանի էին կարեկցութիւնք եւ ջանք կուսակալ փաշայի եւ կարեւոր քաղաքական պաշտօնակալաց եւ Օսմանեան աւագանւոյ, որք յաճախ դիմէին ինքնարերարար՝ ի ժամու եւ ի տարածամու՝ առ Տ. Գեորգ Արքեպս եւ աջակցէին նորին սրբազնութեան ի կարեւոր պէտս եւ ի տնօրէնութիւնս ի մխիթարել զհրկիզեալս որչափ ներէին միջոցք:

Գրեաց նորին սրբազնութիւն զկարեւոր նամականի առ անձինս նշանաւորս ի Կ. Պօլիս, եւ ի մերձակայ վիճակս ոմանս, ընկալաւ զնպաստս, որովք հոգայր զառձեռն պիտոյից աղքատաց եւ զայլոց կարեւորութեանց ազգայնոց:

Անձուկ էր տունս պ. Սարգիս Մարաշլեան՝ առն բարեպաշտի եւ

հիւրասիրի, եւ անյարմար ի կազմել զժողովս, վասն որոյ յետ կալոյ անդ զաւուրս երկոտասան, փոխադրեաց զընակութիւն իւր Տ. Գէորդ Արքեպս. ի տուն քաղցրաձայն երաժշտի եւ շարականագիտի՝ պ. Յակոբ Պօտուրեանի, ի նմին իսկ թաղի: Եկաց մնաց անդ ցվերջ շինութեան Առաջնորդարանի:

Ետես զկարեւոր պատրաստութիւնս շինուածականս՝ առեալ ի փոխ աստի եւ անդի զքսան հազար զահեկանս, զի մի՛ մնացէ ժողովուրդ չայոց զուրկ յԱստուածապաշտութեանց եւ ի հոգեւոր մխիթարութեանց: Յետ շիջուցանելոյ զմնացորդ կայծս եւ զայրածս որ յորմունս եւ յորմնակալ գերանս, ետ ափյափոյ ծածկել միապագազ ասնեօք զայրիցեալ եկեղեցիս Ս. Աստուածածնի, կից Ս. Լուսաւորչի եւ Ս. Կոյսի, որում ձեռնարկեաց յետ իններորդ աւուր մեծի հրկիզութեան ի ՂԴն Սեպտեմբերի, զոր եւ աւարտեալ՝ կանգնեաց զեղանս եւ էօծ ի 29րդ աւուր ամսոյն այնօրիկ յաւուր Կիւրակէի:

Եւ այսու առթիւ խօսեցաւ Տ. Գէորդ Արքեպս. զքարոզ սրտառուչ եւ արտասուելից՝ առեալ զայս ի բնարան. «Ո՛ր տայր ի գլուխ իմ զՊուր, եւ յաչս իմ ազրիւրս արտասուաց» (Մարգ. Երեմ.): Ժողովուրդ եւ ինքն լային դառնապէս եւ հեկեկանօք՝ անիծեալ զհուրն եւ զպատճառս:

Յետ այսորիկ տնօրինեաց եւ զկողմն Ս. Լուսաւորչի յատկացոյց ի դպրոցս մանկանց առ ի ազատել զնոսս ի թափառականութեանց եւ ի յաճախելոյ ի վտանգաւոր վայրս: Սկսան մանկունք դասառութեանց՝ որչափ ներէին միջոցք եւ անձուկ վիճակ եկեղեցւոյն:

Հաւանութեամբ երեւելեաց եւ ընդհանուր ժողովոյ Հայոց Պրուսայու եւ առ ի վճարել զպարտս շինութեան առժամանակեայ ծածկոցի տանեաց եկեղեցւոյ եւ առ ի հոգալ զշինութիւն փոքու Առաջնորդարանի՝ Տ. Գէորդ Արքեպս. ետ վաճառել զարծաթի քրծուարս ամփոփեալս յայրեցեալ եկեղեցւոյ ի գանձատան ի վաղ ժամանակաց հետէ՝—բստ որում ոչ եղեւ հնար եւ ժամանակ ազատելոյ զպատկերս աւագ սեղանոյ, զխաչս, զարծաթեղէնս, զանօթս կարեւորս եւ զայլ ինչ, միահամուռ վառեալ էին՝ մինչ ջանային ազատութեան եկեղեցւոյ ի հրկիզութենէ, որ եւ երկիցս բորբոքեցաւ ի տանեաց եւ ազատեցաւ, իսկ յերրորդումն ձեռնթափ հեռացան Նորին Սրբազնութիւն եւ սակաւաթիւ աշխատաւորք՝ շրջապատեալ ի հրոյ, մինչեւ հազիւ գտանել զդուռն որ ի ներքոյ հնոյ Առաջնորդարանի, ընդ որ մազապուրծ գերծեալ ելաք ի ձորն:

Ի 15 Նոյեմբերի սկսաւ շինութեան ներկայ միայարկեան փոքու

Առաջնորդարանի ի նմին տեղւոջ այրեցեալ մեծի Առաջնորդարանի երկյարկանւոյ, ըստ որում անհրաժեշտ կարօտութիւն ստիպէր փութալ ի շինութիւն նորա ի պէտս բնակութեան Առաջնորդի եւ ի կառավարութիւն ազգային գործոց ի ձեռն ժողովոյ եւ այլոց :

Ի վերջին առուրս զեկտեմբերի (24, յգշ., ի տօնի Ս. Ստեփաննոսի Նախասարկաւազի) հաստատեալ նորին Սրբազնութիւն զբնակութիւն իւր եւ զբիւանս ժողովոց ի նորաշէն Առաջնորդարանի :

Գրեաց Տ. Գէորգ Արքեպս. բարեկամին իւրոյ հռչակաւոր Ֆուսա փաշայի մեծի եպարքոսի զնամակ սրտառուչ եւ ետ բերել զհրաման կայսերական առ ի նուիրել աղքատաց եւ կարօտելոց զտախտակս ի մի բան եւ զատաղծս յարքունուստ եւ յարքունի անտառաց ի պէտս շինութեանց տանց եւ խրճիթաց :

Հաւաքեալ ի խորհուրդ զերեւելիս Հայոց եւ զանդամս ազգվարչութեան ետ զբել զկարեւոր թուղթս եւ զինդրադիրս յանուն նորընտիր Պատրիարքի Տ. Պօղոս Արքեպս. ի Թաքթաքեան Պրուսացւոյ եւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան, զորս առաքեաց ի ձեռն երկուց աշխահական պատուիրակաց Պրուսացւոց ի Կ. Պօլիս առ ի հաւաքել ըստ տնօրէնութեան Պատրիարքարանի զկամաւոր նուէրս ի նպաստ Հայոց Պրուսայու եւ շինութեան զպրոցի եւ Եկեղեցւոյ նոցա : Եւ ձեռնունայն վերադարձան պատուիրակք յետ երկուց ամսոց :

Մինչ յարատեւէր Նորին Սրբազնութիւն յայսպիսի ջանս, եւ խորհէր ցգայգ եւ զցերէկ առ ի հայթայթել զմիջոցս ի վերաշինութիւն զպրոցաց եւ Եկեղեցւոյ, հարկ իմն անակնկալ մղեաց զնա յայլ իմն պայքար եւ ի հոգածութիւնս :

ԳԼՈՒԽ ԼԵ.

ՅԱՂԱԳՍ ՔԵՆԻՉՈՒԹԵԱՆ ԱՀՄԷՏ - ՎԷՖԻՔ ԷՖԷՆԳԻՌՈՅ

Օգոստ. Սուլթան Ապտ-իւլ-Ազիզ Կայսր Թուրքիոյ յղացաւ խորհուրդ բարի եւ նախանձելի ի սէր եւ ի բարգաւաճումն համայն բընակչաց Օսմանեան աշխարհի եւ ի բառնալ զհարստահարութիւնս եւ զհարստահարիչս : Միանգամայն քննել եւ զվարչական եղանակ համայն երկրին, զկառավարական պաշտօնատունս, զբիւանս, զամենայն պաշտօնեայս եւ զյարարերութիւնս ընդ ժողովրդեան, եւ տեղեկազրել, հանդերձ արտօնութեամբք արձակելոյ ի պաշտօնից զկուսակալս անգամ եւ արկանելոյ ընդ դատաստանաւ :

Կարգեաց եւ առաքեաց զլիազօր քննիչս ի Միջագէտս, յՕսմ. Եւրոպա (Րուսէլի), ի Փոքրն Ասիա (Անաթօլու) առանձին առանձին՝ տուեալ զկարեւոր եւ զլիազօր արտօնութիւնս եւ զհրահանգս քննութեան եւ բարեկարգութեան :

Նշանակեաց զհռչակաւոր եւ զբազմահմուտ Ահմէտ-Վէֆէբէ Էֆէնդի ի քննիչ (Միւֆէթթիչ) Փոքուն Ասիոյ, որ եւ ձեռնարկեաց ի գործ սկսեալ նախ ի Նիկոմիդիոյ, ի շրջակայիցն եւ ապա ի Պրուսայէ:

Լուսք զբազում ինչ զոր արար Վէֆէբէ Էֆէնդի ի Նիկոմիդա եւ ի շրջակայսն, ամենայն խստութեամբ՝ դատապարտելով եւ արձակելով ի պաշտօնից զբաւառապետս պաշտպանեալս եւ զայս, զորոց զանց արարեալ, համառօտեսցուք աստէն զկարեւոր անցս ինչ եւ զարարս նորա որ ի Պրուսա:

Ի 18ն Հոկտեմբերի (1863) եմուտ այրն այդ ի Պրուսա եւ բընակեցաւ ի պատուաւոր յարկի ի կառավարական պաշտօնատան մեծի՝ Սէրայ անուանեալ, որպէս նաեւ Հիւֆիւմէք Գօնագը: Մերժեաց բնակել արտաքս ի տան ուրեք: Կուսակալ նահանգին Ուլտավէն-տիկեարու (Պրուսայու) էր յայն ժամ այրն ողորմելի Ահմէտ-Քէվֆիզ փաշայ, որ սկսաւ զողալ առաջի նորա:

Ի յաջորդ աւուր ըստ օրինի եւ հանդիսաւորապէս ընթերցու զհրովարտակն կայսերական լիագոր իրաւասութեան եւ իշխանութեան իւրոյ ներկայութեան կուսակալի, բարձրաստիճան պաշտօնէից, դատաւորի, նշանաւոր աւագանւոյ, Առաջնորդաց, եւ Քահանայապետի, հիւպատոսաց, եւ խումն բազմութեան ժողովրդեան՝ ի հրապարակի Սէրայի հանդերձ թնդանօթածղութեամբք: Յաւել նա ատենարանել, յորում պարզեաց զպաշտօն իւր եւ զպարտսն կայսերադիրս:

Գլխաւոր սահմանի պաշտօնի իւրոյ էին. Գննել եւ տնօրինել վրձնականապէս զգործս պաշտօնատանց արքունականաց եւ պաշտօնակալաց. զբողոքս եւ զամբաստանութիւնս զկուսակալաց՝ մինչեւ ցտորին պշտօնեայս. զհարստահարութիւնս եւ զհարստահարիչս անխաիր, բարեկարգել ինքնին եւ անմիջապէս. զբաղաքս, զգիւղօրայս եւ զճանապարհս, եւս եւ վերանորոգել եւ ապահովել զհռչակաւոր եւ զնուիրական դամբարանս Օսմանեան, զմզկիթս, զբարեգործական հաստատութիւնս, զկամուրջս այլոքին հանդերձ: Ոչ ունկն տուեալ այցելութեանց եւ այցելուաց, ի ձեռն մուկեակաց ազդարարեաց առհասարակ ժողովրդեան տալ ինքեան գրաւոր զխրնդիրս եւ զբողոքս, եթէ ունիցին:

Առաջին ջան եւ շնորհ նորա եղև զեղջել բազմօք զքանակութիւնս ատաղձեղինաց նուիրելոց Հայոց հրկիզելոց յարքունուստ ի յարքունի անտառաց Իյնէկէօլի, ջնջեալ եւ զանունս ոմանց յընդհանուր ցուցակէ, որոյ վասն սկսաւ նախ վէճ եւ պայքար ընդ մէջ Նորին Սրբազնութեան եւ Ահմէտ-Վէֆէբէ Էֆէնդի Գննչի, մինչ ոչ

ոք համարձակէր հակառակել նմա եւ խօսել ինչ: Իսկ Քննիչն էֆէնդի ի միոյ կողմանէ հետեւէր քմահաճոյից իւրոյ, եւ ի միւսմէ ակնածէր ի Գեորգայ Արքեպս. — է եւ երկիցս այցեալ առ սա՝ ջանայր սիրաչահել զսիրտ սորա: Միանգամայն դուն գործէր ի գաղտնի լսել զամբաստանութիւն ինչ զԳեորգայ, որպէս լսէր զԵպիսկոպոսացն Յունաց եւ Պապականաց, զԲահանայապետէ, զկուսակալէ, զայլ եւ այլ պաշտօնէից, զվաճառականաց, զկառավարչաց եւ զայլոց եւ զայլոց, այսոքիւկ աղգէր նոցա զսարսափ:

Գունդագունդ զիմէր ժողովուրդ աստի եւ անդի, ի քաղաքէ եւ ի դիւղօրէից, եւ հարուածքն ծանրանային ի նորոյ ի վերայ Հայոց, ըստ որում մահմէտական գիւղացիք առեալ յաճախ ի փոխ զըրամբս զգղանկիւս եւ զճոթեղէնս ի Հայոց վաճառականաց՝ ոչ աղատէին երբեք ի պարտոց: Յաճախ բազումք զրկեալ ի կալուածոց իւրեանց ի սակաւամեայ միջոցի՝ ոչ զերծանէին զարձեալ ի ծանրատկոս պարտոց եւ ի հարստահարութեանց:

Սկսաւ Ահմէտ-Վէֆիք էֆէնդի առանց օրինաւոր եւ մանրակրկիտ քննութեան եւ դատաստանի՝ արտաքսել զամբաստանեալ պաշտօնեայս, բանտարկել անխնայ եւ պատժել զյանցապարտս, պատուել զպարտամուրհակս, ջնջել զհաշիւս, վերադարձուցանել զգրուեալ կալածս, տալ տուժել զըրամս յօգուտ զրկելոց, աւնուլ զմեծագումար տուգանս աստի եւ անդի՝ յաճախ պատրուակեալ՝ զի զիմադարձ լինին ինքեան եւ ջանան պաշտպանել զանձինս, կամ տան անքաղաքավարութեամբ իմն զպատասխանիս, եւ կամ ի չըրջելն ուրեք տեսեալ է՝ զի զձեռս կապեալ կամ կալեալ են ի յետկոյս, առանց տեսանելոյ զքննիչն:

Ձեռնարկեաց ի վերանորոգութիւն Դամբարանին Օսմանայ, ճարտարարուեստ Եէշիլ ֆամի մզկիթի, ճանապարհաց եւ այլոց, հետեւեցաւ բանալ զառուս. եւ զընթացս ի ճահճահուտ տեղիս, ի հանքաջերմուկս եւ յայլ տեղիս, բանալ զնոր փողոցս եւ ընդարձակել զգլխաւոր պողոտայս՝ յարդարեալ խճուղեօք, փլուզեալ գտունս եւ զխանութս ոյր ուրուք եւ իցէ՝ առանց հատուցանելոյ ումեք զգին փոխարէն կամ զվնաս՝ հակառակ տրամադրութեանց օրինաց, զորպէս խանդարեաց ըստ այսմ եւ փլոյց զերկուս խանութս յաղղային կալուածոց Եկեղեցւոյ Հայոց յՈւղուն-չաքը, որոյ վասն փոխանակեաց Գեորգ Արքեպս. նմա զթունդ բանս՝ ցուցեալ եւ պարզեալ զտրամադրութիւնս օրինաց: Այլ ի նանիր:

Բազումք փութացին ի փախուստ ի Մայրաքաղաք ի Կ. Պօլիս:

Յաճախ ծառայէր Ահմէտ-Վէֆիք քմահաճոյից իւրոց եւ եթ: Օրինակ իմն: Յաւուրս միում, յանակնկալ պահու եկն Ահմէտ-Վէ-

Փիք Էֆէնդի յայցելութիւն Տ. Գէորգ Արքեպս.—ի ի տուն պ. Յակոբ Պատուեանի՝ չեւ եւս լրացեալ զօրով շինութեան Առաջնորդարանի: Յետ փոքու միջոցի ստիկան ոմն երեք անգր զվաշխատու եւ զսեղանաւոր Սահակ Էֆէնդի Եպիսկոսեան զսիրելիին Գէորգայ, որ եւ էր անդամ թէ յազգային վարչութեան եւ թէ ի նահանգական կառավարական ժողովի: Անմիջապէս հրամայեաց Ահմէտ-Վէֆիք տանել եւ արձակել ի բանտ զՍահակ, գորմէ ամբաստանեալ են ըստ փոխատուական հաշուոց բողոքանօք զիւղացւոցն Մահմէտականաց: Գէորգ Արքեպս. անմիջապէս զայլացեալ ծանր իմն ակնարկութեամբն, պախարակեաց զնա, եւ ասաց, զի տուն իմ ոչ է պաշտօնատուն կառավարական, եւ յորժամ եկեալ ես առ իս յայցելութիւն, ոչ ներէն դէթ օրէնք քաղաքավարականք բերել քեզ ի տուն իմ զայր ոք եւ աստի առաքել ի բանտ: Փութացաւ Քննիչն Վէֆիք հրամայել, զի ազատ թողցեն զՍահակ: Որպէս եւ եղև իսկ:

Ի տեսակցութիւնն որ ընդ Ահմէտ-Վէֆիք Էֆ. Քննիչի համարձակութեամբ իմն եւ անկեղծութեամբ խօսեցաւ Գէորգ Արքեպս. եւ պախարակեաց զայսօրէն ընթացս սորա, թէ խարուսիկ են միջոցք, զորս արդիւնաւորէ, որպիսիք առաւել ծանրացուցեն զվիճակ շինականաց, մինչ կարօտին նորա զօրհանապաղ զբամոց եւ փոխառութեանց, եւ հարկ էր զի կառավարութիւն հաստատէր կանխաւ զկարեւոր դրամատունս յայլ եւ այլ կեդրոնս ի դաւառս ի պէտս զիւղացւոց եւ այսպէս ազատել զժողովուրդ ի ձեռաց հարստահարչաց եւ վաշխառուաց: Թէ հարկ անհրաժեշտ է պատրաստել կանխաւ զճմուռ եւ զկրթեալ պաշտօնեայս, զիտնականս եւ փորձառուս եւ նոքօք ապահովել զբարւօք եւ զբարեխնամ կառավարութիւն ժողովրդեան: Թէ ոչ վայել է առանց օրինական եւ մանրագննիին քրննութեան պատժել զայս կամ զայն ոք, զրկել զոք յօրինաւոր եւ յարգար պահանջից իւրոց՝ առարկեալ զի ասնէ զգիտազարձութիւնն՝ փոխանակ հնազանդելոյ կոչրդկութայն համակերպութեամբ: Եւ թէ ոչ համաձայնի ընդ բարեկրթութեան եւ օրինաց՝ պատառել զհրամանազիրս մեծի եպարքոսի եւ կեդրոնական կառավարութեան՝ չապրեալ զհայհոյութիւնն անվայելուչս պաշտօնական մասնաւոր գիտնական անձանց:

Գարձեալ: Յաւուր միում եւ առթիւ ինդրոյ ատաղձից բաժանելեաց հրկիզելոց զնացեալ էր Գէորգ Արքեպս. առ Քննիչն ի Սէրայ (Էսկի շէօքիմէթ-Գօնադր): Տեսեալ Գէորգայ զյամառութիւնն եւ զանփորձ ընթացս նորա՝ յետ փոխանակելոյ զծանր ակնարկութիւն խառն ընդ յանդիմանութեան՝ յտն եկաց եւ կամեցաւ ելանել արտաքս ի սենեկէ, յարկաւ վաղվազակի Քննիչն, կալաւ զձեռանէ

Գէորգայ, եւ թախանձեաց ներել ինքեան՝ ի նորոյ նստուցեալ ուր էր զառաջինն: Եւ սկսաւ զողջես խօսել զբարոզս, բերեալ զվկայութիւնս յԱւետարանէ: Որում կշռեաց Գէորգ զպատասխանի քաջայարմար, առարկեալ զանցս խարազանի Փրկչի:

Ներկայութիւն եւ ճակատարաց համարձակախօսութիւն Տ. Գէորգ Արքեպս.-ի ազդէր բազմօք եւ սանձէր զՔննչին՝ ըստ այլ եւ այլ խնդրոց, այլ սակայն ոչ բերէր օգուտս ինչ ի նպաստ եւ ի դարձան ազգային ազեախցն, զորոց հարկ էր փութաց հոգալ, մանաւանդ զվերաշինութեանց եկեղեցւոյ եւ զպրոցաց:

ԳԼՈՒԽ ԼԶ.

ՅԱՂԱԳՍ ԶԱՆԻՑ Տ. ԳԵՈՐԳԱՅ ԱՐՔԵՊՍ.-Ի Ի Կ. ՊՕԼԻՍ, ԵՒ

ՍԱԿՍ ԱՆՅԻՑ ՈՄԱՆՑ ՆԵՐՔՆՈՑ ԵՒ ԱՐՏԱՔՆՈՑ

Յետ ոչ սակաւ վիճարանելոյ եւ մաքառելոյ նորին Սրբազնութեան Տ. Գէորգայ ընդ զէմ Ահմէտ-Վէֆիքէֆ. Քննչի, միանգամայն տեսեալ զձեռնունայն վերագարձ երկուց պատուիրակացն ի Պրուսա, կամեցաւ ելանել ի Կ. Պօլիս, եւ գտանել զկարեւոր միջոցըս ի նպաստ պիտոյից Հայոց Պրուսայու՝ աջակցութեամբ նորընտիր Պատրիարք Տ. Պօղոսի Եպիսկոպոսի Թաքթաբեան Պրուսացւոյ, որ ընտրեցաւ ի Պատրիարք յ30ն Հոկտեմբերի (1863):

Վասն որոյ խորհրդակցեալ կանխաւ ընդ յառաջաւորաց եւ ընդ ժողովոց Ազգային Գաւառական վարչութեան Հայոց Պրուսայու, յետ տօնելուց զս. Ծնունդ Տեանն, ի 15 Փետրվարի 1864 ամի ել ի Պրուսայէ, եւ ի յաջորդ աւուր նստեալ ի շողենաւ ի Կէմէլէյիկէ՝ եհաս ի Կ. Պօլիս, եւ բնակեցաւ ի ծովեզերեայ վարձեալ տան քեռ իւրոյ ի Գառքէօյ: Տեսակցեալ նախ ընդ Տ. Պօղոս Արքեպս.-ի Պատրիարքի, սկսաւ շրջել յայցելութիւնս բարեկամաց իւրոց եւ ծանօթից, ազգայնոց եւ օտարաց, մանաւանդ յամանց նախարարաց հոշակաւորաց, եւ յականէ Ալի Ծուստ փաշայից, որք չարաչար զրգոնեալ զինեալ էին ընդ զէմ Ահմէտ-Վէֆիքի եւ խնդրէին զառիթն ամբաստանութեանց զնմանէ առ ի խորտակել զայրն յանդուգրն եւ անպիտան:

Այսու բարեպատեհ առթիւ տեսեալ Տ. Գէորգ Արքեպս.-ի զտրամազրութիւնս արանց այսպիսեաց, — մանաւանդ զի խնդրէին նոքա ի նմանէ ամբաստանել ակնյայտնի զԱհմէտ-Վէֆիքէ առաջի համայն նախարարաց եւ հոշակաւորացն արանց ուր եւ պատահես-

ցին — իսկ որ հետաքրքրէին եւ հարցանէին՝ ընդարձակէր սա զոր գիտէր, միանգամայն պարզէր զվնասակար ջանս՝ զորս արդիւնաւորէր լիազօր Քննիչն այն Փոքուն Ասիոյ :

Առիթ քաջայարմար առեալ զայս նաեւ Ֆուատ եւ Ալի փաշայից, զեկուցանեն Օդոստ. Սուլթան Ապտ-իւլ-Ազիզ Կայսեր զբանս եւ զամբաստանութիւնս Գէորգայ զԱհմէտ Վէֆիքէ, մինչեւ յաջողին զբոսել եւ շարժել զՎ.հ.հ. Սուլթան ի բարկութիւն ընդ զէմ լիազօր Քննիչի, եւ հրամայել զաղարեցուցանել եւ յետս կոչել զնա փութով : Որ եւ կատարեցաւ յամսեանն Մարտի (1864) :

Յետ այսորիկ խնդրէ Տ. Գէորգ Արքեպս. ի Ֆուատ (Սաղբազամ) եւ յԱլի (Սարիճիյէ) փաշայից բարեխօսել առ Օդոստ. Կայսրն բարեխնամ Սուլթան Ազիզ առ ի շնորհել զգումար ինչ ի նպաստ վերաշինութեան վարժարանի, եւ զգերանս մեծս եւ սիւնացուս ի պէտս վերակառուցման Եկեղեցւոյ Հայոց Պրուսայու : Որ եւ խոստացաւ կատարել զխնդիրս սորա, առաջարկելով յայտնել կանխաւ զքանակութիւն խնդրեալ գումարին եւ գերանաց : Եւ բանիւ բերանոյ խնդրէ զլիսուն հազար (50,000) դահեկան եւ առնու զհաւանութիւնս :

Վասն որոյ ետ Տ. Գէորգ Արքեպս. պատրաստել աստ ի Կ. Պօլիս զխնդրագիր սրտաշարժ ի թուրք լեզու, առաքեաց ի Պրուսա, զի ստորագրեսցեն ի նմին քահանայք, իշխանք եւ ոմանք ի Հայոց Պրուսայու, զոր եւ յետս ընկալեալ՝ առաջարկութեամբ (քագրիր) Ազգ. Պատրիարքարանէ տարեալ մատոյց բարձրապատիւ Ալի փաշայի հռչակաւոր նախարար արտաքին գործոց առ ի ներկայացուցանել ըստ օրինական կարգի ի բարեհաճութեան բարեխնամ Կայսեր Թուրքիոյ : Եւ այսպէս յաջողեաց Աստուած սմա յամսեանն Յունվարի 1865 թուականի առնուլ ի բարեխնամ Կայսրէ զգումար 50,000 դահեկանաց (կամ 500 ոսկի օսմ.) ի նուէր եւ ի նպաստ կառուցանելի վարժարանի եւ զհրաման հանելոյ գմեծ գերանս ի պէտս Եկեղեցւոյ յանտառիսցն արքունեաց որ յիշնէկէօլ : Եւ ըստացեալ զկարեւոր հրամանագիրս, առաքեաց առ Ազգ. Վարչութիւն Հայոց ի Պրուսա, պատուիրեաց զանձել զգումար ի կառավարական արկղէ Պրուսայու, եւ ձեռնարկել ի շինութիւն վարժարանի : (Յաջողեալ էր պ. Մատթէոս Գապարճեան առնուլ զգումարս զայս ի պետական գանձարանէ, որոյ արկղակալ էր փոքր եղբայր իւր՝ պ. Կարապետ՝ իբր առ ի հասուցանել Առաջնորդարանի Հայոց եւ գործածեալ յանձնական պէտսն, հազիւ Գէորգ Արքեպս. կորդեաց ի յախշտակիչ ձեռաց նորա՝ սպառնացեալ ի յանձնել զատաստանի եւ թիապարտութեան :

Ըստ խնդրանաց սորա կազմեալ էր Աղզ. Պատրիարքարան զյատուկ Մասնաժողով առ ի հաւաքել զկամաւոր նուէրս ի ձեռնհաս ազգայնոց ի նպաստ հրկիղեալ Հայոց Պրուսայու: Այլ սակայն հակառակ ջանից Գեորգայ Արքեպս. ի եւ Մասնաժողովոյ մի զկնի միոյ խուժէին ձախորդութիւնք եւ դատապարտէին զճիղս նոցա յամութիւն: Ի միոյ կողմանէ ոչ դադարէին գժտութիւնք ներքինք ի ժողովականս կեդրոնական վարչութեան եւ յազգայինս, հրաժարականք եւ հակառակութիւնք, եւ ի միւսմէ՝ հրկիղութիւնք մեծամեծ, հիւանդութիւնք եւ տազնապք մաղձայուզք (քօլէրա) յարուցանէին զմեծամեծ արգելս եւ զխոչընդոտս ընդ դէմ նուիրահաւաքութեան, որ դանդաղել դանդաղէր եւ ոչ յաջողէր ըստ արժանւոյն:

Վերջին աղիտարեր ձախորդութիւնն էր հիւանդութիւն մաղձայուզութեան (քօլէրա), որ չարաչար տարածեալ էր աստ ի Կ. Պօլիս եւ յոմանադաւառս, եւ յամսեանս Յունիսի, Յուլիսի, Օգոստոսի, Սեպտեմբերի եւ Հոկտոմբերի մանդաղեաց անխնայ աստ ի Կ. Պօլիս զանձինս առաւել քան զքառասուն հազար, եւ վերահաս եղանակն ձմեռնային ընդ առողջապահական խնամոց եւ զզուշութեանց կայսերական կառավարութեան զազարեցոյց զպատուհասն զայն: Իսկ հրկիղութիւն մեծ եղել ի 25ն Օգոստոսի, յորում այրեցան ի բունիսկ ի Կ. Պօլիս՝ սկսեալ ի Պահճէ-Գարուլէ գիւղմ-Գարու՝ տանք, խանութք, օթեանք, վաճառանոցք, մթերանոցք, եկեղեցիք, մղկիթք, վարժարանք եւ այլք առաւել քան գերեք հազար (3000): Վասըն որոյ ծանրացան կրկնակի հարուածք, թշուառութիւնք եւ տառապանք ի վերայ բազմաց անձանց յայլ եւ այլ աղբաց եւ բնակչաց բազումք անկան ի սնանկութիւն եւ ի կործանումն անկանդնելի, որոց ականատես եղաք եւ մեք: Մնացին ի բացօթեայս անձինք առաւել քան զերեսուն հազար:

Արդ Տ. Գեորգ Արքեպս. ոչ գիտէր եւ ոչ իսկ ներէր անձին ձանձրանալ եւ անկանել ի յուսահատութիւն յաղազս այսպիսեաց բազմախուռն ձախորդութեանց, եւ յուսացեալ յԱստուած եւ խնամրս Նորա ինքնին դիմէր այս եւ անդր, գրէր զնամականի, եւ տակաւ առ տակաւ ջանայր արդիւնաւորել զնպաստահաւաքութեան Մասնաժողովոյ՝ համաձայն ներելոց միջոցաց եւ ժամանակի:

Իսկ ժողովուրդ Հայոց Պրուսայու թախանձէր զսա եւ աղաչէր վերադառնալ ընդ փոյթ ի Պրուսա, եւ ինքնին հանել ի գլուխ զչինութիւն վարժարանի, եւս եւ հիմնարկել շինութեան նորոյ եկեղեցւոյ: Մանաւանդ երկամեայ բացակայութիւն նորին սրբազնութեան եւ ձախորդութիւնք ներքինք եւ արտաքինք ընդ դանդաղ ընթացից նուիրահաւաքութեան առթէր Պրուսացւոց զյուսահատութիւն, եւ

յուսային զօրանալ եւ մխիթարիլ ներկայութեամբ Առաջնորդ-թեմակալի իւրեանց, եւ ինքնին հնարել եւ հողալ զկարեւոր միջոցաց ի լրումն շինութեան վարժարանի եւ ի կառուցման եկեղեցւոյ:

Վասն որոյ առեալ զգանձեալ դումարս նուիրահաւաքութեան ի Մասնաժողովոյ կազմելոյ ի Պատրիարքարանէ, խնդրեց ի Պօղոս Արքեպս-Պատրիարքէ եւ յորդորեաց զանդամս Մասնաժողովոյ շարունակել զնուիրահաւաքութիւն որչափ լիցի հնարաւոր, եւ ինքն պատրաստեցաւ վերադառնալ ի Պրուսա:

ԳԼՈՒԽ ԼԷ.

ՅԱՂԱԳՍ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՅ Տ. ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊՍ. Ի Ի ՊՐՈՒՍԱ,
ԵՒ ՍԱԿՍ ԱՒԱՐՏՄԱՆ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ .

Էր 26 Դեկտեմբերի 1865 թուականի, մեկնեցաւ նորին սրբազնութիւն ի Կ. Պօլսոյ, եւ ի յաջորդ առուր եհաս ի Պրուսա՝ յետ զիշերելոյ ի Կէմպէլիկ: Սրտաշարժ եղեւ հանդէսն. զիմաւորելոյ զնորին սրբազնութիւն, եւ մխիթարութիւն մեծ կարօտակէզ ժողովրդեան, լցեալ անչափ ոգեւորութեամբ եւ իրաւացի իմն ակնկալութեամբ:

Համաձայն հրամանի եւ պատուիրանի սորա զանձեալ հաղիւուրեմն Ազգ. Գաւառական վարչութեան զկայսերաշնորհ 500 ոսկիս ի կառավարական արկղէ Պրուսայու՝ աջակցութեամբ Առաջնորդական փոխանորդի՝ ի 10րդ առուր Օգոստոսի (1865) ձեռնարկեալ էր ի շինութիւն նորոյ վարժարանի ի նմին իսկ տեղուջ ուր հաստատեալ էր ալրեցեայն վարժարան Ս. Պօղոսեան՝ ի հիւսիսային կողմըն եկեղեցւոյ՝ յառանձին փոքու բարձրաւանդակի ի զեղեցկատեսիլ դիրս յաջակողմեան եզերս Կէօք-տէրէ ձորոյ: Էր երկայնութիւն շինուածոյ յարեւելից յարեւմուտս իբր քառասուն եւ երեք կանգուն զդուռն աստիճանաց, եւ ըստ լայնութեան իբր վեշտասան կանգուն, իսկ ըստ միջատեղեան-կեդրոնական լայնութեան ընդ խաչածեւ թրւոյն՝ իբր քսան եւ երկու կանգուն: Համայն շինուած բովանդակէր զեօթն հարիւր եւ դիսուսն (750) քառակուսի կանգուն: Ճարտարապետ շինութեան էր Պ. Խաչատուր Կ. Պօլսեցի՝ Հաջի-Ուստա մականուանեալ ի Պրուսացւոց:

Իսկ ի սպասել 50,000 դահեկանւոյն նուիրելոց յօգոստ. Կայսրէ ի Սուլթան-Ապտ-իւլ-Աղիզ ինքնակալէ, դադարեալ մնայր լրումն ներքին շինուածոց վարժարանի:

Վասն որոյ Տ. Գեորգ Արքեպս. գումարօք պատրաստելովք ի նպաստահաւաքութեանց եւ փոխաւութեամբ փութացոյց եւ վերջա-

ւորեաց զշինութիւն վարժարանի՝ թերի թողեալ զգետնայարկն յառկացեալ ի սեղանատուն, սակաւուք թերի ըստ առաստաղացն զերկրորդ յարկ, եւ լրացուցեալ զվերին - զառաջին յարկ ըստ արժանւոյն եւ զմրեթաճեւ ի վերայ չորից սեանց ի միջնտեղւոջ (ի կեդրոնի) : Ծախք շինութեան եղին 125,000 (հարիւր քսան եւ հինգ հազար) դահեկան :

Էր 20 Փետրվարի 1866 թուականի եւ Բ. Կիրակի Մեծ Պահոց՝ խօսեցաւ նորին սրբազնութիւն զքարոզ սրտաշարժ եւ աղեխորով յեկեղեցւոջ ի ժամ Ս. Պատարագի նախ քան զճաշու գիրս, ելաց ժողովուրդ ամենայն հեկեկանօք : Յետ աւարտման առաւօտեան ժամերգութեան կից ընդ Ս. Պատարագի, արարեալ զյատուկ պաշտօն հանգստեան վասն ննջեցելոց համայն նուիրատուաց որ ի նպաստ շինութեանց վարժարանի եւ այլոց, կազմեաց ապա զհանդէս եւ զթափօր եկեղեցական, և երգովք շարականաց ելեալ յեկեղեցւոյ էջ ի նորակերտ վարժարան հոյակապ եւ եռայարկ հանդերձ խուռն բազմութեամբ ժողովրդեան, կազմեաց զնաւակատիս բացման Գէորգեան վարժարանի, կատարեաց զաղօթս եւ զխաչահանդիստ յառաջին յարկի, յաւել խօսել զխրախուսական բանս առ ժողովուրդ, օրհնեաց զվարժարան, զԱզգս եւ զս. Եկեղեցի Հայոց, զբարեխնամ եւ զառատագութ Սուլթան Ապտ-իւլ-Ազիզ Կայսր հանդերձ բարեմաղթութեամբք, զօսմանեան նախարարս, եւ զհամայն նուիրատուս յանուն եւ ի նպաստ շինութեան վարժարանի, եւ ասացեալ զպահպանիչ՝ կնքեաց զհանդէս, եւ արձակեաց զժողովուրդ ի խաղաղութիւն՝ մըխիթարելով յոյժ յոյժ զհայս զորդիս իւր :

Յետ որոյ ել յԱռաջնորդարան (վանք) եւ ընդ յառաջաւորս Ազգիս եւ ընդ վարչական ժողովոյ զբաղեցաւ ինքն կարեւոր կարգադրութիւնս սակս վարժարանի եւ վասն սկզբնական պատրաստութեանց վերակառուցման այրեցեալ եկեղեցւոյ :

Իսկ ժողովականք ամենայն խնդրեցին ի պատիւ հիմնադրի վարժարանի Տ. Գէորգայ կոչել զանուն Գէորգեան վարժարան, ընդ որ հաճեցաւ նորին Սրբազնութիւն :

Ի յաջորդ աւուրն սկիզբն եղեւ դասատուութեանց ի Գէորգեան նորոգ վարժարանի՝ յատկացուցեալ զերկրորդ յարկն միայն ի վարժարան արականաց, և զերկուս սենեակս որ անդ յարեմտեան կողմն ի դպրոց օրիորդաց՝ տուեալ զառանձին մուտս ի կողմանէ Եկեղեցւոյ : Ըստ որում հարկ էր ի բարձրագոյն յարկի, իմա՛ ի վերնայարկի կազմել զեկեղեցի ի վերաշինութեան այրեցելոյն : Թիւք աշակերտաց եւ աշակերտուհեաց հասանէին ցհինգ հարիւր և առաւել հոգիս :

Արժան համարիմք դնել աստին զյիշատակարան վարժարանիս որ
ի ճակատու արեւելեան մեծի դրան հոյակապ շինուածոյ :

« Դպրոցս Գէորգեան աստ կառուցանի՝

« Պարգեւօք հօօր մերս ինքնակալի՝

« Եւ բարեպաշտից Արամեան Ազգի,

« Ջանիւք բազմերախտ քաղաքիս դիտի

« Տեառն Գէորգայ Արք Եպիսկոպոսի

« Եւ Պօլսոյ նախկին Վեհ. Պատրիարքի : »

1 8 6 5 .

ԳԼՈՒԽ ԼԸ .

ՅԱՂԱԳՍ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ Ս . ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ապաւինեալ Տ . Գէորգայ Արքեպս .-ի ի խնամս եւ յօղնականու-
թիւն Յիսուսի Քրիստոսի Փրկչին մերոյ, որում էր պաշտօնեայ,
փութայր ի վերականգնել զայրեցեալ Ս . Աստուածածին եկեղեցի
միակ, ընդ կից եկեղեաց կամ մատուանց, եւ ազատել զժողովուրդ
Հայոց յանպատուար եւ յանպահով վիճակէ՝ որում ենթարկէր ի
ձմեռնային, յանձրեւային եւ ի հողմոտ եղանակս ընդ առժամա-
նակեայ տանօք այրեցեալ եկեղեցւոյ ի վերայ որմոցն խարխալելոց
հանդերձ նորօքն : Որոյ վասն տակաւ դարարէր ժողովուրդ ի յաճա-
խւոյ ի Ս . Եկեղեցի՝ բաց ի հանդիսաւոր եւ ի տօնական աւուրց եւ
այն եթէ ներկայ լինէր Արքազան Առաջնորդ թեմակալն :

Աւելորդ իմն է կրկնել եւ յիշել զանձուկ վիճակս եւ զտազնապս
Հայոց Պրուսայու, յերեսաց ոչ սակաւ ձախորդութեանց այլեւայլից,
զորոց համառօտեալ եմք կարեւոր տեղիս ի շարս պատմութեան մե-
րոյ : Ոչ արդիւնաւոր եղեւ եւ նպատահաւքութիւնն որ ի Կ . Պօ-
լիս եւ ի շրջակայս : Եւ տակաւին ոչ էր յոյս արդիւնաւորելոյ զնը-
ուէրս որ յարտաքնոց՝ ցորչափ ոչ պակասէին ձախորդութիւնք,
հրկիզութիւնք եւ տաղնապք համատարած հիւանդութեանց ի Կ . Պօ-
լիս եւ ի կարեւոր դաւառն ոմանս :

Հարկ էր անհրաժեշտ յենուլ ի սեփական միջոցս ներքինս մի-
այն, այսինքն առնուլ ի կշիռ զնիւթական վիճակ եկեղեցւոյ եւ ժո-
ղովրդեան, եւ այնպէս ելանել ի դործ, զի մի՛ ի վերայ աւարոյ
հիմնեսցի շինուածն :

Իսկ ժողովուրդ թախանձել թախանձէր միանգամայն ընդարձա-
կել զդիրս եկեղեցւոյ, մինչ զժուարանայր հոգալ զծախուց շինու-
թեան եկեղեցւոյ ի վերայ առաջին հիմանց, եւ մնային տակաւին
պարտք փոխառութեանն որ ի լրումն կարեւոր մասի շինուածոյ Գէ-

որգեան վարժարանի: Տ. Գէորգ Արքեպս. կամէր ի վերայ հիմանց եւ որմանց այրեցելոյն վերականգնել զեկեղեցի նոր ըստ ներելոյ դըրամական միջոցաց եւ վիճակի եկեղեցւոյ եւ ժողովրդեան, թէպէտ ինքն իսկ փափաքէր հոգւով չափ առաւել քան զժողովուրդ ընդարձակել զգիրս շինութեան նորոյ եկեղեցւոյ եթէ ըստ լայնութեան եւ եթէ ըստ երկարութեան:

Եղեալ աստ զփակադիժ համառօտեացուք զպատմութիւն շինութեան այրեցեալ եւ նախկին եկեղեցեաց:

Յետ տեղափոխելոյ առաջին դաղթականութեան Հայոց Պրուսայոս ի Մուրատիէ, յիյնէպէկ եւ յԱրապա-եաթաղը թաղից յարեւմըտեան-հարաւային եզերաց քաղաքին ի ներկայ թաղս Սէթ-Պաշը, Գարաղաչ, Սաքալ-տէօքէն, Էօմիւր-պէկ և այլն, յարեւելեան սահմանս առ մերձաւոր ստորոտով Ողիմպիան լերին (Քէշիշ-թաղ), զկնի զաղթելոյ մեծամասնութեան ի Կ. Պօլիս ընդ Յովակիմայ Եպիսկոպոս իշխանութեան յաղքող (Ֆէթիի) Սուլթան Մէհմէմէտի, զնոյ առնուն տեղափոխեալք զգետին ինչ ի ներկայ վայրի եկեղեցւոյ ի Գարաղաչ առ ձորեզերք, յորում հիմնեն զփոքրիկ մատուռ, եւ շուրջ զնովաւ զխցիկս խիտ առ խիտ եւ իրբւե զգետնայարկ խանըս - օթեւանս (իրբ օթալար): Եւ յանցելում եւ ի նախընթաց դարս ընդարձակեն Գէորգ Արքեպս. - Պատրիարք (ՌՄ), Սուքիաս Եպս. եւ այլք զըրջակայս մատան, փոյթ կալեալ հեռացուցանել և զխցիկս, զի մի՛ ձայնք օրօրոցոց եւ աղմուկք տանց խանգարեսցեն զժամերգութիւնս: Իսկ Տ. Եղիազար Արքեպս. (ապա Կաթողիկոս ամենայն Հայոց ի Ս. Էջմիածին) - 1682 - եկեալ ի նուիրակութիւն ի դիմաց Ս. Երուսաղէմի ի Պրուսա, ի տեղւոջ մատանն հնացելոյ կանգնէ զփոքրիկ եկեղեցի (1654-1662) յառաջ քան զամս երկերիւր եւ քառասուն կամ յիսուն, առեալ զստորազրուցութիւն ի Հայոց Պրուսայոս՝ զի ոչ երբեք ունին նոքա իրաւունս միջամտելոյ ելից եւ մտից եկեղեցւոյ, որ վերաբերի եւ է սեփականութիւն Ս. Յակոբեանց վանուց Երուսաղէմի, եւ պարտին իրբւե զաղօթաւորս միայն դալ ի ս. եկեղեցի: Յայտոցիկ տեղեկութեանցս երեւին ոչ միայն ողորմելի վիճակ Հայոց Պրուսայոս, այլեւ չփօթութիւն եկեղեցական - իրաւաբանական կանոնաց եւ օրինակ տարօրինակ իմն զեղծամարք վիճակային ինքնակառավարութեան եւ դրութեան եւ այն յԱռաջնորդանիսա քաղաքի:

Իսկ յաւուրս թեմակալ - Առաջնորդութեան Պօղոս Արքեպս. - ի Գարաղօջեան՝ (միացեալ վիճակս Պրուսայոս եւ Նիկիոմիտա), ի վերջին ամս անցելոյ ԺԼ-րդ դարու եւ ի սկզբան ներկայ ԺԹ-րդ դարու (ց1825), յորժամ բազմացեալ էին հայ բնակիչք Պրուսայոս աս-

տի եւ անդի, միանգամայն հնութիւն եւ անձկութիւն փոքրիկ եկեղեցւոյ հիմներոյ յեղիազարէ եւ վերանորոգելոյ քանիցս յայլոց ըստիպէ գնա (գՊօղոս Արքեպս.) ի նորոյ կառուցանել ի նմին իսկ տեղւոջ զեկեղեցի ընդարձակ առաւել քան զառաջինն՝ տրօք եւ նպաստիւք ժողովրդեան եւ միացեալ վիճակին՝ համանման այրեցեալ Ս. Գէորգ Եկեղեցւոյ Սամաթիոյ, զոր եւ այրեն հակառակորդք ոմանք ի Մահմէտականաց: Եւ Պօղոս առեալ ի նորոյ զթագաւորական հրովարտակ, եւս եւ կաշառեալ զազդեցիկ Մահմէտականս ոմանս (որպէս յիշեալ եմք վերադոյնս սակաւօք) ի վերայ որմացն առաջնոց վերականգնէ գՍ. Աստուածածին եկեղեցի: Զորոյ զյիշատակարան շինութեան յաւելուք ի ծանօթութեան*), որ եւ այրեցաւ երկըրորդ անգամ լեալ՝ 1863 ամի փրկչական: - Իսկ առթիւ շինութեան Ս. Հովնիսիմեանց օր. դպրոցի, Յարութիւն Եպս. փակէ զարեւմտեան զմեծ դուռն դաւթի, ի տեղի որոյ դնէ զաղբիւր մշտահոս, եւ ի հիւսիսային կողմն զաւթի հաստատէ զնոր դուռն մեծ հակառակ ձեւոց Ս. Եկեղեցւոյ Հայաստանեայց:

Վասն որոյ յորժամ ծածկէին սոժամանակեայ եւ միապաղայ տանեօք զայրեցեալ զեկեղեցիս, ճարտարապետք եւ որմնադիրք ցուցին զխարխլագոյն վիճակ որմոց Ս. Աստուածածին եկեղեցւոյ կեդրոնականի, զոր զիտէր Տ. Գէորգ Արքեպս., եւ կամէր լուրջ իմն եւ շրջահայեաց խորհրդակցութեամբ կանխել որոշել Գաւառական - ազգային ժողովով զոր սլարտ էր առնել:

Ուստի յամսեանն Մարտի յաւուր Կիրակէի հրաւիրեաց Տ. Գէ

*) «Հրաշակառոյցս այս Սբ. Եկեղեցի,
 «Որ շինեալ յանուն Սբ. Աստուածածնի,
 «Նորոգ հիմնեցաւ հնացեալն կարի,
 «Ի ձեռն Վեհի Տեառն Պօղոսի,
 «Որ քաջ արթուն դէտ ի Պրուսա քաղաքի,
 «Արքեպիսկոպոս Յարեթեան ազգի,
 «Ծննդեամբ Կեսարիայն գոլով հայրենի,
 «Որոյ հօրն անուն Ղարադօզ ձայնի,
 «Ի աշակերտաց Զաքարիա վեհի,
 «Ազգասէր կոչեալ Պատրիարք Պօլսի,
 «Աշխատակցութեամբ իշխանացն յարգի
 «Եւ գործակալօք մերոյս քաղաքի,
 «Ընթացք շրջանի թուոյս Հայկազնի
 «Հազար երկհարիւր քառասն երեքի»:

որդ Արքեպս. յընդհանուր ժողով զհամայն երեւելիս, զժողովականս վարչականս եւ զգլխաւորս արհեստաւորաց, եւ որպէս ատենաբանեաց յեկեղեցւոյ, նոյնպէս խօսեցաւ ի ժողովի աստ պարզեալ զկարեւորութիւն շինութեան եկեղեցւոյ, զմտազբուժիւն իւր եւ զջանս առ ի վերականգնել զեկեղեցիին ի վերայ որմոցն հնոց, զկարծիս ճարտարապետաց, զլխախանձանս ժողովրդեան առ ի ընդարձակել զեկեղեցի եւ հիմնել ի նորոյ, զգրամական անձկութիւնս եւ զվիճակ եկեղեցւոյ եւ ժողովրդեան, զանհրաժեշտ կարօտութիւն վաճառելոյ զկարեւոր մասն գործածելի արծաթեղինաց եւ անօթաց եկեղեցւոյ եւ այլոց, զպէտս նպաստահաւաքութեան ի Հայս Պրուսայու, աչ լովքն հանդերձ, առաջարկեաց համախորհուրդ որոշել զոր պարտ իցէ առնել. միանգամայն ընտրել զյատուկ մասնաժողով ի պէտս նպաստահաւաքութեան, ի պէտս շինութեան եւ ի մատակարարութիւն մտից եւ ծախուց :

Անդ էր տեսանել զեռանդ եւ զոգեւորութիւն ժողովականացն հարիւրաւորաց, որք անմիջապէս ընտրեալ զհաւատարիմ անձինս վստահելիս յանդամ Մասնաժողովոյ շինութեան, միահամուռ եւ փրասիրտ թողին լիազօր կամաց եւ տնօրէնութեան Ս. Առաջնորդի իւրեանց եւ Մասնաժողովոյ զոր պարտ եւ արժանի իցէ առնել ի շինութիւն եկեղեցւոյ, որում փափաքէին անձկանօք եւ շերմեռանդ հմն բարեպաշտութեամբն :

Միանգամայն բացեալ անդէն զստորագրութիւն նպաստահաւաքութեան՝ այր իւրաքանչիւր կամաւորապէս որոշեաց եւ ստորագրեաց ըստ բարեպաշտութեան իւրում զնուէր իւր, խոստացեալ կրկնել եւ երեքկնել զնպաստսն մինչեւ ցվերջաւորութիւն շինութեան եկեղեցւոյ :

Արդ արձակեալ Տ. Գեորգայ Արքեպս.-ի զժողովուրդ ի խաղաղութիւն հանդերձ օրհնութեամբ եւ շնորհակալութեամբ, ի յաջորդ ատուր սկսաւ տնօրինել ընդ Մասնաժողովոյ ի հայթայթել զգրամս ի պէտս շինութեան, զպատրաստութիւն ատաղձից աչ այլոց, եւս ե յորոշել ի հալել եւ ի վաճառել զարծաթեղէն զգարչա՝ զխաչս, զանօթս եկեղեցւոյ ընդ մնացորդ հին եւ նոր քժուար. արծաթխայս հալեալս (քիւլիւզէ) :

Ոգեւորութիւն մեծ տիւրէր ի ժողովրդեան ընդ եռանդուն բաւարաշտութեան : Կանայք եւ օրիորդ մրցէին ընդ արւնց՝ տալով ի նպաստ շինութեան եւ ի նուէր զոսկիս, զմատանիս, ջապարանջանս՝ եւ զայլս այսպիսիս զգարդս իւրեանցք, ամանք եւ զգրամս :

Զկնի հողալոյ զնախնական պատրաստութեանց գրամականաց եւ շինուածանիւթոց, ի 4ն Ապրիլի 1866 թուականի սկսաւ Ս. Առաջ-

հորդ Տ. Գէորգ Արքեպս. եռադիշերային հսկմանց ըստ ծխի եւ արարողութեանց Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ մասնակցութեամբ բազմախումբ եւ բարեպաշտ ժողովրդեան՝ արտասուախառն աղօթիւք եւ խնդրուածովք :

Իսկ յՄն Ապրիլի յաւուր տօնի Ս. Աւետեաց, յետ աւարտման Վառաձորեան ժամերգութեան եւ Ս. Պատարագի, Տ. Գէորգ Արքեպս. երեսնեակ բազմախումբ ժողովրդեան բանս սրտատուչս եւ զյոջողո՜ւսականս սակս վերաշինութեան եկեղեցւոյ համարօտ իմն ատենարաւութեամբ հանդերձ օրհնութեամբ եւ մաղթանօք, մինչ արտասուէք ժողովուրդ առհասարակ, վառեաց զսիրտս ի հուր բարեպաշտութեան, աստուածպաշտութեան եւ ազգասիրութեան, եւ ոգեւորեաց զամենեսին առհասարակ :

Յետ որոյ ելեալ արտաքս, յայրեցեալ եկեղեցւոյ, հրամայեաց անմիջապէս հաւաքել զհամայն կազմածս եւ զպարունակութիւնս սեղանաց եւ եկեղեցւոյ : Ապա հրամայեաց, եւ ահա հիւսանք, մշակըք, այլ արհեստաւորք եւ խումբ բազմութիւն Հայոց լցեալ բուն ջերմեռանդութեամբ, սիրով եւ ոգեւորութեամբ մեծաւ՝ ձեռն արկին ի բառնալ զառժամանակեայ տանին եկեղեցւոյ, փլուղին սակաւուք եւ զըջւպատան խարխուլս ի սուղ ինչ միջոցի : Զոր եւ բաւական համարեալ, օրհնեաց Տ. Գէորգ Արքեպս. զայխատաւորս եւ զհամայն ժողովուրդ, արձակեաց երթեալ ի խաղաղութիւն, եւ ինքըն եւ յԱռաջնորդարան առ ի առնուլ հանգիստ սակաւիկ ինչ, եւ սպա կազմել զնիստ խորհրդակցութեան ընդ Հոգարարձական Մասնաժողովոյ շինութեան :

Որոշեաց եւ կարգադրեաց կազմել զեկեղեցի յերրորդ - բարձրագոյն յարկի նորակերտ Գէորգեան վարժարանի, յորում էին յարեւմտեան կողմն ի լայնութեան շինուածոյ երեքին սենեակք ի պէտս դասարանաց, եւ ի միջին սենեկի ընդարձակի եղ ակամայ եւ առ անհրաժեշտ հարկի զՍեղան եւ զՎէժ մառժամանակեայ դէպ յարեւմուտս առ ի մատուցանել զՍ. Պատարագ, որպէս եւ սկսեալ յերեկոյեան ժամերգութենէ աւուրն Ս. Աւետեաց (յՄն Ապրիլի) կատարէք անդ կարգն Աստուածապաշտութեան մինչեւ ցաւարտ շինութեան եկեղեցւոյ : Անդ արար Տ. Գէորգ Արքեպս. եւ զձեռնադրութիւն քահանայական ի պէտս Պրուսայու եւ Եւնիքեզ գեղջ : Քահանայք եւ դպիրք պաշտէին զկարգս եւ զպարտս իւրեանց կացեալ առաջին միջին սենեկի, իսկ Տ. Գէորգ Արքեպս. Առաջնորդ եղ զաթուրն յաջակողմն եւ առաջի սեղանոյ ի նմին իսկ սենեկի, եւ ի ձա-

խակողմն կային վարդապետքն Պետրոս եւ Ստեփաննոս՝ աշակերտք իւր :

Ապաքէն համեմատութեամբ բազմութեան ժողովրդեան էր անձուկ յոյժ առժամանակեայ եկեղեցին այն որ բարձրագոյն յարկի վարժարանի, եւ ի հանդիսաւոր եւ ի տաղաւարական աւուրս ընդ ժողովուրդ եւ զյարկն երկրորդ, եւ զոհանայր զՏեառնէ՝ լուեայ անձամբք եւ եթ զեղանակս Աստուածապաշտութեան՝ առանց սեսանելոյ անձամբ զհանդէս Ս. Պատարագի եւ զայլ արարողութիւնս եւ զհանդէսս : Եւ զի մի՛ վտանգ ինչ զիպեսցի շինուածոյ վարժարանի եւ աղօթաւորաց ի ծանրութենէ բազմութեան ժողովրդեան, ետ զլնել ի նորոյ գառժամանակեայ սիւնս եւ զկապս ի ներքին եւ յերկրորդ յարկս ի միջավայրսն :

Իսկ ի վաղուեան աւուր յուրբաթու յՏն Ապրիլի շարունակեցաւ փլուզումն որմոց եկեղեցւոյ ի ձեռն վարձեալ գործաւորաց եւ բաղձաթիւ կամաւոր աշխատաւորացն ճրիաբար եւ ինքնայօժար եկեղոց, որպիսիք ոչ պակասեցան երբեք մինչեւ ցվերջ շինութեան : Եւ ընդ երեկս յատակեցան որմունք :

Սախտու որմունք եւ հիմունք հնոյ շինութեան հարկադրեցին զճարտարապետ Սաչատուր ի բանալն գնոր հիմունս առաւելագոյնս չորիւք կանգնով չափ՝ ցցահարել եւ ապահովել զսեւաջրեալ հաստաւութիւն հիմանց, մանաւանդ զի մերձ էին եղբք արհեստաւորեալ բարձրաւանդակի տեղւոյ եկեղեցւոյ ի ձորակոյս ընդ կողմն արեւմրտեան եւ զառիվայր թեթեւ ի ձորեզերս, վտանգ երկրաշարժի զօր հանապազ կայր առաջի ականց, հարկ էր զգուշանալ ըստ ամենայնի, զի մի՛ վտանգ ինչ զիպեսցի որմոց եւ շինուածոց եկեղեցւոյ, ըստ որում եւ բարձրութիւն մտադրեալ նորոյ եկեղեցւոյ առաւելոյր տասն կանգնով չափ առաւել քան զհնոյն, թող զընդարձակութիւն շինութեան եւ զհաստատութիւն որմոց :

Յընդարձակելն զերկայնութիւն կեդրոնական եկեղեցւոյ ընդ արեւելս՝ հարկն անհրաժեշտ ստիպեաց առնուլ ի վայր զկամարս սեղանացն երից, զքարուկրեայ զկամարակապ գանձարանն հաստատուն, եւ զմասնատունն (ուր պատրաստէին զմասն եւ զնշխար), որք եւ յաւելուին բանալ զզրունս նորոց ծախուց աւելորդաց, ցորչափ ոչ ներէր անձկութիւն միջոցի արեւմտեան կողման եկեղեցւոյ ընդարձակել : Սակայն անչափ էր ոգեւորութիւն եւ եռանդ ժողովրդեան և մխիթարական, մինչեւ խրախուսել զՏ. Գէորգ Արքեպս. եւ զշինուածական Հոգաբարձութիւն ոչ երկնչել ի ծախուց, մանաւանդ զի անձնանուիրական ջանք՝ ձրի աշխատակցութիւնք եւ շինուածանիւթական նուիրատուութիւնք ժողովրդեան, մեծաց եւ փոքունց, ա-

րանց եւ կանանց, երիտասարդաց եւ կուսանաց, հարստաց եւ աղքատաց, զիւրացուցանէին, զեղչէին զմի երրորդ մասն ծախուց շինութեան: Եւ անձնական աշխատութիւնք կամաւորք ի կրել զհող, զաւազ եւ զքարինս ի կից ձորոյն Կէօք-տէրէի թեթեւացուցանէին զգործն յոչ սակաւ իրս, միանգամայն փութացուցանէին զշինուածն: Թողումք յիշել զարհեստական նուէրս եւ զձրի աշխատութիւնս հիւսանց, քարակոփաց, մշակաց, ատաղձագործաց, զարրնաց, երկաթագործաց եւ այլոց: Յաւելորդացն իմն էր յիշել եւ զայս, զի ձրի էին աւազ, քարինք, մարմարիոնք եւ այլք սոյնպիսիք: Մարմարիոնք էին ի հայ գերեզմանատանէ Չամլըճայի:

Արդ՝ աւարտեալ պատրաստութեանց զհիմանց շուրջանակի, Տ. Գէորգ Արքեպս. Ս. Առաջնորդ զոյգ ընդ երեկոյեան ժամերգութեան կատարեաց զհիմնարկութիւն եւ զօծումն հիմնաքարանց շինութեան եկեղեցոյ փառաւոր եւ սրտաշարժ իմն հանդիսիւ յաւուր շաբթու ի 23ն Ապրիլի:

Եւ այսպէս անձամբ վարէր զշինութիւն եւ փութացուցանէր աւուրք յառաջ աւարտել, յորում մրցէին ընդ միմեանս Առաջնորդ, Մասնաժողովն եւ ժողովուրդ առհասարակ, որպէս եւ մեծ մասն գործաւորաց շինութեան: Յաջողութեամբ պսակէր Տէր զջանս եւ զաշխատութիւնս Ս. Առաջնորդի եւ ժողովրդեան: Խնդիր եւ ընտրութիւնն կաթողիկոսական յաւել եւ զայլ շարժառիթ ոգեւորութեան եւ փութաշանութեան, զի մի՛ թերի մնասցէ շինութիւնն եկեղեցոյ, զոր ինքեանք Պրուսացիք զժուարանալոց էին աւարտել:

Ստիպեալ ի պատճառաց կարեւորաց, եւ զի մի՛ վտանգ ինչ ծագեսցի ի ներկայութեան ժողովրդեան, Տ. Գէորգ Արքեպս. կատարեաց առանձին զօծումն խաչի ճակատոս կամարի աւազ սեղանոյ զկէս ժամու յետ մտիցն արեւու յառաջին պահու գիշերոյ որ ունէր լուսանալ ի 25ն Նոյեմբերի:*)

Լրացեալ պատրաստեալ էին համայն ներքին շինուածք եկեղեցոյ, որպէս եւ արտաքինք բացի ծեփոց արտաքին երեսաց որմոց. լրացեալ էին եւ շինութիւնք կից եկեղեցեացն Ս. Լուսաւորչի (արանց) եւ Ս. Խաչի (կանանց) ընդ զանձարանոյն եւ պահարանացն:

*) Ի 4-ն Գեկտեմբերի ընդ երեկս զմետասն ժամու կատարեաց Սարիմ Սըրբագմութիւն քեթբու իմն հանդիսի զօծումս երկուսասն խաչից որմոց յանուանս առաքելոց եւ զայլ խաչս նակատոց կիսակամարաց սեղանաց Ս. Լուսաւորչի, Ս. Խաչի (նոր անուանելոյ փոխանակ Ս. Աստուածամնի), եւ փոքունց սեղանաց, որ յերկուս կոչմանս Աւագ սեղանոյ, այս է Ս. Կարապետի եւ Ս. Ստեփաննոսի:

Վասն որոյ հողացեալ Սորին Սրբութեան նորընտիր կաթուղիկոսի ամենայն Հայոց զկարեւոր պատրաստութեանց հողեւոր հանդիսի եւ նաւակատեաց օժման եկեղեցւոյ Ս. Աստուածածնի, յաւուր կիւրակէի բարեկենդանի պահոցն Ս. Յակոբայ, ի 11ն Դեկտեմբերի, փառաւոր եւ շքեղաւոր հանդիսի մեծաւ կատարեաց զնաւակատիս եւ զվերջնական օծումն Ս. Եկեղեցւոյ եւ սեղանաց, հանդերձ հսկամարք եւս, եւ մատոյց ինքն զառաջին Ս. Պատարազ ի նորակառոյց տաճարի, որ եւ եղեւ առաջին Ս. Պատարազ իբր կաթուղիկոսական: Եւ յառ առթիւ խօսեցաւ ժողովրդեան քարոզ համառօտ, միանգամայն սրտառուչ, փառս տուեալ Աստծոյ, օրհնեաց զհամօրէն ամենայն աշխատաւորս եւ զնուիրատուս հանդերձ բարեմաղթութեամբք:

Իսկ ժողովուրդ լցեալ էր յանչափս եւ բերկրապատար ուրախութեամբ պանծայր ընդ լրումն շինութեանց, որպէս վարժարանի, նոյնպէս ս. եկեղեցւոյ, թէպէտ ի միւսմէ կողմանէ տիրէր թախծութիւն մեծ ի սիրտս ամենեցուն՝ առթիւ կաթուղիկոսական ընտրութեան, որով զրկելոց էին ի բարեխնամ հովուէ իւրեանց եւ ի բազմերախտ Առաջնորդէ:

Սորին Սրբութիւն յայտ առթիւ եւ ստիպեալ ի հարկէ անուանեաց զեկեղեցիին կանանց յանուն Ս. Խաչի, որ յառաջ անուանէր Ս. Աստուածածին, անուանեաց եւ զԱջակողմեան պահարան յանուն Ս. Գեղորգայ զօրավարին, որ յառաջ կոչէր Ս. Խաչ:

Ընտրութիւն կաթուղիկոսական եւ եղանակն ձմեռնային ոչ ետուն միջոցս եւ ժամանակ շինելոյ լրիւ զզանգակատուն եկեղեցւոյ եւ զհոյակապ խաչկալս, զվանդակս գաւթի եւ զարտաքին ծեփս եկեղեցւոյ, եւ զայլ կազմածս ինչ եւ զներկս երկուց վերնատանց կանանց որ յարեմտակողմն աւազ եկեղեցւոյ:

Արդ՝ համառօտեսցուք զձեւոց եւ զչափոց եկեղեցւոյ ընդ կից փոքրիկ եկեղեցեաց:

Լայնութիւն բուն տաճարի մնաց ըստ հնոյն քան եւ հիմք կանգուն. կից եկեղեցեացն էին լայնութիւնք իբր վեց - վեց կանգուն: Երկայնութիւն տաճարի եհաս մինչեւ ցլխաուն եւ չորս կանգուն, յաւելեալ ի նորոյ գծօքն կանգուն եւ եթ: Ոչ էր հնար առաւել ընդարձակել, զի մերձ էր պողոտայն: Բարձրութիւն տաճարի է իբր քան կանգուն, և եկեղեցեացն իբր տասնական: Հաստատեալ են փայտեայ դռնիք տաճարի բացի յորմացն ի վերայ հանդիպակաց հաստահիմն սեանցն (զերանաց) հինգից զուգից, կամարակապ, յեզերսն՝ առաստաղի: Կամարակապ են եւ փոքրիկ եկեղեցիք:

Քարուկրեայ են որմունքն ամենայն եւ ամբացեալ երկաթակա.

պովժք ի կարեւոր տեղիս եւ յանկիւնս . փայտածածկ տանիքն ապա-
հովեալ են յարտաքին հրկիզութեանց :

Հանդիպակաց երկչար պատուհանք են ի հիւսիսային, ի հարա-
ւային եւ յարեւմտեան որմունս, ստորինքն ի մեծ դիրս, եւ վերին-
քըն ի միջակ դիրս, ապահովեալք երկաթափեղկովք :

Կամարքն են ծեփածոյք ի տախտակաշարս (պաղտաաւի), որպէս
եւ առաստաղքն :

Ձեւք ճարտարապետական ոչ են մոռացեալք ըստ ամենայնի եւ
յամենայնի : Յորպիսիս քաջահմուտ էր երխտասարգ Յարութիւն Ար-
զարեան Պրուսացի օգնական - ճարտարապետն՝ ուսեալ առ ոտս
Պալեան ճարտարապետաց : էր սա քեռորդի Սաչատուր ճարտարա-
պետի, որ էր հմուտ ի գործնականին եւ եթ :

Կիսամուտք աւազ սեղանոյ եւ այլոցն են աղիւսակրեայ եւ հաս-
տահիմն, մարմարեոնք բիմիցն բերեալք ի գերեզմանատանէ, որպէս
եւ սիւնք դրանց եւ սանդլաքարինքն (մարմարեայ) :

Քարուկրեայ եւ աղիւսախառն են կամարակապ պահարանք ա-
ջակողմեան (որ՝ որպէս եւ գանձարանք՝ ոչ այրեցան), եւ նորաչէն
գանձարանքն - աւանդատունք որ յարեւելեան կողմն եւ կից սեղա-
նաց տաճարի յերկուսէ :

Ի յետկոյս աւազ սեղանոյ հաստատեցաւ գլխաւոր հիմնամասն
գանգակատան ի վերայ առանձին եւ նախադուռեան բաժնի նորաչէն
գանձատան, ի քառակուսի դիրս :

Միայարկ էր վերնատուն կանանց յայրեցեալ եկեղեցւոյ, որ
երկյարկի եղեւ ի նորաչինի, եւս եւ առ ի նպաստել կարօտութեանց
եւ պիտոյից եկեղեցւոյ՝ սահմանեցաւ վաճառել անդ կանանց գերիտ
կարգս յառաջոյ մինչեւ ցվանդակս երբեակ դասակարգութեամբ եւ
զնովք՝ պայմանաւ վայելելոց ցկեանս եւ ոչ երբեք ժառանգական
իրաւամբք :

Յիշատակարան շինութեան Սրբոյ տաճարիս հաստատեցաւ ի
ճակատս աւազ դրանն արեւմտեան, եւ ունի օրինակ զայս :

« Ողորմութեամբն Աստծոյ ի հիմանց կառուցաւ Սր. Տաճարս
« յետ հրկիզութեան, տրովք բարեպաշտ ժողովրդեան Հայոց, փոյ-
« թեռանդն Վանիւք բազմերախտ Առաջնորդ Հօր ՏՆ . Գէորգայ Սրզն .
« Արքեպս .-ի Նախկին Պատրիարքի Կ. Պօլսոյ, որ ընտրեցաւ Կա-
« թուղիկոս եւ ամբարձաւ յԱՅՍՈ Հայրապետութեան*) ամենայն
« Հայոց յայսմ ամի : 1866 :

*) Թէեւ ընտրեցաւ ի Կաթուղիկոս Ամենայն Հայոց, այլ յետ օժման ի Ս.
Էջմիածին կարէր ամբառնալ եւ նստել յաթոռ Հայրապետութեան բացարձակապէս :
Հայցնէպ տագնապս եղիւ սոյն այս քերութիւն բառակամ :

« Ի վառս Ամենասուրբ Երրորդութեան յանուն Մեծահրաշ Սբ. Աստուածածնի» :

Հին յիշատակարարն Ս. Լուսաւորչի էր ի վերայ արեւմտեան դրան :

« Շինեցաւ Սբ. Տաճարս (եկեղեցիս) ջանիւք բազմերախտ Ա. « ռաջնորդի մերոյ Տն. Գէորգայ Սրբն. Արքեպս. Նախկին Պատ. « բխարքի Կոստանդնուպոլսոյ, արդեամբք բարեպաշտ ժողովրդեան : « 1862 Յուլիս 5 :»

Արձանադրեսցաք ասդէն զհաշիւս շինութեան համառօտիւք իմն :

Հաշուեկշիւս ելեւմտից շինութեան Ս. Աստուածածին եւ կից եկեղեցւոյն, սկսեալ ի 1-էն Մարտի 1866 եւ կնքեալ ի 14 Յունվարի 1867 ք.

Մուտք.

Գահեկան Ստակ

Ի վաճառմանէ այլեւայլ արծ. խաչից եւ անօթաց, եւ արծաթացն քճուտելոց ի հրկի-
ղութեան եւ յետ հրդեհի 229,308 --

Դրամական նպաստք Հայոց Պրու-
սայու, արանց 165,060 --
,, ,, կանանց 45,874 -- 5.

Փոխարժէք յարծաթեղինաց եւ յայլ եւ
այլ նիւթեղինաց նուիրելոց յիդական սեռէ
Հայոց Պրուսայու, եւ դրամական նպաստք
առաքեալք ի Կ. Պօլսոյ, յԵգիպտոսէ, յԵրու-
սաղէմէ եւ յայլ տեղեաց 46,370 --

Արդիւնք կնքահայրական պնա-
կի յաւուր օժման եկեղեցւոյ 9,170 -- 20

Համագումար 491,782 — 25

Ծախք.

հատ դահեկան ստակ

Կղմինտր նորածեւ (թափա
քիրէմիտի) 7,782 — 8,267 — —
Կղմինտր հին 15,950 — 1,515 — 30
Աղիւս թրծեալ, երկար (թա-
փաղ) 51,757 — 9,566 — —
Աղիւս թրծեալ, տափաք (տա-
պուն) 10,085 — 7,199 — --

փոխադրելի գումար 26.547 30

	փոխադրեալ զուամար	26,547	—	30
Աղիւս թրծեալ, (քառակուսի (պայքաք))	29,943	—	13,320	—
Պատուհանական թափ- ծու վանդակ	2	—	3,575	—
Երկաթազամ եւ թելարեւեռ			6,416	—
Ատաղձ եւ տախտակ			65,902	—
Կիր (քար), 370,898 հօխայ			51,129	—
Աղիւսաւազ (խօրասան)			3,425	—
Քէօֆէքէ քար եւ մարմարիօր սիւնացուք եւայլն			20,241	—
Գործաւորք եւ արհեստաւորք՝ Քարակօփ, 1604 օրական			23,350	—
Որմնադիր, 1013 ,,			37,462	—
Հիւսն եւ ատաղձագործ, 2987 օրական			38,675	—
Ծեփարար, 1690 օր			23,672	—
Մշակ, 4419 օր			65,628	—
Ճարտարապետ			7,550	—
Տեսուչ - Գրագիր			3,725	—
Սիւնացու եւայլն մեծամեծ զերանաց բերողչէք, պարզեւ			53,603	—
Մնացորդ պարտք շինութեան վարժարանի վճարեալ			—	—
Երկաթեայ չորս հատ մեծ դրունք			3,978	—
			<hr/>	
			491,782	—
				25

Բաց ի նպաստից եւ ի գրուածոց՝ ընծայեալ են դարբին արհեստաւորք զերեսուն եւ չորս (34) մեծ երկաթափեղկս պատուհանաց, եւ պ. Յովհաննէս Մարաշլեան ընծայեալ է զերկաթեայ մեծ դուռն տաճարի՝ ծախսեալ զտասն եւ մի հազար հինգ հարիւր (11,500) դահկան:

Իսկ մարմարեայ քարինք բերեալք ի Չամլըճա անուն գերեզմանատանէ Հայոց անցանէին առաւել քան զերեք հարիւր տասանաքարըս, որք զործածեցան ի պէտս բեմի, սեղանաց, սանդխոց, դըրանց, յատակաց գաւթի եւ մտից եւ այլոց կարեւորութեանց: Ս. Ա. ռաջնորդ ետ օրինակել զարձանագրութիւնս գերեզմանաքարանց եւ

պահել ի գանձատան եկեղեցւոյ, յորում արձանագրեցաք եւ մեք իբր զվերնագիր զտեղեկութեան ինչ համառօտագոյն :

ԳԼՈՒԽ ԼԹ .

ՅԱՂԱԳՍ ՎԱՆՃԱՆԻ Տ . ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԵՒ ԳՈՐԾՈՅՆ ՈՄԱՆՅ, ԵՒ ՎԱՍՆ ԽՆԴՐՈՅ
ՊԱԼԱՌԷՆԻԱ ԱՆՈՒԱՆԵԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ 1836 ԹՈՒԱԿԱՆԻ

Տ . Տ . Մատթէոս Ա . Կաթուղիկոս - Կոստանդնուպոլսեցի, - որ նստաւ յԱթոռ Հայրապետութեան Ամենայն Հայոց ի Մայրավանս Ս . Էջմիածնի յԱրարատեան աշխարհի յամի Տեառն 1859՝ ընտրեալ եւ հաստատեալ ի 1858 - կնքեաց զերկրաւոր կեանս իւր յետ փոքու հիւանդութեան ի զիշերի ուր ունէր լուսանալ ի Կիւրակէ ի 22ն Օգոստոսի 1865 ամի, ի հասակի - 72 - եօթանասուն եւ երկու ամաց, վարեալ զիշխանութիւն Հայրապետական առաւել քան զամս եօթն :

Սպանեալ էր կանխաւ Տ . Պետրոս պիտականուն Կաթուղիկոս Աղթամարու, եւ ի 1ն Հոկտեմբերի (1865) վախճանեցաւ Տ . Կիրակոս Պիտականուն Կաթուղիկոս Տանն Կիլիկիոյ (Սսոյ) :

Այսպէս ապա մնային թափուր Արարատեան Մայր Աթոռ եւ պիտակ աթոռքն Սսոյ եւ Աղթամարու :

Տ . Մատթէոս Կաթուղիկոս էր այր հնարագէտ, խորամանկ եւ ճարտարախօս, միջակ յուսմունս կրօնի եւ լեզուի, անհանդարդ բարութք, այլ զուրկ ի վարչական եւ ի դիւանագիտական հմտութեանց եւ ի փորձառութեանց, զորպիսիս ապացուցանեն յաւէտ պաշտօնական տեղափոխութիւնքն ի Նիկիոմիդա, ի Պրուսա, ի Ջմիւռնիա, ի Կ . Պօլիս եւ այլն :

Վասն որոյ ի ստանձնելն զպաշտօն իւր ծայրագոյն ի Մայր Աթոռոջ, յորժամ աջակցէր նմա բարենախանձն Տ . Մակար Եպս . (ապա Կաթուղիկոս - 1885 - որ եւ եկն յԷջմիածնական Հրաւիրակ առ Տ . Մատթէոս Կաթ . այսր ի Կ . Պօլիս) որպէս եղեւ առաքել քան զամ մի ի Ս . Էջմիածնի, բարւոք վարեալ է զգործս եւ զյարարեութիւնս, ակնածէին միաբանք եւ սինօղականք, իսկ ի Կարգել նորա զՄակար Եպս . ի թեմակալ - Առաջնորդ Հայոց վիճակին Վրաստանի եւ Իմէրէթի (Տփլիսեաց, 1860-1.) ի տեղի Տ . Սարգիս Եպս .-ի Ջալալեան համաձայն խնդրանաց ժողովրդեան եւ երիտասարդացն զարգացելոց, տկարացաւ Տ . Մատթէոս Կաթ . ի ղեկավարութեան իւրում, անփորձութեամբ իմն զժտեցաւ ընդ ճերունազարդ եւ բազմափորձ Տ . Ղուկաս Արքեպս .-ի Մաստարացւոյ Կաթ . Տեղապահի,

որ բազմօք աղղէր սինօզականաց եւ միարանից եւ պատկառէին առհասարակ ի նմանէ: Ոչ յամեցաւ վախճան կենաց Ղուկաս Արքեպսոսի, եւ այսու առթիւ ներէ ինքեան Տ. Մատթէոս Կաթ., լցեալ հակառակութեամբ, ասել ի Մայր Տաճարի զանպատշաճ իմն քարոզ իրր դամբանական՝ առեալ ի բնարան զայս բան. «Անմիտ, յայսրմ գիշերի զոգիղ ի քէն ի բաց պահանջեցին, եւ զոր ժողովեցերդ ո՞ւմ լինիցի»: Յետ այսորիկ երես առեալ միարանից եւ գրգռեալ ի ներքուստ եւ յարտաքուստ՝ դամ քան զգամ դառնացուցին զվիճակ Մատթէոսի. սինօզականք սկսան ելանել զմիմեամբք, Ջալալեան Նպս. ոչ դադարէր ի գրգռելոյ զվեղարաւորս եւ օր աւուր յաճախէր ի վրէժխնդրական ջանս ընդ դէմ նորա, ռուսական կառավարութիւն հնարէր ի դաղտնի եւ յաւելոյր զմեքենայութիւնս իւր ցորչափ ոչ համակերպէր Տ. Մատթէոս Կաթ. ջանից եւ ազգակործան նպատակացն կառավարութեան: Մինչ զի անկեալ Մատթէոսի ի յուսահատութիւն մեծ՝ սկսաւ յաւելուլ ի ստորագրութեան իւրում տղայամտարար դաժականդ վշտալի, միանգամայն ինդրեալ է ի ռուսական կառավարութենէ թոյլատրել ինքեան ելանել արտաքս ի ռուսական սահմանաց եւ վերադառնալ զալ այսր ի Կ. Պօլիս, որում ոչ ներէր երբեք Կեդրոնական Կառավարութիւն Պետերսբուրգի՝ հակառակ յօժարականութեան եւ թելադրութեան Կովկասեան փոխարքայական Կառավարութեան՝ ի յականէ՝ փոխարքայ եւ Կայսերագուն Միքայէլ Մեծ-դքսի (եղբօրր Աղեքսանդր Բ. Կայսեր):

Կամեցեալ է Նորին Սրբութեան Վեհ. Կաթուղիկոս վերանորոգել զարտաքին որմունս Մայր Տաճարի Ս. Էջմիածնի, դէթ զքարիննրս ծակոտեայս եւ մաշեայս, հիմնարկել եւ կարգել զնոր տպարան յարտաքին բակի որ ընդ մէջ դրանն Տրդատայ եւ Հիւսիսային մեծի դրան պարիսպի, (ուր լեալ է ի հնումն շուկայն Վաղարշապատու, յառաջ քան զներկայ շուկայն որ արտաքոյ պարսպի), հիմնել հուսկ ուրեմն զընդարձակ ուսումնարան մեծ ի կողմն արեւելեան ի մէջ պարսպի զառաջեաւ հնոյ ուսումնարանի, որոց եւ ձեռնարկեալ է յայլ եւ այլ ժամանակս, այլ միարանք ի գիշերի խանգարեալ յաճախ գոտնեակս (իսկէլէ) որմոց՝ արգելեալ են զվերածորոգութիւնս, անգամ զփոփոխութիւնս քարանց. իսկ սինօզականք դադարեցուցանեն զչինութիւնս տպարանի եւ ուսումնարանի՝ յետ բանալոյ զհիմունս եւ արկանելոյ զքարինս ինչ՝ առարկեալ իրաւամբ զպակասութիւն գրամոց եւ զանձկութիւն զանձարանի Ս. Էջմիածնի:

Կամեցեալ Տ. Մատթէոս Կաթուղիկոսի ինքնին եւ միայնակ բարեփոխել զՊալատէմիա (1863)անուն կանոնադրութիւն Ս. Էջմիածնի, կազմեալ առաջարկեալ է զկանոնադրութիւն նոր եւ հակասական եւ

հաստատութիւն ուու. կառավարութեան միջոցաւ Կովկասեան փոխարքայութեան, զոր եւ յանձնեալ է առաքելով առ թեմակալ Տ. Մակար Եպս. ի Տփլիսի սակա ներկայացուցանելոյ անձամբ ուր արժանի իցէ: Այլ սակայն տեսեալ Մակար Եպս. ի զգոյշութիւնս ծանոնս ընդ ընդարձակեալ պարունակութիւնս առաջարկեալ նորոյ կանոնադրութեան՝ ոչ կամի յանձնել կառավարութեան Կովկասեան փոխարքայութեան, միանգամայն պատասխանէ Ս. Կաթողիկոսի, զի ի բարեպատեհ ժամանակի յանձնելոց է որոց արժանի իցէ: Եւ հուսկ ուրեմն ստիպեալ ի հրամանաց Վեհ. Կաթողիկոսի՝ յանձնէ ուու. կառավարութեան զկանոնադրութիւն նոր:

Ոչ սակաւ են արդիւնք անփորձութեանց եւ զեղծմանց Տ. Մատթէոս Կաթողիկոսի ընդ անդիտակից եւ անկշիռ ընթացին, որովք պատճառեալ է զբողոքապիտի շփոթութիւնս եւ զվնասակար հետեւանըս աննախանձելիս, զորոց ոմանց արժան համարեմք դարձեալ յաւելլուլ գրել աստ սակաւուք:

Կամեցեալ նորա լինել ուշադիր, միանգամայն բարեփոխ խնամակալ ըստ ամուսնական խնդրոյ եւ ըստ ճիւղահամարութեանց՝ հետեւեալ յաճախ անձա՛հ իմն ըմբոնմամբք զաւառական հաւաքածոյ կանոնաց Միթիար Գօշի, որ ոչ երբեք կարէր լինել նուիրական եւ հաստատուն օրինազիրք ազգային եւ եկեղեցական, տայ զհրաման նորոյ պակի ոմանց անձանց, որոց կենակիցք աքսորեալ էին ի Սիրիւր անորոջ իմն ժամանակաւ, որպէս եւ երբեմն ցկեանս, կամ որք անընդունակ զանձինս խոստովանէին ի սեռական պարտաւորութիւնըս եւ ըստ ծննդաբերութեանց՝ ներկայացուցեալ զվկայական բժշկականս՝ միանգամայն պաշտօնականս: Եւ յազատել վերադառնալ աքսորելոցն ի Սիրերիոյ ի հայրենիսն եւ ի տունս իւրեանց՝ ծագէին վէճք եւ շփոթութիւնք՝ պահանջեալ իրաւամբք զօրինաւոր ամուսինս իւրեանց՝ ի նախատինս Հոգեւոր Իշխանութեան:

Իսկ որք յամուսնացելոց դժգոհ էին յիրերաց եւ ոչ հանդուրժէին, համաձայնէին կանխաւ ի միջի իւրեանց, եւ մին ի նոցանէ հանդերձ բժշկական վկայականաւ խնդրամատոյց լինէր Վեհ. Կաթողիկոսի կամ Մինօղի, յայտնելով՝ զի ինքն է անընդունակ ըստ ամուսնական եւ ծննդական պարտաւորութեանց, վասն որոյ խնդրէր կարեկցել հայրաբար եւ թոյլատրել ամուսնոյ իւրում պակել ընդ ալլումն: Եւ յետ անցանելոյ ամաց ինչ եւ զկնի ամուսնանալոյ առաջին կենակցի իւրոյ ընդ ալլում, դիմէր ի նորոյ առ Վեհ. Հայրապետ՝ ներկայացուցեալ եւ զվկայական պաշտօնական ի բժշկաց կամ ի կովկասեան բժշկական ժողովոյ, եւ խնդրել թոյլատրել ինք-

եան մտանել յամուսնութիւն ընդ այլում՝ բուժեալ զոլով սեռական կամ ծննդաբերական անընդունակութեան իւրում :

Վասն որոյ բազմանան խնդրատուք, յաճախեն զժգոհութիւնք ի տունս ոչ սակաւս եւ յընտանիս, մանաւանդ յԱղեքսանդրապօլ, մինչեւ շարժել զընդհանուր զժգոհութիւնս եւ զշփոթութիւնս : Յորոց այլեւս շփոթեալ Ս. Կաթուղիկոսի՝ բարձի թող առնէ զամուսնալուծական աղերսագրութիւնս առհասարակ, որպիսեաց ետ Տ. Գէորգ Դ. Կաթուղիկոս բացարձակապէս զբացասական պատասխանիս եւ արգել իսպառ միջոցաւ Սինօզի ի նստել իւրում յԱթոռ Հայրապետական եւ ի ներկայացուցանելն Սինօզի ի վճիռ Կորին Սրբութեան զհարբաւոր խնդիրս եւ զգործոն :

Ապաքէն ունի Ս. Եկեղեցի Հայաստանեայց զկարեւոր օրէնս եւ զպայմանս ամուսնալուծականս, ըստ կարօտութեան եւ պահանջմանց այլ եւ այլ ժամանակաց, որպէս եւ ի ներկայումս է տեսանել զկարեւորութիւնս այսպիսիս, զուցէ առաւել զգայիս, արժան է ուշադրութեան, կարեկցութեան եւ միխիթարական տնօրէնութեանց ծայրագոյն հոգեւոր իշխանութեան, այլ սակայն բացակայութիւն հարապատ քաղաքական իշխանութեան առ ի տալ յարգել զվճիռ եւ զտնօրէնութիւնս հոգեւոր իշխանութեան Ազգի մերոյ ըստ արժանւոյն, հարկ անհրաժեշտ զնէ Վեհ. Հայրապետաց Ազգի մերոյ լինել շրճահայեաց եւ զգուշաւոր ի խնդիրս, մանաւանդ զժուարթութիւնքն կազմելոյ զիրաւասու ընդհանուր ժողովս ազգային եւ եկեղեցական ըստ այսպիսեաց խնդրոց եւ ըստ այլոց ազգային եւ եկեղեցական բարեկարգական կարօտութեանց եւ տնօրէնութեանց՝ ըստ պատճառն յարուցանել զառաւելակշիռ վտանգս ազգակործանս՝ յուղեալ զտարօրինակ եւ զօտար խարդաւանութիւնս պետականս, որով զհետ զայ ասել, զի խոհեմութիւնն ստիպէ՝ ընտրել ըստ ներկայումս զիտօբրագոյնն երկուց չարեաց :

Զարդիս զժուարացուցանեն առաւել ժամանակակից պահանջք եւ կարօտութիւնք ոչ սակաւք զխնդիրս այսպիսիս, ցորչափ ընդ պատրուակօք ազատութեան եւ յառաջադիմութեան ծանրաման օրաւոր խնդիրք եւ կնճիրք յամուսնական կենակցութիւնս եւ ի կենցաղապարտութիւնս, մանաւանդ ի քաղաքս, իսկ թէ՛կական արտօրք, թափառական կամ անյայտ բացակայութիւնք, կրօնապիտիւթիւնք, վտանգաւոր հիւանդութիւնք եւ մոլորութիւնք, եւս եւ ազատութիւնք արտաքին յարաբերութեանց հանդերձ այլովք, կարօտին մանրաման քննութեանց եւ բացատրութեանց, հրահանգաց եւ օրինաց ձեռնհաս ընդհանուր ազգային - եկեղեցական ժողովոց. յաւել ի վերայ այսոցիկ եւ զուտ եւ ահա պարզի առաջի աչաց ասպարէզ

անդնդասոյց եւ անելանելի յազազս բացախալուծեան քաղաքական իշխանութեան :

Վասն որոյ մնայ առ ժամս Վեհ. Հայրապետաց Հայաստանեայց լինել պահպանողական եւ խտտապահանջ յամուսնալուծական խնդիրքս, հաղիւ ուրեմն ներել երբեմն տմանց յորժամ ծանրակշիւ հանգամանք են համաձայն եկեղեցական օրինաց, բացառաբար թոյլատրուել՝ ոչ յօրինակ ալլոց, եւ մի՛ խանգարել զընտանեկան խաղաղութիւնս բազմաց կամ մեծամասնութեան ժողովրդեան աննախանձելի օրինակաց յաճախութեամբք :

Գոզցես տկարանայր Տ. Մատթէոս Կաթուղիկոս լմբոնել զայսօրիսիս, եւ տեղի տայր զայլթակղութեանց եւ խոսվայոյց զեղծմանց :

Թերանայր Նորին Սրբութիւն յայսպիսի խնդիրս յորժամ պաշտօնավարէր եւ սատ ի Կ. Պօլիս, որոյ վասն քանիցս զժտեալ է ընդ Գէորգ Եպս.-ի (ապա կաթուղիկոս) : Օրինակ լմն : Էին Մատթէոս եւ Գէորգ սիրելի եւ յարգելի յաչս ձանիկ եւ Մաքսուտ ամիրայից բնակելոց յՕրթագեղջ Կ. Պօլսոյ. տոթիւ ճիւղահամարի իրիք խնդրէին գտեղեկութիւնս եւ զխորհուրդս յեպիսկոպոսացոյ. Մատթէոս Գօշ - Միխիթարական հաւաքածոյ կանոնիւք եւ քամահաճոյ լմն մեկնութեամբք տայ զնպաստաւոր կարծիս, որոց ոչ համաձայնի Գէորգ, մանաւանդ տեսեալ Գէորգայ զխարդախել նորա զճիւղահամարական եւ զհասական կանոնս Գօշոյ ստանց պարզելոյ զպայմանս եղեալս թէականս, յանդիմանէ եւ բանակոծ առնէ զՄատթէոս, մինչև միջամտեն Ամիրայքը ե խաղաղեցուցանեն զեկեղեցականոց, տեսեալ զի Մատթէոս լայ :

Հաստատութիւն հոգեւոր ծիսական զպրոցաց ի ուսահայս եւ խնդիրն անցից (1861-5) եւ հաստատութիւն նորոյ կանոնադրութեան Ներսիսեան Գպրոցի (վարժարանի) Տփիսեաց ի Միքայէլ Մեծ-Գուքս փոխարքայէ ունին զհանգամանս զօվելիս ի պատիւ Տ. Մատթէոս Կաթուղիկոսի : Սոյնպէս մերժելն զմիջամտութիւն ուսական կառավարութեան՝ յորժամ առաջարկէր վերջինն ցուցանել կամ յանձնել ինքեան զպարագլուխս փեղարակրացն եւ միարանից Ս. Էջմիածնի ընդ սինդականաց, որք ստորագրեալ զամբաստանութիւնս ստուարաթիւս զՄատթէոսէ բողոք բարձեալ էին առ Ազգ Հայոց եւ առ ուս կառավարութիւն, եւս եւ յուզեալ զխոսվութիւնս եւ զցոյցս անպատուաբերս :

Ուստի անցք այսպիսիք եւ տիրառիթք արդարացուցանեն զգուշակութիւնս եւ զբանս Տ. Ղուկաս Եպս.-ի Կաթ. Տեղապահի յառաջին տեսակցութեան որ ընդ Մատթէոս Կաթուղիկոսի յերեւան քա-

ղաքի: Ըստ որում ի հասանել նորրնտիր Տ. Մատթէոս Կաթուղիկոսի յերեւան (յԱռաջնորդարան – վանս Ս. Սարգիս եկեղեցւոյ, երբեմն անապատ անուանելոյ), որպէս սովորութիւն է, Տեղապահն Կաթուղիկոսական Ղուկաս Եպս. ընդ ալլոց եպիսկոպոսաց փութայ զալ յերեւան առ ի դիմաւորել, միանգամայն խնդրել զհրահանգս եւ զհրամանս Նորին Սրբութեան Վեհ. Կաթուղիկոսի սակս ժամուց ուղեւորութեան, առաջին հանդիսիցն եկեղեցականաց եւ ընդունելութեանց որ ի յաջորդ աւուր ի Մայր Աթոռոջ: Ի ներկայանալն Ղուկաս Եպս. – ի առ Տ. Մատթէոս Կաթուղիկոս, վերջինս այս թեթեւամտութեամբն իմն հարցանէ զՂուկաս՝ «Եկուր քովս նստէ՛: Ինչպէ՞ս ես խիարիկ»: Կամ ի ակնարկել առ զբանս Տ. Փիլիպպոս Եպս. – ի ծայրագոյն նուիրակի Ս. Էջմիածնի, ընդ որում յեայ է Ղուկաս Եպս. Տեղապահ յԱրեղայութեան իւրում, եւ ի քարոզելն Փիլիպպոսի յեկեղեցւոջ ի Նիկոմեդա (յիգնիմիտ), ուր երբեմն Առաջնորդ միճակի յեայ է Մատթէոս Եպս. (Կաթուղիկոս), թարգմանէ գլխաւորաւ ի խիարիկ, զորմէ արդ կամ ի կատակարանել անպատշաճութեամբ իմն: Ընդ այսպիսի տղայական ընթացս եւ բանս Մատթէոսի խոժոռեալ Ղուկասու, յեյաննն արտաքս ի ներկայութենէ Կաթուղիկոսի, տրտմութեամբ իմն վայէ առանձինն եւ ասէ. «վայ մեկ, որ սա կաթուղիկոս է եղել»:

Յոռաջ քան զաւարտել զհամառօտ անցս ինչ Տ. Մատթէոս Կաթուղիկոսի, ոչ աւելորդ համարեմք արձանագրել սողէն եւ զայս: Թէպէտ վայել էր համառօտել զկարծիս մեր եւ զմատենադրական երկոց նորա, ընդ աւելորդ կարծեացն որ ի նպաստ քննադատելի Դաշանց թղթոյ եւ սակս Քշոցի:

Գէորդ Եպս. Վեհապետեան, ձեռնասուն աշակերտ Տ. Յովհաննէս Կաթուղիկոսի Կարրեցւոյ, տեղափոխեալ յԱրցախէ (ի Սիւնեացի Ծուշւոյ) եւ հաստատեալ ի Մատթէոս Կաթուղիկոսէ յԱռաջնորդ միճակին Ատրպատականի (Դաւրիժոյ) ի վերջին ամսն (1864.5), ժամ բարեպատեհ համարի զգոթութիւնս եւ զխոտովութիւնս միարանից եւ սինօգականաց Ս. Էջմիածնի ընդ զէմ Մատթէոս Կաթուղիկոսի, յորում միջոցէ զօրանայր զամ քան զզամ ներքին անիշխանութիւն, եւ խորհրդակցի ընդ սակաւաթիւ կուսակիցս իւր՝ ի հաստատել զաթոռ կաթուղիկոսական իրր ի յաջորդութիւն Թաղէոս առաքելոյ ի Նախափկայ Ս. Ստեփաննոսի վանս Դարաշամբու ի միճակին Ատրպատականի, յԱրտազ գաւառի, մերձ ի հարաւային սահմանն Դաւրիժոյ եւ ի Հ. Նախիջևեան, միանգամայն տալ օծանել զանձն ի կաթուղիկոս, այնու յուսով, զի ի վախճանել Մատթէոսի՝ փութայ Ազգ եւ Միաբանութիւն Ս. Էջմիածնի հրաւիրել

դանձնընծայն եւ զինքնօծն ի կաթուղիկոս ամենայն Հայոց առ ի ջնջել զնոր հերձուածն :

Գլխաւոր աջակից եւ խորհրդակից Գէորգայ լեալ է Մեսրոպ վարդապետ (այժմ՝ Եպոս.) Սմբատեանց ընդ շուշտուկ Յովհաննէս Մուշեղեան վարդապետի Աղեքսանդրապոլցւոյ :

Մինչ այս, մինչ այն, դժուարանան ի ձեռս բերել Մեծ Մաշտոց (Կանոն) Օծման Կաթուղիկոսի եւ զայլ պարագայս եւ զպատրաստութիւնս, եւ լիքէ հաւատասցուք բանից Մեսրոպ վարդապետի Սքմբատեանց, հնարէ եւ սա զգժուարութիւնս այլակերպ եւ ջանայ յետաձգել, մինչեւ վախճանէ Մատթէոս եւ խափանի խորհուրդ Գէորգայ :

Յետ այսորիկ, Գէորգ Եպոս. Վեհապետեան հաստատեալ յԱնդամ Սինօզի եւ ըստ աւագութեան եպիսկոպոսական ձեռնադրութեան լեալ նաեւ Տեղակալ Ատեմապետ Սիւնդի (Կաթուղիկոսի)՝ յուսայր եւ ջանայր լինել կաթուղիկոս, մինչ դժուարանայր վարել զպաշտօնս թեմակալութեան եւ Տեղապահութեան, կօրոյս անմիջապէս զվարս իւր եւ զազգեցութիւն ի Ս. Էջմիածնի շնորհիւ հակառակութեանց անդամոց Սինօզի որք զլանային անգամ յեկեղեցւոջ զփոոց յատուկ (սէղիատէ) իբր ի պատիւ Տեղապահի : Ապաւինեցու պաշտպանութեան ուսական կառավարութեան, զիմեաց միջնորդութեան Միքայէլ մեծ գքսի փոխարքայի Կովկասու, որոյ վասն չոքաւ ի Պորթոմ յամառանոցն փոխարքայի անցեալ ընդ Տփլիս, պատուով մեծաւ, եւ վերաբարձաւ թինկոր եւ յուսալքէպ ի Ս. Էջմիածին :

Դարձցուք արդ խնդրոյ կաթուղիկոսական ընտրութեան եւ Պալատէնիոյ :

Արդ՝ յետ վախճանի Մատթէոս Կաթուղիկոսի, Սինօզ Ս. Էջմիածնի պատրաստեաց ըստ օրինի եւ առաքեաց ի վիճակս Հայոց ընդ ամենայն տեղիս զչրջարեբականս առ ի ծանուցանել թէ զհանգիստ կաթուղիկոսի, եւ թէ զօր ընտրութիւն նորոյ կաթուղիկոսի որ ի 17 սեպտեմբերի 1866 ամի Տեառն :

Այլ նախ քան զընտրութիւն կաթուղիկոսական կանխեաց հրապարակական խնդիր վերաքննութեան Պալատէնիոյ (1836) ի Կ. Պօլիս ըստ դաղանի թիւղրութեանց զարգացելոց երիտասարդաց Հայոց Ռուսիոյ, որոց ի ներկայացուցիչ եղեւ Պն. Մարկոս Աղաբէգեան Զմիւռնիացի, եւ Երեսի. Ժողով Հայոց Թուրքիոյ ստանձնեաց զինդէր զայն վերաքննութեան Պալատէնիոյ, զոր եւ յուզեաց բուն մասնակցութեամբ :

Վասն որոյ հարկն անհրաժեշտ ստիպէ այսու առթիւ ընդարձակել զգառամութիւնն եւ զանցս Պալամեհինոյ :

Յետ տիրելոյ Ռուսաց Վրաստանի մինչեւ ցոահման նահանգին Երեւանու, սկսեալ ի վերջին ամաց ԺԹ-րդ դարու կամ յաւուրց Սիմէոն Կաթողիկոսի յաճախէին յարարելութիւնք եպիսկոպոսաց Հայոց եւ վեղարակրաց ընդ ուսական կառավարութեան, որ զիտէր քաջ հրապուրել զանհորձ եւ զմիամիտ վեղարաւորս եւ զժողովուրդս ըստ անձնիւր արտոժակացն եւ քմաց, եւ նոքօք արդիւնաւորել զքաղաքական նպատակս իւր եւ զջանս : Որպիսեօք յաջողեցաւ նմա, ի ձեռն եւ ավակցութեամբ Յովսէփ Եպս.-ի*) (անուանեալ կաթողիկոսի) Արդութեանց, Ներսէս Եպս.-ի (սպա կաթողիկոսի) Աշտարակեցւոյ եւ այլոց, տիրել Տփլիսեաց, Գանձակու, Սիւնեաց (Ղարապաղու) եւ այլոց, պատրեալ եւ խորտակեալ զմեղիքս թիւնս Հայոց ոմանց որ ի սահմանս Ղարապաղու, (Արցախու - Սիւնեաց) :

Եւ սկսան յառաջացեալ միարանք Ս. Էջմիածնի ջանալ հաստատել զսահմանադրական կառավարութիւն եւ զկանոնադրութիւն ի պէտս Մայր Աթոսոյ եւ տէրւոնի վիճակացն : Զոր եւ կամէին ներկայացուցանել ի հաստատութիւն ուսական կառավարութեան, մինչ Ս. Էջմիածին ընդ Երեւանու զտանէր ընդ իշխանութեան պարսից : Եւ այսու առթիւ կանխեն Երբեմն պատրիարք Կ. Պօլսոյ Գրիգոր Եպս. եւ այլք հարցանել պարհուրդ եւ իմանալ զմիտս Տ. Եփրեմ Եպս.-ի (սպա կաթողիկոս) թեմակալ Հայոց հիւսիսայնոց - Աստորբանու եւ Պեսարապիոյ, որ եւ փութայ պատասխանել եւ յորդորել զնոսա ի զգուշութիւն, ազգ անէ հեռանալ ի հրապուրիչ ձգտմանց եւ ի թելադրութեանց ուսաց, մի՛ հաւատալ նոցա, եւ ազատ պահել զՍ. Էջմիածին եւ զկառավարութիւն կաթողիկոսական ի ուսական միջամտութեանց : Յետ այսորիկ հաստատեն ազգեցիկ ոմանք միարանք զկառավարութիւն եւ զժողով սինոզական ի Ս. Էջմիածին յետ մախճանի Տ. Ղուկաս Կաթողիկոսի յաւուրս անցից Դաւիթ - Դանիէլեան խոովութեանց, մինչեւ նոսի Եփրեմ Եպս. թեմակալն Աստրախանայ յԱթոս Կաթողիկոսութեան եւ չափաւորէ զձգտունս վեղարաւորաց հրապուրելոց եւ Տ. Ներսէս Եպ-

*) Յովսէփ Արդութեանց Եպս. եղի միջնորդ ի մէջ ուս կառավարութեան եւ վերջին քաղաւորի վրաց եւ էտա գատրագրութիւն յԱրքայից վրաց շարունակել մինչեւ ցմախ իւր իշխանութիւնն պաշտպանութեամբ Ռուսաց ընդ զէմ արտաքին յարձակմանց, եւ յետ մահուան տայր իրաւունս ուսաց տիրել իսպառ երկրին վրաց եւ քաղաւորութեան :

ս. — Ի Աշտարակեցոյ : Մինչ՝ այս , մինչ՝ այն , յաջողէ ոուսաց զբաւել եւ տիրել Երեւանու , ընդ նմին նաեւ Ս . Էջմիածնի , յորում ոչ սակաւ թելազիր լինի եւ աջակցի ներսէս Եպս . Աշտարակեցի՝ լեալ Առաջնորդ Տփիսեաց , թէպէտ ոուսական կառավարութիւն ոչ երբեք ունէր պէտս թելազրութեանց ոյր ուրուք եւ իցէ , այլ կարօտէր միայն տեղական օգնութեանց եւ աջակցութեանց :

Տ . Եփրեմ Կաթուղիկոս զիտէր քաջ զուզութիւնս եւ զխարդաւանութիւնս ոուսաց , եւ ի տիրելն նոցա նահանգին Երեւանայ եւ ի բռնանալ տիրել շինական կալուածոց Ս . Էջմիածնի , որպէս յափըշտակեցին յայնժամ վճռականապէս զգիւղն Աշտարակ , սկսաւ զիմասդրել սուսաց , ուզղել զծանրակշիւ զխոզազիրս եւ բողոքել զյափըշտակութեանց ոուս . կառավարութեան , բազդատել եւ գերազասել զկառավարութիւն Մահմետականաց , քան զՔրիստոնէից : Վասն որոյ ջան կայաւ ոուս . կառավարութեան թելազրել սպգեցիկ անձանց Ս . Էջմիածնի , հրապուրել զնոսա այլ եւ այլ խոստմամբք , որպէս զի զիցեն զայլք ի տեղի Եփրեմայ ի Կաթուղիկոս : Խաբկասոք իմն կանխեալ աքտորեալ էր զՆերսէս Եպս . ի թեմակալութիւն Պետարպիտոյ , եւ զայլս ամանս յայլ եւ այլ վայրս , ճարտար իմն հնարեօք եւ ուղղութեամբ :

Մորթեցան ի նախաձեռնութիւն եւ ի ձեռնարկ յանդուզն Ստեփան Եպս . Գեղամեան , Եփրեմ Եպս . , եւ Յովսէփ վարդապետ Տէր-Մարուգեանց , յաւուրս փոխնահանգապետութեան իշխ . Բարսեղի Բեհայութեան յԵրեւան , որոց յարեցան տկարամիտ եւ այլ եկեղեցականք ոմանք եւ իշխանք տեղականք խոնարհեալ ի թելազրութիւնս ոուսական կառավարութեան , եւ պատրուակեալ զտկարութիւնն աշաց եւ զծերութիւն՝ ստիպեն զՏ . Եփրեմ Կաթուղիկոս տալ զհրաժարագիր : Յետ որոյ ձեւացեալ իմն ժողովով շինակաւուս կամ գաւառակաւուս ընտրեն զառաջինն եւ նորամուտ իմն օտար եղանակաւ գերկուս անձինս իբր ի կաթուղիկոսացու , զծերունի Մարտիրոս Եպս . զԿաթուղիկոսականն Տեղակալ եւ զՅովհաննէս Եպս . Կարբեցի զառաջնորդ Տփիսեաց (1831թ .) , (որ ի գաղահի էր թելազիր եւ թեկնածու) , եւ Կայսրն Նիկոզայոս Պալարովիչ ամենաողորմածարար բարեխաբի ԸՆՏՐԵԼ եւ ՀԱՍՏԱՏԵԼ զՅովհաննէս Եպս . ի Կաթուղիկոս ամենայն Հայոց : Իսկ Մարտիրոսի խնայէ՝ առարկեալ զծերութիւն նորա , եւ տուեալ զչքանչան ինչ բարձրօգոյն :

Յարբնտիրն Յովհաննէս նստեալ յաթոս կաթուղիկոսութեան , ազատէ նախ զգլխաւոր եւ զասպահով արդիւնս , իմա՛ զշինական կալուածս Էջմիածնի՝ զՎաղարշապատ , զՅշական , զԵղուարդ , զՄաստաբա եւ զՄողնի ի ոուսական զբաւմանէ՝ տալով նւիրել յօգուտ եւ ի

պէտս Մայր Աթոռոյ եւ զծխահարկս, իմա՛ զգլխահարկս բնակչացն գիւղօրէից մինչեւ ցնոր տնօրէնութիւն, տակաւ հատուցանել զպարտըս Ս. Էջմիածնի, զգիզեալսն յաւուրց Տ. Եփրեմի եւ առթիւ պատերազմաց, ալլ սակայն տկարանայ դիմադրել ներքին եւ արտաքին թերազրութեանց, յարպիսիս նպաստաւորէին եւ փոխադարձ մեքենայութիւնք ներաչսի աքտորելոց, եւ ակամայ կամօք համակերպի ընդ առաջարկութիւն ուսական կառավարութեան առ ի կազմել զԿԱՆՈՆԱՒԻՒՐ Ժողով եւ ընդ պատրաստութիւն կանոնադրութեան (Պալատէնիոյ), զոր եւ ներկայացուցանէ ի վերջոյ ի հաստատութիւն կայսեր ուսաց :

Այլ բազմօք խանգարեալ եւ յեղափոխեալ էր ուսական կառավարութիւն զառաջարկեալն կանոնադրութիւն՝ յարմարեալ նպատակաց եւ օրինաց իւրոց ըստ բազում մասանց, եւ այնպէս հաստատեալ ի 11-ն Մարտի 1836-ի ստորագրութեամբ կայսեր, վերազարձոյց առ Կարբեցի :

Ընկալեալ ցարընտիր Կարբեցւոյ զցարադիր կանոնադրութիւն (1836 թ.) որ վասն կառավարութեան Ս. Էջմիածնի եւ Եկեղեցւոյ Հայոց Ռուսիոյ եւ տեսեալ զչարաչար խանգարմունս օտարոտիս՝ յուզի չարաչար եւ արտասուէ, եւ խնդրէ զխորհուրդ իշխան Բէհրութեանի փոխնահանգապետի Երեւանայ, որ փութայ զգուշացուցանել զՅովհաննէս Կաթուղիկոս ի հակառակելոյ կամ ի մերժելոյ զՊալատէնիայն, միանգամայն յուսադրէ զնա զիմել ուս. կառավարութեան եւ խնդրել զբարեփոխութիւնս յօլաւածոց՝ զորոց զժգոհ էր :

Անճարացեալ Յովհաննու առ ժամս, մանաւանդ երկուցեալ յաւէտ ի ուսական կառավարութենէ, պատրի ի ուսական խոստմանց, ձեւանայ համակերպել կամաց կառավարութեան, զործադրէ զկանոնադրութիւնդ, խորին իմն միամտութեամբ բանայ եւ հաստատէ զՍինօդ, կազմակերպէ զթեմական կառավարութիւնս հանդերձ սարօքն, զի մի՛ ենթարկեցի եւ ինքն վիճակի Տ. Եփրեմ Կաթուղիկոսի : Տայ տպագրել զկանոնադրութիւնդ ի տպարանի Ս. Էջմիածնի ընդ անուամբս «Գրքարագոյնի կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց ԼՈՒՍԱՒՈՐԶԱԿԱՆ (Գրիգորեան ըստ ուսականի) Հայոց Եկեղեցւոյ» :

Առթիւ պատերազմաց եւ օտարընտիր կաթուղիկոսութեան Յովհաննու դադարեալ էին պատրիարքարան Կ. Պօլսոյ եւ Հայք Թուրքիոյ ի յարբերութեանց ընդ Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, վասն որոյ զիմեաց Յովհաննէս Կարբեցի եւ խնդրեաց զաջակցութիւն Հայոց Հնդկաստանի՝ պատրուակեալ զԾ. Նուիրակութիւն, որում կար-

զեաց զՊօղոս Եպս., զոր եւ առաքեաց ի Հնդիկս՝ տուեալ նմա զկարեւոր հրահանգս եւ զպատուէրս :

Իսկ անմիջապէս ի Են Յուլիսի 1836 թ. ընդ համարաւ 212 գրեաց Յովհաննէս Կաթ. Պարօն Բօզէնի Կառավարչի Վրաստանի եւ խնդրեաց առաջարկել յԻւրմէ կողմանէ նախարարի ներքին գործոց առ ի ներկայացուցանել ի բարեհաճութիւն Կայսեր եւ բարեփոխել զյօդուածան 57-րդ, 71-րդ եւ 91-րդ ընդ ծանօթութեան 32-րդ յօդուածոյ, զորոց, որպէս եւ զայլոցն մնայ մեզ մանրամասնել եւ քննադատել այլուր ի կարգի այսր կենսադրութեան Հոգևոր Մնուլի մերոյ :

Կարբեցի յաւելլու զրել յառաջարկութեան իւրում առ Պարօն Բօզէն զայստիկ բանս ըստ ծանօթութեան 32-րդ յօդուածոյ եւ ըստ 71 եւ 91 յօդուածոց :

« Թէպէտ ոչ երեւի զբական կանոն ինչ ի կանոնադրութիւնս « եկեղեցւոյ Հայոց, այլ սակայն ի դարուց հետէ եւ այսր ոչ է « յայտնի եւ ոչ օրինակ մի յաւանդութիւնս եւ ի կոնդակս կաթու- « ղիկոսացն մնացելոց ի Ս. Էջմիածնի, զի յեա մահուան կաթուղի- « կոսի կամ հասարակ վարդապետի ստանային ժառանգք նոցա զսե- « փականութիւնս նոցա : Քանզի մեծ մասն կուսակրօն եկեղեցակա- « նաց Հայոց մտեալ ի վանս Ս. Էջմիածնի ի մանկութեան իւրեանց, « աստ դաստիարակեալ պահպանին ծախուք Մայր վանուցս, ոչ ու- « նելով երբեք ազգականաց նոցա զմասնակցութիւնս ինչ ի ծախսն : « Հասեալ նոցա ի չափահաս վիճակ՝ ստանան զայլ եւ այլ աստի- « ճանս վանականս, կարգին ի սլաշտօնս, եւ յայսպիսում վիճակի « ոչ եթէ միայն ստանան նոքա ոչ երբեք զօթանդակութիւն ինչ յազ- « գականաց իւրեանց, այլ մանաւանդ բազումք օգնեն յաճախ զչքա- « ւոր ծնողաց իւրեանց եւ ազգականաց : Յանչափս վարէին անար- « դարութեամբ կուսակրօն եկեղեցականք ընդ Աթոռոյ Էջմիածնի եւ « ընդ այլոց վանօրէից իւրեանց, եթէ դաստիարակեալ, սնեալ, մե- « ծացեալ եւ շահեալ զգրամս ի շնորհս Աթոռոյ Ս. Էջմիածնի՝ ի « վերջոյ տային այլոց զամենայն զգոյս իւրեանց՝ ի բաց թողեալ « զմերձաւոր ժառանգ իւրեանց զՍ. Աթոռ Էջմիածնի, որոյ են որ- « զիք : Ի պատճառս այսոցիկ հանգամանաց ինդրեմ ես Խոնարհա- « բար ի բարձր գերազանցութենէ ձերմէ միջնորդել եւ ստանալ « զբարձրագոյն յօժարութիւն Կայսեր, որպէս զի համաձայն հնա- « ւանդ սովորութեան մնացնին ի սեփականութիւն վանուց Էջմիածնի « կայք կաթուղիկոսի ամենայն Հայոց եւ վիճակաւոր Առաջնորդաց, « եթէ ոչ ունիցեն զկտակ օրինաւոր, իսկ կայք կուսակրօն եկեղե- « ցականացն դարձցին ի սեփականութիւն վանուց, որում պատկա-

« նէին նոքա: Եւ այսպէս ազատեսցի Աթոս Էջմիածնի յաւելորդ եւ
 « ի մշտատեւ դժգոհութեանց եւ վիճուց, որք ծագեսցին ընդ ազ-
 « զականաց սակս ժառանգութեանց հանգուցեալ կուսակրօն եկեղե-
 « ցականաց միաբանիցն Էջմիածնի վանօրէից ենթարկելոց ընդ իւ-
 « խանութեամբն սորա: Մանաւանդ Աղզ Հայոց, ցրուեալ յայլ եւ
 « այլ երկիրս աշխարհի, պահպանելով ընդ ամենայն տեղիս զնախ-
 « նական աւանդութիւնս եւ զձէսն՝ զայթակղեսցեն յոյժ ընդ զէմ
 « եկեղեցական դասու մերում՝ ընթերցեալ զբացատրեալս յինէն
 « զյօդուածս Պալամէնիոյ ի մասին ժառանգութեանց մնացելոց յետ
 « մահուան կուսակրօն եկեղեցականաց, որով եւ զազարեսցեն միան-
 « զամայն ի տալոյ յօժարեալամ զնուէրս յօդուտ վանուց Էջմիածնի
 « եւ Միաբանութեան նորին:»

Գողցես ժառանգական մասն եւ եթէ էր կենսական խնդիր ի խան-
 զարմունս Պալամէնիոյ ըստ միամիտ զարգացման եւ ըմբռնման
 Յովհաննու Կարբեցոյ, որում ի հեկուկս պատասխանէ Բլուզով նա-
 խարար ներքին զործոց միջոցաւ Պարոն Բօզէնի ի 20 օգոստոսի
 (1836) ընդ համարաւ 177, եթէ . . . « որ ինչ վերաբերի փոփոխու-
 « թեան ծանօթութեան 32-րդ յօդուածոյ եւ 71-րդ եւ 91-րդ յօդուա-
 « ծոց, որովհետեւ փոփոխութիւնդ այդ լիցի բնորոյվին հակառակ
 « սկզբնական օրինաց պետութեան վերաբերելոց այդ խնդրոյ, ոչ է
 « համարձակեալ (նախարարն ըստ ասութեան Պ. Բօզէնի) ներկա-
 « յացուցանել ի բարեհաճութիւն կայսեր զփոփոխութիւն յօդուա-
 « ծոցդ, որ նորոզ հաստատեալ էին Բարձրագոյն Հրամանաւ:

Յետ այսորիկ, համաձայն հրահանգաց Կարբեցոյ միջոցաւ Մ.
 նուիրակ Պօղոս Եպս-ի ոչ դանդաղեցին Հայք Հնդկաստանու, եւ յա-
 կանէ յանուանէ Հայք Կալկաթայու եւ Մատրասոյ, եւ քննեալ ժո-
 զովովք տեղականօք զՊալամէնիա՝ բողոք բարձին առանձին – առան-
 ձին զրութեամբք յանուանս Յովհ. Կաթուղիկոսի եւ նորահաստատ
 Սինօղի, ի 13-ն դեկտ. 1839-ի ի Կալկաթայէ, եւ ի 27-ն Յունվարի
 1840 թ. ի Մատրասէ:

Յասաջ բերեմք աստանոր զպարբերութիւնս զայս ի զրութենէ
 եւ ի բողոքոյ նոցա ուղղելոյ յանուն Սինօղի, առ ի խմանալ, զի . . .
 « Լուսաւորչական Հայք այսոցիկ կողմանց, եւ մանաւանդ այնք, որ
 « են ի Կալկաթա եւ ի Մատրաս, յառանձինն ի սովորական ժողո-
 « վրս իւրեանց յանձն արարեն մեզ պաշտօնատարացս եւ զործակա-
 « յացս եկեղեցեացն վերոյիշեալ երկաքանչիւր քաղաքաց առաւել իմն
 « մտադրութեամբ վերահասու լինել եւ տեսանել թէ՛ իցե՞ն արդեօք
 « ի նմա (ի Պալամէնիա կամ Պօլօէնիա) յօդուածք ինչ, որք ուղ-
 « զակի կամ անուղղակի ունիցին զվերաբերութիւնս առ ընդհանուր

« Ազգ մեր, որով եւ հետեւապէս առ մեզ, եւ կամ թէ ո՞րք իցեն « աչք եւ առ ո՞ր վախճան կարգեալք են» :

Քննեալ են ի նմին յայտնիկ բողոքագրի գյօղուածս 11, 12, 13, 32, 33, 35, 37, 71, 89 եւ 91-րդ (Պալատէնիս) :

Բողոքն երկրորդ ուղղեալ առ Յովհ. Կաթ. է համաձայն առաջնոյն, եւ ի վերջ երկուցունց բողոքագրոց յաւելուն ներկայացուցիչք Հայոց Հնդկաստանի՝ ինչքել ի Կաթուղիկոսէ եւ ի Սինօզէ զբողոքս իւրեանց ներկայացուցանել առ ուսական պետութիւն եւ տալ փոփոխել զքննադատեալ եւ զցուցեալ կանոնս վնասակարս :

Արդ՝ ընկալեալ Յովհաննու Կաթուղիկոսի զայսոսիկ բողոքաթուղթս փութացաւ յՏն օգոստոսի 1840 ամի ընդ համարաւ 81, առաջարկեաց Գոլովին գլխաւոր կառավարչի Վրաստանի առնուլ յուշագրութիւն զթուղթս Հայոց Հնդկաստանի, տալ զլրումն ինչորանաց նոցա, միանգամայն խորհիլ զհնարս փոփոխելոյ զոմանս կանոնս Պալատէնիոյ, որ եւ առաքեաց զառաջարկութիւն Յովհաննու եւ զերկուս թուղթս Հնդկաստանի առ նախարար Բլուզով :

Դիւանագիտական օրաձգութիւնք ուսաց զտին զնոր ասպարէզ բարեյաջող առ ի օրօրել զինչիւրդ վերաքննութեան Պալատէնիոյ :

Քանզի վախճանեալ զորով Յովհաննու Կաթուղիկոսի ի 26 Մարտի 1842 թ. առս կառավարութիւն հնարեաց զպատրուակ նոր եւ ի Մայիսի ի նմին ամի ել հրաման կայսերական քողով զգնութիւն եւ զփոփոխութիւն կարգադրութեանս (Պալատէնիոյ) մինչեւ ընտրեսցի եւ նստցի նոր կաթուղիկոս, որպէս հաղորդեցաւ Սինօզի Ս. Էջմիածնի, ի Կովկասեան կառավարութեանէ ի 13-ն Յունիսի 1842 ամի ընդ համարաւ 563 :

Յետ ընտրութեան եւ զահաւարելոյ Ս. Ներսիսի զԱթոռ Հայրապետական ի Ս. Էջմիածնի, Կուսակալն Կովկասեան Իշխան Վարանցով հաղորդեաց Նորին Սրբութեան մանրամասնարար ի 23-ն Յունւարի 1846 ամի ընդ համարաւ 528, գրեալ զանցս ինչորոշն յարուցելոյ որ վասն վերաքննութեան եւ փոփոխութեանց Պալատէնիոյ, եւ առաջարկեաց՝ որպէս զի Նորին Սրբութիւն փութացէ յայտնել զեղրակացութիւն իւր ըստ ինչորոշք :

Ի պատասխանի որոյ՝ յԳ-ն Մարտի (1846) ընդ համարաւ 62՝ գրեաց Տ. Ներսէս Կաթուղիկոս եւ խոստացաւ Իշխան Վարանցովի քննել խորին ուշադրութեամբ զգործդ եւ հաղորդել ի ժամանակի զիւրն եղրակացութիւն :

Արդարեւ գրեաց Տ. Ներսէս Կաթ. եւ առաքեաց առ իշխան Վարանցով, ի 11-ն Յունիսի 1848 ամի ընդ համարաւ 174, զկարեւոր բացատրութիւն սակս ծանօթութեան 32-րդ յօդուածոյ ընդ 71-րդ,

89-րդ եւ 91-րդ յօդուածոց : Յետ համառօտելոյ զպատմութիւն ա-
 « առջադրեալ զործոյ, յաւելու ասել, զի... «ի Կանոնս հարանց սրբոց,
 « զոր ընդունի եկեղեցի մեր, ... պատուիրեալ է ի Կանոնս Ս. Սա-
 « հակայ Մեծի, ի վարս սրբոց, եւ ի դատաստանազիրս, թէ՛ կրօ-
 « նաւորի ոչ է պարտ ունել զսեփականութիւն ինչ եւ թէ՛ բոլոր
 « գոյք նորա համարին սեփականութիւնք համօրէն միարանական
 « եղբայրութեան, թէ՛ ոչ է պարտ կրօնաւորի տենչալ հարստու-
 « թեան եւ ճորտութեան, եւ թէ ատելի է այս Աստծոյ, թէ՛ որ մը-
 « տան է ի կրօնաւորութիւն՝ բերէ եւ խառնէ ի դանձարան հասարա-
 « կաց զիւրն սեփականութիւն, եւ ոչ երբեք թողու ազգականաց իւ-
 « րոց զժառանգութիւն ինչ, թէ՛ ոչ վայելէ եպիսկոպոսաց փութալ
 « եւ հոգալ զհարստութեանց ազգականաց իւրոց՝ մոռացեալ զբան
 « Բրիտասի Փրկչի մերոյ, զի՛ որ սիրէ զհայր իւր եւ զմայր իւր,
 « կամ զեղբայր իւր, ոչ կարէ լինել իմ աշակերտ. թէ՛ եպիսկոպոս
 « ոք՝ որ հարստացուցանէ զազգականս իւր, համարի լինել յափշ-
 « տակող, թէ՛ զկնէ նա ի պատույ անդի իւրմէ եւ մնայ պատասխա-
 « նատու առաջի ահաւոր դատարանի, ի մի բան, Դատաստանազիրն
 « Մխիթարայ Գօշի ասէ. ի վախճանել կաթուղիկոսի՝ դառնան ամե-
 « նայն կայք նորա ի սեփականութիւն եկեղեցւոյ եւ վանուց. այս
 « լիցի կանոն կամ օրէնք եկեղեցւոյ : Իսկ ի վախճանել կրօնաւորի,
 « եթէ գտցի առ նմա վարդապետ կամ պաշտօնեայ (փոքրաւ^որ),
 « հասանի նոցա որ ինչ ժառանգութիւն թողեալ իցէ, եւ ոչ երբեք
 « ազգականաց կամ եղբոր նորա :»

Ըստ այսմ շարունակեալ Ներսիսի եւ ընդարձակեալ զբացատրու-
 թիւնս իւր, ասէ. « զի համայն ստացուածք կրօնաւորի են եւ գու-
 « մարին ի յօժարակամ տրոց եւ ի նուիրանաց Ազգի, որ տայ այնու
 « նպատակաւ, զի այն ամենայն մնայ յօգուտ եկեղեցւոյ եւ վանուց,
 « որք կառավարին այսպիսեօք միջոցօք՝ եւ ոչ երբեք ունին զառան-
 « ձին կալուածս կամ զառանձին զգրամագլուխս, որպէս վանք Ս.
 « Էջմիածնի եւ եկեղեցի մեր որ յերուսաղէմ կառավարին այդպի-
 « սեօք, զորս ստանան ի ձեռս կրօնաւորաց կամ վանականաց : Գող-
 « ջի՛ր համօրէն ամենայն կալուածք եւ գոյք վանուց Ս. Էջմիածնի
 « եւ այլոց վանօրէից մերոց հոշակաւորաց են սեփականութիւնք ա-
 « ռաջնոյն կաթուղիկոսաց, որպէս զմեծ մասն կալուածոց վանուց
 « Էջմիածնի ի ձեռն բերեալ արդիւնաւորեալ է բարեյշուատակ Գրի-
 « զնր կաթուղիկոս մեծանուն :»

« Ասա խնդիր է. եթէ որ կրօնաւորի՝ հրաժարի ի սեփականու-
 « թեանց իւրոց եւ իրաւունք են նորա թողուլ զայն ամենայն մեր-
 « ձաւորաց իւրոց, ապա ուրեմն կարելի^ո է թողուլ, որ նա իրաւու-

« նրա կալցէ տալ կամ աւանդել կտակաւ ազգականացն եւ զկայս
 « (զգոյս) ստացեալս ի վանուց: Վասն որոյ պահպանի սկսեալ ի
 « Հնոց մինչեւ ցայսօր կանոնդ եկեղեցական, եթէ առանց բացառու-
 « թեան կրօնաւորք եւ հոգեւոր իշխանաւորք ունին իրաւունս հիմ-
 « նելոյ եւ կառուցանելոյ զկարեւոր շինուածս ի վանօրայս, այնու
 « պայմանաւ եւ եթ՝ զի թողցեն յօգուտ եկեղեցւոյ: Այսպիսի կա-
 « նոնք Եկեղեցւոյ Հայոց համաձայն են կանոնաց եւ օրինաց գտա-
 « նելոց յԹ՝-րդ հատորջ հաւաքածոյից կանոնաց ուսաց (1842 թ.)
 « որ վասն ուստական եւ հոռոմէազաւան եկեղեցականաց, եւ փո-
 « փոխութիւն կամ զանցառութիւն այսոցիկ կանոնաց հիմնաւորաց
 « կարին զրիկել զվանս եւ զմենաստանս ի համայն կենսական միջո-
 « ցաց:»

Արդ՝ եկեալ յատկապէս ի ծանօթութիւն 32-րդ յօդուածոյ եւ ի
 յօդուածս 71, 89 եւ 91, շարունակէ Տ. Ներսէս Կաթ., համաձայն
 վերոյիշեալ կանոնաց եկեղեցւոյ մերոյ, եւ ըստ կարծեաց հանդու-
 ցեալ Յովհաննէս Կաթուղիկոսի, ումանց հոգեւոր իշխանութեանց,
 եւ համաձայն նկատողութեանց Հայոց Կայկաթայի եւ Մատրասու,
 Ենթադրեմ ես փոխել զիմաստս յօդուածոցն վերոյիշելոց, այնպէս
 զի համօրէն ամենայն անձինք վանականք՝ սկսեալ ի կաթուղիկոսաց
 եւ յեպիսկոպոսաց մինչեւ պարեգայն յետին, ոչ է պարտ երբեք ունել
 նոցա զսեփականութիւն անշարժ կամ շարժական, եւ որոց յիցին՝
 ժառանգեալ կամ մնացեալ յետ մահուան, պատկանին ոչ երբեք ժա-
 ռանդաց նոցա, այլ վանուց, որում ստորագրեալ է միարանկցու-
 թեամբ, կամ մնան յօգուտ եկեղեցւոյ՝ ըստ անօրէնութեան Սինդի:

Պարտ է տարածել զգօրութիւնս օրինացս այսոցիկ եւ ի վերայ
 գործոց, որք ծագեցին յետ 11-ի Մարտի 1836 թ. (յետ հաստատու-
 թեան Պայտօէնիոյ):

Ի կարգի եւ ի վերջ բանից իւրոց շեշտեալ Ներսիսի ի նորոյ
 գահնարկութիւն իւր ի վերջին պարբերութիւն, խնդրէ յիշխան Վա-
 րանցովէ միջնորդել առ Կայսր եւ բարեխօսել զչորս յօդուածս վե-
 րոյիշեալս. խոստացեալ պարապել եւ ի քննութիւնս յօդուածոցն
 մնացելոց:

Որով տայ Տ. Ներսէս Կաթ. միամտարար գառիթ նոր զիւսան-
 ցիտական օրաձգմանց, որպէս հաստատեաց փորձն, զի խորհրդա-
 րան գլխաւոր կառավարութեան Կովկասու քննեալ զբացատրութիւն
 գայս Տ. Ներսիսի Կաթուղիկոսի, անհրաժեշտ համարի քննել հաւա-
 քարար եւ ի միասին զբացատրութիւն ամենայն յօդուածոց փոփո-
 յակելոց, վասն որոյ եւ օրագրութեամբ ի 10-ն սեպտ. 1848 թ. որո-

չեաց յետաձգել զայս զործ մինչև հասցէ խոստացեալ բացատրութիւն փոփոխելի յօգուածոյն :

Ոչ է պարտ զարմանալ, զի յետ այսորիկ յամի Տեառն 1849 ել հրաման բարձրագոյն փութալ աւարտել զայս զործ վերաքննութեան, եւ Տ. Ներսէս Կաթ. ընկալաւ զպղարար առաջադրութեանս առ ի հաղորդել փութով զխոստացեալ բացատրութիւն այլոց յօգուածոցն փոփոխելեաց (Պալատէնիոյ) :*)

յ30-ն Ապրիլի 1851 թ. ընդ համարաւ 4275, ի զիւանատանէ փոխարքայի .

ի 23-ն Մարտի 1853 թ. ընդ համարաւ 2661, ի Վարանցով իշխանէ .

ի 5-ն Մարտի 1855, ընդ համարաւ 2518, ի զիւանատանէ փոխարքայի .

ի 19-25 Ապրիլի 1855 թ. ընդ համարաւ 780, ի փոխարքայ Մուրավիէովէ .

ի 13 օգոստ. 1855 թ. ընդ համարաւ 1828 .

ի 12 սեպտ. 1855 թ. ընդ համարաւ 2261 .

ի 25 սեպտ. 1855 թ. ընդ համարաւ 2957 .

ի 28 նոյեմբ. 1855 թ. ընդ համարաւ 3418, յիշխան Բարսեղ Բէկ-պութեանէ ի պաշտօնակատարէ փոխարքայութեան .

ի 21-ն դեկտ. 1855 թ. ընդ համարաւ 11036 .

ի 21 յունվարի 1856 թ. ընդ համարաւ 486 ի զիւանատանէ փոխարքայի .

ի 18-ն փետրվ. 1856 թ. ընդ համարաւ 704 .

յ31-ն Մայիսի 1856 թ. ընդ համարաւ 2131 .

ի 13-ն յուլիսի 1856 թ. ընդ համարաւ 2782, ի Բէկհրութեան Իշխանէ ի կատարելէ քաղաքական մասի կովկասեան փոխարքայութեան :

Որոց պատասխանէ Տ. Ներսէս յաճախ լուծեամբ եւ զանցառութեամբ, մերթ խոստացեալ հաղորդել ընդ փոյթ զպահանջեալն եւ ջանայր արդարացուցանել զանձն, զի չարաչար զբաղեալ է ի Կաթուղիկոսական զործս, մինչև եհաս վախճան կենացն :

Յետ մահուան Տ. Ներսիսի կաթուղիկոսի, գտեալ Սարգիս Եպս. Զալալեան թեմակալ Առաջնորդն Տփիսեաց ի մէջ թղթոց Նորին Սըրբ-

*) Բարեյիշատակ վահան վարդ. Բաստամեանց Թիփլիսեցի իրաւաբանն յառկապէս գրադեալ է ի հին գործս զիւանատան Սինօզի Ս. Էջմիածնի ըստ այսմ խնդրոյ վերաբնութեան Պալատէնիոյ. եւ անոր զիրութեամբ քաղեցաք գտեղեկութիւնս գայտսիկ :

բութեան զսեւազրութիւն Պալատէնիոյ հանդերձ այլ եւ այլ փոփոխութեամբք, (որոյ պատճէն գտանէր եւ ի գիւնանատան Սինոզի՝ առանց աննկոյ զկարեօր վաւերական ինչ նշան եւ զհաւատարմութիւն Ներսիսէ, որպէս տեսաք մեք ի Ս. Էջմիածին), առաքեաց զայն առ փոխարքայ Կովկասու Իշխան Պարեատինսկիյ ի 24-ն Մարտ 1857 թ. ընդ համարաւ 27 :

Ի յաջորդել Տ. Մատթէոսի Ա. յԱթոս Կաթուղիկոսութեան, զլիաւոր կառավարութիւն Կովկասու ի դիմաց եւ ըստ հրամանի Իշխան Պարեատինսկի փոխարքայի հազորդեաց Նորին Սրբութեան ի 12-ն սեպտ. 1853 թ. ընդ համարաւ 6248 զմանրամասնութիւնս խնդրոյ եւ անցից վերաքննութեան Պալատէնիոյ եւ առաջարկեաց նորին սրբութեան քննել զինդիրս Հայոց Կայիթայի եւ Մատրասու, բարեփոխել կամ լրացուցանել զիտիտիսիլի յօգուածս համաձայն պահանջմանց ներկայ ժամանակի, եւ զեղբակացութիւն իւր ընդ նոր ծրագրոյ Պալատէնիոյ ներկայացուցանել փոխարքայի Կովկասու, որպէս զի հաստատեսցի բարձրագոյն հրամանաւ եւ վերջացի խնդիրն վերաքննութեան :

Պարապեցաւ Տ. Մատթէոս Կաթուղիկոս ի քննութիւն հնոյ կանոնադրութեան եւ ի պատրաստութիւն նորոյն, յորում խրախուսէին գնա զարգացեալ Հայք եւ երիտասարդք Ռուսիոյ: Պատրաստեալ զկանոնադրութիւն նոր, առաքեաց սուսական կառավարութեան, որպէս յիշեցաք վերագոյն, առանց ունկն տալոյ խնդրանաց Սինոզի թեկազրելոյ ի Պրոֆուրօրէ, եւ եթող անպատասխանի զգրութիւնս որ ի 12-ն յունվարի 1863 թ. ընդ համարաւ 20 (որով առաջէր գամենայն զգործս վերաբերեալս վերաքննութեան Պալատէնիոյ առ Մատթէոս Կաթ. համաձայն կոնդակի նորա որ ի 16-նդեկտ. 1862 թ. ընդ համարաւ 1702, վասն որոյ հրահանդեցաւ Սինոզ զիմել սուսական կառավարութեան ըստ այսմ խնդրոյ ի 15-ն օգոստոսի 1864 թ. ընդ համարաւ 1272, որում ձեւացոյց սուս. կառավարութիւն եւ եւ զպատասխանի բացասական ի 31-ն օգոստոսի 1864 թ. ընդ համարաւ 132, մերժեաց զինդիր Սինոզի՝ բացատրեալ իրր զի բարձրագոյն հրամանաւ յանձնեալ է քննութիւն ոմանց յօգուածոց փոփոխելեաց Պալատէնիոյ եղական նկատողութեան յատկապէս եւ նախ Ներսէս եւ ապա Մատթէոս Կաթուղիկոսաց, վասն որոյ ոչ կարէ Սինոզ ստանալ եւ քննել զկանոնադրութիւն կազմեալն ի Մատթէոս Կաթուղիկոսէ առանց քոյլաւորեան վերիմ իշխանութեան, եւ թէ կանխեալ առաքեալ է կովկասեան կառավարութիւն զնոյն կանոնադրութիւն (Պալատէնիա) նոր նախարարի ներքին գործոց, եւ մը-

նայ բարձրագոյն կամաց յեա այսորիկ տալ խնդրոյն զշարունակելի ընթացս :

Այսու հրահանգէր ուսու. կառավարութիւն զՄինոզ յարուցանել զխնդիր նոր եւ զբողոքս, զոր եւ արդիւնաւորէր արդեօք, եթէ ոչ վախճանէր Մատթէոս Կաթ. եւ սրահանջէր զհաստատութիւն առաջարկելոյ կանոնադրութեան :

Զկնի վախճանէ Տ. Մատթէոս Կաթուղիկոսի, ձեռնասուն աշակերտ նորա Տ. Անդրէաս Եպո. վերադարձեալ ի Կ. Պօլիս, աջակցի ի զազանի եւ թելադրէ որոց արժան էր՝ յուզել զխնդիր վերաքրննութեան Պաթժէնիոյ, որպէս ջանային յուսամիտ երիտասարդք եւ զարդացեալ անձինք Հայոց Ռուսիոյ միջոցաւ Մարկոսի Աղարէզեան եւ այլոց, առարկեալ եւ պնդեալ ի հաստատութիւն կանոնադրութեան առաջարկելոյ ի Մատթէոսէ, եւ բաղձային տալ Հայոց Ռուսաստանեայց զկանոնադրութիւն ազգային ըստ սահմանադրութեան Հայոց Թուրքիոյ :

Երեւոյ. ընդհ. Ժողով Հայոց Թուրքիոյ եւ Պատրիարքարան Կ. Պօլսոյ ստանձնեալ զայս խնդիրս կենսական եւ կարեւորագոյն, ջան կալաւ արդիւնաւորել :

Իսկ ուսական կառավարութիւն ոչ զանգաղէր եւ ոչ զաղարէր ներհակամիտ եւ ի հակասեալ ջանիցն եթէ միջոցաւ դեսպանատան Կ. Պօլսոյ եւ եթէ միջոցաւ Մինոզի Ս. Էջմիածնի, որում թելադրեաց ըստ հրահանգացն ուղղելոց ի զազանի առ Պրօքուրօր Կարապետ Վասակեան զրել առ Պօղոս Եպո. Պատրիարք ի 21-ն Մայիսի 1866 թ. զբողոքածեւ թուղթ ինչ առիթ առեալ զյետաձգութիւն պատասխանեալ Պատրիարքարանի սակս մասնակցելոյ ընտրութեան Հայոց Կաթուղիկոսի՝ յաջորդի հոգելոյս Տ. Մատթէոսի : Ըստ որում Մինոզ նշանակեալ էր զօր ընտրութեան նորոյ կաթուղիկոսի ի 15-ն սեպտեմբերի 1866 թ. զոր եւ ընդհանուր շրջաբերական թղթովք հարդրեալ որպէս վիճակացն Ռուսաստանեայց, Պարսկաստանեայց եւ Հնդկաստանեայց, Ս. Երուսաղէմի, նոյնպէս Պատրիարքարանի Կ. Պօլսոր ընդ զուժի մահուան կաթուղիկոսի ի 6-ն սեպտեմբեր 1865 թ. առաքեալ ի ձեռն ուսական դեսպանատան Կ. Պօլսոյ եւ Պատրիարքարան կանխեալ էր խնդրել ի Մինոզէ զտեղեկութիւն ի 19-ն Հոկտ. (1865 թ.), որում հաղիւ պատասխանի եւ Մինոզ ի 17-ն դեկտեմբեր ամսոյ :

Ահաւասիկ ... « Մինչ այս, մինչ այն, յուրք տարաձայնութեանց ոմանց ի հայազգի հասարակութենէ քաղաքիդ (Կ. Պօլսոյ) « եւ խնդիրք յարուցեալ անտեղաբար առ ի փոխարկել զկանոնադրութիւն 1836 ամի, որ յազապս գործոց վարչութեան Հայաս-

« տանեայց եկեղեցւոյ ի Ռուսաստան յառաջ քան զընտրութիւն նո-
 « րոյ կաթուղիկոսի իրբեւ հակառակ կանոնաց եկեղեցւոյն, եւ մա-
 « նաւանդ կաթուղիկոսական իրաւանց, եւ գրութիւնք ըստ այսմ
 « յաճախեալք ի տեղիս տեղիս՝ (զորոյ զմիում պատճէնն հարկ հա-
 « մարեմք առաքել ահա առ սրբազնութիւն ձեր) վշտացուցանեն ա-
 « պաքէն զողջամիտսն Ազգիս, մանաւանդ զուխտ Միաբանութեան
 « Աթոռոյս:»

« Այլ թէ վասն է՞ր առաջարկութիւն ինչրոյն համարի անտեղի
 « եւ տարադէպ, զայլ համարեմք բացատրել յաստէն համառօտիւ
 « առ լուսաւոր գիտութիւն բարձու Սրբազնութեան ձերոյ եւ համայն
 « Հայազնեայց հասարակութեան կողմանցդ:»

Շարունակեալ Սինդի վաստարանել ի պաշտպանութիւն Պալա-
 « ժէնիոյ՝ գրելով, զի յաւուրս իշխանութեան բարբարոսաց խանդա-
 « րեալ էին ամենայն կարգք եւ կանոնք, հեծէր վարչութիւն էջմիած-
 « նի ընդ ծանր - ծանր պարտուք եւ վշտօք, յորոց ազատեցաւ չը-
 « նորհի բարեխնամ կոտավարութեան ռուսաց եւ հաստատութեան
 « կանոնադրութեան 1836 ամի, յաւելու ասել. « իրբեւ հրահանգ ուղիղ
 « եւ անսայթաք գործավարութեան Հոգեւոր տեսչութեան՝ ձեռնտու
 « դասու Աթոռոյն վերականգնել ի խաթարեալ գրութենէ անդի, նա
 « կանոնաւորէ դճափ, գրահման իրաւանց եւ գործոց անձնիւր հո-
 « դեւոր տեսչութեան... Այլ ոչ բնաւ դնէ խափան, որպէս կարծեն
 « ամանք ընդ էութեան իրաւանց եւ արտօնութեանց կաթուղիկոսաց,
 « եթէ զիտիցեմ սոքա վարել զգաւազան Հայրապետական իշխանու-
 « րեան իւրեանց իրաւամբք եւ արդարութեամբք, եւ ոչ զոյզն ինչ
 « գրժէ անկախութեան եկեղեցւոյն»:

Շարունակէ սինօք գրել զողջես ի բերանոյ ռուսական պետու-
 « թեան. «Թերութիւնքն ինչ, որ բնականաբար գրեթէ կցորդ են
 « ընդ նորահաստատ եւ անփորձ ձեռնարկութեանց ի վեր երեւեալք
 « եւ ի կանոնադրութեան անդ, վերաբերին միայն արտաքին իրո-
 « զութեանց հոգեւոր տեսչութեան եւ քաղաքական իրաւանց կղե-
 « րաց եկեղեցւոյն եւ ոչ բնաւ կրօնական մասին. օրինակի ազազաւ
 « բողոք ընդ ակնարկութեան Կալկաթարնակ հայոց ընդ դէմ յօդ-
 « ուածոց ինչ, որ յաղաքս ստացուածոց կուսակրօն հոգեւորակա-
 « նաց եւ դոյից եւ ժառանգական իրաւանց նոցա առ այն»:

« Ի վերայ այսր ամենայնի՝ եւ քանզի ամենայն կարգ եւ օրէնք
 « ենթադրին փոփոխութեան ընդ յեղափոխութեան եւ պայմանաց
 « ժամանակի, ուստի եւ պետութիւն Ռուսիոյ ըստ մեծի շնորհաց եւ
 « ինամոց իւրոց առ Ազգն եւ առ եկեղեցին Հայոց, ոչինչ զլացաւ
 « եւ զայն իրաւունս, զի կաթուղիկոսունք Ազգիս կարեցին բերել

« յուզողութիւնն եւ ի լրութիւնն այնոցիկ թերութեանց, որք հակա-
 « սակ կային բնադիր կանոնաց եւ աւանդութեանց եկեղեցոյն մե-
 « ռոյ, բայց թէ անփոխութիւնն նորա ցալս վայր ժամանակ, դայ-
 « նու կարեւոր իրօք զամս աւելի քան զքսան, ո՛րպաի ի նմին յան-
 « ցաւոր»:

« Յետ այսր ամենայնի՛ զինչ այլեւս կէտ նպատակի խնդրայոյզ
 « արանցդ այսոցունց, որք փոփոխութիւնն կանոնադրութեան ցան-
 « կան, եւ զի՞նչ յարարերութիւնն ընդ մէջ զործոյն ընարութեան
 « կաթուղիկոսի եւ ընդ մէջ փոփոխութեանն կանոնադրութեանն,
 « մինչդեռ երկու երեք տարբերք յիրերաց եւ ի միևնոյն ժամանա-
 « կի իրաւասութեանն նոյն խակ կաթուղիկոսաց ենթակայ: Սինօզս
 « զժուարանայ զիտել, այլ որպէս զօրէ իմաստասիրել, թուի իմն
 « լինի զբղիս թելազրութեան օտարոսի ազդեցութեանց եւ հայ-
 « թայթանք ոմանց յազլայնոց մերոց, ըստ մեծի մասին յերիտա-
 « սարդաց ամբաստանօրէն զինուորելոց ընդ զէմ բարեաց Աթոսոյս
 « եւ պետութեան Ռուսոյ, յորս կացին եւ վայելիցին նորա, եւ
 « այն անտարակոյս ակնկալութեամբ անձնական օգտի»:

« Հաւատալ եւ հեռեւել բանից նոցա, որոց շատացեալ թիւր
 « եւ թոյլ հարեւանցի իմն ծանօթութեամբք զարտաքին միայն կա-
 « սալարութենէ մերմէ, անգիտակ եմ բնաւ հանգստանաց ներքին
 « դրութեան Արձողոյս զյարարերութեմէ եւ զխնամոց Տէրութեան,
 « առ նա, կարէ սերմանել զգժտութիւնն ի հեռարնակ հայազիս
 « մեր, վշտացուցանել զեռանդուն զզացմունս բարեմիտ հասարա-
 « կութեան առ Աթոսն, նուագեցուցանել զընդոքս խնամոց տէրու-
 « քեան եւ յապաղել թերեւս զործ բնորոշութեան կաթուղիկոսի յան-
 « զարմանելի կորուստ բարեաց Աթոսոյս եւ ի կարի մնաս եկեղե-
 « ցական վարչութեան մերոյ առհասարակ»:

« Իսկ պատակտել զհամազգային մեր զիա՞րզ մտարերեցին յայն
 « եւ ոմանք փոխադրութեամբ կաթուղիկոսական ի Սիս, նշանակէ
 « խախտել բնաւ զբարոյսական շողկապ Ազգին, որ ի սիւրսս աշ-
 « խարհաց, կապտել զգարաւոր փառս յԱթոսոյս Սրբոյ Էջմիածնի,
 « որ է միակ ապաստանարան յուսոյ Ազգիս եւ տեղի պարծանաց
 « նորա»:

« Ըստ այսմ անտարակոյս եմք, Սրբազան Տէր, զի յոյզք խրնդ-
 « բոյն առաջի սղջամտաց Ազգիս, գատեսցի բնաւին անտեղ եւ տա-
 « բապայման, եւ ինքեանք իսկ խնդրայոյզք հասու լեալ խորին կշռա-
 « դատութեամբ, հեռատես զգուշութեամբ բանից մերոց՝ չըջեսցին
 « ի նոյն, զօղեալք, լծորդեալք ընդ մեզ միախորհուրդ սիրով հա-

« մակրութեան առ ի շահ լրութեան Ազգիս եւ Աթոսոյս միանդա-
« մայն» :

« Այսու բարեմիտ զգացմամբք Սինդոն Սրբոյ էջմիածնի
« վերստին հրաւիրէ զձեզ, Գերապատիւ Տէր, զի զուք իրբեւ նա-
« խանձաւոր փառաց եւ հաստատութեան Հայրապետական գահիս,
« փոյթ ի մէջ առնուցուք ամենահնարաւոր միջոցօք խափան գնել
« չարեացն, որ կարէ ստանալ Աթոսոյն եւ Ազգին յերկպառակին ի
« ներհակամիտ կարծիս՝ յայսմ համազգային իրի շրջելով զուշ
« նպատակի համայն հայագնէից մերոց, որք ընդ Ձերով տեսու-
« թեամբ ի միարանութիւն սիրոյ, եւ ի մտադիր եւ ի միակամ ըն-
« տրութիւն նորոյ Հայրապետի, նոյն իսկ կարգաւ որպէս բացա-
« տրեալ է ի յիշատակեալ առաջարկութեան Սինդոնի առ Ձեզ եւ
« առ կեղբոնական ազային վարչութեան, վասն զի ի գալ հասանել
« աչսր համայն պատգամաւորաց ի հեռաւոր վայրաց ըստ ժամա-
« գրութեան, ընտրութիւն Կաթուղիկոսի ունի կայանալ անմիջապէս
« եւ ստանց յետաձգութեան, որ յայնժամ համարիցի յանկարելեաց
« սակի, եւ անձն ընտրեալ բարձրամբ ներկայ պատգամաւորաց ծա-
« նիցի ըստ օրինի ընդհանուր Կաթուղիկոս Ազգիս, եւ զայնմանէ,
« զոր ինչ հաճեսցի սրբազնութիւն ձեր տնօրինել ըստ այսմ կարե-
« տորագոյն իրի, շնորհ արասցէ ծանօթս ապ Սինդոնի կարի փու-
« թով, հանդերձ հանդամանապատուժ բացատրութեամբ պարագա-
« յիցն, զձազրկելոց ի պատճէնի նամակին՝ որ զոյգ ընդ սմին առա-
« բի» :

Յետ ասելոյ, զի նամակը պատճէնեալ եւ առաքեալ ընդ գրու-
թեան Սինդոնի պատրաստեալ էր զողցես ի ուռսական դեսպանա-
անէ Կ. Պոլսոյ, որպէս եւ գրութիւնդ Սինդոնի սեւազրեալ պատ-
րաստեալ ի դիւանատանէ փոխարքայութեան Կովկասու, յաւե-
լումք համառօտեալ ասել նաեւ, զի պատասխանէր Տ. Պօղոս
արքեպ. Պատրիարք Կ. Պոլսոյ գրութեամբ որ ի 15-ն Յունիսի՝
առաքեալ միջոցաւ եւ գրութեամբ գլխաւոր կառավարութեան փո-
խարքայութեան 9-էն Օղոստոսի (1866) եւ ընդ նմին հաղորդէր Սի-
նդոնի գծրագիր Յանձնաժողովոյ որ վասն կաթուղիկոսական
խնդրոյ եւ վերաքննութեան Պալատէնիոյ (1836) :

Արդ՝ Եկեսցուք համառօտեալ զանցս վերաքննութեան Պօլսոսե-
նիոյ (Պալատէնիա) որ աստ ի Կ. Պոլիս :

Որպէս ասացաք վերագոյն, զի առթիւ Կաթ. խնդրոյ եւ նորոյ,
ընտրութեան՝ ստանձնեաց Երեսփ. Ընդհ. Ժողով Հայոց Կ. Պոլսոյ
(իմա՝ Թուրքիոյ) զինդիր վերաքննութեան կանոնադրութեան 1836

ամի, ուստի եւ կարգեաց զՅանձնաժողով յատուկ՝ բաղկացեալ յիօթանց անդամոց, որք են՝ Արիստազէս Եպս. (կրթեմն Առաջնորդ Անտրիանուպոլսոյ), Ներսէս Եպս. Վարժապետեան, Յովհաննէս Վարդապետ Սեթեան, Սարգիս Էֆ. Աղաբէզեան, Ստեփան Պէյ Արսլանեան, Կարապետ Իւթիւճեան եւ Գրիգոր Մարկոսեան :

Յանձնաժողովն Կաթողիկոսական համաձայն որոշման եւ հրահանգաց Ընդհ. Ժողովոյ որ ի 24-ն Դեկտեմբերի 1865 ամի կարգեալ զմեռտան նիստս առ ի քննել եւ տեղեկագրել ա. զվիճակ Կաթողիկոսութեան Ս. Էջմիածնի, բ. զներկայ եղանակ ընտրութեան կաթողիկոսի՝ համեմատեալ ընդ նախնի աւանդութեանց եւ սովորութեանց, օրինաց եւ կանոնաց Ազգի եւ Ս. Եկեղեցւոյ Հայաստանեայց եւ գ. որոշել զեղանակ մասնակցութեան Հայոց Տաճկաստանի ընտրութեան Կաթողիկոսի, ի 23-ն Ապրիլի (1866), ամսօրէ եւ ստորատէ զիւրն տեղեկագիր յաշխարհիկ բարբառ եւ մատուցանէ Ազգ. Ընդհանուր Ժողովոյ Կեդրոնական Վարչութեան Հայոց Տաճկաստանի, եւ որպէս հաղորդէ Յանձնաժողովն, այսու առթիւ՝ « ամէն բանէ յտաջ Ս. Էջմիածնի եւ Ռուսաստանի Հայոց մէջ « բաւական ժամանակ ընակող ու այս մասին ներհուն ճանչցուած « եկեղեցական եւ աշխարհական ազգայնոց զիմեց, եւ յանուն Ազգ. « գին եւ ի սէր ճշմարտութեան տեղեկութիւն խնդրեց վերսլիշեալ « կէտերուն վրա» (Տեղեկ., Կոնս 3-4) :

Ստորագիր առաջին մասին Տեղեկագրոյ Կաթ. Յանձնաժողովոյ է. « Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան արգի միճակը հետագած « է նախկին, այսինքն՝ բուն Հայաստանեայց Կաթողիկոսական « միճակէն՝ իրաւասութեան Հայրապետական անկախութեան եւ ե- « կեղեցեաց տեսչութեան նկատմամբ» :

Եւ յուելու ասել .

« Ըստ որում Ամենայն Հայոց Կաթողիկոսը զրկուած է ամե- « նայն Հայոց եկեղեցեաց եւ ամենայն Հոգեւոր Առաջնորդու- « թեանց վրայ ունեցած օրինաւոր իրաւասութեան իշխանութենէն, « զոր Առաքելական եւ Լուսաւորչական յաջորդութեամբ ի Հոգւոյն « Սրբոյ օծութենէ ընդունած է» :

« Ըստ որում չի կարող իր ստորագասեալ միճակներուն հետ « պարտ ու պատշաճ հաղորդակցութիւնն ու յարաբերութիւնն ա- « զատօրէն գործադրել» :

« Ըստ որում չէ կարող անկախ ու զուտ հոգեւոր խորհրդական « ժողով մը ունենայ» :

« Վասն զի իրեն ու ստորագասեալ գործակից ժողովոյն իրա-

« ւանց սահմանները շփոթեալ են » : « Վասն զի չէ կարող ի Գրիս-
 « տոսէ իր Հովուութեանն ու պատասխանատուութեան յանձնուած
 « Հօտին հոգեւոր Առաջնորդները ինքնին կարգել ու արձակել ըստ
 « լուսաւորչական եկեղեցւոյ կարգադրութեան » : « Վասն զի նոցա
 « վրա ունեցած անընդմիջական Հոգեւոր Իշխանութիւնը կամ բնաւ
 « չէ կարող կամ խիստ դժուարաւ կարող է գործադրել » :

« Վասն զի չէ կարող հոգեւոր հաստատութեանց յարատեւ պայ-
 « ծառութեան համար Ազգին զբամովը հաստատուն կալուածներ
 « գնել » :

« Ասոնք անցեալ երեսուն տարիներուն մէջ մինչեւ ներկայս
 « պատահած անցից ճշգրիտ պատմութիւններէն եւ Հայրապետա-
 « կան թղթակցութիւններէն եւ ականատես արժանահաւատ եկեղե-
 « ցական եւ աշխարհական անձերէ ստուգուած են » ...

« ... Անցեալ դարուց մէջ ալ նմանօրինակ մէկ քանի դէպքեր
 « եթէ տեսնուին, գիտնալ պէտք է, որ Եկեղեցին զանոնք միշտ իբր
 « ապօրինաւորութիւն նկատած է : Սակայն երեսուն տարիներէ ի
 « վեր՝ արդի վիճակը օրինաւորութեան կերպարանք առած է զօրու-
 « թեամբ Պալատէնիա անուն նոր կարգադրութեան մը, որ մէկ քա-
 « նի եկեղեցւոյ կարգաց անհմուտ անձերու ձեռք առաջարկուած է
 « եւ խմբագրուած եւ որուն դէմ որչափ Երանաշնորհ Ներսէս եւ
 « Մատթէոս Կաթուղիկոսունք եւ Հնդկաստանի ազգայինք բողո-
 « քած ալ են, ի վերայ այսր ամենայնի՝ ցայսօր տիրող օրէնք է
 « Ռուսաստանի մերազնէից եկեղեցւոյ, ըսել է՝ մեր եկեղեցւոյ վը-
 « րայ, այնպէս որ՝ ըստ վկայութեան արժանահաւատ անձանց՝ մեր
 « եկեղեցական վարչութեան մէջ ամենայն ինչ կվճուուի ըստ զօրու-
 « թեան յօդուածոց նոյն Պալատէնիայի, եւ դիմադարձութեան յան-
 « դրքնողը կդատապարտուի ոչ միայն մեր իսկ Առաջնորդական ա-
 « տեաններէն, այլ եւ ի Տէրութենէ, թէեւ, ինչպէս որ Տեղեկա-
 « զբրիս մէջ պիտի տեսնուի, անոր ինչ ինչ տրամադրութիւնները
 « զանազան պարազաներու մէջ ճշտիւ գործադրուած չեն » :

Տակաւին յառաջարան խորհրդածութեամբ իմն շարունակեալ
 Յանձնաժողովոյ զբանս իւր մինչեւ 6-րդ երես, հաւատայ եւ ինքն
 միամտարար յորժամ ստէ. « 1836 թուի Պալատէնիա անուն կարգա-
 « դրութեան վերայ երջանկայիշատակ Ներսէս եւ Մատթէոս սրբա-
 « վան Հայրապետք բողոք բառնալով՝ ջանք ըրին եւ յաջողեցան
 « Ռուսիոյ կառավարութեան ուշադրութիւնը գրաւելու, որ վերջա-
 « պէս հրաման շնորհեց Պալատէնիայի փոփոխութեան կարօտ կէ-
 « տերն իրեն առաջարկել », որում կցէ եւ ծանօթութիւն գայս, թէ՛

« Երջանկայիչատակ ներսէս կաթուղիկոսն, այս մասին որեւէ առա-
 « ջարկութիւն ընելէ առաջ, խորհեցաւ Տանկաստան եւ ուրիշ եր-
 « կիրմեր բնակող ընդհանուր Հայոց խորհրդակցութեանը դիմել,
 « բայց արեւելեան պատերազմը վրայ դալով՝ իւր այս օրինաւոր եւ
 « արդար խորհուրդն ի գործ դնելու արգելք եղաւ, եւ վերջն ալ
 « իւր յանկարծաճաս վախճանը ընդորովին ետ ձգեց զայն: Մաս-
 « թէ՛նս Սրբազանն ալ 1863-ին ծրագիր մը շինած ու առաջարկած
 « է, բայց չի գիտցուիր ինչ պատճառաւ ընդհանուր Ազգին խորհր-
 « դակցութեանը գիմելու օրինաւոր միջոցն ի գործ չդրաւ, ինչպէս
 « ուր իւր նախորդը խորհած էր», մինչ գործք իւր եւ արդիւնք ապա-
 « ցուցանեն զհակառակն, որում բաւական էին միջոցքն 7-9 ամաց ի
 1843 ամէ ցի՛851-8, յառաջ քան զպատերազմ արեւելեան (1851-56):

Մտանէ Յանձնաժողովն ի քննութեան յօդուածոց Պալատէնիոյ, եւ անու յուշագրութեան զ9-րդ, զ21-րդ, 28, 29, 32, 33, 34, 37, 40, 41, 42, 43, 45, 46, 57, 91 եւ զ118-րդ յօդուածս, առաջարկեալ զգործնական անցս եւ զապացոյցս ըստ Առաջին Մասի խնդրոյ քննելեաց: Յորս են քննադատութիւնք ուշագրաւք եւ կենսականք, որպիսիք են: (Դնեմք ասդէն յօդուածս Պալատէնիոյ, եւ ի ներքոյ իւրաքանչիւրոց զգիտողութիւնս Յանձնաժողովոյ):

Յօդ. 9.- Եկեղեցիք Լուսաւորչական Հայոց Ռուսաստանեայց իրաւունս ունին տիրելոյ անշարժ կայից, այլ սակայն ոչ այլազգ կարին ի ձեռս բերել կամ օտարացուցանել զայնս (իմա վաճառել), բայց եթէ բարձրագոյն բարեհաճութեամբ կայսեր, որ խնդրի ի ձեռն նախարարութեան ներքին գործոց ըստ սահմանեալ կարգին:

Դիտող. Ահաւասիկ յայտնի կտեսնուի թէ՛ որչա՞փ հակառակ է այս յօդուածը Եկեղեցւոյ ազատ իրաւանց. ո՞րչափ եկեղեցական գումարներ ցրուելու կամ վատնուելու վտանդի մէջ կը մնան, քանի որ քաղաքի մը ազգայինք իրենց առձեռն պատրաստ ստակովը չեն կարող հաստատուն կալուած մը գնել, ինչպէս է Ախայցխայի ազգային եկեղեցւոյ կալուածագնութեան խնդիրը, որուն կալուած գրնելու համար Հոգելոյս Մատթէոս Սրբազանի երեք տարի յառաջ կառավարութեան առաջարկութիւն ըրած եւ ցայսօր անպատասխանի մնացած է:

Յօդ. 21.- յԱստուածային պաշտամունս ի մէջ եկեղեցեաց լուսաւորչական Հայոց անուն Պատրիարք Կաթուղիկոսին յիշատակի անմիջապէս զկնի Կայսերն ամենայն ուսաց եւ օգոստափառ տան նորա:

Մեր եկեղեցեաց կանոնաց համեմատ քրիստոնեայ թագաւորի

մ'անուն կարելի է յիշատակել, բայց ոչ բոլոր ընտանեաց անուններն ալ ի միասին, եւ այն ալ չէ թէ Ռուսաստանի Հայոց եկեղեցեաց մէջ մտած օտար սովորութեան համեմատ Ս. Պատարագի մէջ եւս առաւելի ժամանակ, վասն զի եւս առաւելի կենդանի Հայրապետին եւ Առաջնորդներուն յիշատակութեան յատկացած ատենն է, եւ շարունակութիւնն է պատարագիչ քահանայի ծածուկ կատարած «Յիշեա՛ Տէր եւ սղորմեա՛ եւ օրհնեա՛ զուղղափառ Եպիսկոպոսունս, որք ուղիղ վարդապետութեամբ համառօտեն ի մեզ զբանն ճշմարտութեան» աղօթքին, ուրակ ընաւ թագաւորի խօսք ընելու յարմարութիւն չկայ: Այսպիսի յիշատակութիւն մը միայն «որ օրհնես զայն սոսիկ» աղօթքին եւ սարկաւազաց կարգացած քարոզներուն մէջ կրնայ ըլլալ, այս ալ քահանայից եւ սարկաւազաց յիշատակութիւնէն ետեւ:

Յօդ. 29.— Համաձայն կանոնաց Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց՝ Մայրագոյն Պատրիարք Կաթողիկոսն զհաստատուն ընկուցութիւն իւր ունի ի վիսա Ս. Էջմիածնի: Յորժամ հարկաւոր համարի նա հեռանալ ի վանոց անտի աւելի քան զչորս ամիսս, հարցանէ առ այս ի ձեռն զլիաւոր Կառավարչին Վրաստանի Կովկասեան եւ յայնկոյս Կովկասու եղեալ նահանգաց, եւ ի ձեռն նախարարութեան ներքին գործոց, զբարձրագոյն հաճութիւն Նորին Կայսերական մեծութեան:

Այս յօդուածը Կաթողիկոսական վեհութեան պատիւ չբերելու կերպով տրամադրեալ ըլլալէն զատ՝ պակասաւոր ալ է: Վասն զի ընաւ յիշատակութիւն չկայ որ եթէ հարկը պահանջէ, զոր օրինակ, եթէ օտար երկրի մը մէջ ազգային կարեւոր գործոյ մը կամ տարօրինակ զէպքի մը պատճառաւ Կաթողիկոսի ներկայութեան ազգեցութեան անհրաժեշտ պէտք ըլլայ, Հայրապետը պիտի կրնայ՝ սուսաց սահմանէն դուրս ելնել:

Յօդ. 32.— Ծառօքութիւն. Պատրիարքն (Կաթողիկոս) իշխան է անօրինակ զեպիական գոյս իւր ըստ իւրում հաճութեան. եթէ զիցէ արարեալ կոտակ, գոյք նորա անցանին առ օրինաւոր ժառանգս նորին. իսկ եթէ չիցեն նմա ժառանգք, այն կայք հաշուին ընդ գոյս Լուսաւորչական Եկեղեցւոյ:

Այս տրամադրութիւնը բոլորովին հակառակ է Հայաստանեայց Եկեղեցւոյ կանոնաց, որ միայնակեաց եկեղեցականաց ուրիշ ժառանգ չը ճանչնար, այլ Միաբանութիւնը, որուն անդամ են եւ վանքը, ուր պատասպարուած կը վարեն իրենց պաշտօնը:

Յօդ. 33.— Լուսաւորչական Հայոց Սիւնիոդոսն Էջմիածնի՝ ընդ

նախագահութեամբ Մայրագոյն Պատրիարք Կաթողիկոսին՝ բաղկանայ ի չորից արքեպիսկոպոսաց կամ յեպիսկոպոսաց, եւ նոյնաթիւ վարդապետաց, որք զհաստատուն բնակութիւն իւրեանց ունին իջմիածին:

Այս յօդուածին մէջ այնպիսի ժողովի մը կարգադրութիւն կը տեսնուի որ սխալ է անուանով, պակասաւոր է քուով, եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ բոլորովին հակառակ է պաշտօնով:

Հայաստանեայց Լուսաւորչական Ս. Եկեղեցին Սիւնհոգոս բաւոր յատկացուցած է այն դերագոյն եւ ընդհանրական ազգային եկեղեցական ժողովին, որ Կաթողիկոսին հրաւիրմամբը կամ անոր խտորմունքը ուղղելու համար (եթէ պատահի)՝ Հայրապետանոցի Միաբանութեան կամ Կաթողիկոսական խորհուրդին կոչելովը կը գումարուի եկեղեցական ծանր խնդիրները քննելու եւ զանոնք համաձայն Սուրբ Գրոց եւ տիեզերական ժողովոյ օրէնսդրութեան լուծելու համար. ուստի սխալ է Սիւնոդ բառը գործածել այնպիսի ժողով մը անուանելու համար, որ Կաթողիկոսի իշխանութեան ստորագասեալ է, եւ անոր միայն խորհրդական եւ գործակից ըլլալու իրաւունք ունի, եւ որ ըստ նախնի սովորութեան Եկեղեցւոյ՝ պէտք է բաղկանայ երկոտասան եպիսկոպոսներէ եւ ոչ չորս եպիսկոպոս եւ չորս վարդապետներէ ու մէկ աշխարհական պրօփուրօրէ, ինչպէս պիտի տեսնենք քիչ մը ետքը:

Յօդ. 34.- Առ իւրաքանչիւր տեղի անդամոց Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսին՝ Պատրիարքն ի ձեռն Գլխաւոր Կառավարչին Վրաստանի եւ ի ձեռն նախարարութեան ներքին գործոց՝ առաջի առնէ քաղաւոր կայսեր գերկուս կանդիդատս:

²⁸² Տարօրինակ տրամադրութիւն մըն է այս որ ընդունուեր է կարգադրութեան մէջ, թերեւս այն նպատակաւ որ ժողովոյ անդամներն իրենց ընտրութիւր թաղաւոր կայսրէն առնելով՝ անկախութեամբ վարուին եւ համարձակապէս ղեմադրեն կաթողիկոսական իրաւասութեան: Մեր ազգային եկեղեցւոյ կարգը կը սովրեցնէ որ Եկեղեցւոյ Սիւնոդը կամ ընդհանրական ժողովը Ազգին ընդհանրութեան ձայնովը Հայոց վիճակաւորներէն կը բաղկանայ: Իսկ Հայրապետանոցի ժողովը տասներկու Եպիսկոպոսներէ պէտք է բաղկանայ՝ որք ընտրուին Ազգին զանազան երկիրներու մէջ ունեցած եկեղեցիներէն, եւ Հայրապետն անուանէ զանոնք:

35 եւ 36 յօդուածներուն մէջ Ս. Էջմիածնի Սիւնոդին ի մասին կառավարութեան (վարչական) 16, եւ դատաստանական մասին՝ 4 տրամադրութիւնք կը տեսնուին, որոց զօրութեամբը Ամենայն Հա-

յոց Կաթուղիկոսն իր ամենարարձր աստիճանաւն հանդերձ՝ ստորագրութիւն զնելէ եւ Սինոդի վճռոյն կամայ ահամայ կնիք դարձնելէ զատ՝ ուրիշ իշխանութիւն չունի:

Յօդ. 37. — Լուսաւորչական Հայոց Սինհոզոսն էջմիածնի՝ ընդ անմիջական վերառեսչութեամբ (°) Ծայրագոյն Պատրիարքին՝ տայ զվախճանական վճիռ ամենայն գործոց վերաբերելոց առ վարդապետութիւնս հաւատոյ, առ եկեղեցական պաշտամունս, ծէսս եւ պրսակս, եւ առ այն յանցաւորութիւնս եկեղեցականաց՝ որք ոչ պատկանին քննողութեան մարմնաւոր դատարանաց: Այս Սինհոզոս՝ ըստ գործոց Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց Ռուսաստանեայց՝ կայ ընդ վերատեսչութեամբ կառավարիչ Սինկղիտոսին (Սենաթին) եւ նախարարութեան ներքին գործոց, հաւասար այլոց ծայրագոյն հոգեւոր ատենից օտարազգի դաւանութեանց»:

Ահա այս յօդուածին տրամադրութեամբը յայտնի կը տեսնուի որ Յրէնսդիրը չփոթեր է Հայաստանեայց Եկեղեցւոյ ընդհանուր եկեղեցական Սինհոզոսին ու Հայրապետանոցի Կաթուղիկոսական Խորհուրդին իրաւասութեան սահմանները եւ պաշտօնը: Առաջինին վերապահեալ «Տայ զվախճանական վճիռ ամենայն գործոց վերաբերելոց առ վարդապետութիւնս հաւատոյ (համաձայն բանի Ս. Գրոց եւ հետեւողութեամբ Տիեզերական Ժողովոյ Կաթուղիկէ Եկեղեցւոյ պէտք էր աւելցունել), առ եկեղեցական պաշտամունս, ծէսս» եւ այլն երկրորդին յատկացուեր է, եւ որ աւելի զարմանալին է, այս վերջինն այնպիսի բարձր պաշտօնով ճոխացնելն ետեւ, բերէր ենթարկեր է Ռուսիոյ տէրութեան Կառավարիչ Սինկղիտոսին եւ ներքին գործոց նախարարութեան, եւ իբր թէ արդարացնելու համար այս տարօրինակ կարգադրութիւնը, յաւելցուցեր է սա միւթարիչ եւ միանգամայն շլացուցիչ պարբերութիւնը. «Հաւասար այլոց ծայրագոյն հոգեւոր Ատենից Օտարազգի դաւանութեանց»՝ որոց կարգըն են նաեւ Հրէայք: Ուրեմն Ռուսիոյ նկատմամբ, մենք Հայաստանեայց օտարազգի դաւանութեան տէր ենք, եւ մեր դաւանութեան հոգեւոր ծայրագոյն ատենը (որ ըստ մեզ չէ եւ չկրնար ըլլալ այն որ նա կը կարգադրէ) կայ ընդ վերատեսչութեամբ Սենաթի եւ Մինիսթրօյի ալլադաւան տէրութեան ... Դարձեալ կըսենք՝ զարմանալի դրութիւն եւ տարօրինակ կարգադրութիւն:

Ըստ այսմ շարունակէ Յանձնաժողովն ըստ կարողութեան իւրում եւ ըմբռնման քննադատել պարզօրէն զ40-1-2 եւ 43-րդ յօդուածը Պալատէնիոյ ըստ իրաւասութեանց եւ ձայնից Ս. Կաթուղիկո-

սի եւ Սիւնօղի եւ սակս Տեղակալի ի բացակայութեան Կաթուղիկոսի, առ կենդանութեամբ կամ յետ վախճանի, միով պարբերութեամբ տայ զհետագայ կարծիս իրաւացիս, թէ՛ «Այս յօդուածն» « ըով կը տեսնուի որ Ամենայն Հայոց Կաթուղիկոսութեան ստորա» « դասալ ազգային հոգեւոր ատեանը յամենայնի պարտաւոր է վա» « րել համաձայն կարգաց եւ կանոնաց Ռուսիոյ Տէրութեան կօլէ» « զիսային (ատենին), եւ Ամենայն Հայոց Հայրապետն եւ Հոգեւոր « Տէրն Հայաստանեայց Եկեղեցւոյ նոյն ատեանին մէջ իբրեւ Ատե» « նապետ (ինչպէս նաեւ կը ստորադրէ սոյն բառով) երկու ձայն « ունի, երբ խնդրոյ մը վրայ անդամոց կէսը մէկ կերպ եւ միւս « կէսը մէկ կերպ վճիռ առաջարկեն: Իսկ երբ խնդրոյ մը վրայ ան» « դամոց մեծազոյն մասը միեւնոյն կարծիքը յայտնէ, Կաթուղիկո» « սը պարտաւոր է զայն ընդունել եւ ստորագրել, թէեւ հակառակ « ըլլայ իր կարծեաց եւ թերեւս փնասակար Ազգին եւ Եկեղեցւոյ:

« Այս յօդուածոյ մէջ Պալատէնիան միայն մէկ շնորհ մը ըրած « է ընդհանուր Ազգին եւ Հայրապետին, այն է՝ «յամենայն պարզ « հոգեւորակալն գործս զձայն վճռական» անոր յատկացուցեր է 40 « յօդուածով: Բայց Հայրապետն այս շնորհը վայելելու համար կը « պարտաւորի այնպիսի պարզ Հոգեւորական խնդրոյ որոշման ժա» « մանակ՝ ժողովին մէջ անձամբ ներկայ գտնուիլ. ապա թէ ոչ՝ 41 « յօդուածը կը տրամադրէ որ այն պարզ հոգեւորական գործոց « վճռական ձայնը՝ որ Կաթուղիկոսին է, եւ որ ըստ 42 յօդուածոյ՝ « Կաթուղիկոսական Աթոռոյ պարապութեան ժամանակ՝ ոչ ոք ի» « րաւունք ունի գործածել, ժողովին կանցնի երբ Կաթուղիկոսը կեն» « դանի է, բայց ժողովին ներկայ չգտնուիր. այս պարագային մէջ « Կաթուղիկոսն «հասու եղեալ եղրակացութեանց Սիւնհոգոսին յօ» « րագրութիւնս մատուցեալս նմա, տայ ըստ այնց զիւր վճիռ»: Ու» « չադրութեան եւ զարմացման արժանի չե՞ն այս ըստ այնց բառե» « ըր, եւ իրաւունք չունի՞՞ք կասկածելու, որ Պալատէնիան սոյն « տրամադրութիւններով կամք ըրեր է ընդհանուր Հայոց Հայրա» « պետին հոգեւորական իշխանութիւնը կատարել, եւ զայն ենթար» « կելով Սիւնօղ անուն ժողովի մը, որ ըստ գործոց լուսաւորչական « եկեղեցւոյ Հայոց կայ ընդ վերատեսչութեամբ Ռուսիոյ Սեմաքիմ « եւ Մինիսթրօյին, Հայաստանեայց Եկեղեցւոյ անկախութիւնը « ֆնջել»:

Հարկ համարեմք յաւելուլ դիտել աստ եւ զայս, զի եթէ չիցեն պակասութիւնք բառից կամ վրիպակք տպագրականք (յերես 13, տող 23-28), երեւի թիւրիմացութիւն ընդդէմ 41-րդ յօդուածոյ, որ

ասէ. «Ի քննութիւն իւրոց՝ յորս Պատրիարքն (իմա Կաթողիկոս) « Էջմիածնի ունի զձայն վճռողական, չգտանի անձամբ ի Սիւնհողոս- « սի, այլ հասու եղեալ եղբակացութեանց Սիւնհողոսին յօրագրու- « թիւնս մատուցեալս նմա, տայ ըստ անց զիւր վճիռ»: Գուցէ կա- « մէր ասել Յանձնաժողովն, զի ոչ էր հարկ թողուլ Սինոզի զգործս՝ « որ սեփական է վճռոյ եւ իշխանութեան Ս. Կաթողիկոսի ըստ պարզ « հոգեւորական գործոցս, մինչ բանն ի քննութեան իրաց վերաբերի « ոչ պարզ հոգեւորական գործոց, յորս են վէճք եւ տարաձայնու- « թիւնք ի մէջ անդամոց Սինոզի, զորս իբր չի թողու Կաթողիկոսն « զերծ յաղղեցութեանց վիճել ընդ միմեանս եւ այնպէս կազմել զօ- « րագիր եւայլն»:

Չանց արարեալ զնմամբք յօդուածովք որ զՊրոպագանդիստի եւ զպա- « խարակելի զիրաւասութեանցն, զորոց ունեմք ընդարձակել այլուր, « եւ թեթեւ իմն են զխոտուութիւնք Յանձնաժողովոյ, տեսանեմք զհա- « մատօս քննադատութիւն 57-րդ յօդուածոյ, որ վասն կարգելոյ զԱ- « սաջնորդ թեմակալս ի վիճակս Հայոց Ռուսաստանեայց, զոր եւ « սկսանի այսպէս»:

« Պալատէնիայի 4 գլուխը 17 յօդուածներով կը կարգադրէ Ռու- « սաստանի մէջ Հայոց Եկեղեցւոյ Առաջնորդական Թեմերը, եւ Թե- « մակալ Առաջնորդաց ընտրութեան եղանակը, պարտաւորութիւն- « ներն ու Ս. Էջմիածնի հետ ունեցած յարաբերութիւնները»:

« Այս կարգադրութեան մէջ նշանաւոր կը հանդիսանայ Հա- « յաստանեայց Եկեղեցւոյ օրինաց եւ կարգաց ընդզիմամարտ հա- « կառակութեամբ՝ 57 յօդուածը»:

« Յօդուած 57-ը. ԶԹեմակալ Առաջնորդս լուսաւորչական Հայոց « Եկեղեցւոյ ի Ռուսաստան նշանակէ (°) ԹԱԳԱԻՈՐ ԿԱՅՍՐՆ: Ի « մտանել նոցա ի պաշտօն երզնուն վասն հաւատարիմ հպատակու- « թեան եւ ծառայութեան»:

« Որով Ամենայն Հայոց Կաթողիկոսը զրկուած է Ռուսաստա- « նի Հայոց վիճակներուն Առաջնորդները կարգելու եւ արձակելու « իշխանութենէն, որ սուղակի իրեն կը պատկանի. վասն զի Ամե- « նայն Հայոց ընդհանրական Կաթողիկոսը միանգամայն եւ Յայրա- « դոյն Պատրիարք է, եւ զոնչ իրրեւ Պատրիարք ռուսիարնակ Հայկա- « զանց, իրաւունք ունի Ռուսիոյ Հայոց Թեմակալ Առաջնորդները « կարգելու եւ արձակելու, ինչպէս Կոստանդնուպոլսոյ Պատրիարքը « կը կարգէ եւ կարձակէ Տաճկաստանի Հայոց Թեմակալ Առաջնորդ- « ները: Այս իրաւանց՝ մեր Սուրբ Եկեղեցւոյ օրէնքը միայն մէկ « չափաւորիչ պարագայ մը կընդունի, այն է՝ Ժողովրդական ընտ-

« րութիւնն ու առաջարկութիւնը, որով Առաջնորդը կընծայի Պատ-
 « րիարքի հաւանութեանն եւ հաստատութեան. օտար անձն կամ իշ-
 « խանութիւն ընաւ իրաւունք չունի Առաջնորդական ընտրութեանց
 « միջամտութիւն ընելու եւ Եկեղեցին եւ միանգամայն անոր Գերա-
 « դոյն Հովիւը՝ իրենց նուիրական իրաւունքէն կապտելու: Ռուսիոյ
 « Տէրութիւնը Ռուսաստանի Հայկազն Առաջնորդութեանց նկատ-
 « մամբ՝ այնչափ միայն իրաւունք ունի, որչափ Օսմանեան Տէրու-
 « թիւնը իր երկրին մէջ, այսինքն՝ ճանաչել ընտրուած Առաջնորդը,
 « եւ անոր քաղաքական մասին պակասութեան մէջ գտնուած ժամա-
 « նակ՝ փոփոխութիւնն առաջարկել Մայրագոյն Պատրիարքին»:

Թողցուք այլեւս զմնացեալ յօդուածս ինչ եւ զդիտողութիւնս
 Յանձնաժողովոյ որ ըստ Առաջին Մասի Տեղեկագրոյն, եւ անցուք ի
 Մասն Բ., զոր սկսանի այսպէս.

« Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան արգի եղանակը
 « ս^որն է, եւ համաձայն է թէ չէ Ազգային Եկեղեցւոյ իրաւանց,
 « օրինաց եւ սովորութեանց»:

« Զայս քննելու համար Յանձնաժողովը դարձեալ կը պարտա-
 « ւորուի 1836-ի կարգադրութիւնը ձեռք առնուլ, անոր որոշած ընտ-
 « րական արամադրութիւնները տեսնել, ստուգել նաեւ թէ նոյն կար-
 « դադրութեան հաստատութիւնը ըստ ոմանց «աղօթիւք եւ օրհնու-
 « թեամբ» եւ ըստ այլոց «սրտմտութեամբ եւ յոչ կամաց» ընդու-
 « նող Յովհաննէս Կարբեցի Կաթողիկոսէն սկսեալ՝ վերջին երեսուն
 « (30) տարիներու մէջ իրարու յաջորդող Ներսէս եւ Մատթէոս եր-
 « ջանկայիչատակ կաթողիկոսունք ինչպէ՞ս ընտրուեր են:

« Ա. Նախ Պալատէնիան կաթողիկոսական ընտրութիւնը ինն
 « յօդուածոց մէջ պարունակեր է, 11-էն մինչեւ 19 ամբողջ, զոր
 « սստ կօրինակենք.

«Յօդ. 11.- Մայրագոյն Պատրիարքն էջմիածնի ընտրէ յողմոյն
 « Ազգէ Լուսաւորչական Հայոց ըստ կարգին սահմանելոյ առ այս»:

« Յօդ. 12.- Ի դատարկանալ տեղւոյ Մայրագոյն Պատրիարք
 « Կաթողիկոսին Ամենայն Հայոց, Լուսաւորչական Սիւնհողոսն էջ-
 « միածնի առաքէ զձանուցողական նամակս (իմա շրջաբերականս)
 « յամենայն վիճակս լուսաւորչական Հայոց, որք են թէ Ռուսաս-
 « տան, եւ թէ արտաքոյ սահմանից նորին, նաեւ նշանակէ զտարե-
 « ւոր միջոց առ ընտրութիւն նորոյ Պատրիարքի:

« Յօդ. 13.- Իւրաքանչիւր վիճակ Լուսաւորչական Հայոց առ
 « ընտրութիւն Պատրիարքի նշանակէ զերկուս պատգամաւորս՝ ղէ-
 « պուտտո՛ գմի եկեղեցական, գմի աշխարհական: Պատգամաւորն

« Եկեղեցական պարտի լինել կամ այն ինքն թեմակալ Առաջնորդն ,
 « կամ այլ ոք Եկեղեցական նշանակեալ ի նմանէ , իսկ աշխարհական
 « պատգամաւորն ընտրի յամենայն իշխանաւորաց , ի հարիւրապե-
 « սաց , յիւզպաշեաց , ի մէլիբաց , եւ յայլոց պատուաւոր աշխար-
 « հական անդամոց :

« Յօդ . 14 .- Այսոքիք ընտրեալ պատգամաւորք եթէ չկարացին
 « ներկայանալ անձամբ ի վասն էջմիածնի ցնչանակեալ ժամանակն
 « վասն ընտրութեան Պատրիարքի , ունին իրաւունս յայտնել զրու-
 « թեամբք զպատուութիւ իւրեանց՝ հասուցանելով զայն ի Սին-
 « հոդսն էջմիածնի :

« Յօդ . 15 .- Բաց ի պատգամաւորաց (զէպուտաս) մասնակցին
 « յընտրութեան Պատրիարքի ամենայն անդամք լուսաւորչական
 « Հայոց Սինհոդոսին էջմիածնի , եւ եօթն երիցազոյն եպիսկո-
 « պոստոնք , որք յայնժամ գտանիցին յէջմիածին . իսկ ի զիպուածս
 « պակասութեան եպիսկոպոսաց , զայն թիւ ընուն երիցազոյն վար-
 « դապետք տեղւոյն :

« Յօդ . 16 .- Նոյն ընտրութիւնն յառաջանայ յէջմիածին ի Մայր
 « Եկեղեցւոջ Եւայլն :

« Յօդ . 17 .- Ձկնի հաւաքման ձայնից բոլոր ժողովականացն եւ
 « հասու լինելոյ զբաւոր զպատուութեանցն հասելոց ի Սինհոդո-
 « սին ըստ զօրութեան 14 յօդածոյն , չորեքին աւագազոյնք ըստ ա-
 « ուելլութեան ձայնիցն տուելոց ի նպաստ իւրեանց ճանաչեն ու-
 « նոզք իրաւանց ընտրեալ լինելոյ ի Կանդիդատ (^ո) . իսկ ի զիպուա-
 « ծրս հաւասարութեան ձայնի , վիճակն որոշեսցէ , թէ ո՞րք պար-
 « տին համարել աւագազոյնք . ի նոցունց բոլոր ժողովականք առ-
 « նեն ընտրութիւն երկուց կանդիդատաց ի պաշտօն Մայրազոյն
 « Պատրիարքի :

« Յօդ . 18 .- Ձկնի այս ընտրութեան՝ ժողովն առաքէ զերիս
 « պատգամաւորս յանդամոց իւրոց յառ զլիաւոր կառավարիչն Վը-
 « րաստանի , Կովկասեան եւ յայնկոյս Կովկասու եղեալ նահանգաց ,
 « որ յազազս երկուց կանդիդատաց ընտրելոց առաջի առնէ Նորին
 « Կայսերական Մեծութեան ի բարեհաճութիւն , ընդ ձեռն նախա-
 « րարութեան ներքին դործոց :

« Յօդ . 19 .- Թագաւոր Կայսրն նշանակեալ զՄայրազոյն Պատ-
 « րիարքն էջմիածնի զԿաթողիկոսն Հայկազանց՝ ամենաողորմաբար
 « շնորհէ նմա զառանձին հրովարտակ վասն այսր աստիճանի եւ հը-
 « բամայէ (^ո) զկնի երզնլոյն լինել հաւատարիմ առ զահն ամենայն

« ուսաց, կատարել զօժուժն նորա ըստ վաղեմի ծխի եւ սովորու-
« թեան Լուսաւորչական Եկեղեցւոյն Հայոց» :

Յետ այսր քննադատէ Յանձնաժողովն զյոզուածսդ :

« Այս տրամադրութիւններէն յայտնի կը տեսնուի, ընդհանուր
« Հայոց Ազգը չի կարող ընտրել իր Հոգեւոր Տէրը, իր Եկեղեցւոյ
« Հովուապետն ու Հայրապետը, այլ նա միայն ընտրելիներ կը ցու-
« ցընէ եւ համայն Ազգին միայն 1)Ց մասին վրայ տիրող կառավա-
« րութեան վեհապետը՝ Ռուսաց Վեհափառ Կայսրը՝ կընտրէ զԿա-
« թուղիկոսն Հայոց : Առաջին ապօրինաւորութիւն :

« Վերոյիշեալ ընտրելիները որոշելու համար Ազգին զանազան
« Երկիրներու մէջ ունեցած Առաջնորդական վիճակներէն Երկերկու
« պատգամաւոր կուզուի ընտրելեաց ընտրող ժողովին, որ պարտա-
« ւորեալ է գումարել Ս. Էջմիածնի Տաճարին մէջ Հանդուցեալ Հայ-
« բապետին մահուանէն տարի մը ետքը, ոչ աւելի կանուխ եւ ոչ
« ուշ : Երկրորդ անտեղութիւն :

« Յիշեալ պատգամաւորներուն մէկը Եկեղեցական պիտի ըլլայ,
« միւսը աշխարհական. առաջինը կամ նոյն ինքն վիճակին Առաջ-
« նորդն է, կամ այլ ոք Եկեղեցական նշանակեալ ի նմանէ միայնակ,
« մինչդեռ Երկրորդին ընտրութեան՝ վիճակին բոլոր աշխարհական
« իշխանաւորները հազիւ բաւական կը համարուին : Երրորդ ապօրին-
« ւաւորութիւն :

« Սոյն պատգամաւորները կամ անձամբ պիտի երթան Էջմիա-
« ծին եւ կամ գրով պիտի գրկեն իրենց դատողութիւնը կամ քուէն
« (°), եւ զո՞ւ պիտի դռնեն անդ ընտրելեաց ընտրող ժողով կազմելու
« համար. — Սիւնոզին բոլոր անդամներըր եւ եօթն երիցագոյն եպիս-
« կոպոսունք կամ վարդապետք, որով նոյն ժողովը կը բազկանայ
« որչափ աշխարհականներէ, նոյնքան եւ 15 ալ աւելի Եկեղեցական-
« ձեալ ընտրելի : Հինգերորդ ապօրինաւորութիւն» :

« Այս ժողովին մէջ ներկայ ժողովականք քուէարկութիւն կը-
« նեն, եւ բացառաւոր նամակաւ եկած քուէներուն հետ ասոնց ալ
« քուէներըր միանալով քուէհամար կըլլայ, որով ամենէն շատ քը-
« ուէ ստացող առաջին չորս անուններըր ցուցակի մը մէջ կը նշա-
« նակուին, ասոնց ուշ դնելու թէ քուէից բացարձակ առաւելութիւն
« ստացող կա՞յ մէջներին թէ ոչ, անոնց ամենն ալ հաւասար իրա-
« ւամբ ճանաչեն ունողք իրաւանց ընտրեալ լինելոյ՝ - Ի՞նչ - դար-
« ձեալ ընտրելի : Հինգերորդ ապօրինաւորութիւն :

Փակագծեմք աստ. առ ի պարզել զթիւրիմացութիւն քուէնա-
մակի, զի չիք սովորութիւն ի Ս. Էջմիածնի առաքել զքուէս նամա-

կաւ կամ նամակօք ընտրութեան անդ Կաթուղիկոսի: Եթէ բացա-
կայք նշանակեցեն զոմն ի տեղի իւրեանց ի ներկայացուցիչ եւ նա
մասնակցեցէ ընտրական ժողովոյ, կարէ լինել քուէարկու կամ քը-
ուէտու: Բացակայք կարին պատուիրել ներկայացուցչի իւրեանց
տալ զքուէ որում կամին՝ յիշեալ յականէ յանուանէ: Կարին յաւե-
լուլ հրահանգել եւ զայս, զի ի հակառակ դէպս, հետեւեցին ձայ-
նից բազմութեան: Նաեւ տարբեր իմն է քուէարկութիւն Ս. Էջ-
միածնի, եւ բացայայտ, ոչ երբեք զազանի:

« Ահա այս չորս ընտրելիներուն մէջէն բոլոր ներկայ ժողովա-
« կանք (բացակայ զանուողներուն խօսքը չկայ) ընտրութիւն կրնեն
« երկու անձի (ի՞նչ կերպով, այն ալ որոշ գրուած չէ), որ կը կոչ-
« ուին կաթուղիկոսական կանդիդատք, այսինքն ընտրելիք, եւ այս
« վերջին երկուքին մէջէն վ. կայսրը «բարեհաճութեամբ նշանակէ
« զԾայրագոյն Պատրիարքն Էջմիածնի, զԿաթուղիկոսն Հայկազանց,
« եւ ամենապարտաբար շնորհէ նմա զտանձին հրովարտակ վասն
« այսր «ԱՍՏԻՃԱՆԻ» (Ռուսիոյ Կայսրը Հայոց Եկեղեցւոյ Հայրա-
« սրբախնայ Կաթուղիկոսութեան եկեղեցական աստիճանի հրովարտակ
« կուսոյ), եւ հրամայէ զկնի երդնլոյ լինել հաւատարիմ առ զահն
« Ռուսաց, կատարել զօծումն Ծայրագոյն Պատրիարքն: Վերջին եւ
« ձայրագոյն ապօրինաւորութիւն:

« Բ. Պալատէնիայի հաստատութիւնը, ինչպէս արդէն յիշե-
« ցինք, Կարբեցի Յովհաննէս Կաթուղիկոսի օրովն է, բայց Ս. Էջ-
« միածնի Ռուսաց տէրութեան ձեռքն անցնելը անոր Կաթուղիկոս
« ըլլալէն առաջ է. ուստի Կարբեցւոյն ալ Կաթուղիկոս ընտրուելու
« պարագաները զիտնալ անօգուտ չէ պատկասելի ժողովոյդ (Ընդհ.
« Երեսօրիսնական)»:

Առանց մտածելոյ իր ստուգագոյն պատմութեան անցից հրաժա-
ման կամ հրաժարեցուցման Տ. Եփրեմայ Կաթուղիկոսի եւ խարդա-
ւանեալ ընտրութեան Յաջորդի նորա՝ պատրեալ եւ զՏեղակալ
Մարտիրոս Եպս., եւ այսպէս խորամանկութեամբ իմն կանխէ ուս
կանախարութիւն նուիրագործել ի Հայս զղրութիւն կանդիդայական
կամ երկուց ընտրելեաց, յառաջ քան զհաստատութիւն Պալատէնիոյ
1836-ի -- Յանձնաժողովն հաւատայ միամտաբար զիւնանգիտական
նահիւսութեանց Հրովարտակին Նիկողայոս Կայսեր, զոր եւ ըստ
մասնիոյ ամփոփէ յիւրում տեղեկագրի (յերեսս 22-23):

Յետոյ որոյ համառօտէ զանցս ընտրութեանց Տ. Ներսիսի եւ Տ.
Մատթէոսի ի Կաթուղիկոս, եւ այնպէս իմն կարծէ Յանձնաժո-
ղովն, զի ընտրութիւնք երկուցունց Կաթուղիկոսայ լեալ իցեն հա-

կատակ Կանդիդայական դրութեան եւ նոյն իսկ Պալատէնիոյ, մինչ-
զեռ յամենայն նուազի առաջարկեալ են երկուք ընտրելիք առ կայսրն
ուռուաց, որ եւ զառաջին ընտրելին հաստատեալ է, որ ոչ բաւէ հաս-
տատել զգանցառութիւն կանդիդայական դրութեան, այլ պարզէ յա-
ւէտ զգիւանագիտական բանս եւ զկեղծիս հրատարակիչս :

Առթիւ Կաթ. ընտրութեան, որ յետ վախճանի Տ. Ներսիսի հա-
զիւ ուրեմն սթափեալ Պատրիարքարանը Հայոց Կ. Պոլսոյ սակաւուք
(1857-8) յուզէ զիրաւասական խնդիր զայս եւ եթ իբր բոսք գաւ-
կաւր: Յառաջ բերցուք զբանս Տեղեկազրոյ. «Ժամանակին Հոգեւոր
« եւ Գերագոյն ըսուած Ազգային Ժողովներն այն գիրերը (իմա
« զթուղթն եւ զըջարեւրականս Սինդի Ս. Էջմիածնի առթիւ մահ-
« ուան Տ. Ներսիսի եւ հրաւիրանաց ուղղելոց ուրոյն ուրոյն առ
« իւրաքանչիւր թեմն Հայոց Թուրքիոյ առ ի գալ մասնակցիլ ըն-
« տրութեան նորոյ Կաթուղիկոսի համաձայն արամադրութեանց
« Պալատէնիոյ) կարդալով՝ համաձայնութեամբ որոշեր են զբն
« Ս. Էջմիածնայ Միաբանութեան (°), թէ իրենք Օսմանեան Տէրու-
« թեան հաստատած արտօնութեամբք Տանկաստանի համօրէն Հա-
« յոց քէ՛՛ հոգեւորականաց եւ քէ՛՛ աշխարհականաց ներկայացու-
« ցիչն ըլլալով՝ հարկ չկար բոլոր առաջնորդական թեմերէն զատ-
« զատ պատգամաւորներ խնդրելու, այլ պարզապէս Տաճկաստանի
« Եպիսկոպոսներէն հինգ ընտրելի ցուցնելով՝ անոնց մէջէն որն որ
« Կաթուղիկոս ընտրուէր, Տաճկաստանի Հայոց ընդունելի եւ հա-
« ճոյ ըլլալը իմացնել: Իսկ Ս. Էջմիածին ըլլալիք վերջին ընտրու-
« թեան մէջ Տաճկաստանի Հայերը նե՛՛ յկայացնելու եւ այն ժամա-
« նակի քառասուն եւ հինգ միճակաց կողմանէ քուէ տալու համար՝
« յիշեալ հոգեւոր եւ գերագոյն ժողովները գիր գրեր են Կովկաս-
« եան փոխարքայի տեղակալ (°) հայազգի Վասիլ Բեհպուտով զօ-
« բայեալին եւ խնդրեր են, որ կամ իր ազգայետական հրամանա-
« գրովը եւ կամ իր կողմանէ մէկը Ս. Էջմիածին իրկելով՝ իրենց
« ցուցրցած հինգ ընտրելեաց մէկը՝ որն որ իրեմ հաճոյ (°...))
« քուի ընտրէ կամ ընտրել տայ: Բայց այս գիրը Տիփիս չի հա-
« սած Բեհպուտով կը վախճանի եւ գիրը կէս ճամբէն ետ կը զատ-
« նայ: Ատոր վրայ յիշեալ Հոգեւոր եւ Գերագոյն Ժողովներն ուրիշ
« երկու Տիփիսեցի ազգայնոց (Կուրկենպէրով - Գուրգէնպէկով եւ
« Իսաք Թումանով) կը գրեն եւ Տաճկաստանի համօրէն Հայոց փո-
« խանորդ կը կարգեն, որք յիսկատար իշխանութեամբ Ս. Էջմիա-
« ծին կերթան, եւ երկու Կաթուղիկոսացուներու վերջնական ըն-
« տրութեանը մասնակից կ'ըլլան իւրաքանչիւրը քառասուն եւ հինգ
« կամ երկուքը մէկէն իննսուն ձայն կամ քուէ ունենալով ի գիմաց

« քառասուն եւ հինգ Առաջնորդական թեմոց Տաճկաստանի, եւ
 « վերջապէս Ս. Մատթէոս եւ Տ. Գեորգ Արքեպիսկոպոսներն առա-
 « ւելադոյն քուէ ստանալով, վերջնական կանգիդատք կամ ընտրե-
 « լիք, ըստ Պալատէնիայի, անունին սուսաց կայսեր բարեհաճու-
 « թեանը կը ներկայացուի, եւ Ն. Վեհափառութիւնն ալ զՄատ-
 « թէոս կը նշանակէ Կաթուղիկոս ամենայն Հայոց» :

Յետ կարգերոյ եւ զպատճէնս նամակի յիշելոյ, որպէս եւ զնա-
 մակին որ առ Բէհպուտեան իշխան, քաղէ եւ զպարբերութիւնս ինչ
 ի զրութեանէ Սինոդի, շարունակէ Յանձնաժողովն զգիտողութիւնս
 եւ զքննադատութիւնս իւր ըստ այսմ կարգի :

« Այս վաւերական տեղեկութիւններէն յայտնի կը տեսնուի, որ
 « Ս. Էջմիածին Ռուսաց կայսրութեան երկիր ըլլալէն ի վեր՝ երեք
 « անգամ կաթուղիկոսի ընտրութիւն եղած է, եւ թէպէտ Ս. Էջմի-
 « ածնի Միաբանութիւնը ահամայ Պալատէնիայի արամադրութեանց
 « Համեմատ վարուելու պարտաւորուած է միշտ, բայց եւ այնպէս
 « Ներսիսի եւ Մատթէոսի ընտրութիւնն ըստ այսմ չէ կատարուած .
 « այսօր ալ Ս. Էջմիածնի Միաբանութիւնը նոյն կանոնաց Համեմատ
 « վարուելու պարտաւորեալ է, թէեւ իր պաշտօնական նամակը Պա-
 « լատէնիայի յիշատակութիւն չընէր, այլ ըստ ամենայնի համաձայն
 « ծիսից եւ աւանդաւթեանց մերոյ եկեղեցւոյ վարուիլ կատարելի :

« Տեսնենք ուրեմն ո՞րն է մեր Եկեղեցւոյ ընդհանուր կանոնը
 « կամ աւանդական սովորութիւնը կաթուղիկոսական ընտրութեան
 « մասին :

« Ազգային եկեղեցին՝ եկեղեցական նուիրապետութեան եւ ընդ-
 « հանրապէս սովն տեսակ բարեկարգութեան վերաբերեալ կանոնաց
 « եւ սահմանադրութեանց հետ հարկաւ կաթուղիկոսական ընտրու-
 « թեան վրայ ալ մասնաւոր կանոնադրութիւն ունեցած է ի նախ-
 « նեաց, ի Հայրապետաց եւ յընդհանրական ժողովոց սահմանեալ,
 « բայց ազգային թանկագին հնութեան մեծ մասին կորստեան հետ,
 « Ազգր սոյն կանոնադրութեան ալ կորուստը ողբալու դժբաղդու-
 « թեան մէջն է այսօր, այնպէս որ կաթուղիկոսական ընտրութեան
 « վրայ մեր Եկեղեցւոյ օրէնքը եւ մեր նախնեաց կարգադրութիւն-
 « ները դռնել ուղղը՝ կը պարտաւորուի ազգային պատմութեան
 « Հատուկտոր մնացորդացը դիմել, եւ անոնց ծաղկաքաղովր բաւա-
 « կանանալ :

« Կաթուղիկոսական Յանձնաժողովս սոյն կէտին վրայ ազգային
 « մասնագիտութեանց հետադատութիւնը ընելով, բոլոր պատմական
 « անցից ընդհանուր տեսութեամբ եւս եղրակացութեան հասաւ, որ՝
 « Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ, Ազգային եկեղեցական նուիրա-

« պետութեան զլուխ, Ազգին Հողեւոր Տէրն ու Հովիւր, մէկ բառով
 « Ազգին Ընդհանրական Հայրապետը Ազգովին կրնորուի, այսինքն՝
 « համայն Ազգէն և և միայն Ազգէն: Ազգային պատմութիւնը կը ցու-
 « ցընէ, որ Ազգին ամէն կարգի և ամէն աստիճանի անձինք՝ լուսա-
 « տըչական եկեղեցւոյ անդամ ըլլալու իրաւամբ կաթուղիկոսական
 « ընտրութեան մասնակից եղած են: Եկեղեցական կարգէն եպիսկո-
 « պոսունք և քահանայք (վարդապետք), սարկաւազք և դպիրք
 « ամբողջ, քաղաքային վիճակի մէջ ալ թագաւոր, նախարար, իշ-
 « խան, սոսկան աղքատ, հարուստ, մեծ և փոքր, ամէն կարգի ազ-
 « դայինք իրաւունք ունեցած են ամենայն Հայոց Կաթուղիկոսի ըն-
 « տրութեան մէջ: Այս իրաւանց արգելք ըլլալու միակ պարագայ՝ և-
 « կեղեցւոյ վարախէն դուրս գտնուիլն եղած է: Այն որ եկեղեցւոյ
 « մէջ է, և չէ մերժուած, և հասակի կամ ընկերական վիճակի նը-
 « կատմամբ քաղաքականապէս անբաւական չէ, եկեղեցւոյ գլխոյն՝
 « Հասարակաց Հօր ընտրութեան մասնակցելու իրաւունք կը վայել-
 « լի: Պատմութիւնը կը ցուցնէ նաև, որ մեր Ազգին մէջ կաթուղի-
 « կոսական ընտրութեան մասին երբեք օտարի միջամտութիւն մը-
 « տաղիւր ընդունուած չէ, և բնաւ տեղ մը ազգային կաթուղիկոսի
 « ընտրութեան վաւերացում յիշատակուած չի կայ: Կերեւի որ մեր
 « նախնիք այս պարագային և ոչ իսկ գաղտնաբան ունեցած են:

« Մեր Ազգին մէջ, ազգ. եկեղեցականք և քաղաքայինք միեւնոյն
 « եկեղեցւոյ անդամ և ի Քրիստոս Յիսուս եղբայր ճանչնալով զիրար,
 « Ազգային Հայրապետի ընտրութեան մէջ վիճակի խտրողութեան
 « սկզբունք երբեք ընդունած չեն:

« Ամէն կարգի անձինք սոյն ընտրութեան մասնակցեր են, ո՛ր
 « խառն ի խուռն անշուշտ, այլ իւրաքանչիւրն իր ձեռնհասութեան
 « սահմանին մէջ շարժելով, բայց ամենն ալ գործելով, այնպէս ո՛ր
 « Կաթուղիկոսունք ընտրուեր են միշտ Քրիստոնէական Արեւելեան
 « և նախնական պարզ, մաքուր կանոններով: Կաթուղիկոսական ըն-
 « տրութեան գործողութիւնները կանխաւ օրինաւորութեան շուղին
 « մէջ ուղղելով իրենց պաշտօնը կատարած են, նուիրապետութեան
 « ան գերադոյն աստիճանին՝ Ամենայն Հայոց կաթուղիկոսութեան
 « պաշտօնին արժանաւորագոյն անձինքները ցոյց տալով ժողովրդ-
 « եան, որով նոյն պաշտօնին արժանաւորութեան հասնելու արգելք
 « ունեցողները ինքնին յայտնուելով, Ազգայնոց ընտրութիւնը ճա-
 « նաչողութեամբ կատարուելու տրամադրութեան մէջ գտնուեր է:
 « Քաղաքայինք հանդերձ եկեղեցականօք ի մի վայր դումարուելով,
 « եկեղեցականաց ցոյց տուած անձանց մէջէն Ազգին Հայրապետն
 « ընտրեր են, երբեմն պարզապէս միաձայն ազադակ բառնալով,

« Երբեմն ատենական կարգով կանոնօք վարուելով. եւ երբ ըն-
 « տրութիւնը կատարուեր է, ալ ընաւ մէկուն վաւերացմանը սպա-
 « սելու հարկ եւ օրէնք չըլլալով՝ ընտրեալը յԱթոռ Հայրապետու-
 « թեան օծումն առեր է :

« Այս է ահա պատմութեան մնացորդաց մեզ սովրեցուցածը,
 « իրբեւ հիմնական տրամադրութիւնք կաթողիկոսական ընտրու-
 « թեան կանոնաց. անոնց համեմատ կատարուեր է Կաթողիկոսաց
 « մեծ մասին ընտրութիւնը: Թէպէտեւ եղեր են Կաթողիկոսներ, որ
 « իրենց յաջորդներն իրենք ընտրեր են, մեր թագաւորներն ալ ըն-
 « տրեր են շատ անգամներ զկաթողիկոսներ, ինչպէս նաեւ նախա-
 « րարք, եպիսկոպոսունք՝ միաշնակ, կամ ժողովրդեան հետ մէկ-
 « տեղ. երբեմն նաեւ սոսկ ժողովուրդն ազազակաւ ընտրեր է զԿա-
 « թողիկոս, եւ վերջին ժամանակները կաթողիկոսական դահին
 « մերձակայ եկեղեցականք միայն. շատ անգամ Ս. Էջմիածնի Միա-
 « բանութիւնը. երբեմն ալ Կոստանդնուպոլսոյ պատրիարքները,
 « բայց ասոնք ամենն ալ ընդհանուր կանոնի զարտուղութիւններ ե-
 « դած են, եւ ազգային քաղաքական դժուարութեանց եւ տառապա-
 « նաց ժամանակ, կամ անպայման վստահութեան եւ կամ անիրաւ
 « բռնաւորութեան արդիւնքը եղած են: Ազգին առաջին Հայրապետ եւ
 « լուսաւորիչն հոգևոց Մեծն Գրիգոր աստուածային յայտնութեամբ
 « ընտրուեր է՝ Հայկազն թագաւորին, նախարարաց եւ ժողովրդա-
 « կանաց ամենուն կամօք եւ խնդրաւորքը, բայց Լուսաւորիչ ինքն ու-
 « բոշքը է իր յաջորդը, եւ այսպէս պէտք էր ըլլալ, վասնզի Ազգը
 « նոր լուսաւորուած ըլլալով քրիստոնէական հաւատոյ լուսովը, կա-
 « տարեալ եւ անպայման վստահութիւն ունէր իր Լուսաւորչին, ինչ-
 « պէս նաեւ անոր յաջորդին վրայ, որով մտադիւր եւ իրաւամբ ձը-
 « դած է անոր՝ յաջորդ Հայրապետին ընտրութեան իրաւունքը որ
 « իրն էր. եւ անոր ընտրելովը ինքն ընտրած կը համարուէր :

« Թագաւորներն ալ ընտրեր են կաթողիկոսներ, ոչ միայն ազ-
 « գայինք, այլ եւ օտար իշխաններ, մասնաւորապէս պարսից թագա-
 « ւորները եւ Շահարման կոչուած Հազարացի բռնաւորները, որ
 « շատ անգամ մերայնոց ձեռօք անուղղակի կերպով ուղածնին կը
 « բարձրացունէին կաթողիկոսական Աթոռը: Բայց անոնք բռնաւո-
 « րութեան արդիւնք են եւ ոչ այլ ինչ. Ազգն այսպիսի պարագային
 « մէջ իր գտնուած վիճակին համեմատ վարուելով՝ կամ լռեցեայն
 « ընդուներ է նորընտիր կաթողիկոսը՝ եթէ արժանաւոր գտեր է
 « զայն իւր կոչման, եւ կամ ինք թագաւորին կամ բռնակալին դէմ
 « բողոք բառնայու կարողութիւն չէ ունեցեր: Բայց երբեմն նաեւ ա-
 « սոր հակառակ բողոք եւ ազազակ բարձեր է, մերժեր է այն բռն-

« նաւորական կաթուղիկոսը եւ ուրիշ մը ընտրեր ու կաթուղիկոսա-
« ցուցեր է անոր տեղ :

« Եկեղեցականք ալ ընտրեր են շատ անգամ զկաթուղիկոս , եւ
« երբեմն միայն եկեղեցականք , առանց քաղաքային անձանց մաս-
« նակցութեան : Բայց ե՞րբ . Աղգին ցիր եւ ցան , նուաճեալ եւ դեր-
« եալ ժամանակներուն մէջ . այնպէս որ եթէ քաղաքայինք ուղէին
« ալ՝ թերեւս չպիտի կարողանային մասնակցութեան իրաւունքնին
« ի գործ դնել , մերթ առ ահի բռնակալաց , եւ մերթ առ դժուարու-
« թեան ճանապարհաց եւ ի մի վայր գումարելոյ :

« Բայց ժողովուրդն ալ այսպիսի չափազանցութեանց մէջ գտնը-
« լեր է երբեմն : Երբ Սուրբն Ներսէս Ծնորճայի վախճաներ է , անոր
« եղբօրորդին Գրիգոր Տղայ՝ յուղարկաւորութեան հանդէսին գտնը-
« լելով , ժողովուրդն անոր շնորհապարտ վեհ կերպարանքին ու ի-
« մաստայից բանիցն զմայելով՝ միաբերան ազազակ բարձեր ու
« զնա ինքն Գրիգոր Կաթուղիկոս խնդրեր է , եւ ըստ այսմ խնդրա-
« նաց , որ առաւել ստիպման կերպարանք ունի քան թէ ընտրութեան ,
« երանելին ի զահ կաթուղիկոսութեան համբարձեր է հաճութեամբ
« եւ օժմամբ եպիսկոպոսաց :

« Ասոնց ամենն ալ եղեր կատարուեր են , բայց , ինչպէս որ
« վերն բռինք , իրբեւ դարաւուղութիւն ընդհանուր կանոնաց , որով
« Ազգը ի սկզբանէ անտի իր Հայրապետին ընտրութիւնն ինքն ընել
« կարգադրեր է միայնակ եւ քովանդակ . այսինքն ազգային ամէն
« կարգի եւ աստիճանի արժանաւոր անձանց ձեռօք , եւ միայն ա-
« նոնց ձեռօք : Օտարը երբեք իրաւամբ ձեռք ձգած չէ անոր մէջ :
« Բայց միթէ կարկոտած ալ չէ . - Այո՛ . Սուրբն Գրիգոր Պահլա-
« ւունիին՝ Ծնորճաւոյն եղբօրը կաթուղիկոսութեան ժամանակ ,
« Բիւզանդիոյ կայսրութեան եւ Յունական Եկեղեցւոյ Պատրիար-
« քութեան կողմէն առաջարկութիւն կ'ըլլայ մեր Հայրենի Եկեղե-
« ցին Յունականին հետ միաւորելու , եւ այս նպատակաւ կայսեր
« եւ Պատրիարքին կողմէն պատգամաւորութիւն մը կը ներկայանայ
« Հայկազանց Կաթուղիկոսին՝ ինն գլուխ առաջարկութիւն բերելով
« Յունական Եկեղեցւոյ կողմէն , որոնց իներորդն է . « Զի ընդու-
« նիցին Հայր զառաջարկութիւն Կաթուղիկոսին՝ միայն ի թագաւո-
« րէն Հռոմոնց » :

« Առ այս Հայրապետն Հայոց հանդերձ եպիսկոպոսօք պատաս-
« խանի այսպէս . « Վասն իններորդին՝ ազաչեն Հայք թոյլ տայ իւ-
« ռեանց ընտրութեամբ կացուցանել կաթուղիկոս , զի ընդ իշխանու-
« թեամբ զանազան ազգաց զոլով մեր , ասեն , դժուարին է ընտրու-
« թեամբ կայսերն դնել կաթուղիկոս » : Եւ որպէս զի այս խնդրական

« պատասխանին իւր նշանակութեան ծանրութիւնը չկորսնցունէ ,
 « յաւելուն առ այն թէ « զաթոռն Անտիոքայ , եթէ հնար է , եւ զթեմս
 « նորա կալցի կաթուղիկոսն Հայոց , եւ յորժամ այս լինիցի , ըն-
 « արութիւն կաթուղիկոսին կախեսցի զհաւանութենէ կայսերն » :
 « Յունաց կայսրն ու տիեզերական պատրիարքն եւս կեցան սոյն
 « խնդիրը կրկնելէ , եւ ինն առաջադրութիւններէն միայն երկուքու-
 « վը բաւականանալով որոշեցին :

« Միթէ յայտնի չերեւի՞ր այս պատմութենէն որ մեր Եկեղեցին
 « Հայրապետական ընտրութեան համար չը կրնար եղեր ընդունիլ
 « օտարի միջամտութիւն , թէ եւ օտարն ըլլայ յունական կայսր մը ,
 « եւ իր միջամտութիւնը յունական Եկեղեցւոյ դուրս տիեզերական
 « պատրիարքի մը համահաստեմամբը զօրութիւն ստացած ըլլայ :
 « Ի՞նչ զժողարութիւն կար մեր նախնեաց ընդունիլ Բիւզանդիոյ
 « կայսեր առաջարկութիւնը , որ մեր Ազգայնոց մէկ մասին վրայ
 « տիրող իշխանն ըլլալէ զատ , Ս . Եկեղեցւոյ հարազատ ծիրանա-
 « ծնունդ թաղաւորներէն էր , եւ Կոստանդնուպոլսոյ պատրիարքն
 « անոր կը համաձայնէր . եւ եթէ մերայինք ընդունէին սոյն առա-
 « ջարկութիւնը , քաղաքականապէս Ազգին մեծ ծառայութիւն ըրած
 « չէ՞ին համարուեր : Իւրզանդիոյ հօր կայսեր հաւատակցութեան
 « շնորհիւ՝ անոր մասնաւոր պաշտպանութիւնը զբաւեռու հարկ եւ
 « կարօտութիւն չը կա՞ր արդեօք նոյն ժամանակները , որ մեր Ազ-
 « գին երկրորդ հարստութեան տունը կործանած , Ազգայինք մեծ
 « մասամբ Մեծին Հայաստանի վրայ բռնացող հեթանոսաց ձեռքը
 « մասնեալ , եւ Ասիոյ Արեւմտեան կողմը՝ Ռուբինեանց փոքրիկ եւ
 « տակաւին խիստ տկար տէրութենէն զատ՝ Ազգային իշխանութեան
 « ոչինչ նեցուկ չէր մնացած : Այո՛ , կարօտութիւն կար , եւ ոչ մի-
 « այն կարօտութիւն , այլ երկիւղ ալ կար , որ եթէ մերոնք Յունա-
 « կան առաջարկութիւնները մերժեն , թերեւս Յունաց կայսրութիւ-
 « նըն առիթ ունենալով Հայաստանի մնացորդաց եւ մասնաւորապէս
 « Կիլիկիոյ փոքրիկ , բայց անկախ իշխանութեան վրայ յարձակում
 « ընէր , եւ Ազգին վերջին յոյսն ու միակ միխթարութիւնն ալ կորըն-
 « չէր յաւիտեան : Իայց մեր նախնիքն այս առարկութեանց եւ դի-
 « տողութեանց եւ ոչ մէկուն ունկն մատուցին , այլ Հայրենական
 « Եկեղեցւոյ օրինակ նախանձախնդրութեամբ դօտելորեալ՝ հա-
 « մարձակ պատասխանեցին կայսեր , եւ խնդրոց ձեւով անոր հրա-
 « մանը մերժեցին :

« Կաթուղիկոսական ընտրութեան վերաբերեալ սոյն ընդհանուր
 « սկզբունքէն զատ՝ պատմութիւնն անոր մէկ քանի տրամադրու-
 « թիւնները կը յայտնէ , որով կը տեսնենք թէ մեր նախնիք Արշա-

« հունեաց թագաւորութեան վերնալէն ետքը, տեսնալով օտարազգի
 « բռնաւորաց ազդեցութեամբ մէկ քանի փոռամուկ եկեղեցականաց
 « կաթուղիկոսութեան հատանելը, եւ երբեմն նաեւ մէկ քանի ին մէկէն
 « զանազան տեղուանք նոյն բարձր աստիճանին ընտրուելը, այնպէս
 « որ միեւնոյն ժամանակ մինչեւ հինգ-վեց կաթուղիկոս երեւան ե-
 « լած են Ազգէին մէջ, Գրեգոր Պահաւունի օրինաւոր կաթուղիկոսին
 « նախագահութեամբ եկեղեցական Սինոդ ըրեր են եւ օրէնք զրեր
 « են, «զի առանց հաւանութեան չորից Աթոռոց կախկոպոսաց ոչ
 « ոք նստցի կաթուղիկոս՝ որ ի Սինիս, եւ Թաղէոսի վանուց՝ որ
 « յԱրտաղ»: Բայց այս օրէնքն շատոնց անգործադրելի եղած է, նոյն
 « իսկ յիշեալ չորս կախկոպոսական Աթոռոց պակասելով:

« Բաց յայտմանէ, Մխիթար կաթուղիկոսին ի սկիզբն չորեքտա-
 « սաներորդ դարու Հոռովմ գրած թուղթին մէջ յիշատակութիւն կը
 « գտնուի Ազգային կաթուղիկոսաց ընտրութեան եղանակին վրայ
 « այսպէս. «ժողովին հրամանաւ Արքայի Արքեպիսկոպոսունք, Ե-
 « պիսկոպոսունք . . . իւրաքանչիւր ոք ի նոցանէ տայ զանուն միոյ
 « ուրուք յեպիսկոպոսաց կամ ի վարդապետաց . . . եւ զանունս
 « զըրով տան թագաւորին ընդ կնքով իւրեանց, եւ եթէ բազումք ի-
 « ցեն վիճակովքն, հրամայէ թագաւորն, զի միարանեցին ի վերայ
 « երկուց կամ երից, եւ սպա թագաւորն հանդերձ ժողովով իւրով
 « ընտրէ յերից ի նոցանէ զմին զոր կամի, եւ յաւուր օծութեան անդ՝
 « թագաւորն ինքնին ծունր կրկնեալ՝ դնէ զմատանին ի ձեռն նորա
 « համբուրելով զաջ նորին եւ զառնայ ի տեղի իւր, եւ յայնժամ առ-
 « նուն զնա Առաջնորդք, եւ օծանին ընդ օրինի կաթուղիկոսութեան»:
 « Ահա այս տրամադրութիւններն ալ կապացուցանեն, որ Ազգն ինք
 « կընտրէ զիւր կաթուղիկոսը իւր կրօնական եւ քաղաքային աստի-
 « ճանաւորաց ձեռք, եւ օտարի ազդեցութեան առաջն առնելու
 « համար ամէն պէտք եղած միջոց ի գործ դրած է:

« Արդ՝ կաթուղիկոսական Յանձնաժողովը Ամենայն Հայոց
 « կաթուղիկոսութեան արդի ցաւալի կացութեանը եւ ընտրութեան
 « ներկայ եղանակին հակառակ մեր նախնական օրինաց տրամա -
 « դրութիւնները տեսնելով, իր պաշտաման Ա. եւ Բ. կէտերուն
 « կատարմանը համար բաւական կը համարի յայտարարութիւն ընել
 « առ պատկուելի ժողովք, թէ կաթուղիկոսական արդի սահմանադրու-
 « թիւնը եւ կաթուղիկոսի ընտրութեան արդի սահմանադրութիւնը
 « հիմնական ուղղութեան կը կարօտի, եւ պէտք է ամէն ինչ մեր Ե-
 « կեղեցւոյ նախնական օրինացն ու աւանդութեանց վերածել»:

Ըստ այսմ աւարտի Կ. Յանձնաժողովն զգիտողութիւնս իւր եւ
 զտեղեկութիւնս ըստ երկուց խնդրոցդ, անցանէ ի մասն Գ., իմա՝

յերրորդն խնդիր սակս որոշելոյ զկղանակ ինչ ի մասնակցութիւն Հայոց Թուրքիոյ յընտրութեան Կաթուղիկոսի Ամենայն Հայոց եւ Ժրագրի այսպէս :

Ա. Ս. Էջմիածնի Կաթուղիկոսը Ամենայն Հայոց Ընդհանուր Հայրապետ եւ Հոգեւոր Տէրն ըլլալով՝ իր ընտրութիւնն ազգային կըլլայ :

«Բ. Ս. Էջմիածին, Հայաստանեայց Մայր Եկեղեցին, Աստուած-
« որդւոյն հրաշալի ճարտարապետութիւնը Ա. Լուսաւորչին ձեռօք
« շինուած, անոր Հայրապետական Աթոռն եւ համօրէն Հայկազանց
« հոգեւոր միութեան կեդրոնը ըլլալուն համար, Ամենայն Հայոց
« Կաթուղիկոսական զահը միշտ հոն կը մնայ, եւ հետեւաբար Կա-
« թուղիկոսին վերջնական ընտրութիւնն ալ հոն կը կատարուի :

« Գ. Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ընտրութեան Տաճկաստանի
« Հայոց մասնակցութեանը համար նախ եւ առաջ Կ. Պոլսոյ եկեղե-
« ցականք՝ վիճակային ժողով զուժարելով՝ Կաթուղիկոսական ըն-
« տրելոց հանգամանքը կորոշեն, այսինքն՝ Ազգին մէջ գտնուած
« բարձրաստիճան եկեղեցականներէն միայն զանոնք, որ Կաթուղի-
« կոսի աստիճանին արժանանալու արգելք մը չունին, կը զատեն,
« եւ անոնց ցուցակը ժողովոյ անդամոց ստորագրութեամբ կը վա-
« ւերացնեն :

« Դ. Սոյն ցուցակը՝ Տաճկաստանի Հայոց ընդհանրութիւնն օ-
« րինաւորապէս ներկայացնող Ազգային Երեսփոխանական ընդհա-
« նուր ժողովոյ կը ներկայացուի, որ անոր մէջէն եւ միայն անոր
« մէջէն՝ զազանի քուէարկութեամբ երեք ընտրելի կորոշէ : Եթէ
« ասոնցմէ մէկը քուէին բացարձակ առաւելութիւն չստանայ, երկ-
« րորդ անգամ քուէարկութիւն կ'ըլլայ երեք առաւելագոյն քուէ
« ստացողաց վրայ, եւ սոյն երեք ընտրելիք իրենց ստացած քուէից
« յին կեդրոնական ընդհանուր ժողովով ընտրած են :

« Ե. Տաճկաստանի Հայոց Առաջնորդութիւնները, Սոսյ եւ Աղ-
« թամարայ Կաթուղիկոսութեանց սահմաններուն մէջ գտնուող վի-
« ճակներուն հետ 65 ըլլալով, ընդհանուր ժողովոյ կողմէն ընտրը-
« ուած երեք ընտրելեաց ամէն մէկը 130 քուէի արժէք կունենան,
« այնու իրաւամբ որ բոլոր Տաճկաստանի Հայոց թէ եկեղեցական
« եւ թէ աշխարհական ընտրողաց ամենուն ներկայացուցիչ ազգա -
« յին կեդրոնական ընդհանուր ժողովով ընտրած են :

« Զ. Տաճկաստանի Հայոց Երեսփոխանական ընդհանուր ժողո-
« վը երկու պատգամաւոր կ'ընտրէ, մին եկեղեցական (միւսն աշխար-
« հական), որք Ս. Էջմիածին կերթան, եւ Տաճկաստանի երեք ըն-
« տրելեաց անունները եւ անոնց ամէն մէկուն 130 քուէի արժէք ու-

« նենալը յայտնող ընդհանուր ժողովոյ պաշտօնական զինքը Սինդիկին
 « եւ ընտրող ժողովին ներկայացելէ ետեւ, Ս. Էջմիածնի առճարին
 « մէջ երկրորդ անգամ կատարուելիք քուէարկութեան ժամանակ՝
 « քուէներն կուտան միայն այն բարձրաստիճան եկեղեցականին,
 « որ Տանկաստանի ընդհանուր ժողովին մէջ քուէից բացարձակ ա-
 « ռաւելութիւն ստացած է:

« է. Ս. Էջմիածնի Տաճարին մէջ ներկայացեալ Համազգային
 « Պատգամաւորներուն ըրած քուէարկութեան արդիւնքը յայտնուե-
 « լէն ետք, ամենէն աւելի քուէ ստացող եպիսկոպոսն օրինաւորա-
 « պէս Հոգեւոր Տէր է Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ Կաթողիկոս
 « Ամենայն Հայոց սփռելոց ընդ ամենայն տիեզերս»:

Այսպէս աւարտի Յանձնաժողովն Կոթուղիկոսական զօրագիր
 իւր եւ զեզրակացութիւն՝ յաւելեալ եւ զյոյս իւր սիրաշահելոյ զբա-
 ռահանութիւն Օգոստ. Կայսեր Ռուսաց առ այս:

Թուի մեզ հետաքրքրական լինել ինքնարուզիս - յաւելուած ա-
 ռաջարկութեան Յանձնաժողովոյ որ վասն Ստոյ եւ Աղթամարայ
 պիտականուն կաթողիկոսութեանց՝ զտեալ եւ ուղղեալ առ Ընդհ.
 ժողով Տեղեկագրովն իւրով: Ուստի ի կնքել մերում զայսուսիկ պար-
 բերութիւնս որ սակա ջանից եւ արդեանց Յանձնաժողովոյ առթիւ
 խնդրոյ վերաքննութեան Պալատէնիոյ, ոչ աւելորդ համարիմք ըն-
 դօրինակել ասէն միայն զօրագիր առաջարկութեանն ընդ երկուց
 պարբերութեանցն որ ի սկիզբն ծրագրոյ, թողեալ ի բաց զհամայն
 պատմական տեսութիւնս եւ զխորհրդածութիւնս՝ առիթ առեալ եւ
 պատրուակեալ զմիաժամանակեայ թափուր վիճակս Աթոռոյն Ստոյ
 Աղթամարայ, եւ կամեցեալ ենթարկել զնորընտրելիս ընդ գերիշխա-
 նութեամբ Կաթողիկոսի Ամենայն Հայոց՝ ի կատարեալ միութիւն
 Եկեղեցւոյ Հայաստանեայց ընդ միով գլխով: Ահաւասիկ.

« Այս նպատակաւ Յանձնաժողովս կառաջարկէ որ Ընդհանուր
 « ժողովը վճիռ տայ եւ տնօրէնութիւն ընէ, որ այսուհետեւ Ստոյ
 « Արքային Կաթողիկոսի յաջորդութեան նկատմամբ Աջապահ կոչ-
 « ուած կարգ մը անձանց ըրած պահանջողութիւնն անընդունելի է,
 « եւ թէ այս աթոռոյն, եւ թէ՛ Աղթամարայ աթոռոյն համար Կա-
 « թողիկոս ընտրելու իրաւունքն Աղբային Ընդհանուր ժողովին ի-
 « րեն սեպհական (° . . .) ըլլալով, նա կընտրէ կաթողիկոսները,
 « երկուքն ալ Միաբանութեանց կողմէն ներկայացուած օրինաւոր
 « ցուցակին մէջէն զատելով, ինչպէս որ Ս. Երուսաղէմի Պատրիար-
 « քի ընտրութեան համար ըրած է եւ կընէ:

« Եթէ Ընդհանուր ժողովն այս վճիռը տալու կամք ընէ, Յանձ-
 « նաժողովիս կը մնայ սա հետեւեալ յօդուածներն առաջարկել, իր-

րեւ ընտրական օրէնք Սսոյ եւ Աղթամարայ կաթողիկոսաց ընտրու-
« թեան :

« Ա. Երբ Սսոյ կամ Աղթամարայ կաթողիկոսը վախճանի ,
« Միաբանութիւնը իր Տնօրէն ժողովոյ հրահրմամբ ընդհանուր ժո-
« ղով կազմելով՝ Տեղապահ մը կընտրէ կաթողիկոսութեան աթո-
« սոյն , եւ դանի կառաջարկէ Կեդրոնական Վարչութեան խառն ժո-
« ղովոյ հաստատութեանը :

« Բ. Միաբանութեան ընդհանուր ժողովը տեղապահի նախա-
« դահութեամբ ատեան կազմելով (քաղտնի քուէարկութեամբ)
« ցուցակ մը կը պատրաստէ կաթողիկոսութեան աթոսը բարձրանա-
« լու արժանաւոր եկեղեցականաց , որուն մէջ զըուելու անձինք պէտք
« է 40 տարին լրացուցած եւ զէթ հինգ տարիէ ի վեր եկեղեցական
« աստիճան ընդունած ըլլան , Աթոսոյն եւ Միաբանութեան ամէն
« պարագայից տեղեկութիւն եւ հմտութիւն ունենան , եւ որ եւ իցէ
« դատի ներքեւ չգտնուին տէրութեան կամ Ազգին կողմէն :

« Գ. Սոյն ընտրելեաց ցուցակը որ գտնէ երեք անուն պիտի պա-
« րունակէ , Միաբանութեան ընդհանուր ժողովոյ մեծազոյն մա-
« սին ստորագրութեամբ եւ Տնօրէն ժողովոյ անդամոց եւ կաթո-
« ղիկոսական տեղապահին կնքովը վաւերացնելով՝ կը զրկուի Կե-
« դրոնական Վարչութեան խառն ժողովոյ , որ իր ունեցած զիտո-
« ղութիւններով հանդերձ դայն կը ներկայացնէ Ազգ. Ընդհանուր
« ժողովոյ :

« Դ. Ընդհանուր ժողովը կընտրէ զկաթողիկոս նոյն ընտրելեաց
« ցուցակին մէջէն գաղտնի քուէարկութեամբ եւ բացարձակ առա-
« ւելութեամբ քուէից :

« Ե. Կոստանդնուպոլսոյ Պատրիարքը ընդհանուր ժողովոյ ըն-
« տրութեան գործադրութիւնը կընէ նորընտիր կաթողիկոսին օժ-
« ման համար պէտք եղածը տնօրինելով եւ Բ. Դոնէն մասնաւոր
քազրիքով հաստատութեան ֆէրման առնելով :

« Զ. Նորընտիր կաթողիկոսն իր ընտրութեան լուրը կը հա-
« ղորդէ Ամենայն Հայոց կաթողիկոսին պատշաճաւոր եղանակաւ ,
« եւ շրջաբերական կոնդակով ալ իր թեմերուն մէջ դտնուող ժո-
« ղովրդեան կը ծանուցանէ իր գահակալութիւնը » :

Այսու եւ այսպիսեաւ ծրագրաւ Զանայ Յանձնաժողով հաստա-
տել զնոր իմն զըութիւն հակասական , բարձրացուցանել առաւել
զիշխանութիւն Ընդհ. ժողովոյ եւ Պատրիարքարանի Գում-Գարույի ,
փոխանակ պատրուակեալ միութեան Եկեղեցւոյ եւ Ազգի Հայաս-
տանեայց ընդ միով գլխաւոր Գլխով , եւս եւ շփոթէ զներքին եւ

դարտաքին իրաւասութիւնս ծանունս՝ զբողոքաւ զինդիր արժանապատուութեան ուսս. կառավարութեան :

Թողցուք զայս, եւ առցուք ի ձեռս զընթացս Սինոզի, որ հետեւի յաճոխ եւ ի նուիրական խնդիրս անզամ հրահանգաց եւ թեւադրութեանց ուսս. կառավարութեան :

Արդ՝ յաւելորդաց իմն է երկարարանել զբողոքութեանց եւ վեթեւադրութեանց ուսս. կառավարութեան ատթիւ անցից եւ վերաքննութեան կանոնադրութեան 1836-ի եթէ աստ ի Կ. Պոլլս եւ եթէ անդ ի Ս. Էջմիածին :

Սինոզ առաւել իմն հլու հպատակութեամբ կամակատար լեալ օտարաց, մանաւանդ զի Տեղակալ եւ անդամք Սինոզի էին արքայակարք եւ տգէտք ըստ բազում մասանց՝ զուրկ մինչեւ իսպառ ի բարեպաշտական զգացմանց, օրադրական որոշմամբ արձանագրէ զօտարահրահանգ պատուէրս զայսոսիկ .

« Ա. Համարել մասնաւոր իմն Յանձնաժողով եւ ոչ պաշտօնապահ զի. Յանձնաժողովն Կ. Պոլլոյ :

« Բ. Ոչ ճանաչել զորոշումն, ապա ուրեմն զժրագիր նորա « (Յանձնաժողովոյ), որ ոչ ունի ի ձեռին զերաշխաւորութիւն ապահով, եթէ կարէ՞ ժողովակդ արդեօք հաւատարիմ թարգման « կալ փախաքանաց Հայոց Տաճկաստանեայց, մանաւանդ զի դատարեալ է Ազգ. Սահմանադրութիւն, տարակուսական է վերաքննութիւն եւ ապագայ նորա, վասն որոյ Սինոզ համարի զեղբարեկացութիւն Յանձնաժողովոյ իբրեւ զաշխատութիւն վիճարանելի, որ ոչ կարէ վայելել զկշիռ ինչ ի գործս պաշտօնականս :

« Գ. Մերժել իսպառ զեղբարեկացութիւն Յանձնաժողովոյ որ սակա Պոլլոժնիոյ (Պալատէնիոյ), ըստ որում կազմեալ է կանոնադրութիւնդ զմի մասն օրինաց տէրութեան եւ հարկ էր ըստ սահմանեալն կարգի (իմա առեալ կանխաւ զամենողորմած բարեհաճութիւն եւ զհրամանս ո. կայսեր) ենթարկել ընդ վերաքննութեամբ եւ ընդ փոփոխութեամբ, որպէս լինին առհասարակ փոփոխութիւնք օրինաց : Եւ զի Պալատէնիան պատկանի ուսաստանոց, ապա ուրեմն ոչինչ արժեն քննադատութիւնք օտարերկրեաց անձանց (°) : Անկ էր միայն ուսական կառավարութեան, որ հաստատեաց զկանոնադրութիւն 1836 ամի, եւ իրաւունք նորա են մտնանել զփոփոխութիւնս ի նմին : — Եւ միանգամայն ոչ ընկալեալ Սինոզի զժրագիրն զայս համարէր ըստ առաջնոյն եւ ճանաչէր միայն զ45 Առաջնորդութիւնս Տաճկահայոց եւ զ90 ձայն պատգամաւորաց, ցորչափ մնային ի գաղտնի (°) եթէ որպէս բարձրա-

« ցան 45 Առաջնորդութիւնք ի 65, եւ զիս^օրդ յաւելաց ի նորոյ 20 « Առաջնորդութիւնք » :

Մինչ այսպէս չփէլին ընդ միմեանս երկողքին Կեդրոնական Մարմինք պաշտօնականք աննախանձելի իմն եւ անգիտակից ուղղութեամբ եւ յարաբերութեամբք, Պատրիարք Հայոց Կ. Պոլսոյ Տ. Պօղոս Արքեպս. Թաքթաքեան կրկնեաց զրել Սինոդի զգրութիւն զայս ի 26-ն Օգոստոսի (1866), զոր եւ արժան համարիմք ամփոփել աստեւն ամրողութեամբ՝ ի բաց թողեալ զպատկերացուցակ Առաջնորդութեանց ըստ նորոգ կազմութեան :

« Որպէս զբեցաւ ի մենջ առ Սրբազան Սինոդը ի 15 Յուլիսի ան- « ցելոյ ընդ 16⁴ համարաւ, խնդիր ընտրութեան Յաջորդի ընդհան- « րական Հայրապետի Մայր Աթոռոյց Սրբոյ՝ առաջի ետաւ Ազգա- « յին Ընդհանուր Ժողովոյ մայրաքաղաքիս, որ կազմեալ գոլով յե- « կեղեցական եւ յաշխարհական երեսփոխանաց ազգիս ընդ մերով նա- « խազահութեամբ զազգն ողջոյն զթուրքիարնակ՝ առաջի Օսմանա- « կան պետութեան եւ առաջի ազգին ներկայացուցանէ եւ ըստ տը- « բամադրութեան Մերոյ Ազգային Սահմանադրութեան ձեռնհաս է « տնօրինել զիրաւունս մասնակցութեան թուրքիարնակն հայոցս « յընտրութեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին :

« Ազգային արդի Ընդհանուր Ժողովս հասու եղեւ կարգադրու- « թեան Սրբոյ Սինոտիդ, այն է խնդրել ի պատրիարքէն Կ. Պոլսոյ՝ « զի հանդերձ Կրօնական Ժողովով նշանակեսցէ զմի ոք եկեղեցական « պատգամաւոր, եւ ի Քաղաքական Ժողովոյ՝ զի եւ նա որոշեսցէ « զմի ոք աշխարհական՝ պատգամաւոր վասն Կ. Պոլսոյ, եւ հրա- « ւիրեսցէ զամենայն Առաջնորդական վիճակայինս թուրքիոյ ըն- « տրել իւրաքանչիւր ի նոցունց կրկին պատգամաւորս, յորոց մին « եկեղեցական ի զիմաց Առաջնորդի, եւ մին աշխարհական՝ ի զի- « մաց Ժողովրդեան, եւ այսու ամենեքին մասնակից լիցին պատգա- « մաւորք եւ կամ նամակաւ ընտրութեան Կաթողիկոսին Ամենայն « Հայոց, որ հանդերձեալ է կատարել ի 15-17 սեպտեմբերի այսր « ամի ի Միաճնաէջ Ս. Տաճարին : Եւ տեսեալ, զի ընտրական կար- « դադրութիւնս այս, որ թերեւս համաձայն կանոնադրութեան ե- « կեղեցական վարչութեան մերազնէից Ռուսաստանեայց, այլ ոչ ի « զէպ զայ բնաւին թուրքիարնակ հայկազանցս քաղաքական վիճա- « կի պարագայից, որք պահանջեն «միոյն ի ձեռն պաշտօնական զըլ- « խոյ Ազգին՝ այն է Պատրիարքին Կ. Պոլսոյ, եւ ընդ նորին նախա- « դահութեան կարգեալ Ազգային Կեդրոնական Ժողովոյ ունել պաշ- « տօնական յարաբերութիւնս ընդ համայն համազգիս օտարաբնա- « կրս», եւ նկատելով իսկ զի Ս. Սինոդն զհրաւիրազիրս իւր ի խըն-

« զիւր պատգամաւորացն պահանջելոց ի մերազնեայ վիճակայնոց
 « Թուրքիոյ՝ ոչ առ վիճակայինս ուղղակի, այլ առ Կեղերոնական
 « Վարչութիւնն ի Կ. Պոլիս ուղղեալ՝ ահն յայտնի յերևան ամէր
 « զիւրն քաղաքապետական խոհականութիւն ի պատճառս փափուկ
 « զրից քաղաքական վիճակի թուրքիարնակ հայկազանցս, վասն ո-
 « ռոյ Աղգային Ընդհանուր Ժողովն սահմանեաց զմասնակցութիւն
 « թուրքիարնակ Հայոցս յընտրութիւն Ամենայն Հայոց Հայրապե-
 « տին՝ առնել ոչ ի վիճակաւորացն եւ ի ժողովրդականացն պատգա-
 « մաւորն եւ կամ քուեայս առանձինս խնդրելով ըստ պատուիրանաց
 « Ս. Սինողիդ, որ նոր իմն է եղանակ ընտրութեան եւ ոչ երբեք ի
 « դործ եղեալ աստանոր ի մէջ մեր, եւ ոչ զԱզգն ողջոյն յերևս բա-
 « ժանեալ՝ միայն զթեմականս Ս. Էջմիածնի ընդունել ի մասնակ-
 « ցութիւն ընտրութեան, որպէս անուշադրութեամբ եղեալն է յըն-
 « տրութեան հանգուցելոյ Հայրապետին, վտարելով արտաքս զթե-
 « մականս Կիլիկիոյ եւ Ալթամարայ մասնաւոր կաթուղիկոսու-
 « թեանց, որպէս թէ չիցնն եւ նոքա որդիք Հայաստանեայց կաթու-
 « ղիկէ Առաքելական Եկեղեցւոյ, եւ կամ թէ ընտրելի կաթուղիկոսն
 « չիցէ կաթուղիկոս ամենայն Հայոց, որ ընդ տիեզերս իցեն: Այլ
 « զհամօրէն Տաճկաստանի եւ Դանուբեան աշխարհեաց հայորեայն
 « ընդունել ի մասնակցութիւն ընտրութեան Հայրապետին Ամենայն
 « Հայոց, ըստ կարգաց վազնջուց եւ օրինաց Հայաստանեայց Մի,
 « Սուրբ, Կաթուղիկէ եւ Առաքելական Եկեղեցւոյ:

« Եւ արդ՝ ընդ սահմանելոյ Աղգային Երեսփոխանական ընդհա-
 « նուր Ժողովոյ՝ գումարեցաւ վիճակային Եկեղեցական Ժողով յեր-
 « կոտասաններորդումն Յուլիսի յԱթոռանխտ Մայր Եկեղեցւոջ Կ.
 « Պոլսոյ ընդ մերով գահերեցութեամբ, ուր բաց յեպիսկոպոսաց
 « դտելոց ի Մայրաքաղաքիս եւ ի քարոզիչ վարդապետաց եւ յաւազ
 « եւ յաթոռակալ քահանայից ամենայն եկեղեցեայց Կ. Պոլսոյ՝ ներ-
 « կայ գտան նաեւ յատուկ հրաւիրմամբ մերձակայ վիճակաւոր Ար-
 « քեպիսկոպոսունք եւ վանահարք Ս. Ուլտին Գլխայ եւ Արմաշու
 « հոշակաւոր վանուցն, եւ Կիլիկիոյ եւ Ալթամարայ եւ Ս. Երուսա-
 « ղէմի Աթոռոց (° . . .) եւ յայս սակս կարգեալ փոխանորդի բարձ-
 « րաստիճան եկեղեցականք: Ի Ժողովի աստ նախ պատրաստեցաւ
 « ցուցակ ամենայն եպիսկոպոսաց Հայաստանեայց եկեղեցւոյ ա-
 « ռանց խորութեան երկրի եւ պաշտաման եւ այլ հանգամանաց,
 « որոց թիւն հհաս ի յիսուն, եւ ի յիսնիցն անդէն ի Ժողովի անդ
 « որոչեցան եօթնեկին արժանաւորագոյնք ի դահախալութիւն Արա-
 « րատեան Գերագոյն Աթոռոյն. այս ցուցակ եօթն անուանց ստորա-
 « գրեալ ի հարց Ժողովականաց՝ ներկայացաւ Աղգային Երեսփոխա-

« նական Ընդհանուր Ժողովոյ, որ ի քսաներորդ երկրորդ նմին ամ-
 « սոյ դումարեալ ի տաճարին Սրբուհւոյն Աստուածամօր մայրաքա-
 « ղաքիս ընդ մերով զահեւեղութեամբ եւ զործակցութեամբ ներ-
 « կայացուցչաց Կաթողիկոսական Աթոռոյն Կիլիկիոյ եւ Աղթամա-
 « րայ, եւ Պատրիարքական Աթոռոյն Ս. Երուսաղէմի, զեօթն ըն-
 « տրելեացն զցուցակ ըստ ատենական կարգաց եւ կանոնաց՝ զաղտ-
 « նի քուէարկութեամբ վերածեաց յերիս ընտրելիս, յորոց առաջինն
 « է եւ զյիսուօր նախկին Պատրիարք Կ. Պոլսոյ Ամենապատիւ Ս.
 « Գէորգ Ս. Արքեպիսկոպոս Պրուսացի, զկնի նորա Ամենապատիւ
 « Տ. Եսայի Ս. Արքեպս. Պատրիարք Ս. Երուսաղէմի, եւ յետ նորա
 « Գերապատիւ Տ. Իգնատիոս Ս. Արքեպիսկոպոս Վասպուրականի:
 « Սոքա եւ երեք ընտրելիք կաթողիկոսական զահուն Մօր Լուսոյ
 « Կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի ի զիմաց հանուրց Հայաստանեայց
 « ընակելոց ի Թուրքիա, եւ մեր ներկայացուցեալ զանուանագ առ
 « Ս. Սինողղ եւ առ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ընտրո-
 « զական Համազգային Բարձր Ժողովոյ՝ յանուն Ընդհանուր Ժողո-
 « վոյ Կեդրոնական Վարչութեան Աղգիս, ի պաշտօնէ արդ առնեմք՝
 « թէ իւրաքանչիւր ի սոցանէ ունին իրաւունս կրկնաթիւ քուէից
 « վաթսուն եւ հինգ առաջնորդական միճակաց Հայոցս Տաճկաստա-
 « նի յառաջին անդ ընտրողական զործողութեան, որ ունի կատարել
 « ի Մայր Տաճարի Սրբոյ Էջմիածնի ի հնդկոտասաներօրոցն առաջի-
 « կայ սեպտեմբեր ամսեան, որպէս յայտ արարեալ է զիր Սրբոյ
 « Սինողիգ :

« Իսկ յերկրորդ զործողութեան ընտրական քուէարկութեան՝
 « որ առ ի վերջնական եւ մճուական ընտրութիւն ի միջոյ չորեցունց
 « ստացելոցն առաւելագոյն քուեայս պարտի կատարել ի համազգա-
 « յին ընտրողական բարձր ժողովի, պատգամաւորքն Հայոց Թուր-
 « քաստանեայց ունին հրահանգ յընդհանուր ժողովոյ մերմէ թէ
 « ո՞ւմ պարտին տալ զքուեայս ի միջոյ երից անգի ընտրելոց, ունե-
 « րով յայս նուագ եւս իւրաքանչիւր պատգամաւոր վաթսուն եւ հինգ
 « ձայնից զօրութիւն, եւ իւրաքանչիւր միահաղօյն հարիւր երեսուն
 « քուեայս :

« Ոչ տարազէպ թուի մեզ աստանոր մեկնարանել զտարբերու-
 « թիւն վերոյնշանակեալ թուոյ առաջնորդական միճակաց Թուրքիա-
 « ընակ Հայոցս ի թուոյն ցուցելոց յաղգային Կեդրոնական Վարչու-
 « թենէս ի մասնակցութեան մերում յընտրութեան նախորդ Քահա-
 « նայապետի: Այս տարբերութիւն որպէս տեսանի ի ցուցակէն,
 « ի ձեռս պատգամաւորաց մերոց, ծագի յայնմանէ, զի ի ժամանա-
 « կի նախընթաց կաթողիկոսական ընտրութեան՝ Աղգային Կեդրո-

« նական Վարչութեան տեղւոյս՝ ոչ էր առեալ ի զիր գլխան կա-
 « թուղիկոսութեանց Կիլիկիոյ եւ Աղթամարայ եւ ոչ զվիճակս
 « պատրիարքութեան Ս. Երուսաղէմայ՝ զոր ի վեր անդր ասացաք,
 « զորոց զմասնակցութիւն յայս համազգային ընտրական դործողու-
 « թեան սահմանեաց արդի Երեսփ. Ընդհ. Վարչութիւն թուրքիա-
 « ընակ Հայոցս :

« Ազգային Ընդհանուր Ժողովս քաջ համոզեալ է, զի յետ օրի-
 « նաւորապէս եւ ըստ ատենական կարգաց կատարման առաջին եւ
 « երկրորդ քուէարկութեանց յընտրութեան Կաթուղիկոսին ամենայն
 « Հայոց ի Մայր Տաճարին՝ ներկայութեամբ եւ գործակցութեամբ
 « մերս պատգամաւորացս, եկեղեցականն այն բարձրաստիճան՝ որ
 « առաւել քան զամենեսին ընկալնուցու քուեայս, նա ամբառնայ
 « արժանտրութեամբ ի զերպահճ Աթոռս Սրբազան Առաքելոցն Թա-
 « դէի եւ Բարդուղիմեայ եւ առաքելանման Առնն Սրբոյն Գրիգորի
 « Լուսաւորչին մերոյ, ըստ իրաւանց եւ արդարութեան եւ ըստ օ-
 « րինաց ազգային սուրբ Եկեղեցւոյս մերոյ : Եւ յայնժամ աթոռք մաս-
 « նաւոր կաթուղիկոսութեանց Կիլիկիոյ եւ Աղթամարայ, Պատրի-
 « արքութեանց Կ. Պոլսոյ եւ Ս. Երուսաղէմի, եւ ամենայն վիճակա-
 « տրք Տաճկաստանի մասնակցեալք յընտրութիւն Հայրապետին ա-
 « մենայն Հայոց՝ իրաւամբ որդիս դաւանին զանձինս ընտրելոյն յա-
 « մենայն Հայոց, որ եւ իրաւամբ կրէ զբարձր տիտղոս Գերագոյն
 « Կաթուղիկոսի ամենայն Հայոց՝ իրրեւ արդարեւ զլիսոյ միոյ մի-
 « այնոյ Կաթուղիկէ եւ Առաքելական Հայաստանեայց ուղղափառ Ս.
 « Եկեղեցւոյ, զոր պանծացուցէ» . . .

Այսպէս ուրեմն Տ. Պօղոս Արքեպս. — Պատրիարք պաշտպանեալ
 ի դիմաց Երեսփ. Ընդհ. Ժողովոյ զիրաւունս եւ զնոր գրութիւն
 մասնակցութեան Հայոց թուրքիոյ յընտրութիւն Կաթուղիկոսի ա-
 մենայն Հայոց հակառակ գրութեան եւ շրջաբերականի Սինոդի,
 հազորդէ միանգամայն զեռանունն ցանկ կաթ. ընտրելաց հանդերձ
 այլովքն, պարզեալ եւ յայտնեալ զյաւելեալս ի նորոյ գլխան Կիլի-
 կիոյ, Աղթամարայ եւ Ս. Երուսաղէմի ի յրումն 65 վիճակաց փո-
 խանակ 45-ի :

Իսկ Սինոդի Ս. Էջմիածնի ընկալեալ զայս թուղթ՝ փութայ կաղ-
 մել խոնարհաբար ի 16-ն սեպտեմբերի զօրագրական որոշումն եւ
 յաւելու ի Հրատայեցիկն օրինակ գայս. « Զներկայ գրութիւն Պատ-
 րիարքին Հայոց Կ. Պոլսոյ ընկալեալ ի անդեկութիւն՝ կցել ընդ գոր-
 ծոյն : Իսկ ըստ որում ի վերստողեալ գրութեան անդ նշանակին 130
 ճայնք ըստ թուոյ 65 վիճակաց Հայոց Տաճկաստանի, սակայն Սինո-
 դիս, նոյնպէս եւ տէրութեան Ռուսիոյ յայտնի են միայն 45 վիճակք,

որպէս եւ ընկալեալ է յընտրութեան նախկին Կաթուղիկոսի ամենայն Հայոց Տ. Մատթէոսի, վասն որոյ եւ ի ներկայ ընտրութեան եւս ընկալնուլ ըստ առաջնոյն ի հաշիւ ձայնից միմիայն 45 վիճակն, իսկ վասն մնացեալ 20 վիճակացն Սսոյ, Աղթամարայ, Երուսաղէմայ եւ Դանուբեանց (Դանուբեան դաւառաց կամի ասել) յիշատակելոց ի վեր անդր գրութեան, առնել զորոշումն զինի ընտրութեան եւ հաստատութեան նորոյ Կաթուղիկոսի Ազգիս կարեւոր խորհրդակցութեամբ դայս վսեմ ինդրոյս ընդ Նորին Վեհափառութեան, որոյ վասն եւ տալ յերումն ժամու գտանձի՞ր զեկուցումն անկախ յայսմանէ, եւ գայսմանէ յայտնել զխաւոր պառաւարութեան փխարբային Կովկասու» :

Ոչ վրիպեցին անշուշտ յուշադրութեանց վերջին տող եւ պարտաւորութիւն օրագրոյ Սինոդի, որպիսիք ոչ յաւելուն երբեք զպատիւ եւ զպարծանս յայնժամեան անդամոցն, որք էին. Տեղակալ ատեմապետք Սինոդի Գէորգ Արքեպս. Վեհապետեան, Յովհաննէս Արքեպս. Յովբեան, Գէորգ Արքեպս. Մկրտչեան, Յովհաննէս Եպիսկոպոս Արշարունի, Թաղէոս վարդապետ (արեղայ) Զիւնական, Պօղոս վարդ. (արեղայ) Տէր-Մարգարեան եւ Գրիգոր վարդ. (արեղայ) Մուշեղեան : (Ոչ ունէին վերջինքն եւ ոչ զմասնաւոր իշխանութիւն վարդապետական, որպէս եւ ոչ իսկ եպիսկոպոսունք) :

Ոչ աւելորդ համարեցի փակադձել ասդէն, զի համաձայն գրութեան Պօղոս Արքեպիսկոպոս — Պատրիարքի հասին Ներսէս Եպս. Վարժապետեան եւ Յակոբ Էֆէնտի Նորատունկեան ի պատգամաւոր ի դիմաց ընդհ. Երեսի. Ժողովոյ՝ ունելով եւ գյատուկ յաճնարարութիւնս եւ զհրահանգս կարեւորս, զորս պաշտպանեցին ըստ արժանւոյն ի Համազգային Կաթ. ընտր. Ժողովի ի Ս. Էջմիածին թէպէտ թերի իմն եւ անփորձ ուղղութեամբ պաշտօնականաւ, թողեալ իրրեւ զինդիր վիճելի եւ անվերջանալի : Միանդամայն ստորագրեցին պատգամաւորք ի վերջին Կաթ. ընտրութեան ըստ այսոցիկ օրինակացն. «Ես՝ պատգամաւոր ի դիմաց համայն եկեղեցականաց ամենայն վիճակացն (°) Ս. Էջմիածնի, եւ Կաթուղիկոսութեանցն Սսոյ եւ Աղթամարայ, եւ Պատրիարքութեանն Սրբոյ Երուսաղէմի, ըստ հրահանգին տուելոյ ինձ յԱզգային Ժողովոյ Պատրիարքութեանն Կոստանդնուպոլսոյ, ընտրեցի կաթուղիկոս ամենայն Հայոց եւ Ծայրագոյն Պատրիարք համազգական Մայր Աթոռոյ Արարատեան Սրբոյ Էջմիածնի՝ զամենապատիւ զՏէր Տէր Գէորգ Սրբազան Արքեպիսկոպոս Պրուսայու, եւ ոչ զոք կանդիտատ : Ներսէս Եպիսկոպոս Վարժապետեան. » — « Նոյնպէս եւ ես՝ պատգամաւորս ի դիմաց ամենայն ժողովրդականաց վերոյիշատակեալ վիճակաց կայսե-

րութեան Տաճկաստանի բնորեցի կաթուղիկոս զՏէր Գէորգ Սրբազան Արքեպիսկոպոս Պրուսայու եւ ոչ զոք կանդիսատ: Յակոր Պ. Նորատունկեանց»:

Գովելի էին ընթացք Երեսի. Ընդհ. Ժողովոյ Հայոց Թուրքիոյ եւ Երկուց պատգամաւորացն ընդդէմ կանդիսայական դրութեան որ ըստ տրամադրութեան ցարաղիք Պալատէնիոյ 1836-ի, այլ սակայն քննադատելի էին բանք ինչ ստորագրութեան եկեղեցական պատգամաւորի, որպիսիք զբոնեն ի միոյ կողմանէ զներքին հակառակութիւնս, եւ ի միւսմէ տան օտարացն հակառակորդաց զառիթս եւ զփաստս իրաւաբանական-միջագոյսին խնդրոց եւ վիճուց:

Ռուս. Կառավարութիւն ունէր եւ վարէր կանոնաւորապէս զղիւանագիտական ուղղութիւն եւ զծրագիր ներհուն եւ հաստատուն նաեւ ըստ խնդրոյ վերաքննութեան Պալատէնիոյ, յորմէ, զէ՛թ ըստ ներքին խնդրոյ եւ յականէ՛ յանուանէ՛ ըստ խնդրոյ Պալատէնիոյ՝ դուրկ էին Հայք առհասարակ, եթէ ի Մայր Աթոռուջ ի Ս. Էջմիածնի յաջորդութեամբ, Կաթուղիկոսաց անփորձից եւ համբակաց, միանգամայն ոչ հետեւողաց իրերաց, եթէ աստ ի Կ. Պոլիս անհաստատ եւ իրերահակառակ ուղղութեամբք Պատրիարքաց եւ վարչական անգամոց ընդ անգամոց Երեսի. Ընդհ. Ժողովոյ եւ եթէ յայլ ամենայն տեղիս եւ ի սփիւռս տիեղերաց:

Վասն որոյ յաջողէր ուսս. կառավարութեան յաւէտ մեքենայել, խարդաւանել, զժտեցուցանել ընդ միմեանս զպաշտօնական մարմինս, եւ այսպէս ենթարկել չփոթութեանց եւ թողուլ ապարդիւն զջանս Հայոց ըստ խնդրոյ Պալատէնիոյ: Յապացոյցս բանից մերոց յաւելումք չարադասել զանցս եւ զհետեւանս պալատէնիական խընդրոյ եւ կաթ. բնորութեանց որ ի 1884-85 եւ ի 1893 բաւականս առ ի ամփոփել եւ աւարտել զպատմութիւն հաստատութեան եւ խնդրոյ վերաքննութեան Պալատէնիոյ, թողեալ յայլում տեղուջ ծանրանալ եւ պարզել առաւել զառանձին կարծիս մեր որ վասն խնդրոցդ եւ ճախորդ ընթացից պաշտօնական մարմնոյ կենտրոնականաց եթէ անդ ի Ս. Էջմիածին եւ եթէ աստ ի Կ. Պոլիս (եթէ ժամ բարեպատեհ եւ պարապոյ դատանիցիմք, մանաւանդ թէ եթէ ներեսցեն անձնական տկարութիւնք մեր):

Արդ՝ յետ յաջողելոյ ուսական կառավարութեան մեքենայել զիւլանագիտական ընթացիւք եւ ջլատել զջանս Հայոց նաեւ յայսմ նըլազի, որպէս թողուլ ապարդիւն եւ զձեռնարկս Գէորգայ (կաթուղիկոսի) մինչեւ ցամ Տեառն 1882-3, զկնի վախճանի Գէորգայ, յորս միջոցի էր Պատրիարք Կոստանդնուպոլսոյ՝ հռչակաւոր հակառակորդ Պալատէնիոյ Ներսէս Եպ. Վարժապետեան, յետ 1865-6 եւ 1870

— 3 ամաց՝ երրորդեցան եւ յուրեցան աստ ի Կ. Պոլիս խնդիրքն Պայա-
ժէնիական եւ կաթուղիկոսական :

Ոչ էր հարկ կազմելոյ ի նորոյ զխորհրդարանական Յանձնաժո-
ղով կաթուղիկոսական առ ի տալ քննել դարձեալ զխնդիր Պայաժէ-
նիոյ, ցորչափ ունէր Երեսփ. Ընդհ. Ժողով առաջի աչաց զտեղեկա-
գիր եւ զընտրական զորոշումն իւր որ ի 1866 թուականի, յորում ար-
ժան էր յարատեւել մնալ հաստատուէս եւ մի՛ երբեք տալ առիթ զի-
փոխամտութեանց : Այլ սակայն տարօրինակ իմն ըմբռնմամբ եւ ուղ-
ղութեամբ կազմեաց Ընդհ. Ժողովն զլիազօր Յանձնաժողով կաթու-
ղիկոսական, որ բանակցեալ ընդ ուսական զեսպանատան Կ. Պոլ-
սոյ՝ պատրաստէր զնոր շաւիղ զիւանազիտական (°) եւ զծրագիր :

Իսկ ուսական կառավարութիւն զողջես ունչս արարեալ ի հե-
ճուկս մեզ ձեւացուցանէր ի միոյ կողմանէ համակերպել բանակցու-
թեանց որ ընդ ուսս զեսպանատուն, եւ միւսմէ հնարէր զնոր մեքե-
նայութիւնս, միանգամայն հրահանդէր զկովկասեան կառավարու-
թիւն եւ զՍինոդ Ս. Էջմիածնի ընդդէմ Ազգ. Երեսփ. Ժողովոյ եւ
Պատրիարքարանի Հայոց Կ. Պոլսոյ :

Ինեմք աստ յապացոյցս բանից մերոց զպատճէն պաշտօնազրոյն
ուղղելոյ յանուն Սինոդի ի Կովկասեան Կառավարութենէ ի 14-ն Օ-
գոստոս 1883, ընդ համարաւ 143, յորոյ ի ճակատու եղեաց է Քօն-
վիտէնցեալնոյէ (խոստովանաբար) :

« Նախարարութիւն Ներքին Գործոց վերադարձուցանելով առ
« իս զերիս ծրագիրս ազդարարողական հրովարտակաց (չըջարեբա-
« կան-ծանուցազրոց) առաքելոց ի Սինոդէն ի նախկին զլիսաւոր կա-
« ռավարութիւն կովկասեան ընդ դրութեամբ ի 1 Ապրիլի սոյն ամի
« թ. 23, հաղորդէ, թէ նկատմամբ այսոցիկ հրովարտակաց եւ առ-
« հասարակ կարգին առաջիկայ ընտրութեան Պատրիարք Կաթուղի-
« կոսի Ամենայն Հայոց՝ պարտին կատարել հետեւեալ պայմանք.-
« 1. Առ ի մասնակցելոյ յայսմիկ ընտրութեան պահանջել ի վերայ
« ճիշդ հիման 917 եւ 918 յօդ. ա. մասի ԺԱ. հատորոյ օրինաց գառա-
« քումն պատուիրակաց յիւրաքանչիւր վիճակէ Թուրքիոյ, կամ թէ՛
« ի դէպս անհարաւորութեանց նոցա ներկայանալ առ նախանչա-
« նակեալ Ժամանակն, տացին նոցա իրաւունք յայսնելոյ գրաւոր
« զկարծիս իւրեանց, հասուցանելով զայնոսիկ պատասխանիս անմի-
« ջապէս ի Սինոդն Էջմիածնի : — 2. Ձազդարարողական հրովարտակա
« Սինոդն Էջմիածնի պարտ է առաքել իւրաքանչիւր արտասահման վի-
« ճակաւոր Առաջնորդաց, չառնելով բացառութիւն վասն Հայոց

« Թուրքիոյ, որպէս յառաջ կատարէր, առաքելով զայսպիսի հրո-
 « վարտակս առ Պատրիարքս Կ. Պոլսոյ եւ Երուսաղէմի: - 3. Առա-
 « քումն առանձին հրովարտակի առ Ազգ. Ժողովն Հայոց Կ. Պոլսոյ
 « չէ համապատասխան ճիշդ մտաց 916 յօդ. Ա. Մասի ԺԱ. հատ. օ-
 « բինաց, նախ՝ զի դիմելն Սինոդի առ նոյն Ժողովն իբրեւ առ ներկա-
 « յացուցիչ Հայոց Թուրքիոյ՝ ապաքէն աւելորդ իմն է, ունելով ի
 « նկատի զայն, զի Ժողովն այն գտանի ընդ նախազահուլթեամբ Պա-
 « տրիարքին Կ. Պոլսոյ, որ ընկալցի զառանձին ազդարարական հրո-
 « վարտակ. ըստ այնմ ի հրովարտակի՝ անդ ի բաց բարձցի յօղուա-
 « ծըն, յորում ցուցեալ է առանձին բանակցութիւն Սինոդի առ Ազ-
 « գային Ժողովն Կ. Պոլսոյ յազազս ընտրելոյ զաշխարհական պատ-
 « զամաւորն: Յետ այնորիկ ի նոյն հրովարտակի հարկ է յիշել սակս
 « առաքելոյ զառանձին աշխարհական պատգամաւոր ի վիճակէն Կ.
 « Պոլսոյ, ըստ նմին օրինակի, որպէս բացատրեալ է ի ծրագրի ծա-
 « նուցողական հրովարտակի որ առ ի վիճակաւոր Առաջնորդս: - 4.
 « Ի կանոնաց ի վեր անդր յառաջ բերելոց, 916 յօդ. կարեւոր է թոյ-
 « լատրել բացառութիւն վասն պատուաւոր Դասու Հայոց ի Հնդիկս,
 « ըստ որում այնոքիկ Հայք համաթուին ընդ պարսկական վիճակին
 « Ասպահանայ, որ ըստ օրինի ունի իրաւունս առաքել յէջմիածին
 « զմի միոյն աշխարհական պատգամաւորի: Եւ ի դէպս ընտրութեան
 « ի Պարսկաստան, Հնդկարնակ Հայք ոչ կարեն ապաքէն մասնակ-
 « ցել ընտրութեան Պատրիարք Կաթողիկոսի Ամենայն Հայոց: Ուս-
 « տի Սինոդն էջմիածնի բացի հրովարտակէ յանուն վիճակաւորի
 « Ասպահանայ՝ պարտ է դիմել առ պատուաւոր անգամս Հնդկահա-
 « յոց առանձին ազդարարական հրովարտակաւ (չրջարեականաւ)՝
 « հրաւիրելով զնա (զնոսա) ընտրել ի միջոյ իւրեանց զառանձին աշ-
 « խարհական պատուիրակս առ ի մասնակցել ի պատրիարքական ըն-
 « տրութիւն՝ նախայայտնելով զայնմանէ եւ վիճակաւոր Առաջնոր-
 « դին Ասպահանայ: - 5. Առաքեալ ի Սինոդէն ի ծրագրի ազդարա-
 « րական հրովարտակաց առ Առաջնորդս Ռուսիոյ «պարսկական վի-
 « ճակաց, ի միջի այլոց, յանձնի նոցա անմիջական բանակցութիւն
 « ընդ նահանգապետաց նահանգաց, որպիսի ցուցումն կարէ վերաբե-
 « ըլ ի միայն առ վիճակն Ռուսաստանի: - 6. Ի ծրագրիւն ազդարա-
 « րական հրովարտակաց առ Պատրիարքն Կ. Պոլսոյ եւ առ Առաջնոր-
 « դըն վիճակաց չէ յիշատակեալ ինչ գտուեալն նոցա 917 յօղուածով
 « ԺԱ. հատ. օրինաց՝ իրաւանց կարգելոյ զհոգեւոր պատգամաւորս,
 « փոխանակ անձամբ զալոյ յէջմիածին:

« Առաքելով ընդ սմին զծրագրիւն ծանուցողական հրովարտա-
 « կաց առ Պատրիարքն Կ. Պոլսոյ եւ առ վիճակաւոր Առաջնորդս

« սրբազրեալս կարմրադոյն մեղանաւ համաձայն 3, 5 եւ 6 յօդուաւ »
 « ծոց ունիմ պատիւ խնդրել ի Սինոդէդ .

« Ա. Յետ պատրաստելոյ ըստ առաքեալ օրինակին զժանուցողա-
 « կան հրովարտակա առ Առաջնորդս վիճակաց ի Ռուսաստան, ա-
 « ուքել զայնս որոց հարկն է, անմիջապէս յինքենէ :

« Բ. Կազմել հրահանգեալ ի վեր անդր բացատրեալ ցուցմամբք
 « զառանձին հրովարտակա Պատրիարքին Երուսաղէմի՝ անկախ զԿոս-
 « տանդնուպոլսոյն, Առաջնորդաց արտասահման վիճակաց եւ պատ-
 « ւաւոր Դասու Հայոց ի Հնդկաստան, եւ այսօրիկ հրովարտակք,
 « հանդերձ հրովարտակաւ յանուն Պատրիարքին Կ. Պոլսոյ հաղորդ-
 « զել բացաւ կնքով ի ձեռն դիւանատան իմոյ, ի նախարարութիւն
 « Ներքին Գործոց, վասն առաքելոյ որոց հարկն է, ի ձեռն դեսպա-
 « նութեանց մերոց :

« Ընդ սմին պարտ համարիմ յարակցել, զի ցուցումն թէ յանուն
 « որոց յականէ յանուանէ վիճականոց Առաջնորդաց Թուրքիոյ պար-
 « տին զոլ պատրաստեալ ծանուցողական հրովարտակք, յաւելից հա-
 « զորդել Սինոդի յետ այսր »:

Ստորագրեալ էին զսոյն այս թուղթն կովկասեան կառավար-
 չապետ Գեներալ-Ատիւզանտ իշխան Դօնդուկով Կորսակով, եւ կա-
 ուավարիչ դիւանատան ըստ քաղաքականն մասի դեներալ (Ժէնէրալ-
 զօրավար) մայեօր Շէպէլէվ :

Առ ի մատնացոյց լինել այլ եւ այլ խարդաւանութեանց, քու-
 թեանց, զեղծմանց, զանցառութեանց օրինաց եւ դրդութեանց ու-
 սական կառավարութեան ի Կ. Պոլիս, ի Հնդիկս, եւ ի Ս. Էջմիա-
 ծին, ուչ ետեալ գլխաւորապէս երկպառակել զՀայս, հարուածել
 զԱզգ. Սահմանադրութիւն եւ զԵրեսիփ. Ժողով Հայոց Թուրքիոյ իբր
 ի հակազիտ Պալատէնիոյ, հանդերձ այլովքն, յաւելաք դնել ամբող-
 ջութեամբ զթուղթ, որպէս դիցուք եւ զայլս ընդ պատասխանեաց
 Սինոդի :

Յետ այսօրիկ ընկալեալ Սինոդի եւ զցուցակն խոստացեալ, կազ-
 մեաց զօրագիր եւ պատասխանեաց կառավարութեան ըստ այսմ օրի-
 նակի, պաշտպանեալ զեղանակ մասնակցութեան Հայոց Թուրքիոյ եւ
 Երեսիփ. Ժողովոյ ի Կաթ. ընտրութիւն որ ի 1866 թուականի :

« . . . Ի Սինոդիս լուան զգրութիւն կառավարչապետին քաղա-
 « քական մասին յայսկոյս Կովկասու ի 21 Սեպտեմբերի տարւոյս թ.
 « 291, որով ի յաւելուած գրութեան իրոյ 114 անցեալ Օգոստոսի թ.
 « 143, հաղորդէ, թէ ի վիճակացն Տաճկաստանի ծանուցողական հր-

« ըովարտակք պարտին պատրաստեալ լինել մի միայն վասն այնոցիկ,
 « որոց ծանուցեալք են իրաւունք ձայնի յառաջին ընտրութիւն Պա-
 « տրիարք կաթողիկոսաց ամենայն Հայոց, այսինքն 45 վիճակաց
 « պատրիարքութեանց Կ. Պոլսոյ, (ի թիւ որոց վիճակին Կարուց միա-
 « տրելոյն ընդ մերոյ տիրապետութեամբն, եւ որպէս յայտնի է Սի-
 « նոզին ի գրութեանց Գեներալ Լէյտենանտ Ստարասելաքոյ ի 21
 « Փետրվարի այս ամի Թ. 98, մնացելոյն ժամանակաւորապէս ի-
 « րաւամբ ինքնուրոյն վիճակի), նոյնպէս եւ վասն Պատրիարքին Ե-
 « բուսաղէմայ, ցուցակ ամենից այնոցիկ վիճակաց ընդ սմին առ-
 « քի, բայց դատելով ըստ տեղեկութեանցն ժողովելոց ի նախարա-
 « րութեանէն Արտաքին Գործոց՝ ի թիւս վիճակաց Հայոց Տաճկաս-
 « տանի գոյ եւ այնպիսի վիճակ անուամբ եւ եթ, որ չունի զՏոգեւոր
 « վարչական երկիրս, այլ ամփոփեալ է միւում եւ եթ վասն, վանա-
 « հայր որոց Եպիսկոպոսն կամ Արքեպիսկոպոսն կրէ՝ զպատուաւոր
 « կոչումն վիճակաւոր Առաջնորդի: Ակն յայտնի է, զի այնպիսի վի-
 « ճակաց, որպէս անհամապատասխանողաց պահանջման 917 յօդ-
 « ւածոյ Ա. Մասին ԺԱ հատորոյ օրինաց (ի վերայ հիման որոյ յիւ-
 « րաբանչիւր վիճակէ պարտ է առաքեալ լինել յընտրութեան Կաթո-
 « ղիկոսի աշխարհական պատգամաւորի), ոչ կարէ ճանաչեալ լինել
 « իրաւունք ձայնի, ըստ այսմ ինդրէ ի Սինոզէս յայսպիսի դէպս,
 « եթէ դրականապէս յայտնի է նմին գոյութիւն ի թիւս վիճակաց Հա-
 « յոց Տաճկաստանի այնոցիկ, որք ըստ բացատրեալ ի վեր անդր
 « հիման չունին զիրաւունս մասնակցելոյ յընտրութիւն Պատրիար-
 « քաց, ցուցանել զայնպիսի վիճակս, առաքելով ի միեւնոյն ժամա-
 « նակի ի դիւանատուն Նորին Պայծառափայլութեան զծանուցողա-
 « կան հրովարտակս (զըջարեբականս Սինոզի իմա) յանուն բոլոր
 « վիճակաւոր Առաջնորդաց Հայոց արտասահմանից, եւս եւ պատուա-
 « տր դասուց հասարակութեան Հնդկաստանի: ՀՐԱՄԱՅԵՑԻՆ: Հա-
 « մաձայն ցուցակի առաքելոյ ընդ վերոյիշեալ գրութեան կառա-
 « վարչապետին յայսկոյս Կովկասու պատրաստել զծանուցողական
 « հրովարտակս որպէս յանուանս վիճակաւորաց Հայոց Տաճկաստա-
 « նի, Պարսկաստանի, Հնդկաստանի եւ պատուաւոր դասուց ժողո-
 « վրդականաց Հայոց Հնդկաստանի, նոյնպէս եւ յանուն վիճակա-
 « տրաց Հայոց Աղթամարայ եւ Սոյ (իմա Կիլիկիոյ), որք ի բաց
 « թողեալ են ի ցուցակէն յայնմանէ, եւ առաքելով առ Նորին Պայ-
 « ծառափայլութիւն՝ ինդրել ի միասին ընդ միւսոց Առաջնորդաց
 « Տաճկաստանի հասուցանել տալ զայնպիսի ծանուցողական հրո-
 « վարտակս եւ Առաջնորդաց Հայոց Սոյ եւ Աղթամարայ վիճակաց,
 « որք չէին նշանակեալք յառաքեալ ի նմանէ ի ցուցակին, յաւելլով

« Ի գերութեան Սինողիս առ Նորին Պայծառափայլութիւն, նախ՝ թէ
 « վիճակքն Հայոց Սասոյ եւ Աղթամարայ միշտ ճանաչելով զիրաւա-
 « սութիւնս Կաթողիկոսաց Սրբոյ Էջմիածնի՝ մասնակցեալ են յա-
 « մենայն ընտրութիւնս Կաթողիկոսաց, եւ եթէ յայս նուազ ոչ
 « ընդարձակեցին նոցա իրաւունք ընտրութեան եւ ձայնի ի համա-
 « դումար ժողովի Պատգամաւորաց Հայոց կամելոց յընտրութիւն
 « Հայոց Կաթողիկոսի Ազգիս, նախ զի Կաթողիկոսն Էջմիածնի ոչ
 « կարէ կրել զտիրոջսն Ամենայն Հայոց, եւ երկրորդ՝ գուցէ վերա-
 « գրելով զայն ինքեանց ի խորթութիւն՝ անջատեցին ի միայոզ կա-
 « սոյ սիրոյ միութեան եւ հնազանդութեան Կաթողիկոսացն Էջմիա-
 « ծնի, եւ այսու յարուցանելով զտրտունջ եւ զանբաւականութիւնս՝
 « պատճառեցին զբարոյական վնաս Պատրիարքին Էջմիածնի, հա-
 « կառակ հոգւոյ (°) օրինաց օրհնարանեալ կայսրութեանն Ռու-
 « սիոյ, որ յամենայն ժամ ցանկայ, զի ամենայն Հայք՝ որք ընդ
 « տիրապետութեամբ զանազան տէրութեանց՝ ունիցին զսէր եւ ըզ-
 « կապ միութեան (°) ընդ Կաթողիկոսութեանն Էջմիածնի, եւ ունե-
 « լով առ նա զհամակրութիւն՝ նախապատիւ ծանխցեն զիրաւասու-
 « թիւնս նորին՝ վայելելով զսէր եւ զմիութիւն ընդ հովանաւորու-
 « թեամբ նախամեծար Աբարատեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի :
 « Եւ երկրորդ՝ զի եթէ հնար իցէ զճանուցողական հրովարտական Սի-
 « նողիս հասուցանել եւ բաժանել տալ ի վերայ վիճակաւորաց Հա-
 « յոց Տաճկաստանի ընդ ձեռն Պատրիարքին Կ. Պոլսոյ, որպէս եւ ե-
 « ղեալ է յամս առաջին մինչեւ ցարդ. վասն զի Պատրիարքն Հայոց
 « Կ. Պոլսոյ՝ զուրով ներկայացուցիչ ի կողմանէ Կաթողիկոսացն Էջ-
 « միածնի ի միջի Տաճկահայոց, եւ ընկալնլով զեկեղեցական հրա-
 « հանդութիւնս ի Կաթողիկոսաց Էջմիածնի, հրատարակեալ են ժո-
 « զովորեան Հայոց Տաճկաստանի, եւ Տաճկահայք եւ Առաջնորդք
 « նոցին, ընդ ձեռն Պատրիարքաց Կ. Պոլսոյ, ստանալով զկոնդակս
 « օրհնութեան եւ եկեղեցական բարեկարգութեան՝ առանձին իմն
 « սիրով եւ ակնածութեամբ վերաբերեալ են թէ առ Պատրիարքն եւ
 « թէ առ Կաթողիկոսն Էջմիածնի, եւ եթէ ճանուցողական հրովար-
 « տակքն ընդ ձեռն Պատրիարքին ոչ բաժանեցին ի վերայ առաջնոր-
 « դաց ենթարկելոց տեսչութեան Պատրիարքին՝ նսեմանայ յարդ եւ
 « համարումն նորին յաչս ժողովրդեան, որպէս եւ կարգն իսկ պա-
 « հանջէ, եւ առյապա՛յն ծագեցին անախորժ հետեւանք ի վնաս
 « Սրբոյ Էջմիածնի եւ ընդհանուր հոգեւորականութեան Հայոց :»

Ստորագրեցին զայս օրագիր Սինողի տեղակալ ատենապետի
 Մկրտիչ Արքեպոսն. անդամք՝ Մեսրոբ Եպ., Յովակիմ Եպ., Ներ-
 սէս Եպ. եւ Գրիգոր Եպ. : Եպիսկոպոսն Երեմիա զլացաւ զնել զստո-

բազրութիւն իւր երկուցեալ ի սուս կառավարութենէ եւ ի Պրօքուրէօր նիկողոս Տէր Յովսէփեանցէ :

Կովկասեան կառավարութիւն թուլացաւ սակաւօք, միանգամայն սրտմտեալ եւ շուարեալ ետ Սինոդի զպտասխանի հակասական, որում փոխանակեաց Սինոդ ի մասնէ զայս օրինակ : Պատճառ գրելոյն ի Մասնէ կառավարչականէ առանց սինոդական օրագրութեան էր այս, զի Պրօքուրօրն հակառակէր եւ ոչ էր հնար փութով պատասխանելոյ, վասն որոյ ըստ այսմ դիւրացուցին զայս : *)

« Ի դիւանատուն կառավարչապետի քաղաքական մասին յայս-
« կոյս Կովկասու :

« Առ գրութիւն դիւանատանդ ի 27 Հոկտ. թ. 4900, Սինոդս պա-
« տիւ ունի ծանուցանել :

« Նախ՝ թէ ծանուցողական հրովարտակքն յանուն վիճակաւոր
« Առաջնորդացն Հայոց Ատրպատականի եւ Հնդկաստանի սխալմամբ
« առաքեալ են արդէն ի Սինոդէս ուղղակի առ նոյն Առաջնորդան յ30
« Սեպտ. տարւոյս ընդ համարօք 3155 եւ 3156, ընդ միւս հրովար-
« տակաց յանուն վիճակաւոր Առաջնորդաց Ռուսաստանի :

« Երկրորդ՝ թէ զմասնակցութիւն եւ զիրաւունս ձայնից վիճա-
« կաց Կաթողիկոսութեանցն Սսոյ եւ Աղթամարայ յընտրութեան
« նորոյ Պատրիարք Կաթողիկոսի ամենայն Հայոց՝ Սինոդս զկնի ու-
« չադրութեամբ ընթեռնոյ զքաղուած տեղեկութեանց, յարագրեա-
« լըն ի վերադասեալ գրութեան դիւանատանդ, ճանաչէ ըստ ամե-
« նայնի իրաւացի եւ անհրաժեշտ, ըստ փաստիցն եւ ըստ հիմանցն
« ընդարձակօրէն բացատրելոց ի գրութեան Սինոդիս յ30 սեպտ.
« տարւոյս՝ ընդ համարաւ 3161, եւ համաձայն բարձրագոյն բարե-
« հաճութեան որ յաղազս կատարելոյ զընտրութիւն նորոյ Պատրի-
« արք Կաթողիկոսի ամենայն Հայոց ըստ օրինակի ընտրութեան
« արարելոյ յամին 1866՝ յայտնելոյ ի նախարարէ Ներքին Գործոց
« պարոն կառավարչապետին Կովկասու եւ ի Նորին Պայծառափայ-
« լութենէ Սինոդիս յ30 Դեկտ. անցեալ ամի թ. 784 :

« Երրորդ՝ թէ թէեւ Սինոդս օրագրութեամբ իւրով ի 16 Սեպտ.
« 1866 ամի որոշեալ էր ընդունել միայն զ45 վիճակս Հայոց Տաճկաս-

*) Կարեւոր մասն սինոդականաց, որպէս եւ ազդեցիկ պատգամաւորք Կար. Ընտր. Ժողովոյ խնդրէին եւ առնուին յաֆա զկարծիս մեր, ցորչափ գտանեաք ի Ս. Էջմիածին մինչեւ ցվբք 1885 քուակամի, յորում միջոցի առս. կառավարութիւն ի գաղտնի քիւղարէր որոց հարկ էր հեռացուցանել այլեւս զմեզ ի Ս. Էջմիածնէ :

« տանի ի գործ ընտրութեան կաթուղիկոսին Գէորգայ, սակայն
 « հոգեւորական եւ աշխարհական պատգամաւորք կարգեալք ի կող-
 « մանէ Տաճկահայոց, ըստ հրահանգութեանց տուեցելոց նոցա
 « յայնժամեան Պատրիարքէն Կ. Պոլսոյ եւ Աղգային ժողովոյ սեղ-
 « ւոյն՝ պնդեալ ցուցեալ են ի ժամ ընտրութեան զ65 վիճակս, առ
 « որ ոչ ընդգիծազրեալ միւս պատգամաւորաց եւ յայնժամեան ան-
 « դամոց Սինոդիս՝ ստորազրեալ են յընտրողական թերթին եւ այն-
 « պէս բարձրագոյն հրովարտակաւ հետեւեալ է հաստատութիւն
 « հանգուցեալ կաթուղիկոսին Գէորգայ, որով հաւաստեաւ որոշե-
 « ցաւ եւ ճանաչեցաւ ճշմարտութիւն զոյութեան 65 վիճակաց կամ
 « 130 ձայնից վասն Հայոց Տաճկաստանի յընտրութեան Պատրիարք
 « կաթուղիկոսաց ամենայն Հայոց, եւ ինքն ըստ ինքեան ոչնչացաւ
 « յիշատակեալ եզրակացութիւն Սինոդի, որ չունէր եւ չունի եւս զի-
 « բաւուենս ի բաց թողոյ զայնոսիկ նորոգ կազմակերպեալ եւ հաս-
 « տատեալ վիճակն Հայոց Թուրքիոյ, զոյութիւն որոց յայտնի է
 « Սինոդիս եւ կաթուղիկոսին էջմիածնի, ըստ ամենայնի համաձայն
 « ցուցմանց զձազրելոց ի վերջնոյս հաղորդազրութեան նախկին զըլ-
 « խաւոր կառավարութեան փոխարքային Կովկասու յ9/11 Օգոստոսի
 « 1866 ամի թ. 180:

« Չորրորդ՝ թէ հակառակ տեղեկութեանց գտանելոց ի գործս
 « գլխաւոր կառավարութեան՝ Հայկազունք Տաճկաստանի, որպէս
 « երեւի ի գործոց Սինոդիս, մասնակցեալք են ընտրութեանց ոչ մի-
 « այն կաթուղիկոսացն Մատթէոսի եւ Գէորգայ, այլ եւ Ներսիսի եւ
 « նախորդաց նորին, բաց ի Յովհաննէ:

« Եւ հինգերորդ՝ թէ Սինոդս ի վերջնոյս ծանուցողական հրո-
 « վարտակի յանուն Պատրիարքին Հայոց Կ. Պոլսոյ, վերադարձու-
 « ցելոյ սմին ընդ յիշատակեալ զրութեան զիւանատանդ, արդէն զը-
 « ծագրեալ է, թէ Սինոդս զհրովարտակս յանուն Առաջնորդաց Հա-
 « յոց Տաճկաստանի առաքէ առ Նորին Ամենապատիւ Սրբազնու-
 « թիւն վասն հասուցանելոյ ըստ պատկանելութեանց: Ուստի ըստ
 « այնմ գլխեալ հրովարտակն Սինոդս վերադարձուցանէ ի զիւանա-
 « տունդ վասն յետագայ տնօրինութեան:

« Եւ զի մոռացմամբ թողեալ են ի Սինոդիս չորս այլեւս հրո-
 « վարտակք յանուն Առաջնորդացն Յոսպպէի, Դամասկոսի, Բէյրութ-
 « թի եւ Կիպրոսի, վասն որոյ Սինոդս պատիւ ունի ընդ այսմ առաքել
 « եւ զայնոսիկ հրովարտակս ի լրումն զրութեան իւրոյ յ30 սեպտ.
 « տարւոյս ընդ համարաւ 3161, հանդերձ ճիշդ ցուցակաւ վիճա-
 « կացն Հայոց Տաճկաստանի ի տեղեկութիւն զորին, որով ընդ ա-
 « մենայն թիւ առաքեալ հրովարտակաց (չըջաբերականաց) ինին

« 64, եւ ընդ հրովարտակին որ յանուն Առաջնորդին Կարսի, արդէն
 « ի Սինոդէս ուղղակի առ նա յղելոյ ի թիւս վիճակաց Ռուսիոյ՝ 65
 « որ է իսկական թիւ վիճակաց Հայոց Տաճկաստանի: յ31 Հոկտ.
 « 1883. թ. 3484»:

Ստորագրեալ են զայս անդամք Սինոդի Մկրտիչ Արքեպս., պաշտօնակատար տեղակալի, եւ Եպիսկոպոսունք Մեսրոբ, Յովակիմ, Երեմիա, Ներսէս եւ Գրիգոր: (Առ պակասութեան երկուց անդամոց՝ պակասին ստորագրութիւնք առ ի լրացուցանել զութն անդամս):

Սոյն այս քաջատիրտ գրութիւն եւ պատասխանի որչափ բերէր զմեծ պատիւ յայնժամեան անդամոց Սինոդի (թէ եւ էին անձինք ուղորմելիք), նոյնչափ յաւելոյր զչփոթութիւն եւ զզայրոյթ ոռւսական կառավարութեան: Յաւիմք յոյժ, զի պակասէր համերաշխութիւն եւ ներդաշնակութիւն ի պաշտօնական շրջանակի Հայոց ի Կ. Պոլիս:

Ըստ որում Կաթ. Յանձնաժողովն Երեսփ. Ժողովոյ (1883) փոխանակ շարունակելոյ զուղղութիւն 1866 թուականի, եցոյց զփոփոխամտութիւն ընդ պատրուակաւ բարեփոխութեան եւ ծրագրեաց զնոր ուղղութիւն հակասական: Իսկ պատրիարք Ներսէս Արքեպս. Վարժապետեան, պատրուակեալ զտկարութիւն անձնական, մեկուսացեալ էր ի տուն իւր ի Սասգիւղ եւ լուռ եւ եթ կայր, եւ ի միւսմէ կողմանէ, զգուշանայր ի խարդաւանութեանց ներքնոց եւ արտաքնոց:

Ժամ է արդ արձանագրել աստ զտեղեկագիր լիագոր Կաթ. Յանձնաժողովոյ, զոր մատոյց Աղգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ ի 23-ն սեպտ. 1883 թուականի:

Յանձնաժողովն այն լիագոր ընտրեալ է յԱղգ. Ընդհ. Ժողովոյ ի 23 Ապրիլի 1883 ամի, եւ են անդամքն՝ Սորէն Արքեպս. Նարպէյ (Գալֆայեան, Լուսինեան) Մատթէոս Եպս. Իզմիրլեան, Յովհաննէս աւ. քհյ. Մկրեան, Սերվիլէն, Կարապետ Իւթիւճեան, Մարկոս Աղարէզեան, Ստեփան Փափաղեան էֆէնտիք, թէ եւ Փափաղեան հրատարի յանդամակցութենէ եւ ոչ երբեք մասնակցի աշխատութեանց Յանձնաժողովոյ: Եւ ի 4-ն Օգոստոսի այնր տարւոյ ներկայացուցանէ զիւր տեղեկագիր Երեսփ. Ժողովոյ:

Տպագրեալ է Տեղեկագիր այս ի 1885 ամի, եւ պարունակէ զբառածալ երեսս 115:

Յետ ամփոփելոյ զհամառօտ պատմութիւն կազմութեան Պալատէնիոյ եւ զյարակից անցս ինչ կարեւորս, յերեսս 1-1, 37-38, յաւելլու զհրահանգն Կաթ. ընտրութեան հաստատեալ ի Կովկասեան

կառավարութենէ յերեսս 38-45. ամփոփէ զՊալատէնիան ամբողջ յերեսս 11-36. նոյնպէս եւ զառաջարկեալն ի Ս. Մատթէոս Կաթողիկոսէ յերեսս 56-67, եւ ապա սկսանի ըստ կարգի տալ զկարծիս իւր: Պալատէնիա բաց ի ծանօթութեանց ունի զ141 յօդուածս, որք յամփոփմունս օրինակ ուսաց սկսանին յ909-10-11 եւ այլն յօդուածոց յ1051 յօդ.:

Տեղեկագիրն ունի զերիս բաժանմունս. «Ա.— Յօրինումն Պալատէնիայ եւ ընդունելութիւն նորա: Բ.— Քննութիւն Պալատէնիոյ ի Կաթ. յանձնաժողովոյ ի 1865-6 եւ արգիւնք նորա: Գ.— Բովանդակութիւն Հիմնական սկզբանց Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ, ըստորոգելեաց Հայրապետական իշխանութեան եւ կանոնաց ընտրութեան Կաթողիկոսին ամենայն Հայոց»:

Իսկական տեղեկագիրն սկսանի ի 69րդ երեսէ, բաժանեալ յերիս մասունս. այս է՝ «ա.— Ս. Էջմիածնի կաթողիկոսութեան վիճակը քննել, բ.— Կաթողիկոսի ընտրութեան ներկայ եղանակը քննել թէ արդեօք համաձայն է մեր Ս. Եկեղեցւոյ եւ Ազգին նախնի աւանդութեանցն եւ սովորութեանց, եւ ցոյց տալ թէ ո՞րք են այս մասին մեր նախնեաց օրէնքն ու սովորութիւնքը. գ.— Այս ընտրութեան մէջ Տաճկաստանի Հայոց մասնակցութեան եղանակը որոշել»:

Ուշագրաւ եւ իրաւացի են քննութիւնք ոմանց յօդուածոց Պալատէնիոյ (9-21-28-29 (ծանօթութիւն), 32-34-35 եւ 36-37-40-41-42 եւ այլն) սակա իսկական իրաւասութեանց Կաթ. իշխանութեան, թէ եւ են ակնարկութիւնք եւ բանք ինչ քննադատելիք:

Ըստ բազում իրաց արդարացի են եւ ամփոփեալքն յ1-րդ մասի սակս 11, 12, 13, 14, 15 յօդուածոց Պալատէնիոյ մինչեւ ց19-րդն:

Յերրորդ մասին դրէ Տեղեկագիրն այս (երեսս 91). «Յանձնաժողովս նկատելով, որ կաթողիկոսական ընտրութեան մասին ընդ «հանուր եւ որոշ օրէնք մը չկայ՝ որուն համեմատ կարենան վար «ւիլ զանազան երկիրներու մէջ գտնուած ազգայինք, եւ Պալատէն «նիայի կանոնս ալ՝ որչափ եւ անընդունելի է, բայց եւ այնպէս նոյն «իսկ Ս. Էջմիածնայ մէջ ճշտիւ չէ կրցած գործադրուիլ նախորդ «Կաթողիկոսաց ընտրութեան ժամանակ, ուստի խորհեցաւ Տաճ «կաստանի Հայոց մասնակցութեանը այնպիսի եղանակ մը առաջար «կել, որ թէ ուրիշ տեղերու ազգայնոց մասնակցութեան եղանակին «փոքր ի շատէ յարմարելով դիւրութեամբ գործադրելի ըլլայ, եւ «թէ մեր Եկեղեցւոյ կանոնաց, ազգային սովորութեանց եւ իրաւա «նաց հնար եղածին չափ համաձայնի»:

Եւ ըստ այսմ օրինակէ զառաջարկ Կաթ. Յանձնաժողովոյ 1865-66 թուականի, զոր վերագոյնս եղեալ եմք: Եւ ապա նկարագրէ զան-

ցըս եւ զձեռնարկս Տ. Գէորգ Դ. Կաթուղիկոսի Հոգեւոր Մնոզի մե-
րոյ ըստ տեղեկութեանց հրատարակելոց ի պ. Նիկողայոսէ Թիւ-
պէնճեան ի խմբագրէ Լրագրոյ ըստ թեւադրութեանց մերոց (յերեսս
95-100) : Գ-րդ բաժանումն Տեղեկագրոյ վերջին Կաթ. Յանձնաժո-
ղովոյ գրէ եւ առաջարկէ զհետադաս ընդ վերնագրովս «Քոլմանդա-
կութիւն հիմնական սկզբանց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, ստո-
րոգելեաց Հայրապետական իշխանութեան, եւ կանոնաց ընտրու-
թեան Կաթուղիկոսին ամենայն Հայոց» :

« Աղբալին պատկառելի ժողովէզ այս երկրորդ անգամ կարգեալ
« Կաթուղիկոսական Յանձնաժողովն ի նկատ առնելով Պօլօթէնիայի
« յօրինման եղանակն եւ անոր Ազգի կողմէ դտած ընդունելութեան
« քառասուն եւ եօթնամեայ պատմական վիճակն, տեսաւ որ Պօլօ-
« թէնիան իւր հաստատութեան թուականէն - 1836- մինչ ցարդ -
« 1863 - գրեթէ շարունակաբար բողոքոյ ենթարկուած եւ բազմա-
« կողմանի լուրջ քննութեամբ հաստատուած է արդէն՝ թէ Պօլօթէ-
« նիան Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ կարգաց, կանոնաց եւ հնա-
« ւանդ սովորութեանց գլխովին հակառակ, եւ Հայրապետական իշ-
« խանութեան ու իրաւասութեան ամենայնիւ վնասալար եւ Հայաս-
« տանեայց Ս. Եկեղեցւոյ մէջ օտարամուտ կարգադրութիւն մ'է եւ
« իբր այն իսպառ անընդունելի լինելն հռչակուած, հետեւաբար եւ
« Յանձնաժողովն իրաց այս վիճակին մէջ հարկ չտեսաւ վերստին
« Պօլօթէնիայի քննութեամբն զբաղիլ եւ զբաղեցնել զպատկառելի
« ժողովդ, այլ սակայն նկատելով որ քառասուն եւ եօթն - 1836-1883
« - տարիներէ ի վեր Պօլօթէնիայի նկատմամբ եղած պաշտօնական
« բողոքներու եւ կատարուած քննութեանց մէջ դեռ եւս մեկին եւ ո-
« բոշ կերպով ցուցուած չեն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ հիմնա-
« կան սկզբունքներն, Հայրապետական իշխանութեան յատուկ ստո-
« րոգելիներն եւ վարչական ու յարաբերական եղանակն, ուստի եւ
« Յանձնաժողովն անոնց մէկ ըզմանդակութիւնն ի գիր առաւ :

« Այս ըզմանդակութիւնն երեք մասերու բաժնուած է :

« Առաջին մասը կը պարունակէ Հայաստանեայց Եկեղեցւոյ հիմ-
« նական սկզբունքները :

« Երկրորդ մասը կը պարունակէ՝

« Ա. Ամենայն Հայոց Հայրապետին, իբրեւ ընդհանրական վե-
« րատեսչին Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, իշխանութեան, կամ
« պարտուց եւ իրաւանց սեփական ստորոգելիքները :

« Բ. Հայրապետական իշխանութեան վարչական եղանակն, եւ
« Գ. Ամենայն Հայոց Հայրապետին յարաբերութիւններն, որք երկու
« տեսակ են՝ ներքին եւ արտաքին :

« Յայտնի է թէ Ամենայն Հայոց Հայրապետն այսօր թէ Հայաս-
 « տանեայց Ս. Եկեղեցւոյ ընդհանրական վերատեսչութիւնն եւ թէ
 « միանգամայն Ռուսաստանի, Պարսկաստանի եւ Հնդկաստանի Հա-
 « յոց հոգեւոր գործոց տեղական մասնական տեսչութիւնը կը վա-
 « րէ : Ուստի եւ որպէս զի ամենայն Հայոց Հայրապետութեան ընդ-
 « հանրական, ինչպէս նաեւ տեղական մասնական տեսչութեան իշ-
 « խանութիւնն, իրաւասութիւնն եւ իրաւունքներն ապաքէն իրական
 « նշանակութիւն անունն, եւ գործնական վիճակի մէջ մտնեն, հարկ
 « էր որ Հայրապետական իշխանութեան վարչական եղանակն գծուէր
 « այնպէս, ինչպէս կը պահանջէր ամենայն Հայոց Հայրապետին
 « ներկայ գլխին, ինչպէս մասնաւոր կը պահանջէ Եկեղեցւոյ եւ Աղ-
 « զի օգուտը :

« Հետեւաբար այս տեսութեամբ կառավարէ Յանձնաժողովն,
 « որ ամենայն Հայոց Հայրապետն ունենայ իրեն աջակից երկու խոր-
 « հուրդ, մին Հայրապետական խորհուրդ ըստ վաղեմի սովորու-
 « թեան Հայրապետական իշխանութեան ընդհանրական վարչութեան
 « համար, եւ միւսն՝ տեղական խորհուրդ ըստ պահանջման արգի-
 « հանգամանաց Հայրապետական Մայր Աթոռոյն, Հայրապետական
 « իշխանութեան տեղական մասնական վարչութեան համար :

« Գալով ամենայն Հայոց Հայրապետին ներքին եւ արտաքին
 « յարաբերութեանց, ներքինն այն յարաբերութիւններն են, զոր ու-
 « նի Հայրապետն Հայոց ամբողջ Եկեղեցւոյն կամ Ազգին հետ, որոյ
 « մանրամասնութիւնը վերջի թողլով, հիմունքը միայն գծած է
 « Յանձնաժողովն, իսկ արտաքինն այն յարաբերութիւններն են, զոր
 « Հայրապետն Հայոց իւր ներկայ բացառիկ դրից մէջ ունի անմիջա-
 « պէս Ռուսաց պետութեան հետ, եւ ի հարկին այն ամէն տէրու-
 « թեանց հետ, յորս կըզտնուին ժողովուրդք Հայոց :

« Իսկ՝

« Երբորդ մասը կը պարունակէ ամենայն Հայոց Հայրապետին
 « ընտրութեան եղանակը :

« Ըստ որում անվիճելի ճշմարտութիւն մ'է թէ՛ ամենայն Հա-
 « յոց Հայրապետին իշխանութիւնն ընդհանրական է, եւ Հայաստա-
 « նեայց Ս. Եկեղեցւոյ բոլոր որդւոց վրայ կը տարածուի, ուստի եւ
 « Հայրապետական ընտրութիւնն հարկ է որ ազգային հանրական
 « մասնակցութեամբ կատարուի. ուստի եւ Յանձնաժողովն սոյն այս
 « հիման վրայ Հայրապետական ընտրութեան նոր եղանակ մը կառա-
 « ջարկէ պատկառելի ժողովոյդ քննութեանն ու վաւերացմանը :

« Յանձնաժողովն՝ նկատելով նաեւ որ, յետ վախճանի կաթու-
 « զիկոսի ամենայն Հայոց՝ Հայրապետական իշխանութիւնն անկեր-

« պարան վիճակ մը կառնու եւ Ս. Էջմիածնի Մայր Աթոռն անիշխա-
 « նութեան կը մատնուի, կառաջարկէ որ Հայրապետն Հայաս-
 « տանեայց Եկեղեցւոյ, իւր ընտրութենէն, օծումէն անմիջապէս
 « ետքն ընտրէ Կաթողիկոսական Տեղապահն, որ պաշտօն ունենայ
 « ի բացակայութեան եւ ի վախճանման Հայրապետին՝ պահպանել
 « Արարատեան Մայր Աթոռն մինչ ցղարձ Հայրապետին կամ ցնոր
 ընտրութիւն :

« Արդ՝ Կաթողիկոսական Յանձնաժողովն՝ Աղգային պատկա-
 « ռելի ժողովոյդ որոշմանն ու իմաստուն տնօրէնութեանը թողովով
 « զսոյն բովանդակութիւն՝ կը կնքէ զիւր տեղեկագիր :

4 Օգոստ. 1883 :

Տեղեկարեր

Կաթ. Յանձնաժողովոյ

Մատթէոս Նպիսկ. Իզմիրլեան .»

Շարունակէ Յանձնաժողովն Կաթողիկոսական ի Տեղեկագրի
 իւրում յերեսն 103-109, զբովանդակութիւն հիմնական սկզբանց Հա-
 յաստանեայց Ս. Եկեղեցւոյ, ստորագելեաց Հայրապետական իշխա-
 նութեան եւ կանոնաց ընտրութեան Կաթողիկոսին ամենայն Հայոց»
 վերնագրութեամբ դնել զկարծիս իւր յերիս երիս մասունս եւ յեր-
 կուս գլուխս որոշեալ, ա) Հիմնական սկզբունք Հայաստանեայց Ս.
 Եկեղեցւոյ, ուրիշ յօդուածովք, բ) Հայրապետական իշխանութիւն
 Հայաստանեայց Եկեղեցւոյ (գլուխ Ա.), քսան եւ մի յօդուածովք
 (գլ. Բ.). Յարաբերութիւն Հայրապետին ամենայն Հայոց (Ներքին
 եւ Արտաքին), տասն եւ մի յօդուածովք, գ) եւ վերջին մասն՝ Կա-
 նոնք կամ եղանակ ընտրութեան Հայրապետին ամենայն Հայոց,
 տասն յօդուածովք :

Ահաւաստիկ ոչ յաւելորդայն համարիմք դնել աստէն ամբողջու-
 թեամբ վերջին մասն, այս է՝ Կանոնք կամ եղանակ ընտրութեան
 Հայրապետին ամենայն Հայոց (Երես 108-109) առ ի ամբողջացու-
 ցանել զգլուխս զայս եւ զիւրօրիական կարծիս երկուց Կաթ. Յանձ-
 նաժողովոց եւ Երեսի. ժողովոյ :

« Ա. Ի վախճանել Կաթողիկոսին ամենայն Հայոց՝ առաջին
 « գործողութիւնն է կաթողիկոսական ընտրելեաց ցանկ պատրաս-
 « տել :

« Բ. Ս. Էջմիածնի եւ Կոստանդնուպոլսոյ կեդրոններն առան-
 « ձինն վիճակային ժողով գումարելով ընտրելեաց փակեալ ցանկ մը
 « կը պատրաստեն դադոնի բուէարկութեամբ : Այս ցանկին մէջ անց-
 « նելու իրաւունք ունին՝

« Նախ՝ միայն այն Նպիսկոպոսունք, որք Արարատեան Մայր Ա-

« Թոռոյ Հայրապետէն ձեռնադրուած են, եւ կամ ընդունուած են ի
« նմանէ ի շարս Միաբանից Մայր Աթոռոյ :

« Երկրորդ՝ այն Եպիսկոպոսունք, որք իրենց վերայ կը փայլե-
« ցընեն այն հանգամանքներն, որ կարելոր են յանձն Հայրապետին
« ամենայն Հայոց :

« Գ. Երկու Կեդրոններն այս կերպով պատրաստուած ցանկերն
« իրարու կը հաղորդեն, որոց միացմամբ կը կազմուի ընտրելաց
« միակ ցանկ մը :

« Դ. Երկու Կեդրոններն յորոշեալ ժամանակը կը հաղորդեն իւ-
« բեանց իշխանութեան ներքեւ գտնուած թեմական Վիճակաց եւ
« Վանահարց, որպէս զի իւրեանց ընտրելին նշանակեն նոյն ցուցա-
« կին մէջէն :

« Ե. Քուէարկութիւնն ի Տաճկաստան կը կատարուի յատենի
« Գաւառական Ընդհանուր Ժողովոյ, իսկ ի Ռուսաստան Վիճակաց
« ուսջնորդանիստ քաղաքին եւ թեմօրէից եկեղեցական եւ աշխարհա-
« կան ընտրող պատուիրակաց ժողովոց մէջ : Այս ժողովոց թիւ ի
« Ռուսաստան եւ թիւ ի Տաճկաստան կը մասնակցին առաջնորդական
« Վիճակաց Կրօնական Ժողովք կամ Հոգեւոր Ատենանի եւ Վանա-
« հարք իւրեանց Տնօրէն խորհրդոց Դիւանով :

« Կոստանդնուպոլիս իրրեւ առանձին թեմ կը մասնակցի սոյն
« ընտրութեան հետեւեալ կերպով .

« Կոստանդնուպոլսոյ եւ արուարձանաց եկեղեցեաց Քարողիչք
« Աւագերիցունք, թաղական խորհրդոց Դիւանք եւ անպաշտօն Ե-
« պիսկոպոսունք եւ Վարդապետք, որ ի Կոստանդնուպոլիս, հրաւի-
« րանօք Պատրիարքին Հայոց Կոստանդնուպոլսոյ ի ժողով գումա-
« րեն, եւ իրրեւ Կոստանդնուպոլսոյ թեմին ընտրող պատուիրակաց
« ժողով կը կատարեն քուէարկութիւնը նման միւս գաւառաց :

« Զ. Այս քուէները պիտի արուին իւրաքանչիւր վիճակի ժողո-
« վրդեան թուոյն նայելով, այսինքն՝ 10,000 կամ նուազ թիւ ժո-
« ղովուրդ ունեցող վիճակին քուէն պիտի ունենայ՝ երկու քուէի
« արժէք, 20,000 կամ նուազ թիւ ժողովուրդ ունեցող վիճակին քր-
« ւէն՝ չորս քուէի արժէք, 30,000 կամ նուազ թիւ ժողովուրդ ունե-
« ցող վիճակին քուէն՝ վեց քուէի արժէք, եւ այլն պիտի ունենայ :

« Յորոշեալ ժամանակի քուէարկութիւնք կատարուելէ վերջը,
« իւրաքանչիւր վիճակ պարտի իւր քուէն պահարանի մը մէջ ամփո-
« փել, կնքել եւ պահարանին վրայ գրել, թէ ո՛ր վիճակէն հասած է
« սա Կեդրոնն :

« Է. Յորոշեալ ժամանակի գաւառներէն հասած քուէներն Կոս-
« տանդնուպոլսոյ Պատրիարքն կը ներկայացնէ Ազգային Ժողովոյ, որ

« քուէհամար ընելով եօթն առաւելագոյն քուէ ստացած Եպիսկոս-
 « սաց վրայ՝ երեք վերջնական ընտրելի կը քուէարկէ, զորս կը ներ-
 « կայացնէ Արարատեան Մայր Աթոռոյ ի ձեռն չորից պատուիրա-
 « կաց, որոց երկուքն եպիսկոպոս եւ երկուքն աշխարհական են :

« Եթէ դաւաճներէն եկած ընտրելիք նուազ լինին քան զեօթն
 « թիւ, Ազգային Ժողովը սոյն թիւը կը լրացնէ եկեղեցական վիճա-
 « կային Ժողովոյ փակեալ ցանկէն :

« Ազգային Ժողովոյ քուէարկած երեք վերջնական ընտրելաց
 « իւրաքանչիւրն Տաճկահայաստանի Հայոց եւ նորա ենթարկեալ վի-
 « ճակաց Հայոց ընտրելիներն են :

« Միեւնոյն դորձողութիւնն Ս. Էջմիածնի կողմէն կը կատար-
 « ուի, եւ կընտրուի չորս պատուիրակ Ս. Էջմիածնի Միաբանութեան
 « եւ նրա վիճակաց կողմէն :

« Ը. Տաճկաստանի եւ Ռուսաստանի պատուիրակք յորոչեալ ա-
 « լուր գումարուելով ի Տաճարին Սրբոյ Էջմիածնի՝ ընդ նախագա-
 « հութեամբ կաթողիկոսական Տեղապահի, ի ներկայութեան Միա-
 « բանութեան եւ Ժողովրդեան քուէարկութիւնը կը կատարեն՝ իւ-
 « րաքանչիւր կեդրոնի պատգամաւորք իրենց քուէից համեմատական
 « զօրութեամբ եւ իրենց պատգամաւորաց ընտրելաց միոյն վերայ
 « միայն. անմիջապէս քուէհամարը կը կատարուի, եւ ո՛ր Եպիսկո-
 « պոսն որ քուէից բացարձակ առաւելութիւն ստացած լինի, նոյն
 « հետայն կաթողիկոս կը հռչակուի :

« Եթէ քուէհամարի արդիւնքն հաւասար լինի, կամ քուէից բա-
 « ցարձակ առաւելութիւն չգոյանայ, երկու առաւելագոյն քուէ ըս-
 « տացողներուն վրայ երկրորդ եւ վերջնական քուէարկութիւն կը լի-
 « նի, եւ քուէհամարը կատարուելով՝ առաւելագոյն քուէ ստացող
 « Եպիսկոպոսն կաթողիկոս կը նշանակուի անմիջապէս :

« Թ. Հայրապետական Տեղապահն կը հազորդէ զանուն նորըն-
 « տիր Կաթողիկոս Հայրապետին առ վեհափառ Կայսրն Ռուսաց,
 « եւ կը խնդրէ զհրովարտակն հաստատութեան Նորին, միանգամայն
 « եւ կը ծանուցանէ Պարսից վեհափառ Շահին, որպէս եւ Կոստանդ-
 « նուպոլսոյ Պատրիարքին միջոցաւ վեհափառ Սուլթանին Օսման-
 « եան եւ այն ամէն Տէրութեանց, յորս Հայոց Ժողովուրդ կը դտնը-
 « ւի :

Ընտրութիւն Կաթողիկոսական Տեղապահի.

« Ժ. Հայաստանեայց Եկեղեցոյ Հայրապետն անմիջապէս կըն-
 « տրէ իր Տեղապահն :

« Կաթողիկոսական Տեղապահի պաշտօնն է ի բացակայութեան

« եւ ի վախճանման Կաթողիկոսին՝ Արարատեան Մայր Աթոռը
« պահպանել մինչ ցղարձ կամ ցնոր ընտրութիւն :

1883 Օգոստոս 4.

Ի Պատրիարքարանի Հայոց,

Ի Կ. Պոլիս.

Նախագահ Կաթողիկոսական Յանձնաժողովոյ
Տ. Կ. Ներսէս

Անդամք Կաթողիկոսական Յանձնաժողովոյ

Պորէն Արքեպս. Նարպէյ

Մատթէոս Եպս. Իզմիրլեան (Տեղեկարեր)

Յովհաննէս քահանայ Մկրեան

Սերվիլէն (Ատենապետ)

Մարկոս Աղաբէղեան (Ատենազպիր)

Կ. Ս. Իւթիւճեան :

Յանձնաժողովն այս կնքէ զիւրն տեղեկագիր յաւելեալ եւ զՅա-
ւելուած ինչ - կանոնական ծրագիր, բովանդակութեամբ սակա Վար-
չուքեան ստաֆիլիկան ուղղափառ Սուրբ Եկեղեցւոյ Հայաստանայց,
ստորոգելեաց կամ իրաւացի եւ պարտուց Հայրապետական իշխա-
նութեան, եւ եղանակի ընտրութեան Հայրապետին ամենայն Հայոց
ընկալեալ յեկեղեցական վիճակային Համազումար Ժողովոյ ի 19
ամսեանն մարտի եւ յԱզգային Երեսփոխանական լճնդհանուր Ժո-
ղովոյ ի 23 ամսեանն Մարտի յամի Տեառն 1884, բաժանեալ յերիս
Մասունս եւ յերկուս Գլուխս, Ը-ԻՄ-Ը, եւ Գ յողուածովք (տե՛ս ի
Տեղեկագրի երկրորդ Յանձնաժողովոյ յերեսս 113-115), զոր ոչ կա-
րելուր համարեմք յառաջ բերել աստ անոր :

Իսկ Երեսփ. Ընդհ. Ժողովն Հայոց Թուրքիոյ ի բաց թողեալ
պառաջարկութիւնս Կաթ. Յանձնաժողովոյ իւրոյ, առնու ի ձեռս
զնոր դրութիւն, ընտրի՛ գերիս Եպիսկոպոսոսն եւ զբութեամբ Պա-
տրիարք Տ. Ներսէս Արքեպիսկոպոսի Վարժապետեան առաջարկէ
Կաթ. Ընտր. Ժողովոյ Ս. Էջմիածնին : Մանրամասնեալ եմք յորա-
զբութիւնն մեր զանցս անցելոց ի Կ. Պոլիս եւ ի Ս. Էջմիածին ըն-
դարձակագոյնս ընդ արտաքին խարդաւանութիւնս :

Ռուս կառավարութիւն պնդէր յորէնս եւ ի տեսութիւնս իւր ա-
ռանց ի բաց թողլոյ զնպատակ իւր եւ զողջես ունչս առնէր փոփո-
խամտութեանց եւ նորանոր ուղղութեանց Երեսփ. Ժողովոյ :

Հայք Ռուսիոյ խոհեմութեամբք իմն չարժեալ, նոյնպէս Տեղա-
պահ Տ. Մակար Արքեպս. եւ Կաթ. Ընտր. Ժողովն Ս. Էջմիածնի
որչափ ներէին միջոցքն, ընտրեցին ի Կաթ. զՏ. Ներսէս Արքեպս.

և ի յաջորդ նմա զՏ. Մելիքսեղէկ Եսլս., որպէսզի ուսն կառավարութիւն հաստատեցէ զՆերսէս, ըստ որում Տ. Մելիքսեղէկ ոչ էր հաճոյ ուսն. պետութեան թողեալ զորով զհպատակութիւն ուսաց իբրեւ հաւատուրաց :

Վախճանձամբ Ներսիսի հարկ եղև ի նորոյ կատարել զընտրութիւն Կաթողիկոսի, և Մելիքսեղէկ եղև առաջին, և Մակար՝ երկրորդ (1885) : Իսկ ուսն. կառավարութիւն առեալ ի դադոնի զհամաձայնութիւն Պատրիարքարանի Հայոց Կ. Պոլսոյ՝ հաստատեաց ի Կաթ. զերկրորդն՝ զՏ. Մակար Արքեպս. ի բաց թողեալ ըննադատութեամբք և դատապարտութեամբք զՄելիքսեղէկ, և այսպէս խանգարեաց զսովորութիւն (ոչ գօրէնս) հաստատելոյ զառաջին ընտրելին :

Յետ վախճանի Տ. Մակար Կաթողիկոսի (1891-2 թ.) ուսն. կառավարութիւն միջոցաւ դեսպանի իւրոյ հրապուրեաց զՊատրիարք Տ. Խորէն Արքեպս. Աչըղեան ի ձեռն առեալ և զաղղեցիկ անդամս Աղզ. Վարչութեան, և զի Սուլթան Համիտ արգելեալ էր զզումարումն Երեսի. Ընդհ. Ժողովոյ, Տ. Խորէն դրեաց ի վիճակս Հայոց Թուրքիոյ և պատուիրեաց առաքել զպատգամաւորս կամ կարգել զներկայացուցիչս առ ի մասնակցել ուղղակի ընտրութեան Կաթողիկոսի ամենայն Հայոց ի Ս. Էջմիածին Կաթ. Ընտր. Ժողովով, համաձայն տրամադրութեանց Պոլսոժէնիոյ 1836-ի և Ընտր. հրահանգին (տե՛ս յերեսս 38-45 ի Տեղեկադրի երկրորդ Կ Յանձնաժողովոյ) : Եւ այսպէս արդիւնաւորեաց ուսն. կառավարութիւն զջանս իւր կանոնաւոր և յամառ ուղղութեամբ իւրով :

Սակայն չարաչար յուսավրէպ եղև Աչըղեան հակառակ բերանուցի յուսադրութեանց ուսն. դեսպանի, և ընտրեցաւ Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոս Խրիմեան ի կաթողիկոս, մինչ յարտօրանս մնայր ի Վանս Ս. Յակոբեանց ի Ս. Երուսաղէմ :

Յետ այսորիկ շարունակեցաւ զրութիւնն այս համաձայն տրամադրութեանց Պալատէնիոյ, ուղղակի անձնիւր վիճակ մասնակցէր Կաթ. Ընտր. Ժողովոյ ի Ս. Էջմիածին, և այսպէս ընտրեցաւ Տ. Մատթէոս Արքեպս. Իզմիրլեան յերկրորդ Պատրիարքութեան իւրում յետ դարձին յարտօրանացն ի Ս. Երուսաղէմէ (1908-9 թ.) :

Իսկ յետ վախճանի Տ. Մատթէոս Բ. Կաթողիկոսի (1910-11 - 12), ուսն. կառավարութիւն յուզեաց զնոր ինդիր, զի անձնիւր վիճակ առ ի մասնակցել ընտրութեան կաթողիկոսի ի Ս. Էջմիածին, առաքէ ի միջոյ իւրմէ զպատգամաւորս և ոչ երբեք կարգէ զներկայացուցիչս յայոց վիճակաց կամ ի Հայոց Ռուսաստանեայց : Միանգամայն անձնիւր պատգամաւոր պարտի տալ զմի քուէ և եթ :

Խնդիր նոր էր եւ դժուարութիւն մեծ ընդառաջէր :

Տնտեսական տազնապն Հայոց Թուրքիոյ, ձմեռնային եղանակն ու հեռաւորութիւնք վայրաց ընդ դժուարութեանց երթեւեկութեանց, թո՛ղ զտարածամութիւնն, ծանրացուցին զվիճակն :

Ի Տեղապահութեան մերում վիճակուեցաւ մեզ դարմանել զսոյն զայս խնդիր :

Ի միոյ կողմանէ ի գաղտնի մտերմական յարաբերութիւնք ընդ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի Սուրէնեանց Կաթ. Տեղապահ Ս. Էջմիածնի, եւ ի միւսէ մեք աստ ի Կ. Պոլիս միջոցաւ ուսական դեսպանի եւ Սուրէնեանց անդ ի Ս. Էջմիածին բացաք զբանակցութիւնս եռանդեամբ, եւ կարգադրեցաք զխնդիրդ տալով թոյլատրել 1) արտաքուստ կարգել զներկայացուցիչս եւ 2) տալ զերկուս ձայնս պատգամաւորաց յորժամ հարկն պահանջիցէ :

Ռուս կառավարութիւն կարծէր, զի Դաշնակցական կուսակցութիւնն զաւարէր ի գաղտնի, որպէս երեւեցաւ ի բանից ուս. դեսպանի, եւ մեք միամտեցուցաք զնա :

Իսկ յայտ նուազի Երեսփ. Ժողով ոչ ընտրեաց զընտրելիս, եւ իբրեւ մի ի վիճակաց Հայոց Թուրքիոյ կարգեաց զպատգամաւորս երկուս, հոգեւոր եւ աշխարհական, վիճելով եւ պատուիրելով տալ զքուէնս զոր փափաքի Ազն Հայոց ընտրել ի կաթ. եւ որպէս եկեղ. Համազումար Ժողովն Կ. Պոլսոյ արտայայտեաց ոչ տալ քուէ յանուն Տ. Մաղաքիս Արքեպիսկոպոսի Օրմանեան, նոյնպէս պատուիրեաց Երեսփ. Ժողովն պատգամաւորաց Կ. Պոլսոյ, իսկ Երեսփ. Ժողով ստուար մեծամասնութեամբ յանձնարարէր նաեւ չտալ քուէ յանուն Տ. Նդիշէ Արքեպիսկոպոսի Դուրեան երբեմն Պատրիարքի, որպէս եւ կարեւորագոյն մասն Հայոց Ռուսիոյ ատել ատէին զնա բացի Դաշնակցականաց, որ եւ պառակտեալ էին :

Եւ ընտրեցաւ Տ. Գէորգ Արքեպ. Սուրէնեանց ի Կաթողիկոս, առաւելութեամբ միոյ քուէի, եւ երկրորդ ընտրելի եղեւ Տ. Նդիշէ Արքեպ. Դուրեան : Մի մասն Արմաշական Միաբանից էր ի կողմն Տ. Մաղաքիս Արքեպիսկոպոսի Օրմանեան, եւ մեծամասնութիւնն ընդ Դաշնակցականաց էր ի նպաստ Արքեպիսկոպոս Դուրեանի :

Արդ ուշադիրք կարեն զիտել ի դրելոցս ցայս վայր, զի Երեսփ. Ժողով քանիցս յարոյց զաղմուկ մեծ, կազմեաց զյանձնաժողովս եւ ետ զորոշմունս, որք ոչ համաձայնէին միմեանց, ըստ ընտրական սկզբանց եւ ըստ միջազգային իրաւանց, բացակայ էր ներդաշնակութիւնն, զողջես ոչ զիտէր զինչ առնէր :

Իսկ ուսական ցարական պետութիւն հետեւէր միում ուղղութեան մինչեւ ցվերջն, ընդ պատրուակաւ պաշտպանելոյ զտրամա-

դրութիւնս Պալատէնիոյ 1836-ի խորին ճշդապահութեամբ, միանգամայն ջանալով խանդարել եւ ոչնչացուցանել զմիջազգային իրաւունս, մանաւանդ զԱզգային Սահմանադրութիւն Հայոց Թուրքիոյ եւ գերեւսի. Ժողով: Սինոդ Ս. Էջմիածնի եւ Հայք Ռուսիոյ յաճախէին ի կողմն Հայոց Թուրքիոյ եւ Ազգ. Սահմանադրութեան, եւ գործէին զզուլութեամբ եւ խոհեմութեամբ՝ ոչ ունին տուեալ ոուսական թելադրութեանց, մաղնիսացեալ յաճախ ի հրապուրիչ համբաւոց ընտրելեաց, երկուցեալ միանգամայն յԱզգային երկպառակութեանց, մանաւանդ եւ ոուսահայք պէտս ունէին աջակցութեան Թուրքահայոց ընդդէմ մեքենայութեանց եւ ձուլիչ ուղղութեանց եւ նպատակաց Ռուսաց:

Ապաքէն իրաւացի էին դիտողութիւնք Ռուսաց սակս 45 եւ 46 վիճակաց ընդդէմ վեց վիճակաց ոուսահայոց, թող զպարսկաստանեայս, զհնդկաստանեայս եւ զայլս դաղթականութիւնս: Իրաւացի էր նոյնպէս, զի անձնիւր վիճակ ուղղակի մասնակցեսցի ընտրութեան Կաթողիկոսի ամենայն Հայոց ի Ս. Էջմիածնի, նախ քան զհաստատութիւն Ազգ. Սահմանադրութեան հաստատեալ գոյով Պալատէնիա, յետ որոյ Պատրիարքարան Հայոց Կ. Պոլսոյ ոչ համանման ընթացիւք եւ տգիտութեամբ, եթէ ոչ միամտութեամբ, բանայ զդրունս վիճարանութեանց սկսեալ ի 1842 թուականէ, ի 1859ամէ եւ այլն: Գաղաքական անցքն ոչ սակաւ խանդարէին զընթացս պատրիարքարանի:

Ի վերայ այսր ամենայնի իրաւացի էին քննադատութիւնք եւ բողոքք Պատրիարքարանի եւ Հայոց Հնդկաստանեայց ըստ մեծի մասին, եւ մնայ ապագային ցուցանել զարդիւնս կարեւորս ըստ իրաւասութեանց Կաթ. իշխանութեան, սակս Կաթ. Խորհրդարանի, արտաքին եւ ներքին յարաբերութեանց, Առաջնորդական ընտրութեանց եւ այլոց, այլոց:

Զարդիս յաջողութիւնք են ի նպաստ Ռուսաց, որք մանաւանդ բազմօք սեղմեցին յաւուրս Խորհեանի զայլ եւ այլ իրաւասութիւնս եւ ստորացուցին յոյժ յոյժ:

ԳՆՈՒԽ Խ.

ՅԱՂԱԳՍ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ Տ. ԳԷՈՐԳԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
Ի ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄ. ՀԱՅՈՑ

Մինչ Տ. Գեորգ Արքեպ. դրաղեալ էր յոյժ եւ հետեւէր զցայգ եւ զցերեկ ի կառուցանել եւ ամբողջացուցանել զշինութիւն Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց Պրուսայոյ, Միաբանութիւն Մայր Աթոռոյ

եւ Սինոդ Ս. Էջմիածնի պարսպէր ի գործս ընտրութեան կաթողիկոսի, եւ Պատրիարքարան Հայոց Կ. Պոլսոյ ընդ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ յուզէր եռանդուն իմն ոգևորութեամբ եւ յառաջ վարէր զինդիրս եթէ վերաքննութեան Պալատէնիոյ 1836-ի եւ եթէ մասնակցութեան իւրոյ եւ իրաւանց Հայոց Թուրքիոյ ի գործս Կաթ. ընտրութեան:

Ոչ թերանայր եւ սուս. Դեսպանատուն Կ. Պոլսոյ ի ջանս իւր եւ ի մեքենայութիւնս: Վարձէր զլրագիրս, տայր հրատարակել զյօդուածս եւ զտարակա առանձինս ի պաշտպանութիւն Պալատէնիոյ եւ սուսական շահուց:

Զայսու միջոցաւ եւ յետ կատարման վերջնական քուէարկութեան Երեսփ. Ընդհ. Ժողովոյ Կ. Պոլսոյ սակս եռանուն ցանկի եւ ընտրելեացն (յժողոտոսի), պատրուակեալ դեսպան Իկնաթիէյ զօրավարի տեսանել զլեառն Ողիմպեան (Բէշիշ-Թաղը) եկն յատկապէս ի Պրուսա ի 1-ն Սեպտեմբերի (1866) յաւուր Հինդչարթու, ելեալ նախ ի Կէմլէյիկ «Թաման» անուն երկկայմեան շոգենաւա դեսպանատան, եւ ապա անտի էջ ընդ ցամաք եւ իջեւանեցաւ ի պանդոկի (հօթէլ) ի Միսիկիւէր: Գոզցես ծպտեալ էր:

Ընդ երէկս էր ժամ 11.30՝ դնաց Տ. Գէորգ Արքեպ. առ նա առ ի շնորհաւորել զգալուստն ի Պրուսա: Եւ տեւեաց տեսակցութիւն սոցա եւ խօսակցութիւն իբր երկու ժամ, թարգմանութեամբ պ. Յարութիւնի (Բասզալ) Օրագեան երիտասարդի Պրուսացւոյ ի զաղդ. լեղու: Վերադարձաւ ի Վանս (յԱռաջնորդարան) յերկրորդ ժամու առաջին պահու դիշերոյ: Զանայր Դեսպանն հրապուրել զՏ. Գէորգ Արքեպ. ն, որ եւ վարէր ընդ նմա խորագիտութեամբ:

Ի յաջորդ առուր յՈւրբաթու, ի նմին իսկ ժամու, փոխանակեաց Վսեմ. Իկնաթիէյ Դեսպանն զփոխադարձ այցելութիւն առ Տ. Գէորգ Արքեպ. ն, որ զիմաստրեաց զնա եկեղեցական հանդիսիւ եւ երգօք զպրաց, առաջնորդեալ տարաւ ի Ս. Եկեղեցի, ուր արար զաղօթս եւ զբարեմաղթութիւնս վասն կենաց Աղեքսանդր Բ. Կայսեր Ռուսաց եւ վասն Դեսպանի նորին պ. Իկնաթիէյ զօրավարի: Ներկայ էին հայ իշխանք եւ խուռն բազմութիւն ժողովրդեան: Ապա ի միասին ելին Տ. Գէորգ եւ Դեսպանն նովին հանդիսիւ ի Վանս-յԱռաջնորդարան:

Յետ հիւրասիրական յարգանաց եւ սակաւատեւ խօսակցութեան վերադարձաւ պ. Իկնաթիէյ ի բնակարան իւր՝ ելեալ ընդ մեծ դուռն վանուց եւ անցեալ ի միջոյ երգեցիկ զպրաց եւ խուռն բազմութեան Հայոց:

Ետ նա զայցելութիւնս առ Կոռսակալ փաշայ եւ առ ոմանս անձինս նշանաւորս, ընկալաւ զփոխադարձ այցելութիւնս, եւ ի նորոյ պատրուակեալ զխառնակութիւն եղանակի ընդ անձնական տկարութեան իւրոյ՝ առանց ելանելոյ յստորոտս անգամ Ողիմպեան լերին, ի Միաշարաթւոջ վաղ քան ընդ առաւօտ ել եւ մեկնեցաւ ի Պրուսայէ առ ի վերադառնալ ի Կ. Պոլիս:

Սնդիրն Կաթ. ընտրութեան էր գլխաւոր առիթ զայստեան զօրավարի ի Պրուսա եւ երկարատեւ խօսակցութեանն ի պանդոկի, յորում զողջես լրտեսէր եւ քննէր պ. Իկնաթիէյ զխորագէտն Գէորգ, դուցէ ըստ յանձնարարութեան Կեդր. Կառավարութեան, եւ ջան կալաւ առնուլ զխոստմունս նպաստաւորս:

Հարկ է փակադժեւ աստէն եւ զայս, զի յորժամ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսն դտանէր աստ ի Կ. Պոլիս յամի Տն. 1865, եկն եհասս զոյժ վախճանի Տ. Մատթէոս կաթուղիկոսի Ամ. Հայոց, եւ անմիջապէս սկսաւ խնդիր հրատապ եւ կրքալից վիճարանութեանց վերաքննութեան Պալատէնիոյ, խառն ընդ անձնական դսրովանաց եւ զըրպարտութեանն, եթէ ի լրագիրս եւ եթէ ի պաշտօնական շրջանս ազգայինս: Ոմանք պնդէին յետաձգել զընտրութիւնն կաթուղիկոսական մինչեւ աւարտեսցի խնդիրն Պալատէնիոյ համաձայնութեամբ ուսական կառավարութեան: Իսկ, Տ. Գէորգ Արքեպ. յորդորէր զանհետատես հակառակորդս ի խոհեմութիւն եւ ի շրջահայեցողութիւն, տալ կատարել նախ զընտրութիւնն կաթուղիկոսական եւ ապա ի ձեռն նորընտիր կաթուղիկոսի, իբրեւ վաւերական եւ իսկական միջնորդի, ջանալ հետեւիլ եւ ի վերաքննութիւն Պալատէնիոյ, որոյ վասն զըրպրոեաց զթշնամութիւնս ոմանց եւ զկասկածանս ընդդէմ իւր:

Պարագլուխք հակառակորդաց երեւէին կրաւորական Մկրտիչ Վրդ. Սրիմեան, Մարկոս Աղաբէգեան, Կարապետ Իւթիւճեան՝ խրմբագրապետն «Մասիս» լրագրոյ, Քրիստոստուր Ղազարոսեան եւ Մտեփան Փափաղեան, որք տքնէին եւ թելագրէին զցայգ եւ զցերեկ ընդդէմ Գէորգայ, բանիւ բերանոյ թէ հրատարակութեամբք: Էին նոքա անձինք հրապարակականք եւ բերանք այլոց ոչ սակաւ հակառակորդաց զարանելոց ի զաղտնի յայլ եւ այլ զիմակս մտեալ: Թո՛ղ յիշել զաննպատ հրատարակութիւնս:

Շարունակեսցուք զգործ ընտրութեան Կաթուղիկոսի:

Մինչ այս մինչ այն՝ եհաս ահա սահմանեալ ժամանակ եւ օր ընտրութեան նորոյ Կաթուղիկոսի ի Մայր Աթոռոջ ի Ս. Էջմիածնի որ ի 17-ն Սեպտեմբերի:

Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողով Հայոց Թուրքիոյ յետ երկարատեւ

եւ բուն վիճարանութեանց եւ գործողութեանց, զառաջինն լեալ յետ հաստատութեան Ազգ. Սահմանարութեան, սահմանեալ էր զեզանակ մասնակցութեան իւրոյ եւ իրաւասութեան եւ կատարեալ էր զընտրութիւն եռանուն ցանկի կաթ. ընտրելեաց յ2-ն Օգոստոսի, յորս էր ընտրելի առաջին Տ. Գէորգ Արքեպ.ն, երկրորդ՝ Տ. Եսայի Արքեպ. Պատրիարք Ս. Երուսաղէմի, եւ երրորդն՝ Տ. Իզնատիոս Արքեպ.՝ Առաջնորդ թեմակալ վիճակին Վասպուրականի: Զոր եւ հաղորդեալ էր Տ. Պօղոս Արքեպ. Պատրիարք Կ. Պոլսոյ կարեւորագոյն զբութեամբք յանուն Սինոդի, ի ձեռն երկուց պատգամաւորացն իւրոց Տ. Ներսէս Եպս.ի Վարժապետեան եւ պ. Յակոբայ Նորատունկեան, հանդերձ հրահանգօք պաշտօնականօք տուելովքն վերջնոց:

Արդ հասեալ եւ այոցիկ պատգամաւորաց ի Ս. Էջմիածին, որպէս եւ այլոցն վիճակաց եւ կողմանց պատգամաւորաց ի զիմաց Ռուսաստանեայց եւ Պարսկաստանեայց ընդ Հնդկաստանեայց, ձեռնարկեցին ի նախնական խորհրդակցութեանս եւ ի պատրաստութեանս ընդ Սինոդի եւ ընդ այլոց պաշտօնակցաց՝ կազմեալ բաց ի նախնական խորհրդակցութեանց՝ յերիս օրինասահման ժողովս:

Ամփոփենք աստ զանուանս անդամոց Համազգային Կաթ. ընտր. ժողովոյ:

ԱՆԻԱՄՔ ՍԻՆՕԴԻՒՍ —

Ա. — Գէորգ Արքեպիսկ. Վեհապետեան, Տեղակալ.

Բ. — Յովհաննէս — Ասլանեան

Գ. — Գրիգոր — Յովբեան

Դ. — Գէորգ — Մկրտչեան

Ե. — Յովհաննէս — Արշարունի, եւ պատգամաւոր ի զիմաց թեմակալի Պարսկաստանի եւ Հնդկաստանի

Զ. — Թադէոս Վրդպ. Զիւնական

Է. — Պօղոս — Տէր Մարգարեան

Ը. — Գրիգոր — Մուշեղեան

Ի ԳԻՄԱՑ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ Ս. ԷԶՄԻԱՄՆԻՒՍ —

Թ. — Արէլ Արքեպիսկ. Մխիթարեան

Ժ. — Գրիգոր — Իսահակեան

ԺԱ. — Գրիգոր Եպիսկոպ. Սաբինեան

ԺԲ. — Յովհաննէս Վրդպ. Տէր Յարութիւնեան

ԺԳ. — Մարգիս — Տէր Գասպարեան

ԺԴ. — Կարապետ — Տէր Գալստեան
 ԺԵ. — Գրիգոր — Աղափիրեան

Ի ԴԻՄԱՅ ՀԱՅՈՑ ԹՈՒՐԳԻՈՑ ԵՒ ՎԻՃԱԿԱՑՆ. —

ԺԶ. — Ներսէս Եպիսկ. Վարժապետեան
 ԺԷ. — Պ. Յակոբ Նորատունկեան

Ի ԴԻՄԱՅ ՀԱՅՈՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՒ ՎԻՃԱԿԱՑՆ. —

ԺԸ. — Մատթէոս Արքեպ. Վեհապետեան, Թեմակալ, Աստրախանու.

ԺԹ. — Պ. Սարգիս Եղիայեանց, Աստրախանու.

Ի. — Մակար Արքեպ., Թեմակալ, Տփլիսեաց

ԻԱ. — Պ. Յովհաննէս Ղայթմաղեան, Տփլիսեաց.

ԻԲ. — Սարգիս Արքեպ. Ջալալեան, Թեմակալ, Սիւնեաց
 — Ղարապաղու.

ԻԳ. — Յովսէփ Բէկ Մէլիք-Շահնազարեան, Սիւնեաց — Ղարապաղու.

ԻԴ. — Մկրտիչ Արքեպ. Բաբամեան, փոխ-Թեմակալ, Երեւանու.

ԻԵ. — Արսէն Սուլթան Գեղամեան, Երեւանու.

ԻԶ. — Դանիէլ Արքեպ. Շահնազարեան, Շամախուոյ.

ԻԷ. — Յակոբ աւագ քհնյ. Տէր Կարապետեան (առ պակասութեան Առաջնորդի), Ատրպատականի.

ԻԸ. — Տատուր խան Սէթ-Սանեան, Ատրպատականի.

ԻԹ. — Ստեփաննոս Սամուէլեան, Վաղարշապատցի, ի զիմաց ժողովրդեան Հայոց Պարսկաստանի եւ Հնդկաստանի.

Բացակայ մնացին եւ յատուկ զրութեամբք յանուն Սինօղի,

Լ. — Եղիազար Արքեպ. Կարապետեան կառավարիչն Նոր Նախիջևանու եւ Պեսարապիոյ.

ԼԱ. — Կարապետ Մարգարեան Հայրապետեանց, աշխարհ. պատգամաւոր Ն. Նախիջևանու.

ԼԲ. — Բժիշկ Դաւիթ Ուստումեան, աշխարհ. պատգամաւոր Շամախուոյ որ յանձնէ Սինօղի զիւր ձայն, չկարացեալ զալ անձամբ սակս տարափոխիկ հիւանդութեանն:

Ըստ զրութեան փոխարքայի որ ի 20-ն Օգոստոս ընդ Համարաւ 204, էր Պետական Ներկայացուցիչ — պատգամաւոր Պ. Զրիլայէվ

(համաձայն տրամադրութեանց Պալատէնիոյ) :

Ընտրելի Եպիսկոպոսունքն որոշեալ էին կանխաւ, ըստ Պալատէնիական նորամուտ սովորութեանց, առանց քուէարկութեան .

Մատթէոս Արքեպ. Աստրախանու

Գէորգ Արքեպ. Տեղակալ

Մակար Արքեպ. Տփլիսեաց, եւ

Սարգիս Արքեպ. Ղարապաղու

} Ի Ռուսաստանեայց .

Գէորգ Արքեպ. Պրուսայու

Նասյի Արքեպ. Երուսաղէմի, եւ

Իգնատիոս Արքեպ. Վասսուրականի

} Ի Թուրքահայոց .

Առիթ բարեպատեհ համարիմք յաւելուլ աստանօր ի տեղեկութիւն պատմական զարարողութիւնս ինչ եւ զսովորութիւնս կաթ. ընտրութեան՝ կցեալ ընդ հնոցն եւ զնոր սովորութիւնս օտարոտիս եւ Պալատէնիական :

Յօրէ անտի հաստատութեան Պալատէնիոյ կատարի եւ լրանայ ընտրութիւն կաթողիկոսական յերիս աւուրս ընդ այսմ կարգի, մինչ ի հնումն եւ ըստ նախնականին կատարէր առ հասարակ ի միում աւուր՝ եթէ ոչ էին հակառակութիւնք, վէճք, անհամաձայնութիւնք եւ այլն :

Յառաջնում աւուր հարկ է կատարել հանդերձ Ս. Պատարագաւ զպաշտօն Հոգեհանգստեան վասն հանգուցեալ Հայրապետի, ըստ նորոյ սովորութեան՝ երգմնեցոցանել զաշխարհական պատգամաւորս սակս կատարելոյ զընտրութիւն կաթ. անաչառութեամբ իմն եւ անշահանդրութեամբ, եւ զկնի Ս. Պատարագի զյատուկ Մաղթանս (մօլէպին) վասն Յարին :

Յերկրորդում աւուր, յետ արձակման առաւօտեան ժամերգութեան եւ Ս. Պատարագի (եթէ օր տօնական իցէ կամ պատշաճ տեսանիցեն), զնեն զաթոռս՝ զնստարանս եւ զգրասեղանս ի ներքս ի տաճարի ի հանդիպակաց երկուս կարգս, սկսեալ յարեւմտեան մեծ դըրանէ մինչեւ ցՍ. Սեղանն իջման, հրաւիրեն զհամայն անդամս եւ զիրաւասուս Համազգային կաթ. Ընտր. Ժողովոյ ի Ժողով ի Մայր տաճարի, եւ փակեալ զդրունս, այր իւրաքանչիւր կանգնի յիւրում տեղոջ ըստ կարգի աստիճանի Աթոռոց, Վիճակաց եւ պատուոյն, եւ ըստ կարգին որոշելոյ ի կաթ. Տեղապահէ, որ է Նախագահ Ժողովոյ եւ նստի յԱթոռ, առջ ի իջման Սեղանոյ, որ եւ ասէ զ«Հայր մեր», եւ մաղթանք «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա» . յետ սովորական Սաղմոսից եւ աղօթից կանոնելոց՝ նստին յիւրաքանչիւր տե-

զիս, նախ եկեղեցականք եւ ապա աշխարհականք, եւ եթէ ոչ իցեն պէտք նորոց բանակցութեանց, բանախօսութեանց եւ վիճարանութեանց, որոշեն փութով զկաթ. չոքս ընտրելիս ձեռամբարձ քուէիւք, կամ ձայնատուութեամբ յոտին, եւ կամ ստորագրեալ զառանձին թերթիս յատկացեալս յանուն իւրաքանչիւրոցն ընտրելի եպիսկոպոսաց, եւ աւարտի ժողովն յետ ստորագրելոյ զարձանագրութիւն ԸՆՏՐԵԼԵԱՑՆ ԶՈՐԻՑ:

Մտացաք ասել, զի յերկուս կողմունս Տեղապահի նստին ներկայացուցիչ եպիսկոպոսունք կամ Վարդապետք Ս. Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ: Իսկ պետական ներկայացուցիչն եւ Պրօկուրօր Սինօզի ի ձախակողմն ի յետկոյս պատգամաւորաց չուրջ զգլխանական սեղանով:

Յերրորդում աւուր, պատրաստեալ զաթոռս եւ զայլս, արարեալ զաղօթս՝ որպէս յերկրորդում աւուր, կազմի ժողովն Համազգային, յորում ներկայ լինին զարձեալ պետական ներկայացուցիչ եւ Պրօկուրօր Սինօզի, ըստ տրամադրութեանց Պալատէնիոյ, եւ յետ ասեանական իմն թեթեւ դործողութեանց ձեռնարկեն անդամք ի կաթ. ընտրութիւն, ստորագրեալ ի վերայ ուրոյն ուրոյն ընտրական թերթից իւրաքանչիւր ընտրելեացն չորից, եւ որ ի չորոց անձանց ընտրելեաց ստանայ զմեծամասնութիւն քուէից, հռչակի կաքուղիկոս ամենայն Հայոց, որում յաւերուն ոռւսահպատակք, համաձայն քուէիցն առաւելագունից, զերկրորդ ընտրելի ըստ Պալատէնիոյ:

Արդ, ըստ այսմ կարգի եւ սովորութեան, յերրորդում աւուր ի 17-ն Սեպտեմբերի կատարեալ եւ լրացուցեալ Համազգային Կաթ. Ընտր. ժողովոյ զընտրութիւն Կաթուղիկոսի ամ. Հայոց, Տ. Գէորգ Արքեպս. Պրուսայու ամենաբացարձակ իմն առաւելութեամբ քուէից ընդ ստորագրութեամբ անդամոցն ստանայ զձայն կամ զքուէս հարիւր յիսուն եւ երեք (153) ըստ պատգամաւորաց թուրքահայոց եւ գիարիւր տասնեւուր (118) ըստ Սինօզի՝ տուեալ թուրքահայոց զինւրսուն ձայնս (ըստ 45 Վիճակաց) փոխանակ 130 ձայնից ըստ 65 Վիճակաց, որոյ վասն բռնանայր ոռւսական կառավարութիւն ի վերայ Սինօզի, եթէ ըստ կանդիտայական դրութեան եւ եթէ ըստ քուէից թուրքահայոց:

Այսպէս ուրեմն ընտրուեցաւ Տ. Գէորգ Արքեպիսկոպոս Պրուսայու, երբեմն Պատրիարք Կ. Պոլսոյ, ի ԿԱԹՈՒՂԻԿՈՍ Ամ. Հայոց:

Ի լրումն պալատէնիական-ոռւսական զեղծմանց եւ հակառակ արգար բողբանաց եւ մերժման պատգամաւորացն Հայոց թուրքիոյ՝ Սինօզ բռնադատեալ էր եւ յաւել զընտրութիւն երկրորդ ընտրելոյ

ընդ անուամբ եւ պատրուակաւ ԿԱՆԴԻԴԱՏԻ, եւ Տ. Մատթէոս Արքեպս. Աստրախանու ընկալաւ զ28 քուէս Սինօղականաց՝ Միաբանից եւ Վիճակացն Ռուսաստանեայց եւ եթ :

Յետ որոյ կազմեցաւ սովորական արձանագրութիւն վերջնական ընտրութեան օրինակ զայս .

« Ի 17 Սեպտեմբերի 1866 ամի ժողովն Սրբազան Արքեպիսկոպոս-
« սաց, Եպիսկոպոսաց, բարձրապատիւ Վարդապետաց եւ ակնաւոր
« աշխարհական պատգամաւորաց ի Վիճակացն Ռուսաստաի եւ Տաճ-
« կաստանի (մոռանայ զՊարսկաստան եւ զՀնդկաստան), գումարե-
« լոց ի Տաճարի Սրբոյ Էջմիածնի վասն ընտրութեան ծայրագոյն
« Պատրիարք Կաթողիկոսի ամ. Հայոց բացեալ ի սոյն թիւ զատե-
« նակայութիւն իւր առ ի գործ ընտրութեան Կաթողիկոսի ամ. Հա-
« յոց կանոնաւորեալն կարգաւ, ուր եւ ընկերացեալ զանուանս ակա-
« նաւոր Արքեպիսկոպոսաց եւ Եպիսկոպոսաց ի սահմանս Ռուսաց,
« Թուրքիոյ եւ Պարսից գտանելոց, եւ յետ պատշաճականն ամին իրի
« ատենախօսութեանց, կայացաւ ընտրութիւն չորից ընտրելեաց
« (կանդիդատաց) յաստիճան (°) կաթողիկոսութեան, որք են՝
« Գէորգ Արքեպիսկոպոս Պրուսայու նախկին Պատրիարք Կ. Պոլսոյ,
« Եսայի Արքեպիսկոպոս այժմեան Պատրիարք Երուսաղէմայ, Մատ-
« թէոս Արքեպիսկոպոս վիճակաւոր Առաջնորդ Աստրախանայ եւ Իդ-
« նատիոս Արքեպիսկոպոս Վասպուրականի, որոց վասն եւ կազմե-
« ցան ուրոյն ուրոյն ընտրական թերթք ընդ ստորագրութեամբ ան-
« զամոց ժողովոյն, եւ յետ այնր համաձայնութեամբ ժողովոյն ար-
« ժանի եղեն կոչման աւագադոյն (°) ընտրելեաց (կանդիտատաց)
« երկուքն ի նոցանէ, բարձր սրբազան Գէորգ Արքեպիսկոպոս Պրու-
« սայու եւ Մատթէոս Արքեպիսկոպոս վիճակաւորն Աստրախանայ
« Հայոց, ըստ առաւելութեան ձայնից, տուելոց յօգուտ նոցա. վասն
« որոյ ժողովն եկեղեցականաց եւ աշխարհականաց ՍԱՀՄԱՆԵԱՑ
« զսոյն զայս ընտրութիւնէ վեհափառ Պատրիարք Կաթողիկոսի Ազ-
« դիս եւ կանդիտատիւն անցուցանել յօրագիր, եւ վաւերացուցեալ
« ընդ ստորագրութեամբ համայն անդամոց ժողովոյն, յանձնել Սի-
« նօղին Սրբոյ Էջմիածնի առնել զկախեալն յինքենէ տնօրինութիւն,
« որպէս պատշաճն է, ըստ օրէնսդրեալ կարգին» :

(Ստորագրութիւնք համայն անդամոց ժողովոյ) .

« Ես՝ պատգամաւոր ի զիմաց համայն եկեղեցականաց ամե-
« նայն վիճակացն (°) Ս. Էջմիածնի, եւ Կաթողիկոսութեանցն Սսոյ
« եւ Աղթամարայ, եւ Պատրիարքութեանն Սրբոյ Երուսաղէմի, ըստ
« հրահանգին տուելոյ ինձ յԱզգային ժողովոյ Պատրիարքութեանն (°)

կ. Պոլսոյ, ընտրեցի կաթողիկոս ամ. Հայոց եւ Ծայրագոյն Պատրիարք Համազգեական Մայր Աթոռոյ Արարատեան Սրբոյ Էջմիածնի՝ զամենապատիւ զՏէր Տէր Գէորգ Սրբազան Արքեպիսկոպոսն Պրուսայու, եւ ոչ զոք կանգիղատ :

« ՆՆՐՍԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ .

« Նոյնպէս եւ ես պատգամաւորս ի դիմաց ամ. Ժողովրդականաց վերոյիշատակեալ վիճակաց կայսերութեան Տաճկաստանի ընտրեցի կաթողիկոս զՏէր Գէորգ Սրբազան Արքեպիսկոպոսն Պրուսայու, եւ ոչ զոք կանգիղատ :

« ՅԱԿՈՒ Պ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆՑ

« Պատգամաւոր Ղարաբաղու՝ ՅՈՎՍԷՓ ԲԷԿ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐ-ԵԱՆՑ

« Պատգամաւոր Երեւանու Հայոց Վիճակի ՊՕՐՈՒԶԻԿ ԱՐՍԷՆ ՍՈՒԼԹԱՆ ԳԵՂԱՄԵԱՆՑ .

« Պատգամաւոր վիճակին Վրաստանի եւ Իմէրէթիոյ ԱՏԱՏԱԿԻ ՍՈՎԵՏՆԻԿ Յ. ՂԱՅԹՄԱԶԵԱՆՑ

« Պատգամաւոր Աստրախանայ վիճակի ԿՕԼԼԷՅԻՍԿԻ ԱՍԷՍՕՐ ՍԱՐԳԻՍ ԿՕԿԶԱՅԵԱՆ

« Պատգամաւոր Պարսկաստանի եւ Հնդկաստանի Հայոց ԿՕԼԼԷՅԻՍԿԻ ՍԵԿՐԵՏԱՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

« Պատգամաւոր վիճակի Ատրպատականի Հայոց ՍՈՒՐՀԱՆԿ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԵՒ ԱԴՈՒԴԱՆԴ ԾԱՏՈՒՐ ԽԱՆ ՍԷԹ-ԽԱՆ-ԵԱՆ ,

« Պատգամաւոր ի կողմանէ հոգեւորականութեան Հայոց Ատրպատականի ՏԷՐ ՅԱԿՈՎՐ ԱԻԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ,

« Պատգամաւոր ի կողմանէ Միաբանութեան Ս. Էջմիածնի ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ԱՂԱՓԻՐԵԱՆՑ ,

« Անդամ Մինօղի Սրբ. Էջմիածնի ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՄՈՒՇԵՂԵԱՆՑ ,

« Պատգամաւոր ի կողմանէ Միաբանութեան Սրբոյ Էջմիածնի ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ՏԷՐ ԳԱԼՍՏԵԱՆՑ ,

« Պատգամաւոր ի դիմաց Միաբանից Էջմիածնի ՍԱՐԳԻՍ ՎՐԴՊ .

« Անդամ Մինօղի ՊՕՂՈՍ ՎՐԴ. ՏԷՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ ,

« Անդամ Մինօղի ԹԱԴԷՆՍ ՎԱՐԴԱՊԵՏ ,

« Պատգամաւոր ի կողմանէ Միաբանութեան Սրբոյ Էջմիածնի ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ. ՏԷՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ,

« Պատգամաւոր ի կողմանէ Միաբանութեան Սրբոյ Էջմիածնի ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱԳԻՆԵԱՆ ,

- « Պատգամաւոր ի կողմանէ Հայոց Հոգեւորականաց Երեւանայ
Թեմի ՄԿՐՏԻԶ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ,
- « Պատգամաւոր ի կողմանէ Միաբանութեան էջմիածնի ԱԲԷԼ ԱՐ-
ՔԵՊԻՍԿՈՊՈՍ ,
- « Պատգամաւոր ի կողմանէ Միաբանութեան Սրբոյ էջմիածնի
ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊՍ . ԻՍԱՀԱԿԵԱՆՅ , ԵՐԵՒԱՆՅԻ ,
- « Պատգամաւոր Հոգեւորականութեան Հայոց Ասպհանու եւ
Հնդկաստանի , անդամ Սինօզի ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԱՐՇԱՐՈՒՆԻ ,
- « Անդամ Սինօզի ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ,
- « Անդամ Սինօզի ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊՍ . ՅՈՎԲԵԱՆՅ ,
- « Անդամ Սինօզի ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊՍ . ԱՍԼԱՆԵԱՆՅ ,
- « Պատգամաւոր Հոգեւորականաց Հայոց Արձախու ԱՐՔԵՊԻՍԿՈ-
ՊՈՍ ՍԱՐԳԻՍ ,
- « Պատգամաւոր ի զիմաց Հայոց Հոգեւորականաց Վրաստանի ՄԱ-
ԿԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ,
- « Տեղակալ Ատենապետի Սինհոզոսի ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՎԵՀԱՊԵՏԵԱՆՅ ,
- « Պատգամաւոր ի կողմանէ Հայոց Հոգեւորականաց Աստրախանայ
Թեմի ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՏԹԷՆՈՍ ,
- (Ստորագրութիւն Պրօկուրօրի (°) ԿԱՐԱՊԵՏ ՎԱՍԱԿՈՎ ,
- (Ստորագրութիւն Ատենաղալրի Սինօզի) ՍՈՒԻԲԻԱՍ ԹԱՂԻԱՆՈՍ-
ԵԱՆՅ » :

Յետ այսորիկ եւ ի սմին իսկ աւուր կազմէ Սինօզ առանձին իմն
գեկուցմամբ զօրագրութիւն , եւ գրեալ ըստ այնմ զԹուղթ իբր ի տե-
ղեկազիր յանուն փոխարքայական կառավարութեան Կովկասու՝ ա-
ռաքէ ի Թիֆլիզ ի ձեռս երից յատուկ պատգամաւորացն , այս է
Գրիգոր Եպիսկոպիտ Սաղինեանց , Պարոնայիցն Յովհաննու Ղայթմազ-
եանց Թիֆլիզեցոյ եւ Յովսէփ Իէզի Մելիք Շահնազարեան Շու-
շեցոյ՝ ամփոփեալ եւ հաղորեալ ըստ կարգին զգործս եւ զտեղեկու-
թիւնս ընտրութեան Կաթողիկոսի ամ . Հայոց , եւ խնդրէ վաւերա-
ցուցանել զընտրութիւնն կայսերական հրովարտակաւ ըստ տրամա-
գրութեան օրինաց :

Յետ ամսոց ինչ ընկալաւ Սինօզ զպաշտօնաթուղթ փոխարքային
որ ի 29էն Դեկտեմբերի (1866) ընդ համարաւ 301, որով հաղորդէր
զի Վեհ . Կայսրն Ռուսաց վաւերացոյց զընտրութիւն Տ . Գէորգ Ար-
քեպիսկոպոսի ի Կաթողիկոս ամ . Հայոց , եւ փութացաւ տնօրինել
եւ հանդիսաւոր իմն եղանակաւ եւ սովորական կարգաւ բառնայ զսեւ

քօղն ի Հայրապետական Աթոռոյ ի ձեռն Աւագ Լուսարար Եպիսկոպոսի, ի 1-ն Յունվարի ի Մայր Տաճարի Ս. Էջմիածնի՝ տուեալ յիշատակել ի Ս. Պատարագի ԸՍՏ ՆՈՐԱՄՈՒՏ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ եւ զանուն նորոյ Կաթողիկոսի: Եւ ի յաջորդ աւուր յ2-ն Յունվարի զըրեալ զյատուկ պաշտօնաթուղթ յանուն Պատրիարք Արքեպիսկոպոսի եւ Ազգ. Վարչութեան Հայոց Կ. Պոլսոյ՝ հաղորդէ զայս ամենայն: Հրամանագրէ միանգամայն համայն Վիճակաց Հայոց Ռուսաստանեայց եւ Հնդկստանեայց աւ ի յիշատակել զանուն նորոյ կաթողիկոսի ի Ս. Պատարագի, ի քարոզս, յաղօթս եւ ի մաղթանս: Նաեւ յ3-ն Յունվարի հաղորդեալ Սինօզի զընտրութիւն եւ զհաստատութիւն կաթողիկոսական առ նորընտիր Կաթողիկոս պարզէ եւ մատուցանէ զհպատակութիւն, զխորին յարգանս եւ զմաղթանս իւր:

Ըստ սովորութեան հարկ էր Նորին Սրբութեան փոխանակել զողջոյն իւր եւ զպատէէրս, յորում թերացաւ:

Իսկ ըստ ակնարկութեան եւ առանձին հրահանգի ռուսական կառավարութեան՝ առանց ստանալոյ կանխաւ զհաճութիւն եւ զհրաման Նորին Սրբութեան ընտրեալ Հայրապետի՝ ի 16-ն Յունվարի կարգէ Սինօզի ի պաշտօն Հրաւիրակութեան Վեհ. Հայրապետի Ազգիս զԳեղ. Տ. Սարգիս Արքեպս. Զալալեան զթեմակալն Արցախու, զբարեչնորհ Տ. Գրիգոր Վարդապետ Մուշեղեան զանգամ Սինօզի եւ զթարգման Սինօզի զՊ. Նիկողայոս Տէր-Յովսէփեան (°) Աշտարակցի՝ զրեւով եւ տալով ի ձեռս Զալալեան Եպիսկոպոսի եւ զայս թուղթ պաշտօնական.

« Նորին Վեհափառութիւն

« Մայրազոյն Պատրիարք Կաթողիկոսի ամ. Հայոց

« Տեառն Գէորգայ

« ի լուսաւորչական Հայոց Սինօզէ Սրբոյ Էջմիածնի

« Յայտարարութիւն:

« Նշանակեալ զվիճակաւոր Առաջնորդն Հայոց Արցախու զբարձր
« Սրբազան Սարգիս Արքեպիսկոպոսն, զանգամ Սինօզիս, զբարձրա-
« պատիւ Գրիգոր Վարդապետն Մուշեղեանց եւ զթարգման սորին
« զաստիճանաւոր Նիկողայոսն Տէր-Յովսէփեանց ի պաշտօն հրա-
« լիրակութեան Զերդ Վեհափառութեան ի դիմաց Միաբանութեան
« Սրբոյ Աթոռոյս, զորս եւ ուղեւորեալ յոտս Սրբութեանդ, բազկա-
« տարած մաղթանօք աղաչեմք զամենաբարին Աստուած, զի արժանի
« արասցէ զմեզ զմենեսեան տեսանել զչնորհաբեր մուտ ձեր ընդ
« սեամն դրան աստուածային սբ. Տաճարիս:

« Հրեշտակի խաղաղութեան յանձն արարեալ զչնորհաբեր ճա-

« նապարհորդութիւն ձեր, պատիւ անձանց համարիմք մնալ կատարեալ գերապատուութեամբ եւ բոլորանուէր անձնընծայութեամբ »

« Ձերդ Աստուածարեալ Վեհափառութեան »

« Խոնարհ ծառայք (անդամք Սինօղի) »

« ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊ. ՏԵՂԱԿԱԼ ՍԻՆՕԴԻ »

« ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊ. ԱՍԼԱՆԵԱՆՑ »

« ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊ. ՅՈՎԲԵԱՆՑ »

« ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊ. (Մկրտչեան, Երեւանցի) »

« ԹԱԴԷՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ »

« Ատեմաղայիք Սինօղի ՍՈՒՔԻԱՍ ԹԱՂԻԱՆՈՍԵԱՆՑ » :

« Համար 105 »

« Ի 20 Յունվարի 1867 ամի »

« Ի Սբ. Էջմիածին »

Ոչ յաւելորդաց համարեացի արձանագրել ասդէն զի առթիւ ընտրութեան Տ. Գէորգայ ի Կաթողիկոս ամ. Հայոց, յորժամ նախքան զվաւերացուցանելն Աղեքսանդր կայսեր Նիխօլայեփիչի բանակէր ուստական կառավարութիւն ընդ Օսմանեան Կայսերական կառավարութեան, միջոցաւ ուստ. դեսպանի Կ. Պոլսոյ, յամսեանս Հոկտեմբերի եւ Նոյեմբերի, առ ի արձակել զՏ. Գէորգ ի հալատակութենէ Թուրքիոյ, բազմօք ջան կայաւ պետութիւնն Օսմանեան համոզել ի դադանի եւ յաւէտ բանիւ բերանոյ եւ միջնորդութեամբ բըժըշկապետ Սերոբէի Վիչէնեան (Սերփիչէն), զի հրաժարեցի Տ. Գէորգ ի Կաթողիկոսութենէ եւ մի' մեկնեացի ի Թուրքիոյ, խոստացեալ նուիրել ինքեան Գէորգայ զմի տուն ծովեզերեայ կահաւորեալ, եւս եւ յաւելուլ զամսական ոտճիկն արքունական՝ փոխանակ 2000 դահեկանի: Այլ սակայն նորին Սրբութիւն օրհնեալ զկայսերական Կառավարութիւն Օսմանեան, փոխանակեաց շնորհակալութիւն եւ զմշտատեւ երախտագիտութիւն, յայտնեալ միանգամայն, զի պարտք իւր են ծառայել Ազգի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց, եւ երթալ ուր բնորեացին եւ կոչեացին ձայն Աստուածային եւ կամք եկեղեցւոյ: Վասնորոյ ձեռնթափ լիալ՝ յետ փոքու յապաղման՝ կատարեաց Օսմ. Կառավարութիւն զպաշտօնական ձեւակերպութիւնս, համաձայնեցաւ եւ պատասխանեց ուստական կառավարութեան, զորպիսի պատասխանի ընկալաւ նախարարութիւն Արտաքին Գործոց Ռուսաստանեայց ի 17-ն Նոյեմբերի:

Յետ որոյ Կայսրն Ռուսաց ետ զհրովարտակն Հաստատութեան նորընտիր Կաթողիկոսի ի 23-ն Նոյեմբերի, ընծայեալ ի նմին իսկ

աւուր զահանակուռ խաչ վեղարի հանդերձ առանձին հրովարտակաւ :

Վասնորոյ յերեսներորդ աւուր ամսեանն Նոյեմբերի ներկայացեալ պաշտօնապէս Պ. Փալքէզ Ռուսական Հիւպատոսի Պրուսայու համազդեաստուք՝ հաղորդեաց Նորին Սրբութեան նորընտիր Կաթողիկոսի ամ. Հայոց զպաշտօնական հեռագիր Իկնաթիէ՛վ զօրավարի ռուսական Դեսպանի Կ. Պոլսոյ որ վասն վաւերացուցանելոյ Աղեքսանդր Կայսեր զընտրութիւն իւր ի ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ամ. Հայոց, եւ ջերմեռանդութեամբ իմն եւ խորին յարգանօք շնորհաւորեաց զկաթողիկոսական պաշտօն Նորին Սրբութեան կրկնակի քան զսովորականն, համբուրեալ զԱջ նորին Սրբութեան :

Եւ յետ այսորիկ եւ ի լրանալ ամսեանն Դեկտեմբերի յաճախեցին աստի եւ անտի, ի հեռաւորաց եւ ի մերձաւորաց, յօտարազգեաց եւ ի մերայնոց հեռագիրք եւ նամականի առ ի շնորհաւորել զՏ. Գէորգ Կաթողիկոս՝ խառնեալ զուրախակցութիւնս եւ զմազթանս իւրեանց : Որոց փոխանակէր զշնորհակալութիւն եւ զօրհնութիւն :

Բազումք ուրախանային, եւ սակաւք տմանք տրտմէին, զուցէ առ հակառակութեան : Իին անձինք, որք ներքին համոզմամբ ունէին զյոռեօտս զզայմունս ընդդէմ ձեռնհասութեան Գէորգայ :

ԳՂՈՒԽ ԽԱ.

ՅԱՂԱԳՍ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՆՈՒԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ոչ զժուարին լիցի ստուգել յազգային եւ յեկեղեցական պատմութիւնս մեր, որպէս աւանդէ եւ Կանոն Օծման Կաթողիկոսի, զի օրէն է եւ նուիրական ճանաչել եւ պաշտել զոր ընտրէ համահաճութեամբ Ազգ եւ Եկեղեցի Հայաստանեայց ի Կաթողիկոս, զոր եւ հաստատէ եւ նուիրազորձէ օծմամբ սրբալոյս Միւռնի ի Հօպին սբ. : Յետ որոյ եւ անմիջապէս սկիզբն լինի որպէս յիշատակութեան անուան Կաթողիկոսի նորոյ, նոյնպէս դրէ Հոգեւոր Տէրն եւ զՀայրապետական անդրանիկ կոնդակ-թուղթ օրհնութեան առ ամենայն Հայս :

Ապաքէն ոչ է վայրապար այսպիսի կանոն եւ օրէն օծման ըստ կրօնական եւ ըստ ազգային նշանակութեան, առանց որոյ համարի ընտրեալն յաւէտ ԱՆՈՒԱՆԵԱԼ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ, միանգամայն զրկի յիրաւանց դասակցութեան ի շարս օրինաւոր Կաթողիկոսաց եթէ կանխիցէ վախճան կենացն, որպէս պատահեալ է եւ ի վերջին դարս՝

Սահակայ Ահազին կոչեցելոյ (1756-9), Յովսէփայ Արղութեանց (1800-1), և Երեսի Վարժապետեան (1884) :

Արղարեւ ոչ պահասեցան օրինակք ևւ զեղծմունք, ևւ ոչ պակասեցին յետ այսօրիկ, եթէ ըստ համազգային կաթուղիոսական ընտրութեան, եթէ ըստ յիշատակութեան ևւ եթէ ըստ զրկելոյ ոմանց օտարոտի իմն բռնութեամբք ի կաթուղիկոսական իշխանութենէ՝ մերթ ի չնորհս արտաքին միջամտութեանց, այլ սակայն ոչ դադարեացին երբեք օրինակքն ի կրելոյ զբացարձակ զբռնմն զեղծմանց, ևւ զեղծումն է ևւ լիցի միշտ զեղծումն *) :

Ապա ուրեմն ո՞չ համարեսցի ի զեղծմունն նորամուտ սովորութիւնք յիշատակութեան սկսեալ յԱշտարակեցոյ ևւ զործադրեալ ի տգիտաց ևւ ի ներկայումս յեկեղեցիս Հայաստանեայց յետ հաստատելոյ Օգոստ. Կայսեր Ռուսաց զնորընտիր Կաթուղիկոս արքունական հրովարտակաւ. իբր զի միակ պայման է ևւ կայսերական վաւերացումն յաւէտ ևւ միայն նուիրագործէ զԱՍՏԻՃԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՏԻ, որպէս չարաչար իմն բռնանայ յայսպիսիս ևւ պայտօնեայն 1836 ամի, որում տկարութեամբ իմն հետեւի Սինօղ Էջմիածնի, ըստ որում է տեսանել ևւ յընտրութեան Տ. Գէորգայ Կաթուղիկոսի, զորմէ համաօտեցաք ի նախընթաց Գլխով :

Վասն որոյ ոչ տարապարտ համարեմք հետագօտել յատկապէս ևւ զայս խնդիր :

Որպէս յաւուրս հարազատ Հարստութեանց, նոյնպէս յաւուրս վերջին անիշխանութեան Հայաստանեայց՝ միանգամայն զկնի տեղափոխման Հայրապետական Աթոռոյ ևւ իշխանութեան ի Կիլիկիոյ յաշխարհ Արարատեան ի Ս. Էջմիածին ի Վաղարշապատ, ոչ պակաս

*) Տ. Երեսի ընտրեալ Կաթ. Աշտարակեցի բռնացեալ ի վերայ Սինօղի ևւ առ ռիչն զրեալ գօրիմաւոր դիտողութիւնս ևւ զկանոնական առարկութիւնս նորա, մինչ գտանէր ի Պետերբուրգ մայրաքաղաքի, ետ յիշտակելի գտնում իւր յեկեղեցիս (1842-43), որում աջակցեցաւ ի Սինօղի Պրօկուրօր Քարտաշեանց, ևւ այսպէս ևւ դիւ սկզբնապատճառ զեղծմուն յիշտակութեան յառաջ քան գօծումն: Այսպէս ուրեմն, երկուցեալ Սինօղի նաեւ ի սպառնալեաց ռուսական կառավարութեան, որպէս ետ գիատստ առքի Երեսի Աշտարակեցոյ, ևւ միջամտութեամբ Պրօկուրօրի, շարունակեաց ևւ շարունակէ գիշտակութիւնս անուանց Կաթուղիկոսաց ցայսօր (Տեսնել ի «Տ. Երեսի Աշտարակեցի» ի Կ. Կոստանեանցէ, յերեսս 11-25, տպ. 1909, յԱզգայնագրասոյ): Թուի մեզ, զի Պատրիարք Արքեպիսկոպոս Հայոց Տ. Լատրէոս ստիպէր զՊատրիարք Արքեպիսկոպոսն Հայոց երուսաղէմի սակս յիշտակութեան անուան Երեսի, որում ըստ արժանոյն ևւ լիովին կշռէ զպատասխանի Տ. Զաքարիա Արքեպիսկոպոսն:

սեցան երբեք քմահաճ գործողութիւնք եւ ապօրինաւորութիւնք եթէ յընտրութիւնս Կաթողիկոսաց եւ եթէ ըստ յիշատալութեանց եւ ոմանց սովորութեանց, հանդերձ այլովքն, ընդդէմ որոց տկարանային Ազգ եւ Եկեղեցի Հայաստանեայց պաշտպանել զդարաւոր եւ զնուիրական կանոնս եւ զաւանդութիւնս, տկարանային եւ Հայրապետք, մանաւանդ ի վերջին դարս, թէեւ զնէին յաճախ զկանոնս եւ զպատուէրս հանդերձ բանադրանօք, որպէս է տեսանել զօրինակս ինչ եւ զփաստս ի կանոնս Տ. Աղեքսանդր Կաթողիկոսի Կ. Պոլսեցւոյ (1754) եւ Տ. Յակոբայ Կաթողիկոսի Շամախեցւոյ (1759—1763) :

Արդ առ համառօտութեան ամփոփեալ մեր ի վերջին դարս եւեթ, օրինակեմք ահա զոր դրէ Հոգեւոյս Տ. Աղեքսանդր Կաթողիկոս Ղարաղաջ իբր ի կանոն .

« Նախ Հայրապետ մերոյն Ազգի որ ի Սբ. Էջմիածին՝ եթէ հա-
 « մահաւանութեամբ բոլոր Ազգիս մերոյ եղիցի ընտրեցեալ եւ ի յԱ-
 « թոռ Հայրապետութեան նստեալ, եւ լինիցի ի հաւատս ուղղափառ՝
 « միաբնադաւան, եւ ոչ երկաբնադաւան եւ հերձուածօղ, ի դործս
 « բարի, ի հասակս կատարեալ, ի գիտութիւնս լրացեալ, ի վարս
 « պարկեշտ, ի բարս քաղցր եւ խոնարհ, տնարար, եղբայրասէր,
 « մարդաչահ, օրինապահ, երկիւղած, աննախանձ, արդարադատ,
 « անակնառու, անկարգ եւ արտուղի մարդկանց սաստիչ եւ յանդիմա-
 « նիչ, եւ ըստ ամենայնի կարգաւոր եւ չափաճանաչ, զայնպիսին որ
 « ունի զամենայն առաքնութիւնս եւ օրինաւոր խորհրդով պսակե-
 « ցեալ է ըստ հոգւոյ ընդ Հարսին լուսոյ եւ Մօրս պանծալւոյ Կա-
 « թողիկէ եկեղեցւոյս մերոյ Հայկազնոյ, ոչ է բնաւ օրէն ընկեցնու
 « ի յԱթոռոյն եւ մեկնել զնա ի հոգեւոր եւ յաստուածազոյզ հարսնէ
 « հեկեղեցւոյ սրբոյ, ըստ որում պսակեցեալ եւ կապակցեալ է օրինօք,
 « եւ զայլ ոմն փեսայ ատնել այսմ հարսին՝ որոյ այլն տակաւ կեն-
 « զանի գոլով . ուստի ահա կնքեմ կանոնօք եւ փակեմ բանադրանօք,
 « զի յայսմ հետէ բանասրկու արանց տեղի մի՛ տացի, չարախեղու
 « զրպարտողաց ունկն մի՛ զիցի եւ Հայրապետափոխութիւն երբեք
 « բնաւ մի՛ լիցի . քանզի աստի վնասք բազումք ծնանին հոգւոց եւ
 « մարմնոց, եւ մանաւանդ ստացւածոցն Սրբոց Աթոռոց : Ապա ու-
 « բեմն ոյք համարձակեցին եւ յանդգնեցին եւ զայսպիսի անօրէնու-
 « թիւնս գործեցին՝ ոչ վասն յանցաւորութեանն Հայրապետին, այլ
 « զի ինքեանք ի նմանէ երբեմն յանդիմանեցեալ են եւ լինին սակս
 « արտուղի գնացից իւրեանց, վասն այնորիկ զոխս ունեցին ի սիրտս
 « իւրեանց եւ զնախանձ առ ի լրացուցանելոյ՝ վատարանեալ եւ զըր-
 « պարտեալ ընկեացեն զՀայրապետն : Ամէն ասեմ, այսպիսիքն՝ թէ

« կարգաւորք իցեն եւ թէ աշխարհականք՝ նդովեալք եւ անիծեալք
 « եղիցին յԱստուծոյ եւ յամենայն սրբոց եւ ի Հայրապետական կար-
 « գէս մերմէ եւ յեպիսկոպոսաց ժողովոյս, ամէն»:

Ունէր Հայրապետ այս բարեյիշատակ առաջի աչաց զժամանակա-
 կից զանցս Տ. Ղազար կաթողիկոսի Չահկեցւոյ (1738) եւ այլոց:
 Գուշակէ՞ր արդեօք եւ զսպազայ անցս Տ. Եփրեմայ կաթողիկոսի
 (1830-31):

Իսկ Տ. Յակոբ կաթողիկոս Շամախեցի կանոնադրէ այսպէս.

« . . . Երբորդ՝ պատուէր եւ կանոն եղիցի յայսմհետէ, զի յեւ
 « վախճանման Հայրապետին մերոյ՝ յորժամ Աթոռայնոցս եւ Սպա-
 « հանցւոյն եւ այլոց արեւելահայնաց՝ Կոստանդնուպոլսեցւոյն եւ այ-
 « լոց արեւմտականաց Հայկասէր Ազգաց (°) ի Քս. հաւատացելոց
 « լուսաւորչակրօնից եւ միարնադաւանից համահաւանութեամբքն
 « ընտրեսցի տն Արքեպիսկոպոս ուր ուրեք եւ լինիցի ի Հայրապե-
 « տութիւն ամ. Հայոց եւ Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, նա պարտի
 « զչորեսին կանոնս զայսոսիկ պահել: Նախ՝ զանունն իւր ոչ յիշեցու-
 « ցանել ի յեկեղեցական աղօթսն նախ քան զօծանիլն իւր ի Հայրա-
 « պետ: Երկրորդ՝ նախ քան զօծանիլն իւր՝ ի յսկզբան թղթոցն իւ-
 « րոց զորս զրէ առ Ազգն մեր՝ այսու ոճիւ զրեսցէ. «Յիսուսի Քս. ի
 « ծառայ այս անուն Արքեպիսկոպոս եւ Կաթողիկոսացու (եւ կամ
 « կոչմամբ եւ ոչ օժմամբ կաթողիկոս) ամենայն Հայոց եւ մեծի
 « Աթոռոյն Սրբոյ էջմիածնի որ ի Վաղարշապատ մայրաքաղաքի,
 « յորմէ ժամանեալ, եւ այլն»: Երբորդ՝ յառաջ քան զօծանիլն իւր ի
 « Հայրապետ զգիրս կնքոյն իւրոյ՝ Հայրապետական անուամբ մի՛
 « զրեցուսցէ, զոր եւ կարմրադեղով ի գործ ոչ ածցէ, այլ զտիպն եւ
 « զյարմն (արմն = արմա) Միածնաէջ եւ սր. տեղոյ՝ իւրոյ ան-
 « ւանադրութեան ի տեղի կնքոյն իւրոյ ի գործ ածցէ, որով զճակատ
 « թղթոյն կնքեսցէ եւ ի վերայ յատուկ կնքոյ իւրոյ Եպիսկոպոս
 « զրել տայցէ եւ նովաւ ի լուսանցակոյս կողմն թղթոյն ի մէջ ծաղ-
 « կազիր Յիւոյն (Յիւն) կնքեսցէ սեւադեղով: Չորրորդ՝ եթէ կարելի
 « լինիցի ի Մայր Աթոռն Սր. էջմիածին դնալն՝ արտաքոյ սրբոյ Ա-
 « թոռոյն յայլ ուրեք կաթողիկոսացուն մի՛ ձեռնադրեսցի եւ մի՛ օ-
 « ծանեցի ի Հայրապետութիւն»:

Ակնարկէր բարեջան կաթողիկոսս այս յօժումն Կարապետ կա-
 թողիկոսի Ունեցւոյ (ՌՃՃԵ) եւ ի ժամանակակից անձս Ահապիմ
 Սահակայ (ՌՄԵ-ՌՄԸ), եւ այստեքիք պարտաւորեն դնել զայնոսիկ
 կանոնս:

Յաւելումք ընդ սոսա ամբողջապէս զուշագրաւ ինքնաձեռագիր

պատասխանի պատմական՝ պատրիարքի Սրբ. Սաղիմայ Տ. Չաքարիա Արքեպիսկոպոսի որ առ Մատթէոս Եպս. Պատրիարք Կ. Պոլսոյ, առթիւ խնդրոյ յիշատակութեան Տ. Ներսիսի Աշտարակեցւոյ ընտրելւոյ ի Կաթողիկոս ի 1843 թուականի, որ յամէր ի Պետերբուրգ, գուցէ ի պատճառս ծանու հիւանդութեանն:

«Վեհափառ Առաքելաշնորհ Սրբազան,

« Խնդրէք տեղեկանալ վասն յիշատակութեան տիեզերալուր
« անուան Ներսէս Սրբազանին: Արդ՝ յաթոռս մեր վաղեմի աւան-
« դութիւն կայ իբրև օրէնք եկեղեցական անփոփոխելի, զընտրեալն
« յաթոռ կաթողիկոսական մինչև ո՛չ ձեռնադրեսցեն ի Սր. Էջմիա-
« ծին օծութեամբ սրբալոյս Միւռոնի՝ ո՛չ յիշատակեսցեն զանուն
« նորա, եւ զայս վասն զգուշութեանց տարապարտ ազգային խոս-
« վութեանց կարգադրեալ են. քանզի երբեմն զանազան հակառակա-
« թոռք երեւեցան յազգի մերում, որպէս եւ յաւուրս մեր, եւ Սր.
« Աթոռս տէրունի վիճակէ Սրբ. Էջմիածնի, եւ բազում երևելի օ-
« տարազգիք հարցեալ են մեզ եւ հարցանեն վասն կաթողիկոսի
« եւ Եպիսկոպոսաց ձեռնադրութեան՝ թէ՛ որպէ՞ս է սովորութիւն
« Ձեր. եւ մեր պատասխանի տուեալ թէ՛ ձեռնադրութեամբ ըստ ա-
« ռաքելական արարողութեանց, թէ՛ հետաւորք եւ թէ՛ մերձաւորք Ե-
« պիսկոպոսուք պարտին զնալ ի Մայր Աթոռն մեր ի Սր. Էջմիածին,
« եւ ընդունել զայն շնորհ Եպիսկոպոսութեան ձեռնադրութեամբ ան-
« միջապէս ի Սրբազան Կաթողիկոսէն. եւ ամենեքեան խոստովանին
« թէ՛ առաքելական է. վասն զի Պապն Հռոմայ ոչ երբեք ձեռնադրէ
« զօք Եպիսկոպոս, այլ յանձնէ Կարդինալի միոյ կամ Եպիսկոպոսի
« տանել յեկեղեցի մի, եւ ձեռնադրել, կամ հրամանագրով տայ իշ-
« խանութիւն կարգաւորի միոյ վարել զպաշտօն Եպիսկոպոսութեան:
« Այս պատերազմ՝ զօրաւոր է այժմ ի մէջ Անդղիայուց եւ Ամերի-
« զապուոց:

« Տէր Սրբազան, յիշատակութիւն Կաթողիկոսի անուան, ո՛չ է
« հաստատել (եալ) ի վերայ ընտրութեան, ԱՅԼ Ի ՎԵՐԱՅ ՁԵՌՆԱ-
« ԴՐՈՒԹԵԱՆ: Աստուծով, ի լսել մեր զձեռնադրութիւն նորին Ամե-
« նարարձր Սրբազնութեան, պահելով անփոփոխ զառաքելական ա-
« ւանդութիւն՝ որ է նշան Առաքելական Եկեղեցւոյ, եւ մեծահանդէս
« տօնախմբութեամբ յիշատակեմք զհամբաւատենչ Անուն նորին
« Սրբազնութեան. ապա խնդրեմ սակաւիկ մի եւս երկայնամիտ լի-
« նել:

« Սինդն Սր. Էջմիածնի գրչ առ մեզ զընտրութիւն նորին Սըր-
« բազնութեան, եւ ապա խոստանայ ծանուցանել զձեռնադրութիւն

« վաղվազակի . զի նոքա գիտեն զմեր սովորութիւն հնաւանդ եւ
 « անայլելի . որպէս մեք զնոցայն . կայ այդպիսի հին աւանդութիւն
 « նաեւ ի Սր . Էջմիածին , այս է չձեռնադրել արտաքոյ Սր . Էջմիածնի
 « Եպիսկոպոս , չթողուլ շրջել Եպիսկոպոսաց , ո՛ր եւ իցէ պատճառաւ
 « ի վիճակս իւրեանց սեփական : Մեք շեմք յաչազկոտ եւ հակառա-
 « կասէր . այլ միշտ հնազանդ . եթէ այնպիսի ոք լինէաք , չորս ամ
 « ոչսպասէաք նորին գալստեան . կարող էաք բերել զԿաթողիկոսն
 « Սրբայ առ մեզ , կամ զԵպիսկոպոսոցուս առաքել անդր , սակաւ խար-
 « ճազնացութեամբ . թէեւ երբեմն առաքեալ են զձերունի ոք կամ
 « տկար , զայն եւս ծանուցեալ են ի Սր . Էջմիածին , եւ բերեալ են ի
 « Սրբազան Կաթողիկոսն զիր օրհնութեան , ուրախակցութեան եւ
 « շնորհաւորութեան :

« Ոչ ախորժիմք նորաձեւութիւն ինչ մուծանել ի կարգադրու-
 « թիւնս նախնեաց մերոց . զանուն ի լայս հանգուցեալ Եփրեմ Սրբա-
 « զան կաթողիկոսին Մինջեի ՅՀՐԱԺԱՐՈՒՄ՝ն մեք յիշեցաք . զա-
 « նուն Յովհաննէս Կաթողիկոսին ոչ յիշատակեցաք երբէք . այլ
 « հանգուցեալ կաթողիկոս մինչեւ ցայժմ . դեռ տակաւին ո՛ր գիտէ թէ
 « որպէս կարգադրի . զի ի ձեռս օտարազգեաց է . ասեն՝ թէ եւ ձեռ-
 « նադրի , բայց ոչ ի Սր . Էջմիածին , այլ ի Տփլիս նստի . գիտես՝
 « երբեմն զԱրմաշ կամէին շինել Կաթողիկոսարան , այլ Աստուած
 « խափանեաց :

« Ողջ լեր յուրախութիւն ցաւայից սրտի մերոյ :

« 1846 , յԱպրիլ , յԵրուսաղէմ ,

« յԱռաքելական Աթոռս Սրբ . Յակոբեանց »

Սրբոյ Երուսաղէմի Պատրիարք

ԶԱՔԱՐԵԱՅ ԱՐՔԵՊՍ . »

(Կարմրազեղ կնիք)

Պարզէ սոյն այս թուղթ պատուական եւ հետաքրքրական զկա-
 բեւոր ինդիքս ոչ միայն՝

1. Կաթողիկոսական յիշատակութեան , այլ եւ զբզուէ զուշա-
 դրութիւն մեր սակս ,

2. Տէրունիութեան Ս . Աթոռոյ Յակոբեանց Ս . Երուսաղէմի առ
 Սր . Էջմիածին ,

3. Յարաբերութեանց Ս . Երուսաղէմի ընդ Ս . Էջմիածնի ,

4. Եպիսոպոսական ձեռնադրութեանց,
5. Երկուց սրուշակի իմաստից գրութեանց Սինոդի Ս. Էջմիածնի,
6. Անցից Եփրեմ Կաթողիկոսի եւ յիշատակութեանն,
7. Ընդդէմ Յովհաննէս Կաթողիկոսի Կարբեցւոյ,
8. Տարածայնութեանցն սակս Ներսիսի նորընտրի,
9. Մտադրեալ Կաթողիկոսարանի Արմաշու վանուց, եւ
10. Միամտութեան Մատթէոս Եպիսկ. Պատրիարքի (ապա կաթողիկոսի) :

Յետ միոյ ամսոյ, իմա՛ յ7-ն Մայիսի, բարեյիշատակ Տ. Զարբեայ Արքեպոս. Պատրիարք կնքեաց զաշխարհային կեանս, որում յաջորդեաց Կիրակոս Արքեպոս. ընտրութեամբ ժողովոյ զուժարելոյ ի Կ. Պոլիս, ի 23 Դեկտեմբերի (1846), յաւուրս որոյ յիշատակէք անուն Ներսիսի կաթողիկոսի Աշտարակեցւոյ յետ օծմանն :

Արդ սոյն թուղթ, ակնարկեալ նաեւ ժամանակակից Սինոդի Սրբոյ Էջմիածի, առթիւ յիշատակութեան, գրէ՝ եթէ «Սինոթն Սր. « Էջմիածնի գրէ առ մեզ զընտրութիւն Նորին Սրբազնութեան (Ներսիսի), եւ ապա խոստանայ ծանուցանել զձեռնադրութիւն վաղվա- « զակի, զի նոքա գիտեն զմեր սովորութիւն հինաւանդ եւ անայլելի « (անայլայլելի)», անշուշտ առ ի յիշատակել զանուն նորընտիր կաթողիկոսին Ներսիսի : Եւ սլարտիմք յաւելուլ ի սլատիւ ժամանակակից Սինոդի ըստ խնդրոյ յիշատակութեան, զի ջանայր նա հաւատարիմ եւ նախանձախնդիր մնալ այսմ առաջի ոչ եւեթ Երուսաղէմի, այլ եւ համօրէն ամենայն եկեղեցւոյ եւ Ազգի Հայաստանեայց՝ սլաշտպանեալ զնախաւանդ սովորութիւնս եւ զկանոնս, այնպէս տեսանեմք ի հրատարակութիւնս «Արարատ» ամսագրոյ Ս. Էջմիածնի ի քաղուածոն ԷԶՄԻԱԾՆԻ ԱՐԽԻԻ անուն (տես ի 1883, Թ. Ը., Օղոստոս, յերես 350) :

Շարեմք ահաւաստիկ զիսկական յօդուածն «Արարատ»այ. :

« Ներսէս Կաթողիկոս ընտրելուց ու հաստատուելուց յետոյ, « ներքին դործոց նախարարի միջոցաւ հրաւիրուելով Ս. Պ. քուրդ, « այնտեղ հիւանդանում է, որով եւ յետաձգուում է դէպի Ս. Էջմիա- « ծին զայլուստն ու օծումն : Ինչպէս երեւում է Սինոդի 1843 թուի « Նոյեմբերի 12ին կայացրած օրագրութիւնից, ոչ միայն նորընտիր « կաթողիկոսների անուններն՝ ի հնումն նախ քան օծուելը չէ յիշ- « ուել եկեղեցում, այլ եւ նոքա եկեղեցու մէջ չեն էլ կանգնել Կա-

« Թուղիկոսին յատկացեալ զմբէթարդի մէջ *) . իսկ անդրանիկ Կոն-
 « զակը միայն Ս. Օծուսն ընդունելուց յետոյ է հրատարակուել : Թէ
 « եւ Սինօզը նորընտիր Կաթուղիկոսի անունը եկեղեցում չը յիշատա-
 « կելու տարակուսութիւնը բառնալու համար սկսել էր զբազրութիւն՝
 « Վրաստանի գլխաւոր կառավարութեան միջոցաւ ներքին գործոց
 « Մինիստրի հետ , սակայն Ներսէս նորընտիր Կաթուղիկոսը իւր հա-
 « մար 26 ի 26-ն Նոյեմբերի 1843 ամի կոնդակով յանդիմանում է Սի-
 « նօզին եւ հրամայում է սուանց իւր համաձայնութեան , ինչ եւ իցէ
 « գործի համար թողոքարկու չը լինել զէպի Տէրութեան բարձրա-
 « գոյն կառավարութիւնները : Այս կոնդակին ստորագրում է «Նպիտ-
 « կոպոսապետ Կաթուղիկոս եւ Պատրիարք ամ . Հայոց Ներսէս» : Իսկ
 « իւր առջադրութեամբ յանուն Տեղակալ Բարսեղ Արքեպիսկոպոսի
 « 21-ին Յունիւ 1844 ամի , պատուիրում է Թուղթը ստանալու առա-
 « ջին կիւրակէին՝ անձամբ պատարագել , եւ Մայր Աթոռում Կա-
 « Թուղիկոսի անունը յիշատակելուց յետոյ , հրամանագրել Սինօզից
 « որ յիշատակուի Կաթուղիկոսի անունը բոլոր եկեղեցիներում » :

Կամէաք ամբողջութեամբ ամփոփել աստէն չյիշատակեալ Օ-
 րագրութիւնս եւ զգրութիւնս Սինօզի եւ Ներսիսի , այլ սակայն բա-
 ւական լիցի մեզ քաղել ի համառօտ բովանդակութենէ իմաստիցդ ,
 զի մինչ Ներսէս ջանայր ի միոյ կողմանէ զգուշացուցաւ զՍինօզ ի
 յարարերութեանց ընդ օտարս , ի միւսմէ կողմանէ մեղանչէր չարա-
 չար ընդդէմ ազգային եւ եկեղեցական սովորութեան , եւ բանայր
 զդուռն նորոց զեղծմանց շարունակելոց ցաւուրս մեր **) : Միանգա-
 մայն խորին իմն տգիտութեամբ նուիրագործէր ուղղակի զ19-րդ
 յօղուած Պալատէնիոյ 1836 թուականի (ըստ նոյն սպագրութեան) ,
 յորում գրի . «Թագաւոր Կայսրն ՆՇԱՆԱԿԵԱԼ (°) զծայրագոյն Պա-

*) Միայն Գուկաս Կաթուղիկոս մինչեւ Տանկահայոց հաւանութիւնն ընդունիլը
 գմբէթարդի մէջ չէ կանգնել : Ըստ ազգային սովորութեան , ընտրութիւնը լրանա-
 լում պէս , ընտրեալը կաթուղիկոս է բոլոր իրաւամբ (° . . .) , կը մնայ հանդի-
 սաւոր օծումն : (Մանօթ . Փ . Վ . խմբագրի «Արարատ» ամսագրոյ) :

Երիտասարդ վեղարակիրն կաթոսի տակալին ուսման եկեղեցական պատմու-
 րեան , կանոնաց եւ եկեղ . իրաւաբանութեան : Եւ արդ ըստ դասնութեան ճարս
 հարկ էր դասել գնեթսէս վարժապետեան ի շարս կաթուղիկոսաց համաձայն ըն-
 տրութեանն որ ի 1884 թուականի , եւ առ ի°նչ մնայ ներսէս արտառոյ ի ցանկէ կամ
 ի դասակարգութեան կաթուղիկոսաց (Մանօթ . հեղինակի զրոյս) :

**) Տես մանրամասն ի «Ներսէս Ե . Աշտարակեցի» , ի Կ . Կոստանեանցէ , տպ .
 1909 , Ազեխանդրապօլ :

« տրիարքն Էջմիածնի զԿաթողիկոսն Հայկազանց՝ ամենազորմա-
 « ծարար շնորհէ ամա զառանձին հրովարտակ վասն այսր աստիճանի,
 « եւ ՀՐԱՄԱՅԷ զկնի երզնլոյն լինել հաւատարիմ առ զահն ամ.
 « Ռուսաց, կատարել զօժումն նորա ըստ վաղեմի ծիսի եւ սովորու-
 « թեան լուսաորչական (ի Ռուսս ԳՐԻԳՈՐԵԱՆԻ) եկեղեցւոյն Հայոց»:

Արդ թուի մեզ, զի առաւել պերճախօս եւ զօրաւոր լիցին կանոն
 եւ հրահանգ օժման Կաթողիկոսի՝ կանոնք եւ փաստք վերարբերեալք
 վերջին դարոց միայն, ի վկայութիւն եւ ի հաստատութիւն ինչորոյ
 յիշատակութեան ընդ դուրնաքեայ զիտողութեանց մերոց. իսկ կա-
 նոնն օժման Կաթողիկոսի, որպէս սեսաք ի հրահանգս ոչ սակաւ
 ձեռագիր Մեծ-Մաշտոցաց, ըստ որոց տպագրեցաւ ի Մայր Աթոռոջ
 յամի Տն. 1876, բացարձակաբար պատուիրէ ՅԵՏ ՕՄՄԱՆՆ սկսանել
 զյիշատակութիւն անուան նորոյ Կաթողիկոսի, միանգամայն առա-
 քել զանդրանիկ շրջաբերական կոնդակս Հայրապետական ի համօրէն
 ամենայն վիճակս Հայաստանեայց: Եւ սոյն այս պատուէր եւ կանո-
 նական հրահանգ բաւական լիցի ի կնիք բանիցս:

Բարևոք լիցի՝ որոց ուշադիր են՝ ընթեռնուել եւ զգրեալն ի Սի-
 մէոն Կաթողիկոսէ Երեւանցւոյ ի «Ջամբու»ի (տպ. ի Ս. Էջմիածին
 յամի 1873, յերեսս 58-63, Գլ. Թ.):

ԳԼՈՒԽ ԽԲ.

ՅԱՂԱԳՍ ՈՒՂԵՒՈՐԵԼՈՅ Տ. ԳԵՈՐԳ ԿԱԹՈՒՂԻՎՈՍԻ

Ի ՊՐՈՒՍԱՅԷ Ի Կ. ՊՈԼԻՍ

Փոյթ մեծ էր ռուսական կառավարութեան ի համոզել զՏ. Գե-
 որդ նորընտիր Կաթողիկոս սակս ճեպելոյ փութալ մեկնիլ ի Թուր-
 քիոյ եւ երթալ առուրբ յառաջ ի Ս. Էջմիածին՝ առարկեալ զպատ-
 ճառս հրապուրականս զիւանազիտական հնարամտութեամբք, որոց
 տկարանայր թափանցել Նորին Սրբութիւն՝ միանգամայն թուէր
 իմն՝ զի ձանձրացեալ զօրով յայտոցիկ կողմանց եւ առաւել ի սան-
 ձարձակ անձանց՝ յուխտեալ հակառակորդաց եւ ստապատիր հրա-
 տարակութեանց ազգային լրագրաց Կ. Պոլսոյ եւ այլոց, յուսար
 գտանել զգիւրութիւնս եւ զյաջողութիւնս ի Ռուսաստան եւ ի Ս.
 Էջմիածին ի պաշտպանութիւն արժանապատուութեան իւրոյ, մանա-
 ւանդ յարդիւնաւորութիւն ազգօգուտ եւ եկեղեցաշէն նպատակաց իւ-
 րոց ծայրագունից եւ ջանիցն: Մինչ զլիսաւոր եւ իսկական նպատակ
 ռուսական կառավարութեան էր խանգարել զինչդիր վերաքննութեան
 Պալատէնիոյ՝ եւ եթէ զօտար թելադրութիւնս եւ զազդեցութիւնս՝

եթէ ոչ յամէր Տ. Գէորգ Կաթուղիկոս ի Կ. Պոլիս եւ ի սահմանս Թուրքիոյ :

Ապաքէն սճապարէր ուսւ. կառասարեթիւն, նոյնպէս Տ. Գէորգ Կաթուղիկոս, զի ընդվոյթ մեկնեսցի ի Թուրքիոյ եւ հաստատեսցէ զընակութիւն իւր ի Մայր Աթոռոջ, յայսմիկ համաձայնէին միմեանց, այլ բազմօք եւ յանհունս իմն տարբերէին ի միմեանց ընդ նպատակացն եղելոց ի սպառ ներհակ եւ հակոտնեայ միմեանց : Գիտէր ուսւ. կառավարութիւն զոր առնէր, իսկ Տ. Գէորգ Կաթուղիկոս էր միամիտ եւ միայն կայր յերուսաղէմ :

Եւ ահա ըստ ակնարկութեանց ուսւ. կառավարութեան, տեսին Տեղակալ եւ Սինոզ Ս. Էջմիածնի զպատրաստութիւնս ուղեւորականս եւ Հրաւիրակաց, առանց խնդրելոյ կանխաւ՝ համաձայն պարտաւորութեանց իւրեանց՝ զանմիջական հրաման ինչ ի նորընտիր Կաթուղիկոսէ :

Յետ օժման նորաչէն Ս. Աստուածածին եկեղեցւոյ ընդ կից մատոանց կամ եկեղեցեաց, եւ զկնի կատարելոյ զհրաշափառ տօն Ս. Ծննդեան ի Պրուսա ընդ հօտի իւրում սիրելւոյ, պատրաստեցաւ Նորին Սրբութիւն Հոգեւոր Տէրն ուղւոյ լինել, հետեւեալ զարձեալ ակնարկութեանց Հիւսիսայնոց, միամիտ իմն ըմբռնմամբք :

Ջան կալաւ եւ Պատրիարքարան ի պատրաստութիւնս կարեւորս առ ի հրաւիրել զնորընտիր Կաթուղիկոս ի Կ. Պոլիս, եւ հիւրասիրել աստ ըստ արժանւոյն : Վասն որոյ բանակցեալ կանխաւ ընդ ուսական զեսպանատուն, — որ կանխեալ յառաջ քան զՕսմ. կառավարութիւն, ցուցանէր զնախանձախնդրութիւն եւ ձեւացուցանէր պատուելն զՍըրբազան Կաթուղիկոս՝ առաքելով զըեսպանական շոգենաւն ի Կէմէլէյիկ նաւահանգիստ առ ի փոխադրել զհոգեւոր Տէրն, — կարգեաց ի զիմաց Երեսփ. Ժողովոյ զՀրաւիրակս, որք են .

Յովհաննէս Եպիսկ. Կապուտիկեան, Քարողիչ Միջագեղջ (Կ. Պոլսոյ),

Ներսէս Եպիսկ. Վարժապետեան, Քարողիչ Խասգեղ, Խորէն Վրդպ. Գալֆայեան, Քարողիչ Ս. Երրորդութիւն եկեղ. Բերայի,

Գարբիէլ քհնյ. Ս. Երրորդութեան եկեղ. Ղալաթիոյ, Յովհաննէս քհնյ. Երաթիշտ Ս. Լուսաւորիչ եկեղ. Ղալաթիոյ Արիստակէս քհնյ. Քարակէօմրիւկի,

Սահակ քհնյ. Տէր Սարգոսեան Միջագեղջ,

Բժշկապետ Տոքթ. Ռաֆայէլեան Էֆէնտի,

Յակոբիկ Էֆէնտի Նեպրուզեան (ի զիմաց քեռառն իւրոյ՝

Յակոր Էֆէնտի Նորատունկեանի),
 Յարութիւն Էֆէնտի Գասպարեան, Գարու Օղլանի (Բ. Գոր-
 ծակատար Պատրիարքարանի առ Բ. Դրան) :

Արդ մեկնեցան Հրաւիրակք ի Կ. Պոլսոյ զվեցեւեկէս ժամու միջո-
 րէի Թաման անուն շողենաւու ուսական Դեսպանատան յաւուր
 հինգելշարաթու ի 12-ն Յունվարի (1867), և հասին ի Կէմլէյիկ ի մեծ
 նաւահանդիստ յառաջին պահու դիշերոյ ի 13-ն Յունվարի, ուր առ-
 նուն հանդիստ մինչև ցժամն 7 1/2 գիշերոյ, և ի նմին իսկ ժա-
 մու նստեալ ի կառս՝ եկեալ ժամանեցին զերկու և կէս ժամու առա-
 ւօտեան ի Պրուսա, մինչ գտանէր Հոգեւոր Տէրն ի Ս. Եկեղեցւոջ յա-
 ւուր տօնի Անուանակոչութեան Տն. յութեբորդ աւուր (Ութօրէից)
 Ս. Ծննդեան : Վեղարակիր և անվեղար եկեղեցականք առեալ անմի-
 ջապէս զփիլոնն, ըստ հրամանի Հոգեւոր Տեառն, ի պաշտելն մեր
 զՍ. Խորհուրդ պատարագի, հրաւիրանօք և առաջնորդութեամբ
 Պետրոս վարդապետի իջին կարգաւ և պատկառանօք ի Ս. Եկեղեցի,
 և համբուրեալ զԱջ Նորին Սրբութեան՝ կանգնեցան յերկուս դասս
 ըստ կարգադրութեան Հոգեւոր Տեառն, ըստ կարգի անձնիւր աստի-
 ճանացն :

Յորժամ երգէին դպիրք զ«Լցաք ի բարութեանց», և Վեհ.
 Հայրապետ ըստ սովորականին ընդ հրաւիրակս ի Ս. Եկեղեցւոյ,
 ընկալաւ ի ներկայութիւն իւր զհամայն Հրաւիրակս Պատրիարքարա-
 նի և Երեւփ. Ժողովոյ, որք յանձնեցին Հոգեւոր Տեառն զպաշտօ-
 նաթուղթս իւրեանց, և տեսին դպատիւս արժանաւորս : Երեւելիք
 Հայոց Պրուսայու բաժանեալ ի տունս իւրեանց հիւրասիրեցին
 զՀրաւիրակս, պատուեցին յոյժ, և ցուցին նոցա սէր բազում : Ա-
 ռաջնորդարան-վանքն ոչ բաւէր նոցա : Յաճախեցին այլեւս շնորհա-
 ւորութիւնք, այցելութիւնք, հրաւէրք և տեսակցութիւնք ընդ Կու-
 սակալի, ընդ Օսմ. աւագանւոյ և պաշտօնակալաց, ընդ հիւպատոսս,
 ընդ Առաջնորդի և երեւելաց Յունաց, ընդ Քահանայապետի և ե-
 րեւելաց Հրէից :

Ս. Հայրապետ ի 13 և ի 14 Յունվարի շրջեցաւ պաշտօնապէս
 ի մնայք բարեաւ առ կուսակալ փաշայն, առ հիւպատոս Անդղիոյ,
 Դադղիոյ, Աւստրիոյ, Իտալիոյ, Պարսիկ և Յունաց, առ Մետրապո-
 լիտ Հրէից, առ սմանս նշանաւոր անձինս օսմանցիս բարեկամս իւր
 որք փութացին եկին ի նորոյ առ ի մաղթել զճանապարհ բարի :

Ըստ խնդրանաց Ժողովրդեան կարգեաց ի տեղի իւր զԱռաջնորդ
 Պրուսայու զբարթուղիմէոս վարդապետ Չամիչեան զբարոզիչ Սամա-
 թիոյ, պատուիրեալ ցամա երիս փորձել զիրեար և յետ այնորիկ

խնդրել զեպիսկոպոսութիւն նորա, եթէ ոչ ունիցին զգոյնութիւնս զիրերաց :

Ի դիմաց զօրավար Իկնաթիէվի զեսպանի ուսաց առաջին թարգման Պ. Օնու եկեալ էր ընդ Հրաւիրակս Թաման շոգեհաւաւ, եւ կանխեալ ի Պրուսա՝ լուա զհրաման Ս. Կաթողիկոսի եւ վերադարձաւ անմիջապէս ի շոգեհաւ եւ մնայր գալստեան շոգեւոր Տեանն :

Էր 15 Յունվարի, ի կիւրակէ աւուր էջ Նորին Սրբութիւն ի Ս. Եկեղեցի, ուր, որպէս եւ ի Թուրքիա համայն սովորութիւն է կատարել ի միասին զոյգ ընդ առաւօտեան ժամերգութիւն զս. պատարագ, լըցեալ էր ժողովուրդ բազում եւ սրտաշարժ երգեցողութիւնք զպրաց ազգէին եւ շարժէին զամենեւեան ի տիրութիւն եւ յարտասուս :

Սօսեցաւ Նորին Սրբութիւն զքարոզ համառօտ՝ առեալ ի բնարան «Եղիցին կամք Տեանն օրհնեալ», զորպիսի բնարան արտասանեաց եթէ յերթալն ի պատրիարքութիւն եւ եթէ ի վերադառնալն, որպէս եւ ի դալն յառաջնորդութեան Պրուսայու, օրհնեաց զհրամանն Աստուածային, որ կոչեաց զինքն ի Կաթողիկոսութիւն ամենայն Հայոց՝ ի պաշտօն ծանր եւ վսեմագոյն, ետ զողջոյն իւր հրաժեշտի, պատուիրեաց ամենեցուն առհասարակ ճանաչել եւ վճարել զանձնիւր պարտս, սիրել զԱստուած, սիրել զԱզգ եւ զԵկեղեցի, հետեւել անխոնջ ի պայծառութիւն տանն Աստուծոյ եւ ի յառաջագէմ արգիւնաւորութիւն Գէորգեան վարժարանի, օրհնեաց եւ խրատակեաց զհօտ իւր սիրելի յորդառատ արտասուօք եւ սրտաբուղի մաղթանօք, ոչ զազարէր ժողովուրդ ի յորդաբուղի արտասուաց, զողցես խոնեալ էին ի տան սգոյ : Արար զմաղթանս նաեւ վասն Օսմանեան պետութեան եւ վեհ. Սուլթան Ազիզ կայսեր :

Յետ արձակման Ս. Եկեղեցւոյ, յելանելն Նորին Սրբութեան յԱռաջնորդարան, շրջապատեաց ժողովուրդ եւ կարօտալիբ համբուրէր զԱջն Հայրապետական հանդերձ արտասուօք եւ աղեկէզ հառաչանօք :

Համախմբեալ էին յԱռաջնորդարան – վանս ազգային իշխանք, քաղաքական պաշտօնեայք եւ անձինք նշանաւորք, հիւպատոսք, դըրուխք պրուսայարնակ ազգաց, զորս ողջունեաց Հոգեւոր Տէրն եւ պատուասիրեաց յարգանօք :

Եհաս վերջին ժամն բաժանման ի Պրուսայէ, եւ էր ժամ հինգ եւ կէս ի միջօրէի :

Քահանայք զդեստաւորեալ եւ թափօր կազմեալ յառաջոյ վանուց-Առաջնորդարանի, զպիրք եւ երգեցիկ մանկուծք, որպէս եւ համայն զպրօցականք կանգնեալ էին ի հանդիպակաց երկուս կարգս սկսեալ

ի փողոցային մեծ դրանէ Առաջնորդարանի մինչեւ ցլուռն Գէորգեան վարժարանի ի մեծ պողոտայի, դռքես փակեալ էին անցք ճանապարհի, այնչափ էր բազմութիւն երկսեռ ժողովրդեան, թողցուք զտունս, զպատուանս, զբարձրաբար տեղիս եւ զչընկայս եկեղեցւոյ եւ Առաջնորդարանի :

Եւ Հոգեւոր Տէրն յԱռաջնորդարանի, եւ առաջի դրանն օրհնեալ եւ խաչակնքեալ զժողովուրդ՝ ասաց զՊաեպանիչ եւ զՀայր մեր : Ապա որոտաձայն հնչեցին երգք մանկանց եւ դարաց . նստաւ Նորին Սրբութիւն յերկար ամեհի, զոր առաքեալ էր կուսակալ փաշայն ի պատիւ Նորին Սրբութեան, նստան ի մեծ պողոտայի ի ձիւ Հրաւիրակք, հիւպատոսք, ազգային երեւելիք եւ պաշտօնեայք, նշանաւոր անձինք, քաղաքականք, ոմն ներկայացուցիչ ի դիմաց կուսակալի, եւ սկսաւ թափօրն յառաջանալ ի ձայն երգոց մանկանց տակաւ առ տակաւ՝ անցեալ մեծաւ զժուարութեամբ ի միջոյ խուռներամ բազմութեան, յորում կրկին եւ ոստիկանք զմեծամեծ զժուարութիւնս :

Եհաս թափօրն ի գլուխ Սէթ Պաշի կամըջոյ, ուր օրհնեաց Հոգեւոր Տէր զարտասուալից մանկունս, զգլխիս եւ զքահանայս, հրամայեաց դադարել այլեւս եւ ինքն շարունակեաց զուղին ընդ ուղեկցացն յիշելեաց՝ իմա՛ ձիւաւորեալ հիւպատոսաց, քաղաքական պաշտօնէից, նշանաւոր անձանց եւ ներկայացուցչաց այլոց ազգաց, յառաջընթաց ոստիկան ձիւաւորաց յատկապէս առաքելոց ի կուսակալ փաշայն : Թողումք յիշել զմեծամբոխ ուղեկցութիւն հեծեալ եւ հետիոտ ժողովրդեան :

Հասեալ ի Թաթարլար, ի հիւսիսային սահման ինչ շինութեանց քաղաքի, հանդերձ շնորհակալութեամբ օրհնեաց զժողովուրդ, զհիւպատոսս, զքաղաքական ուղեկիցս, զներկայացուցիչս եւ արձակեաց զնոսս վերադառնալ յիւրաքանչիւր տեղիս, յետ այնորիկ նստեալ ինքն ի կառս, որպէս եւ Հրաւիրակք եւ այլք ուղեկիցք բազումք նստեալ էին ի կառս, շարունակեաց զուղի իւր . ուղեկցէր ոստիկանապետ պէյն եւ ներկայացուցիչ կուսակալի մինչեւ ցԿէմէլէիկ :

Էր ժամ 12 ընդ երէկս ժամանեաց ի Կէմէլէիկ, ուր դիմաւորեաց Պ. Օնու զՀոգեւոր Տէրն, որ ելեալ ի կառաց՝ զնաց ուղղակի ի ռուսական շոգենաւ Թաւառն, որ կացեալ ի բացեայ՝ դրօշակազարդեալ էր եւ ռուսազգի նաւաստիք կանգնեալ էին ի բարեւ : (Եւ զի էր ծով (բաւազան) մահմետականաց, ի մտանելն ի շոգենաւ՝ զուգադիպեցաւ եւ որոտաց թնդանօթն) : Հանդիստ էառ Նորին Սրբութիւն իբրեւ ժամ մի եւ ապա նստաւ ի սեղան ընդ համայն ուղեկիցսն, ընդ որս եւ Պ. Օնու, եւ վայելեաց զուսական ընթրիս : (Անդէն յընթրեան անմի-

Չապէս ուսաք մեք ի ոռու ծառայից զուսական բառս ինչ՝ խլէս (հաց), վատա (ջուր), ապէթ (կերակուր), վինօ (գինի), վօթքա (օղի - ցքի), տալայ (կամիմ), նիէթ (ոչ), խարաչօ (բարի, լաւ), պլաղատարիեիւ (չնորհակալ եմ) եւ զայլս այսպիսիս) :

Յետ դիչերոյ, ի յաջորդ առուր ի 16 Յունվարի ընդ արշալոյսն զմի ժամաւ շարժեցաւ շոգենաւն եւ չափեաց զուղին: Զվեց ժամու միջօրէի եհաս ի Կ. Պոլիս եւ խարոխեաց առաջի Գապաթաշի: Եւ ահա եկեալ մտին ի շոգենաւ եպիսկոպոսունք, վարդապետք եւ զըլ-խաւոր ազգայինք, ներկայացուցիչք Ազգ. Պատրիարքարանի եւ Թաղ-խորհրդոյ Ս. Երրորդ. Եկեղեցւոյ Բերայի, եւ մի ոմն ի դիմաց ուսական դեսպանի, եւ ոչ ոք ի դիմաց Օսմ. պետութեան: Եւ ներկայացան չոգեւոր Տեառն խորին յարգանօք:

Զկնի մէկ եւ կէս ժամեայ հանդատութեան եւ տեսակցութեանց ի շոգենաւի, ել չոգեւոր Տէրն մակուկաւ ի նաւահանգիստ Գապաթաշի ընդ համայն ուղեկիցան եւ ընդ նորեկս, օրհնեաց զբազմութիւն Հայոց կուտակելոց, ընդ որոց լցեալ էին եւ օտարազգի ոչ սակաւք, նստաւ ի փառազարդ յատուկ կառս եւ սկսաւ յառաջանալ յամբընթաց գնացիւք, խումբ ոստիկնաց առաքելոց ի կառավարութենէ երթալոյ յառաջեալ: Գծուարութիւն մեծ էր ի բանալ զուղի ի բազմութենէ Հայոց եւ հետաքրքիր անձանց օտարազգեան, միանգամայն երթեւեկից:

Հասեալ առաջի պողոտական մեծի դրան Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Հայոց Բերայի (որ նախ քան զվերջին հրկիզութիւն) ի Թօղբու - եօլ, ուր կազմ եւ պատրաստ սպասէր մեծահանդէս թափօր եկեղեցական հանդերձ սարօքն, սկսան զպիւրք նուազել ի ձայն քաղցր զնորահիւս երգս (Բարեաւ երբ ի մէջ), եւ վեհ. Հայրապետ շուրջառեալ եւ կանգնեալ ընդ ամպհովանեաւ ի գլուխ հանդիսի, եմուս ի Ս. Եկեղեցի երզովք շարականաց (Ուրախ լեր Ս. Եկեղեցի եւ Հրաշափառ), եւ ստիպեալ ի բազմութենէ ժողովրդեան՝ ել ի բեմ, ուր յետ սաղմոսելոյ (Ուրախ եղէ ես) ըստ սովորական կարգին, դարձաւ առ ժողովուրդ, համառօտ իմն բանիւք օրհնեաց զԱզգ եւ զԵկեղեցի Հայաստանեայց, զհանդիսականս, զերեսփոխանս եւ զհամայն պաշտօնեայս ազգայինս, յաւել զՊաեպաւնիչ եւ զՀայր մեր:

Ելեալ ի Ս. Եկեղեցւոյ եւ ըստ խնդրանաց եւ զհրաւիրանաց Թաղ-խորհրդոյ՝ եկն ի խորհրդարանն թաղական, զոր կահաւորեալ պատրաստեալ էին յատկապէս, հանգիստ էսո ընդ ազգայինս:

Անդ ներկայացան Նորին Սրբութեան խումբ ազգային իմբադը-

րաց եւ մատուցին մեծարանօք յեա ընթեռնլոյ ի ձայն բարձր զուղերձս զայս .

« Վեհափառ Հայրապետ .

« Կ . Պուսոյ Ազգային Երեսփոխանական Ժողովը եւ ի Ս . Էջմիա-
« ծին գումարեալ Համազգային ընտրողական Ժողովը զՁեր սրբազ-
« նութիւն կոչելով ի Միածնէջ Գահ Սրբոյ Հօրն մերոյ Լուսաւորչի ,
« Պրուսայու ձեր սիրելի Հօտին հովուութենէն կը բարձրացնէ յընդ-
« հանրական հովուութիւն բովանդակ Հայոց Ազգին , ուստի այսօր
« մայրաքաղաքիս Ժողովուրդը , դասք եկեղեցականաց եւ աշխարհա-
« կանաց եկան դիմաւորելու զՁեզ , Վեհափառ Տէր , եւ Ձեր անձին եւ
« ընտրութեան վրայ խնդակցութիւն յայտնելու , Ձեր բարձր Սրբազ-
« նութեան բարօրութիւն եւ բարեյաջողութիւն գործոց մաղթելու :

« Գիտէք , Վեհափառ Տէր , ո՛րչափ մեծ եւ բարձր է այդ կոչու-
« մը եւ աստիճանը , առ որ Հոգին Սուրբ առաջնորդեց զՁեզ , նոյնչափ
« մեծ եւ ամենամեծ է Ձեր պարտքը , մանաւանդ այս ժամանակիս
« մէջ , յորում Հայոց Ազգը ընդ ոլորտս երկրի , իբրեւ ի միակ յոյս
« եւ ապաւէն առ Ձեզ դարձուցած է իւր հայեցուածքը եւ Ձեր փոր-
« ձառութենէն ու կատարելութեան ձիրքերէն կակնկալէ :

« Նախ՝ պահպանութիւն եւ ամբողջութիւն Հայաստանեայց ուղ-
« դափառ Եկեղեցւոյ , անխախտ եւ ամրապինդ պահելով Քրիստոսա-
« դիր կարգ ու կանոն Առաքելական եւ Լուսաւորչական դաւանու-
« թիւնք եւ արարողութիւնք , որք ի նախնեաց մերոյ ի սրբոց Հարց
« եւ ի քաջարի նահատակաց մեզի մնացած անգին եւ անգիւտ սրտա-
« հատոր նշխարներ են բազմաթիւ հայերու արիւնովը շաղախուած
« եւ մեզի հասած , որք մեր ազգութեան միմիայն կնիքը կը կրեն , եւ
« անոնցմով ենք այսօր Հայ Ազգ մը աշխարհի առջեւ , եւ ջնջելով ու
« վերցնելով այն ամէն նոր ու Եկեղեցւոյ եւ Ազգի վնասակար կար-
« դաղբութիւնները , որոնք տգէտ եւ շահախնդիր ու թոյլ անձերու
« ձեռօք ներմուծուած ու զօրութիւն գտած են :

« Երկրորդ՝ երաշխաւորեալ պահպանութիւն Ազգիս , ազգային եւ
« անհատական իրաւանց , ապահովութիւն իւրաքանչիւր բարեխնամ
« կառավարութեանց ներքեւ , որոնց հպատակք կը գտնուին Հայ Ազգի
« զաւակները . վասնզի Ձեր վեհափառութիւնը ոչ միայն Ռուսաբնակ ,
« այլեւ Թուրքաբնակ , այլեւ Հնդկաբնակ եւ Պարսկաբնակ եւ Աւըս-
« տրաբնակ Ազգայնոց վրայ ընդհանրական Տեսուչ էք ի հոգւոյն ,
« հովիւ էք Ազգէն ընտրուած , եւ անոր հայրենաւանդ Ս . կրօնին , Ե-
« կեղեցւոյն , աւանդութեանց , սովորութեանց , ազգային եւ անհա-
« տական ամեն իրաւանց պաշտպանը առաջի Ռուսիոյ ի Ռուսիա ,

« առաջի Թուրքիոյ ի Թուրքիա, առաջի Անգղիոյ ի Հնդկաստան, ա-
 « ռաջի պարսից ի Պարսկաստան, առաջի Աւստրիոյ ի յԱւստրիա. ուս-
 « տի եւ այս ամեն կառավարութեանց հետ իբրև ընդհանրական գլուխ
 « եւ ներկայացուցիչ Ազգին՝ կարող էք բանակցել, եւ Ձեր Հօտին ու
 « Ձեր Ժողովրդեան համար բարեխօսել, միջնորդել եւ բարոյական,
 « նիւթական եւ մտաւորական զարգացման հոգ տանել:

« Երրորդ՝ ըստ կարգի, բայց ըստ պիտոյից առաջին համարե-
 « լի, ազգային դատարարակութեան ծաւալումը, այն է սրտով, մըտ-
 « քով եւ հոգով Հայեր պատրաստել. Հայաստանեայց Ս. Եկեղեցին
 « եւ Հայոց Ազգը մեծ կարօտութիւն ունի քաջարթուն, հոգելից, բա-
 « նիրուն, վերջապէս արժանաւոր եկեղեցականներու եւ աշխարհա-
 « կաններու: Արժանաւոր եկեղեցականաց պիտոյքը Դուք ինքնին
 « փորձիւ զգացած էք, Վեհափառ Տէր, հովիւ պէտք է ոչ անձնդիւր,
 « գլուխ՝ ոչ ինքնասէր, այլ Ժողովրդասէր, եկեղեցասէր, ազգասէր:
 « Այս պիտոյքը մեծ ու զգալի եղած է, մանաւանդ ներկայ ժամանա-
 « կիս մէջ, յորում անարժան եկեղեցականաց երեսէն Եկեղեցին նշա-
 « ւակ, Ազգը յուսաբեկ, եւ մանաւանդ թեմեր ալ խայտառակ եղած
 « են: Ձեզնք վանքերէն մեծ մասին եւ ամենէն հոչակաւորներուն ող-
 « բալի վիճակը. Թողունք Առաջնորդաց մեծ մասին անպիտանութիւ-
 « նը, այլ անպատմելի խայտառակութիւնք, քստմնելի սրբապղծու-
 « թիւնք եւ անլուր եւ անխիղճ գայթակղութիւնք զործուեցան մօտ
 « ատեններս երկու մասնաւոր կաթուղիկոսութեանց թեմերուն մէջ
 « յԱղթամար եւ ի Սիս երկու անարժան եւ իսպառ անարժան եկեղե-
 « ցականաց միջոցաւ: Ազգը քստմնելով տեսաւ անոնց անվայել գոր-
 « ծը, եւ վիճակային Ժողովով այս ինքնընտիր, ինքնահրաւէր եւ ինք-
 « նակոչ անձանց անվաւերութիւնը եւ անարժանութիւնը վճռուեցաւ:
 « Ձեր Վեհափառութիւնը՝ այսպիսի սրբապղծութեանց եւ Հայաս-
 « տանեայց Եկեղեցւոյ եւ Հայ Ազգի կործանումն եւ ազէտ սպառնա-
 « ցող ոճրագործութեանց վրայ անշուշտ արժանաւոր սրտմտու-
 « թեամբ կը նայի, եւ Տիրոջը Այգին այնպիսի ազուէաներէ զերծ պա-
 « հելու փոյթը պիտի ցուցնէ:

« Այս երեք գլխաւոր պիտոյից մէջ, որոնք կակնկալէ Ազգը
 « այսօր Ձեր Վեհափառութենէն, կը պարունակեն եւ այլ ամենայն
 « պիտոյք, զորոնք հարկ չենք համարեր մանրամասնել հոս. Ձեր Վե-
 « հափառութիւնը այդ ամենը գիտէ ու կը զգայ, եւ արդէն Ազգը մեծ
 « յոյսեր կը սնուցանէ իր սրտին մէջ, եւ վստահութեամբ կընայ ը-
 « սել թէ իր ընտրութեան մէջ վրիպած չէ. Դուք ալ այս արժանա-
 « ւորութիւնը ոչ միայն խօսքով, այլեւ զործքով պիտի ցուցնէք՝

« Զեր փառքը Հայաստանեայց Եկեղեցւոյ պահպանութեան եւ ամ-
 « բողջութեան մէջ փնտռելով, Զեր պատիւը Զեր հարազատ զաւակաց
 « կենդանի երախտագիտութեանը մէջ, եւ Զեր յիշատակը Զեզի ար-
 « ժանաւոր Յաջորդացը մէջ: Դուք այսօր կը դահակալէք այս Աթո-
 « ուր, որ Զեզմէ առաջ բազմաթիւ կաթողիկոսներ ժառանգած են,
 « բայց անոնցմէ մէկ մասը միայն իրենց անուանը հետ իրենց բարի,
 « առաքինի, սիրելի եւ պաշտելի յիշատակը թողուցած է, մնացեալ-
 « ները միայն Անուանին: Անշուշտ, դուք ի շարս կաթողիկոսաց՝ մի-
 « այն անուն թողելու չէք, այլ արժանաւորաց օրինակին պիտի հե-
 « տելիք, եւ մանաւանդ Զեր նախորդին նախորդ Աշտարակեցի Հո-
 « գելոյն Ներսէս *) կաթողիկոսին, այն անմահ յիշատակաց արժա-
 « նի անձին, որուն համար Ազգը յաւիտեան երախտագէտ պիտի մը-
 « նայ: Կը տեսնէք, Վեհափառ Տէր, թէ ժողովուրդը՝ Զեր սիրելի զա-
 « ւակները ի՛նչ սիրալիք եւ որդիական դուռնօք զԶեզ շուրջ պատած
 « են. այո՛, ոչ միայն դգուելի, այլեւ պաշտելի պիտի ըլլաք, երբ ի-
 « րենց ակնկալութեանց կատարումը տեսնեն, իսկ եթէ զրկուին այս
 « յոյսէն, ո՛հ, եւ ոչ մէկը պիտի դռնէք Զեր շուրջը: Քիչ մը խիստ
 « են այս խօսքերը, այո՛, բայց Ազգին այսօրուայ աղէտալի եւ վը-
 « տանգաւոր վիճակին մէջ ի դիմաց ժողովրդեան այս ազդարարու-
 « թիւնները պէտք է որ հոս ըլլան: Ժողովուրդը արթնցած է, կը
 « զզայ, կիմանայ, կը յուզի, ասանկ տեսարաններու վրայ չլամտու-
 « թեամբ չնայիր, հոգեւոր եւ կենսական հանդէսներու ու տեսարան-
 « ներու կը բաղձայ, Դուք այս փառքին ու պատուոյն մէջ ոչ թէ հան-
 « դատութիւն, խաղաղութիւն եւ երջանկութիւն գտնելու կուզաք,
 « այլ զիշեր ցերեկ անքուն տքնութեան, Ազգային Եկեղեցւոյ, Հայ-
 « բապետական կանոնաց, ազգային յառաջդիմութեան եւ ազգային
 « ընդհանրական եւ անհատական իրաւանց պաշտպանութեան համար
 « մինչեւ իսկ նահատակութեան: Վտանդը մեծ է, հարկաւ, եւ Զեր
 « Վեհափառութեան աշխատութիւնն ալ մեծ պիտի ըլլայ, բայց աւե-
 « լի փառք ու պարծանք պիտի դայ Զեր անուան եւ յիշատակին, զի
 « այսպիսի ալիկոծեալ եւ փոթորկալից ժամանակի մէջ նաւապետու-
 « թեան կոչուեցաք: Ազգը պիտի չսխալի այս իր ընտրութեան մէջ:
 « Զեր Վեհափառութեան փորձառութիւնը եւ ազդու բնաւորութիւնը
 « կը խոստանայ մեզ ամէն բարեյաջողութիւն: Կը ձայնակցինք ու-
 « բեմն այս խուռն բազմութեան՝ Զեր սիրելի ժողովրդեան հետ կո-
 « չելով՝ կեցցես Վեհափառ Տէր:

*) Ակնարկ միամիտ, արդիւնք տգիտութեան, որպիսիք երեւին եւ յայլ բառս ինքնարուս ազգային խմբագրաց:

« Մնամք Վեհափառ Հայրապետիդ ամենախոնարհ որդիք

Ազգային խմբագիրք ի Կ. Պոլիս .

Կարապետ Չուխաճեան (Ծիածան)

Կ. Ս. Իւթիւճեան (Մասիս)

Մարկոս Աղաբէգեան (Ծիլն Աւարայրի)

Ս. Փափազեան (Ժամանակ)

Հ. Ս. Ալաճաճեան (Փռւնջ)

Կարապետ Յ. Փանոսեան (Մանգուվէ)

« 16 Յունվարի, 1867. »

Համառօտագոյն եղեւ պատասխանի Հոգեւոր Տիառն, եւ առանց հետեւելոյ տեսական եւ վերացական ուղղութեանց՝ չնորհակալ զեւ եւ օրհնեաց զլրագրապետս, կարգաց զօգնութիւն ամենակալին Աստուծոյ առաջնորդել ինքեան եւ Հայոց յօգուտ եւ ի պէտս Եկեղեցւոյ եւ Ազգի Հայաստանեայց :

Յետ երկփամեայ միջոցի՝ տեսեալ եւ յարգեալ զհիւրասիրութիւն թագ. խորհրդոյ, եւ Նորին Սրբութիւն ի խորհրդարանէ եւ Համաձայն յատուկ փափաքանաց, ինդրանաց եւ հրաւիրանաց եկն ի հոյակապ բնակարան Մեծ Յակոբայ էֆ. Նորատունկեանի ի Թօղբու - եօլ, մերձ ի Թագսիմ, եւ բնակեցաւ անդ մինչեւ մեկնեցաւ աստի ի Կ. Պոլսոյ :

Անդ պարգեալ ի նորոյ Հրաւիրակաց, եկեղեցականաց եւ աշխարհականաց, ազգային երեսելեաց, անձանց նշանաւորաց եւ այլոց եւ այլոց զմայթանս, զիղձս եւ զմեծարանս իւրեանց, Համբուրեալ զՀովուապետական Աջ Հոգեւոր Տիառն, առին զօրհնութիւն եւ մեկնեցան յիւրաքանչիւր բնակարանս :

ԳԼՈՒԽ ԽԳ.

ՅԱՂԱԳՍ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆՅ, ՏԵՍԱԿՑՈՒԹԵԱՆՅ,

ՎԵՂԱՐԱԽԱԱԶԻ ԵՒ ՈՄԱՆՑ ԱՆՑԻՑ

Հանդիստ առեալ Հոգեւոր Տիառն սակաւուք, ի սմին իսկ աւուր (16, Բշ.) մերձ ի մուտս արեւու ել եւ գնաց յայցելութիւն ոռուսական դեսպան Նիկոլայ Իկնաթիէվ զօրաւարի ի դեսպանատան ի Թօղբու - եօլ : Եւ այսու առթիւ փոխանակեաց նմա զչնորհակալութիւն սակս թաման չոգենաւու եւ հիւրասիրութեանցն որ ի նմին շողենաւի, եւ վասն Պ. Օնուլի :

Ի յաջորդ աւուր ի 17-ն Յունիարի եկն Տ. Պօղոս Արքեպս. Թագ-
թագեան Ս. Պատրիարք յառաջին այցելութիւն եւ ի շնորհաւորու-
թիւն առ Հոգեւոր Տէր եւ հոես զընդունելութիւն եւ զհիւրասիրու-
թիւն արժանաւոր եւ սիրալիր խորին մեծարանօք: Կամք Տեառն տնօ-
րինեալ էին այսպէս, զի զոր իրրեւ զփոքրաւոր իւր ունէր երբեմն Պօ-
ղոս Եպիսկոպոս ի պատրիարքական փոխանորդութիւն իւրում ի պա-
տրիարքարանի արգ ներկայանար սմա իրրեւ պետի եւ Հայրապետի
Աղգի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց:

Յայսմ աւուր երէկս զտասներորդ ժամու, որպէս տնօրինեալ էր
կանխաւ, եկն պ. զօրավար Իկնաթիէլ զեսպան ի փոխադարձ այցել-
ութիւն առ Վեհ. Հայրապետ, որում եւ մատոյց հանդերձ շնորհաւո-
րութեամբք զվեղարախաչ աղամանդեայ ընդ կայսերական հրովար-
տակի ի դիմաց Օգոստ. Աղեքսնդր Բ. կայսեր Ռուսաց: Հրովարտակն
ունէր օրինակ զայս.

« Նորին Ս. Օծութիւն

« Ծայրադոյն Պատրիարք Ս. Էջմիածնի եւ Կաթողիկոս Ամենայն

« Հայոց Գէորգ:

« Երկար ժամանակեայ վաստակ ի հոգեւոր ասպարէզի դրաւեաց
« առ Ս. Օծութիւն Ձեր առհասարակ զվստահութիւն ժողովրդեան
« Հայոց, որ ահա ընտրեալ բարձրացուցանէ զՁեզ ի պատրիարքական
« Աթոռ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի Հայաստանեայց:

« Ի հովուական զործօն ջանս ձերոց ճգանց նկատեալ մեր գրա-
« ւական իմն ի բարօրութիւն Եկեղեցւոյն Հայոց, որ այնչափ սիրելի
« է մերում սրտի, որպէս եւ առ Հոգեւորն յառաջիմութիւն որդւոցն
« նորա, ընծայեմք Ձեզ սիրով մեծաւ ի զարդ վեղարի օծութեանդ
« զխաչ աղամանդակուս, զզրօշ ասեմ նուիրական զհաւատոցն Քրիս-
« տոսի, որ վառեալ զօրացուցանէ զհովիւն եւ զհօտ միանգամայն:

« Յանձն արարեալ զիս ազօթից Ձերոց, մնամ Ձեզ բարեացակամ

Աղեքսնդր.

« Ի 23-ն Նոյեմբեր 1866

« Ի Ս. Պետերսբուրկ.»

Սիրալիր եղեւ այցելութիւնս այս եւ տեսակցութիւն, որ եւ տեւ-
եաց իրր երկու ժամ: Քաղաքավարական էին խօսակցութիւնքն խառն
ընդ փոխադարձ հարցուփորձից սակս ուղեւորութեան եւ այլոց:

Այսու առթիւ հաճեցաւ Պ. Իկնաթիէլ խարդաւանել ըստ այսմ ե-
զանակին — պատրուակեալ բարձրացուցանել զպատիւ եւ զզիրս կա-
թողիկոսական, առաջարկեաց Նորին Սրբութեան ոչ կանխել երթալ
յայցելութիւնս եւրոպական զեսպանաց ըստ եւրոպական սովորու-

Թեան արեւելեաց՝ ղեսպանք նախ այցելեցեն ինքեան, եւ ապա Հոգեւոր Տէր փոխանակիցէ նոցա զայցելութիւնս: Միանգամայն ձեւացուցանէ զվստահութիւն, զի ըստ ազգարարութեան իւրում՝ ղեսպանքն պարսից եւ Աթենայի կանխեսցեն զալ յայցելութիւնս ինքեան կաթողիկոսի եւ ղեսպանքն եւրոպականք անշուշտ հետեւեսցեն նոցա:

Մոռանա՞յր արդեօք պ. Իկնաթիէյլ զառաջին այցելութիւն Հոգեւոր Տեառն առ ինքն, եւ կամ թէ խրատէ՞ր զսա, թողցուք ի բաց զայս: Միամտութեամբ իմն վստահացեալ Հոգեւոր Տեառն հրապուրիչ բանից ղեսպանի, առանց թափանցելոյ դիւանագիտական խորամանկութեանց եւ խարդաւանութեանց նորա՝ խոստացաւ հետեւել խորհրդոցն, միանգամայն զգուշանայր ի զժտութեանց յառաջին քայլափոխան:

Խօսեցաւ պ. ղեսպան եւ զայլ բանս նենգամտութեամբ իմն ըստ ինդրոյ Պալաթէնիոյ, եւ սակս ուղղութեանց Հայոց Կ. Պոլսոյ եւ Պատրիարքարանի Գում Գարույի, յորդորէր զՏէր Գէորգ կաթողիկոս փութացուցանել զշու իւր աստի ի Կ. Պոլսոյ, եւ այսպէս ազատեալ ի սանձարձակ հոսանաց եւ ի յանդռնութեանց երիտասարդաց մայրաքաղաքի՝ հանդէս ի Ս. Էջմիածին եւ վարել անդ լրջամտութեամբ եւ ազատութեամբ (°) զԵջմանութիւն Հայրապետական եւ թէ զինդիր վերաքննութեան Պալաթէնիոյ: Յաճախ շեշտէր զայսորիկ բանս իւր զողցես ձեւացուցեալ պաշտպանել զազատութիւն եւ զանկախութիւն կաթողիկոսական:

Վերադարձաւ Պ. Իկնաթիէյլ զօրավար ի ղեսպանատուն:

Ընդ սովորական գրաղմանց եւ պատրաստութեանց՝ Վեհ. Հայրապետ սկսաւ շարունակել զայցելութիւնս իւր առ կարեւորագոյն անձինս, առ Օսմ. նախարարս եւ առ այլս եւ նախ ի 18րդ աւուր ամսոյ ի Չորեքշաբաթու վճարեաց զփոխադարձ այցելութիւն առ Տ. Պօղոս Արքեպս. պատրիարք ի պատրիարքարանի ի Գում - Գարու, եւ ապա զնաց յայցելութիւն առ բարեկամս իւր վաղածանօթ, Բիւշտի Մէհէմէտ փաշայ մեծ - եպարքոս (սատրապամ), Մէհէմէտ փաշայ Կիպրոսցի (Գրպրըզլը) նախագահ պետական խորհրդոյ (շուրաքի տէվլէթ), եւ Ասլի փաշայ նախարար արտաքին գործոց (խարիֆիէ նազըրը), որուն յաջորդեաց յետ աւուրս ինչ Ֆուատ փաշայ, եւ Հոգեւոր Տէր զնաց եւ առ նա յայցելութիւն եւ ի շնորհաւորութիւն յԹ-ն Փետրվարի:

Տեսեալ Նորին Սրբութեան եթէ անցին աւուրք առաւել քան զհընգետասան եւ ոչ ոք ի ղեսպանաց այցելեաց ինքեան, անկաւ ի կատ-

կածանս եւ բանիւ բերանոյ պ. Գրիգորի Մարկոսեան, պաշտօնէի պարսկական ղեսպանութեան եհարց զկարծիս Միրզա Հիւսէյն Խան ղեսպանի՝ բարեկամի իւրոյ սիրելւոյ, որ եւ անկեղծութեամբ իմն պատասխանեալ հաղորդեալ է, զի պ- Իկնաթիէզ պատրեալ է զինքն (զկաթուղիկոս) եւ թէ՛ ոչ ոք ի ղեսպանաց այցելեսցէ մինչեւ կանխեսցէ ինքն Վեհ. Հայրապետ տալ զառաջին այցելութիւնս ղեսպանաց համաձայն եւրոպական սովորութեան, եւ այնուհետեւ վճարեսցեն եւ նոքա, որպէս եւ ինքն, զփոխադարձն:

Շատ իսկ համարեալ զայսչափ բանս պարսկական ղեսպանի եւ զսպանի իւր առաւել քան գաւուրս քսան, ինքնին այցելեաց առ Լորդ Լայնս ղեսպան Անգլիոյ ի 10-ն Փետրվարի յաւուր ուրբաթու, որ եւ վճարեաց զփոխադարձն ի 13-ն ամսոյն:

Ի 11-ն Փետրվարի դնաց յայցելութիւն առ պ. Պուրէ ղեսպան Գաղղիոյ, որ վճարեաց զփոխադարձն ի 22-ն, թէպէտ երիցս կամեցեալ էր զալ եւ բացակայ գտեալ զՀոգեւոր Տէրն:

Ի 14-ն յաւուր Երեքշաբաթու առ Տօն Պրօքէշ ղեսպան Աւստրիոյ, որ փոխանակեաց ի 18-ն եւ յաւէտ կարեկցէր Նորին Սրբութեան՝ սակս երթալոյն ի Ռուսիա յերկիրն վայրենի, պատմեալ զինչ ինչ անցս, զխարդախ ուղղութիւնս եւ զչարամիտ ընթացս եւ զարդիւնս ուսական կառախարութեան:

Ի 16-ն դնաց յայցելութիւն Միրզա Հիւսէյն Խան ղեսպանի պարսից, որ փոխանակեաց ի 20-ն: Այրն այն վարեալ էր զհիւպատոսու-թիւն ի Թիֆլիզ եւ հետադօտեալ քաջ զոռոսս, պախարակեալ գնոսս, ղերկիրն, զքաղաքականութիւն եւ զկեղծ բարեկամութիւնսն, եւ զզուշացոյց զՎեհ. Հայրապետ, թէպէտ տարածամ եւ ի նանիր:

Ի 15-ն Մարտի առ ղեսպան Իտալիոյ, որ եւ փախանակեաց ի յաջորդ աւուր:

Առիթ զիւանագիտական եւ պատմական հարկեցոյց զմեզ արձանագրել այսչափ ինչ զայցելութեանց ոմանց եւ զփոխադարձիցն, մինչ ոչ սակաւ էին այցելութիւնք, տեսակցութիւնք, խնջոյք, ընթրիք եւ այլք, զորոց զանց առնեմք, թէպէտ արձանագրեալ եմք զբաղումս յօրագրութիւնս մեր:

ԳԼՈՒԽ ԽԴ.

ՅԱՂԱԳՍ ԳԱԼՍՏԵԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ՀՐԱԻՒՐԱԿԱՑ

Յետ փոթորակից եւ տաժանելի իմն ուղեւորութեան ի Պոնտոսեան Ծովու, որպէս պատմեցին, որպէս եւ ցուցանէր ձմեռնային ե-

ղանակն, ի 13-ն փետրվ. ամսոյ հասեալ ժամանեցին այսր ի Կ. Պոլիս ի Ս. Էջմիածնէ կաթուղիկոսական Հրաւիրակը Գեր. Տ. Սարգիս Արքեպս. Զալալեանց եւ բարեշնորհն Տ. Գրիգոր վարդ. Մուշեղեանց ընդ թարգման Պ. Նիկողայոսի Տէր Յովսէփեան (°) Աշտարակեցոյ եւ ընդ երկուց շաբաթ՝ Յարութիւնի Մարդարեան Վաղարշապատցոյ եւ Պօղոսի Օձունցոյ ի դիմաց Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, եւ զօրպետ (ժէնէրալ լէյթնանտ - Ֆէրիք) Զինովիէվ ի դիմաց ուս կառավարութեան (փոխ արքայութեան Տփիսեաց - կովկասական աշխարհի)՝ ուսական չոգենաւաւ :

Արժ. Գարեգին վարդ. Թաթարեան եւ Յարեթիկ էֆ. Նէվրուզեան զնացեալ ի չոգենաւ անդր ուսական ի կողմանէ Տ. Պօղոս Արքեպս. Պատրիարքի զիմաւորեցին զնուիրակն, եւ յետ զուզնաքեայ տեսակցութեան՝ հրաւիրեցին, եւ հանեալ ի ցամաք տարին կառօք եւ պատուով առ Ս. Պատրիարք ի Պատրիարքարան ի Գուժ - Գարու, որ հիւրասիրեաց զնոսա յԵրուսաղիմատան, ուր եւ ազան զգիշերն զայն :

Իսկ զօրպետ Վասիլի Զինովիէվ չոքաւ ի ուսական զեսպանատուն եւ յետ պաշտօնական տեսակցութեանն ընդ ուս. զեսպանի իրջեանեցաւ ի պանդոկի որ հանդէպ զեսպանատան ի Թօղրու - եօլ Բերայի : Եւ ի յաջորդ աւուր մերձ ի կէսօր եկն առանձին եւ ներկայացաւ Վեհ. Հայրապետի (°) : Եւ մի ոմն վեղարաւոր (Տ. Խորէն Գալֆայեան) շնորհաւորեաց զգալուստ նորա եւ զպաշտօն ի դիմաց Հոգեւոր Տեսուն :

Ի յաջորդ Գչ. աւուր, իմա՛ ի 14-ն ամսոյն զիխաւուրբ մեկնեալ Հրաւիրակաց կառօք ի Գուժ - Գարույէ ընդ ներկայացուցչաց Ս. Արքեպիսկոպոս - Պատրիարքի եւ հանդերձ պատուաւոր անձամբք ոմամբք ուղեկցօք եկին ի Ս. Երրորդութիւն Եկեղեցի Հայոց Բերայ ի Թօղրու - եօլ ի Պալբք - բագարի (նախքան զվերջին հրկիզութիւնն) եւ առին հանդիստ սակաւ ինչ : Միացաւ անդ ընդ նոսա եւ զօրպետ Զինովիէվ :

Էր ժամ ութ. կազմեցաւ Թափօր եկեղեցական եւ շքեղ ընդ հանդիսապետութեամբ Տ. Սարգիս Արքեպիսկոպոսի, յորում երկրորդ Հրաւիրակ՝ Տ. Գրիգոր վարդ. Մուշեղեան, վարդապետք եւ քահանայք ոչ սակաւք ի Բերայէ եւ ի մերձաւոր շրջակայից Կ. Պոլսոյ շուրջառեալք, զպիրք շապկազգեցեալք, զոյգ բուրվառակիրք, խաչվառք եւ կերոնք փայլեցուցանէին զհանդէսն զայն :

Շուրջառաւոր վեղարակիրք երկուք բարձրացուցեալ ի ձեռինս բերէին ի միջավայրի Թափօրի զերկուս զբօշակ - դաւազանս

Հայրապետականս, մին խաչ եւ միւսն գաւազան կորագլուխ: Երկոքին կարմրահանդերձ շաքիթ կաթուղիկոսականք յառաջընթաց երթային ունելով ի ձեռինս իւրեանց զմի մի ցուպս խնձորագլուխս արծաթեայս:

Հետեւէր զօրապետ Զինովիէզ Սարգիս Արքեպիսկոպոսի:

Այսպէս ուրեմն մեկնեցաւ թափօրն այս հրաւիրակաց ի Ս. Երարարութիւն Եկեղեցւոյ երգովք շարականաց (Որ զչնորհս), յամբաջայլ ընթացիւք ընդ պողոտայն Թօղրու – եօլ:

Ծփայր բաղմութիւն Հայոց եւ օտարաց ընդ երթեւեկաց սկսեալ ի դաւթէ եկեղեցւոյ, ի մեծի պողոտայի մինչեւ ցղուոն հիւրընկալ բնակարանի Նորին Սրբութեան:

Եհաս եւ եմուտ թափօրն եկեղեցական ի տուն Յակոբ էֆ. Նորատունկեանի եւ ել ի յարկն առաջին, ուր մնայր Վեհ. Հայրապետ ի մեծի սրահի ընդունելութեան ընդ բաղմութեան եպիսկոպոսաց, վարդապետաց եւ հայազնեայ նշանաւորաց:

Ներկայացեալ Հրաւիրակաց Հոգեւոր Տեառն՝ ետուն զհամբոյրս Ս. Աջոյ Նորին Սրբութեան, եւ Տ. Սարգիս Արքեպս. Ջալալեանց Հրաւիրակապետն կացեալ յատենի առաջի Ս. Կաթուղիկոսի ընթերցաւ զուղերձս զայս.

« Աստուածարեալ Քահանայապետ ».

« Անհասանելի եւ անսահմանելի կամքն Աստծոյ հրաւիրէ զՁեր
« Վեհափառութիւն ի Քահակալութիւն Սրբոց Առաքելոցն Թաղէոսի
« եւ Բարդուղիմէոսի եւ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Մեծի Պարթե-
« լին, Լուսաւորչացն մերոց եւ Առաջնորդացն հաւատոյն Հայաս-
« տանի:

« Ընտրեաց նա զՁեր Վեհափառութիւն ի Գլուխ համօրէն Ազգի
« Հայոց եւ ի լոյս Հայաստանի, վասն որոյ զնոյն բանաւոր հօտ ա-
« զատեալն ամբիժ արեամբ որդւոյ իւրոյ Միածնի յանձն առնէ զամե-
« նամեծ պաշտպանութեան Ձերոյն Վեհափառութեան առ ի վերա-
« կանգնել զնա եւ ժառանգեցուցանել զժառանգութիւնս աւերակս,
« ասել կապելոց, թէ ելի՛ք, եւ որք ի խաւարի ետին, թէ յայտնե-
« ցարուք. հրաւիրէ զՄեծ Քահանայապետո՞ղ՝ զօրացուցանել զտկարս,
« բժշկել զհիւանդս, յանձանձել զչարչարեալս, զարձուցանել զմո-
« լորեալս, խնդրել զկորուսեալս, եւ սրբել միանգամայն յաչաց նո-
« րա զդառն արտասուս, բնակեցուցանելով զնոսա ի վայրի դալա-
« րոջ, եւ սնուցանելով առ ջուրն կենաց եւ հանգստեան. եւ թէպէտ
« այսօրիկ ամենածանր զթողութիւնք տառապանք են եւ բաժակ չար-
« չարանաց Մեծի Քահանայապետիդ, սակայն լրութեան Ազգիս հան-
« գիստ եւ հսկայաբայլ յառաջդիմութիւնս:

« Արդ՝ Մայր մեր Սուրբ Էջմիածին ընկալեալ զսոյն երկնառաք
 « շնորհ լիակատար խնդութեամբ բերկրի զաւակովք հանդերձ, զի
 « Տէր ողորմեցաւ Մեծին Հայաստանի՛ պարգեւելովն զԶեր Վեհա-
 « փառութիւն մեծ Խնամակալ, արթուն Հովուապետ եւ Սուրբ Ա-
 « ւանդապահ իւրոյ գոյութեան, վասն որոյ տարածեալ զբազուկ իւր
 « Սուրբ կոչէ ասելով. «Արի՛ ե՛կ, մերձաւոր իմ, արի՛ ե՛կ առ պատ-
 « ուարաւ պարսպիս, երեւեցո՛ղ զերեսս քո ի մեզ, զի քեւ անցցէ ձը-
 « մեռն ցրտաշունչ. ծաղիկք գիտութեանց եւ բարոյականութեանց
 « ծաղկեսցեն ի մեզ. տատրակք արծակեսցեն զձայնս իւրեանց ի մե-
 « նաստանաց, շիղբարձ աղանիք ելցեն ընդ առջ ի նշան բեր-
 « կրութեան, եւ ամենայն ուրեք ուսումնարանք մեր փթթեսցեն բու-
 « ղելով զհոտ անուշից ի ցնծութիւն եւ ի բերկրութիւն լրութեան Ազ-
 « գիս, եւ եղիցին նոքա իբրեւ զգետ յորդեալ փառաւոր ի ծարաւուտ
 « երկրի :

« Իսկ մեք համախմբեալ բազմութեամբ ի տրիտուր սոյնպիսի
 « գերօրինակ երկնառաք պարգեւաց զբաժակ փրկութեան Տեառն ըն-
 « կայցուք եւ զանուն նորա յաւէտ կարգասցուք զեանամած ծնրա-
 « դրութեամբ և պաղատախառն արտասուօք, զի որպէս ընտրեաց նա
 « զԶեր Վեհափառութիւն պաշտպան Հայրենեաց, պաշտպանեսցէ
 « նոյնպէս երկնային իմն զօրութեամբ առ ի տանել զամենամեծ եւ
 « զվսեմ ազգային ամենակարեւոր պաշտօնն յարուցանելով ի քարանց
 « Հայաստանի լայնածաւալ կառավարութեան մեծ Քահանայապետիդ
 « զհաւատարիմ օժանդակ անդամ Նկեղեցւոյ՝ որդիս Աբրահամու,
 « ծաղկեսցի յաւուրս Զեր արդարութիւն, բազում խաղաղութիւն
 « մինչեւ կատարեսցի լուսին, եւ մեծ Քահանայապետդ կացցէ եւ
 « մնացցէ ընդ արեւու դարս շնորհօք Սուրբ Աստուածութեան նորա
 « ի պերճազարգ պայծառութիւն եւ ի փառս պարծանաց լրութեան
 Ազգիս :

Նուաստ ծառայ Արքեպիսկոպոս
 Սարգիս Հասան Զալպեանց »

Ի 13 փետրվարի, 1867 ամի,

Ի Կ. Պոլիս.

Եւ ի նորոյ խոնարհեալ առջի Հոգեւոր Տեառն՝ համբուրեաց
 զՍ. Աջն Հայրապետական յանձնեալ եւ զուղերձն :

Ի պատասխանի որոյ պարգեալ Վեհ. Հայրապետի զգիտակցու-
 թիւն իւր ըստ ծայրագոյն կոչման յառաջակայ պաշտօնի իւրոյ եւ
 ըստ վիճակաց Ազգի եւ Նկեղեցւոյ Հայաստանեայց եւ զպարտաւորու-
 թիւնն՝ ապաւինեցաւ շնորհոց պաշտպանութեան Տեառն, աջակցու-

թեան եկեղեցական պաշտօնէութեան եւ Ազգի Հայոց, օրհնեաց զկամս Տեառն, զԱզգ եւ զեկեղեցի Հայաստանեայց, զՀայրապետութիւն եւ զՍ. Էջմիածին, զհրաւիրակս եւ զհամայն հանդիսականս, եւ կնքեաց զհանդէան զայն յաւելեալ զՊատիւանիչ եւ զՀայր Մեր :

Հանեալ զուրջառ, ուղւոյ եղեալ զբալիբոս եւ զայլ սարս, բազմեցան Հրաւիրակք համաձայն կաթողիկոսական ակնարկութեան, որպէս եւ այլ անձինք պատուաւորք՝ եկեղեցականք եւ աշխարհականք, եւ եհարց Նորին Սրբութիւն զողջունէ Հրաւիրակաց, Մայր Աթոռոյ եւ Աթոռայնոց համայնից : Եւ յետ փոքու իմն տեսակցութեան արձակեաց զՀրաւիրակս երթալ առնուլ հանգիստ, յերկրող բաժանման տանն Նորատուկեանց որ ի յետկոյս մեծի բնակարանի : Ջորս եւ յերեկոյն հրաւիրեաց յընթրիս :

Այսու առթիւ ոչ աւելորդ համարեմք փակագծել եւ արձանագրել առջէն եւ զտխրառիթ անցս յանկարծամահ վախճանի Թաղէոս վարդապետի ձեռնադրելոյ ի Վեհ. Հայրապետէ ի 1867 թուականի ի Ս. Եկեղեցւոյ Քաղկեդոնի ընդ Ստեփան Սանտալճեան եւ Բարդուղիմէոս Չամիչեան արեղայս :

Մինչ ելանէր Թափօրն Հրաւիրակաց ի վեր ընդ սանդուխս առաջին յարկի հիւրընկալ բնակարանի Հոգեւոր Տեառն, իբրեւ հանդիսատես մնայր անդ մեկուսի ի գլխոյն սանդխոյ Թաղէոս վարդապետ, եւ ահա գլորեալ անկաւ ի գետին, զոր եւ անմիջապէս բարձեալ աջակցութեամբ բժշկաց՝ փոխադրեցին ի փոքր սենեակ մի : Ի հանդիսի անդ գտանէին հուշակաւոր բժշկապետքն Սերոբէ Վիչէնեան (Սերվիչէն), Ստեփան պէյ Ասլանեան, Ռաֆայէլեան եւ այլք, որք փութացեալ էին ի զննել զԹաղէոս վարդապետն : Սերվիչէն անմիջապէս վանեաց ի բան զամենայն յոյս՝ հաղորդեալ, զի վերջացեալ է ի կենաց՝ կաթուածահարեալ ի սրտի, եւ մեկնեցաւ ինքն : Բազումս ջան կալաւ բժշկապետ Ռաֆայէլեան առ ի օգնել ողորմելոցն, այլ ի դո՛ւր : Վասն որոյ ընդ երէկս փոխադրեցին զբի հանգուցելոյն ի Ս. Երրորդութիւն եկեղեցի, եւ անգի ի գիշերի ի Ս. Աստուածածին եկեղեցի Միջագեղջ, զի էր նա հեղեսուն աշակերտ Յովհաննէս Եպիսկոպոսի Կապուտիկեան քարոզչի տեղւոյն, որ եւ մնայր հանգուցեալն : Ի յաջորդ առուր ըստ ծիսի եկեղեցւոյ մերոյ ամփոփեցին ի հող զմարմինն յԱզգ. Գերեզմանատան հասարակաց որ ի վեր քան զԹաղներդիվէն :

Արժանի էր ուշադրաւ զիտողութիւն եւ այն, զի զկնի զալսուտեան Տ. Սարգիս Արքեպիսկոպոսի այսր ի Կ. Պոլիս, եթէ որպէս հետեւէր նա աստ սիրաշահել զխմբագիրս, զգրական հեղինակս, զազդե-

ցիկ անձինս եւ զնշանաւոր աղագայինս, փարատել յանձնէ իւրմէ զայլ եւ այլ կասկածանս որ առթիւ ներսէս Կաթողիկոսի Աշտարակեցւոյ վերջնոյ եւ սակս օտարոտի ուղղութեանց իւրոյ: Այլեւ տեղատարափ հեղեղէին անստորագիր դիտողաթուղթք եւ ամբաստանադրութիւնք այլ եւ այլ հնարիւք եւ միջոցօք զՄակար Արքեպիսկոպոսէ, զոմանց Սինոդականաց, զպոչտօնէից ինչ Սինոդի եւ զԱտենազպիր Սուքիասայ Թաղիանոսեանց, որք էին բարեկամք Մակարայ եւ ոչ Սարգսի, եւ գաղտնածածուկ գուն գործէր եւ ջանայր Ջալալեան գրգեւ զվեհ. Կաթողիկոս ընդ դէմ նոցա, թէպէտ ոչ ըստ արժանւոյն յաջողէր, թողեալ միայն զհետս կասկածանաց: Ի յաւելուածոյ սրտին խօսէր երբեմն եւ բերան նորա, եւ մանաւանդ առատանալ առատանայր յամբաստանութիւնս ճարտարբանս յորժամ զգուշութեամբ իմն եւ առանց ասելոյ զպատճառն հարցանէր Հոգեւոր Տէր զամբաստանելոց զկարծիս նորա: Եւ անզուսպ կրիւք տքնէր եւ խարդաւանէր զցայգ եւ զցերեկ առաւել ընդ դէմ Մակարայ, որ յաջորդեալ էր ինքեան Սարգսի ի թեմակալութեան Տփլիսեաց ըստ խնդրանաց ժողովրդեան յաւուրս Տ. Մատթէոս Կաթողիկոսի, միանգամայն տքնէր ի ձեռս բերել ի նորոյ զթեմն զայն՝ տապալեալ զՄակար, որուն ոչ էր բարեկամ եւ կառավարութիւն ուսական, յորմէ կարծէր Սարգիս օգտիլ:

Արդարեւ՝ ըստ բանին եթէ միտք մարդկան ի խնամս չարին՝ կատարելապէս ապացուցանէր Ջալալեան, որ էր այր ճարտար, լեզուանի, բանիրուն, գործունեայ եւ արդիւնաւոր առաւել քան զՄակար, այլ յաճախ դառնայր այր վտանգաւոր՝ նենգամիտ եւ որոգայթաւոր, միանգամայն ստախօս եւ խարդախ, յորպիսիս տկարանայր Մակար, որ էր առաւել այր խոհեմ, հանդարտ, զգաստ եւ հաւատարիմ պաշտօնեայ Ազգի, Եկեղեցւոյ եւ Հայրապետութեան Հայաստանեայց, որպէս տեսաք եւ գիտեմք ըստ բազում փորձից:

ԳԼՈՒԽ ԽԵ .

ՅԱՂԱԳՍ ՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՅ ՀՈԳԵՒՈՐ ՏԵԱՌՆ ՎԵՀ . ԿԱՅՍԵՐ

ԹՈՒՐԻՒՅՈՅ, ԵՒ ՅԱՂԱԳՍ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԻՇԵԱՆԱՑ

ՈՒԼՆԻՈՅ Ի ԲԱՆՏԷ

Համաձայն խնդրանաց եւ փափաքանաց Նորին Սրբութեան Հայրապետի Ազգիս մերոյ բանիւ բերանոյ եւ միջոցօք Մեծ - Եպարքոսի եւ նախարարի Արտաքին գործոց, Օգոստ. Սուլթան Ապտ - իւլ - Ազիզ խան կայսրն Թուրքիոյ բարեհաճեալ էր հրաւիրել ի ներկայու-

թեան իւր զՏ. Գէորգ Կաթ. եւ յստակեցուցեալ զօր ընդունելութեան՝ առաքեաց զսենեկապետ (պաշ – մապէյննի) զԲեամիլ պէյ ի 24-ն փետրվարի, յաւուր ուրբաթու, առ ի հաղորդել Նորին Սրբութեան զօրն ներկայացման :

Վասն որոյ ի 1-ն Մարտի, յաւուր չորեքշաբաթու, զմիջաւուրբ, ել եւ զնաց Վեհ. Հայրապետ ընդ Կաթ. Հրաւիրակաց ի պալատն կայսերական ի Տոլմա – Պահճէ, ուր նախ զիմաւորեաց զսա եւ հիւրասիրեաց Վսեմ. Բեամիլ պէյ սենեկապետ, եւ ապա կիսոյ ժամու դարձեալ ներկայացոյց Օգոստ. Սուլթան Ապտ – իւլ Ազիզ կայսեր ի մեծ դահլիճի հանդերձ Սարգիս Արքեպս. եւ Գրիգոր վարդ. Հրաւիրակօք :

Տ. Գէորգ Կաթուղիկոս մատոյց խորին յարգանքօք զերախտագիտական զգացմունս իւր եւ զսրտագին շնորհակայութիւնս զշնորհաց եւ զինամաց Վեհ. Սուլթանի եւ Օսմ. կառավարութեան եթէ առ ինքն յամենայն պաշտօնավարութիւնսն եւ եթէ առ Ազգն Հայոց, եւ եթէ կամք Աստուածային եւ ընտրութիւն ազգային պարտաւորեն զինքն մեկնել ի սահմանաց Թուրքիոյ, սակայն ոչ երբեք մեկնեսցի սիրտ եւ երախտագիտութիւն իւր ի Թուրքիոյ, եւ ոչ իսկ մոռացի զսէր եւ զքաղցրութիւն կայսեր եւ ոչ զազարեսցի յաղօթից եւ ի բարեմաղթութեանց ուր եւ գտանիցի, ինդրեաց շարունակել զմշտանուէր եւ զառատախնամ շնորհս իւր առ Թուրքիարնակ Հայս, եւ յաւել զբարեմաղթութիւնս վասն կենաց եւ բարօրութեան կայսեր, եւ վասն յաջողութեանց եւ զօրութեանց Օսմ. կառավարութեան :

Պատասխանելով Օգոստ. Սուլթանի՝ շնորհաւորեաց զկաթուղիկոսական կոչումն եւ զպաշտօն, փոխանակեաց զշնորհակայութիւն եւ զգովեստ սակա ջերմեռանդ զգացմանցն եւ հաւատարիմ պաշտօնավարութեանց Տ. Գէորգայ՝ աներկմիտ յուսացեալ, զի յարատեւեսցէ ի նոյնպիսի ուր եւ գտանիցի, եւ ի նշան բարեկամութեան եւ բարեհաճութեան իւրոյ տայ ձեռամբ իւրով զառաջին աստիճան Մէնիտիյէ շքանշանի, զոր եւ յանձնեաց Նորին Սրբութեան :

Բացորոշ երեւէին արգահատանք Սուլթանի ի խօսակցելն ընդ Գէորգ Կաթուղիկոսի :

Ողջունախառն մաղթանք Վեհ. Սուլթանի եւ Վեհ. Հայրապետ ընդ Հրաւիրակն արտաքս ի դահլճէ խորին յարգանք եւ ըստ սովորական կարգի :

Նստեալ սակաւիկ մի ի հիւրանոց Սենեկապետ պէյի՝ վերադարձաւ եւ եկն Հոգեւոր Տէր ի բնակարան իւր հանդերձ ուղեկցօք եւ դրօշակրովք :

Իսկ նախ քան զայս ներկայութիւն յաջողեցաւ Վեհ. Հայրապետի

ազատել զիշխանս Հայոց Ուլնիոյ ի բանտէ, որոյ վասն ոչ մոռացաւ մատուցանել նաեւ զերախտագիտութիւն մասնաւոր Օգոստ. Սուլթանի բարեխնամի :

Յաման 1859 - 64 առթիւ արքունական տրոց եւ նորորինակ միջամտութեանց Օսմ. կառավարութեան յուզեալ էին եւ ապստամբեալ Հայք Ուլնիոյ (Ջէյթունի), որք բաղկանային իբր ի քսան հազար բրնակչաց բաժանեալ ի չորս թաղս ընդ իշխանութեամբ եւ կառավարութեամբ չորից ժառանգական եւ նահապետական իշխանաց, որք եւ հատուցանէին Օսմ. կառավարութեան զքսան եւ հինգ հազար դահեկանս ի տարեկան տուրս, եւ ոչ զայլ ինչ, մինչ կառավարութիւն ջանայր յաւելեալ զտարեկան տուրս արքունականս, զնել զոմն ի մահմետականաց ի կառավարիչ Ուլնիոյ, սեղմել եւ սահմանափակել իսպառ զիշխանութիւնս եւ զիրաւունս չորից իշխանաց, միանգամայն իսկ ասել՝ համադասել զՋէյթուն ընդ ընդհանուր վարչութեամբ կառավարութեան, ի շարս այլոց գիւղորէից եւ գաւառաց :

Համաձայն ուղեգրութեան Վիկտոր Լանզլուս Գաղղիացւոյ, ըստ աշխարհագրութեան գտանի բարձրագիրն եւ լեռնապատ Ուլնիա ի 34° եւ 35° աստիճանս լայնութեան եւ ի 38° եւ 39° աստիճանս երկայնութեան : Սահմանքն են ի հիւսիսոյ՝ Տորոս, ի հարաւոյ՝ զառիվայր լեռանց՝ ընդ որովք անցանէ գետն Պերամոս, յարեւմտից՝ Գըրմըզ լեռնս եւ Խոզանեան վայրք եւ յարեւելից՝ գետն Պերամոս : Ունի զերկու լեռնահովիտս :

Անցք եւ յաջողութիւնք Լիրանանու առաւել հրապուրէին զհայ երիտասարդս Կ. Պոլսոյ եւ զՀայս Ջէյթունի, եւ առանց հիմնական եւ փորձառու պատրաստութեանց եւ հեռատեսութեանց, ոչ ունելով մանաւանդ ի պաշտպան ինքեանց եւ ոչ զոք յերոզական ի մեծ պետութեանց, յանձնապատան իմն յանդգնութեամբ ապաւինեցան յանառիկ դիրս լեռանց եւ վայրաց իւրեանց, առին զղէնս իւրեանց եւ ելին ընդդէմ Օսմ. կառավարութեան : Ի վերջին յուսահատական վիճակի եւ ի ճգնաժամու հնար էր Ջէյթունցոց զինել հազիւ զհինգ հազար անձինս, առանց բժախնդրութեան սեռի եւ հասակի կամ ամաց :

Քանիցս յաջողեցաւ նոցա մղել յետս մեծաւ յաղթանակաւ զգորս թուրքաց՝ մատնեալ ի պարտութիւն : Այլ հուսկ ուրեմն տարաւ բանակն Օսմանեան զյաղթանակ կատարեալ եւ գրաւեաց զՋէյթուն :

Առանց հետեւելոյ ժամանակագրական ճշտութեան անցից եւ մանրամասնութեանց՝ փութամբ յարել իբրեւ զընդհանուր տեսութիւն եւ զքննադատութիւն, զի Ուլնիա եւ Քոզան ի լերինս Տաւրոս-

եան սահմանակից լեալ միմեանց՝ յաճախ զինակցէին եւ պաշտպանէին զիրեարս ընդդէմ արտաքին կառավարական յարձակմանց եւ միջամբուտութեանց :

Արդարեւ Քողանցիք եւ բռնապետք նոցա երբեմն հարստահարէին զհայս եւ զգիւղօրայս , որ արտաքոյ սահմանաց իւրեանց եւ Ունիոյ , եւ հրատահարեալ , ընդ որս եւ Հաճընցիք բողոք բանային առ Պատրիարքարան , որ եւ հրաւիրեաց զուշադրութիւն կայսերական կառավարութեան , որոյ վասն Գէորգ Եպս . (Կաթողիկոս) յայն ժամանակի ի մտերմական ինչ տեսակցութիւն իւրում ընդ Պօղոս Արքեպս . – Պատրիարքի՛ զուշացոյց զնա , զի մի՛ տկարասցի իսպառ Զէյթուն եւ ընկճեսցի : Այլ ի նանիր :

Եւ ահա հանեալ կառավարութիւն զյատուկ բանակ աջակցութեամբ Հայոց Հաճնոյ՝ նուաճեաց իսպառ զՔողանցիս , աքսորեաց զբռնպետ պէյս , զխան Մահմուտ , եւ այսպէս խորտակեալ զզինակից եւ զաջակից Ունիոյ՝ յաջողեցաւ տակաւ առ տակաւ նուաճել իսպառ եւ զԶէյթուն :

Յետ որոյ Օսմ . կառավարութիւն երբ բռնի եւ զչորս իշխանս Զէյթունի՝ զԱստուածատուր (Ասատուր) Եէնի – Տիւնեա մականուամբ , զՂազար , զՆազարէթ եւ զՄկրտիչ այսր ի Կ . Պոլիս , եւ ոչ թողոյր սոցա վերադառնալ ի հայրենիսն :

Իսկ Պատրիարքարան Գում – Գարուլի ապիկարութեամբ իւրով փայլեալ , ըստ միամիտ թելադրութեան ոմանց երիտասարդաց եւ Ներսէս Եպիսկոպոսի Վարժապետեան , ինդրէր զաջակցութիւն անդրալեռնային մոլեռանդ առն խարդախի եւ վտանգաւորի՝ Գերապայծառ Հասունեանի , որպէսզի միջնորդեալ առաջի զազդիական ղեսպանի եւ կառավարութեան՝ ներգործեսցէ ըստ զործոց Զէյթունի՛ ազատելով եւ զիշխանս :

Առիթ բարեպատեհ եգիտ Գերապայծառ Հասուն պապամոլն եւ տարածեաց զուռկանս իւր ի Հայս Ունիոյ լի խարուսիկ խոստմամբք , որսացաւ զսակաւս ոմանս , պատրեաց եւ զիշխանս , եւ այսպէս սկսաւ արդիւնաւորել յաւէտ եւ միայն զնախճիրս հոռովմէականութեան : Զգաստացաւ Պատրիարքարան Գում – Գարուլի , այլ անազան յոյժ :

Դարձեալ իշխանք անուղղակի իմն եղանակաւ ենթարկեալ նենգամիտ ազդեցութեանց եւ զաւաղիր թելադրութեանց ոռուսական ղեսպանատան , որ հրահանգեալ է զնոսա հրատարակել ի գազդիական լրագիրս Կ . Պոլսոյ զբողոք զընթացից եւ ընդ դէմ Օսմ . կառավարութեան , ընդ ստորագրութեամբ իւրեանց հրատարակեն զբողոքագիր ի միում ի գազդիական թերթի եւ ինդրեն զպաշտպանութիւն եւրո-

պական պետութեանց՝ պատրեալ իբր զի առիթ առեալ դեսպանաց զայսպիսի բողոք նոցա՝ միջամտեսցեն գործոց Զէյթունի եւ պաշտպանեսցեն զիշխանս հանդերձ սարօքն :

Ընդ այս զայրացեալ Մեծ Եպարքոսի եւ նախարարի Արտաքին գործոց՝ հրամային ձերբակալել անմիջապէս եւ տան բանտարգել զիշխանս Ուլնիոյ : Եւ ահա զայսու միջոցաւ եհասա Տ. Գէորգ Կաթուղիկոս ի Պրուսայէ ի Կ. Պոլիս, եւ մինչ Գերապոյժառ Հասունն ջանայր ի գաղտնի եւ մերձ էր յաջողել դարձուցանել իսպառ ի պապականութիւն զիշխանս չորեսին, որպէսզի ազատեսցէ զնոսա իբրեւ զժողովուրդ իւր ի բանտէ, բունն միջամտութեամբ գուն գործեաց Հոգեւոր Տէր, ոչ սակաւ բանակցութեամբ էառ զսիրտս Մեծի Եպարքոսի եւ նախարարի արտաքին գործոց եւ ազատեաց զիշխանս ի բանտէ :

Հիւրասիրեաց Նորին Սրբութիւն զգլխաւոր եւ զազգեցիկ իշխանն Աստուածատուր՝ այր բարձրահասակ, անձնեայ եւ թիկնաւէտ՝ ի բընակարանի իւրում, որպէս եւ պատրիարքարան հիւրասիրեաց զմիւս իշխանս, եւ այսպէս խայտառակեաց զՀասունն եւ զխարդաւանութիւն նորա :

Համաձայն նախապատրաստութեանց եւ հրահանգաց Հոգեւոր Տեառն՝ յետ ամսոյ ինչ ընկալաւ Պատրիարքարան Գում - Գարույի եւ զհրաման Բ. Դրան առ ի վերադարձուցանել զիշխանս ի հայրենիս իւրեանց՝ համակերպեալ նորոյ տնօրէնութեանց կայսերական կառավարութեան՝ ի մեծ վիշտ սրտին ողջամիտ անձանց :

ԳԼՈՒԽ ԽԶ.

ՅԱՂԱԳՍ ՊԱՏԱՐԱԳԵԼՈՅ ՀՈԳԵՒՈՐ ՏԵԱՌՆ

Ժողովուրդ Հայոց մայրաքաղաքի, մանաւանդ նշանաւոր եւ ազգեցիկ արուարձանաց, փափաքել փափաքէր եւ խնդրէր, զի Հոգեւոր Տէր մատուցէ զՍ. պատարագս կաթուղիկոսական հանդիսիւ ի կարեւոր եկեղեցիս, յաւագ եկեղեցւոյ ի Գում - Գարու, ի Բերա, ի Միջագեղ, յիւսկիւտար եւ ի Քաղքեղոն : Որով յապաւելոյ էր եւ մեկնումն վեհ. Հայրապետի ի Կ. Պոլսոյ, մինչ ոռուս. դեսպանն գուն գործէր փութացուցանել, եւ խնդրէր զհրաման Նորին Սրբութեան առ ի տալ բերել յՕղեսայէ զպետական յատուկ շոգենաւ փոխադրութեան :

Վեհ. Հայրապետ զգուշանայր յաւէտ ի գժտելոյ ընդ ոռուսական կառավարութեան, միանգամայն ի վտանգաւոր ջանից եւ ի թեւա-

գրութեանց եթէ երիտասարդաց ոմանց մոլորելոց եւ պնդելոց զհետ կրօնական պատրուակեալ բարեփոխութեանց եւ եթէ հակապալածէնիական կուսակցութեան, եւ որոշեաց պատարագել մի անզամ ի Ս. Երրորդութեան եկեղեցւոյ ի Բերա, եւ այսպէս ըստ մասնեայ զոհացուցանել զբաղձանս ժողովրդեան Հայոց:

Վասն որոյ ի 19-ն փետրվարի յաւուր կիրակէի, յորում էր եւ տարեդարձ դահակալութեան Օգոստ. Աղեքսանդր Բ. Կայսեր Ռուսաց, մատոյց մեծաւ հանդիսիւ եւ փառաւորութեամբ զյատուկ Ս. պատարագ, յորում միջոցի զգեստաւորեալ կանգնեալ էին չորս եպիսկոպոսունք յերկուս կողմանս Սեղանոյ ի բեմի ի պատիւ Վեհ. Կաթողիկոսի:

Մինչեւ ցվերջ Ս. Պատարագի եկին եւ ներկայ կանգնեցան ի դասս Վսեմ. Իկնաթիէվ զօրավար ղեսպանն, կին նորա, ռուսական պատուիրակ – հրաւիրակ Վսեմ. Վասիլ Զինովիէվ զօրավսեան, կարեւոր պաշտօնեայք ղեսպանատան, եւ նշանաւոր հայազգիք ոմանք:

Պօսեցաւ Նորին Սրբութիւն քարոզ ըստ պատշաճի աւուրն եւ խըրտական ի սէր եւ ի խաղաղութիւն: Յետ աւարտման Ս. Պատարագի՝ ել եւ զնաց ի ռուսական ղեսպանատուն ընդ Տ. Սարգիս Արքեպիսկոպոսի եւ հանդերձ այլոյ, եւ ի մեծի դահլիճի արար զմաղթանս վասն Կայսեր Ռուսաց նորօրինակ իմն օտարամոլութեամբ՝ երիցս երգեալ խմբովին զմի տուն Անդաստանական աղօթից (Օրհնեսցի... Արեւմտեան կողմն աշխարհի...), եւ այսպէս օրհնեաց զկայսրն Աղեքսանդր եւ զղեսպանն, եւ ապա հանգիստ էառ սակաւ ինչ եւ պատուասիրեցաւ: Յետ որոյ մեկնեցաւ ի ղեսպանատունէ ընդ ուղեկիցսն:

Ոչ աւելորդ համարեսցի արձանագրել ասդէն եւ դայս միջադէպ:

Յորժամ զգեստաւորեալ Հոգեւոր Տէրն ելանէր հանդիսիւ եւ երգոյ խորհուրդ խորիմի ի ձախակողմեան պահարանէ առ ի մատուցանել զՍ. պատարագ, եւ զգեստաւորեալ չորս եպիսկոպոսունք երթային երկուս կարգս յառաջոյ նախ քան զՀոգեւոր Տէր, եւ ահա յելանենն նոցա ընդ աստիճանս բեմի ել յուղումն մեծ եւ խռովութիւն ի ձախակողմեան դասու, եւ երիտասարդք ոմանք ընդ Կարապետի Փանոսեան խմբազրպետի Մանգումէի Էֆեմար հայատառ եւ թուրքաբարբառ լրագրոյ ոչ թողուին միում յեպիսկոպոսացն զգեստաւորելոց՝ Մկրտիչ Եպ. Քէյֆսիգեան Գերմանիկեցւոյ (այս եղելոյ պիտականուն Կաթողիկոս Ստոյ) ելանել ի բեմն՝ աղաղակ բարձեալ, զի ոչ վայել է կախարդ եպիսկոպոսի ելանել ի բեմն եւ կալ առնթեր Հայրապետին Ազգիս մերոյ, մինչեւ յաջողեցաւ վերադարձուցանել

զայրն զայն ի պահարան եւ այլ ոմն եպիսկոպոս փոխանակեաց նմա, համաձայն հրամանի Նորին Սրբութեան: Իսկ առիթ խոսովութեան եղեւ սոյն այս խնդիր:

Մկրտիչ Եպ. Գերմանիկեցի կորուսանէ ի ժամանակաւոր սենեկէ իւրմէ Պատրիարքարանի զգումար ինչ դրամական, եւ առ ի գտանել զդրամսն՝ շրջեալ էր զհաց բանալեաւ կախարդական իմն սովորութեամբ: Եւ յաւուրս յայնորիկ յուզէին լրացիրք, մանաւանդ Մանգումէ, զկախարդական խնդիրս, զըզոէին զժողովուրդ եւ խնդրէին ի Պատրիարքարանէ զքննութիւն եւ զդատապարտութիւն Մկրտչի, որում եւ հետեւէր Գում – Գարու: Ականատես լեալ արծարծեաց զսոյն զայս կախարդական գործ Մկրտչի Ստեփան վարդապետ Արքումանեան Մազնիսացի (որ ձեռնադրեալ էր ի Պողոս Արքեպիսկոպոսէ Թաքթաքեան ի Պատրիարքէ ի Զմիւռնիա, եւ մնայր ի Պատրիարքարանի):

ԳԼՈՒԽ ԽԷ.

ՅԱՂԱԳՍ ԽՆԴՐՈՅ ԻՆՉ ԵՒ ԱՆՅԻՑ ՈՄԱՆՑ

Որք հետեւէին եւ պնդէին խնդրոյ վերաքննութեան Պալաժէնիոյ 1836-ի, ջանային, զի Հոգեւոր Տէր հանդիսաւոր իմն եղանակաւ յատենի եկեղեցւոյ եւ առաջի ժողովրդեան, կամ յատենի Երեսփ. Ժողովոյ ուխտիւք խոստացէ հետեւել վերաքննութեան Պալաժէնիոյ բուն ջանիւք: Սակաւաթիւ էին նոքա, այլ յանդուզն եւ խրոխտք:

Արդարեւ էր կարեւոր եւ ծանրակշիռ խնդիրն այն, այլ անփորձութիւնք եւ շրջահայեցութիւնք Տ. Գէորգ Կաթողիկոսի պահանջէին եւ ստիպէին հետեւել առաւել զգուշութեանց, եւս եւ մնալ ազատ ի նախապաշարմանց, ի հրապարակային խոստմանց եւ ի զբրդոյից ցուցամուրութեանց: Մանաւանդ զի որք հետեւէին յայպիսական ջանից՝ ազատ էին ի պատասխանատուութեանց եթէ առ ի Կ. Պոլիս եւ եթէ ի սահմանս Ռուսիոյ, մինչ ծանրանայր ի վերայ Վեհ. Հայրապետի վիճակ կրկնակի եւ պատասխանատուութիւն ծայրագոյն եւ դժուարագոյն եթէ առաջի Ազգի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց եւ եթէ առաջի ռուսական կառավարութեան, վասն որոյ բաւականանայր բերանացի եւ անպաշտօնական իմն եղանակաւ խոստանալ հետեւել ըստ փորձառութեանց եւ համազգային մասնակցութեամբ վերաքննութեան Պալաժէնիոյ, զոր եւ շուայլ իմն խոստամբ դիւրացուցանէր Պ. Իկնաթիէվ հանել ի գլուխ ըստ արժանւոյն ի Մայր Աթոռոյ ի Ս. Էջմիածնի եւ եթ՝ եւ ոչ երբեք աստ ի Կ. Պոլիս: Դժուարին էր Հոգեւոր Տեսոն ըմբռնել զգիւսնազիտական լեզու նորա:

Յուզէին եւ այլ խնդիրք ինչ, որպիսիք էին հաստատութիւն Լուսաւորչական բարեփոխեալ Ընկերութեան, բարեփոխութիւն ոմանց եկեղեցական կանոնաց հանդերձ այլովքն:

Ոմն ի միաբանից Ս. Յակոբեանց վանուց Երուսաղէմի Յակոբոս անուն Չիլիսկիրեան՝ այր անհանդարտ եւ թափառական, ջանայր հաստատել զմիաբանակցութիւն ինչ ընդ անուամբ Լուսաւորչական բարեփոխեալ Ընկերութիւն կամ Եկեղեցի, որում միաբանէին մոլորեալք ոմանք եւ երիտասարդ, ընդ որս Կարապետ Փանոսեան, եւ տպագրեալ զժամադիրք նոր եւ փոփոխեալ բազմօք, զծիսարան եւ զայլ կանոնս, զուն զործէին ընդհանրացուցանել զդաւանութիւն եւ զդաւանակիցս իւրեանց եւ հաստատել զպարգուծիւն յեկեղեցիս՝ ի զարդրս, ի ծէսս, յարարողութիւնս եւ ի պաշտամունս, զորպիսիս յուզէր չարաչար Կարապետ Փանոսեան՝ եղբակացուցեալ յաճախ՝ զործածել զարծաթեղէնս կրթութեան, եւ պահել զեկեղեցիս ի պարզութեան, համաձայն բողոքականաց:

Պատրիարքարան Գում - Գարուշի ջանայր տկարացուցանել զնոսս, արգելուլ զյանդուզն զործողութիւնս, եւ առանց յարուցանելոյ զհայաձանս՝ հետեւէր դատապարտել ամլութեան զփտանդաւոր նպատակ ընկերութեանդ, յորում երեւէր այլազգ իմն զրութիւն բողոքականութեան, այն է՝ լութերականութեան:

Ի այց յայցանէ, զիմեցին ոմանք առ Վեհ. Հայրապետ, որ խորատեաց զնոսս զաղարել ի մոլորութեանցն, մի՛ պատճառել տարապարտ զհերձուած յեկեղեցւոյ, եւ ի մի բան մնալ հաւատարիմ եւ հրնազանդ Ազգի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց:

Պատուիրեաց Պատրիարքարանի յորդորել եւ զՉիլիսկիրեան դառնալ ի չար ճանապարհէն եւ զիեաց եւ զվերջանալն յուսոց՝ կարգալոյծ առնել եւ բանաբերել զնա միայն:

Իսկ ոմանք զաւառացիք մատուցեալ զխնդրազիր իրրեւ զհանրազիր ստորագրութեան սակաւուց անձանց աննշանից՝ յուզէին զխնդիր եւ խնդրէին ժողով եկեղեցական գումարել եւ բարեփոխել զՃիւղահամարս ազգականականս եւ ինամէականս, զիւրացուցանել զամուսնութիւնս եւ զամուսնալուծութիւնս, թեթեւացուցանել զեկեղեցական արարողութիւնս ինչ եւ զպահս, պակասեցուցանել զկիրակէ, եւ չարունակէին յաւելուլ եւ զայլ խնդիրս աշապիսիս: Եթէ ոչ էր այս հանրագիր կորուսեալ յուղեւորութիւնս մեր, ամփոփէաք աստ ըստ պատճէնն ի տեղեկութիւն եւ ի յազուրդ հետաքրքրութեան բանասիրաց, թէ եւ զուրկ էր ի տրամաբանութենէ, յիրաւագիտութենէ, յողջամտութենէ, ի գիտակցութեանց ազգային եւ եկեղեցական շահոց

եւ պիտոյից, եւս եւ յօրինաւոր շարադասութեանց եւ ի պատմական հետազոտութեանց :

Պատճառք այսչափ էին, զի զգուշանայր Վեհ. Հայրապետ երթալ մի անգամ յԵրեսփ. Ժող. Ազգային եւ օրհնել զանգամս եւ զՎանս, թէպէտ երիցս առիթ կալաւ — երկիցս յեկեղեցւոյ եւ մի անգամ ի Թաղ. Խորհրդարանի Բերայի — գովեաց եւ օրհնեաց զԸնդհ. Ժողով եւ զազգային երեսփոխանս ընդ համայն ժողովոյ եւ խորհրդոյ :

Ապաքէն արժան էր եւ վայելէր Հոգեւոր Տեսոն գէթ պատուել միանուագ ներկայութեամբ իւրով զԱզգ. Ժողով Երեսփոխանաց եւ իւրախուսել՝ յայտնեալ եւ զնորհակալութիւն առթիւ ընտրութեան իւրոյ ի Կաթողիկոս Ամենայն Հայոց : Միանգամայն այսու պարզել զյարգ եւ զպաշտպանութիւն Ազգ. Սահմանադրութեան եւ Երեսփ. Ժողովոյ առաջի օտարաց, մանաւանդ ընդդէմ ջանից հիւսիսայնոց . . .

Ընդ նմին հարկ էր անհրաժեշտ երթալ ի նշանաւոր եկեղեցիս կարեւորագոյն արուարձանաց եւ պատարագել ի հոգեւոր մխիթարութիւն ժողովրդեան ըստ բարեպաշտ փափաքանաց եւ ինդրանաց նոցա :

Այլ սակայն երկնչէր յաւէտ եւ զգուշանայր յերթալոյ յԸնդհ. Ժողով եւ ի կարեւորագոյն եկեղեցիս, զի մի՛ ոմանք յուղեցեն զխընդիրս, զբղբեացեն զհակառակութիւնս եւ արդիւնաւորեացեն զխուժութիւնս եւ զանպատուութիւնս, յորպիսիս նպաստէին սանձարձակ ազատութիւնք եւ զարդիամոլական թեթեւարարոյութիւնք ընդհանրացեալք աստ ի Կ. Պոլիս ընդ յրբենի հրատարակութեանց եւ անուանարկութեանց լրագրաց : Եւ իբր ի փոքրիկ ազացոյց եւ յօրինակ յաւելումք համառօտել զանցս ուրումն Աւետ պէյ անուանելոյ իբր Ղարապաղցւոյ :

Այրս այս բախտախնդիր եկն մի անգամ ի Պրուսա նախ՝ քան զկաթողիկոսական ընտրութիւն Համազգային ընտրական Ժողովոյ Ս. Էջմիածնի, եւ Վեհ. Հայրապետ հիւրասիրեաց զնա յԱռաջնորդարանի, որպէս սովոր էր սիրել եւ հիւրընկալել զհամայն ոռուսահայս եթէ աստ ի Կ. Պոլիս եւ եթէ ի Պրուսա, ուր հիւրասիրեալ էր զԳրլարցի Պ. Եսայի Իզմիրեանց, զՍտեփան քահանայ Իգտիրցի եւ զայլս, ատանց ճանաչելոյ անձամբ զնոսա, որպէս եւ զԱւետը, եւ ատանց ստանալոյ անգամ զյանձնարարագիրս :

Արդ՝ Աւետ պէյ Ղարապաղցի ինքնակոչ, ոչ ունելով զգերս ինչ եւ զպաշտօն, իբրեւ զուղեւոր իջեալ էր ի Պրուսա : Իսկ յետ դայտեան Տ. Գէորգայ Կաթողիկոսի այսր ի Կ. Պոլիս, ընկալեալ զյանդիմանական սրտասխանի բացասական, ոչ ամաչէ հրատարակել զամբաս-

տանազիր զԳէորդայ ի լրագիրս, եւ պահանջէ զծախս, իբրեւ զի խօսեցեալ եւ պայմանեալ զօրով կանխաւ ընդ Գէորդայ՝ աշխատեալ եւ յաջողեալ է տալ ընտրել զնա (զԳէորդ) ի Կաթողիկոս, որոյ վասն հարկ է վճարել ինքեան զվարձս իւր, զոր զլանայ տալ Ս. Հայրապետ :

Աստի յայտմանէ զիւրազոյն լիցի չափել եւ զվարկս լրագրաց եւ հրատարակութեանց՝ խոնարհէին ստորնութեանց եւ աննախանձելի ընթացից բազմապիսեան, եւ որք չարամիտք զիտէին գործածել զլրագիրս համաձայն քմահաճոյից իւրեանց : Իսկ յայնժամ օրէնք քաղաքականք եւ տպագրականք էին իբր ազատականք եւ ոչ օգնէին ինչ : Եւ հրամանն կաավարչական ոչ կարէր արդինաւորել զարդարութիւն : Այո՛, ուշադրաւ էր պատրուակն եւ զիւթիչ, այս է ազատութիւն մամրոյ եւ խզի ըստ եւրոպացւոց, եթէ ոչ սանձարձակութիւն լսիրչ եւ քսամնելի :

Թուէր իմն, զի եւ ուսական դեսպան մեքենայէր ի գաղտնի եւ զրդուէր զանձինս ոմանս, ընդ որս եւ զԱւետ առ ի հնարել զինդիրս եւ ի զանուանարկութիւնս, որպէսզի վշտացեալ Ս. Հայրապետի Տ. Գէորդայ՝ փութացէ մեկնել հեռանալ ի Կ. Պոլսոյ, որում անդուսպ ջանայր եւ հետեւէր Իկնաթիէվ :

Չանց առնեմք այլեւս զինդրոյ պիտականուն կաթողիկոսութեան Աղթամարու եւ զամբաստանեալ Սաչատուր Եպիսկոպոսէ գլխանելոյ ի Պատրիարքարանս, զորմէ ջանք էին արդարացուցանել Հայրապետական միջամտութեամբ եւ վճռով, որպէս եւ ինքն Սաչատուր եւ կուսակիցքն զիմէին Նորին Սրբութեան, այլ Վեհ. Հայրապետ մերժէր միջամտել, ոչ ճանաչէր զպիտակ կաթողիկոսութեան Աղթամարու եւ տչ իսկ հաճէր հաստատել զյարաբերութիւն եւ զպայման ինչ ընդ Աղթամարու եւ ընդ Սաչատուրոյ, աւանց հաստատելոյ կանխաւ զօրինաւոր պայմանս եւ զսահմանս յարաբերականս եւ զնուիրապետականս :

ԳԼՈՒԽ ԽԸ .

ՅԱՂԱԳՍ ՄԵԿՆԵԼՈՅ ՀՈԳԵՒՈՐ ՏԵԱՌՆ Ի Կ. ՊՈԼՍՈՅ

Համաձայն հաւանութեան Նորին Վեհափառ Կաթողիկոսի Ամենայն Հայոց եւ ըստ հեռագրական ազդարարութեան ուս. դեսպանի՝ ի 21-ն Մարտի եկն եհաս այսր ի Կ. Պոլիս արքունական Միշել (Միքայէլ) անուն երկկայմեան շոգենաւն ուսական (անուաւոր) յՕդեսայէ ի զիմաց ուս. կառավարութեան առ ի փոխադրել զՍ.

կաթուղիկոս ի Բօթի ի Ռուսիա: Եւ ոռւս կառավարութիւն եւ յանձնեաց Նորին Սրբութեան գիինգ հազար ուրբիս (յանժամ իբր 7 - 800 ոսկի Օսմանեան) ի ծախս ճանապարհի, որպէս տուեալ է եւ նախորդոյն իւր՝ Ներսիսի Աշտարակեցոյ եւ Մատթէոսի Կ. Պոլսեցոյ:

Ի զիմաց Ս. Էջմիածնի երեր եւ Տ. Սարգիս Արքեպ. ի պէտս ծախուց եւ յանձնեաց Վեհ. Հայրապետի զվեց հազար ուրբի (850 - 900 ոսկի (լ.) Օսման.) , թէպէտ Ջալալեան ծախսեալ էր զկարեւոր մասն աւանդելոյ ինքեան զումարի ի պէտս ճանապարհածախուց:

Ակաւ Նորին Սրբութիւն չըջել ի մնայք բարեաւ առ ոմանս նախարարս հռչակաւորս (Ալի, Յուստ, Ռիւշտի փաշայս, Գըպրըզլը Մէհմէտ եւ այլք) եւ առ եւ այլ անձինս, բաց ի դեսպանաց եւրոպական պետութեանց, եւ փութացուցանել զպատրաստութիւնս ուղեւորութեան:

Ի գիշերի, որ ունէր լուսանալ յԵՂ., ի 27-ն Մարտի, պատուիրեաց Վեհ. Հայրապետ զհիւրասիրութիւն Պ. Մաղաքի Մաղաքեան սիրելոյ իւրոյ ի սեփական տան նորա որ ի Բանկալքի ի Բերա: (Անդ էր եւ հռչակաւոր Գուրպան Յովսէփ որովայնախոս): Առաւօտուց մեկնեցաւ անդի եւ եկն կառօք ուղղակի ի ծովեզերեայ ապարանս Մաքսուտեանց սիրելեաց իւրոյ ի Միջագեղջ, ուր եղեն ընթրիք մեծ եւ ի տուն Յակոբ էֆ. Նորատունկեանի ի Թաշմէրտեմլէն ի փողոցն Սէքլի հիւրասիրական պատուք:

Ի յաջորդ աւուր ի 28-ն Մարտի (1867) որոշեալ էր մեկնել աստի ի Կ. Պոլսոյ: (Ըմբռնէր քաջ Հոգեւոր Տէրն զդժուարութիւնս եթէ աստ ի Կ. Պոլիս եւ եթէ ի Մայր Աթոռուջ ի Ռուսիա):

Վասն որոյ առաւօտուն փութացեալ եկին յապարանս Մաքսուտեանց եւ համախմբեցան Տ. Պօղոս Արքեպս — Պատրիարքն, Եպիսկոպոսունք, վարդապետք պատուաւորք, աւաղ քահանայք, աղագին երեւելիք, բողոմք յերեսփոխանաց եւ յանդամոց Ազգ. վարչութեան, արտաքին պաշտօնակալք ինչ, լրագրապետք ոմանք, բարեկամք եւ բազմութիւն ժողովրդական (վերջինք ի ներքին յարկի եւ ի պարտիղի ապարանիցն, ի փողոցն եւ այլն):

Յետ տեսակցութեանց եւ փոխադարձ բարեմաղթութեանց, զերրորդ ժամու ել Վեհ. Հայրապետ ի միջին ընդարձակ հիւրասենեկէ ի մեծադիր եւ յընդարձակագոյն սրահ ի նմին իսկ միջնայարկի ընդ Տ. Պօղոս Արքեպս — ի եւ ընդ այլոց ներկայից առ ի տալ ամենեցուն միահամուռս զվերջին ողջոյնս հրաժեշտի եւ զօրհնութիւնս ընդ բարեմաղթութեանցն:

Անդ ընթերցաւ բժշկապետ Բարունակ պէյ Տէրուհիան Ատենա-

պետ Ընդհ. Երեսփ ժողովոյ զուղերձ իմն ի դիմաց Ազգ. ժողովոյ, յորում համառօտեալ քաղաքավարութեամբ դիմաստ գրութեանն ուղղելոյ միջոցաւ Տ. Պօլոս Արքեպս. Պատրիարքի, կրկնեաց զիղձս պաշտօնականս առ ի հետեւել վերաքննութեան Պալատէնիոյ, արդիւնաւորեալ ի գործ եւ պսակեալ զինդիրս Հայոց, գուն գործել ջլատել զվտանգաւոր հոսանս եւ զազգակործան շահատակութիւնս պապականութեան, եւս եւ փոյթ առնել ի Կեդրոնէ ի Ս. Էջմիածնէ եւ հոգալ զկարեւոր բարեկարգութեանց եկեղեցւոյ եւ եկեղեցականաց ըստ խնդրոց ոմանց, եւ զկնի բարեմաղթութեանց կնքեաց զբանսն ինդրեալ զօրհնութիւն Հայրապետական: Առ ի պարզել զպաշտօնական բանս Բարունակ պէյի իբրեւ յարձագանս ընդհ. ժողովոյ, յառաջ բերեմք աստանոր փակազծիւք, զպաշտօնաթուղթ նորա որ ի 20-ն Մարտի, 1867-ի միջոցաւ Ս. Պատրիարքի:

« Յայտ իսկ է բարձր Սրբազնութեան Ձերում (Ս. Պատրիարքի)՝
 « Թէ ի հանդիսաւոր գումարման Ազգ. Երեսփ. Ընդհանուր ժողովոյ
 « Հայոց Տաճկաստանի յաւուր քսաներորդի չորրորդի յամսեանն
 « Դեկտեմբերի յամի հազար ութն հարիւր վաթսուներորդի հինդե-
 « ռորդի, յաղագս ի գործ արկանելոյ զսահմանադրական իրաւունս
 « իւր ի մասնակցութիւն յընտրութեան ընդհանրական Կաթուղի-
 « կոսի ամենայն Հայոց, եղին բանք եւ վասն պալատէնիա անուն
 « կարգադրութեան, որ սահմանեալն էր ի 1836 ի կայսերական կա-
 « ռավարութենէ Ռուսաստանի որպէս բարեկարգ կանոն վարչութեան
 « գործոցն Հայաստանեայց Եկեղեցւոյ:

« Արդ՝ վերոյիշեալ կարգադրութիւնն թէպէտ եւ սահմանեալ ի
 « 1836 ի մեծագոր տէրութենէն Ռուսաց, բայց գոյով յօրինեալ ա-
 « ռանց մասնակցութեան եւ խորհրդակցութեան Ազգիս, այլ միմիայն
 « ի ձեռն անձանց ոմանց որք թերեւս անգիտակից էին օրինաց եւ ա-
 « ւանդութեանց սուրբ եւ ուղղափառ եկեղեցւոյ Հայաստանեայց եւ
 « յաղագս պարունակելոյն յինքեան ինչ ինչ տրամադրութիւնս անհա-
 « մաձայն նախնի հարազատ դրութեան հայրենի սուրբ Եկեղեցւոյս
 « եւ կաթուղիկոսական անկախութեան, եւ ըստ որում կաթուղիկո-
 « սական յանձնաժողովն որ կաղմեցաւ ի վերոյիշատակեալ գումար-
 « մանն, յերկրորդ գումարման Ազգ. Ընդհ. ժողովոյ որ վասն այսր
 « ինդրոյ ի 1866 ի 27 Մայիսի յայտարար տեղեկագրովն զանյարմա-
 « ղութիւն եւ զանհարազատութիւն պալատէնիա կարգադրութեանն,
 « եւ ըստ որում հնդկարնակ ազգայինք մեր գրութեամբ եւ նոյնք
 « այլոց երկրաց (ընդ որս եւ մեք) լուրթեամբ, եւ հոգելոյս Կաթո-
 « ղիկոսունք մեր ներսէս եւ Մատթէոս անդործադրութեամբ՝ ընդ
 « բողոքով արկեալ են զայն կարգադրութիւն, Ազգ. Երեսփ. Ընդհա-

« նուր ժողով Հայոցն Տաճկաստանի միաձայն հաւանութեամբ որոշ-
 « եաց, զի «զկնի ընտրութեան եւ հաստատութեան ընդհանրական կա-
 « քաղիկոսի ամենայն Հայոց խնդրեցի ի նորոյ Հայրապետէն բար-
 « ձուսն եւ փոփոխութիւն այնոցիկ անհարազատ տրամադրութեանց
 « նոյն կարգադրութեան, օրինաւոր եւ արդար եղանակաւ, այսինքն
 « մասնակցութեամբ եւ խորհրդակցութեամբ Հայոց որք ի Տանկաս-
 « տան, ի Ռուսաստան, ի Պարսկաստան, ի Հնդկաստան եւ յայլ տե-
 « ղիս» :

« Եւ արդ՝ զործ ընտրութեան եւ հաստատութեան յաջորդի Սըր-
 « բոյ Աթոռոյ Էջմիածնի աւարտեալ գոլով, Ազգ. Երեսփ. Ընդհանուր
 « ժողով Հայոց Տաճկաստանի առ ի ներկայացուցանել զայս որո-
 « շումն իւր, նաեւ զփափաք Ազգիս վասն ինչ ինչ եկեղեցական բա-
 « րեկարգութեանց, սպասէր երջանիկ աւուր տեսանելոյ ի ծոց իւր
 « զԸնդհանրական Կաթողիկոս եւ Մայրազոյն Պատրիարք զՎեհա-
 « փառ Տ. Տ. Գէորգ սրբազնագոյն Արքեպիսկոպոսն, որ այժմ ի
 « մայրաքաղաքիս է, եւ ընդունելոյ միանգամայն զՀայրապետական
 « օրհնութիւնն ի բերանոյ Նորին Վեհափառութեան, բայց ցայսօր ոչ
 « արժանացաւ այսմ ակնկալեալ բարեմաղթութեանն :

« Վասն որոյ Դիւանս Ազգ. Ընդհ. ժողովոյ լսելով, թէ մերձ է
 « օր ճանապարհորդութեան Նորին Վեհափառութեան ի Ս. Էջմիա-
 « ծին, պարտ անձին վարկանի ոչ եւս սպասել, այլ պաշտօնական զը-
 « բութեամբս փութայ խնդրել խոնարհարար, զի Բարձր Սրբազնու-
 « թիւ Ձեր իբր նախագահ Ազգ. Երեսփ. ժողովոյ Հայոց Տաճկաստա-
 « նի, հաճեցի առաջի առնել Նորին Վեհափառութեան զկարեւոր ո-
 « բոշումն այս, զոր Ընդհ. ժողովն մահու եւ կենաց խնդիր հրո-
 « չակեաց վասն սուրբ եւ ուղղափառ Եկեղեցոյս, եւ ի զիմաց Տաճ-
 « կաստանի Հայոց խնդրել ի Նորին Վեհափառութեանէ, զի յորժամ
 « տայցէ նմա Տէր հասանել ի Ս. Էջմիածին յԱթոռ Սրբոյ Հօրն մերոյ
 « Լուսաւորչի, առաջին զործ կալցի ինքեան ի ձեռս բերել ուստի եւ
 « անկ լինիցի, զօրինաւոր միջոց զործադրութեան այսր որոշման :

« Ընդհանուր ժողովոյ Դիւանս ոչ աւելորդ համարի ի յուշ անել
 « Բարձր Սրբազնութեան Ձերում եւ Ձերով նախագահական միջնոր-
 « դութեամբ՝ Նորին Վեհափառութեան, թէ ըստ վկայութեան ար-
 « ձանագրութեանց Մեծի Սինոդի Սրբոյ Էջմիածնի, արդէն ի քսան
 « ամաց հետէ նախկին փոխարքայք կովկասեան սահմանաց մի զկնի
 « միւսոյ քանիցս գրեալ են առ Հոգելոյս Նախորդս իւր Ներսէս եւ
 « Մատթէոս Կաթողիկոսունս, վասն բարձման եւ փոփոխութեան ինչ
 « ինչ յօղաժոց, այսինքն վասն վերաքննութեան վերոյիշեալ կար-
 « գադրութեանն :

« Հետեւաբար որ եւ է յապաղումն կատարման այս արգաքին « փափաքանաց, համարեսցի այսուհետեւ արգասիք ներքին անփու- « թութեան եւ աղբիւր անմխիթար տրտմութեան: Մնամք եւ այլն»:

Իսկ Նորին Սրբութիւն Վեհ. Հայրապետ պատասխանեալ ուղեր- ձի բժշկապետ Բարունակ պէյի՝ եւ ի տեղեկութիւն ներկայիցն հա- մայնից, գովեաց զբարենախանձ ջանս Երեսփ. Ժողովոյ, խոստացաւ գործել շրջահայեցութեամբ զոր ինչ արժան եւ հնարաւոր իցէ սակս խնդրոյ վերաքննութեան Պալատէնիոյ, եւ յաղագս բարեկարգութեան եկեղեցականաց եւ այլոց, պատուիրեաց լինել հաւատարիմ աւանդա- պահ եւ յաւէտ նախանձախնդիր կարգաց եւ կանոնաց, օրինաց եւ ա- րարողութեանց Ս. Եկեղեցւոյ, զգուշանալ յորոգայթից օտարաց, միանգամայն ապաւինել խնամոց եւ պաշտպանութեան Տեառն Աստ- ծոյ, որում յանձնեաց զԱզգ եւ զԵկեղեցի Հայաստանեայց՝ օրհնեալ զԵրեսփ. Ժողով եւ զներկայս զամենայն, ողջունելով եւ զՊատրիարք Տ. Պօղոս Արքեպս. Թաքթաքեան:

Յետ որոյ հրամայեաց երգել զձանապարհ բարի յլրեւագալէ, եւ յաւարտին ասաց զմաղթանս Տէր ուղղեա՛ զգեացս մեր, եւ այլ ոմն զաղօթն, ապա Պահպանիչ, Հայր մեր:

Աչք ամենեցունս եթէ ուղեւորելոց եւ եթէ ներկայից ծփային յարտասուս եւ բազումք տրտմեալ էին յոյժ յոյժ:

Յաւել Հոգեւոր Տէր օրհնել ի նորոյ զՍիմոն պէյ, զՍեպուհ է- Քէնտի հարազատս եւ զհամայն գերդաստան եւ զպարանս Մաք- սուտեանց, ասաց Մնայք խաղաղութեամբ Տ. Պօղոս Արքայես.—ի եւ այլոց, էջ ի ծովեղբ պարանից, ուր հասեալ յառաջ քան զժամս ինչ մնայր Սիփայէլ անուն շոգենաւն, օրհնեաց զժողովուրդ արտասուս- լից ակամբք, եմուտ ի մակոյկ ընդ Սարգիս Արքեպս.—ի եւ ընդ Զի- նովիէյ՛ զօրապետի եւ ել ի շոգենաւ, ուր եկին հասին համայն ուղե- կիցք, յուղարկաւորք պատուաւորք յաշխարհականաց եւ յեկեղեցա- կանաց, Սիմոն պէյ եւ այլք:

Երրորդեաց եւ չորրորդեաց Նորին Սրբութիւն զօրհնութիւնս իւր եւ զՊահպանիչ առ յուղարկաւորս, առ ժողովուրդս խմբեալ ի ծո- վու եւ ի ցամաքի եւ առ Սիմոն պէյ, եւ արձակեաց զնոսս երթալ ի խաղաղութեան:

Յետ կատարելոյ զխաչահանգիստ (խաչալուսայ, ըստ ոմանց) ի շո- գենաւի, և յետ տալոյ հեղուլ զօրհնեալ ջուր շուրջ զշոգենաւաւ ի ծով, հրամայեաց Վեհ. Հայրապետ նաւապետի տալ զընթացս շոգենաւին, որ եւ էառ զխարիսիս եւ զվեց ժամու ի միջօրէի ել ի ճանապարհ հաս- տատ զնացիւք: Օձապտոյտ ոլորէր շոգենաւն ի Վոսփորեան լճակի,

Հրաժեշտ տայր զեղատեսիլ բլրոց եւ արուարձանաց, սիգաճեմ դիտէր զըջակայս՝ ոստոստեալ ի նոր տեսարանս պէսպիսիս եւ բազմազանս, մինչեւ ելաք ընդ նեղուցն Վոսփորեան եւ մտաք ի Մեծ Լիւմանէ ի Սեաւ Ծովն։ Յայնժամ արձակեաց նաւապետ զշողենաւ լիաշողի ընթացիւք՝ ուղղեալ զգլուխն դէպի ուղիղ ի Բօթի։ Ճախրէր փութայր շողենաւն, պատառէր զծովն եւ կազմէր ի յետուստ, զփրփրադէզ կոհակս ալեաց՝ թողեալ զսպիտակ ուղենշան երկայն։ Գամ քան զգամ հեռանային ցամաք, լերինք եւ այլք։

Արեւ պայծառ ճառագայթէր յերկինս, ծովն խաղաղ քաղցրացուցանէր զուղի մեր։ Միանգամայն բարախէին եւ սիրտք մեր, այլ սակայն առաւել պաշարեալ էր զմեօք տրտմութիւն մեր մինչեւ անփոյթ մնալ զգեղեցիկ տեսարանօք հանդարտ ծովոյ եւ պայծառ եղանակի ցժամս ձիգս։

Ուղեկցէին Վեհ. Հայրապետի մինչեւ ցՄ. Էջմիածին ի դիմաց Պատրիարքարանի Գում Գարուլի եւ Հայոց Թուրքիոյ՝ վարդապետքն Յովհաննէս Սէթեան եւ Խորէն Գալֆայեան եւ պարոնայք Մաղաք Մաղաքեան եւ Յարեթիկ Նէվրուզեան, եւ ի դիմաց Ս. Արքեպիսկոպոսի եւ Պատրիարքին Ս. Երուսաղէմի վարդապետն Սիմէոն Սէֆէրեան փոխանորդ Երուսաղէմական ի Կ. Պոլիս։

Ի հասանել Միքայէլ շողենաւի ի սահմանս Սինոպի, յետ երեսուն ժամուց, սկսաւ ծովն ծփել ի թեթեւ ալիս եւ յուզել զմեզ կրկնակի, այլ ոչ տեւեաց ընդ երկար ժամս։

Թէպէտ Արարատեանն Գողգոթայ առաւել աղղէր մեզ քան զծովն Պոնտոսի, թախծութիւն տրտմութեան առաւել պաշարէր զմեօք եւ յոյզք կրկնակի խորհրդոց խոռվէին զմեզ, բայց ոչ վայելէր մեզ ասել «անցո՛ղբաժակս այս յինէն» եւ թէ «հողիս յօժար է, այլ մարմինս տկար»։ Նուիրական եւ պաշտելի էր յոր դիմէկաք, այլ ոչ էր ազատ եւ պատսպարեալ, եւ ազատութիւնն յորում վարժեալ էինք, թուէր մեզ կորուսանել իսպառ։ Եւ այսպիսի յոյզք մտաց, սրտի եւ զգացմանց յուզէին եւ զմեզ զամենեւին, բաց ի սակաւուց ոմանց։

Զկնի մետասան ժամեայ ծովադնացութեան ի Պէոյլիւֆ Լիւմանէ՝ տեսանէք այլեւս զծով եւ զեթերս, եւ ոչ զայլ ինչ՝ բաց ի շողենաւէ մերմէ։ Այլ միտք մեր եւ աչք հոգւոց երեւակայէին զբաղում ինչ եւ յածէաք յաճախ ի պատմական եւ ի նուիրական վայրս եւ ի հայրենիս՝ կրօնական եւ ազգային։

Իսկ ի միւսմէ կողմանէ ընդհատէր զմտածութիւնս մեր եւ հրապուրէր ծովադնացութիւն դիշերային, յորժամ աստեղք փայլէին յերկինս, լուսին պատկերանայր ի ծովու, եւ ծփայր յերկկողմեան զիծս

եւ յալիս անուոց շողենաւի, որք ձեւացուցանէին զչաւիղս ճաճան-
չաւէտս յօճապտոյտ յերկս եւ ի ծալս, երեւակայէաք տեսանել ի նո-
սին զկաթնուղիկէ Ս. Էջմիածին, զՄասիս, զձիւնազարդ զազաթս
Մասեաց եւ Արազածու, զբարախուն սիրտ Հայոց, զՄայր մեր Հա-
յաստան:

Թեթեւ եւ ախորժելի օդն ծովային աղզէր մեզ զառողջարար ներ-
գործութիւն, յորմէ ոչ էր մեզ յազենալ: Իսկ դւրիինք մրցեալ ընդ շո-
ղենաւի մերուժ ի սրնթացութեան՝ պատճառէին մեզ զբարեջան տը-
պաւորութիւնս ընդ մարդկային ճարտարութեանց եւ հնարազործու-
թեանց: Ի սոյն օրինակս նշմարէաք զկեանս մեր եւ զմրցմունս ի նոր
ասպարիզի ի Գողգոթայն Արարատեան:

Անընդհատ ընթացեալ իբրեւ զվաթսուն ժամ, զվեց ժամու կէս
գիշերոյ, որ ունէր լուսանալ ի ՅՂ Մարտի եւ ուրբաթ աւուր, եհաս
շողենաւն եւ խարսխեաց հանդէպ Բօթի քաղաքի, զառաջեալ ելից
Րիւն գետոյ Իմէրէթիոյ՝ թնդանօթածգութեամբ եւ հրավառութեամբ
նշան տուեալ տիրատեսիլ քաղաքին, մինչեւ ընկալաւ զնշանն փո-
խարէն:

Ընդ արշալոյսն կրկնեալ նաւապետի զնշանս ի շողենաւէ թնդա-
նօթածգութեամբ, յետ սակաւուց եկն փոքրիկ շողենաւ գետազնաց
Պրատեց (եղբայրիկ) անուն, որ փոխադրեաց զՎեհ. Հայրապետ եւ
զհամայն ուղեկիցս ընդ բեռանց ի նաւահանգիստ Բօթլոյ՝ անցեալ
ընդ արհեստական արգելիչ անցս եւ ընդ գետ Գեհոն (Րիոն):

Անդ ի նաւահանգստի Գեր. Տ. Մակար Արքեպս. թեմակալ ա-
ռաջնորդ վիճակին Հայոց Վրաստանի եւ Իմէրէթի ընդ բազմութեան
Հայոց կազմեալ թափօր մնային եւ սպասէին Հոգեւոր Տեսուն:

Զմի ժամու առաւօտեան ել Վեհ. Հայրապետ ի նաւահանգիստ,
ուր ներկայացուցեալ մատուցին Հայք զսովորական աւանդական
զյարգանս զԱղ եւ զՀաց (որպէս եւ ի տան քաղաքապետին), ընդ որ
հաճեալ Նորին Սրբութեան՝ ապա ողջունեաց զՏ. Մակար Արքեպս եւ
զՀայս, եւ եկեալ ի մերձաւորագոյն միայարկ բնակարան (լիւլա)
Մայրո Գրիգոր Պաւլիչ Բիկով քաղաքապետի, ուր պատրաստեալ
էին զօթեանս, եւ էր իբր միակ տուն պատուաւորագոյն, օրհնեաց
զժողովուրդ եւ եմուտ անդր ընդ Մակար Արքեպս—ի եւ ընդ Հրաւի-
րակացն:

Հեռաւոր էր փոքրիկ մատուռ Հայոց եւ ոչ սակաւ անյարմարու-
թիւնք փոշեկից քաղաքին արգելս ետուն կազմութեան եւ կատարման
սովորական եկեղեցական երգեցողութեանց եւ թափօրի հանդերձ սա-
րօքն:

Անդ ի տան ներկայացան Նորին Սրբութեան ի նորոյ պաշտօնեայքն քաղաքականք եւ զինուորականք, Հայք եւ այլք, որպէս մաքսապետ ստակակի սովետնիկ Վասիլի Պոլիկարպիչ Տիմոֆիէվ, մաքսային պաշտօնեայ Նիկողայոս Յ. Տէր - Շմաւոնեանց, գործակատար ուսական շոգենաւաց Սիմոն Գրիստափորիչ Լազարեան, ծովային պաշտօնեայ Մ. Ղորղանեան, փոխ - հիւպատոս Պարսից Յակոբ Վանցեան Ախալցխացի, փոխ - հիւպատոս Օսմանեան Էոմէր էֆէնտի եւ ճարտարապետ նորաշէն նաւահանգստի Նիկողայ Ալէքսանդրովիչ Շուրով, պարզեցին զյարգանս իւրեանց, զուրախութիւնս եւ զչնորհաւորութիւնս ընդ բարեյաջող դալուստ Վեհ. Կաթողիկոսի ամենայն Հայոց ի սահմանս Ռուսիոյ, եւ ընկալեալ զօրհնութիւնս Նորին Վեհափառութեան՝ մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս :

Ի պատասխանի ճառասացութեանց եւ ըզձից Հայոց՝ եթէ ի նաւահանգստի եւ եթէ ի տան համառօտ իմն ատենաբանութեամբ փոխանակեալ զօրհնութիւնս եւ զչնորհակալութիւնս, պատուիրեաց եւ խրախուսեաց Հոգեւոր Տէր զնոսա՝ պարզեալ զիղձս իւր՝ հետեւել ազգային բարեկիրթ դաստիարակութեան, բանալ եւ արդիւնաւորել զծխական եւ զայլ դարոցս, խնամ անել մեծաւ փութով բարեք կըրթութեան եւ զարգացման հայ մանկտոյ ըստ մտաւորականի եւ ըստ բարոյականի, պայծառութեանց Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի, բարձրացման Հայրապետական իշխանութեան, փութալ եւ զարգանալ յարհեստս եւ ի վաճառականութեան, եւ այսպէս յուսալ փրկարար ապագայի՝ պատրաստեալ ի ներկայի :

Ըստ այսմ սկսեալ աստի ի Բօթլոյ՝ պատուիրէր Վեհ. Հայրապետ եւ հրահանգէր զնոյն եւ զհոգեւոր պաշտօնեայս ճանալ ի պայծառութիւն եկեղեցւոյ, փութալ բանալ զբարոցս, արդիւնաւորել զազգային դաստիարակութիւնս եւ զյառաջդիմութիւն, հանդերձ այլովքն, հետեւել ազատ արուեստից, զարդանալ ի բարեպաշտութեան եւ զգուշանալ յօրտար ուսմանց :

Հայք արարին ի գիշերի զլուսավառութիւն ի պատիւ Հոգեւոր Տեանն :

Փոքրիկ քաղաքն Բօթի տակաւ ստանայր զշինութիւն նոր եւ զնշանակութիւն, ջանայր ուսական կառավարութիւն հաստատել ի մերձակայս նորա զնաւահանգիստ ապահով՝ արհեստական իմն վիճօք, եւ կառուցանէր զգործարան եւ զերկաթուղի աստի մինչեւ ցՏփիխս : Ներկայ նաւահանգիստ էր ի ներքս ի դետարերանի, եւ մեծ շոգենաւք մնային արտաքս ի գետոյն եւ փախչէին ի խառնակելն ծովուն :

Միայնակեան եւ տախտակաչէն էին տունք Բօթլոյ: Էր շուկայ փոքրիկ:

Սակաւաթիւ էր գաղթականութիւն Հայոց, որ հազիւ հասանէր ցմի հարիւր յիսուն անձինս, հաւաքեալս ընդ մեծի մասին ի Տրապիզոնէ եւ ի Հայոց Թուրքիոյ: Մեծամասնութիւն գաղթականութեան էր ի բեռնակրաց, սակաւք ոմանք պարապէին յառեւտուրս եւ ի վաճառականութիւն, սակաւաթիւ յոյժ էին որք պարապէին յարքունական ծառայութիւնս, ի քաղաքականի, ի զինուորականի, ի մաքսատան եւ ի գործակատարութեան:

Ունէին Հայք գեկեղեցի փոքրիկ իբր մատուռ եւ զքահանայ մի ժամանակաւոր:

Խոնաւ եւ տենդաբեր օդ Բօթլոյ եւ փոշելից, ոչ նպաստէր ընդարձակութեան քաղաքի եւ բաղմանայոյ գաղթականութեանց: Մանաւանդ տատամսէր վարանէր եւ ոռւս կառավարութիւն ի նպատակսն որ վասն Բօթլոյ:

ԳԼՈՒԽ ԽԹ.

ՅԱՂԱԳՍ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ Ս. ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ի ԲՕԹԻՈՅ ՄԻՆՉԵՒ ՅՏՓԵՒՍ

Էր 1 Ապրիլ ամսոյ՝ յաւուր շարաթու մեկնեցաւ Վեհ. Հայրապետ գտասներորդ ժամու առաւօտեան ի Բօթլայ՝ ողջունեալ եւ օրհնեալ զՀայս հաւաքեալս առաջի բնակարանի, որք հետեւեցան Հոգեւոր Տեառն մինչեւ ցգետային նաւակայան, ուր եւ նստաւ ի շողենաւ:

Ուղեկցէին Նորին Սրբութեան Քաղաքապետ Բօթլոյ, ոմանք պաշտօնեայք քաղաքականք, զինւորականք եւ մաքսայինք, եւ մերազնեայ ներկայացուցիչք՝ երէցփոխք եւ յառաջաւոր Հայք ի քաղաքէ, ի Քութայիսէ եւ ի շրջակայիցն:

Իշխան Բարեաթիմսի շողենաւն փոքրիկ՝ ընդ միոյ պաշտօնէի կացելոյ ի գլխակողմն նաւի՝ չափէր զօճապտոյտ ընթացս ՐԻՆ գետոյ, յեզերս որոյ ասդ եւ անդ երեւէին տախտակաչէն եւ շամբածածկ հիւղակք Մինկրէլեանք ի փոքրիկ եւ ի ցանցառ գիւղօրայս բաղկացեալս յաճախ ի սակաւաթիւ եւ ի կենտացրիւ խրճիթաց, մացառաձեւ ծառաստանք ի տեղիս տեղիս, կանաչազարդ դալարիք, փոքրիկ անտառք եւ պարտէզք ասդ եւ անդ, երթեւեկութիւնք սպիտակագլուխ (գլխանոցաւոր) Վրաց, Ափխազաց, Հաճարաց, Լաղից՝ յաջակողմեան եւ ի ձախակողմեան գետեղբրս եւ ի սահմանս կամ ի կողմանս: Հազիւ ուրեք լսելի լինէին ձայնք եւ ճռուողիւնք թռչնոց՝ սա-

րեկաց եւ այլոց ի մացառս եւ ի դաշտային ծառաստանս փոքունս :
 Ի լիբինս Հաճարեանս երեւէին անտառք մեծամեծք եւ ընդարձակա-
 գոյնք, որք միանային ընդ մեծատարած անտառոցն շրջակայից լի-
 րանց Պաթումայ՝ հեռուորաց եւ մերձաւորաց :

Ի տեղիս տեղիս յընթացս Գեհննի (Րիոնի) ձեւանային կանաչա-
 դարդ թերակղզիք, կղզեակք փոքունք, որք բաժանէին զգետս յեր-
 կուս թեւս անձուկս, որք եւ զժուարացուցանէին սակաւուք զանցս
 նաւի :

Ախորժելի էր գետազնացութիւն մեր, եւ ձկնորսութիւնք Մինկրե-
 լաց ծառափոր նաւաւօքն սովորականօք եւ տձեւ թիաւօք զայթակ-
 ղեցուցանէին զմեզ յաւուրս Մեծ — Պահոց, մանաւանդ զի յանցանել
 չողենաւի մերոյ ձկնորսք ոտնակացք՝ մտեալ ի ջուր ցմէջան եւ զբաղ-
 եալ ի գետուջ՝ ընկերակցութեամբ նաւակաց եւ նաւակայնոց՝ նուի-
 րէին մեզ զձկունս մեծս լոքանմանս եւ զփոքունս, եւ մեք փոխանակ-
 եալ նոցա զնուէրս դրամականս՝ մերթ վերադարձուցանէաք զձկունս
 եւ երբեմն յանձնէաք նաւապետի եւ նաւաստեացն ոռուսզգեաց ի վա-
 յելել : Իսկ մեք ճաշակէաք զհաց յառաւօտու եւ երեկոյի ընդ թէյի,
 եւ ի ճաշու եւ յընթրիս՝ ընդ կարմիր լորոյ : Անփորձութեամբ մե-
 րով մոռացեալ էաք առնուլ ընդ մեզ զձիթապտուղ եւ զայլ պատրաս-
 տութիւնս կարեւորս, պատրեալ եւ կարծեալ, զի լիցի մեզ զտանել
 զայն ամենայն ուր եւ գնայցեմք :

Գողցես զուարճալի տեսարանք եւ գետազնացութիւն այսպիսի
 թեթեւացուցանէին զգլխարութիւնս մեր, մինչեւ եհաս Իշխամ Բար-
 եաթիմսի չողենաւիկ գտասներորդ ժամու ընդ երէկս ի Մարան,
 նոյն եւ յՕրպեր գետափեայ գիւղակ պապականացն վրացոց, յորմէ
 ոչ կարէին չողենաւք ելանել առաւել ի վեր՝ յաղագս անձկութեան եւ
 սակաւութեան ջրոց գետոյ եւ կողմանցս : Էր սուրհանդակական ճա-
 նապարհ արքունական ի Բօթոյ մինչ ցՔութայիս, Իջեւանք, կառք
 եւ իրավարք (ստանցիա եւ այլն), ընդ որս երթեւեկէին նախքան
 զչինութիւն չողենաւոց ուղեւորք, արքունական սուրհանդակք եւ
 պաշտօնեայք, որ երկարէր յոյժ եւ ունէր զգլխարութիւնս ոչ սա-
 կաւս, վասն որոյ փոխադրէին զմեծամեծ անձինս չողենաւօք ի Մա-
 րան, որում մերձ է Քութայիս :

Ել Վեհ. Հայրապետ ի չողենաւէ ընդ անհարթ եւ զառիվեր գե-
 տեզոն ի գիւղակն վրացական, եւ զի զգայր տկարութիւն անձնական,
 ոչ կարէր շարունակել զուղեւորութիւնն ցամաքային, մնաց անդ եւ
 էտու հանդիստ՝ գիշերեալ ի գետնայարկ փոքրիկ տուն իշխանագնուհի
 այրոյ միոյ վրացոյ պապադաւաճի :

Գեր. Տ. Մակար Արքեպս. տնօրինեալ էր կանխաւ եւ հոգացեալ զկարեւոր պատրաստութիւնս ի պէտս Հոգեւոր Տեսուն ի Քութալիս, զիտացեալ, զի անհնար կամ դժուարին յոյժ լիցի մնալ ի Մարան, այլ զի անձնական տկարութիւն Ս. Կաթողիկոսի շփոթեաց զամենայն զտնօրինութիւնս, միանգամայն նուազութիւն ջրոց յամեցոյց զշոգեանան երկու ժամու չափ, եւ հարկն անհրաժեշտ ստիպեաց զիշերել անդ, վասն որոյ պակասէր մեզ եւ բազմութիւն ուղեւորաց եւ ուղեկցաց ջորարեկ հաց անգամ, թող զայլ պէտս կենսական, զքուն եւ զհանգիստ զիշերային:

Ի յաջորդ աւուր ի կիւրակէի զերկրորդ ժամու առաւօտեան մեկնեցաւ Վեհ. Հայրապետ ի Մարանէ կառօք եւ ընդ բազմութեան ուղեւորաց: Եւ տուեալ փոխել զձիակառաց յիջեւանն Կոպիթնար զՅ Յ/4 ժամու անմիջապէս շարունակեաց զուղին:

Յետ երկից ժամուց ուղեւորութեան յորժամ եհաս նորին Սրբութիւն ի դուռն քաղաքին Քութալիսու, եւ ահա Հայք տեղւոյն ընդ առաջնորդութեամբ միակ քահանայի իւրեանց՝ Դաւթի Եարալեանց, հանդէս եւ թափօր եկեղեցական կազմեալ մնային ընդ սակաւաթիւ դպրոցական մանկանց շապկադրեստից, զիմաւորեցին զՎեհ. Հայրապետ, մատուցին զԱզ եւ զՀաց (սոյնպէս ի տան), ընթերցան զճառ եւ առին զօրհնութիւն հայրապետական: Ապա հանդարտազնաց ուղեցաւ թափօրն եւ եմուտ ի քաղաք: Ի մերձեանայն Ս. եկեղեցի սկըսան զպիրք երգել զՀրաշափառ, եւ ի մտանելն ի Ս. եկեղեցի՝ զՈւրալս լեր, Սուրբ Եկեղեցի (նոյնպէս յամենայն տեղիս երգէին): Վեհ. Հայրապետ առեալ զշուրջառ եւ ի ձեռսն զխաչ եւ զգաւազան, դրօշակք հայրապետականք եւ շաթիրք յառաջընթաց էին, եւ եմուտ ընդ ամպհովանեալ Ս. եկեղեցի, սաղմոսեաց զսոլորական աղօթս (Սաղմոս Ուրալս եղէ ես ոյժ ասէին ցիս ի տուն Տեսուն), լուաւ զճառ Դաւթ աւաղ քահանայի Եարալեանց, որուն պատասխանեալ հանդերձ շնորհակալութեամբ՝ խրախուսեաց եւ օրհնեաց զժողովուրդ իւր սիրելի, զոր թարգմանէր Եարալեանց ի վրացերէն, ըստ որում վրացախօս էին Հայք Քութալիսու, Կոուոյ եւ մեծի մասին զիւղօրէից Վրաստանի եւ Իմէրէթի: Յետ ասելոյ զՊանկայանիչ եւ զՀայր մեր՝ ել Վեհ. Հայրապետ յեկեղեցւոյ եւ եկն ի մերձակայ տուն երէցփոխան Օհան աղայի, առն պատուականի եւ բարեպաշտի, որ հիւրասիրեաց ըստ արժանւոյն, այլ պահքն նեղէր զմեզ եւ շատանայաք մրգօք եւ թէյիւ:

Անդ ներկայացան ի նորոյ Հայք Վեհ. Հայրապետի, եկին նահանգապետ Ալեքսանդր Ադոլին, գաւառապետ Իվան Էֆիմովսկի, քաղաքապետ եւ պաշտօնեայք նշանաւորք քաղաքականք եւ զինուորա-

կանք ի Հայոց, ի Ռուսաց եւ ի Վրաց, նահանգական ազնուապետ իշխան Նեստոր Յէրէտէլի, նախագահ նահանգ. դատարանի Նիկողոս Ղայթմազեանց, անդամ Լուկա Իւվարլով, ժանդարմ. գնդապետ Ստեփան Լարինսկի, երկրաչափ գնդապետ Կարլ Գոգիմէյստէր, ուտրիկանապետ Գրաֆ Սիմոնովիչ, եւ առեալ զհայրապետական զօրհանութիւնս. հանդերձ շնորհակալութեամբ մեկնեցան յիւրաքանչիւր բնակարանս :

(Թուի մեզ սխալել յարձանագրութիւնս մի ուղեւորականս սակս անուան հիւրընկալ տանուտեան, որ էր եղբայր հոչակաւոր ան Յովհաննու Յոնանեանց Մոսկացւոյ, եւ պարտի լինել Աղեքսանդր Յոնանեանց, որոյ կին Վարդուհի (Ռոզա) էր ի տանէ եւ ի դասերաց Դաւիթ Սաւալանեանի Զմիւռնիացւոյ : Ընկերանայր առեւտրական եւ վաճառականական գործոց եղբոր իւրոյ, կառավարէր զմեծատարած կալուածան զորս գնեալ էին ի մերձակայս Քութայիսու) :

Օդ եւ ջուր Քութայիսու էր բարեխառն, վաճառականութիւն միջակ, արհեստաւորք սակաւաթիւք, եւ մեծագոյն մասն բնակչաց էր ի վրաց : Գաղթականութիւն Հայոց բաղկանայր իբր յ200 տանց ընդ պանդխտոց, ընդ միոյ եկեղեցւոյ, եթէ ոչ վրիպիմք ի յիշողութենէ, կորուսեալ գոլով զոչ սակաւ հատակտոր թուղթան տեղեկագրութեան եւ վիճակագրութեան մերոյ :

Յարալեանց քահանայ էր այր հմուտ, եռանդուն, բանիբուն, գործունեայ, յաջողակ ի բան եւ ի գործ, այլ արբեցող, միանգամայն այրիացեալ գոլով՝ դառնայր առիթ գայթակղութեանց եւ դժգոհութեանց ժողովրդեան : Վարէր նա զպաշտօն եկեղեցական գործակալութեան կողմանցն :

Զգուշութեամբ իմն պատուիրեաց Վեհ. Հայրապետ դադարել յառաքելոյ զհայ մանկունս յօտար դպրոցս, ջանալ տարածել զհայախօսութիւն եւ ազգային զգացմունս, յետեւել յաւէտ եւ ըստ ամենայնի բարեկարգութեան եւ արգիւնարերութեան տեղական ազգային դըպրոցի եւ հայկական կրթութեան, ընդ որ հրճուէր յոյժ եւ մխիթարէր ժողովուրդն պատուական :

Համաձայն կառավարական կարգադրութեանց (Մարչրութ - ուղեւորական տնօրինութիւնք պաշտօնականք) սակս ճանապարհորդութեան եւ երիվարաց իջեանաց (ստանցիա)՝ զորս կրկնապատկեալ էին, հարկ էր շարունակել զուղին, թէպէտ զգայր Հոգեւոր Տէր զանձնական տկարութիւն թեթեւ :

Վասն որոյ յՅն Ապրիլ ամսոյ, յետ օրհնելոյ Վեհ. Հայրապետի զհիւրընկալս իւր զԱղեքսանդր եւ գտիկին նորա զՎարդուհի Յոնան-

եանց, եւ զՀայս զժողովուրդը իւր սիրելի, փոխանակեալ եւ զայցելութիւնս որոց արժան էր՝ առաքեալ ի դիմաց իւրոց զՄակար եւ զՍարգիս Արքեպիսկոպոստոնս առ նահանգապետ եւ այլն, մեկնեցաւ կառօք ի Բուլթայիսէ զչորրորդ ժամու առաւօտեան, եւ առ ի փոխել զերիվարս կառայ հանդիպեալ իջեւանացս վիրարնակ եւ մինկրէլարնակ Սիմոնէքի ի 6-րդ ժամու, Գուլիլիի դիւղօրէից յոթերորդ ժամու եւ յառաջին պահու գիշերոյ էր ժամ մի՝ անցեալ ընդ դժուարին եւ լեռնային ուղիս՝ եհաս եւ գիշերեաց յիջեւանն Պելլախոր գեղջ:

Հայ բնակիչք Չլխար եւ Սաչլխար գիւղօրէից ընդ քահանայի իւրեանց ի մասնալիճակէ Բուլթայիսու գիմաւորեալ եւ ուղեկցեալ Նորին Վեհափառութեան հոգեւտնչ իմն ջերմեռանդութեամբ եւ սրտեռանդ փափաքանօք՝ մինչեւ ցՊելլախոր՝ արժանացան հայրապետական օրհնութեանց եւ խրախուսանաց: Տրտմէին՝ յորժամ խնայեալ նոցա հրամայէր Ս. Հայրապետ վերադառնալ ի շէնս իւրեանց ի կիսոյ ճա նապարհէ:

Ի յաջորդ աւուր զկէս ժամու առաւօտեան՝ մեկնեալ ի Պէլլախորէ՝ բարձրացեալ էանց ընդ իջեւանս Սուրամեան լերին՝ Մովիք յ2 1/2-րդ ժամու, Պոլլոսք (կէս - իջեւան), ուր փութացեալ եկեալ էին քահանայք եւ Հայք Սուրամու ընդ առաջ Հոգեւոր Տեառն, եւ անդի եհաս իբր զմիջաւորք ի ժամ 6 ի ծալա անուն իջեւան Սուրամ գեղջ Հայոց եւ Վրաց: Անդ առաջի իջեւանի Յովսէփ աւ. քահ. Առիւծեանց կանխեալ եւ կազմեալ զհանդէս եկեղեցական ընդ դպրոցական մանկանց եւ ընդ բազմութեան Հայոց՝ արանց եւ կանանց՝ գիմաւորեաց զՎեհ. Հայրապետ երգովք շարականաց եւ ոգեւորութեամբ մեծաւ, որ եւ Վեհ. Հայրապետ օրհնեաց զնոսս զամենեսին՝ խաչակնքեալ եւ յանձնեալ պաշտպանութեան ամենակալ Աջոյ Տեառն Աստոյ:

Ոչ կամեցաւ Նորին Սրբութիւն շարունակել զուղին, հաճեցաւ ընդ Սուրամեցիս յաւել խօսել նոցա զբանս խրատականս եւ զպատուէրս, քննեաց զդպրոցական մանկունս հայազնեայս, հաւանեցաւ ընդ բարեոք կրթութիւնս եւ յաջողութիւնս նոցա, եւ օրհնեաց զնոսս:

Եկին հասին անդր ի Սուրամ Տ. Գրիգոր Շուշտակ Եպս. Սաղիսեանց, Յաջորդ (առաջնորդական փոխանորդ) Ախալցխայու ընդ ոմանց քահանայից եւ հայ իշխանացն ի քաղաքէ եւ ի գիւղօրէից վիճակին, առ ի դիմաւորել զՎեհ. Հայրապետ Ազգիս խորին յարգանօք, եւ աւրին զօրհնութիւնս Հայրապետականս՝ ըստ արժանւոյն ներկայացեալ եւ մատուցեալ ի համբոյր Ս. Աջոյ Հոգեւոր Տեառն համաձայն եկեղեցական կարգի եւ սովորութեան:

Համախմբեալ էին անդ ի Սուրամ եւ հասին հետզհետէ քահա-

նայք եւ հայ ժողովուրդք մերձակայ հայաբնակ գիւղօրէից վիճակամասին Կոռւայ առ ի դիմաւորել եւ ուղեկցել Նորին Սրբութեան, որ եւ տեսեալ զնոսա՝ խանդաղատանօք իմն դուրգուրայր ի վերայ նոցա, խօսակցէր ընդ նոսա հանդերձ թարգմանօք, խրատէր, մխիթարէր եւ ոգեւորէր զնոսա, յորոց առնոյր եւ ինքն զմխիթարութիւն ոչ սակաւ :

Սուրամ գիւղ հաստատեալ է ի Սուրամեան լեռնամէջս, եւ առ ճանապարհաւ արքունական, յորմէ բաժանէին ուղեգիծք Թիֆլիզու եւ դաւառին Ախալցխայու, եւ ի մի կողմն հարաւոյ ունէին լերինք զթանձրախիտ եւ բազմատարած անտառս բարձրաբերձ ծառօք կաղնեաց եւ այլոց, յորս էին հռչակաւոր վայրքն՝ Ապասթուման եւ Պորժոմ՝ ամառանոցք օդասունք եւ ջրառատք ընդ հանրաշքեմկաց :

Բարեխառն էր օդ Սուրամու : Հասանէր անդ թիւ տանց Հայոց մինչեւ ցերկու հարիւր յիսուն, ըստ մեծի մասին զուրկ մայրենի լեզուէ : Էին Հայոց եկեղեցի եւ դպրոց ծխական սակա արականաց :

Յետ գիշերելոյ Վեհ. Հայրապետի յիջեւանն ձայայի ի յաջորդ աւուր ի Ծն ամսոյ զերկոտասաներորդ ժամու առաւօտեան մեկնեցաւ անդի ուղեկցութեամբ ոգեւորեալ եւ ջերմեռանդ բազմութեան Հայոց Սուրամու եւ մերձակայ գիւղօրէիցն վիճակին Կոռւայ : Վեհ. Հայրապետ օրհնեալ զնոսա՝ անձակէր զնոսա ի սահմանէ ի սահման վերադառնալ յիւրաքանչիւր գիւղս եւ ի բնակարանս :

Այսպէս վարէր Նորին Սրբութիւն յամենայն ճանապարհօրդութիւնս իւր եւ կարեկցէր ժողովրդեան : Սովորութիւն է Հայոց մատուցանել զաղ եւ զհաց ի դիմաւորելն զնշանաւոր անձինս, որպէս առնէին Հոգեւոր Տեսոն իւրեանց զոյգ ընդ եկեղեցական հանդիսի :

Արդ՝ անցեալ ընդ իջեւանն Կոմի եւ Կրուլիս, եհաս Նորին Սրբութիւն յեթներորդ ժամու միջօրէի ի գետեզրն Կոռւոյ (Գորւոյ), ուր համախմբեալ էին Հայք եւ մատուցին զաղ եւ զհաց՝ դիմաւորեալ զՎեհ. Հայրապետ մեծաւ պատուով եւ ոգեւորութեամբ :

Յետ որոյ էանց Հոգեւոր Տէր լաստափայտիւ զարդարելով ընդ գետն Կռւռ եւ եմուռ ի քաղաքն Կոռի : Գնաց հանդիսիւ եկեղեցականաւ եւ մեծաշուք թափօրով յաւազ եկեղեցի Հայոց երգովք շարականաց, աղօթեաց, լուաւ զգեղեցիկ ուղերձ լեզուազէտ եւ գիտնական Գրիգոր Շուշտակ վարդապետի Աղափիրեան Յաջորդի Կոռւոյ, եւ թարգմանութեամբ ուսումնասէր Ստեփաննոս աւազ քահանայի Տէր — Ստեփաննոսեան Գորեցւոյ : Ոսեցաւ Վեհ. Հայրապետ զխրատական եւ զմխիթարական բանս ժողովրդեան իւրում սիրելւոյ սակա ուսման եւ կրթութեան, Հայ ազգութեան եւ կրօնի, եւ օրհնեալ զնոսա՝ ել

յեկեղեցւոյ եւ հաճեցաւ հիւրընկալել ի տան Պ. Աղեքսանդրի Ալի-խանեանց, ուր ընկալաւ դայցելութիւնս եւ զչնորհաւորութիւնս նահանգապետի, գաւառապետի եւ քաղաքապետի Կոռույ, նշանաւոր պաշտօնէից զինւորականաց եւ քաղաքականաց ի Հայոց, ի Ռուսաց եւ ի Վրաց՝ յետ ներկայացուցանելոյ Գրիգոր վարդ—ի զբաճանայս եկեղեցեաց եւ զմեծամեծս Հայոց Կոռեցոց :

Ըստ հրամանի Վեհ. Հայրապետի բերին զաշակերտս դպրոցաց Հայոց, եւ հաւանեցաւ յոյժ ընդ յառաջագէժ զարդացմանս մանկանց :

Իսկ մեք շրջէաք յայցելութիւնս եկեղեցեաց, հնոյ բերդի, դպրոցական շինուածոց եւ կարեւոր վայրաց գետեզերեայ քաղաքին փոքու :

Գլխաւոր բնակիչք Կոռուայ էին Վրացիք, ապա Հայք, եւ այլք ի սակաւաթիւ Ռուսաց եւ յայլոց :

Թիւք տանց Հայոց բաղկանային իբր 800 — 1000—ից, որչափ ներեն յիշել միտք իմ՝ կորուսեալ գորով զհատակոտոր տեղագրութիւնս իմ եւ զվիճակազրութիւնս :

Պոնաւ էր օդ Կոռուայ, թէեւ ոչ վատառողջ իսպառ :

Փոքրիկ էր շուկայ Կոռուայ, արհեստաւորք սակաւաթիւք, վաճառականութիւն չնչին, երկրագործութիւն աննշան, եւ այլն :

Գովելի էր հիւրասիրութիւն Պ. Աղեքսանդրի Ալիխանեանց Կոռեցոյ :

Ի Թ—ն Ապրիլի ել Վեհ. Հայրապետ ի Կոռուայ զերեք եւ կէս ժամու առաւօտեան՝ անցեալ ընդ աջակողմ կոյս գետոյ, եւ բազմութեամբ ուղեկցաց եւ ժողովրդեան, ընդ ոմանս պաշտօնեայս քաղաքականս, շարունակեաց զուղին, փոխեալ զձիս կառաց յիջեւանսն փոքր Ալիալ-փալաֆու (Կոռուայ գաւառի), Նիջալիսի, եւ եհաս ընդ երէկս ի մետասաներորդ ժամու յիջեւանն Մխեթայ կամ Մծխեթայ յեզեր Կոռու գետոյ ի ձախակողմն, մերձ աւանին Մծխեթայ երբեմն մայրաքաղաքի վրաց առ մեծի ճանապարհաւ Կովկասեան լեռանց (Վլատիկաւկաս քաղաքի) :

Հաւաքեալ մնային անդ ի Մխեթն նշանաւոր Հայազգիք եւ ներկայացուցիչք ոռու. կառավարութեան ի Տիխեաց, ընդ որս տեսակցեցաւ Վեհ. Հայրապետ ըստ քաղաքավարական կարգի, եւ ապա էառ հանդիստ գիշերային :

Ի գիշերի ստուարացեալ էր բազմութիւն Հայոց աստի եւ անդի, մանաւանդ ի Թիֆլիզէ, ընդ որս էին արհեստապետք (առնափապետք ըստ թիֆլիզցոց), հանդերձ դրօշակօք իւրեանց :

Վաղ քան ընդ առաւօտ դարձուցեալ ի քնոյ եւ ըմպեալ զսովորական թէյ, էր ժամ առաւօտեան երեք եւ կէս՝ յԴ-ն Ապրիլի, ի տօնի Աւետեաց, ել Վեհ. Հայրապետ յունդի ուղեկցութեամբ բաղմութեան Հայոց, կառաւորաց, ձիաւորաց, հայազգն դրօշակաւոր արհեստագետաց, հայազգի եւ օտարազգի պաշտօնական անձանց եւ այլոց:

Գամ քան զգամ ստուարանայր բաղմութիւն ընդառաջելոց եւ ուղեկցելոց Հայոց: Ոգեւորութիւն մեծ էր ի նոսա եւ ցնծութիւն բերկրապատուր: Թնդացուցանէին յաճախ զօղս Կեցցէ՛ Հոգեւոր Տէր աղաղակելով:

Ի միջօրէի էր ժամ վեց եւ կէս, եհաս եւ եմուտ Վեհ. Հայրապետ ի Տփլիս:

Ի մերձենայն վանուց, ուր է Վեհարան եւ Առաջնորդարան, յաջակողմեան եզերս Կուռ դետոյ, եւ ահա թափօր մեծ եւ եկեղեցական կազմեալ չքեղ իմն հանդիսի մնայր ընդ բաղմախուռն ժողովրդեան, մինչեւ դժուարանալ փոխել զոտ եթէ ի փողոցս, եթէ ի դաւթի վանուց եւ եթէ ի յեկեղեցուջ ի բաղմութենէ երկսեռ Հայոց, թո՛ղ զխոնեալս ի հայազնեաց ի տունս հանդիպակացս ի հարաւակողմն:

Ել Վեհ. Հայրապետ ի կառաց, էսո զշուրջառ ի թիկունս, զխաչ եւ զգաւազան ի ձեռսս, զորս մատոյց Տ. Մակար Արքեպ., որ կանխեալ էր դալ ի Թիֆլիզ առ ի պատրաստել զհանդէսն, եւ կացեալ ի գլուխ հանդիսի շուրջառեալ՝ դիմաւորել այսպէս զՎեհ. Հայրապետ, որ եմուտ ընդ ամպշտփանեաւ հայրապետականաւ, եւ սկսաւ թափօրն սիզաճէմ, եթէ ոչ ասացից դժուարին իմն ոտնափոխութեամբ ի բաղմութենէ ժողովրդեան, յառաջանալ երդովք շարականաց, եւ մտանել ի վանս եւ ի Ս. Աստուածածին աւագ եկեղեցի: Ժխոր եւ աղաղակ ժողովրդեան բարձրացեալ էր յերկինս, եւ ձիաւոր եւ հետեւակ զինւորք, ոստիկանք (ժանդարմայք) եւ խաղախք դժուարանային պաշտպանել զբարեկարգութիւն:

Ձկնի մտանելոյ ի Ս. եկեղեցի եւ յետ սովորական աղօթից Հոգեւոր Տեառն կացեալ Տ. Մակար Արք. թեմակալի յատենի եւ առաջի Նորին Սրբութեան, խօսեցաւ ի բերան զուղերձ շնորհաւորական ի դրարառ, եւ պարզեաց զուրախակցութիւն իւր եւ ժողովրդեան ընդ բարեմաղթութեանց:

Առ որ պատասխանեալ Նորին Սրբութեան ըստ յարմարութեան եւ պատշաճի, օրհնեաց զամենեւին ի Տէր եւ յանձնեաց խնամոց եւ պաշտպանութեան Աստծոյ: Բարեմաղթեաց վասն Օգոստ. Աղեքսանդր Կայսեր եւ սակս նորին բարձրութեան կայսերազուն դքսի եւ փոխարքայ Միքայէլ իշխանի, ասաց զՊահպանիչ: Եւ ելեալ յեկե-

ղեցւոյ՝ բարձրացաւ եւ եմուտ ի վեհարան ի վանս, որպէս յատկացեալ գորով ի բնակութիւն Կաթուղիկոսաց ի գալն նոցա ի Թիֆլիզ:

Անմիջապէս ընկալաւ անդ յիւր ներկայութիւն զնշանաւոր դասս հայագեաց, զբարձրատիճան պաշտօնեայս եւ զերկուս պաշտօնեայս արքունականս՝ մին իշխան Օրպէլեանի՝ ի զիմաց Օգոստ. Կայսեր, եւ միւսն բարոն Նիկոլայի՝ ի զիմաց մեծ իշխան փոխարքայի, որք շնորհաւորէին զշնորհաբեր մուտ Նորին Սրբութեան յերկիրն Ռուսիոյ եւ ի Տփիսիս: Որոց փոխանակեալ Նորին Սրբութիւն զշնորհակալութիւն, զօրհնութիւն եւ զողջոյն, արձակեաց ի խաղաղութիւն:

Ապա առանձնացաւ Հոգեւոր Տէր եւ էառ հանգիստ սակս տկարութեան անձին իւրոյ:

ԳԼՈՒԽ Ծ.

ՅԱՂԱԳՍ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆՑ, ՏԵՍԱԿՑՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՆՑԻՑ ՈՄԱՆՑ Ի ՏՓՆԻՍ

Շարունակէին ներկայացմունք, այցելութիւնք եւ պաշտօնական տեսակցութիւնք ի յաջորդ եւ հետագայ աւուրս գալստեան Նորին Սրբութեան ի Թիֆլիզ:

Հայք կարօտայլիւր եւ ջերմեռանդութեամբ զիմէին ի համբոյր Ս. Աջոյ Վեհ. Հայրապետի, եւ զեղուին զորդիական զգացմունս եւ զսէր իւրեանց, եւ արժանանային սրղեսէր զուրբօրանաց, խանդաղատանաց եւ օրհնութեանց Հոգեւոր Տեառն հանդերձ խրատուք եւ խրախուսանօք: Ըստ իւրաքանչիւր կարգի, աստիճանաց, պաշտօնից, պարտաւորութեանց, զրից եւ յարմարութեանց թելագրէր Նորին Սրբութիւն զոր ինչ արժան համարէր արհեստապետաց, փաճառականաց, փաստարանից, զբամատեարց, ազգային խմբադրաց եւ լրագրապետաց, ազնուականաց, հաստիթսոից, զինուորական եւ քաղաքական պաշտօնէից, միանգամայն ներկայացուցչաց համօրէն ամենայն գատակարգի ժողովրդեան:

Ի շարաթ աւուր յՏն Ապրիլի Տ. Մակար Արքեպօ. համաձայն սովորութեան եւ ըստ Հայրապետական պատուիրանի ներկայացոյց Հոգեւոր Տեառն զհամայն քահանայս (70 - 75) 25 - 28 եկեղեցեաց քաղաքի, եւ սպա առանձին զանգամ թեմական Ատեմի (կոնսիստորիա) եւ զպաշտօնայս զիւսանատան, որոց ուղղեաց Նորին Սրբութիւն զկարեւոր պատուէրս, զխրատս, զհրահանգս եւ զագղարարութիւնս (սովիւ ամբաստանութեանց եղելոց ընդգէմ ոմանց):

Լուսթեամբ իմն դիտէր Վեհ. Հայրապետ զամենայն ամբաստանութիւնս զոմանց քահանայից եւ զպաշտօնէից եկեղեցեաց, զանդամոց Թեմ. Ատենի, զատենադպրէ եւ զքարտուղարաց դիւանատան, քննէր խնամով զինչդիրս ժողովրդեան եւ զազերսագիրս, եւ տնօրինէր զարժանն, յանձնեալ Թեմակալ — Առաջնորդի կամ Թողեալ յանձնել Սինոդի ի ներկայութեան իւրում գալ կարգադրել զկարեւոր վըճիոս կամ զբացառութիւնս :

Տեղային եւ անստորագիր ամբաստանութիւնք, եւ յաճախութիւնք զրպարտութեանց եւ ստութեանց կորուսանէին զարժէս ոմանց արգարացի դիտողութեանց, թէպէտ յաջողէին դէթ ըստ մասնեայ պղտորել զմիտս նախապաշարմամբ, եւ ազդել զկասկածանս :

Յաւուր կիւրակէի Մաղկապարդի (ԵՅ-ն Ապրիլի) էջ Նորին Սըբութիւն ի Ս. Եկեղեցի վանաց ի ճաշու — ի Ս. Պատարագի, որ առանձին յառաւօտեան ժամերգութենէ կատարէր ըստ հնոյ եւ իսկական սովորութեան Հայաստանեայց Եկեղեցիս Հայոց ի Ռուսաստան, մինչ կից ընդ առաւօտեան ժամերգութեան կատարի ճաշու ժամ եւ Ս. Պատարագ ի Թորքիա :

Ոչ բաւէին Ս. Աստուածածնի եկեղեցի եւ դաւիթ վանուց խուռն բաղմութեան ժողովրդեան եւ այսպէս շարունակէր խոնէր յառաւօտս եւ յերեկոյի յԱւագ Ուրբաթու, ի Զատիի եւ ի Կիւրակէի Ս. Յարութեան մինչեւ մեկնեցաւ Նորին Սըբութիւն ի Թիֆլիզէ :

Որոշեալ էր տալ ի նմին աւուր զպաշտօնական զառաջին այցելութիւն Հայրապետական առ Միքայէլ մեծ դուքս Նիկոլայ յեմիլի փոխարքայ Կովկասու, եւ եղեւ այսպէս :

Մերձ ի կէսօր եկն պետական պատուիրակ զօրապետ Վասիլի Զինովիէվ ի վեհարան՝ բերեալ զփոխարքայական կառս ի պատիւ Ս. Հայրապետի : Նորին Վեհափառութիւն, նստեալ ի նոյն կառս ընդ Զինովիէվ զօրապետի, դնաց ի պալատն փոխարքայական : Հայրապետական դրօշակք եւ դրօշակակիր վեղարաւորք յառաջէին, նստեալ յերկւարս, որպէս եւ շաթիրք յառաջընթացք : Իսկ Տ. Մակար եւ Սարգիս Արքեպիսկոպոսունք, Յովհաննէս Եպիսկոպոս Ռշտունի, վարդապետքն Պետրոս Տէր — Ստեփանեան (Վեհապետեան), Յովհաննէս Սէթեան, Սիմէոն Սէֆէրեան, Խորէն Գալֆայեան, Ստեփան Սանտալճեան, Գրիգոր Մուշեղեան եւ Սուքիաս Պարզեան, աւագ քահանայք ոմանք, պարոնայք Մաղաք Մաղաքեան եւ Յակոբիկ Նէմրուդեան հետեւէին Հոգեւոր Տեառն նստեալ ի կառս :

Ի հասանել Նորին Սըբութեան ի դուռն պալատան պաշտօնեայք նշանաւորք զիմաստրեցին եւ առաջնորդեցին Հոգեւոր Տեառն ի մեծ

սրահն ընդունելութեան պալատան, ուր յոտնկայս համախմբեալ էին ի միալար զիծ շուրջանակի Հայ, Ռուս, Վրացի եւ Մահմէդական պաշտօնեայք առաջնակարգ եթէ քաղաքականք եւ եթէ զինուորականք՝ զարդարեալ ալ եւ ալ շքանշանօք եւ համազգեստիւք պաշտօնակա-նօք: Ի ճակատու երկարութեան սրահին եւ ի հարաւակողմն երկրորդ դրան մերձ յանկին կախեալ կայր զորմէ մեծադիր եւ շքեղազարդ պատկեր Աղեքսանդր Բ. Կայսեր Նիկոլայեվիչի, եւ յերկուս կողմանս կենդանադրի էին սեղանք երկու, յաջակողմանն ետեալ էին հրօ-ւարտակ վաւերացման Կաթուղիկոսութեան եւ շքանշանն Աղեքսանդր Նեւալցուոյ ընդ կայսերական հրովարտակին:

Ի մտանել Հոգեւոր Տեառն ընդ հետեւորդացն ի մեծ սրահն ընդ սովորական դուռն արեւմտեան եմուտ եւ Միքայէլ մեծ իշխան փոխ-արքայ պաշտօնական համահանդերձիւք եւ շքանշանօք ի սրահ անդր ընդ դուռն հարաւային, եւ դիմաւորեցին զիրեար:

Յողջունել Նորին Սրբութեան զփոխարքայն Միքայէլ, նա խո-նարհեալ համբուրեաց զս. Աջն Հայրապետական: *)

Յետ փոքու միջոցի փոխադարձ ներկայացմանց, շնորհաւորեալ փոխարքայի զկաթուղիկոսական պաշտօն, զշքանշան Աղեքսանդրի հանդերձ բարեմաղթութեամբք, իբր ի դիմաց Կայսեր առեալ ի սե-ղանոյ զհրովարտակն կաթուղիկոսութեան եւ զշքանշան Աղեքսանդրի Նեւալցուոյ՝ յանձնեաց Վեհ. Հայրապետի, եւ այսպէս աւարտեցաւ այս արարողութիւն:

Ձկնի այսր հրաւիրեալ տարաւ Մեծ Դուքս զՀոգեւոր Տէր յառան-ձին ընդունարան իւր, եցոյց զյարգանս արժանաւորս եւ զհիւրասի-րութիւն: Խօսեցան ընդ միմեանս իբր ժամ մի, սակս ճանապարհոր-դութեան եւ յաղագս դրից Թիֆլիզու եւ կողմանցն, վեր ի վերոյ բա-նիւք: Յորժամ կամէր մեկնել Նորին Սրբութիւն, ինդրեաց Մեծ Իշ-խան Փոխարքայ եւ տարաւ զՀոգեւոր Տէր առ Օլիա իշխանուհի տի-կին իւր, որպէսզի օրհնեցէ զնա եւ զզաւակունսն: Ձոր եւ կատար-եալ՝ վերադարձաւ Վեհ. Հայրապետ ընդ հետեւորդացն եւ ընդ հրա-ւիրակ Ձինովիէվ զօրապետի փոխարքայական կառօք ի վեհարան ի վանսն:

Դնեմք աստ մի զկնի միոյ զպատճէնս հրովարտակացն կայսերա-

*) Ըստ ռուսական սովորութեան խաչակնքեաց Հոգեւոր Տէր ի վերայ Փոխար-քայի եւ ի վերայ բարձրաստիճան պաշտօնէից՝ համբուրելով եւ գնակատս ի համ-բուրելն անց զԱջ Նորին Սրբութեան:

կանաց որ վասն կաթողիկոսութեան եւ սակս շքանշանի Աղեքսանդրի Նեվադալոյ (Նէվաքլոյ) :

ՀՐՈՎԱՐՏԱԿ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

« Արազահաս Ողորմութեամբն Աստուծոյ

« Մենք Աղեքսանդր Երկրորդ

« Կայսր եւ ինքնակալ ամենայն Ռուսաց, Մոսկուայ, Քիէվի,
 « Վլադիմիրայ, Նովկորոդի, Արքայ Ղազանու, Արքայ Աստերլա-
 « նայ, Արքայ Լեհաստանի, Արքայ Սիպերիոյ, Արքայ Քէրսոնէսի
 « եւ Տավրիկիոյ, Արքայ Վրաստանի, Թազաւոր Պսկովու եւ Մեծ իշ-
 « խան Սմոլենսկայ, Լիդովսկայ, Վոլինսկի, Փողոլսկի եւ Ֆինլան-
 « դիոյ, իշխան Էսթլանտիոյ, Քուրլանտիոյ եւ Սեմիոնեչսկի, Պելոս-
 « տոկայ, Քարելսկայ, Տվերսկայ, Իւկորսկայ, Փերմսկայ, Քատըս-
 « կայ, Պուլղարաց եւ ալոյց, Թազաւոր եւ Մեծ իշխան Նովակորոտի,
 « Նիչովեան երկրի, Չեռնիքովայ, Րիազանու, Փոլոդսկայ, Քոն-
 « դիյսկայ, Վիթեպսկայ, Մոտիսլաւայ, եւ համայն Հիւսիսային կող-
 « մանց հրամանատու, եւ Թազաւոր Իպէրիոյ, Քարթալինի, եւ Քա-
 « պարտիոյ եւ Նահանգին Հայոց (Երեւանայ), Չերքէզաց եւ Լեոնա-
 « կան իշխանաց եւ ալոյց, ժառանգական Թազաւոր եւ Տիրող, Ժա-
 « ռանգ Նորվեկիոյ, Գուքս Շլէզվիկ - Հոլշթէյնի, Մբարմատնայի
 « Անթամարսենայ եւ Օլտենպուրկի, եւ ալն, եւ ալն, եւ ալն :

« Յարդ լիցի համօրէն Ազգի Հայաստանեայց, զի լուեալ զմիա-
 « հաւան ցանկութիւն, զոր յայտ արար նա հանդիսաբար ի Սբ. Էջ-
 « միածին յեօթներորդի *) անդ աւուր ամսեանն Սեպտեմբերի ներ-
 « կայ այսր ամի հազարերորդի ութհարիւրերորդի վաթսուներորդի
 « վեցերորդի, հաստատեմք միք յաստիճան անդ Պատրիարքութեան
 « սրբոյ Էջմիածնի եւ Կաթողիկոսութեան Ամենայն Հայոց զնախկին
 « Պատրիարքն Կոստանդնուպոլսոյ եւ զԱրքեպիսկոպոսն Պրոսպալու
 « զՏէր Գէորգ :

« Ամենաբարձրեալն Աստուած օրհնեսցէ զՄայրազոյն Պա-
 « տրիարքն ի պաշտօն ծառայութեան, որ մեծ է առաջի Տեառն, առ
 « ի բարօրութիւն եւ ի փրկութիւն համօրէն Հայկազանց սիրեցելոցն
 « առ ի մէնջ :

« Տուաւ յաթոռանիստ քաղաքն մեծ Փեթերպուրկ, յամի Տիառն

*) Պարտի լիմել 17, երէ ոչ իցէ սխալ քարգմանի: Մոռացեալ եմք զշտի ընդ իսկակամի:

« 1866, ի քսաներորդի երրորդի առուր ամսեանն Նոյեմբերի, որ ամ « երկոտասաներորդ է մերումս թագաւորութեան :

ԱՂԵՔՍԱՆԴՐ

« Նախարար ներքին գործոց Սթաթս. — Սեքրետար Վալուեվ » :

Իսպառ նորօրինակ եւ եզական է շքեղազարդ ձեռնակար շրջազիծ հրովարտակիւս ախորիկ, յորում գծագրեալ են հայկական նշանք, Մասիս, Էջմիածին, Ս. Առաքեալքն եւ առաջին լուսաւորիչք թաղէոս եւ Բարթողղիմէոս, Ս. Գրիգոր երկրորդ Լուսաւորիչ Հայաստանեայց, Ս. Հայրապետն Սահակ եւ Ս. Մեսրոպ Առաջին թարգմանիչք՝ ի ռուսական ձեւս եւ ի նկարս եթէ ըստ կերպարանաց, եթէ ըստ զգեստաց եւ եթէ ըստ այլոց սարագայից :

ՀՐՈՎԱՐՏԱԿ ՇՔԱՆՇԱՆԻ

Առ Ծայրագոյն Պատրիարք Սրբոյ Էջմիածնի եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց Գէորգ

« Ի հաւատքս մտերմութեան մերոյ առ Ազգն Հայաստանեայց, « որ ընտրեացն զՁեզ ի Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ա- « մենայն Հայոց, որպէս եւ ի նշան մերումս առ Ձեզ սեփական եւ ա- « ռանձին բարեհաճութեան, համակցորդ առնեմք զՁեզ ի կայսերա- « կան ասպետութեան Սուրբ եւ բարեպաշտ Մեծի Դքսի Աղեքսանդրի « Նեվացոյ, զորոյ զնշանական առաքելով ընդ սմին՝ մնամք Ձեզ « կայսերական Մերովս շնորհիւ բարեացակամ

ԱՂԵՔՍԱՆԴՐ

Տուեալ եւ այլն :

Յետ աննոյ Հոգեւոր Տեառն զհանգիստ սակաւ ինչ, դնաց եւ վճարեաց ընդ Զինովիէվի զփոխադարձ այցելութիւնս առ իշխան Օրպելեանի (վրացի), առ լեհագղի Առլովսկի նահանգապետ Տփիսեաց, առ բարոն Նիկոլայի (գերմանացի), կառավարիչ գլխաւոր կառավարութեան Կովկասեան Փոխարքայութեան (ըստ քաղաքականի), եւ առ զօրասպետ Կարցով, օգնական Փոխարքայի եւ գլխաւոր կառավարիչ զինուորական գործոց Կովկասու, եւ վերադարձաւ ի վանս փոխարքայական կառօք :

Իսկ ի 11-ն ամսոյ յԱւագ Երեքշաբթեոջ զմիջաւորբ եկն Միքայէլ Մեծ Դուքս փոխարքայ եւ վճարեաց զփոխադարձ այցելութիւն իւր առ Վեհ Հայրապետ՝ առանց զեկուցանելոյ կանխաւ : Եւ յետ տե-

սակցելոյ եւ ընկալնլոյ զարժանաւոր յարգանս, յորժամ կամէր վերադառնալ, Հոգեւոր Տէր տարաւ զնա ի Ս. Եկեղեցի, ուր կատարեաց զյատուկ մաղքանս արտաքոյ ի սովորակամ ցուցակէ վասն Կայսեր Ռուսաց եւ վասն Փոխարքայի շքեղ իմն հանդիսիւ, ափ յափոյ տեսեալ զկարեւոր պատրաստութիւնս :

Եւ զի նուիրական աւուրք էին Աւագ շարաթու եւ Ս. Զատիկի, ոչ եւ Հոգեւոր Տէր զայցելութիւն ումեք, ոչ եւ արտաքս ի վանաց, ըստ պատշաճի էջ ի Ս. Եկեղեցի սկսեալ յօրէ Աւագ Հինգշարաթու, եւ ներկայութեամբ իւրով եթէ փառաւորեաց զհանդէսս եւ զարարողութիւնս եւ եթէ մխրթարեաց զժողովուրդ, որ անխափան փութայր յաճախէր յԵկեղեցի յանշափ, մինչեւ ոչ գտանել զտեղի յԵկեղեցւոջ եւ յընդարձակ բակի վանաց : Դժուարութիւն մեծ էր եւ Եկեղեցականաց յերթեւեկէն յԵկեղեցի :

Կատարեալ զտօն Ս. Յարութեան մեծահանդէս փառաւորութեամբ եւ սրտաշարժ երգեցողութեամբ, ընկալաւ Վեհ. Հայրապետ յիւր ներկայութիւն զկնի աւարտման Ս. Պատարազի զեպիսկոպոսունս, զվարդապետս, զաւագ քահանայս, զնշանաւոր հայազգիս, զպաշտօնեայս զինուորականս եւ քաղաքականս ի Հայոց, ի Ռուսաց եւ ի Վրաց, զներկայացուցիչս արհեստապետաց եւ արհեստաւորաց եւ ամենայն դասու ժողովրդեան, եւ զղպրոցական եւ զկրթական պաշտօնեայս, որոց շնորհաւորեաց զՍ. Զատիկ հանդերձ բարեմաղթութեամբք ըստ իւրաքանչիւր աստիճանաց, կարգի եւ արժանեաց, եւ օրհնեալ զնոսա զամենեսին՝ արձակեաց վայելել ըստ կարգի եւ ըստ տեղական սովորութեան զսեղանն, զոր ետ պատրաստել Տ. Մակար Արքեպս., եւ ըմպէին զգինիս վասն կենաց Հոգեւոր Տեառն, վասն Կայսեր եւ Փոխարքայի եւ վասն այլոց : Եւ ապա երթային յիւրաքանչիւր բնակարանս կամ շրջէին ի Զատիկական շնորհաւորութիւնս եւ մասնակցէին կեցցեից գինիօք եւ շամպանեայիւք, զոր համարեմք սովորութիւն աննախանձելի եւ վնասակար :

Յետ այսորիկ զմիջաւորք ի նմին իսկ աւուր գնաց Վեհ. Հայրապետն ի շնորհաւորել զՍ. Զատիկ Մեծ Իշխան Փոխարքային Կովկասու : Ի յաջորդ աւուր ի Մեռելոցի Զատիկի, ի 17-ն Ապրիլի կատարեալ զմեծահանդէս մաղթանս առթիւ տարեդարձի ծննդեան Օգոստ. Կայսեր Ռուսաց Աղեքսանդրի, ընկալաւ եւ մեծարեաց զհրաւէր Փոխարքայի եւ մասնակցեցաւ պաշտօնական ընթրեաց ի պալատան Մեծ Իշխանի ի պատիւ Կայսեր ընդ Մակար եւ Սարգիս Արքեպիսկոպոսաց, ընդ Յովհաննէս Եպ. Ռշտունւոյ Առաջնորդ Կարուց եւ ընդ Խորէն վարդ. Գալֆայեան : Ըստ սովորութեան ներկայ էին յընթրիսք բա-

դում պաշտօնեայք նշանաւորք եւ բարձրաստիճանք ի զինուորականաց եւ ի քաղաքականաց :

Ի 19-ն Ապրիլի փոխանակեաց Մեծ Իշխան Փոխարքայն զչնորհաւորութիւն Զատկական առ Վեհ . Հայրապետ :

Նորին Սրբութիւն նախ քան զմեկնելն ի Տիփլիսաց , զնաց յատկապէս առ Մեծ Իշխան փոխարքայ ի 22-ն Ապրիլ ամսոյ յաւոր շաբաթու , եւ խօսեցաւ ընդ նմա եւ խնդրեաց օգնել ինքեան սակս վերաքըննութեան Պալատէնիոյ 1836-ի , յարգել զազատութիւնս իւր եւ զիրաւունս սակս յարաբերութեանց որ ընդ արտաքին աշխարհաց եւ անձանց , միանգամայն յաղազս վարչութեան կամ կառավարութեան Ս . Էջմիածնի եւ վիճակաց Ռուսաստանեայց եւ ընդ Առաջնորդաց :

Սոստացաւ Փոխարքայն զկատարեալ բարեկամութիւն եւ զօգնութիւն համաձայն խնդրանաց Նորին Սրբութեան յամենայնի եւ ըստ ամենայնի , յաւելեալ միանգամայն , զի ի զիմաց ռուսական կառավարութեան չիք արգել ինչ ընդ վերաքննութիւն Պալատէնիոյ , ընդ ազատ յարաբերութիւնս կաթողիկոսականս եւ ընդ կատարումն վարչական պարտաւորութեանց : Ընդ որ մեծապէս ուրախացաւ Հոգեւոր Տէր լիայոյս ակնկալութեամբք , մանաւանդ զի խոստմունքն այնոքիկ համաձայնեալ ընդ բանից դեսպանին Կ . Պոլսոյ Պ . Իկնաթիէվի՝ ներշնչէին Նորին Սրբութեան զկատարեալ վստահութիւնս մինչեւ կարծել բացարձակապէս անկեղծ եւ արդար լինել ռուսական դիւանագիտութեան եւ կառավարութեան :

Փոխարքայ Միքայէլ Մեծ Դուքս հնարիւք իմն ձեւացուցեալ զբարեպաշտութիւն՝ աղաչէր զՀոգեւոր Տէր առնուլ ընդ փոյթ զօծումն կաթողիկոսական , եւ յաւելոյր յայտնել զփափաք անձամբ ներկայ եւ ականատես լինել հանդիսի եւ արարողութեան օծման : Եւ Հոգեւոր Տէր խորին իմն միամտութեամբ հրաւիրէր զնա ի Ս . Էջմիածին , պատուել իւրով ներկայութեամբ զհանդէսն օծման եւ զՀայս եւ այլն , ոչ իմացեալ զիսկական միտս Նորին Կայսերական Բարձրութեան :

Ի 22-ն ամսոյ յաւոր Նոր – Կիւրակէի ետ Մեծ Իշխան փոխարքայ ընդ երէկս զտասաներորդ ժամու ի նորոյ զյատուկ ընթրիս հրապուրիչս ի պատիւ Վեհ . Հայրապետի , հրաւիրեալ զՍարգիս եւ զՄակար Արքեպիսկոպոսունս , զՊետրոս , Յովհաննէս , Սիմէոն , Ստեփան , Սորէն եւ զԳրիգոր (Մուշեղեան) վարդապետս , զպարոնայս Մաղաքիա եւ Յակոբիկ , զԶինովիէվ զօրապետ , եւ զբազմաթիւ պաշտօնեայս առաջնակարգս եւ զնշանաւորս ի Հայազգեաց , ի Ռուսաց , ի Վրաց , ի Լեհաց եւ ի Պարսից : Ի ժամ ընթրեաց նուագէին պարբերա-

բար արքունական զինուորական նուագածուք: Կեանքի թնդացուցանէին զմեծ սրահն ընդունելութեան փոխարքայական պալատան:

Համեմատեալ զընթրիսը ընդ իշխանական ընթրեաց Օսմանցւոց, ըստ գինեաց եւ արբեցութեան ծանրանայր առաւելութիւնն կամ դերազանցութիւնն ի կողմն ուսաց, իսկ ըստ տեսական եւ քանակութեան կերակրոց, խմորեղինաց, անուշեղինաց եւ պտղոց, ընդ մաքրութեան ծանրանայր դերազանցութիւնն ի կողմն Օսմանցւոց:

Թողցո՛ւք զայս:

Եկն ժամանակ բարեպատեհ այցելելոյ եկեղեցեաց եւ դպրոցաց Հայոց: Վասն որոյ ի 24-ն ամսոյն յաջակողմն Կոռն դետոյ, եւ ի 25 Ապրիլի ի ձախակողմն այցելեաց Վեհ. Հայրապետ Ս. Եկեղեցեաց, Ներսիսեան Դպրանոցի եւ այլոց ծխական դպրոցաց Հայոց ի Մողնի, ի Հաւլարար, եւ յայլ տեղիս: Ուղեկցէին Նորին Սրբութեան Տ. Մակար եւ Սարգիս Արքեպիսկոպոստնք, վարդապետք, աւագ քահանայք, եւ անձինք ոմանք պատուաւորք ի Հայոց, հոգաբարձուք, երէցփոխանք, որպիսիք ըստ անձնիւր եկեղեցւոյն եկեալ ի ծխական եկեղեցիս եւ ի դպրոցս՝ զխմաւորէին զՀոգեւոր Տէր ըստ արժանաւորն կարգի եւ յարգալիւր ընդունելութեամբք:

Տեսեալ զանյարմարութիւնս ինչ, զփոշիս եւ զանմաքրութիւնս յոմանս եկեղեցիս եւ սեղանս մանաւանդ՝ վշտացաւ Վեհ. Հայրապետ եւ պատուիրեաց զգուշանալ, միանգամայն արգելուլ ժամարար – պատարազիչ քահանայից երթալ եւ ննջել յանձնիւր տունս յաւուրս ժամարարութեան, շինել փութով զժամարարատունս ի բակս եկեղեցեաց, կարգել զհերթակալութիւնս հանդերձ այլովքն: Հրամայեաց բազմապատկել զծխական դպրոցս ի պէտս երկուց սեռից յարտաքին սրահս (բակ) կամ առնթեր եկեղեցեաց իւրաքանչիւրոց եթէ ի քաղաքի եւ եթէ ի համայն վիճակի:

Հաւանեցաւ յոյժ ընդ կրթական մասն Ներսիսեան Դպրանոցի վերակազմելոյ:

Համաձայն խնդրանաց եւ հրաւիրանաց Մեծ Իշխան փոխարքայի ի 26 եւ ի 27-ն Ապրիլի յաւուր Չորեքշաբաթու եւ Հինգշաբաթու դնաց Վեհ. Հայրապետ յայցելութիւնս արքունական դպրոցաց երկուց սեռից, վարժարանաց եւ կիսավարժարանաց (գիմնազիա եւ պրոգիմնազիա), Նունեան օրիորդաց վարժարանի գտանելոյ ընդ պաշտպանութեամբ փոխարքայուհւոյ, ոմանց նշանաւոր հաստատութեանց (գինարանի, թնդանօթարանի), եւ Սիօն անուանեալ աւագ եկեղեցւոյ ուսաց՝ առանց հանդիպելոյ ուսական եպիսկոպոսի:

Ոչ գտաւ գոհացուցիչ ըհայ ազգի աշակերտս՝ եւ զուսանողս ի պետական վարժարանս ի կրօնական ուսմունս եւ ի մայրենի լեզուով: Այս առթիւ եւ ըստ թեւադրութեան Փոխարքայի ջան կալաւ Երեմիա զօրավար Արծրունի (հայր Գրիգոր եւ Անդրէաս Արծրունեոյ) համոզել զՎեհ. Հայրապետ, որ եւ նուիրեաց զտարեկան գումարս հինգ հարիւրական (500) ուրբեաց ի նպաստ նունեան վարժարանի առ ի կրթել զերկուս հայուհիս: Ասէր Արծրունի, զի ոչ է պարտ խնայել զհաւ՝ ուստի գայ սագ (գագ կէլէն եէրտէն՝ քաւուգ Կտերկէնմէգ): Սիրէր եւ պատուէր Հոգեւոր Տէր զԱրծրունին, եւ ահամայ կամօք կատարեաց զառաջարկութիւն նորա: Չամս ինչ վճարեաց վիճակն Տփլսեաց զայս գումար իբր ի տուգանս առանց առնլոյ դէթ զչնչին փոխարինութիւն:

Հարկ է յաւելուլ աստանօր եւ արձանադրել, զի Միքայէլ Մեծ Իշխան ի տեսակցութիւնսն յարմարէր զբանսն եւ յայտնէր զգեղոհոթիւնս զՄակար Արքեպիսկոպոսէ եւ զձեռնասուն աշակերտէ նորա զՍուքիաս Արքեպիսկոպոսէ Պարզեանց, իբր զի միանան ընդ հայ երիտասարդս ոչ բարեմիտս եւ խրախուսեն զնոսս ի հակառակութիւնս ընդ դէմ ուսական կառավարութեան: Պախարակէր զըպրանոցն Ներսիսեան եւ զուղղութիւն նորա: Փափաքէր, զի հեռանային Տ. Մակար Արքեպս. եւ Սուքիաս Արքեպս ի Տփլսեաց:

Եւ ի միւսէ կողմանէ Տ. Սարգիս Արքեպս. եւ կուսակիցք իւր զբզոյէին զժողովուրդ ընդ դէմ Տ. Մակար Արք. -ի, յերկրէին զամբաստանութիւնս եւ ջանային յուղել զխոտովութիւնս: Թողցուք յիշել զյաճախատեղաց զանստորագիր նամականի: Այլ ի նանիր վաստակէին՝ անհիմն լեալ ըստ բազում մասանց, բաց ի չափազանց յանդըզնութեանց Սուքիասայ Արքեպսի, զոր սիրէր կենսադիրս:

Սարգիս Արք. կեղծէր զվիշտ եւ զարտասուս, իբր զի Մակար Արք. տուեալ է ծեփել զյիշատակարն իւր որ ի ճակատու վեհարանի, եւ զի իբր ինքն Ջալալեան շինեալ էր ամբողջութեամբ եւ ի հիմանէ զվեհարան - առաջնորդարան վանուցդ, մինչ նա փակեալ յառաջոյ զընդարձակ դատիկոն զպալքոնաձեւ սրահ վերնայարկի որ յերկարութիւն շինուածոյ յարեւմտից կուսէ՝ կազմեալ է զմի սենեակ ի վերայ կուռ գետոյ, զընդարձակ սրահ (սոֆա) եւ զնախասենեակ մտից դրան կից առանձին զանդակատան Եկեղեցւոյ: Ուստի սխալ էր եւ աւելորդարանութիւն պարունակութիւն յիշատակարանի:

Իսկ Վեհ. Հայրապետ ոչ հաւանէր առնել զփոփոխութիւն ինչ, խոստանայր զիտել եւ քննել առժամս, փորձել եւ ըստ այնմ տնօրինել զարժանն յապագային: Մանաւանդ յարգէր զՄակար Արք. եւ զխո-

հեմութիւն նորա : Միանգամայն զգուշացոյց զՏ. Մակար Արք. եւ զՍուքիաս Արեղայ եւ պատուիրեաց վերջնոյն հեռանալ ի գրգռութեանց եւ յերիտասարդական անփորձութեանց, եւ խոստացաւ տալ նմա զառանձին ասպարէզ գործունէութեան յայլում վիճակամասի, եւ այսու ըստ մասնեայ շահել եւ զսիրտ Փոխարքայի :

Ոչ դադարէր Ջալալեան ընդ արժանաւոր արբանեակի իւրում Նիկողայոսի Յովսէփեան Աշտարակեցոյ թարգմանի Սինոդի, զորպիսի պաշտօն վարէր վերջինն առնթեր Վեհ. Հայրապետի, տարածայնէր միանգամայն ի զաղանի զգրգռիչ եւ զգայթակղեցուցիչ բանահիւսութիւնս եւ զգրպարտութիւնս ընդդէմ Հոգեւոր Տեսուն եթէ բանիւ բերանոյ եւ եթէ անստորագիր կամ կեղծեալ նամակօք ի Թիֆլիզ եւ ի ճանապարհի, սկսեալ ի Կ. Պոլսոյ, որպէս համառօտեցաք այլուր :

Համբերութեամբ մեծաւ հսկէր Վեհ. Հայրապետ, հետեւել յորդորել եւ շահել զամենեսին եւ բերել յուղղութիւն եւ ի կարգ :

Ոչ աւելորդ համարեցի արձանագրել աստ եւ զբարի զործ առնուրումն Ղարապաղցոյ Աստուածատուր անուն, նամակացրուիչ պաշտօնեայ արքունական սուրհանդակատան Տփիսեաց : Նախքան զմեկնել մեր ի Թիֆլիզէ, յաւուր միում, մինչ երգէր կենսագիրս գերզն Բարեաւ երթ ի մէնջ, Հայր՝ ուղղեալ յանուն Նորին Սրբութեան Վեհ. Հայրապետի Ազգիս Հայոց աստ ի Կ. Պոլիս, երբ զնամականի եւ այլն, լուաւ զոր երգէաք մեղմ ձայնիւ եւ յառանձին սենեկի որ մերձ ի նախագլուռն վեհարանի, եւ զի բերեալ էր զնամակ եւ յանուն մեր, զգածեալ արտասուեաց եւ խնդրեաց տալ ինքեան զօրինակ մի : Եւ կենսագիրս ետ նմա զթերթս ինչ ի տպագրելոցն, որոց արդիւնք նուիրեալ էին ի նպաստ Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցի եւ տի - Գուլէի Կ. Պոլսոյ, ընթերցաւ զերզն եւ առեալ զբացատրութիւնս՝ յայտնեաց զիղձս նուիրաբեր լինելոյ, եւ յանձնեաց զմի վիճակաւոր բաժնեթուղթ ի ուսական ներքին փոխառութեանց՝ խնդրեալ հասուցանել ի նպաստ եւ ի նուէր Ս. Փրկչեան Ազգ. Հիւանդանոցի : Օրհնեաց Հոգեւոր Տէր զայդ բարենախանձ՝ կատարեալ եւ զիղձս նորա : Յետ ամաց ինչ շահեցաւ բաժնեթուղթն այն զ5000 ուուրի (իբր 600 ոսկի Օսմանեան), եթէ ոչ վրիպիմք ի յիշողութենէ :

ԳԼՈՒԽ ԾԱ.

ՅԱՂԱԳՍ ՈՒՂԵՒՈՐԵԼՈՅ Ս. ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ Ի ՏՓԽԵԱՑ
ՄԻՆՁԵՒ ՅՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ

Փոյթ մեծ էր Վեհ. Հայրապետի երթալ հասանել ի Ս. Էջմիածին

եւ անդէն ձեռն ի գործ արկանել, ընդ որ թելադրէր եւ ռուսական կառավարութիւն, եւ միամտաբար հաւատայր Հոգեւոր Տէր ըղձին վերջնոյն: Ունէր եւ ինքն զներքին պատճառ:

Վասն որոյ յետ վճարելոյ Հոգեւոր Տեսոն փոխադարձ այցելութիւնս, զպաշտօնական տեսակցութիւնս եւ զընդունելութիւնս, եւ զայցելութիւնս հրաժեշտի որոց արժան եւ հարկ անհրաժեշտ էր, որպէս եւ նոքա եւ Հայք եւ այլք փութային գունդագունդ յերթայթ բարեաւ, պատրաստեցաւ ուղւոյ լինել յաւուր Հինդչաբաթու ի 4-ն Մայիսի:

Էր ժամ հինգ, իւր ի միջօրէի, էջ Ս. Հայրապետ ի Ս. Եկեղեցի, աղօթեաց, օրհնեաց զժողովուրդ եւ ել յուղի կառօք ուղեկցութեամբ Արքեպիսկոպոսաց, վարդապետաց, պատուիրակ – ուղեկցացն թուրքիոյ, աւադ քահանայից, նշանաւոր ազգայնոց, ոմանց պաշտօնէից եւ ներկայացուցչաց արքունականաց, դրօշակաւոր արհեստապետաց եւ բազմախուռն բազմութեան ժողովրդեան Հայոց:

Յետ միոյ ժամու, հասեալ մերձ ի Կրծանիս արուարձանս՝ պատուեաց Նորին Սրբութիւն զճաշ զպատրաստեալն ի Հայազգի մեծամեծաց ոմանց յայդուջ ուրեք:

Ապա, յիններորդ ժամու շարունակեաց Հոգեւոր Տէր զճանապարհ իւր եւ գտասաներորդ ժամու եհաս յիջեւանն Սաղանլը, յորմէ արձակեաց զժողովուրդ իւր սիրելի, զարհեստապետս, զներկայացուցիչս եւ զնշանաւոր անձինս, զմեծամեծս Հայոց հանդերձ օրհնութեամբ եւ շնորհակալութեամբ: Ել ի ճանապարհ եւ եհաս յիջեւանն Կոդայու ընդ երէկս ի մետասաներորդ ժամու, ուր եւ գիշերեաց:

Զիններորդ ժամու առաւօտեան մեկնեալ ի Կոդայէ՝ զկնի միոյ ժամու եհաս Վեհ. Հայրապետ յիջեւանն Սարվան, զերկոտասաներորդ ժամու առաւօտեան յիջեւանն Մուղանլու, ուր եւ պատուեաց զնախաճաշ զպատրաստեալն ի քահանայից եւ ի Հայոց Շուլավէրու ի համանուն վիճակաբաժնէ Տփիսեաց, որք, որպէս եւ քահանայք եւ Հայք մերձաւոր գիւղօրէից կողմանցն յիւրաքանչիւր սահմանս յարմարաւորս՝ դիմաւորեալ ուղեկցէին, դիմաւորեցին զՎեհ. Հայրապետ, ըստ սովորական կարգի, ոչ մոռացեալ զհաց եւ զաղ, միանդաման ուղեկցեցան եւ առին զօրհնութիւն Հայրապետական: Ի չորրորդ ժամու առաւօտեան մեկնեցաւ Նորին Սրբութիւն ի Մուղանլուէ, զկնի միոյ ժամու եհաս յիջեւանն Կոտրած Կամրջոյ առ Կուռ դետով յաջակողմն, ընդ երէկս զինն ժամու եկեալ յիջեւանն Սալախլու, ուր

եւ գիշերեաց՝ պատուեալ զպատրաստութիւնս եւ զընթրիս ջերմեանդ Հայոց որ ի Կողբացուոց եւ յայլոց գիւղօրէից ի վիճակաբաժնէն Ղազարսու (Տփխեաց), օրհնեաց զնոսս եւ անդ ազաւ զգիշերն :

Ի յաջորդ շաբաթ աւուր, ի 6-ն Մայիսի, զինն եւ կէս ժամու առաւօտեան, մեկնեալ Ս. Հայրապետ ի Սալահլուէ՝ եհաս ի մետասաներորդ ժամու ի փոքրիկ իջեւանն Շուչարաք, երկոտասաներորդ ժամու յիջեւանն Աղստեւու (Ախտաֆա, ըստ գործածականին) առ Աղստեւ գետակով, յաջակողմն ի բարձրաւանդակի, ուր էառ հանգիստ իբր քառորդս երիս : Եւ ապա շարունակեալ զուղին՝ եմուտ ի մացառոտ եւ ի վտանդաւոր սահմանս Ղազարսու, եհաս գերկրորդ ժամու յիջեւանն Չախսախսիու (որ եւ Ուզունթալա), անտի զհինգ եւ կէս ժամու մերձ ի կէս օր ի գեղեցիկ եւ յօղասուն իջեւանն Քարվանսարայ գեղջ Հայոց ի լանջս անտառախիտ լերանց, ի միջավայրի զուարճալի եւ ախորժելի, կանաչազարդ եւ անտառախիտ ձորոյ եւ նեղուցի Տէլիճանի : Պատուեաց անդ զճաշ զպատրաստեալն ի բարեպաշտ Հայոց Քարվանսարայի, Սեւ Քարի, Սաչաջուրի, Ուզունթալայի եւ Աշխի, եւ օրհնեաց զնոսս : Գիշերեաց անդ Նորին Սրբութիւն՝ ախորժեալ ի Քարվանսարայէ եւ ի գրիցն :

Որպէս յամենայն տեղիս առնէր Նորին Սրբութիւն, հրաւիրեալ զքահանայս եւ զժողովուրդ ի ներկայութեան իւր՝ խօսակցէր ընդ նոսս, հարցանէր զտեղեկութիւնս ներքինս եւ արտաքինս, խրատէր եւ յորդորէր զնոսս յեկեղեցասիրութիւն, յուսումնասիրութիւն, ի բարեպաշտութիւն, յազգասիրութիւն եւ ի ներքին ներգաշնակութիւնս, տալով եւ զհրահանգս կարեւորս եւ զպատուէրս օգտակարս, ընդ որս ոգեւորեալ Հայոց՝ ուրախ լինէին եւ մխիթարէին յոյժ :

Յ7-ն Մայիսի, յաւուր Կիւրակէի, ել Վեհ. Հայրապետ զտասաներորդ ժամու առաւօտեան ի Քարվանսարայէ : Քաջ երիտասարդք Հայոց Ղազարսու որպէս յերէկի, նոյնպէս այսօր շարունակէին զքաջավարժ ճիւղաղս եւ զգիննաշարժութիւնս, եւ առաւել զրաւէին զհամակրութիւնս եւ զգովեստս մեր զինուորական փորձառութեամբք իւրեանց եւ կրթութեամբ յայնպիսիս անձուկ վայրս եւ ի ձորուղիս, զորպիսիս տեսանմք յետ այսորիկ ի բազում տեղիս ի Հայոց, մանաւանդ ի հայաշատ վայրս, յԱրարատեան, ի Սիւնեաց աշխարհս եւ յայլս :

Ի մետասաներորդ եւ կէս ժամու հասեալ ի գետեղբերայ եւ ի զուարճատեսիլ իջեւանն Զուրաստան, որ ունէր զխոնարհագոյն դիրս ի լեռնաձորակի եւ յօճապտոյտ նեղուցի Տէլիճանու, յետ սակաւուց մեկնեցաւ եւ անտի Հոգեւոր Տէր եւ սկսաւ ուղի մեր բարձրանալ ի զառիվերս նորաչէն խճուղոյ առ օճապտոյտ եզերք գետոյ եւ նեղու-

ցի: Չմի եւ կէս ժամու առաւօտեան եկն Հոգեւոր Տէր ի կից իջեալնն Տէլիքան դեղջ առ ստորոտով համանուն գլխաւոր դագաթան լերին, ուր ըստ սովորական կարգի հնչէր զանգակ եկեղեցւոյ, համախմբեալ էին քահանայք եւ երգեցիկ մանկունք եւ Հայք ի նոյն գեղջէ եւ ի շրջակայիցն՝ ուղեկցեալ եւ ի ճանապարհի: Հաճեցաւ Հոգեւոր Տէր օրհնել անդ զճաշ զպատրաստեալն ի Գրիգոր երեցփոխանէ եկեղեցւոյ տեղոյս: Ի չորրորդ ժամու ելեալ եւ անտի ընդ ոլորապտոյտ խճուղի ճարտարաշէն՝ բարձրացաւ ի դագաթն Տէլիճանու, ուր հաստատեալ է Սէմէոնովկա նորաշէն դիւղ զաղթական գերմանաց (նէմէջ ըստ ռուսաց), ի սահմանի նահանգացն Տիխեաց եւ Երեւանու, սկսաւ իջանել ի վայր եւ եօթներորդ ժամու եհաս յիջեալնն Զբուխու մերձ համանուն հայաբնակ գեղջ առ հիւսիս – արեւմտեան եզերք Ծովուն Գեղամայ, նոյն եւ Սեւանայ անապատի: Անդ գիշերեաց նորին Սըրբութիւն:

Ի սահմանի Երեւանայ ի դագաթան Տէլիճանու ելին ընդ առաջ Հոգեւոր Տեառն Հայք նոր – Պայազիտու, Զբուխուի, Գոմաճորոյ եւ այլոց մերձակայ գիւղօրէից, ընդ որս նաեւ ռուս օգնական նահանգապետին Երեւանայ ընդ դաշտային ոստիկանապետի:

Տ. Մկրտիչ Եպ. փոխ – Թեմակալ Երեւանայ, Հայք եւ միաբանք Անապատի Սեւանայ, Ստեփան արեղայ Մխիթարեան Աղեքսանդրապոլեցի քարոզիչ – գործակալ վիճակարածնին նոր – Պայազիտու եւ այլ վարդապետք ոմանք եւ քահանայք միացեալ ընդ հոգեւոր հանդիսի գեղջն Զբուխուի, եւ առաջի իջեալնի, դիմաւորեցին զՎեհ. Հայրապետ խորին յարգանօք եւ երգովք շարականաց:

Եթէ ոչ լինէր Ծովակն Սեւանայ, դիւրատեսիլ համարէաք զվայրն իջեալնի եւ շրջակայ շղթայս լերանց Ծաղկաճորոյ – Գեղարքունւոյ:

ՅՏն Մայիսի զմետասաներորդ ժամու առաւօտեան մեկնեցաւ Վեհ. Հայրապետ ի Զբուխուէ եւ օգնութեամբ Հայոց անցեալ ընդ վտանգաւոր ճանապարհն ելեւէջաւոր եւ ոլորուն առ Ծովակաւ, եհաս ի ծովեզերեայ իջեալնն Ելէնովկա գեղջ մալականաց հանդէպ անապատի, յառաջին ժամու, եւ յերրորդ ժամու՝ յիջեալնն Ներքին – Ախտա գեղջ, ուր եւ ճաշեաց: Զեօթներորդ ժամու ել յուղի, յութերորդ ժամու եհաս յիջեալնն Յամաբեալ – Աղբիւր (Սուխոյ – Փանտան) եւ ընդ երէկս ի տասաներորդ ժամու եհաս յիջեալնն Եղունարք, ուր եւ գիշերեաց:

Ի նորոյ այլ իմն խումբ Հայոց եւ քահանայք ի նոր – Պայազիտէ եւ ի վիճակարածնէ, Հայք Ալափարսու, ծաղկաճորեցիք, ցամաքաբերդացիք եւ գոմաճորեցիք (առ ծովակաւ), չէրջէրցիք, շէհրիսցիք,

Թիմաշէնցիք, բղնեցիք, սուրկեցիք (կամ ցուրկեցիք), քաղսեցիք, աղբարացիք, փառնեջեցիք, մաքրավանքցիք, ուրնդամալցիք, Թալ-չարուխցիք, պապաքիչեցիք, Փարչեցիք, եւ այլն, եւ այլն, խուռնե-րամ բաղմութեամբ դիմաւորէին զՎեհ. Հայրապետ, մեծաւ ոգեւո-րութեամբ եւ խնդութեամբք լցեալ, քաջութեամբք եւ ձիաւարժու-թեամբք իւրեանց յաւելուին մեզ զմխիթարութիւն ոչ սակաւ: Կայ-տառ եւ եռանդուն երիտասարդք եւ քաջափորձք մրցէին ընդ միմեանս իբրեւ զմարտիկս, թէպէտ հանէին կազմէին եւ զփոռեղէն ամպս յեր-կինս եւ յաճախ գողցես ծածկէաք ընդ փոշիօք:

Էր 9 Մայիսի, յաւուր Երեքշաբաթու մեկնեցաւ Վեհ. Հայրապետ յեղունարքէ զերկրորդ ժամու առաւօտեան: Անցեալ ընդ լեռնային ճանապարհս՝ եհաս յերրորդ ժամու յիջեանն Քանաքեռ (Քանաքըր, որ եւ Քանակերտ) գեղջ Հայոց, ուր կազմեալ էին Հայք զհանդէս ե-կեղեցական, մատուցեալ եւ զաղ եւ զհաց: Անտի սկսաւ իջանել ի վայր ի քաղաքն Երեւան ուղեկցութեամբ բաղմախուռն ժողովրդեան Հայոց Երեւանայ եւ մերձակայ զիւզօրէից, որոց ազազակք պատուէին զօգս ի ձայն կեցցեից, որպէս առնէին յամենայն տեղիս, ուր Հայք զիմ-ւորէին եւ ուղեկցէին Նորին Սրբութեան՝ ի սկզբան երիցս մի զկնի միոյ գոռացեալ միահամուռ եւ միարերան՝ «Կեցցե՛ր վեհափառ Տէր մեր»: Եւ Ս. Հայրապետ խաչակնքեալ օրհնէր զնոսս՝ զժողովուրդ իւր սիրելի:

Էր ժամ իբր 4, եմուտ Հոգեւոր Տէր ի քաղաքն Երեւան, եհաս ի հրապարակ քաղաքի մերձ ի վանս Ս. Սարգսի, ուր կազմեալ էր հան-դէս մեծ եւ թափօր եկեղեցական: Անդ իջեալ Նորին Սրբութիւն ի կա-ռուց՝ էառ զչուրջառ ի թիկունս եւ զխաչ եւ զգաւազան ի ձեռս ընդ ամպհովանեաւ, եւ ի ձայն երգոց շարականաց անցեալ ի միջոյ բազ-մախուռն ժողովրդեան, որք զժուարացուցանէին զգնացս թափօրի, եմուտ ի Ս. Սարգիս եկեղեցի վանաց – Առաջնորդարանի: Յետ սո-վորական աղօթից, լուաւ Հոգեւոր Տէր զուղերձ փոխ – Թեմակալ Մկրտիչ Նպ. – ի Բարամեանց Երեւանցոյ, եւ ի պատասխանի խօսե-ցաւ զյորդորական համառօտ, օրհնեաց զժողովուրդ հանդերձ շնոր-հակալութեամբ սակս բարեպաշտութեանց եւ կրօնասէր զգացմանց նորա, յաւել ասել զՊաշտպանիչ եւ զՀայր Մեր, եւ այսպէս կնքեաց զհանդէսս զայս:

Ել յեկեղեցոյ բոտ սովորական կարգի հանդերձ ուղեկցօք եւ այ-լովք եւ եմուտ ի հանդիսակաց վանս – Առաջնորդարան, ուր փութա-ցին անմիջապէս գալ եւ ներկայանալ Նորին Սրբութեան Հայք նչա-նաւորք, զլիաւոր պաշտօնեայք ներքինք եւ արտաքինք, ընդ որս

Աստաֆիէլ ուսւ նահանգապետ Երեւանայ, կառավարիչն ժանդարմ անուանեալ առանձին լրտեսական եւ ոստիկանական վարչութեան, բերդապետն եւ այլք, եւ շնորհաւորեալ զգալուստ Ս. Հայրապետի առին զօրհնութիւն եւ վերադարձան յիւրաքանչիւր բնակարանս: Եւ այսպէս շարունակէին եւ յաջորդէին միմեանց այցելութիւնք:

Յառաջին երեկոյին Դշ. աւուր ի 10-ն Մայիսի փութացեալ եկին ի Մայր Աթոռոյ Տեղակալ (Ատենապետի Սինոդի եւ ոչ Տեղապահ Կաթողիկոսական) Տ. Գէորգ Արք. Վեհապետեան եւ անդամք Սինոդի Յովհաննէս Արսլանեան Վաղարշապատոցի եւ Գէորգ Մկրտիչեան երեւանցի Եպիսկոպոսունք, եւ փիլոնեալ եւ վեղարեալ ներկայացան Վեհ. Հայրապետի եւ մատուցին զշնորհաւորութիւնս եւ զյարգանս իւրեանց, միանգամայն վայելեցին զպատիւս Նորին Սրբութեան:

Յետ առնլոյ զկարեւոր հրահանգս եւ զպատուէրս Նորին Սրբութեան՝ ի նմին աւուր ընդ երէկս վերադարձան Տեղակալ եւ անդամք Սինոդի ի Ս. Էջմիածին առ ի տնօրինել զոր լուան եւ զոր հարկ էր ի զիմաւորելն զՍ. Կաթողիկոս:

Իսկ Հոգեւոր Տէր ի Դշ. եւ ի Եշ. աւուրս (Մայիս 10 - 11) հաճեցաւ շրջել եւ երթալ յայցելութիւնս եկեղեցեաց Հայոց, հոգեւոր զպրանոցի, ի փոխադարձ այցելութիւն նահանգապետի, Արսէն Սուլթանի Գեղամեանց եւ Պ. Ղահրամանի Աղամալեանց սիրելւոյն ի հին դարմից Հայոց եւ յիշխանական դասակարգէ, եւ ի վերադառնալն աւանդեաց Մկրտիչ Եպ. — զկարեւոր պատուէրս զեկեղեցեաց եւ ըստ զսլոցաց — թոյլ էր Մկրտիչ Եպ. եւ ապիկար ի վարչականի:

Պատրաստեցաւ Վեհ. Հայրապետ յաւուր Ուրբաթու ի 12-ն Մայիսի երթալ հասանել յԱթոռ իւր Հայրապետական ի Ս. Էջմիածին:

Զերկրորդ ժամու առաւօտեան ել յուզի ընդ համայն ճանապարհորդակցաց եւ խուռն բաղմութեան Հայոց Երեւանայ եւ մերձակայ զիւզօրէից՝ կազմեալ ուղեւորական թափօր փառաւոր եւ սրտաշարժ հանգրոյն հանդիսի դալստեան Տեսոն ի Ս. Երուսաղէմ: Քաջ երիտասարդք Հայոց վառեալ յաշխոյժ մեծ փորձէին յաջողակութեամբք զձիարչաւս, զզինախաղս, զձիախաղս ռազմականս եւ զայլս այսպիսիս, եւ բունն եռանդեամբ մրցէին, թնդացուցանէին զօղս հրացանաձգութեամբք՝ բարձրացուցեալ զթանձր ամպս փոշեաց: Գողցես ոչ բաւէին զզրիւնք եւ փոշիք բաղմութեան կառաց եւ հանդարտ ձիաւորելոց:

Բարախէին սիրտք մեր եւ յուզէին սիրտք ընդ տես քաջութեանց եւ եռանդեան Հայոց, մանաւանդ ընդ նշմարումն Կաթողիկէի Ս.

Էջմիածնի, զոր տեսաք կարօտակէզ եւ արտասուալից աչօք ի հե-
ուուտոյ յետ միտոյ ժամու ի սահմանոյ Ս. Հռիփսիմէի վանոց: Ոչ յա-
ղէաք ի դիտելոյ եւ զՄասիս, զորոյ զգազաթ տեսաք զառաջինն յի-
ջեանէն Եղունարք զեղջ: Եւ անդէն ներչնչեցաք ուղղել զբանաստեղ-
ծական իղձ չափաւոր:

Եհաս Հոգեւոր Տէր ի հրապարակ որ առաջի հիւսիսային մեծ ի
զբան պարսպի Մայրավանոց, ուր կազմ եւ պատրաստ մնայր եկեղե-
ցական թափօր մեծ եւ վեհաշուք ընդ Հայրապետական Ամպօհովանոյ.
Համախմբեալ էր եւ ամենահոծ բաղմութիւն Հայոց ի Վաղարշապա-
տէ եւ ի շրջակայ գիւղօրէից. էջ ի կառաց մեծաւ դժուարութեամբ,
հնչեցին կեցցե՛ք, սրտագին աղազակք բաղմութեան, դղրդէին զան-
գակք Ս. Էջմիածնի եւ Վաղարշապատու: Աւագ լուսարար Յովհան-
նէս Եպ. Ասլանեան ետ զչուրջառ ի թիկունս Նորին Սրբութեան, եւ
Տեղակալ Գէորգ Արք. զգաւազան եւ զխաչ ի ձեռս, եմուտ Հոգեւոր
Տէր ընդ Ամպօհովանեաւ, հաճեցաւ ընդ աղ եւ հաց մատուցեալ ի Միա-
բանութեէ, լուաւ զչնորհաւորական եւ զինդակցական ուղերձ Տեղա-
կալ Արքեպիսկոպոսի, յետ որոյ հնչեցին որոտալիւր երգք շարակա-
նաց եւ յառաջանայր: Ըստ սովորական կարգի եմուտ Ս. Կաթողիկոս
ի մայրավանս՝ անցեալ ընդ արտաքին — պարսպային դուռն հիւսիսոյ
եւ ընդ ներքին դուռն Տրդատայ անուանեալ, եւ անտի ի լուսաշող եւ
ի նուիրական Մայր Տաճար Հայաստանեայց Առաքելական Ս. Աթո-
ոոյ: Յետ յուզեալ աղօթից առաջի Ս. Սեղանոյ իջման՝ Նորին Սրբու-
թիւն լուաւ զճառ ուղերձի, որ ի դիմաց Ս. Ուխտի Համայն Միաբա-
նութեան Մայրավանոց, ողջունեաց եւ օրհնեաց զՄայր Տաճար զԱ-
թոո Հայաստանեայց, զՄիաբանական Ուխտն համօրէն, զՀայս եւ
զներկայ ժողովուրդ հանդերձ բարեմաղթութեամբք: Ասաց զՊահպա-
նիչ եւ զՀայր Մեր՝ արձակեալ ի խաղաղութիւն:

Ապա ելեալ ի Մայր Ս. Տաճարէ՝ եհարց Հոգեւոր Տէր զտեղի
տապանի Տ. Տ. Ներսէս Կաթողիկոսի Աշտարակեցոյ, դարձաւ ի
ձախակողմն — ի հարաւակողմն զանդակատան մեծի, առ առաջին
սեամբ որոյ թաղեալ էր, եւ ասաց զՀոգւոց յատուկ՝ յարգեալ զնա
իրբեւ զեպիսկոպոսական ծնող եւ ձեռնադրող իւր: Ունէր առ նա եւ
զսէր նախապաշարեալ:

Կատարեալ եւ զայս՝ սովորական ուղեկցութեամբ եպիսկոպոսաց
զնաց մինչեւ ցարտաքին դուռն Վեհարանի, ընդ որ մտեալ հանդերձ
ոմամբք աւազօք եւ իւրայնովք ի ներքին բակ, եւ անտի ի խոնարհա-
գոյն դուռն Վեհարանի՝ ել եւ ի վեր ի մեծատուն Կաթողիկոսատան,
եւ առանձնացեալ յամառնային սենեակ՝ էառ հանդիստ սակաւ ինչ:

Որպէս յամենայն ուրեք ի ճանապարհորդութիւն՝ Հայք գիւղօրէից առ ճանապարհաւ եղելոց մատուցեալ զհաց եւ զաղ, եւ կադմեալ զթափօր եկեղեցական՝ զիմաւորէին զՎեհ. Հայրապետ Հանդերձ զանդահարութեամբք, նոյնպէս՝ արարին Հայք ճաֆարապատ, Փարաքար եւ Վաղարշապատ գիւղօրէից յիւրաքանչիւր սահմանս յերեւանայ մինչեւ ի Ս. Էջմիածին:

Ընդ երէկս հրաւիրեաց Վեհ. Հայրապետ զաւագ եպիսկոպոսունս ի Վեհարան եւ եհարց ի նորոյ զողջունէ, պատուեաց զնոսա եւ խօսեցաւ ընդ նոսա զառօրեայ խնդրոց ոմանց եւ զտեղական սովորութեանց. ինքն հարցանէր եւ նոքա պատասխանէին:

ԳՂՈՒԽ ԾԲ.

ՅԱՂԱԳՍ ՄԱՂԹԱՆԱՅ ԵՒ ՎԱՍՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆՅ ՈՄԱՆՅ

Ըստ հնաւանդ սովորութեան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի եթէ ի դալստեան Ս. Կաթողիկոսաց եւ եթէ ի վերադառնալն ի հեռաւոր ճանապարհորդութեանց ի Ս. Էջմիածին՝ համայն Միաբանութիւն որպէս փութաց զիմաւորել զՀոգեւոր Տէր եկեղեցական հանդիսիւ եւ երգովք շարականաց հանդերձ զանդահարութեամբք, նոյնպէս ի յաջորդ աւուրս, որպէս եւ յաւուրս տօնախմբութեանց անուանց եւ տարեգարձից օժմանց Կաթողիկոսաց, եւս եւ ի տօնի Կաթողիկէ Եկեղեցւոյ Ս. Էջմիածնի, առնել զՀայրապետական յատուկ Մաղթանս ի ներքին բակի զառաջեալ Վեհարանի: Իսկ եթէ բացակայ կամ հիւանդ իցէ Վեհ. Հայրապետ, կատարէ Միաբանական Ս. Ուխտն զայս Մաղթանս բոլորեալ ի քարայտակ կիսաբոլորակի զառաջեալ մեծի զանգակատան, որ յարեւմտեան կողմն Տաճարի:

Արդ, համաձայն այսմ սովորութեան ի 13-ն Մայիսի, ի Շարաթու, յերկրորդ աւուր զալստեան Նորին Սրբութեան ի Մայր Աթոռ կատարեցաւ փառահեղ հանդէս Մաղթանաց ըստ այսմ եղանակի, կցեալ եւ զպաշտօնական ներկայացմունս:

Յետ աւարտման առաւօտեան ժամերգութեան, հանգիստ առեալ իբրեւ ժամ մի, յառաջ քան զհարկանել զզանգակս ճաշու ժամու Ս. Պատարազի միանուագ հարուած մեծի զանգակի ըստ սովորութեան ազդարարեաց Միաբանից եւ այլոց փութալ համախմբել ի Մաղթանս զառաջեալ Վեհարանի ի ներքին բակի: Որոց աճապարեալ հասանել ի ներքին բակ, եպիսկոպոսունք եւ վարդապետք առեալ զվեղարս եւ զփիլոնս, սարկաւագունք ուրարեալ, եւ զպիրք աշակերտք զպրանո-

ցի հնոյ ըստ իւրաքանչիւր կարգի, ի յետկոյս շատրուանի, որ ի քար-
հայ բացօթեայ բակի, բոլորեալ զառաջեաւ արտաքին սովորական
դահլճի Վեհարանի՝ կանգնեցան կիսաբոլորակ իմն կազմեալ: Արքե-
պիսկոպոսունք Գեորգ Վեհապետեան, Մակար եւ Սարգիս Ջալալ-
եան միացեալ էին ընդ նոսա, ըստ պաշտօնական պարտաւորութեանց,
կախեալ զպարանոցօքն զպանակէս, զխաչանշանս, ետեալ եւ զայլ
նշանս արքունականս:

Եւ զկնի պատրաստութեանց, եկն եւ կանգնեցաւ Վեհ. Հայրա-
պետ զառաջեաւ առաջին պատուհանի բացելոյ, առաջի Աթոռոյ եւ ի
վերայ խալիչայի յատուկ եղելոյ, ի ծայր որոյ կայ արծաթեայ աշ-
տանակ միջակաղիւր լուցեալ մոմով: Ետեալ ի զլուխ զվեղար, առանց
փրկոնի, կախեալ եւ զարծիւ, զպանակէ եւ զայլ նշանս:

Անմիջապէս մի ոմն ի վարդապետաց յառաջ մատուցեալ՝ կանգ-
նեցաւ յատենի եւ սկսաւ զՄաղթանս քարոզիւ ի ձայն՝ Եղբարք սի-
րեցեալք (4 տուն), եւ ի վերջ իւրաքանչիւր տան անէին զպիրք
կանգնեալք առանձին յատենի ի ձայն՝ Օրինեալ է Աստուած: Ապա եր-
գեցին միաբանք եւ զպիրք խմբովին զծանր եղանակ Հայր մեր յա-
տուկ: Դարձեալ ասաց մի ոմն ի Միաբանից եւ ի ձայն զքարոզ՝ բարե-
խօսութեամբ Սրբուհւոյ Աստուածածնի եւ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգո-
րի Լուսաւորչի (5 տուն), եւ Միաբանք եղանակեցին՝ Ամէն: Յետ ո-
րոյ երգեցին միահամուռ եւ սրտաշարժ զերգն՝ Աստուած հօր (4
տուն): Խաչակնքեալ օրհնեաց զՄիաբանութիւն եւ զհամայն ներկայս,
որք և խոնարհեցուցին զզլուխս: Քարոզ՝ Տէր մեր և Փրկիչ (1 տուն),
եւ մի ոմն ի Միաբանից ընթերցաւ զուղերձ: Ապա՝ Սուրբ Խաչիւս...
եւ այսպէս աւարտեցաւ սոյն այս մաս եղանակաւոր Մաղթանաց:

Ի ժամ Մաղթանաց, յորժամ երգէին Աստուած հօր զերգն յա-
տուկ, Գանձապետ Մայր Աթոռոյ և մի ոմն ի սարկաւազաց կալեալ ի
ձեռին զսկուռող արծաթեայ, յորոյ վերայ շարեալ էին դրամք՝ ըստ
հնոյ սովորութեան, եկին յատեան եւ խոնարհեցուցեալ զզլուխ իւր-
եանց առաջի Վեհ. Հայրապետի դարձան առ միաբանս, եւ գանձա-
պետն առեալ զդրամս՝ մաս առ մաս՝ սկսաւ ըստ կարգի բաժանել
եպիսկոպոսաց գինգական ուրբի, վարդապետաց գերեփական ուրբի,
սարկաւազաց գլի – մի ուրբի թղթադրամս, եւ զպրաց եւ աշակեր-
տաց գլի – մի ապասի (20-ական կոպէկս): Եւ յետ աւարտելոյ, տը-
եալ ի նորոյ զզլուխ առ Հոգեւոր Տէր, ի զիմաց որոյ նուիրեն այս
մաղթանադրամք, որպէս և պարզեւք եւ այլն, զնացին ի գանձատուն:

Իսկ ուխտ Միաբանութեան ըստ աւագութեան կարգի՝ միալար
եւ ընդ խոնարհադոյն հին դուռն (կից գանձատան) ի Վեհարան, եւ

զի Վեհ. Հայրապետ զնացեալ էր ի ներքին մեծ սրահ ընդունելութեան Ծաղկեայ այլման ասացեալ, ուր ի պատուանդանաձեւ բաժանման ի վերայ առիւծաքանդակ, զեղանկար Աթոռոյ Հայրապետական նստեալ մնայր, ընդ առաջնորդութեամբ Տեղակալ Արքեպիսկոպոսի ներկայացաւ Նորին Սրբութեան եւ համբուրեաց զՍ. Աջ Հայրապետական՝ բացեալ զվեղարս եւ բոլորեցաւ առաջի Աթոռոյ: Յորժամ աւարտեաց ուխտն զհամբոյր Ս. Աջոյ, Հոգեւոր Տէր, կանգնեալ յոտս, օրհնեաց զնոսա, խաչակնքեալ, եւ արձակեաց երթալ՝ ի հրաւէր զանգակաց Ս. Պատարագի, որպէս եւ իջեալ ի Վեհարանէ զնացին ի Ս. Տաճար առ ի պաշտել զճաշու ժամ:

Զկնի Միաբանութեան եւ ժառանգաւորաց՝ ներկայացան Նորին Սրբութեան՝ պրոկուրոր, ատենադպիր եւ պաշտօնեայք զիւանտան Սինդի, զաւառապետ Էջմիածնի եւ պաշտօնեայք քաղաքականք, քահանայք, տանուէր եւ ժողովուրդ Վաղարշապատ զեղջ եւ ուխտաւորք պատուաւորք առ ի շնորհաւորել զբալուստն եւ համբուրեալ զՍ. աջն՝ առնուլ զօրհնութիւնս Հայրապետականս: Եւ Վեհ. Հայրապետ ուղղեաց իւրաքանչիւրոյ զյարմար բանս սիրայիրս եւ զպատուիրանս:

Ի յաջորդ աւուր ի Կիւրակէի էջ Նորին Սրբութիւն ի Ս. Եկեղեցի յառաւօտէ եւ ի Ս. Պատարագի ըստ սովորական կարգի:

Յաւուրս յայտոսիկ էջ Վեհ. Հայրապետ ի Ս. Տաճար՝ ընդ եպիսկոպոսաց պլխաւորաց առ ի տեսանել զչինուած տաճարի ի ներքուստ, եւ զպահարանս – զաւանդատունս, զմաքրութիւնս, զզգեստս եւ զանօթս կարեւորս: Էին առիթք զժողովեանց սակս անմաքրութեանց, փոշեաց եւ անձկութեանց աւանդատանց, զորոց խօսեցաւ, եւ ետ ի մտի հոգալ զայլ եւ այլ կարեւորաց յապագային:

Յետ զննելոյ զամենայն ասի յալիոյ, յորժամ վերադառնայր ի Վեհարան, ի նորոյ կացեալ առաջի Իջման Սեղանոյ, որոյ մարմարեայ սիւնք եւ կաթուղիկէ խանգարեն եւ ոչ թոյլ տան ժողովրդեան տեսանել ազատ եւ լիովին զաւազ սեղան եւ զարարողութիւնս, թէպէտ առաւել քան զայնոսիկ խանգարեն լայնանիստ չորեքին սիւնք Կաթուղիկէի Տաճարի, վեր ի վերոյ իմն խորհրդակցութեամբ կարծիս ետ Նորին Սրբութիւն բանալ զմարմարեայ սիւնս եւ զկաթուղիկէ Իջման Սեղանոյ, եւ փոխանակել զկաթովի կաթուղիկէ արծաթեայ ամբացուցեալ երկաթաձողովք ի մեծ կաթուղիկէ: Որում հաւանեցան ոմանք, մանաւանդ Սարգիս Արքեպ. Զալալեան, յաւելեալ եւ զբանս խրախուսականս:

Իսկ յորժամ ուղեկցեալ Վեհ. Հայրապետի ըստ սովորութեան

մինչեւ ցարտաքին դուռն՝ վերադառնային եպիսկոպոսունք յիւրաքանչիւր բնակարանս, Ջալալեան բաժանեալ յընկերացն՝ փոխէ զճանապարհ իւր եւ շրջեալ զհարաւային եւ զարեւելեան կուսէ Տաճարի՝ անցանէ ընդ զբոսավայր միաբանից, որ կից տաճարի էր յարեւելեան կողմն նախ քան զկառուցանել երից կից պահարանաց, եւ զի էր միջօրէ, եւ միաբանք ելեալ ի սեղանոյ զբօսնուին անդ, ճարտարութեամբ իմն ասէ ոմանց, եթէ « Վեհափառ Տէրն չեւ ես գոյով չին՝ « եալ ինչ աստ, կամի քանդել զՍ. Սեղանն իջման », եւ անցեալ երթայ ի սենեակ իւր ի Մոմատուն: Եւ այսպէս առթէ զգայթակղութիւն եւ զյուզում ի միաբանութեան:

Անմիջապէս մի ոմն ի միաբանից՝ Ստեփան արեղայ Մխիթարեան փութայ զիմել ի վեհարան եւ հաղորդէ Պետրոս վարդապետի Տէր – Ստեփանեան (այսա՝ Վեհապետեան), որում ծանօթացեալ էր ի ճանապարհի, զբանս Սարգիս Եպ. –ի եւ կամի ստուգել զճշմարտութիւն:

Ոչ մոռացաւ Նորին Սրբութիւն զգլխանոցն հին յայցելութիւնս իւր, եւ արգահատեցաւ ընդ կարեկցելի վիճակ զպրանոցի (զպրոցի ժառանգաւորաց) եւ աշակերտաց, որոց թիւ ոչ անցանէր առաւել քան զերեսուն: Թիւ սարկաւազաց էր 8 – 10, որք բնակէին զոյգ – զոյգ ի խուցս որ ի ներքոյ զպրանոցի ի գետնայարկի, որպէս եւ համայն խուցք միաբանից են գետնայարկք: Տեսուչ զպրանոցի էր Թադէոս վարդապետ Զիւնական, եւ Պօղոս վարդ. Մալխասեան կարդեալ ի կառավարիչ:

Թէպէտ խոնարհեալ էր յոյժ զպրանոցն ի վիճակ տիրառիթ, այլ սակայն էր ըստ բաւականին ազատ ի բարոյական ապականութեանց, յորպիսիս թաւալէին երբեմն աշակերտք յաւուրս կառավարչութեան Գրիգոր վարդապետի Ալխաղեան, ըստ որում լեալ է եւ այր արբեցող, եւ ասէին դարձեալ, իբր զի խղճահար լեալ էր սակս մահուան Տ. Ներսէս Կաթողիկոսի Աշտարակեցոյ եւ յաճախէր յարբեցութեան եւ արտասուել առ գերեզմանաւ Հոգելոյս Հայրապետի: (Եւ յաւուրս նորա աշակերտք ի գիշերի պարապեալ ի գողութիւնս՝ յափշտակէին ի գաղտնի զՆշջայս (խողիկս) յաղարակէ Մայր Աթոռոյ, զգինի եւ զցքի ի մատանէ, զխաղող ի կախանատանց եւ զայլ պիտոյս յայլ եւ այլ տեղեաց, կատարէին զգիշերային խնջոյս: Մինչ զի, յաւուր միում իջանել միոյ աշակերտի ի վայր ի տանեաց պարանաւ առ ի գողանալ զգինի ի մատանէ, փրթեալ պարանք՝ թաւալլոր անկանի Գանաքեոցի աշակերտն Ներսէս անուն եւ հարուածին ոսկերք: Ընկերք ոմանք խորհին սպանանել զնա եւ թաղել ի գաղտնի,

զի մի՛ յայտնեսցին գողութիւնք եւ չարագործութիւնք իւրեանց : Այլք միջամտեն եւ խանգարեն զխորհուրդ , եւ ի զիչերի փախուցանեն զխորտակեալ ներսէս ի զիւզն իւր , եւ տարածանեն , զի ներսէս ինքնին խոյս տուեալ է ի զպրանոցէ :

ԳԼՈՒԽ ԾԳ .

ՅԱՂԱԳՍ Ս . ՕԾՄԱՆ Տ . ԳԷՈՐԳԱՅ Դ . Ի ԿԱԹՈՒՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի հասանելն Հոգեւոր Տեառն ի Ս . Էջմիածին , յետ աւուրց ինչ խորհրդակցեցաւ ընդ Արքեպիսկոպոսոսաց ոմանց եւ ընդ անդամոց Սինոդի եւ որոշեալ զօր հանդիսի՝ հրամայեաց կատարել զօծումն իւր ի կաթողիկոս յաւուր վեցերորդ կիւրակէի հինանց ի 21-ն Մայիսի , միանգամայն տեսանել զկարեւոր պատրաստութիւնս :

Հարկ էր գէ՛թ իբր վեց ամսովք յառաջ հրատարակել զկաթողիկոսական օծումն եւ զօր հանդիսի ի գիտութիւն համօրէն ամենայն Հայոց ընդ ամենայն տիեզերս , որոյ վասն պարտ էր սպասել մնալ գէթ ամիսս վեց : Այլ զի ոռւս . կառավարութիւն ջանայր եւ հնարս հնարէր փութացուցանել զօծումն կաթողիկոսական եւ զիւանաղիտական իմն խարդաւանութեամբ պատրուակէր , զի ոչ կարէ բանակցել պաշտօնապէս զկարեւոր գործոց եւ յարգել զառաջարկութիւնս Ս . Կաթողիկոսի յառաջ քան զնուիրագործել զիւրն կոչում եւ զպաշտօնս . օմամբ , որ եւ յարուցանէր զծանրակշիւ դժուարութիւնս ի Մայր Աթոռոջ : Եւ իսկական նպատակ ունէր կաշկանդել զԿաթողիկոս ուխտի եւ իբր երդմամբ ստորագրելով ի ոռուսական հպատակութիւն , զոր վճարէր առաջի բեմի տաճարի յառաջ քան զմտանելն ի Ս . Պատարագ եւ յառաջ քան զօծումն : Ուստի , առանց թափանցելոյ զաղտնեաց , որոշեցաւ աճապարել կատարել աւուրք յառաջ զՍ . Օծումն կաթողիկոսական : Յայսմիկ ունէին անփորձութիւնք եւ անձնական մտածութիւնք զրաժինս իւրեանց :

Ի վերայ այսր ամենայնի , Սինոդ հեռագրեաց եւ հաղորդեաց զայսմանէ Պատրիարքացն Հայոց Ս . Երուսաղէմի եւ Կ . Պոլսոյ , թեմակալաց եւ Հոգեւոր Ատենից Ռուսաստանեայց , առաջնորդաց վիճակացն Հայոց Պարսկաստանեայց եւ Հնդկաստանեայց , եւ Հայոց զաղթականութեանց գտանելոց յԵւրոպա :

Եւ ահա հակառակ սուղ միջոցի , փութացին գալ Հայք եւ համա-

խմբել ի Ս. Էջմիածին ի շրջակայիցն, յերեւանայ եւ ի համայն վիճակէն, ի Թիֆլիզ եւ ի վիճակէն, ի Շուշայ եւ ի վիճակէն, ի Շամախույ եւ յԱստրախանայ եւ ի վիճակացն, ի Դաւրիթոյ եւ ի սահմանաց եւ ի վիճակացն Վանայ, Կարուց, Կարնոյ, Տրապիզոնի եւ յայլոց տեղեաց :

Առթիւ Հայրապետական Օժման՝ յառաջին երեկոյն ի 21-ն Մայիս կատարեցաւ Հսկումն կանոնական, յորում խմբեալ էր ժողովուրդ բազում յոյժ :

Իսկ յետ առաւօտեան ժամերդուլեան առեալ սակաւ ինչ, ստորագրեց Վեհ. Հայրապետ զերդմնաթուղթն հաւատարմութեան առ Կայսրն ըստ այսմ եղանակի : (Կանխաւ համառօտեաց Հոգեւոր Տէր զերդմնաթուղթն) :

Յարձակման առաւօտեան ժամերդուլեան եղին զգրասեղան առաջի աւագ սեղանոյ, ի փոքրատենի, ծածկեալ կարմիր ջուխայիւ, եւ ի վերայ նորա զերդմնաթուղթն, զգրիչ եւ զկաղամար : Բոլորեցան զգրասեղանով Սինողականք, անպէսն (ածիլեալ) պրոքուրոր Կարապետ Վասակեան եւ ատենադպիր Սինողի Սուքիաս Թաղիանոսեան, եւ ռուսական ներկայացուցիչ ի Կաթուղիկոսական ընտրութեան, նոյն եւ յօժման՝ Պ. Չիլաէվ ոմն ի պաշտօնէից փոխարքայութեան, ամենեքեան պաշտօնական հանդերձիւք եւ կանգնեալ յոտին :

Ի լրանալ պատրաստութեանց եւ ի խմբել անձանցն կարեւորաց՝ էջ Վեհ. Հայրապետ ի կաթուղիկոսարանէ եւ ըստ օտարագիր սովորութեան կանգնեցաւ առաջի զգրասեղանոյ՝ ղէպ ուղիղ ի Ս. սեղան, ընթերցաւ ատենադպիր զպախարակելի, միանգամայն եւ գոսկալին երդմնաքուղք հաւատարմութեան յանուն Կայսեր Ռուսաց, եւ ինքն Հոգեւոր Տէր ստորագրեաց ակամայ կամօք ու հարկի զքուղք լրտեսութեան եւ մատուութեան, զորոյ զվրէժ էառ յամի 1881, յետ սպանման կայսերն Աղեքսանդրի Բ. եւ ի յաջորդել որդւոյ նորա Աղեքսանդրի յամսեանն Մարտի, յորժամ ներկայացուցին Նորին Սրբութեան համաձայն օրինաց Ռուսաց (ըստ որոց պարտին համայն արական ռուսահպատակք ստորագրել հանդիսաւորապէս զթուղթ հաւատարմութեան) զնոր երդմնաթուղթ յանուն նորոյ կայսեր առ ի ստորագրել, կրճատեաց եւ համառօտեաց յոյժ՝ բարձրեալ իսպառ զպարբերութիւն սոսկալիս զլրտեսականս, զմատնիչականս եւ զայլս այսպիսի յօգուածս ստորնականս, ի սենեկի իւրում ստորագրեաց զթուղթն հաւատարմութեան՝ յաւելեալ եւ զայս, ըստ սովորութեան տեղոյս ստորագրեմ : Եւ յանձնեաց սինողական Մեսրոպ Եպ.՝ ի Սմբատեանց տանել յանձնել զիւանին :

Յաւարտել սովորութեանդ, վերադարձաւ Վեհ. Հայրապետ ի Կաթուղիկոսարան, եւ զկնի փոքու միջոցի սկսան զանգակք զըրգեցուցանել շրջակայս, եւ հրաւիրել ի ճաշու ժամն:

Պատարագիչ էր Նորին Սրբութիւն եւ զդեստաւորեցաւ ի Վեհարանի, որպէս եւ եպիսկոպոսունքն առին անդ յայլում սենեկի զդեստան եպիսկոպոսականս: Զդեստաւորեալքն էին.

1. Գէորգ Արք. Վեհապետեան, Տեղակալ.
2. Մակար Արք. Տփիսեաց.
3. Սարգիս Արք. Արցախու.
4. Իգնատիոս Արք. Վասպուրականի.
5. Յարութիւն Արք. Կարնոյ.
6. Յովհաննէս Եպ. Կարուց.
7. Մկրտիչ Եպ. փոխ. թեմակալ Երեւանայ
8. Դանիէլ Եպ. Շամախուոյ.
9. Յովհաննէս Եպ. Ասլանեան.
10. Գրիգոր Եպ. Յորեան.
11. Անդրէաս Եպ. Կ. Պոլսեցի.
12. Արէլ Եպ. Մխիթարեան:

Յետ Ողորմեայի եւ աղօթից եւ այլոց ըստ ճաշու ժամու, մինչ հարկ էր մտանել ի Ս. Պատարագ, եւ ժամօրհնողն (մաղթանքասաց) ասէր զՀայր մեր եւ զհամգստեան զաղօթս, հնչեցին զանգակք, կազմեցաւ թափօրն՝ սկսեալ ի Վեհարանէ:

Յառաջընթաց լինէին երկոքին կարմրահանդերձ շաքիրք ունելով ի ձեռինս զարծաթեայ դունդազլուխս իրր ցուպս, որոց հետեւին շապկազգեցիկ զպիրք եւ աշակերտք, այսա զդեստաւորեալ երկոտասան եպիսկոպոսունք հանդիպակաց յերկուս կարգս բաժանեալ, զկնի նոցա պատարագիչ Ս. Հայրապետ ընդ Ամպիովանեաւ, առանց ունելոյ զառաջեան զսովորական Քօղ Հայրապետական, զաւազանակիրն եւ քոչակիրք հետեւէին Նորին Սրբութեան, որում յառաջընթաց էին յերկուս կողմանս երկոքին զբօշակակիրք եւ մոմակալք, լսատերք եւ խաչվառք իրր զոյգ – զոյգ վերջինք, բաց յերկզոյգ մոմակալաց, յաճախ երթան յետ շաթրաց եւ նախ քան զգպիրս:

Յիջանել Վեհ. Հայրապետի ի Վեհարանէ ընդ եպիսկոպոսացն զդեստաւորելոց, առաջի արտաքին հնոյ զբան Կաթուղիկոսարանի կազմեալ մնայր միւս մասն թափօրի, եւ զպիրք երգէին զխորհուրդ խորին. չորեքին բուրվառակիրք, որք ասացին ի զբան ի Վեհարանի Եւ Եւս խաղաղութեան եւ այլն, միալար, միաձեւ եւ յետագնաց խընկարկէին Նորին Սրբութեան (երթալ յետս – յետս):

Դժուարանայր զինուորական կիսավաշտն եկեալ յերեւանայ պահպանել զկարգապահութիւն, այնչափ խմբեալ էր ժողովուրդը բազում, եւ եռայր զեռայր առ ի տեսանել զՎեհ. Կաթուղիկոս եւ զհանդէս թափօրի:

Ի հասանել թափօրի ի Ս. Տաճար եւ ի մտանելն ընդ մեծ դուռն արեւմտեան, սկսան դպիրք երգել զՀրաշափառ Աստուած, մինչեւ ել Վեհ. Հայրապետ ի բնմ սակս բազմութեան ժողովարդեան— մինչ հարկ էր առնել զլուացումն եւ ասել զՄեղայն առաջի բեմի ի փոքր ատենի: Եպիսկոպոսունք զգետաւորեալք կանգնեցան յերկուս կողմանս աւազ սեղանոյ, եւ յետկոյս նոցա բուրվառակիրք, քնցակիրք եւ այլք:

Շարունակեցաւ արարողութիւն Ս. Պատարագի մինչեւ ցոյզոյն: Յայնժամ սկսաւ հանդէս Ս. Օծմանն:


Համաձայն կարգի, որ ի ձեռնադրութիւն քահանայից եւ եպիսկոպոսաց, էջ ի ծունկս Հոգեւոր Տէր, յետ բոլորելոյ եպիսկոպոսաց ընդ հանդիսապետութեամբ Տեղակալ Տ. Գէորգ Արք. Վեհապետեան, եղանակեցին դպիրք զքարոզս, ընթերցան եպիսկոպոսունք զազօթս եւ զայս ըստ կանոնի, եւ Օծին զգագաք Նորին Սրբութեան եւ նուիրագործեցին զՎեհափառ Հայրապետ Ազգի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց՝ արկեալ զգլխովն զսպիտակ ֆօղն Հայրապետական, որ եւ մնաց մինչեւ ել ի Վեհարան:

Յաւարակ կանոնի Ս. Օծման Հայրապետի՝ խօսեցաւ Նորին Սրբութիւն զքարոզ իմն սրտաշարժ, պարզեալ զնշանակութիւն օծման եւ զպարտս կոչման իւրոյ առաջի Աստուծոյ, Ազգի եւ Եկեղեցւոյ Հայաստանեայց, եւ կնքեաց զբանսն հանդերձ բարեմաղթութեամբք:

Ապա ետ Հոգեւոր Տէր զՈղջոյն եպիսկոպոսաց, որք եւ արտաքոյ կարգի սովորականի՝ մի առ մի խոնարհեալ համբուրեցին զՍ. Աջն Հայրապետական: Շարունակեցաւ Ս. Պատարագ:

Ի լրանալ Ս. Պատարագի եղին ի նորոյ ի գլուխ Ս. Հայրապետի ի վերայ Քօղի զվերջամուտ (ի Կիլիկիոյ) Թագն քննադատելի, կազմեցաւ թափօր, որպէս եղեւ ի մտանելն ի Ս. պատարագ, եւ ել Հոգեւոր Տէր ի Վեհարան երգովք շարականաց Որ շնորհս (ի ճանապարհի) եւ Այսօր Քահանայապետ (ի Կաթուղիկոսարանի): Ասաց զՊահպանիչ ընդ Հայր մերի, օրհնեաց զներկայս ըստ կարգին եւ արձակեաց առ ժամս զթափօրականս եւ զայս: Եւ ինքն եմուտ ի ներքին սենեակ:

Հանեալ Ս. Հայրապետի զքօղ եւ զզեատն, յետ լուացման, եկն ի մեծ դահլիճ (Մաղկեայ այլան) կաթուղիկոսական ընդունելու-



Թեան, բարձրացաւ յԱթոռ մեծ, ի նորոյ ընկալաւ յիւր ներկայութեան զհամայն եպիսկոպոսունս, զվարդապետս, զաւագ քահանայս, զուսական ներկայացուցիչ, զնահանգապետ Երեւանայ, զպրոկուրոր, զգաւառապետ Վաղարշապատու եւ զգլխաւոր եւ զպատուաւոր ուխտաւորս հայազգիս ընդ այլոց պաշտօնէից եւ ի պատասխանի չընորհաւորական մաղթանացն օրհնեաց զնոսա զամենեսին հանդերձ փոխադարձ բարեմաղթութեամբք:

Եղին պաշտօնական հացկերոյթք ի Վեհարանի եւ ի Միաբանական սեղանատան, ոչ մուսացան զբաժակաճառս եւ զբանախօսութիւնս, յաջորդէին միմեանց կեցցէք, որոտային հրացանք, երգէին զպիրք պարբերաբար, որպէս նուազէին եւ զինուորական նուազածուք հրաւիրեալք Երեւանայ, եւ առանձինն դաւուր – զուռնա ժողովրդական եւ տեղական: Տիրէին ուրախութիւն մեծ եւ ոգեւորութիւն ընդհանուր:


Յերեկոյին մինչեւ ցկէս զիշեր եղին լուսավառութիւնք եւ հրախաղութիւնք: Ծինական եւ զինուորական նուազածուք նուազէին պարբերաբար, շինական հայ օրիորդք եւ երիտասարդք բոլորէին զպարս առանձին – առանձին ի հրապարակի ի ներքս Մայրավանուց, չուրջ զլճաւ եւ ի հրապարակի որ առաջի հիւսիսային մեծի զբան պարսպի, երգէին զերգս զաւառականս եւ արտայայտէին զուրախութիւն մեծ:

Ընդ երէկս մեկնեցան նշանուոր պաշտօնեայք ուսականք ի Ս. Էջմիածնէ, որպէս եւ ի յաջորդ ատուրս սկսան հետզհետէ վերադառնալ բազումք յուխտաւորաց եւ զինուորականք, իսկ որք մնացին՝ սպասէին հանդիսի ձեռնադրութեան եպիսկոպոսաց:

Բազմութիւն ժողովրդեան ուխտաւորաց եւ այլոց անցանէր առաւել քան զհնդեառասան հազար անձինս:

Ի հանդիսի օծման ներկայ էին իբր զչորեքտասան եպիսկոպոսունք, վարդապետք առաւել քան զյիսուն եւ չորս, քահանայք եւ աւագք առաւել քան զհօթանասուն անձինս, եւ նշանաւոր հայազգիք Արսէն Սուլթան Գեղամեան Երեւանցի, Սիրական Աղա Գորոյեան Ալեքսանդրապոլցի, Յարէթիկ Նէվրուզեան եւ Մաղաք Մաղաքեան ի Կ. Պոլսոյ, Շահնազարեանք ի Շուշոյ, յԱզուլխոյ, ի Հին եւ ի Նոր Նախիջևանաց եւ այլք:

(ՎԵՐՁ Ա. ՄԱՍԻ)



copy

den

MASIS BOOK S
P. O. BOX 133
MAD. SQ. STA.
N. Y. 10, N. Y.
DEC 1 1950
363 - 3rd AVE.
N. Y. 10, N. Y.
JACOB

